

ԳԻՐԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ

Լուսաւոր

Ճանապարհ



ԱՐԳԴԵՉԷ  
ԸԹԺԻԿՄԾ  
ԿԻՉԿՆԱՄ  
ՅՆՇՈՂ  
ՊՉՈՍԻՏ  
ՐՅԻՓԲ

ԹՈՐՈՒԹՅՈՒՆ, 2018

Krikor Hotoyan

# LOUSSAVOR JANABARH

Խմբագրում, սրբագրություն, էջադրում  
և կողքի ձևատրում՝  
Եփրեն Թոքճեան  
ytokjian@gmail.com

Printed and bound in Canada by:

## **THE RELIABLE PRINTER**

Zohrab Sarkissian  
Unit 6 - 366 Bloor St. East,  
Toronto, ON M4W 1H4  
Canada  
T: 416 792-9394  
F: 416 733-9001  
Email: [info@thereliableprinter.com](mailto:info@thereliableprinter.com)  
[www.thereliableprinter.com](http://www.thereliableprinter.com)





ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ

**ԼՈՒՍԱԲՈՐ  
ՃԱՆԱԴԱՐՀ**

ԹՈՐՈՆԹՕ  
2018

Սոյն գիրքը նուիրուած է  
28 Մայիս 1918-ին հռչակուած  
Հայաստանի առաջին հանրապետութեան  
հարիւրամեակին  
Եւ հայրենիք ու անկախութիւն կերտած  
հերոսներու յիշատակին:



Հեղինակը՝  
ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ







Այս հապորդին մեկենասությունը  
սիրով սրանձնեցին աղջիկս՝  
Անի Նոթոյեան-Ժոլի  
ամուսինը՝ Մայքըլ Ժոլի  
և թոռներս՝  
Քրիստափորը և Սյրեփան-Արմենը:

Նազար շնորհակալություն իրենց ազգային  
և ծնողատեր ոգիին:

*ԳՐԻԳՈՐ ՆՈԹՈՅԵԱՆ*



## ՄՐՏԻ ԽՕՍՔ ՆԵՂԻՆԱԿԷՆ

Սոյն հատորը կը պարունակէ իմ 10 գիրքերուն (բանաստեղծութիւն, պատմութեան, հրատարակութեանց առթիւ մեծ թիւով ընթերցողներու յայտնած տպաւորութիւնները անոնց մասին՝ նամակներով, գրախօսականներով, գնահատագրերով, գիրքերու հրատարակութեանց առթիւ կազմակերպուած գինեծօներուն գիրքերը ներկայացնելու պաշտօն ստանձնած անձնաւորութիւններու վերլուծումներով, հեղինակին նուիրուած բանաստեղծութիւններով եւ այլ միջոցներով:

1987-ին հրատարակուած առաջին գիրքիս («Սիրտը Ափին Մէջ») եւ յաջորդ գիրքերուս մասին եղած գնահատական գրութիւններ հաւաքուեցան այս 11-րդ գիրքիս մէջ: Ես ալ իմ կարգիս գնահատելու եւ շնորհակալութիւն յայտնելու համար անոնց, այս հատորով կը ջանամ ստեղծել գրական մթնոլորտ մը՝ հեղինակ-ընթերցող հայ գիրին ու գրականութեան կապուելու, քաջալերելու երիտասարդութիւնը փարելու հայ լեզուին:

Հայերէն գիրն ու գրականութիւնը սիրող անհատներ կարողալով իմ 11-րդ գիրքիս մէջ ամփոփուած գնահատագրերը՝ օգնած կ'ըլլան հայերէն գրականութեան տարածումին եւ զարգացումին:

Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետը (1166–1173) գրած է «Հաւատով խոստովանիմ» աղօթքը, որուն 11-րդ համարը կ'ըսէ. «Իմաստութիւն Յօր Յիսուս, տուր ինձ զիմաստութիւն՝ զբարիս խորհիլ եւ խօսիլ եւ գործել առաջի քո յամենայն ժամ: Ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա՛ր զիս. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս»:

Ներսէս Շնորհալի Հայրապետը այս աղօթքով կը յորդորէ, որ Յիսուս իմաստութիւն տայ մարդոց, որպէսզի անոնք միշտ բարի ըլլան՝ խորհելով, խօսելով ու գործելով:

Հայ գրականութեամբ զբաղողներ միշտ պէտք է լաւապէս խորհելով, խօսելով եւ գործելով կարենան ազգին եւ եկեղեցիին օգտակար ըլլալ, զխաւորաբար իմաստութիւն ունենալով իրենց կեանքին ընթացքին:

Ներսէս Շնորհալիի «Հաւատով խոստովանիմ»-ի 24 համարները ամբողջութեամբ սրովեցայ՝ աշակերտելով Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներուն, հազիւ 13 տարեկանիս, եւ հետեւեցայ այս աղօթքի բովանդակութեան, որ ինձի ուղղութիւն տուաւ ծառայելու հայ ժողովուրդին, հայ եկեղեցիին եւ հայ գրականութեան:



**ՇՔԱՆՇԱՆՆԵՐ  
ԵՒ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄՆԵՐ**



Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոս,  
սպա Ամենայն Հայոց Գարեգին Ա. Կաթողիկոս



ԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ



այրուհեսական այս գրով գնահատելով  
 125 ամեայ բարեւի և անձնուէր ծառայութիւնն

Տրայ Գրչուհի Եղջոյանն

ի յարկա նուիրական կիրակնօրեայ վարժարանաց  
 Մրոյ Արոռոյս Մեծի Տանն Կիլիկիոյ վասն կրօնա-  
 կան և բարոյական դաստիարակութեան սիրեցեալ  
 մակնայն Հայց. Առաջնական Փարք Եկեղեցոյ, և  
 օրնեւ զնա ձայրական սիրով ֆայցրոյնեան:

Այօրաբար

Գ Ա Ր Ե Գ Ի Ե Բ  
 ՎԱՐՈՒԿԱՅՈՍ ՄԵՍԻՒ ՏՅԱՆ ԿՈՒԿՅՈՍ



**ՅԱՍՏԻՆ ԶԻՅՈՒՄ ԲՐԻՏՈՍԻ ԵՐ ԱՆՃԱՄԱԿԷՐ ԿՈՒՐՆ  
 ԱՍՏՈՒՄՅ ԵՐ ԱՆՏՐՈՒԹԱՆՈՒ ԵՎՈՒՄ ԵՐՈՒՄԻՈՒԹՅԱՆ  
 ԵՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՑ ՄԵՆՆ ՏԱՆՆ ԿՐԹՈՒՄՅ**

**ՇԱԲԱԿՆԵՐ ԵՐ ԽՐԱՄԵՐԻՔԻՆ Ի ՏՈՒՄՆ ԵՐ ԲՆԻՄԱՆ ԱՆՏՐՈՒՄՅԱՆ Ի ՄԱՅՆ  
 ԵՐ ՍՏՆԱԲԱԿԻՆ ԶԻՅՈՑ ՄԵՐՆ ՀՈՒՄ ՄԵՆՆ ԿՐԹՈՒՄ ԵՐՈՒՄԻՈՒԹՅԱՆ**

**ՍՐԲՈՒՄԱՆ ԽՐԱՄԵՐ ԵՐ ԲՆԻՄԱՆ  
 ՄԵՆՆ ՏԱՆՆ ԿՐԹՈՒՄՅ ԿՐԹՈՒՄԻՈՒԹՅԱՆ  
 ՏՈՒՄ ԿՐԹՈՒՄ ՀՈՒՄՅԱՆ  
 ԽՐՈՒՄԻՈՒԹՅԱՆ**

**ՈՒՄՅԱՆ ՄԵՆՆ ՏԱՆՆ ԿՐԹՈՒՄՅ**

*Ստորագրում է*  
**ԲՐԹՈՒՄ ԿՐԹՈՒՄՅԱՆ  
 ՄԵՆՆ ՏԱՆՆ ԿՐԹՈՒՄՅ**

Տպագրված է Երևանում  
 Բրտնի Մարտիկոսի Գրքերի Կոնստանտին  
 Պր. Մանուկյան, Երևան  
 Ք.Ղ. Կ. Մարտիկոսի, 2000 թվականի հունիսի 15  
 Բրտնի Մարտիկոսի  
 Տպագրության ՊՊԸ







**ԲԱՆԱՍՏԵՂԾ, ԱՐՁԱԿԱԳԻՐ, ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ ԱՐԺԱՆԱՅԱԻ  
«Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ» ՇՔԱՆՇԱՆԻՆ**

Մեծի Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.-ի Հինգշաբթի, 22 Սեպտեմբերէն մինչեւ Չորեքշաբթի, 5 Հոկտեմբեր 2005 թուականի Գանատայի իր հօտին տուած հովուապետական օրհնաբաշխ այցելութեան ընթացքին, 1 Հոկտեմբեր 2005, Շարաք երեկոյեան, Վեհափառ Հայրապետին ի պատիւ կազմակերպուած պաշտօնական ճաշկերոյթին, Վեհափառը բանաստեղծ, արձակագիր, հրապարակագիր Գրիգոր Հոթոյեանը պատուեց «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով՝ հայ ազգին, հայ եկեղեցիին, հայ դպրոցին, հայ մշակոյթին, հայ գրականութեան իր 60-ամեայ ծառայութեան որպէս օրհնութիւն եւ գնահատանք:

## ԳՆԱՀԱՏԱԳՐԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ



*Գրիգոր Հոթոյեան Ազգ. Առաջնորդարանի  
գնահատագիրը կը սրանայ Առաջնորդ  
Մեսրոպ Արք. Աշճեանի ձեռամբ:*

ն»ի եւ բազմաթիւ այլ ազգային թերթերու մէջ, տարեշրջան մըն ալ տնօրէնութիւնը վարելով Հ.Օ.Մ.ի Ամառնային Ամէնօրեայ Վարժարանին:

Ազգային եւ հասարակական պարտականութիւններու հանդէպ իր բարեխիղճ կեցուածքը արզելք չհանդիսացաւ, որ ան անտեսէ իր սրտի կանչը, բանաստեղծական տրոփը...

1987-ին լոյս տեսաւ բանաստեղծութիւններու իր առաջին հատորը՝ «Սիրտը Ափին Մէջ» խորագրով, որ կը պարունակէ իր սկանակ փորձերէն մինչեւ ամենահասուն օրերու 73 քերթուածներ:

Գրիգոր Հոթոյեան Թորոնթօ փոխադրուած է Հալէպէն 1975-ին իր տիկնոջ՝ Շաքէին եւ երկու զաւակներուն՝ Անիի եւ Անդրանիկի հետ: Նախքան Հալէպէն իր արտագաղթը, 30 տարի շարունակ վարած է տեղւոյն կեդրոնական կիրակնօրեայ դպրոցի տեսչութիւնը եւ արժանացած բարձր գնահատանքի:

Հոգաբարձութիւնն եւ րախտագիտութեամբ կ'ուզէ պատուել Սուրբ Աստուածածին Եկեղեցոյ ժրջան եւ նուիրեալ անդամներէն Տիար Գրիգոր Հոթոյեանը, որ անոր հիմնադրութեան օրերէն մինչեւ այսօր անսակարկ ծառայած է՝ յանուն անոր պայծառութեան եւ բարգաւաճման:

Գրիգորի ծառայասիրութիւնն ու նուիրումը սահման չի ճանչնար: Եկեղեցոյս առընթեր, իր գործօն մասնակցութիւնը բերած է նաեւ գաղութի մշակութային կեանքին, դեր վերցնելով Համազգային Մշակութային Միութեան տեղական եւ շրջանային վարչութիւններուն մէջ, Թորոնթոյի մշտական ձայնը հանդիսանալով «Հորիզոն»



# ԳՆԱԿԱՏԱԳԻՐ

ՅԵՔԸՆՈՐԿԵՐԵՆ ԿԵՅՈՑ ԱՄԵՐԻԿԵՅԻ

## Certificate of Merit

PRELACY of the ARMENIAN APOSTOLIC CHURCH of AMERICA

*Շիրիզոր Ինթրյուսն*

ԿԱՅԱՍԱՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԵ ԵԿԵՉԵՑԻՈՅ  
ՋԵՐ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԵԿԵՉԵՑԱՆՈՒԷՐ  
ԿԵԱՆՔԵՆ ԱՌ Ի ՃԱՆԱՋՈՒՄ, ԿԱՐԺԱՆԱՆԱՔ ՄԵՐ ՕՐԿԵՆՈՒ  
ԹԵԱՆ ԵՒ ԳՆԱԿԱՏՈՒԹԵԱՆ ԱՅՍ ԳՐԻՐՍ:

WE AWARD THIS CERTIFICATE OF MERIT TO YOU IN  
DEEP APPRECIATION OF YOUR EFFORTS AND  
CONTRIBUTION TO THE ARMENIAN APOSTOLIC  
CHURCH OF AMERICA.

ԱՂՕՊԱՎ՛ԱՔ՝

*[Signature]*  
ԱՄԱՏԱՆՈՐԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՉԼԵՈՒՑ

PRAYERFULLY,

*[Signature]*  
PRELATE OF THE ARMENIANS OF AMERICA

DATE *Jan. 9, 1994*

ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ԵՐԷՑՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ



# ԳՆԱԿԱՏԱԳԻՐ

ՏԻԱՐ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻՆ

**Մեծապես կը գնահատենք  
ձեր կատարած բազմամեայ ազգանուէր աշխատանքը**

ՄԱՅԻՍ 7, 1996

ԹՈՒՄՐՕ



# Գ Ն Ա Հ Ա Տ Ա Գ Ի Բ

## Գրիգոր Հոթոյեանին

Գնահատանքի ու երախտիքի ջերն զգացումներով՝ Թորոնթոյի Հայ Կեդրոնի յարկին տակ գործող միութիւններուն, կազմակերպութիւններուն եւ հաստատութիւններուն անունով՝ կողումներք Չեր գրական-լրագրական գործունէութեան Վարսուն երկար տարիներու հպարտառիք հանգրուանը:

Ձերնապէս կը շնորհատրենք Չեր գրական, մշակութային, կրթական եւ ազգային ամբողջանուէր ծառայութիւնը Միջին Արեւելքի մէջ ընդհանրապէս եւ Թորոնթոյ գաղութի Լրագրական ու բազմաբնոյթ աշխատանքներուն մէջ մասնատրաբար :

Ի խորոց սրտի կը մաղթենք Չեզ արեւշատ օրերու հետ միասին, քաջատող կեանք, որպէսզի տակաւին երկար տարիներ գրական եւ մշակութային անդաստանն ներս՝ նոյն եռանդով շարունակէք Չեր ազգօգուտ գործունէութեան երթը, ի խնդիր հայ ժողովուրդի յաւերժութեան:

Փետրուար 8, 2008  
Թորոնթո

ՀՅԴ՝ «Ա. Թեմիլիսեան» Կոմիտէ  
*Յ. Թեմիլիսեան*  
Յակոբ Թեմիլիսեան  
Հորթապահ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ  
«ՈՒԽՏԱՏՈՒՆ» ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՏԵՏՈՒՆ



# ՇՆՈՐՀԱԳԻՐ

Տրվում է ԿԱՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԵՆԱՊՈՏ

ԳՐԻԳՐԻ ԿԱԶՄԻ ԶՈՐԹԱՆԻՆ

Գաւաւսեյլով շայ ժողովրդի Առգային-առասագրապան  
և հաքսաՊաւՑՊաւնապան յարժերոյ  
ժողպան և սաւաւսպան  
քաճորրոյոճ Հիճասպի Հաւերժանանը  
յաճոյանս առգաւսոյիք ժառայողայոյխաներն  
ու Հոպանապորոյոյիայոյխան

Մեծ եղեռնի և շայոճ առասաւարտի  
«Ուխտատուն» հաստիտոս-թանգաւաւնի ստորեւ  
և գիտպան հորոչրոյ սանսագւ՛՛

14 07 200 թ. թ.

Սաւսոյ գրիգորչաւ



RÉPUBLIQUE FRANÇAISE



La Nation reconnaît les services rendus à la France par

Monsieur HOTOYAN Erikor

qui a participé à la SECONDE GUERRE MONDIALE



LE MINISTRE DÉLÉGUÉ AUX ANCIENS COMBATTANTS  
ET VICTIMES DE GUERRE

*Pierre Pasquini*

Pierre Pasquini

Years **15** Ans  
KRIKOR HOTOYAN

*In  
honour  
of your  
commitment  
to  
voluntarism*



Ontario Ministry  
of Citizenship  
Ministère des  
Affaires civiques  
de l'Ontario

*Etienne Zembis*

Etienne Zembis  
Minister / Ministre

*En  
l'honneur  
de votre  
engagement  
au  
bénévolat*



Ontario Ministry  
of Culture and  
Communications  
Ministère de la  
Culture et des  
Communications  
de l'Ontario

*Rosario Marchese*

Rosario Marchese  
Minister / Ministre

Room 1307, Whitney Block  
Parliament Buildings  
Toronto, Ontario  
M7A 1A2  
Tel: (416) 325-3607



LEGISLATIVE ASSEMBLY

ELINOR CAPLAN, M.P.P.  
Orléans

Constituency Office:  
30 Esterbrooke Avenue  
Suite 100  
Willowdale, Ontario  
M2J 2C4  
Tel: (416) 494-6856

April 11, 1991

Mr. Krikor Hotoyan  
Armenian Community Centre  
45 Hallcrown Place  
North York, Ontario  
M2J 4Y4

Dear Mr. Hotoyan:

I would like to take this opportunity to congratulate you on receiving the Ontario Volunteer Service Award.

Your commitment as a volunteer has helped to enrich our community and you are to be commended for your valuable contribution.

Once again please accept my congratulations and best wishes.

Yours sincerely,

*Elinor*

Elinor Caplan, MPP  
Orléans



«Տարեցներու Միջազգային Տարուան» մրցանակի տուչութիւն:  
Չախէն աջ՝ կառավարիչ Հիլարի Ուեսթըն, Գրիգոր Հոթոյեան,  
տարեցներու հոգածութեան նախարար Գան Ճաքսըն



**ԸՆԿ. ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ**  
**«ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐՈՒԱՆ»**  
**ՄՐՑԱՆԱԿԻՆ ԱՐԺԱՆԱՑԱԻ**

1999 թուականը Միացեալ Ազգերու Կազմակերպութեան կողմէ «Տարեցներու Միջազգային Տարի» հռչակուած ըլլալով, Օնթարիոյի կառավարութիւնը որոշում առած էր յատուկ գնահատագիր-մրցանակներով պատուել Օնթարիո նահանգի 130 ընտրաշրջաններէն 130 տարեցներ, որոնք հանգստեան կոչուած թուականէն ետք, կամաւոր գործունէութեամբ օգտակար հանդիսացած են իրենց շրջանի համայնքային կեանքին՝ այլազան ասպարէզներու մէջ:

Օնթարիո նահանգի խորհրդարանի 130 անդամներու կողմէ ներկայացուած 130 գործունեայ տարեցներու մրցանակաբաշխութիւնը տեղի ունեցաւ Օնթարիո նահանգի 5 կեդրոններու մէջ՝ յատուկ յայտագրով եւ հանդիսութեամբ:

Թորոնթոյի հանդիսութիւնը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 14 Ապրիլ 1999, կ. ա. ժամը 10:00-ին, Թորոնթոյի համալսարանի «Hart House» պատմական սրահին մէջ, որուն ներկայ գտնուեցան Օնթարիոյի կառավարիչ Տիկին Հիլարի Մ. Ուեսթըն, տարեցներու հոգածութեան նախարար Գամ Ճաքսըն, 48 մրցանակակիրներ, իրենց շրջանի երեսփոխաններու ընկերակցութեամբ, պետական անձնատրութիւններ եւ շուրջ 200 հանդիսականներ:

Հիլարի Ուեսթընի, վարչապետ Հարիսի եւ Գամ Ճաքսընի ստորագրութիւնը կրող գեղատիպ մրցանակ-գնահատագիրները հերթականօրէն տրուեցան 48 մրցանակակիրներու, Հիլարի Ուեսթընի եւ Գամ Ճաքսընի ձեռամբ:

Օնթարիոյի 130 մրցանակի արժանացած տարեցներու միակ հայը «Հորիզոն»ի թրթակից ներկայացուցիչ ընկեր Գրիգոր Հոթոյեանն էր, որուն թեկնածութիւնը ներկայացուցած էր Նորթ Եորքի Օրիոլ շրջանի երեսփոխան Պրն. Տէյվիտ Գափլան:

*«Հորիզոն», 1999*



Սուրիոյ պետական «Պասս» կուսակցութեան կողմէ  
Գրիգոր Հոթոյեան արժանացած է «Աշխատանքի Հերոս»  
գնահատագրին եւ վկայականին

7 Ապրիլ 1973

**ՀԱՍՏԱՏԱԳՐԵՐ  
ԵՒ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐ**



Մեծայարգ  
Պրն. Գրիգոր Հոթոյեան  
Տեսուչ Հայց. Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցի  
Ռագգա, Սուրիա

Սիրելի պաշտօնակից,

Ուրախութեամբ տեղեկացած էինք մեր պաշտօնակից Պրն. Գեորգ Ներսոյեանէն, թէ հակառակ Ձեր բազմազբաղ վիճակին բարեհաճեր էիք ստանձնել գաղութիդ մէջ նոր հիմնուած կիրակնօրեայ դպրոցի տեսչական պաշտօնը:

Անշուշտ ի մօտոյ պաշտօնապէս պիտի հաստատենք Ձեր տեսչական պաշտօնը, Հալէպի Կրօնական Դաստիարակութեան Խորհուրդի առ այդ տրուած որոշումը յետ Պրն. Ներսոյեանի յանձնարարութեան: Սակայն, մինչ այդ, կը փութանք շնորհաւորել Ձեզ Նոր Տարուայ սեմին վրայ, որ լաւագոյն կադանդչէք տուած եղաք Հայց. Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներուն, յանձն առնելով Ռագգայի մասնաճիւղի տեսչական պաշտօնը: Կը մաղթենք, որ Տէրը պարգեւէ Ձեզ ուժ, կարողութիւն եւ երկնային իմաստութիւն՝ վարելու նաեւ այս եկեղեցանուէր գործը, որուն յետ այսու կամաւորներէն մին պիտի նկատենք Ձեզ այդ հեռաւոր գաղութին մէջ:

Շնորհակալութեամբ ստացանք Ձեր դրկած թղթակցութիւնը, որ լոյս կը տեսնէ Յունուարի մէջ: «Մեր Կեանքը» թերթիկէն օրինակներ դրկեցինք Ձեր հասցէին: Եթէ նկարաքարտեր չեն հայթայթուած Հալէպէն, գրեցէք մեզ աշակերտութեան թիւը եւ ուղղակի փոստով դըրկենք Ձեր հասցէին:

Յուսանք օրին մէկը կ'ունենանք բախտը ողջունելու Ձեզ եւ դպրոցի սիրասուն սաները, սակայն մինչ այդ հանեցէք ընդունիլ մեր սիրալիր բարեւններն ու լաւագոյն մաղթանքները:

Մնամ յարգանօք՝

ԼԵՆՈՆ Ն. ՋԷՆԵԱՆ  
Վարիչ-Տնօրէն

Մեծայարգ  
Պրն. Գրիգոր Հոթոյեան  
Տեսուչ Հայց. Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցի  
Ռազգա, Սուրիա

Սիրելի պաշտօնակից,

Ուրախութեամբ տեղեկացանք Բերիոյ եւ վիճակաց պատուար-  
ժան Կրօնական Դաստիարակութեան Խորհուրդէն թէ՛ ըստ կիրակ-  
նօրեայ դպրոցներու հիմնական կանոնագրի յօդուած ԼԱ.ի տրամա-  
դրութեան, միաձայնութեամբ նշանակուած էք Ռազգայի կիրակնօր-  
եայ դպրոցին տեսուչ՝ 1951 տարուան համար:

Ուստի, հանոյքն ունինք պաշտօնապէս հաղորդելու Ձեզ սոյն ո-  
րոշումը, որուն յապաղման համար կը խնդրենք Ձեր ներողամտու-  
թիւնը:

Պատուարժան խորհուրդը եւ մենք սրտանց կը գնահատենք անց-  
եալի մէջ կիրակնօրեայ դպրոցին Ձեր մատուցած անձնուէր ծառա-  
յութիւնները եւ այժմ կը մաղթենք, որ Տէրը պարգեւէ Ձեզ ուժ եւ կա-  
րողութիւն, խղճմտօրէն շարունակելու համար այս դժուարին եւ պա-  
տասխանատու պաշտօնը:

Մեր տեսուչներէն կ'ակնկալուի ա) հսկել հիմնական եւ ներքին  
կանոնագիրներու տրամադրութեանց գործադրութիւնը. բ) խնամքով  
պահել յայտագրի տեսրակ մը՝ իւրաքանչիւր տարուան համար. գ)  
գործածել միայն Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն վաւերացուած դա-  
սագիրքեր, պատկերներ եւ այլ հրատարակութիւններ. դ) հաւատարիմ  
մնալ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ դաւանանքին, վարդապետու-  
թեան եւ աւանդութեանց: Տեսուչներէն կ'ակնկալուի ոչ միայն ամէն  
Կիրակի ներկայ ըլլալ Ս. Պատարագի, այլ նաեւ հոգ տանիլ, որ ուսու-  
ցիչները եւ աշակերտները եւս երթան եկեղեցի, մանաւանդ Կիրակի  
եւ տօնական օրերուն:

Շնորհաւորելով Ձեզ նոր շրջանի մը սկիզբը, կը հայցենք Աս-  
տուծմէ արդիւնաշատ տարի մը Ձեր դպրոցին համար:

Սպասելով Ձեր դրական պատասխանին, որուն համար հանեցէ՛ք  
ընդունիլ մեր կանխայայտ շնորհաւորութիւնները:

Մնամ եղբայրական սիրով եւ յարգանօք՝  
ԼԵՆՈՆ Ն. ՋԷՆԵԱՆ  
Վարիչ-Տնօրէն

ԿԱԹՈՒԼԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԿՅՈՒՄՅԱՆ  
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՑ ԴՊՐՈՑՆԵՐ  
ԱՆԹԻԱՆ - ԼԵՆԱՆ  
ԼԵՆԱՆ և ՋԵՆԵՎԱ - ԿԱՌՁԳ - ՏՆՕՐԷՆ



ZHUSUL 1929

مدرسة الأحد في الكنيسة الأرمنية  
مركز المديرة  
أنطلياس - لبنان

CHURCH OF ARMENIA SUNDAY SCHOOLS  
Armenian Catholicate of Cilicia  
ANTELIAS - LEBANON

LEVON N. ZENIAN  
EXECUTIVE DIRECTOR

No. 3941

30 Յունուար, 1951

Յարգելի

Պրն. Գրիգոր Հաթոյեան, Տեսուչ,  
Հայց. Եկեղեցւոյ Կիրակն. Դպրոցի,  
Բազա, Միւրիա.

Միրելի Պաշտօնակից,

Ուրախութեամբ ստացանք Ձեր 18 Յունուար  
թուակիր նամակը 23-ին:

Ձեր Կիրակն. Դպրոցին Համար պէտք եղած  
նամակի պաշտօնական թուղթը եւ աշակերտաց Համար գործածելի  
Ներկայ-Բացակայի տետրակները կրնաք Պրն. Ներսիսեանէն ըս-  
տանալ: Յուսանք ցարդ ունեցաք կնիք մը ու յետ այսու կը  
կնքէք պաշտօնական նամակներն ու տեղեկագիրները, եռամսեայ  
Հաշուեցոյցները եւ յլն: Եթէ մեզի գրէք թէ նկարաքարտերու  
որ թիւերէն կը պակսին ձեզի, կը ղրկենք պէտք եղած թիւով  
եթէ արդէն իսկ չեն սպառած, այլապէս նոր Հրատարակուելիք  
թիւերէն կանոնաւոր կերպով կը տրամադրուի նաեւ Ձեզ:

Մեր ԿԵԱՆՔԸ Թերթիկի 1951-ի Յունուարի  
թիւէն Ձեր դպրոցին Համար ղրկեցինք 6 օրինակ, եթէ աւելի  
պէտք ունիք յառաջիկային ըստ այնմ կը ղրկենք: Մեր միւս  
դպրոցներու ուսուցիչները ամիսը 25 ԴՆ կը վճարեն՝ թեր-  
թին ծախքին մէկ մասը հոգալու Համար. եթէ ձերինները եւս  
ի վիճակի են վճարելու շատ գոհ կ'ըլլանք, այլապէս ձերի  
պիտի տրամադրենք:

Մաղթելով Ձեր աստուածահաճոյ եւ զգա-  
նուէր ջանքերուն յաջողութիւն,

ԼՆՁ/ՍԿ

Մամ յարգանքով  
*Levon N. Zenian*  
Լեւոն Ն. Ջէնեան  
Քարիչ-Տնօրէն

Մեծայարգ  
Պրն. Գրիգոր Հոթոյեան  
Աստ

Ազնիւ Պարոն,

Հայաստանեայց Եկեղեցւոյ Կրօնական Դաստիարակութեան Խորհուրդը ուրախութեամբ իմացաւ եւ գիտէր, որ ձեր գովելի վարք ու բարքով եւ առողջ նկարագիր ու բարոյականով վստահութիւն ներշնչած էք ձեր շուրջիններուն եւ մեծ ծառայութիւններ բերած էք մեր թեմէն Րազգայի Հայց. Եկեղեցւոյ կիրկ. դպրոցին մէջ, հայ մանուկի կրօնաբարոյական դաստիարակութեան ի խնդիր: Այժմ որ Հալէպ կը գտնուիք, Խորհուրդս գնահատել վերջ ձեր մէջ գտնուող ծառայելու բարի առաքինութիւնը, կու գայ հրաւիրել ձեզ Հայց. Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներէն Կեդրոն բաժնի մէջ պաշտօնավարելու, որ տեղի կ'ունենայ ամէն Կիրակի կէսօրէ վերջ ժամը 1.30-3.00 Ազգային Մանկապարտէզի սրահը, Սալիպէ:

Լիայոյս եմք, որ պիտի ընդառաջէք մեր հրաւերին եւ պիտի բերէք ձեր օգտակար օժանդակութիւնը յառաջիկայ Կիրակիէն սկսեալ: Կը մնանք կանխայայտ շնորհակալութիւններով եւ յաջողութեան լաւագոյն մաղթանքներով:

Ի դիմաց Հ. Ե. Կրօն. Դաստ. Խորհուրդին

վ Ատենադպիրի  
Գէորգ Ներսոյեան

Ատենապետ  
Կարապետ Քհնյ. Նալպանտեան



ԿԱՅՈՂՆԻԿՈՍՈՒԹԻՒՆ ԿԵԼԻԿՈՑ  
 ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ  
 ԿՐՕՆ. ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
 ԲԵՐՈՑ ԵՒ ՎԻՃԱՎԱՑ  
 ՓՈՍՏԱԿՆ ԹԻ 133



کاتولیکوسیه الارمن  
 هیئۃ التعلیم الدینی فی الكنيسة الارمنیة  
 لمدينة حلب وملحقاتها  
 صندوق البريد ۱۳۳

Համար 39

Հայկ 3 1955

Սեդրակյան  
 Սեդրակյան Երվանդ

Աս

Հայց. Եկեղեցւոյ Կիր. Դպրոցներու Կրօն. Դաս. Խորհուրդս, զմանատեղով անցեալի մէջ Ձեր մատուցած ինքնատեղէն ծառայութիւնները Հ. Ե. Կ. դպրոցին մէջ, կը խնդրէ Ձեզմէ այս սարի եւս հաւատարմօրէն շարունակել Ձեր պատճառ, համաձայն Կիր. Դպրոցներու հիմնական եւ ներքին կանոնադիրներու տրամադրութեանց միեւնոյն նուիրումով եւ խանդավառութեամբ:

Խորհուրդս շնորհակալ կը շնորհակալ Ձեր պատճառ եւ կը մաղթ որ Տերը պարգեւէ Ձեզ երկնային իմաստութիւն, ոյժ եւ կարողութիւն, սանելու Ձեր ուսերուն վրայ դրուած պատասխանատուութեան կարգը լուծը:

Տերը վարձանասոյց ըլլայ եւ ընդունի Ձեր ծառայութեան կամաւոր պատասխար՝ զոր վստահ ենք այս սարի եւս պիտի մատուցանեք ի փառս իր Ս. Անուան եւ ի պայծառութիւն Հայց. Ս. Եկեղեցւոյ:

Մնամբ յաջողութեան մտղանքներով եւ օրհնելով՝  
 Ի դիմաց Հ. Ե. Կ. Դպրոցներու Կրօն. Դաս. Խորհուրդին  
 Ա. Դպիր  
 Ա. Պետր  
 Սեդրակյան Երվանդ

ԿԱՅՈՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԿՈՒԿՈՑ  
 ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑՈՑ  
 ԿՐԾՆ. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԿ  
 ԲԵՐՈՑ ԵՒ ՎԻՃԱԿԱՑ  
 ՓՈՍՏԱՐԱՂ ԹԻՒ 133



CONSEIL DE L'ÉDUCATION RELIGIEUSE  
 DE L'ÉGLISE ARMÉNIENNE  
 B. P. 133 - ALEP, SYRIE

كاتوليکوسية الأرمين  
 هيئة التعلیم الديني في الكنيسة الارمنية  
 لمدينة حلب وملحقاتها  
 صندوق البريد ١٣٣

Համար .....

Հայեպ, 7 հոպ. 1966

*Արքեպիսկոպոս*

*Տիպոգրաֆիայի խմբագրատեղակայան*  
 Տեղ. - Հ. Բ. Կ. Դպրոց 2/եր. - Կենտրոն Բ-133/1  
 Աս

Հայց. կեկեղեցւոյ Կիր. Դպրոցներու Կրօն. Դաս. Խորհուրդս, գնահատելով անցեալի մեջ Ձեր մասուցած ինքնաձեռն ծառայութիւնները Հ. Ե. Կ. դպրոցին մէջ, կը խնդրէ Ձեզմէ այս սարի եւս հաւասարօրէն շարունակել Ձեր պատճառ, համաձայն Կիր. Դպրոցներու հիմնական եւ ներքին կանոնադիրներու տրամադրութեանց, միեւնոյն նուիրումով եւ խանդավառութեամբ:

Խորհուրդս շնորհապէս կը շնորհակալուի Ձեր պատճառ եւ կը մաղթէ որ Տեր պարզեւ Ձեզ երկնային իմաստութիւն, ոյժ եւ կարողութիւն, սանելու Ձեր ուսերուն վրայ դուռած պատասխանատուութեան հաղցը լուծը:

Տեր վարձանասոյց ըլլալ եւ բնորոնի Ձեր ծառայութեան կամաւոր պատարազը՝ զոր վստան ենք այս սարի եւս պիտի մասուցանեմք ի փառս իր Ս. Անուան եւ ի պայծառութիւն Հայց. Ս. կեկեղեցւոյ:

Մնամք յաջողութեան մաղթանքներով եւ օրհնելով՝  
 Ի դիմաց Հ. Ե. Կ. Դպրոցներու Կրօն. Դաս. Խորհուրդին  
 Ա. Դպիր Ա. Պետ

*Մանուկ Գրիգորյան*  
  
*Մանուկ Գրիգորյան*

**ԱՌԱՋԵՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**

**ԲԵՐԻՈՑ ԹԵՄԻՆ**

**Փոստարկը 133**

**Թիւ՝ 60/75**

**Հալէպ, 27 Յունիս 1975**

**ՀԱՍՏԱՏԱԳԻՐ.**

Այսու կը հաստատենք թէ, Տիար Գրիգոր ՀՈՅՈՅՆԱՆ, երեսուն տարիներէ ի վեր եղած է անխոնջ և հաւատարիմ կրթական, մշակ մը Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներէն ներս:

1945 թուականին իբրև ուսուցիչ պաշտօնավարել սկսած է Հալէպի նոր Գիւղի քաժնին մէջ և վերջին տասներկու տարիներուն ձեռնհասօրէն վարած է նեղրոն քաժնի Տեսչութեան պաշտօնը:

Իր ամբողջ պաշտօնավարութեան ընթացքին, իր ծառայասիրութեամբ, պարտամանաչութեամբ, նախաձեռնող ոգիով և կազմակերպչական ծիրքերով մեծ ծառայութիւններ մատուցած է Կիրակնօրեայ մեր վարժարաններուն, անոնց յատկացնելով իր բոլոր ազատ ժամերը:

Այժմ, երբ ՔԱՆԱՏԱ, իր մեկնումին պատճառաւ կը հեռանայ քաղաքէս, իրեն կու տանք սոյն հաստատագիրը իբրև վկայութիւն մեր սիրոյն, երախտագիտութեան և այն անվերապահ գնահատանքին զոր մասնաւոր կերպով կ'ուզենք նշել իբրև լաւագոյն յանձնարարական:

Ողջունիւ սիրոյ,

  
ՏԱԹԵՆԱՐԱՍ. ԿՐԿԻՍՏԵԱՆ  
Առաջնորդ Գրիգոր Բերոյ Թեմին

ՀՈԳԱԲԱՐՉՈՒԹԻՒՆ  
ԱԶԳ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ  
ՀԱԼԷՊ ՍՈՒԽԱ

Քիւ.-

Հալէպ, 18 Սեպտեմբեր 1978

Շ Ր Զ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն  
-----

Մեծայարգ Տիարք՝

Ազգ. վարչութեան Քթղաքական ժողովը Ուրբաթ 7 Սեպտեմբեր 1978-ի իր նիստին, շեզ Ազգ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ Երկսեռ Վարժարանի Հոգաբարձութեան անդամ նշանակած է :

Կը խնդրուի յարգելի անդամներէն Երկուշաբթի 17 Սեպտեմբեր 1978, երեկոյեան ժամը 9-ին, ներկայ գտնուիլ Ս. Զ. Ս. Եկեղղեցւոյ Թաղականութեան սենեակը :

ՏԻԱՐՔ՝

ԳԱՌՆԻԿ ԺՕՁԻԿԵԱՆ  
ԳՐԻԳՈՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ  
ԽՈՐԷՆ ՆԱԶԱՐԵԱՆ  
ԳՐԻԳՈՐ ՀՈԹՅԵԱՆ

ՀՈԳԱԲԱՐՉՈՒԹԻՒՆ  
ԱԶԳ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ





# HAIRENIK ASSOCIATION, INC.

80 BIGELOW AVENUE, WATERTOWN, MASS. 02172 . TELEPHONE: 617-926-3974

3 ՈՒԼԻՍ 1, 1989

Հայ Թգնութեան Միութեան  
Հիւսիսային Ամերիկայի  
Շրջանային Վարչութիւն  
Պոսթօն, Մեսս.

Յարգելի Ընկերուհիներ,

Շնորհակալութիւն ձեր ուղղած հրաւերին՝ «Հայրենիք»ի  
հրատարակութեանց ներկայացուցիչը շրջանիդ Պատգամաւորական  
Ժողովին ներկայ գտնուելու:

Այսու կը յայտնենք, թէ Թորոնթոյի մեր թղթակից-աշխատակիցը՝  
ընկ. Գրիգոր Հոթոյեան ներկայ պիտի գտնուի եւ  
Պատգամաւորական Ժողովի աշխատանքներուն շուրջ յատուկ  
թղթակցութիւն մը պիտի պատրաստէ:

Յաջողութիւններ Պատգամաւորական Ժողովի աշխատանքներուն:

Յարգանքներով

Գէորգ Տօնայեան  
«Հայրենիք»ի Հրատարակութեանց  
Վարիչ Խմբագիր



25 ՄԱՐՏԻ 2002 Թ

ԿԱՆԱԴԱՅՈՒՄ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ  
«ՆՈՐ-ՂԱՐ» ԱՄՍԱԳՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ  
ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԱՆԻՆ

ՍԻՐԵԼԻ ԵՂԲԱՅՐ

ՄՐՏԱՆՑ ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՄ ՀԱՅՏՆՈՒՄ «ՆՈՐ-ՂԱՐ»ԻՆ ՔՈ ՆԿԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ: ՍՏԱՑԵԼ ԵՄ ՔՈ ՈՒՂԱՐԿԱԾ ՆՅՈՒԹԵՐԸ, ՈՐ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ ԿԱՆԱԴԱՅԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ: ԴՐԱՆՔ ԼՈՒՅՍ ԿՏԵՍԵՆ ՄԵՐ ՀԱՆԴԵՍՈՒՄ: ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ «ՆՈՐ-ՂԱՐԻ» ԱՅՍ ՏԱՐԿԱ ԱՌԱՋԻՆ ՀԱՍԱՐԻՑ ՕՐԻՆԱԿՆԵՐ, ՈՐԻ ՄԵՋ ԿԳՏԵՍ ԔՈ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ: ԱՅՍՈՒՀՅԵՏԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՍԱՐՈՒՄ ԿՏՊԱԳՐԵՆՔ ՔՈ ԳՐՎԱԾՔՆԵՐԻՑ:

ՄԵԾԱՊԵՍ ՇՆՈՐՀԱԿԱԼ ԿԼԻՆԵՄ, ԵԹԵ ՔՈ ԲԱՐԵՎԱՍԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՍԲ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՍ ՄԵՐ ՀԱՆԴԵՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ ՈՒ ՎԱՃԱՌՔ ԿԱՆԱԴԱՅՈՒՄ: ԱՅՍ ԳՈՐԾՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԵՆ ՄԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՏԱՐՔԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ: ԴԱ ԿԼԻՆԻ ՄԵԾ ԱՋԱԿՑՂՈՒԹՅՈՒՆ «ՆՈՐ-ՂԱՐ»ԻՆ, ՈՐԻ ՄԵՎ ՀԱՄԱՐՆ ԱՐԺԵ 10\$:

Հարգանքներով եւ կանխավ շնորհակալությամբ՝

ԱԲԳԱՐ ԱՓԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ  
«ՆՈՐ-ՂԱՐ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅ



**ARMENIAN COMMUNITY CENTRE**  
**YOUTH CENTRE - FUND RAISING COMMITTEE**

**ՀԱՅ ԿԵԴՐՈՆ**

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՐԶԱՄԵՆԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ  
ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ


Մարտ 31, 2003

Յարգարժան Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Շաքէ Հոթոյան

Սոյն նամակով մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք ձեզի, ձեր ամուսնութեան յիսնամեակի առիթով, Դպրոցաշինութեան եւ Երիտասարդական Համալիրի Ֆոնտին ձեր կատարած 8,905 տոլարնոց նուիրատութեան համար: Ձեր այս զոհողութիւնը եւ նուիրական վերաբերմունքը մեր նոր սերունդներու ապագային համար կատարուող ներդրում մըն է: Երիտասարդական Մարզամշակութային Համալիրի եւ Երկրորդական Վարժարանի շինարարութեան ձեր մասնակցութեամբ, նպաստած եղաք թորոնթոհայ գաղութի հզօրացման ճիգերուն եւ նորահաս սերունդի հայեցի դաստիարակութեան ազգաշէն աշխատանքին:

Անգամ մը եւս ընդունեցէք մեր խորին շնորհակալութիւնները: Կը յուսանք որ ուրիշներ ալ պիտի հետեւին ձեր ազգանուէր օրինակին :

Յարգանք՝



Միեր Արաբելեան  
Ատենապետ



**Մեծայարգ  
Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Շաբէ Հոթոյեաններ  
Որ ի Թորոնթօ - Գանատա**

**Սիրելիք-**

Հոգեկան անոհուն ուրախութեամբ եւ սրտագին բերկրութեամբ, համաձայն գանատաժան օրէնքին եւ մեզի համար նոյնքան Սուրբ «ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐ»-ուան առիթով, նախ կը շնորհաւորեմ ձեր ընտանեկան սրբութեան պահպանման երկար տարիներու աստուածահիմն սրբութիւնը եւ ապա կը կ'օրհնեմ ձեր երկարամեայ ամուսնական կեանքի քաղցրութեան վայելքը:

Քրիստոնէական ընտանեկան մեր կեանքին սկզբունքն է՝ ապրիլ իրարու հանդէպ ունեցած այլ ու կնոջ համերաշխ համակեցութեամբ, տիրութեամբ, պաշտպանութեամբ, հնազանդութեամբ եւ հաւատարմութեամբ:

**Ձեր երկարամեայ կեանքին վկան է Քրիստոս:**

**Վստահ եմ, որ ունեցաք զժուար օրեր, բայց համբերեցիք:**

**Վստահ եմ, որ ունեցաք ձախորդ օրեր, բայց յոյսերնիդ ու հաւատքնիդ չկորսնցուցիք:**

**Վստահ եմ, որ ունեցաք նաեւ ուրախ եւ երջանիկ օրեր, որոնք Աստուծոյ բարիքներն էին եւ է՛ն ցարդ:**


Անոր համար ալ կը խոնարհիք ձեր ընտանեկան սրբուեան առջեւ, միանգամայն Աստուծոյ խնդրելով, որ մեր ժողովուրդի բոլոր զաւակներն ալ ըլլան ու ապրին ընտանեկան սրբութեամբ լեցուն կեանք մը, սիրով, համբերութեամբ եւ աղօթքով:

Այս առիթով, Կիրակի, 14 Փետրուար, 2010-ին, Սուրբ եւ անմահ Պատարագի աւարտին պիտի գնահատենք ձեզ՝ մեր Եկեղեցոյ գնահատագրով: Առ այդ կը խնդրենք, որ ձեր հարազատներն ու պարագաները տեղեակ պահէք, որպէսզի իրենց ներկայութեամբ ձեր ուրախութիւնը կրկնապատկուի եւ շատերուն համար ըլլաք բարի օրինակ, Աստուծային սիրով ապրած ըլլալնուդ համար:

Ձեր ներկայութեան համար հաճեցէք տեղեակ պահել մեզ, հեռաձայնելով Եկեղեցուոյ գրասենեակը 416 493 8122 թիւին:

Թող Աստուած երկար եւ բերկրալից կեանք պարգեւէ ձեզի՝ յօրինակ այլոց: Եւ թող Մեր Տիրոջ եւ Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի Շնորհքը, Մէրը եւ Աստուածային սրբարար զօրութիւնը ըլլայ ձեզի հետ: Ամէն:

**Համուրելով ձեր ձեռքերը՝  
Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիբեան**

  
Հովիւ



**ՇՆՈՐՀԱԿԱՆԳԷՄՆԵՐ  
ԵՒ ՅՈՒԵԼԵԱՆՆԵՐ**



**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ**

ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՐԻՆ



**HAMAZKAYIN**

ARMENIAN EDUCATIONAL AND CULTURAL SOCIETY

Համազգային Հայ Կրթական և Մշակութային Միության  
«Գլաձոր» Մասնաճյուղի Վարչությունն ու Գրատարածի  
Յանձնախումբը  
կը հրապարակե՞ գրական հանդիպումի մը՝  
Նուիրում

**Ընկ. Գրիգոր Հոթոյեանի  
«Նուիրում»**

Բանաստեղծութիւններու և երգերու վերածում ճատրիկ

Գիրքը պիտի ներկայացնե՞  
**ընկ. Անահիտ Պապայեան**

Օրուան հանդիսավար՞  
**ընկ. Սագօ Ղազարեան**

Տեղի կ'ունենայ  
Կիրակի՝ 12 Յունուար 2003, կ.ե. ժամը 1:30ից  
Յ. Մանուկեան Գրադարանին մէջ

Ձեռնարկէն առաջ հիւրասիրութիւն

**ՄՈՒՏՔԸ Ա.ԶԱՏ**



45 HALLCROWN PLACE WILLOWDALE ONTARIO M2J 4Y4 CANADA

## ՔՆԱՐԵՐԳԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ

Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Թո-  
րոնթոյի «Գլաճոր, գրականութիւն եւ գիրք» ձեռնարկներու շարքին  
մէջ «Նուիրում» գրքի ներկայացումը 12-րդն է:

Հեղինակը, «Հորիզոն»ի ծանօթ թղթակից՝ Գրիգոր Հոթոյեան,  
ներկայ է ձեռնարկին: Ներկայ են նաեւ Հայ եկեղեցիներու հովիւներ  
Հ. Եղիա Մ. Վրդ. Գիրէջեան եւ Հ. Մեղրիկ Մ. Վրդ. Բարիքեան: Կիրա-  
կի, 12 Յունուար 2003, կ. ե. ժամը 1:30 է եւ Համազգային գրադարանը  
լեցուն է գրասէրներով:

Համազգային Գլաճոր մասնաճիւղի վարչութեան եւ գրատարա-  
ծի անունով բարի գալուստի խօսքը կ'ընէ օրուան հանդիսավար Սար-  
գիս Ղազարեան: Ան կը ներկայացնէ Գրիգոր Հոթոյեանը եւ կ'ըսէ.  
«Գլխագիր հայ մըն է, հայ ըլլալը էութիւն է իր գոյութեան համար:  
Անհուն հայրենասիրութենէ բխող իր լաւատես հաւատքը անընկճելի  
է: Անցած է ան կեանքի բոլոր տառապանքի ուղիներէն եւ հասած  
յարգելի դիրքի մը՝ բնաւ չկորսնցնելով իր հայու ոգին եւ բնաւ չհե-  
ռանալով հայութեան իր սէրէն: Միշտ ըսելիք ունի ան, լեցուն տո-  
կուն է, ճիշդ, յաճախ բաբախուն, սովորաբար՝ պատկերաւոր»: Ղա-  
զարեան կու տայ բանաստեղծի կենսագրականը: Գրիգոր Հոթոյեան  
զաւակն է սասունցիներու, ծնած է Հալէպ, Սուրիա: Վարած է ուսուց-  
չական, տնօրէնութեան եւ հոգաբարձութեան պաշտօններ, հայկա-  
կան ամէնօրեայ եւ կիրակնօրեայ վարժարաններու մէջ: Եղած է նաեւ  
գրաշար, զինուոր, ենթասպայ, ելեկտրագէտ: 1975-ին հաստատուած  
է Թորոնթօ, ուր շարունակած է ստանձնել ազգային այլ պատասխա-  
նատուութիւններ, ինչպէս Համազգայինի ատենապետութիւն, Շրջա-  
նայինի ներկայացուցիչ եւ եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենա-  
դպրութիւն: Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէչլիրեան» կոմիտէութեան կողմէ  
նշանակուած է «Հայրենիք»ի եւ «Հորիզոն»ի թղթակից, Հայ Կեդրոնի  
«Լրատու»ի խմբագիր, նաեւ «Հայ Կեդրոնի Ձայն»ի խօսնակ: Շարքը  
երկար է իր կամուրդ աշխատանքի ցուցակին: Գանատայի կառավա-  
րութենէն եւ հայկական զանազան միութիւններէ պարգեւատրուած է  
եւ ստացած զնահատագրեր:

1987-ին հրատարակած է «Սիրտը Ափին Մէջ» հատորը: 2002-ին  
մասնակցած է գրողներու համահայկական առաջին խորհրդաժողո-  
վին, Երեւան: Ան իր լեզուի հմտութիւնը եւ կարողութիւնը զարգա-  
ցուցած է ինքնաշխատութեամբ եւ հետեւողականութեամբ: Կարելի  
չէ թուել թղթակից, յօդուածագիր, խմբագիր, ուսուցիչ, ազգային գո-  
րծիչ եւ խօսնակ Գրիգոր Հոթոյեանի բոլոր գործերը եւ նուաճումները,  
որովհետեւ աւելի քան 65 տարի մասնակցութիւնը, ջանքը, գրիչը եւ

ներգրուամբ բերած է 75-ամեայ այս մշակութասէր, հայրենասէր եւ ծառայասէր մեր քնարերգակը:

«Նուիրում» գիրքը կը ներկայացնէ ընկՏ. Անահիտ Պապայեան: Ան կ'անդրադառնայ գիրքի գանազան բաժիններուն: Առաջին մասը, «Իմ երգարանը», կ'ընդգրկէ շուրջ 30 բանաստեղծութիւններ, որոնք վերածուած են երգերու, երաժշտութեամբ ծանօթ երաժշտագէտներու եւ խմբավարներու, ինչպէս՝ Էդիկ Յովսէփեան, Սարգիս Համպոյեան, Անահիտ Կուտսուգեան, Յակոբ Մանուկեան, Գէորգ Անտոնեան, Գէորգ Յարութիւնեան, Հրաչ Շէհիրեան: Քերթուածներուն կ'ընկերանան երաժշտական նոթաներ: Պապայեան կը մէջբերէ Նիւ Եորքէն երաժշտագէտ եւ խմբավար Գրիգոր Փիտէճեանի նկատողութիւնը. «Բացառիկ երեւոյթ է բանաստեղծի համար, որ այսքան քերթուածներ վերածուին երգերու»:

Գրքին երկրորդ մասը «Որդիական» խորագիրը կը կրէ, ուր բանաստեղծը կը խրի իր արմատներուն՝ Սասուն, Սուրիա, Հայաստան, նաեւ իր բաբախուն սիրտը կ'երթայ դէպի «Գողարիկ երագ», «Անկեղծ սէր», «Գաղտնի սէր»:

Երրորդ մասը՝ «Նուիրում», ձօնուած է իր սիրելի անձերուն՝ երաժշտագէտ, բանաստեղծ կամ թոռնիկ:

Պապայեան մէջբերումներ կը կատարէ գանազան արձակագիրներէ եւ բանաստեղծներէ, ինչպէս՝ Հրաչեայ Մաթեոսեան, Յակոբ Կարապետեան եւ Պերճ Թ. Կերոնեան, որոնք Հոթոյեանի ոճը կ'որակեն հարուստ, սահուն եւ ճկուն, կը բացատրեն ոգին, իր անսպառ սէրը դէպի հայրենիք՝ Հայաստան, հայերէն եւ Հ.Յ.Դ.:

Ընկերուհիներ Շուշիկ Պէրպէրեան եւ Անահիտ Պապայեան մերթ ընդ մերթ կը ներկայացնեն իր քերթուածներէն մասեր:

Գրքի մեկենասն է Հոթոյեանի դուստրը՝ Անին: Այս երեւոյթը գնահատելի է, երբ գաւակները անդրադառնան եւ արժեւորեն իրենց ծնողքի տաղանդը, կու տան իրենց անհուն գոհունակութիւնը:

«Նուիրում» գրքի խմբագիրն է Սասուն Գրիգորեան, նախաբանը գրած է Հրաչեայ Մաթեոսեան: Հրատարակիչն է «Ուխտատուն» թանգարան ինստիտուտը: Տպուած է Երեւան, 2002-ին:

Անահիտ Կուտսուգեան իր յօրինումով կ'երգէ եւ կիթառի վրայ կը նուագէ «Հրաժեշտ կու տաս» Հոթոյեանի քերթուածը:

Ըստ գրատարածի աւանդութեան, հրատարակուած գիրքեր կը նուիրուին «Նուիրում»ի հեղինակին:

Գրիգոր Հոթոյեան կը հրաւիրուի իր սրտի խօսքը ըսելու: Ան կը բացատրէ ներկայ հեղինակներու դժուարութիւններուն մասին, ըլլայ այդ հրատարակելու կամ տարածելու իրենց գործերը, թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Սփիւռքի մէջ: Իր անձնական կեանքին մէջ կ'անդրադառնայ իր կողակիցին՝ Շաքէին, որ կէս դար թիկունք կանգնած է իրեն: Իր գրական ասպարէզին մասին կ'ըսէ. «Արհեստի աշխարհին մէջ

չկարողացայ բարձրանալ եւ հարստանալ գրականութեան սիրոյս պատճառաւ, իսկ ապրուստս ճարելու համար չկարողացայ հմտանալ գրելիս մէջ»:

Հայր Մեղրիկ Բարիքեանի սրամիտ խօսքերով կ'աւարտի ձեռնարկի պաշտօնական մասը: Սուրճի եւ կարկանդակի հիւրասիրութեան ընթացքին կ'ըլլայ գրքի մակագրութիւն:

Բոլորս կ'ըսենք՝ «Վարձքդ կատար, ընկ. Հոթոյեան, որ եղար մեր գաղութին ճշդապահ թղթակիցը եւ քնարերգակ բանաստեղծը»:

«Նուիրում» գիրքը ստանալու համար կարելի է դիմել Համագրայինի Գանատայի գրատարածի կեդրոնները, կամ հեղինակին՝ Գրիգոր Հոթոյեանին, Թորոնթօ:

ԱՐՇՕ ԶԱՔԱՐԵԱՆ

«Հորիզոն», 10 Մարտ 2003



## ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Սփիւռքի մէջ կան գրական, մշակութային եւ հասարակական գործիչներ, որոնք միայն ու միայն կը ծառայեն իրենց ազգանուէր ուխտին, նոր սերունդի հայեցի դաստիարակութեան, Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի տարածքային, լեզուական ու գաղափարական միասնութեան:

Անոնցմէ է բանաստեղծ, արձակագիր, դաստիարակ, լրագրող, հրապարակախօս, ազգագրագէտ, արմատներով սասունցի Գրիգոր Հոթոյեանը:

Ո՞վ է Գրիգոր Հոթոյեան:

Գրիգոր Հոթոյեան գլխագիր հայ մըն է: Հայ ըլլալը էութիւն է իր գոյութեան, եւ անհուն հայրենասիրութենէ մը բխող իր լաւատես հաւատքը անընկճելի է:

Անցած է կեանքի տառապանքի բոլոր ուղիներէն ու հասած է յարգելի դիրքի մը՝ բնաւ չկորսնցնելու հաւատքով իր հայու ոգին եւ բնաւ չհեռանալով հայութեան եւ հայ գրականութեան սէրերէն:

Գրիգոր Հոթոյեան միշտ ըսելիք ունի, լեզուն տոկուն է, ճիշդ, յաճախ բաբախուն, սովորաբար պատկերաւոր:

Ծնած է 5 Օգոստոս 1927-ին, Հալէպ, Սուրիա:

1941-ին աւարտած է Հալէպի Նոր Գիւղ թղթամասի ազգային Սահակեան երկսեռ վարժարանը:

Համաշխարհային Բ. Պատերազմի ընթացքին՝ 1943-ին, գինու-  
րագրուած է Ֆրանսական բանակին եւ արձակուած 1946-ին՝ ենթա-  
սպայի աստիճանով:

Գրաշարութիւն սորված է Հալէպի Ուսուցչական Միութեան  
«Սեւան» տպարանին մէջ: Ապա որպէս գրաշար, սրբագրիչ եւ աշ-  
խատակից մաս կազմած է «Արեւելք» օրաթերթի անձնակազմին:

Տնօրէնութեան պաշտօն վարած է 1950–1951 տարեշրջանին Սու-  
րիոյ Ռազգա քաղաքի ազգային վարժարանէն ներս, ուր նոյն շրջա-  
նին հիմնած է կիրականօրեայ դպրոց ու վարած տեսուչի պաշտօն:

1946-էն 1975 պաշտօնավարած է իբրեւ ուսուցիչ եւ տեսուչ Հա-  
յաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կիրականօրեայ դպրոցներուն  
մէջ եւ արժանացած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ-ի  
օրհնութեան եւ գնահատանքի գիրին:

1984-ին Թորոնթոյի մէջ վարած է Հայ Օգնութեան Միութեան  
ամառնային վարժարանի տնօրէնութիւնը:

Մինչեւ Գանատա Հաստատուիլը՝ 1975, իբր ելեկտրագէտ աշխա-  
տած է Սուրիոյ ու Լիբանանի զանազան ընկերութիւններէ ներս:

Գանատա Հաստատուելէն ետք, Թորոնթոյի Հ. Յ. Դ. «Սողոմոն  
Թէհլիրեան» կոմիտէի կողմէ նշանակուած է պաշտօնական թղթակից  
«Հայրենիք» օրաթերթին, ապա՝ Գանատայի Հայ Յեղափոխական  
Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէի օրկան «Հորիզոն» շաբա-  
թաթերթին, նոյն ժամանակ վարելով ներկայացուցիչի պաշտօն «Ազ-  
դակ-Շաբաթօրեակ»ի, «Դրօշակ»ի, «Բագին»ի, Հայաստանի «Ազա-  
տամարտ»ի եւ «Երկիր» օրաթերթերուն:

Երեք շրջան վարած է Համազգայինի Թորոնթոյի մասնաճիւղի  
վարչութեան ատենապետութեան պաշտօնը եւ երեք շրջան՝ Համազ-  
գայինի Գանատայի շրջանային վարչութեան փոխատենապետի եւ ատ-  
ենադպրութեան պաշտօնները:

Երեք շրջան մաս կազմած է Թորոնթոյի Սուրբ Աստուածածին  
Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հոգաբարձութեան՝ իբրեւ  
ատենադպիր: Եկեղեցւոյ իր ծառայութեան Համար արժանացած է  
Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան եւ Գանատայի Թեմի Առաջնոր-  
դարանի օրհնութեան ու գնահատանքի պաշտօնական գիրին, ձե-  
ռամբ Առաջնորդ Մեսրոպ Արք. Աշճեանի (այժմ վախճանեալ):

1977–1987 ստանձնած է Թորոնթոյի Հայ Կեդրոնի «Լրատու»  
պաշտօնաթերթի խմբագրութիւնը շուրջ տասը տարի եւ եօթը տարի  
վարած է «Հայ Կեդրոնի Զայն»ի հեռաձայնային լուրերու յայտագի-  
րը՝ որպէս խմբագիր եւ խօսնակ:

Գրիգոր Հոթոյեան իր հայերէնի հմտութիւնը ձեռք բերած է ինք-  
նաշխատութեամբ, հետեւած է հայագիտական դասընթացքներու, քա-  
ղաքներու՝ որպէս գրող դաստիարակուած է հայ գրագէտներ Անդրա-  
նիկ Ծառուկեանի, Սիմոն Սիմոնեանի, Եղուարդ Պոյաճեանի, Արմէն

Անոյշի (Մարաշլեան), Մինաս Թէօլէօլեանի, Կարօ Սասունիի, Շաւարշ Միսաքեանի, եւ որպէս դաշնակցական՝ 1946-էն ի վեր դաշնակցական գործիչներ Հրաչ Փափազեանի, Միհրան Հերարդեանի, Լուտեր Մասպանաճեանի, Յարութիւն Չազրբեանի, Հերոսածին Դրոյի եւ սասունցի Ֆետայիներու շունչին տակ եւ ուխտած է ծառայել Հայ ազգին՝ դառնալով ուխտեալ դաշնակցական, միշտ մնալով գրականութեան պատնէշին վրայ աւելի քան 60 տարիներ:

Իր բանաստեղծութիւնները, յօդուածներն ու պատմուածքները լոյս տեսած են Սփիւռքի գանազան թերթերու մէջ:

Իր բանաստեղծութեան առաջին հատորը՝ «Սիրտը Ափին Մէջ» լոյս տեսած է Թորոնթօ, 1987-ին, ապա, 2002-ին՝ «Նուիրում» հատորը, 2004-ին՝ «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» եւ 2007-ին՝ «Ճանապարհ» ծաւալուն հատորը՝ 874 էջ:

«Ճանապարհ» ծաւալուն հատորը չեմ կրնար որեւէ ձեւով վերլուծել, սակայն իբր արխիւային հրատարակութիւն՝ մեծ է անոր դերն ու արժէքն Հայ գաղութներու կեանքին մէջ: Հոն Հայ ընթերցողը կամ պատմաբանը կը գտնէ ու կը սուզուի պատմութեան գիրկը՝ գտնելով աղբիւրը Թորոնթոյի Հայ գաղութին պատմական, ազգային, կրօնական, գաղափարական, մշակութային կեանքին, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի գաղութային կեանքին, ուր մասնակից կը դառնան գաղութներու պատմութեան դէպքերուն:

Մասնակցած է Հայաստանի Գրողներու Միութեան Համահայկական Ա. եւ Բ. (2002, 2004) Համաժողովներուն:

2005-ին ան արժանացած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազանգոյն Կաթողիկոսին: 2004-ին՝ իր գործունէութեան 60-ամեակին առթիւ՝ Հայաստանի Գրողներու Միութեան շնորհագիրին եւ Միջազգային Ռազմածովագիրներու Միութեան անդամակցութեան շնորհագիրին, իսկ 2001-ին՝ Հայաստանի Գրողներու Միութեան «Գրական Վաստակ» ոսկեայ մետալին:

Ան ամուսնացած է Շաքէին Հետ եւ ունի երկու զաւակ՝ Անդրանիկ եւ Անի:

Գրիչ գալար, ընկեր Հոթոյեան:

ՍԱԳՕ ՂԱԶԱՐԵԱՆ  
Ատենապետ Ս. Աստուածածին  
Հայց. Առաք. Եկեղեցւոյ  
Հոգաբարձութեան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ПРАВЛЕНИЕ СОЮЗА ПИСАТЕЛЕЙ АРМЕНИИ

BOARD OF THE WRITERS' UNION OF ARMENIA

№ Բ.Գ.-01

«10» ... հունվարի ... 2003 թ.

Միության նախագահ  
Председатель Правления  
Chairman of the Board

Մեծարգո Գրիգոր Հորոյան,

Միրելի գրչեղբայր,

Մայր Հայրենիքում և ողջ Սփյուռքում ստեղծագործող հայ գրողների և Հայրենիքի զինուխաչալների անունից շնորհավորում ենք Ձեզ ծննդյան 75-ամյակի առթիվ, ցանկանում գրական, հրապարակախոսական և ստեղծագործական էլ ավելի հաջողություններ, քաջ առողջություն և արևշատություն ի փառս մեր գրական ընտանիքի հզորացմանն ու մատաղ սերնդի հայեցի դաստիարակման:

Մեր խորհին շնորհակալություններն ենք հայտնում Կանադայում Ձեր ծննդյան 75-ամյակը կազմակերպող ձեռներեցներին, հովանավոր-մեկենասներին և միշտ Ձեզ հետ Հայրենիք - Սփյուռք կապը ամրապնդողներին:

2003 թվականը, տա Ատաված, լինի Ձեր բոլոր իղծերի և գրող - տարոնցու սուրբ ցանկությունների իրականացման տարի:

Հարգանք, սիրով և համբույրներով:

Միշտ Ձերդ բարեկամներ՝

Լևոն Անանյան  
ՀԳՄՆ նախագահ



Սասուն Գրիգորյան  
Ռազմական գրողների միջազգային  
ընկերակցության փոխնախագահ  
«ՈՒՆՏԱՏՈՒՆ»  
թանգարան – ինստիտուտի տնօրեն



Յուկունւար 10, 2003

Սիրելի ընկ. Հոթոյեան

«Հորիզոն»ի խմբագրութիւնն ու անձնակազմը սրբանց կ'ողջունէ ձեր 75-ամեայ յոբելեանը եւ այդ առթիւ ձեզի կը մաղթէ առողջութիւն եւ աննկուն կամք:


Իբրեւ թերթիս երկարամեայ աշխատակից, ընկ. Հոթոյեան ամբողջական նուիրումով եւ անշահախնդրօրէն ծառայած է Հ.Յ.Դաշնակցութեան մամուլյ մեծ ընկանիքին, ուր իր գրած յօդուածներն ու թղթակցութիւնները լոյս տեսած են «Հորիզոն»ի, «Հայրենիք»ի, «Ասպարէզ»ի, «Ապար օր»ի եւ այլ թերթերու մէջ:

Հրապարակագրական իր աշխատանքներուն կողքին, ընկ. Հոթոյեան իր ներդրումը բերաւ նաեւ գրական աշխարհին մէջ, եւ իր լաջորդական հրատարակութիւններով ծաղկեցուց հայ գրականութեան անդաստանը:

Սիրելի ընկ. Հոթոյեան Ձերմօրէն կը շնորհաւորենք ձեր երկարամեայ վաստակը եւ ձեզի կը մաղթենք բարի փարեղարձ:

Սիրով եւ լաջողութեան լաւագոյն մաղթանքներով

ԿԱՀԱԳՆ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ



ԿԱՐԻՑ ԽՄԲԱԳՐ

«ՀՈՐԻԶՈՆ»

## ՄԵԾԱՐԱՆՔԻ ՑԵՐԵԿՈՅԹ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՁ

Կազմակերպութեամբ Հայաստանի Գրողներու Միութեան, Ռազմածովագիրներու Միջազգային Ընկերակցութեան Հայկական վարչութեան եւ Մեծ Եղեռնի ու Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-հիմնարկին, Չորեքշաբթի, 14 Յուլիս 2004, կ. ե. ժամը 3:00-ին, Հայաստանի Գրողներու Միութեան կլոր սեղանի սրահին մէջ տեղի ունեցաւ գանատահայ բանաստեղծ, արձակագիր եւ հրապարակագիր Գրիգոր Հոթոյեանի գրական-ստեղծագործական եւ հասարակական գործունէութեան 60-ամեակին նուիրուած մեծարանքի ցերեկոյթը, որուն ներկայ գտնուեցան Հայաստանէն եւ Սփիւռքէն գրողներ եւ գրասէր ազգայիններ:

Բացման խօսքով հանդէս եկաւ Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեան, որ անդրադարձաւ Գրիգոր Հոթոյեանի գրական կեանքին՝ Սուրբոյ Հալէպ քաղաքէն մինչեւ Գանատա, 60 տարիներու վրայ ծաւալող բանաստեղծական, գրական եւ հրապարակագրական ստեղծագործութիւններուն:

Որպէս բանախօս, բանաստեղծ, պատմաբան, հրապարակագիր եւ Ռազմածովագիրներու Միջազգային Միութեան փոխնախագահ Սասուն Գրիգորեան խօսք առնելով՝ անդրադարձաւ Գրիգոր Հոթոյեանի կեանքին, տալով անոր կենսագրութեան ամփոփ գիծերը, ընդգծելով կարեւորութիւնը անոր մշակած գրականութեան՝ հայ ազատագրական պայքարին, Արցախի ինքնապաշտպանութեան մարտնչուններուն եւ հայ ազատամարտիկներուն նուիրուած բանաստեղծութիւններուն եւ գրութիւններուն ընդմէջէն, ինչպէս նաեւ Հայոց Մեծ Եղեռնի եւ Հայ Դատի յիշատակութեան, ինքնաճանաչման եւ արդարութեան յաղթանակի իրագործման պայքարը շեփորող գրութիւններուն:

Խօսք առաւ, Թորոնթոյէն, Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի տընօրէն Մարգար Շարապխանեան, որ իր անձնական վկայութիւնները տուաւ Գրիգոր Հոթոյեանին հետ իր միութենական եւ գրական գործակցութեան մասին, մանաւանդ գնահատելով որպէս «Հորիզոն»ի 25-ամեայ թղթակից-աշխատակից անոր կատարած անհատական գիր աշխատանքները, եւ, որպէս խմբագիր, Հայ Կեդրոնի «Լրատու» ամսագրին 10-է աւելի տարիներ անհատոյց աշխատակցութեան:

Այնուհետև հերթականօրէն խօսք առին բանաստեղծուհի Լիլիթ եւ Մետաքսէ, արձակագիր Հրաչեայ Մաթեւոսեան, գեներալ-մայոր բանաստեղծ Սամուէլ Սաֆարեան, պատմական գիտութիւններու դոկտոր արձակագիր Արմենակ Մանուկեան, Հայաստանի խորհրդարանի անդամ բանաստեղծ Թաթուլ Մանասէրեան եւ Նիւ Եորքէն բանաստեղծ, թատերագիր Դոկտ. Հրանդ Մարգարեան:

Խօսողները գնահատանքով արտայայտուեցան Գրիգոր Հոթոյեանի գրականութեան եւ ստեղծագործութիւններուն, ընդգծելով յատկապէս անոր խոնարհ եւ ազնիւ նկարագիրը եւ անձնուէր ծառայութիւնը իր պատկանած կուսակցութեան՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ, որոնց ծառայած է իր մանկութենէն սկսեալ:

Հ.Հ. Ժողովրդական դերակատար Ժենիա Աւետիսեան եւ ասմունքող Գայրիանէ Սամուէլեան արտասանեցին Գրիգոր Հոթոյեանի ազգային եւ սիրային բանաստեղծութիւններէն փունջ մը:



14 Յուլիս 2004-ին, Հայաստանի Գրողներու Միութեան կլոր սեղանի սրահին մէջ տեղի ունեցող Գրիգոր Հոթոյեանի գրական-ստեղծագործական եւ հասարակական գործունէութեան 60-ամեակը: Ձեռնարկի վերջաւորութեան Գրիգոր Հոթոյեան խօսք առաւ շնորհակալական խօսք արտասանելու կազմակերպողներուն: Ձախէն աջ՝ քատերագիր, բանաստեղծ Հրանդ Մարգարեան, գեներալ-մայոր Սամուէլ Սաֆարեան, Գրիգոր Հոթոյեան, բանաստեղծ, պատմաբան եւ «Ուխտատուն» հիմնարկութեան տնօրէն Սասուն Գրիգորեան, Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեան:

Յայտագրի աւարտին խօսք առաւ Գրիգոր Հոթոյեան եւ իր սըր-տաբուխ շնորհակալութիւնները յայտնեց ձեռնարկը կազմակերպող միութիւններուն եւ կազմակերպութիւններուն, խօսք առնողներուն եւ ասմունքողներուն:

Որպէս գնահատանք Գրիգոր Հոթոյեանի ազգային, ազատագրական եւ ռազմական գրութիւններուն, Սասուն Գրիգորեան Ռազմածովագիրներու Միութեան անդամատետրը յանձնեց մեծարեալին:

Եւ որպէս գնահատանք Գրիգոր Հոթոյեանի Հայոց Մեծ Եղեռնի եւ Հայ Դատի նուիրած բանաստեղծութիւններուն եւ գրութիւններուն՝ Դոկտ. Արմենակ Մանուկեան Հոթոյեանին յանձնեց Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» հիմնարկի թանգարանի «Շնորհագիր»ը:

Չորեքշաբթի, 14 Յուլիսի գիշերը, Երեւանի հեռատեսիլի 3 հայկական կայանները անդրադարձան ցերեկոյթին:

Ե. Թ.

«Հորիզոն», 2 Օգոստոս 2004



Զախէն աջ՝ Մարգար Շարապիսանեան, Գրիգոր Հոթոյեան, Յակոբ Կարապետեան եւ Գալուստ Պապեան, 20 Յունիս 1994

«Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»  
ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ

Շ առՐՀԱՀԱՆԴԵԱ - Գ ԻՆԵՉՕՆ

Բանաստեղծ, Արձակագիր եւ Հրապարակագիր  
**ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ**

«Ի ԽՆԴԻՐ  
ԲԱՐՈՅԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»

Պատմուածքներու Հատորին

եւ

Պատկերիցի Ցուցադրութիւն

Հեղինակին Գրական Գործունէութեան

Վաթսունամեակի Յօրեղանէն, Երեւանի մէջ

Հովանաւորութեամբ՝

**ԲԱՐՁՐԱՀՆՈՐՀ**

**ՏԵՐ ԽԱԺԱԿ ՍՐԲ. ԱՐՔ. ՅԱԿՈԲԵԱՆԻ**

Ա.Ռ.Ա.ԶՆՈՐԴ ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

Կազմակերպութեամբ՝

Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցոյ

ՔՐԻՍՏՈՆՆԵԱԿԱՆ ԴԵԱՏԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱՍՈՒԻՐՈՒ

Հինգշաբթի, 5 Մայիս, 2005, Երեկոյեան ժամը 8:00-ին

Եկեղեցոյս «ՅՈՎԱՆԵԱՆ» սրահին մէջ

Զեւոնարկէն ետք հիւրասիրութիւն եւ գիրքերու մակագրութիւն

# ԱՅՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Սիրելի ընթերցող,

Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբը ուրախութեամբ լոյս կ'ընծայէ համայնքիս գաւակներէն՝ բանաստեղծ, արձակագիր եւ հրապարակագիր Գրգոր Հոթոյեանի «Ի ԽՆ ԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ» անունով խորագրեալ բարոյալից պատմութիւններու այս հատորը, որուն մէջ լոյս տեսած պատմուածքները նախապէս հերթաբար հրատարակուած են եկեղեցւոյ «ՇՈՂԱԿԱԹ» կրօնական ամսաթերթին մէջ:

Հեղինակին նպատակն է ցոյց տալ յետեղեռնեան հայու աննուած եւ անշահախնդիր արժանապատուութիւնը: Գրքի հերոսներէն ոմանք կը ներկայացնեն մեր ժողովուրդի խոնարհ ու համեստ դասակարգը: Ոմանք՝ մոլորած, բայց ի վերջոյ ճշմարտութեան հասնող դասակարգը: Ոմանք՝ այն սերունդը, որ Հայոց Յեղասպանութենէն ազատելով՝ նոր արեւ եւ կեանք ստեղծեց, ապրելու եւ հայօրէն ապրելու համար: Ոմանք հայու աննահանջ կամքով ապրեցան եւ գոյատեւեցին: Հոթոյեանի բարոյալից ներկայ պատմութիւններու հերոսներուն անունները պարզապէս պատշաճեցուած են. դէպքերը կրնան ճշմարիտ ըլլալ, բայց անոնց անուան յիշատակումները ոեւէ անձ չեն ենթադրեր:

Սոյն գիրքը չի վաճառուիր, այլ՝ անոր համար եղած իւրաքանչիւր սրտաբուխ նուիրատուութիւն պիտի յատկացուի այլ հրատարակութիւններու:

Այս առիթով կ'ուզենք յատուկ շնորհակալութիւն յայտնել թեմիս առաջնորդ Գեղշ. Տ. Խաժակ Սրբ. Արք. Յակոբեանին՝ իր հովանաւորութեան եւ քաջալերանքին համար:

Շնորհակալութիւն «ՇՈՂԱԿԱԹ»ի խմբագիր Վիգէն Խանամիրեանին եւ Տիկիւն Սիւզի Գալթակեանին՝ իրենց անվերապահ օժանդակութեան եւ աջակցութեան համար:

Շնորհակալութիւն մանաւանդ եկեղեցւոյս հոգաբարձութեան՝ իր հովանաւորութեան եւ անվերջ քաջալերանքին համար:

ՔՐԻՍՏ. ԴԱՍ. ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ



## ԽՕՍՔ ՀԱՅՐԱԿԱՆ

Սիրելի անդամներ եւ անդամուհիներ  
Քրիստոնէական Դաստիարակութեան  
Յանձնախումբի

Որ ի Թորոնթօ — Գանատա

Արտի անհուն ուրախութեամբ եւ բերկ-  
րանքով իմացայ, որ այս տարի, Հայոց Յե-  
ղասպանութեան 90-ամեակին առիթով, պի-  
տի հրատարակէք Գրիգոր Հոթոյեանի «Ի  
ԽՆ ԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԸՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»  
հատորը:



Գրիգոր Հոթոյեան մեր թեմի ամէնէն  
հաւատաւոր, անձնուրաց եւ անշահախնդիր ծառաներէն մին է, որ  
արժանի է ամէն գնահատանքի: Արդարեւ, անցնող աւելի քան քսան  
տարիներու ընթացքին, մենք՝ որպէս հովիւ, առաջնորդական փո-  
խանորդ եւ առաջնորդ, վկայեցինք ու այսօր կը վերահաստատենք,  
թէ Գրիգոր Հոթոյեանը եղաւ ճշմարտօրէն արժանի մշակ հայ գրակա-  
նութեան անդաստանին մէջ, որպէս բանաստեղծ, յօդուածագիր եւ  
թղթակից, աշխատակցելով սփիւռքեան եւ հայաստանեան բազմաթիւ  
օրաթերթերու, շաբաթաթերթերու, ամսագիրներու եւ պարբերաթեր-  
թերու:

Որպէս կիրակնօրեայ վարժարաններու ուսուցիչ, հաւատացեալ  
հայորդի եւ աստուածավախ քրիստոնեայ, ինքզինք խառնեց Հայ Ե-  
կեղեցւոյ կեանքին հետ, նոյնացաւ անոր առաքելութեան եւ տեսիլք-  
ներուն հետ:

Տագնապեցաւ ու պայքարեցաւ ի խնդիր հայ մշակոյթի պահ-  
պանման, անոր համար ալ, որպէս մշակ՝ արժանի է իր վարձքին:

Կը շնորհաւորենք ձեզ, որպէս քրիստոնէական դաստիարակու-  
թեան պահպաններ, ձեր այս գեղեցիկ մտածումին համար, եւ այս  
առիթով անգամ մը եւս բարձրօրէն կը գնահատենք Գրիգոր Հոթոյ-  
եանի գրական վաստակը, անոր մաղթելով երկար եւ առողջ կեանք՝ ի  
փառս հայ դպրութեան եւ ի պատիւ մեր ժողովուրդին:

Մեր նահատակներուն ձօնուած այս հատորը թող յուշարձան մը  
ըլլայ իւրաքանչիւր հայու համար:

Եւ թող Քրիստոսի շնորհքը, սէրը եւ աստուածային սրբարար  
գօրութիւնը բոլորիդ հետ ըլլայ:

Աղօթարար՝

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՅԱԿՈԲԵԱՆ  
Առաջնորդ Գանատայի Հայոց





**ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ-ԳԻՆԵՉՕՆ  
ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ  
«Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ  
ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»  
ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐՈՒ ՀԱՏՈՐԻՆ**

Հովանաւորութեամբ Գանատայի Հայոց Առաջնորդ Բարձրաշընորհ Տ. Խաժակ Ս. Արք. Յակոբեանի եւ կազմակերպութեամբ Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայոց. Առաք. Եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին, տեղի ունեցաւ շնորհահանդէս-գինեձօն բանաստեղծ, արձակագիր եւ հրապարակագիր Պրն. Գրիգոր Հոթոյեանի «Ի Խնդիր Բարոյական ձգձարտութեան» պատմութեան հատորին, Հինգշաբթի, 5 Մայիս 2005, երեկոյեան ժամը 8:30-ին, եկեղեցւոյ «Յովնանեան» սրահին մէջ:

Շնորհահանդէսը իրենց ներկայութեամբ պատուեցին Սրբ. Աստուածածին Եկեղեցւոյ հովիւ Գերպ. Տ. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան, Հայ Կաթողիկէ Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հովիւ Գերայրգելի Տ. Եղիա Ծ. Վրդ. Գիրէջեան, Գէմպրիճի Սրբ. Նշան Եկեղեցւոյ հովիւ Արժ. Կոմիտաս Քահանայ Փանոսեան, Վերապատուելի Եսայի Սարմազեան եւ հոծ թիւով գրասէրներ ու բարեկամներ:

Պատրաստուած էր կոկիկ յայտագիր մը, ուր բացման խօսքով հանդէս եկաւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ Պրն. Սարգիս Ղազարեան, ապա հերթաբար խօսք առին Քրիստոնէական Յանձնախումբի անունով Ալիս Թիթիգեան, Հ. Եղիա Ծ. Վրդ. Գիրէջեան, Վերպ. Եսայի Սարմազեան եւ Յակոբ Մանուկեան, որոնք իրենց սրտի խօսքերով վեր առին Գրիգոր Հոթոյեանի հայ գիրի եւ հայ գրականութեան իր բերած անխոնջ ու անսակարկ սպասարկութիւնը, իր ժողովուրդի մահու եւ կենաց պայքարի ընդմէջէն, Հայ Գողգոթայի անմիջապէս յաջորդող տարիներուն, որպէս հրապարակագիր, բանաստեղծ եւ արձակագիր:

Մէջընդմէջ ասմունքեցին Գրիգոր Հոթոյեանի բանաստեղծութիւններէն Նաթալի Մքլաուտ՝ «Սուրբ Մեսրոպ», Տարօն Քէսքինեան՝ «Սուրբ Աստուածածին» եւ Թորոս Մայտոսեան՝ «Հայաստանեայց Եկեղեցի» եւ ընթերցեցին իր գրութիւններէն Տանիէլ Օհանեան, Նաթալի Ճիկէրճեան եւ Իուրէն Պետրոսեան, իսկ Սարգիս Ղազարեան կարդաց Արժ. Տ. Արմէն Ա. Քահանայ Իշխանեանի եւ Արմէն Տօնոյեանի այս առիթով ուղարկած գրութիւնները: Գերշ. Տ. Խաժակ Ս. Արք.

Յակոբեանի խօսքը ընթերցեց Ռոզաննա Մարկոսեան, իսկ գիրքի վերլուծականը կատարեց Պրն. Մուշեղ Գարագաշեան, յատկապէս շեշտելով իր բոլոր պատմուածքներու ընդմէջէն բարոյական սկզբունքներու փոխանցումը:

Պրն. Յակոբ Ճանպազեան ներկայացուց յոբելեարի կենսագրական գիծերը:

Գրիգոր Հոթոյեան ծնած է Հալէպ՝ 5 Օգոստոս 1927 թուականին, սասունցի ծնողներէ: Աւարտած է Հալէպի ազգ. Սահակեան վարժարանը, ապա հետեւած հայագիտական դասընթացքներու:

Երեք տարի ծառայած է Ֆրանսական բանակին Բ. Աշխարհամարտի ընթացքին եւ արձակուած՝ որպէս ենթասպայ: Եղած է գրաշար, խմբագիր, ուսուցիչ եւ տնօրէն ազգային ամէնօրեայ, ամառնային թէ կիրակնօրեայ վարժարաններու, Սուրիա թէ Գանատա:

Աշխատակցած է Հալէպի «Արեւելք» օրաթերթին, «Մեր Կեանքը» եւ «Կանթեղ» ամսագիրերուն: Իր բանաստեղծութիւնները լոյս տեսած են Հալէպի «Արեւելք» օրաթերթի, «Կանթեղ», «Ակօս», «Մեր Կեանքը» ամսագիրերուն եւ «Սփիւռք» շաբաթաթերթին մէջ: Իր բանաստեղծութիւններով, յօդուածներով, թղթակցութիւններով եւ պատմուածքներով աշխատակցած է Սփիւռքի թէ Հայաստանի բազմաթիւ օրաթերթերու, պարբերաթերթերու եւ ամսագիրերու:

1977-էն մինչեւ 1987, խմբագրած եւ հրատարակած է Հայ Կեդրոնի «Լրատու» ամսագիրը եւ եօթը տարիներ խմբագրած եւ ձայնասփռած է «Հայ Կեդրոնի Չայն»ի հեռաձայնային լուրերը:

Թորոնթոյի մէջ 1987 թուականին հրատարակուած է «Սիրտը



«Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» պատմուածքներու գիրքի գինեձօնէն տեսարան մը

Ափին Մէջ» բանաստեղծութիւններու հատորը, իսկ 2002-ին՝ «Նուիրում» երգերու եւ բանաստեղծութիւններու հատորը:

Գրիգոր Հոթոյեան զնահատագրեր ստացած է Սուրիոյ, Ֆրանսայի եւ Օնթարիոյի կառավարութիւններէն, ինչպէս նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն եւ Գանատայի Ազգային Առաջնորդարանէն՝ իր ազգային, եկեղեցական եւ գրական գործունէութիւններուն համար:

Մասնակցած է Հայաստանի Գրողներու Համահայկական առաջին՝ 2002-ի եւ երկրորդ՝ 2004-ի Խորհրդաժողովներուն:

14 Յուլիս 2004-ին, իր գրական գործունէութեան 60-ամեակին առթիւ, Հայաստանի Գրողներու Միութեան, Ռազմածովագիրներու Միջազգային Ընկերակցութեան հայկական վարչութեան եւ Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-հիմնարկութեան կողմէ կազմակերպուած յոբելինական հանդիսութեան, կը պարգեւատրուի Ազատամարտ «Ուխտատուն» թանգարանի շնորհագիրով եւ Միջազգային Ռազմածովագիրներու Ընկերակցութեան անդամակցութեամբ:

Տեղի ունեցաւ պատկերիզի ցուցադրութիւն Հայաստանի մէջ իր վաթսունամեակի յոբելինական տօնակատարութենէն եւ զինեձօն, ապա Պրն. Գրիգոր Հոթոյեան խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց Հ. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանին, Սրբ. Աստուածածին Եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին, յայտագիրին իրենց մասնակցութիւնը բերող բոլոր անհատներուն եւ զինք յարգող եւ ձեռնարկին ներկայ գտնուողներուն:

Շնորհահանգէսը փակուեցաւ «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գիրքի մակագրութեամբ եւ հիւրասիրութեամբ:

ԶԱՐԵՀ ՏԷՐՎԻՇԵԱՆ

«Հորիզոն»



ԽՕՍՈՒԱԾ՝  
«Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ  
ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»  
ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԵՍԻՆ

Նախ եւ առաջ իմ սրտագին շնորհակալութիւնը կը յայտնեմ այս երեկոյեան կազմակերպիչ յանձնախումբին, որ յատուկ հրաւերով մը փափաքեցաւ զիս եւս մասնակից դարձնելու այս ձեռնարկին ու բերելու եւ բաժնեկու իմ սրտի ողջոյնը այս առթիւ:

Յարգելի ու սիրելի ներկաներ, այս երեկոյեան արդար, անժամանցելի տրիտուլը կը տրուի հայ գիրի, հայ գրականութեան եւ հայ մշակոյթի հաւատաւոր մշակին, որ աւելի քան կէս դար անշեղ՝ իր հաւատարիմ, անխոնջ եւ անսակարկ սպասարկութիւնը ընծայեց սփիւռքեան հայ գրականութեան խորանին՝ իր մտքի սլացքներով, իր հոգու տեսիլքներով, իր սրտի տրոփումներով եւ իր գրչի երփներանգներով:

Ինչպէ՞ս կարելի է այս գինեձօնի սահմանափակ ժամի մը մէջ վրձինել եւ քանդակել հարազատօրէն եւ ճշգրտօրէն յրեւեարին հարազատ դիմանկարը, դիմաքանդակը, անոր լման արգասիքը որպէս բանաստեղծ, հրապարագիր, արձակագիր ու անոր գրական գործունէութեան արդար արժանիքը ըմբռնել, արժեւորել եւ մանաւա՛նդ գնահատել:

Սակայն եւ այնպէս խոր եւ հաստատ համոզումը մեզ կը բերկրացնէ, թէ Գրիգոր Հոթոյեան արդէն վաղուց մուտք գործած է սփիւռքեան մերօրեայ հայ մշակոյթի գրականութեան կաճառին մէջ՝ գրական ուղիով, եւ այնտեղ արդարօրէն կը գրաւէ պատուաւոր, պատուաբեր եւ աչքառու ամպիրն մը:

Սիրելի յրեւեար, իմ խօսքը անգոր է թարգմանը հանդիսանալու իմ եւ այս ձեզ շրջապատող ազնուահոգի ներկաներուն հարազատ զգացումներուն, սակայն թող թոյլ տրուի, որ որպէս գնահատանք ձեզի եւ վարձատրութիւն Ամենակալէն՝ հայ մշակոյթի ձեռ տարած առաքելութեան, սա մաղթանքը ձեզի կատարեմ ձեր կեանքի նշանակալից այս յրեւեանին, որ կը զուգագրիպի նաեւ մեր Ապրիլեան Յեղասպանութեան 90-ամեակին:

1991-ին, ինչպէս որ Աստուծմէ արժանացանք ողջունելու ազատ, անկախ հայրենիք Հայաստանի երազը, թող Աստուած ձեզի, սիրելի Գրիգոր, մեզի ու համայն մեր ազգին շնորհէ ողջունելու, լսելու եւ իմանալու Ապրիլեան նահատակաց Յեղասպանութեան պաշտօնական ճանաչումը ոչ միայն Թուրքիայէն, այլ համայն Միացեալ Ազգերու անդամ երկիրներու պետութիւններէն:

Վարձքը կատար, գրիչդ դալար, արժանաւոր յրեւեար՝ Գրիգոր Հոթոյեան:

ՀԱՅՐ ԵՂԻԱ Ծ. ՎՐԴ. ԳԻՐԷՋԵԱՆ  
Հոգեւոր հովիւ  
Թորոնթոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ  
Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ

5 Մայիս 2005  
Թորոնթօ



ԲԱՆԱՍՏԵՂԾ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ  
 «Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ  
 ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»  
 ԳՐՔԻՆ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԵՍԻՆ ԱՌԹԻԻ

*Սիրելի գրասէր ժողովուրդ,*

*Թոյլ տուէք, որ ընկեր Հոթոյեանի համար կազմակերպուած այս շնորհահանդէսի առթիւ ներկայացնեմ կարգ մը մտածումներ, ինչպէս Տէր Արմէն Ա. ՔՀՆԵ. Իշխանեանի գիրքին շնորհահանդէսին առթիւ ներկայացուցած էի: Անոնք ինծի ծանօթ ու բարեկամ երկու հսկայ բեւեռներ են. առաջինին մեր հասուն տարիքին ծանօթացած, իսկ երկրորդին՝ երեսայական շրջանի. երկուքն ալ համեստ, տաղանդաւոր ու ազգասէր անձնաւորութիւններ. երկար ապրին:*

*Ուրախ եմ արտայայտուելու, որ մեր յարաբերութիւնները ընկեր Հոթոյեանի հետ եղած են գրաւիչ, առինքնող, դաստիարակչական, կերտող, ուր միշտ ազգային ցաւն ու խինդը առաջնորդած են մեզ դէպի կառուցում միտքերու, գրականութեան եւ երաժշտութեան:*

*Ես պիտի ուզէի վեր առնել Հոթոյեան բանաստեղծին իւրայատուկ յատկութիւնը, խօսիլ իր կարողութիւններուն մասին, եւ թէ որպիսին են իմ մտածումներս բանաստեղծի մը մասին:*

*Հիները կ'ըսէին, թէ բանաստեղծը կը ծնի, չի շինուիր: Ծիշդ էին: Զեզի վստահեցնելու համար ըսեմ, թէ կարելի է զարգացնել մէկը, արուեստներու կատարեալ ծանօթութիւն տալ, բարեկարգելով աւելի յառաջացնելու համար զինք իր ասպարէզին մէջ, սակայն բոլոր ուսումնառութիւնները աշխարհի՝ չեն կրնար բանաստեղծ մը արտադրել, եթէ ան ի ծնէ բանաստեղծ չէ, ինչպէս մեր այսօրուայ մեծարեալ ընկերը:*

*Զգոյշ մօտեցումներ ունենալու է բանաստեղծի մը հետ, որովհետեւ դիւրաբեկ կրնան ըլլալ զգացումները իր սիրոյ սրբանին ու նազելի յիշատակարանին:*

*Այս բոլոր նիւթերը, գորս կը ներկայացնէ ընկեր Հոթոյեան իր համառօտ արտայայտութիւններուն ընդմէջէն, կը դրսեւորեն եռանդազին տաղանդ, մտքի ազատ սահունութիւն, ներզանակութիւն, կորով, քաջութիւն, ցնծագին ոգի մը, վարժ միտք մը, որպէսզի անով կարենայ մարդկութեան սատարել իր քերթողութեամբ: Բանաստեղծութիւնը, իմ հասկացողութեամբ, միտքի ու արդար արտայայտութեան գեղեցկագոյնն է եւ գերիվեր այլ պճնազարդութիւններէ:*

*Բանաստեղծը պէտք է ունենայ միտքի ու խօսքի լայն կարողութիւն դէպի արար աշխարհ բացուող հսկայ լուսամուտներու նման, ուրկէ երբ դիտէ ու մեզի ներկայացնէ իր մտածումները, կարենանք տեսնել իր անկեղծ արտայայտութիւններուն ընդմէջէն ճշմարիտ խօսքն ու արդար թելադրանքը:*

*Պէտք է տիրացած ըլլայ տրամաբանական եւ վերլուծական կարողութիւններու, որպէսզի կարենայ լաւագոյնս նպաստել իր արուեստին ու փոխանցել մեզի իր սրտատրոփ պահերը, որովհետեւ բանաստեղծ մը իր ճիւղին մէջ մեծագոյն տրամաբանողն ու յորինողը ըլլալով՝ կրնայ ուստոստել մէկ ճիւղէն միւսին առանց դժուարութեան, տարակարծիքի կամ ենթադրութեան: Աչքերը տեսնեն իրական գեղեցկութիւնը աշխարհի, լսողութիւնը ծարաւ՝ երաժշտութեան, եւ մեղեդիական իրագործում տեսնուի ամէն մէկ տողին մէջը քերթողութեան, որպէսզի կարենայ ներկայացնել խօսքերը մեղեդիաբար:*

*Լայն սիրտ, բազմակողմանի կարողութիւն միտքի ու մտածման արտայայտութեան, յստակ տեսողութիւն, նիւթերու պարզ մօտեցում, եւ առհասարակ ներկայացնելու է բնութիւնն ու բնախօսութիւնը իր կանաչազարդ շնչառութեամբ, որոնք անհրաժեշտ յատկութիւններն են բանաստեղծի մը:*

*Այսպէս եղած են մեծագոյն բանաստեղծները, որոնք ի ծնէ ունեցած են կախարդական այն ճպտոր, որով դարձած են աղբիւրը լոյսի, յոյսի, ժպիտի, յուսադրութեան ու յուզումի, եւ յաջողած են իրենց յղացած ու արտայայտած միտքերուն ընդմէջէն ուրախ ու քաջալերական պահել մարդկութիւնը, եւ հաստատ հիմերու վրայ դնել քերթողութիւնը՝ իր բոլոր ոլորտներով միասին:*

*Այսպէս, բանաստեղծութեան հսկայ արարիչներէն յիշենք Շնորհալին, Շիրազը, Չարենցը, Թէքէեանը, Տանթէն, Շէյքսփիրը, Դուրեանը, Մեծարենցը, Դանիէլ Վարուժանը, Համօ Սահեանը, Ռազմիկ Դաւոյեանը, որոնց կարգին նաեւ արժանաբար՝ Գրիգոր Հոթոյեան բանաստեղծը. այս հսկաները մեծ կ'անուանուին, որովհետեւ լաւ տեսանողներ, մարգարէներ, երգիչներ եւ խորհողներ եղած են կամ են:*

*Այժմ յիշենք իր «Հայոց լեզու» քերթուածին մէջ արտայայտած գեղեցիկ միտքերէն հետեւեալ քառեակը: Եթէ Գրիգոր Հոթոյեան միայն այս քառեակը գրած ըլլար, բաւարար լիտի սեպուէր զինք քերթողութեան պատնէչին վրայ գետեղելու:*

Մեր հմամեայ տանարներէն վեր բարձրացող աղօթի սիւն ես,  
հայոց լեզու,  
Անդնդախոր մեր ձորերէն հոսող ահեղ գետ մըն ես դուն,  
հայոց լեզու,  
Երկրագունդին չորս ծագերուն սփռուած հայ բեկորներուն եւ

Ճանապարհը կորսնցուցած մեր գաւակներուն փարոսն ես դուն,  
հայոց լեզուն:

*Կնոջս ու իմ բարեմաղթութիւնները քեզի, սիրելի ընկեր բանաստեղծ Գրիգոր Հոթոյեան. վարձքդ կատար. մաղթենք որ այսօրուայ շնորհահանդէսը իր շարունակութիւնը ունենայ նորանոր գիրքերու հրատարակմամբ:*

ՅԱԿՈՒՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Գրագէտ, երաժիշտ

5 Մայիս 2005  
Թորոնթօ



ԽՕՍՈՒԱԾ՝  
«Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ  
ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ» ՀԱՏՈՐԻ  
ԳԻՆԵՉՕՆԻՆ

Երբ Հոգշ. Հայր Մեղրիկ առաջարկեց ինձի, որպէսզի գրագէտ Գրիգոր Հոթոյեանի նոր լոյս տեսած գիրքի գինեճօնին առթիւ յայտագրին մասնակցութիւնս բերեմ, բնագդաբար ծիծաղեցայ ու մերժեցի՝ տարիներ առաջ ինձի հետ պատահած հետեւեալ դէպքը յիշելով. —

Պէյրութ՝ ազգականի մը անունը շնորհակտրելու համար այցելութեան գացի, կ'երեւի ուշացած էի, քանի որ խրախճանքի սեղան մը սարքուած էր սենեակին մէջտեղը, որուն շուրջ հաւաքուածները հասած էին արդէն խանդավառութեան բարձր աստիճաններու: Ներկաներէն մէկը, ի տես մոտաքիս, ձեռքին օղիի պարապ շիշ մը բարձրացուցած, ողջունեց զիս՝ գոչելով.

— Ծօ՛, ո՞ւր մնացիր. ես արդէն շիշ մը օղի պարպեցի, դուն դեռ նո՞ր կու գաս:

Ես ալ բան մը ըսելու համար՝

— Այդ շիշը ամբողջ մինա՞կդ խմեցիր:— Իր հաստատական պատասխանին վրայ, զայն հպարտացնելու համար՝ ըսի.— Պուաւօ՛, ալկա՛ս, հալալ ըլլայ:

Կը կարծէի, թէ այսպէսով վերջ պիտի գտնէր այս նիւթին շուրջ խօսակցութիւնը, բայց սխալած էի, մարդը կատրած ոտքի ելաւ ու...

— Ծօ՛, դուն ո՞վ կ'ըլլաս, որ իմ խմելուս պռաւօ կ'ըսես, դուն պէտք է ինձմէ առաւել խմող ըլլաս, որ իրաւունք ունենաս իմ խմելուս մասին գնահատանք արտայայտելու:

Այս պատահարը պատմելով Հայր Սուրբին՝ փորձեցի հրաժարիլ այս պարտականութենէն, սակայն ինծի ըսաւ, թէ իմ սրտի խօսք է եւ ոչ թէ գրադատութիւն: Այդ պարտականութիւնը ուրիշը պիտի կատարէ:

Արդ, չեմ գիտեր, ո՞րմէկ տիտղոսով արտայայտուիմ. Գրիգոր Հոթոյեան բանաստեղծի՞, արձակագրի՞, թէ՞ հրապարակագրի. ասոնցմէ եւ ոչ մէկուն: Այլ՝ Հայ ժողովուրդի ծով ցաւերու ամօքման համար ապրող նուիրեալ Գրիգոր Հոթոյեանին: Ի գուր չէ, որ իր բանաստեղծութիւններու գրքերէն մէկը կոչած է «Նուիրում»:

Ճակատագիրը մեզ՝ Գրիգոր Հոթոյեանն ու զիս միատեսակ ստեղծած է: Նոյն ժամանակը ջանին ծնած ենք, նոյն վայրին մէջ, գաղափարական նոյն հնոցին մէջ կերտուած նկարագրով: Ահա թէ ինչո՞ւ ինքզինքիս իրաւունք կու տամ զայն՝ իր հոգին լաւագոյնս ճանչնալու:

Գրիգոր Հոթոյեան իր աչքերը բացաւ Հայ Գողգոթային անմիջապէս յաջորդող տարիներուն, տեսաւ տնաւեր մեր ժողովուրդին մահու-կենաց պայքարը, տեսաւ իրենց ընտանիքներուն ապրուստ մը ճարելու անկարողութենէն յուսահատ, այլապէս ընտիր հայորդիներու անձնասպանական վախճանները: Եւ դեռ շատ բաներ, որոնք գծեցին իր ապագայի ուղին ու ազնուական նկարագիրը:

Աստուած եկաւ իր կեանքի փորձառութեան վրայ աւելցնելու գրելու եւ բանաստեղծելու շնորհը, ու ան անվարան այդ բոլորը նուիրեց իր պաշտած Աստուծոյն եւ սիրած ժողովուրդին:

Երբ սիրած ժողովուրդին կ'ըսեմ, ճիւթ չէ որ կը ծամեմ: Հայ ժողովուրդի հանդէպ իր անհուն սէրն էր, որ մղեց զայն դերասանութիւն ալ ընելու, ուսուցչութիւն ալ ընելու, սպառիչ ժողովականութիւն ընելու եւ այլն: Իրեն համար հայութեան ծառայելու գծով մեծ ու պղզտիկ, կարեւոր կամ անկարեւոր գործ չկայ մինչեւ օրս:

Քիչ մը շեղելով իրաւունքէս՝ երկու բառով արտայայտուիմ հրապարակագիր Գրիգոր Հոթոյեանի մասին. այս ճիւղը հայ գրականութեան, ինչպէս հայաստանցիները կ'ըսեն, ամէնէն անշնորհակալ ճիւղն է:

Գրիգոր Հոթոյեան այս իրողութեան շատ լաւ գիտակից է: Սակայն երկար տարիներէ ի վեր Թորոնթօն կ'ապրեցնէ Հայ մամուլի էջերէն: Ան շատ դիւրութեամբ կրնար մերժել այդ աշխատանքը եւ



նուիրուիլ գրական աւելի մնայուն գործերու արտադրութեան: Սակայն հայ ժողովուրդին անսակարկ ծառայելու սիրոյն՝ գրականութիւնը գոհեց գաղութի բարգաւաճման: Միաժամանակ սակայն՝ լրագրութիւնն ալ բարձրացնելով գրականութեան աստիճանին: Թորոնթօն այս Հոթոյեանն ալ պէտք է մոռնայ:

Այս հակիրճ, բայց ի խորից սրտի խօսքերս աւարտելէ առաջ յայտնեմ, թէ Գրիգոր Հոթոյեան իր ունեցած բարի, նուիրումի պատրաստ ընտիր նկարագրով կրնար եւ պէտք էր որ քահանայ ըլլար: Իր ունեցած բոլոր տուեալները հոն է որ կ'առաջնորդէին զայն: Ափսոս, բայց թերեւս այն ատեն կուէինք իրարու հետ եւ այսօր չկարենայի հոս կանգնիլ:

Վարձքդ կատար, գրիչդ դալար, սիրելի՛ հարազատ ընկեր. ապրի՛ս մանաւանդ այն կարողութեանդ համար, որ ժամանակին գիտցած ես ընտրել այնպիսի կողակից մը, որ այսքան երկար տարիներ թիկունք կանգնեցաւ ու քաջալերեց քեզ: Տիկին Հոթոյեան, ձեր ալ վարձքը կատար եւ շնորհակալութիւն ձեր կրած գրկանքներուն համար: Աստուծոյ աջը միշտ ձեր վրայ:

ԱՐՄԷՆ Ա. ՔՂԵՅ. ԻՇԽԱՆԵԱՆ

Մոնթրէալ



## ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ ԲԱՐՈՅԱԽՕՍ ՈՒՍՈՒՑԻՉԸ

«Ի ԽՆԳԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԸՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»

Պատմուածքներու, գրոյցներու, բանաստեղծական ճշմարտութիւններու այս հաւաքածոն անհրաժեշտութիւն մըն է հայ գրականութեան համար, որովհետեւ անոնց մէջ կը խտանայ հայ ժողովուրդի կենցաղի, ամէնօրեայ կեանքի փիլիսոփայութիւնը, ապրուած անձի մը կողմէ, որ լաւապէս կը ճանչնայ մեր ազգը Հալէպէն մինչեւ Գանատա եւ Հայաստան: Գրիգոր Հոթոյեան իր թեմաներուն ենթահողը առած է Աստուածաշունչի ջինջ ու պարզունակ պատկերներէն եւ մեր կեանքի բարոյական ճշմարտութիւնը վերածած է մնայուն արժէքներու եւ չափանիշերու:



Մեր ուրախութիւնը կը կրկնապատուի, երբ կը տեսնենք, որ մեր գրչեղբայրը այս հոգեկան տուայտումները դաստիարակչական բարոյախօսութեան կը վերածէ: Այդ ապրումները կը թանձրացնէ իր տարիներու փորձառութեամբ, տիպարներու խմբական կենցաղներով եւ անհատական դրսեւորումներով: Եւ այդ բոլորին կը միանայ մարդ անհատին հանդէպ իր հաւատքը, որ կու գայ իր լաւատեսութենէն: Այս գործընթացին մէջ հիմնական ներկայութիւն է Հայ Եկեղեցին, որուն սկզբունքները բարոյական ճշմարտութիւններու կիզակէտերն են:

Կը յիշենք գեղեցիկ էջերը Գրիգոր Օտեանին, գրուած աղօթքին մասին: Այս անգամ մեր սիրելի Գրիգոր Հոթոյեանը անկեղծութեամբ Հայուն կը բացատրէ գորութիւնը աղօթքին:

Շատ բաներ կրցած են խլել՝ յափշտակել մեզմէ, բայց մնացած է մեր հոգիներու խորքը թաքնուած ապրելու, գոյատեսելու հաւատքը եւ կը զօրանայ իր պարզ, բայց բովանդակալից շէշտաւորումով:

«Ժամանակին թագաւորները ծպտուած հագուստներով կը շըրջէին իրենց ժողովուրդին մէջ, հասկնալու համար անոնց կենցաղը»:

Այսօր, մեր սիրելի հեղինակը առանց ծպտուելու կը պտըտի հայութեան այլազան շրջանակներու մէջ, որոնելու համար մարդկային կեանքին մարդոց կողմէ ըմբռնուած ճշմարտութեան գործնականացումը: Ուրեմն հայութեան ներքին, հոգեւոր կեանքի պեղումներ են ներկայացուած պատկերները, պեղումներ, որոնք այնքան անհրաժեշտ են յաւերժացնելու համար հաւատքի, ճշմարտութեամբ՝ հոգեկան կեանքին հանդէպ մեր հոգիներէն ներս շողացող լոյսը:

Մեր ապրած 21-րդ դարը պէտք ունի նման դաստիարակչական շունչին: Մեր դպրոցները կրօնագիտութեան կողքին պարտին ներկայացնել նման բարոյախօսական գրոյցներ, որպէսզի մեր գալիք սերունդները ճանչնան ժողովուրդը, անոր առաքինութիւններով շըրջեղուին, մտնեն հաւատքի բանակներու շարքերէն ներս եւ դառնան ազգային, կրօնական եւ ճշմարտութեան դատի անդաւաճան գինուորներ:

Մենք միշտ հաւատացած ենք դաստիարակութեան եւ այդ հաւատքը վերապրեցանք այս հատորին ընթերցումով:

Շնորհակալ ենք մեզի ընծայած այս երջանկութեան համար: Ապրի՛ս որ գրական գործունէութեանդ 60-ամեակը կ'իմաստաւորես նրման ստեղծագործ խոհունակութեամբ:

Սիրով՝

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ

Գրագէտ, հրատարակիչ, խմբագիր  
«ՆԱԻԱՍԱՐԴ» ամսագրին



## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԱՆԱՍՏԵՂԾ, ԱՐՁԱԿԱԳԻՐ ԵՒ ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ

*Բանաստեղծ, արձակագիր եւ հրապարագիր Գրիգոր Հոթոյեանի երրորդ գրքին՝ «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» հատորի շնորհահանդէսին եւ հեղինակին գրական գործունէութեան 60-ամեակին նուիրուած այս հանդիսութեան, ինծի վստահուեցաւ կենսագրական տեղեկութիւններ փոխանցելու քաղցր պարտականութիւնը:*

*Գրիգոր Հոթոյեան ծնած է Հալէպ, 5 Օգոստոս 1927-ին՝ սասունցի ծնողներէ: Աշակերտած է Հալէպի ազգային Սահակեան երկսեռ վարժարանը եւ աւարտած 1941-ին:*

*1943-ին զինուորագրուած է Ֆրանսական բանակին եւ երեք տարիներ ծառայել է ետք՝ ենթասպայի աստիճանով հրաժարած է բանակէն: Հօրը մղումով սորված է գրաշարութիւն՝ Հալէպի Ուսուցչական Միութեան «Սեւան» տպարանին մէջ, որուն պատասխանատու տնօրէնն էր գրագէտ-ուսուցիչ Պրն. Սիմոն Սիմոնեանը:*

*1947-ին, որպէս գրաշար, սրբագրիչ, թղթակից եւ աշխատակից մաս կազմած է «Արեւելք» օրաթերթի անձնակազմին:*

*1950-51 տարեշրջանին, տնօրէնութեան պաշտօն վարած է Սուրիոյ Ռազգա քաղաքի Ազգային Վարժարանին մէջ, ուր հիմնած է նաեւ կիրակնօրեայ դպրոցը, միեւնոյն ժամանակ վարելով անոր տեսուչի պաշտօնը:*

*1951-ին, ան կրկին պաշտօնի հրաւիրուած է «Արեւելք» օրաթերթին կողմէ՝ ստանձնելու կարգ մը պատասխանատու գործեր:*

*Մինչեւ իր հասուն տարիքը, Գրիգոր Հոթոյեան որպէս դպիր ծառայած է Հալէպի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, դպրապետ ունենալով Պրն. Արմէն Պետրոսեանը եւ Պրն. Վարդան Սէրայտարեանը, որոնք իրենց ուսումը ստացած էին Մեծի Տանն Կիլիկիոյ Դպրեվանքին մէջ:*

*Ամէնօրեայ իր դպրոցական ուսման կողքին, Գրիգոր Հոթոյեան մանկութենէն աշակերտած է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներուն: Ապա, 1946-էն մինչեւ 1975, շուրջ 30 տարի ծառայած է որպէս ուսուցիչ, աւագ ուսուցիչ, ներքին տեսուչ եւ ընդհանուր տեսուչ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կիրակնօրեայ դըպրոցներուն մէջ՝ ազգային եւ կրօնական ուսում ջամբելով հազարաւոր ուսումնաստենչ հայ աշակերտներուն, արժանանալով Մեծի Տանն*

Կիլիկիոյ Շնորհազարդ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի օրհնութեան եւ գնահատանքի գիրին:

Գրիգոր Հոթոյեան, Հալէպի կիրակնօրեայ դպրոցներու կեդրոնի բաժնի տեսչութեան առընթեր, մաս կազմած է Հալէպի թեմի Ազգային Առաջնորդարանի Կրօնաբարոյական Դաստիարակութեան Խորհուրդին եւ Կիւլպէնկեան նախակրթարանի հոգաբարձութեան կազմին:

Մանկութենէն անդամակցած է Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի գայլիկներու փաղանգին, մինչեւ իսկ երէց սկստութիւն, խմբապետական պաշտօն վարած է Սուրիոյ Օգնութեան Խաչի երիտասարդներու խումբին: Իսկ 1946-էն սկսեալ վարած է Հալէպի Համազգային Հայ Մշակութային Միութեան գրական յանձնախումբի ատենապետութիւնը, ապա՝ վարչութեան ատենադպիրի պաշտօնը, մինչեւ 1975-ին Գանատա Հաստատուիլը:

Գրիգոր Հոթոյեան իր հայերէն լեզուի հմտութիւնն ու գիտութիւնը ձեռք բերած է ինքնաշխատութեամբ, գրաշարական աշխատանքով եւ հայագիտական դասընթացքներու հետեւելով: Ան որպէս թղթակից եւ աշխատակից աշխատակցած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կիրակնօրեայ դպրոցներու «Մեր Կեանքը» ամսագրին, մաս կազմած է նաեւ «Կանթեղ» ամսագրի խմբագրութեան եւ աշխատակցած անոր իր հայրենաշունչ բանաստեղծութիւններով:

Գրիգոր Հոթոյեանի առաջին բանաստեղծութիւնները հրատարակուած են 1947-էն սկսեալ Հալէպի «Արեւելք», «Կանթեղ», «Ակօս», «Մեր Կեանքը» ամսագրերուն եւ «Սփիւռք» շաբաթաթերթին մէջ: Իսկ թղթակցութիւններ, յօդուածներ, պատմուածքներ եւ բանաստեղծութիւններ լոյս տեսած են «Արեւելք», «Ազդակ», «Հայրենիք», «Ազատ Օր» եւ «Մարմար» օրաթերթերուն, ինչպէս նաեւ «Սփիւռք», «Ասպարէզ», «Հայրենիք», «Հորիզոն», «Նոր Կեանք», «Հայ Կեանք», «Գանձասար», «Հայ Միտք», «Նոր Դար», «Նաւասարդ», «Դիտակ», «Մարգիկ», «Շողակաթ» շաբաթաթերթերուն եւ ամսագրերուն, նաեւ Հայաստանի գրական հանդէսներուն եւ Ազգային Առաջնորդարանի «Լոյս» երկամսեային մէջ, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Սփիւռքի մամուլին մէջ:

Ան ձայներիցի միջոցաւ երկար տարիներ իր հարցազրոյցներով եւ մշակութային ելոյթներով աշխատակցած է նաեւ Ուրուկուէյի «Կոմիտաս» ռատիոկայանին:

1975-ին՝ Թորոնթօ Հաստատուելով, «Ս. Թէհլիրեան» կոմիտէի կողմէ կը նշանակուի նախ «Հայրենիք» եւ ապա «Հորիզոն» շաբաթաթերթերու պաշտօնական թղթակից, որ կը վարէ գայն առաջին օրէն մինչեւ այսօր: Երկար տարիներ կը դառնայ պաշտօնական ներկայացուցիչը «Բագին» գրական ամսագրին, «Ազդակ Շաբաթօրեակ Դրօշակ»-ին, Հայաստանի «Ազատամարտ» եւ «Երկիր» շաբաթաթերթերուն:

Թորոնթոյի մէջ ան վարած է Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան ատենապետի պաշտօնը երեք շրջան, նաեւ մաս կազմած է Գանատայի Համազգայինի Շրջանային Վարչութեան՝ երեք շրջաններ: Վեց տարիներ մաս կազմած է Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հոգաբարձութեան, արժանանալով Գանատայի եւ Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Մեսրոպ Ս. Արք. Աշճեանի ստորագրութեամբ առաջնորդարանի գնահատագիր-օրհնագրին:

Գրիգոր Հոթոյեան 1977-էն մինչեւ 1987 տաս տարիներ խմբագրած եւ հրատարակած է Հայ Կեդրոնի «Լրատու» ամսագիրը եւ եօթը տարիներէ աւելի խմբագրած եւ ձայնասփռած է «Հայ Կեդրոնի Զայն»-ի հեռաձայնային լուրերը: 1984 տարեշրջանին, ան ստանձնած է Հ.Օ.Մ.ի Ամառնային Վարժարանի տնօրէնութեան պաշտօնը:

Գրիգոր Հոթոյեանի երիտասարդական տարիներուն գրած բանաստեղծութիւնները ամփոփուած են 1987-ին Թորոնթոյի մէջ հրատարակուած «Սիրտը Ափին Մէջ» բանաստեղծութիւններու հատորին մէջ՝ արժանանալով գրականագէտներու գնահատանքին:

2002 թուականի Յունիսին, Հայաստանի Գրողներու Միութեան վարչութեան հրաւէրով մասնակցած է Գրողներու Միութեան Համահայկական առաջին Խորհրդաժողովին, եւ ողջոյնի խօսք արտասանած Գանատայի գրողներու անունով:

Նոյն թուականի Յունիսին, Հայաստանի «Ուխտատուն» հիմնարկութեան հրատարակութեամբ եւ բանաստեղծ, պատմաբան, հրապարակագիր եւ Համաշխարհային Ռազմածովագիրներու Ընկերակցութեան փոխնախագահ Սասուն Գրիգորեանի խմբագրութեամբ լոյս տեսած է Գրիգոր Հոթոյեանի երկրորդ գիրքը՝ «Նուիրում»՝ երգերու եւ բանաստեղծութիւններու հատորը, որ գնահատուեցաւ գրականասէրներու կողմէ, եւ Հայաստանի ու Սփիւռքի գրողներ գնահատական գրախօսականներով շեփորեցին Թորոնթոյի Հայ գրագէտին «նուիրումը»:

Գրիգոր Հոթոյեան բազմաթիւ գնահատագրեր ստացած է Սուրիոյ, Ֆրանսայի եւ Օնթարիոյի կառավարութիւններէն, ինչպէս նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն եւ Գանատայի Ազգային Առաջնորդարանէն: 1999-ին, ՄԱԿ-ի կողմէ յայտարարուած «Տարեցներու Օրուան» գնահատագրով եւ շքանշանով պարգեւատրուած է Օնթարիո նահանգի կառավարութեան կողմէ:

Գրիգոր Հոթոյեան թէեւ պաշտօնապէս հանգստեան կոչուած է, սակայն տակաւին կը շարունակէ իր գրական մասնակցութիւնը բերել ազգային, եկեղեցական եւ հասարակական կեանքին:

28 Յունիսէն 5 Յուլիս 2004, Երեւանի մէջ գումարուած Հայ Գրողներու Համահայկական Ժողովին, նախաձեռնութեամբ Հայաստանի Գրողներու Միութեան վարչութեան, Ռազմածովագիրներու

Միջազգային Ընկերակցութեան հայկական վարչութեան, Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» թանգարան հիմնարկութեան կողմէ տեղի ունեցաւ Գրիգոր Հոթոյեանի գրական, ստեղծագործական եւ հասարակական գործունէութեան 60-ամեայ յոբելեանը Հայաստանի Գրողներու Միութեան սրահին մէջ, ուր ան արժանացաւ Ռազմածովագիրներու Միջազգային Ընկերակցութեան անդամութեան պատուին եւ Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» թանգարան հիմնարկութեան «Շնորհագիր»ին:

Սիրելի՛ գրասէրներ,

Այսօր հոս հաւաքուած ենք շնորհահանդէսով եւ զինեձօնով հանրութեան ներկայացնելու վաստակաւոր մեր հայ գրողին երրորդ գիրքը՝ «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» պատմուածքներու հատորը, որ նուիրուած է Հայոց Մեծ Եղեռնի 90-ամեակին եւ հրատարակուած Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին կողմէ:

Արդար հպարտութեամբ կը տօնենք նաեւ Գրիգոր Հոթոյեանի գրական, ստեղծագործական եւ հասարակական գործունէութեան 60-ամեայ յոբելեանը այն հաստատ համոզումով, որ ան իր 60-ամեայ գրական եւ հրապարակագրական գործունէութեամբ իրեն բաժին ինկած լուսան դրած է հայ գրականութեան եւ հայ մամուլի գանձանակին մէջ:


Այստեղ հպարտութեամբ կարելի է անդրադառնալ նաեւ, որ Գրիգոր Հոթոյեանը եղաւ թորոնթոհայ գաղութի կազմակերպութիւններուն, հաստատութիւններուն եւ միութիւններուն գործունէութեանց զնգացող ձայնը, մաքուր եւ ցայտուն հայելին. հայ մամուլին մէջ իր ստորագրած թղթակցութիւններու շնորհիւ էր, որ Սփիւռքի եւ Հայրենիքի մեր եղբայր-քոյրերը ծանօթացան թորոնթոհայ գաղութի աստիճանաւոր վերելքին, անոր ազգօգուտ աշխատանքներուն եւ հայրենիքով բաբախող գաղութային գործունէութեանց:

Ի խորին սրտի կ'արժէ շնորհակալութիւն յայտնել նախ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հայր Մեղրիկ Ծ. Վարդապետ Բարիքեանին եւ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին, որոնք յաջողութեամբ համադրեցին եւ հրատարակեցին «Շողակաթ»ի մէջ լոյս տեսած Գրիգոր Հոթոյեանի պատմուածքները «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» հատորի մէջ: Ձեր վարձքը կատար, սիրելիներ: Իսկ մեր նուիրեալ յոբելեարը կը շնորհաւորենք եւ անոր կը մաղթենք երկար եւ առողջ կեանք մը, որպէսզի հայոց գրական անդաստանին մէջ երիտասարդի հոգիով շարունակէ իր ստեղծագործական կեանքը:

ՅԱԿՈՒ ԺԱՆ ՊԱՋԵԱՆ

5 Մայիս 2005, Թորոնթօ

## 80-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ «ՃԱՆԱՊԱՐՀ» ԳՐՔԻՆ՝ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ



Կազմակերպութեամբ Հայաստանի Գրողներու Միութեան, Միջազգային Ռազմածովագիրներու Ընկերակցութեան հայկական վարչութեան, Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-կազմակերպութեան, «Զօրավար Անդրանիկ» Հայոց Համագլխային Միութեան եւ «Աւետիք Իսահակեան» քաղաքային գրադարանին, Հինգշաբթի, 23 Օգոստոս 2007, կէսօրուան ժամը 12:00-ին, Հայաստանի Հանրապետութեան Գրականութեան Ակադեմիայի «Մանուկ Աբեղեան»ի անուան գրակա-

նութեան հիմնարկի դահլիճին մէջ տեղի ունեցաւ թորոնթոհայ գաղութի բանաստեղծ, արձակագիր, հրատարակագիր, ՀՈՐԻԶՈՆ շաբաթաթերթի պատուակալ թղթակից եւ ՇՈՂԱԿԱԹԻ աշխատակից Գրիգոր Հոթոյեանի ծննդեան 80-ամեակի տօնակատարութիւնը եւ իր «Ճանապարհ» գրքի շնորհահանդէսը, որուն ներկայ գտնուեցան պետական անձնաւորութիւններ, գրագէտներ, մտաւորականներ եւ, հակառակ օդային տաք մթնոլորտին, հոծ թիւով գրասէրներ եւ ազգայիններ:

Բացման խօսքով հանդէս եկաւ Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Պրն. Լեւոն Անանեան, որ անդրադարձաւ գանատահայ գրողի կենսագրութեան, գրական կեանքին, եւ գնահատելով անոր 60-ամեայ գրական վաստակը՝ զայն պատուեց Հայաստանի Գրողներու Միութեան նախագահութեան ոսկեայ մետալով եւ թիւ 44 փաստատետրով:

Այնուհետեւ, որպէս օրուան բանախօս, խօսք առաւ բանաստեղծ, պատմաբան, Միջազգային Ռազմածովագիրներու Ընկերակցութեան փոխնախագահ, Հայոց Մեծ Եղեռնի «Ուխտատուն» թանգարան-

կազմակերպութեան տնօրէն Սասուն Գրիգորեան, եւ որպէս սասունցի գրող՝ հանգամանօրէն ներկայացուց Հոթոյեանի գրական վաստակը 1987-էն ի վեր, կարդալով եւ ուսումնասիրելով անոր «Միրտը Ափին Մէջ» բանաստեղծութիւններու գիրքը, «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» պատմուածքներու գիրքը, «Նուիրում» բանաստեղծութիւններու գիրքը եւ «Ճանապարհ» հատորը, ընդգծելով Հոթոյեանի հայրենասիրութիւնը եւ կրօնասիրութիւնը:

Այնուհետեւ, Դոկտ.-Փրոֆեսոր Թաթուլ Մանասէրեան, թորոնթոնցայ գրող-դաստիարակ Մարգար Շարապխանեան եւ երաժշտագէտ-յօրինող Յակոբ Մանուկեան իրենց խօսքով անդրադարձան Գրիգոր Հոթոյեանի հետ իրենց սերտ բարեկամութեան, անոր հետ իրենց ունեցած գրական եւ միութենական գործակցութեան, գնահատելով զայն որպէս հայ գրականութեան եւ մամուլին նուիրուած հայ, որ իր 60-ամեայ գրական, լրագրական եւ միութենական անշահախնդիր կեանքով արժանացած է իր շրջապատին համակրանքին եւ սիրոյն:

Խօսք առաւ «Զօրավար Անդրանիկ» Հայոց Համագգային Միութեան նախագահ, համաշխարհային ըմբշամարտի նախկին խոյեան Նորայր Մուշեղեան, որ իր խօսքով ընդգծեց կարեւորութիւնը ազատագրական պայքարին եւ ազատ ու անկախ ապրելու հայութեան արդար նշանաբանին, որուն համար պայքարած են հայ ֆետայինները, յատկապէս Սասնոյ մէջ, ղեկավարութեամբ Զօրավար Անդրանիկի:

Պրն. Մուշեղեան, գնահատելով Գրիգոր Հոթոյեանի ազատագրութեան եւ հայրենասիրութեան նուիրուած քերթուածները եւ գրութիւնները, «Զօրավար Անդրանիկ» Հայոց Համագգային Միութեան կողմէ Գրիգոր Հոթոյեանը պատուեց ոսկեայ մետալով, միութեան ընտրեալ անդամի վաւերատետրով եւ Զօրավար Անդրանիկի եւ միութեան յուշանկարներով:

Խօսք առին նաեւ բանաստեղծ Լուսինիկ Դուրեան եւ բանաստեղծուհի Խանդուկ Զուռնաճեան, որ այս առիթով կարդաց Հոթոյեանի նուիրուած բանաստեղծութիւն մը:

Վաստակաւոր գրող, արձակագիր, հրապարակախօս Հրաչեայ Մաթեոսեան, որպէս երկարամեայ ծանօթ Գրիգոր Հոթոյեանի, խօսք առնելով՝ ի միջի այլոց ըսաւ. «Կարող եմ միայն անուն-ազգանունը ասել ու վերջակէտել: Անոր անուն-ազգանունը ոչ միայն իր՝ Գրիգոր Հոթոյեանի, այլ ամբողջ սերունդի, նրա սերունդի մասին է ասում, խօսում, լռում»: Երբ անուանի գրող, կենսագրագէտ, բանաստեղծ Սասուն Գրիգորեանը ինձ ծանօթացրեց բանաստեղծ, արձակագիր, լրագրող Գրիգոր Հոթոյեանին, որին ինքը, իր զաւակները պապենական արմատների կանչով քեռի Գրիգոր են ասում, թէեւ փողկապաւորուած, պաշտօնական հանդիպումների ժամանակ «քեռի» դաշտածաւալ բառը սեղմուած ու դառնում է «պարոն»: Քեռի, թէ պարոն, արմատներով սասունցի, Հալէպ ծնեալ, Երկրորդ Աշխարհամարտի



ժամանակ Ֆրանսիական բանակում հայերէն ու սասունցիներէն ծառայած զինուորը... շուտ էր զինուորագրուել մայրենիին ու այսօր էլ, օգոստոսեան կալի ժամանակ, էն ազնիւ ու շիտակ կալուորն է մնում, որ հայրենիքում 80-ամեակ է տօնում, ազնիւ իր բերքահաւաքի նուիրումով՝ 876 մեծադիր էջնոց, լուսանկարներով հարուստ «Ճանապարհ» գրքով:

Գրական իր ազնիւ վաստակին համար, 2005-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառը Գրիգոր Հոթոյեանին շնորհազարդել է «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, իսկ 2007 Օգոստոսին, Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեանը վաստակաշատ գրողին պարգեւատրում է «Գրական Վաստակի Համար» ոսկեայ մետալով: Մենք պատրաստ ենք այս անգամ նրան ծափահարել գրական ինստիտուտի կամարների տակ, դահլիճ, ուր հաւաքուել են գրողներ, գրականագէտներ, Հոթոյեանին ճանաչող սերուցք: Ի թիւս այլոց, ես նոյնպէս արժանացայ «Ճանապարհ»-ի երեւանեան Բ. տպագրութեան մէկ օրինակին: Արժանի էի՝ ուրիշ բան չլինէի՝ նրան ճանաչում էի մինչեւ ծանօթանալս: Ի հարկէ գրածներից: Սասուն Գրիգորեանը վստահեց՝ Երեւանում տպագրած գրքերից մէկի առաջաբանը ես եմ գրել: «Ճանապարհ» հատորը, որ աւարտուն տուն է յիշեցնում, որ վաստակաշատ հեղինակի արգասիքն է եւ արժանի է գրականագիտական խոր վերլուծութեան: Այս գիրքը մինչեւ գիրք է դարձել, քիչ ջանքեր չեն թափել Հոթոյեանասէրները: Մէկը առաջաբանել է, երկրորդը անհատոյց կատարել գրաշարութիւն: Էսպէս, մի քանի ձեռքեր ու մի քանի զոյգ աչքեր: Յուզիչը պիտի մնայ մեկենասութիւնը սիրով ստանձնած աղջիկը՝ Անի Հոթոյեան-ժողին եւ թոռները՝ Բրիստափորը եւ Ստեփան-Արմէնը: Հազար շնորհակալութիւն իրենց հայաշունչ եւ ծնողասէր ոգիին: Գրիգոր Հոթոյեանն է նրանց կրթել, դաստիարակել, հայոց ոգի ներարկել ու հիմա՝ շնորհակալութի՞ւն գրքի համար՝ տպագրուած ե՛ւ Գանատայում, ե՛ւ Երեւանում, արժէ, իրօք, յայտնել հազար շնորհակալութիւն: Իսկ երբ գիրքը գիրք է, էն էլ ի՞նչ գիրք, որ արժանացաւ Գրիգոր Հոթոյեանին ու նրա գրականութիւնը մօտիկից ճանաչող ու գնահատող Մարգար Շարապխանեանի արտայայտած վեհափառ բառին, արդէն թուում է՝ ամէն գնահատական տրուած է:

Ասացի կամ նոր եմ ասում՝ բազմաթերթ ու բազմաշերտ, հենց բազմասէր գրող է Գրիգոր Հոթոյեանը: Նրա դէմ չեն եղել փակ թերթեր: Կուսակցական է, բայց բոլոր կուսակցութիւնները ունին իրենց պատուելի Գրիգոր Հոթոյեանը: Երբեք չեն ուշացել գնահատումները թէ՛ Սիւլուքում, թէ՛ Հայրենիքում: Այո՛, գրողն արժանավայել մեծարումների է արժանացել ու դեռ պիտի արժանանայ մեր աւագագոյն, մեր երէց գրողը: «Ճանապարհ» կառուցիկ գիրքը ե՛ւ յարգանք, ե՛ւ սարսուռ, ե՛ւ երկիւղ է առաջացնում: Թուում է, թէ հեղինակից աւելի

բարձր, բայց հեղինակից աւելի բարձր կարող է լինել միայն լեզուն, որով նա ստեղծագործում է: Եւ նոր սերունդի առողջ ու հպարտ տիրականն է դառնում ո՛չ միայն պատմուածքներում, բանաստեղծութիւններում, երգերում, այլ՝ անգամ սովորական թուացող յօդուածներում, ակնարկներում, պատկերներում, դիմանկարներում, հեռու տնից-տեղից, մտահոգութիւններում: Նա ոչ միայն Սփիւռքի, այլեւ Հայրենիքի ճակատագրով ապրող սասնորդի է: Ոչ միայն խօսքով, այլեւ գործով: Երկրաշարժից յետոյ Հայաստանը աւելի պատկանեց հայութեան: Ազգային ազատագրական շարժումը, Արցախեան Շարժումը Հայաստանը դարձուց տան ճանապարհ եւ հասցէ: Այդ տան ու ճանապարհի տէրը զգաց իրեն նաեւ սիրելի մտաւորական Գրիգոր Հոթոյեանը: Նա արթուն սիրտ ու բաց աչք է: Զեռքը՝ բուժական, ձեռքը՝ միշտ ցաւին: Վաստակաշատ գրողը երբեք չըջանակուած չի եղել, չի խուսափել, գրել է նաեւ շատ անհրաժեշտ լուրեր, լուրեր, որ կարող էր նաեւ մէկ ուրիշը գրել: Բայց իր ստորագրութիւնը աւելի թանկ է դարձնում իրական դէպքի նկարագրութիւնը, արարողութիւնը եւ հանդիսութիւնը:

Ան արդէն էն տարիքն է հասել, որ թուում է՝ իրաւունք ունի նստել, ականջը կախել ու գովեստների տարափը շղթայել վզով: Բայց նա այդ տեսակին չի պատկանում: Շարունակում է եռանդով ստեղծագործել:

Եւ նրա «Ճանապարհ»ը, որ ճանապարհն է նաեւ մեր գրականութեան, դառնում է կամուրջ՝ Կամուրջ՝ Սփիւռքի եւ Հայրենիքի միջեւ: Եւ ոչ միայն գիրքը, այլ՝ ամբողջ էութեամբ Գրիգոր Հոթոյեանն է կամուրջ: Նրան կարգալով, նրան ճանաչելով անցնինք այդ ճանապարհ-կամուրջը: Դա մեր հարստութիւններից է, որ շուրջօրէն բոլորիս է նուիրել ազնուաբարոյ հեղինակը, Սասուն Գրիգորեանի ասած-գրած սասնորդի Գրիգոր Հոթոյեան գրողը, մշակութային, ազգային գործիչը»:

Ապա գործադրուեցաւ գրական-գեղարուեստական կոկիկ յայտագիր մը: Հանրայայտ ասմունքող Գայիանէ Սամուէլեան արտասանեց Հոթոյեանի ազգային-սիրային քերթուածներէն փունջ մը: Սունդուկեան թատրոնի անդամներէն Սիրանոյշ Եսայեան ապրումով ասմունքեց Հոթոյեանի «Սասունական» քերթուածը, Թորոնթոյի ՀՕՄԻ Ամէնօրեայ Վարժարանէն շրջանաւարտ Գայիանէ Գալուստեան, որ հիւրաբար Երեւան կը գտնուէր, արտասանեց Հոթոյեանի «Հայոց լեզու» քերթուածը, իսկ վաստակաւոր երգիչ Գագիկ Յակոբեան երգեց ազգային-ազգագրական երգեր՝ արժանանալով ներկաներու գնահատանքին: Բանաստեղծուհի Լուսինէ Մհերապեան բեմ գալով յայտագրին իր մասնակցութիւնը բերաւ՝ արտասանելով կարգ մը բանաստեղծութիւններ:

Ամառնային այս միջոցառումի վերջաւորութեան շնորհակալա-

կան խօսքով հանդէս եկաւ յորելեարը, որմէ ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Նոյն օրը, «Հայոց Աշխարհ» օրաթերթին մէջ լոյս տեսաւ Սասուն Գրիգորեանի ստորագրութեամբ յօդուած մը՝ նշելու համար այս իրադարձութիւնը: Երեկոյեան եւ յաջորդ օրերու ընթացքին, Հայաստանի հեռատեսիլի կայանները եւ ռատիոնները անդրադարձան տեղի ունեցած միջոցառումին եւ հարցազրոյցներ ունեցան Հոթոյեանի հետ:

Շ. Թ.



## ԼՈՒՍԱՒՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ 80-ԱՄԵԱԿ

Խօսուած Գրիգոր Հոթոյեանի 80-ամեակի  
եւ «Ճանապարհ» գիրքի շնորհահանդէսին՝ Երեւան, 2007

Ոչ միայն Հայաստանում, Սփիւռքում եւս կան գրական, մշակութային եւ հասարակական գործիչներ, որոնք միայն եւ միայն ծառայում են իրենց ազգասուրբ ուխտին, մատաղ սերնդի հայեցի դաստիարակութեանը, Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան ստեղծելու տարածքային եւ գաղափարական միասնութեանը: Նման ազգանուիրեալներից է 1975 թուականից Կանադայի Տորոնտօ քաղաքում բնակուող բանասէր, բանաստեղծ, արձակագիր, մանկավարժ, լրագրող, հրապարակախօս, ազգագրագէտ Գրիգոր Հոթոյեանը:

Սասնոյ Տալուրիկի շրջանի Սպաղանք գիւղից Մեծ Եղեռնի պատճառով Սուրիա գաղթած Ղազարի (Խարզօ) եւ կիլիկիացի Մարիամի որդին, հայ ֆետայութեան փառքերից Սպաղանաց Մակարի, Սպաղանաց Գալէի, Սպաղանց քաջարի հայդուկապետ Յակէի (Յակոբի) շառաւիղը:

Այսօր ընթերցողի սեղանին է 80-ամեայ սասնորդու «Ճանապարհ» պատմաբանասիրական, արձակ, ժուռնալիստական երկերի ընտրանին: Նրա յօդուածները, հրապարակումները, թղթակցութիւնները, տարբեր առիթներով, յատկապէս Սուրիայում եւ Կանադայում, հայ համայնքին եւ հայ մեծանուն ու վաստակաշատ գէմքերին, պետական, կուսակցական, քաղաքական գործիչներին է վերաբերում: Դրանք երբեմն մեկնութիւններ են ու զրոյց-խորհրդածութիւններ, ճամբորդական տպաւորութիւններ:

Հապա՞ Հոթոյեանի գրախօսականները, նրա հոգեւոր, գրական եւ պատմաազմական (արցախեան ազատամարտը ներառեալ) գործիչներին նուիրուած մեկնութիւնները, դրանց ընթերցողը կը հանդիպի ոչ միայն «Ճանապարհ»ում, այլեւ «Արեւելք», «Հայրենիք»,

«Հորիզոն», «Շողակաթ», «Նոր Կեանք», «Մեր Կեանքը», «Դիտակ» եւ բազմաթիւ այլ թերթերում ու պարբերականներում: Կարողում ես վաստակաչատ սպաղանցու հրապարակումները, մտօք տեղափոխուում 20-րդ դարի Միջին Արեւելք՝ Սուրիա, Լիբանան, Հասնում Կանադա, ԱՄՆ եւ այլուր: Եւ ամէնուր Գ. Հոթոյեան հրապարակախօսը յուշում է, որ «մշակոյթն է մեզ պահպան, հայ դպրոցը՝ լոյսի աղբիւր մեարոպեան, մենք պէտք է Վարդանանց ուղիով գնանք, հայ գիրքն է ճանապարհն հայուն»:

Հոթոյեանի յօդուածները կենսաճանաչողութեան դասեր են՝ լոյսով եւ հաւատով լեցուն դէպի հայ մարդը, դէպի հայ սիրտն ու հայ ուղեղը, դէպի հայ հանճարն ու հայ եկեղեցին: Հրապարակախօսութիւնը, այն էլ օրուայ մամուլում, մերկապարանոց ճառասացութիւնն է, այն օրուայ պահանջ է, քննադատութիւնն եւ նպատակ յանուն ազգային վերելքի:

Եթէ ընդհանուր հանրագումարի բերենք «Ճանապարհ»ում տրպագրուած նիւթերի բովանդակութիւնը, կը տեսնենք, որ սասունցի-հալէպցի-տորոնդոցի Գրիգոր Հոթոյեանը սուրիահայ եւ գանատահայ կեանքի մերօրեայ տարեգիրն է, տաղերգուն, բազմաքնար եւ բազմաժանր հայախօսը: Բաւական է թերթի «Ճանապարհ» հատորեակի «Թղթակցութիւններ» եւ «Հարցազրոյցներ» գլուխները, եւ դուք կը ծանօթանաք մեծանուն կոմպոզիտորների, երգիչների, խումբավարների, կաթողիկոսների, գրողների, գեներալների, գիտնականների, սովորական եւ հոչակաւոր մահկանացուների հետ:

Ամենակարեւորը, դրանք լինեն առիթով գրուած զրոյցներ, մահախօսականներ թէ ծանօթութիւններ, տպագրուած բոլոր յօդուածներում, դիմանկարներում Հոթոյեան լրագրողը, մեկնիչը մնում է իր խառնուածքին հաւատարիմ՝ ազնուութեան բարձունքին. չի կեղծում ո՛չ իրեն, ո՛չ դիմացիին, անկախ նրանց մեծութիւնից, գրաւած գիրքից: Հոթոյեանի գրքի բոլոր հերոսները, անկախ իրենց ազգային պատկանելիութիւնից (արաբ, եգիպտի, Ֆրանսացի, հոլանտացի) առաքիւնի են, մարդասէր եւ ամենակարեւորը՝ գրչի, խղճի, վրձնի եւ հայապահ գէնքի ու խաչի ուխտանուիրեալներ են: Գրողը կարողացել է իր ամէն մի հերոսի հետ խօսել ողջերի լեզուով, լինի ան Մաշտոց թէ Գէորգ Չառչ, Անդրանիկ թէ Դրօ, Գարեգին Ա. Կաթողիկոս թէ ՀիւՍՀ-ի վարչապետ Փաբէյ Սարգսեան, գեներալ-մայոր, Արցախի հերոս Սամուէլ Կարապետեան թէ Երկրորդ Աշխարհամարտում զոհուած բանաստեղծ Թաթուլ Հուրեան:

Թէեւ, իր խօսքերով ասած. «Կեանքը գնալով դառնում է դաժան», բայց 80-ամեայ սասունցի, բազմաժանր, բազմատաղանդ, բազմամեծար Գրիգոր Հոթոյեանը կեանքն ու աշխարհը դիտում է, գնում հոգու, մտքի, խղճի եւ սրտի աչքով: Գ. Հոթոյեանը ողջ կեանքում չի հետեւել գրական եւ ոչ մի ուղղութեան, նրա ուղին մէկն է՝ գրել պարզ

եւ շիտակ, գրել ժողովրդի մասին՝ ժողովրդի համար: Նրա ցաւը հայացաւն է, խնդութիւնը՝ հայեցի, ինքնայրուձը՝ նայիրեան, ճանապարհը՝ դէպի էրգիր: Նա հայոց հին եւ գալիք քարտէզների միաձուլման, սահմանագծերի եւ գոյնի պահպանման է գրական եւ կեանքային մոդելներից հեռու, ծառուկեանական, շիրազ-սեւակեան եւ Սիմոն Սիմոնեան, Խաչիկ Դաշտենց ու Մուշեղ Գալշոյեան գաղափարագծի անխոտոր յետնորդ:

Թերեւս այս բոլորը նկատել եւ գնահատել են ոչ միայն նրա ընթերցողները, այլեւ գրչընկերներն ու բարեկամները, որոնք այսօր էլ կրկնում են մեծանուն Յակոբ Կարապենցի խօսքերը. «Կեցցէ՛ Հալէպը, որ քեզ պէս բանաստեղծ է տուել»:

ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Բանաստեղծ, պատմաբան, հեղինակ,  
«Ուխտատուն» թանգարան-հիմնարկի տնօրէն



## ՅԱԿՈԲ ՍԱՆՈՒԿԵԱՆԻ ԽՕՍՔՐԸ՝ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ 80-ԱՄԵԱԿԻՆ ԵՒ «ՃԱՆԱՊԱՐՀ» ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՀԱՆԳԷՍԻՆ

Ուրախ եմ, որ ինձի ալ առիթը կը ներկայանայ խօսելու Գրիգոր Հոթոյեանի՝ մեր մեծարեալ եւ վաստակաւոր գրողի մասին, որուն թերեւս այստեղ հաւաքուած գրասէրներէն ոեւէ մէկէն աւելի ես ծանօթ եմ իրեն, իր անձին, իր յոյզերուն, իր առօրեային՝ ըլլալով բնակիչը նոյն քաղաքին, ապրելով նոյն միջավայրին մէջ, մեր թոռնիկները նոյն վարժարանը տանող եւ երեկոյեան տուն վերադարձնելով զիրենք, ու նոյն սեղանին շուրջ զիրար վայելող եղած ենք:

Մեր ցաւերն ու ուրախութիւնները միանման եղած են ու ապրած ենք ցասումը մեր երիտասարդութեան օտարանալու վտանգին՝ տեսնելով մեր մայրենիին որպէս երկրորդ լեզու վերածուիլը: Ցաւելով, որ մեր փոքրերը բոլոր գաղթօճախներուն նման կը հեռանան մայրենիէն ու կ'ընկալեն օտարերէնը:

Այսօրուայ մեծարեալին նման, մենք եւս գրած, խօսած, զգուշացուցած եւ աղաղակած ենք մեր ազգին ու լեզուին դէմ պատահածին համար. սակայն, կը կարծեմ, մեր զգացած ու ապրած վախերը անդարման պիտի մնան այնքան ատեն, որ Սփիւռքի մեր այսօրուայ նոր սերունդը հեռու մնացած կը զգայ ինքզինք մայր հողէն:

Այս մասին, ինչպէս վերը ըսինք, գրած ենք, ինչպէս Գրիգոր Հոթոյեանի եւ նոյն ցաւով բարախող մեր եւ բազմաթիւ ուսուցիչներու եւ դաստիարակներուն սիրտերը:

Այս հրապարակասուլթիւնները, քարոզչութիւնները, ահազանգները երբեմն եղած են յանդուզն, երբեմն մեղմ եւ երբեմն ալ բարկացալտ. բայց չկարծուի, որ այդ գրողները խիստ ու չոր օրէնքի մարդեր կրնան ըլլալ իրենց մօտեցումներուն նման: Ո՛չ, անոնք ունին բարի սիրտ, եւ որքան բարկանալու՝ նոյնքան ալ սիրելու անսահման կարողութիւն:

Արդարեւ, երբ այս մասին կը խօսիմ, ես կը ներկայացնեմ Գրիգոր Հոթոյեանը որպէս պատասխանատու հրապարակասուլթիւն, որպէս ուսուցիչ, պարկեշտ լրագրող, իր զբաղեցուցած պաշտօններուն ուղիղ պատասխանատուն ու օրէնքներու ճշգրիտ գործադրողը: Որքան որ ինք ներկայացած է որպէս այդ, ունի նաեւ բարի, համեստ ու համերաշխ սիրտ, սիրահարի առնիքնող լեզու, համոզիչ անհատականութիւն, ու որպէս ընտանիքի հայր կամ մեծ հայր՝ անուշահամ բնաւորութիւն:

Եւ օր մը, երբ առիթը ներկայացաւ, ինծի նուիրեց իր հրատարակած գիրքերէն «Սիրտը Ափին Մէջ» գիրքը: Այս գիրքին ընթերցումով այնքան համակուեցայ, որ այս անգամ «իմ սիրտս ինկաւ իմ ափիս մէջ»: Այնքան կախարդիչ էին ներկայացուած բանաստեղծութիւններէն ոմանք, որոնցմէ անմասն չմնացի:

Արդարեւ, իր «Հայոց լեզու» բանաստեղծութեան հիման վրայ ծնունդ առաւ իմ երգչախմբային յօրինումը. ոչ միայն մէկ յօրինում, այլ բնաւ չպատահած երեւոյթը այն էր, որ նոյն բանաստեղծութեան հիման վրայ յօրինեցի նոյն խմբերգին 3 տարբերակները, որոնցմէ մին կատարուեցաւ Թորոնթոյի մէջ, երկրորդը՝ Քէմպրիճի մէջ, իսկ երրորդը՝ Երեւանի մէջ՝ բազմիցս անգամներ: Այս խմբերգին հաւաքածոն կրցայ այս տարի (2007) տպել տալ, որմէ ունիմ մի քանի օրինակներ՝ տրամադրելի ներկայ գրասէրներուն:

Խօսքս կը փափաքիմ ակարտել ըսելով, որ մենք, սփիւռքեան մեր սերունդը, հոգի ի բոյն կ'աշխատինք բարձրացնելու հայկականութիւնն ու հայութիւնը զէպի պանծալի ու փառահեղ բարձունքներու՝ մեր յօդուածներով, մեր քարոզներով, գիրքերով ու մեր հայրական սէրով ու խրատներովը: Յուսանք մեզի հետեւող նոր սերունդը, նոյն վսեմ ոգիով տոգորուն, յանձն առնէ շարունակելու իրենց կտակուած պարտականութիւնը:

Կեցցե՛ս, ընկեր Հոթոյեան, մաղթանքս է, որ շարունակես ուղիղ քաջառողջաբար ու հասնիս նպատակիդ:

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Երաժշտագէտ, յօրինող  
խմբավար, արձակագիր

ԳՐԻԳՈՐ ՅՈԹՈՅԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ  
60-ԱՄԵԱԿԻՆ ԵՒ «ՃԱՆԱՊԱՐՅ» ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ



Մեծարանքի Երեկոյ

Նուիրում

**Գրիգոր Նոթոյեանի**

60 ԿԱՐԻՆԵՐՈՒ

Գրական-Լրագրական Վաստակին

60

Նովանորութեամբ՝  
Գանարահայ Թեմի Բարեգան Առաջնորդ  
Գեղշ. Տէր Խաժակ Սրբ. Արք. Յակոբեանի

Նագանկերպութեամբ՝

Նայ Կեղրոնի հովանիին քակ գործող բոլոր միութիւններուն, կազմակերպութիւններուն,  
Ն.Օ.Մ.ի Վարժարանն եւ Մ. Ապրուածածին Եկեղեցոյ Նոգարարձութեան:

Նանդիսավար՝ Մարգար Շարապիսանեան:

Մեծարեալին վաստակը կը ներկայացնէ՝ Յամսիկ Պապեան:

Պիպի գործադրուի օրուան պարշաճ յայտագիր:

**Տեղի կ'ունենայ, Ուրբաթ 8 Փետրուար 2008  
Երեկոյեան ժամը 8-ին  
Նայ Երիբասարղական համալիրի  
«Նամազգային»-ի թափերարահին մէջ:**

Նանդիսութենն նքք քնդի պիպի ունենայ հիրապիրութին:

Սիրով հրապիրում է թորոնթոյի հայութիւնը անխաբիր,  
յարգելով՝ արժանատր մեծարեալին երկար քարիներու վաստակը:

Մուսրը Ազար

Ծանօթ. Մեծարեալին քապիսով, վերջերս՝ Թորոնթոյի եւ Երեւանի մէջ  
հրապիրակում ու քնդույն վրայ ինդինակին կողմ մակագրում «Ճանապարհ»  
հարթին վիճարէն եղած սիրայօժար նուիրապրութիւնները, ամբողջութեամբ  
պիպի յարկացունն Նայ Երիբասարղական Կեղրոնի Էինարարական Ֆոնդին:

Գրիգոր Նոթոյեանին նուիրում հանդիսութեան՝  
կազմակերպիչ յանձնախումբ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏԱՐԻՄ ՄՇԱԿ  
ԵՒ ՍՓԻՒՌԱՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ  
ԶԻՆՈՒՈՐԵԱԼ ԱՌԱՋԵԱԼ՝  
ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ  
ՅԱՐԳԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ  
Ի ՊԱՏԻՒ 60-ԱՄԵԱՅ ՏՐԻՏՈՒՐ  
ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆՅ

Կազմակերպութեամբ եկեղեցւոյս հոգաբարձութեան եւ Հայ Կեդրոնի բոլոր միութիւններուն եւ կազմակերպութիւններուն, ընդ բարձր հովանաւորութեամբ Գանատայի Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Խաթակ Սրբ. Արք. Յակոբեանի, Ուրբաթ, 8 Փետրուար 2008-ին, Թորոնթոյի Հայ Երիտասարդական Կեդրոնի «Համագրային» թատերասրահին մէջ տեղի ունեցաւ Հայ գրականութեան հաւատարիմ մշակ եւ սփիւռքահայ լրագրութեան զինուորեալ առաքեալ Գրիգոր Հոթոյեանի նուիրուած յարգանքի երեկոն, ի պատիւ իր 60-ամեայ տրիտուր ծառայութեանց:

Հանդիսութեան ներկայ էին եկեղեցւոյս հովիւը, Սէնթ Գէթրինգի հովիւ Հոգշ. Տ. Սիփան Վրդ. Քեչէճեանը, Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ հովիւ Հայր Եղիա Ծ. Վրդ. Գիրէջեանը, Վեր. Եսայի Սարմազեանը, Հ.Յ.Դ. «Ս. Թէչլիրեան» կոմիտէի հերթապահ Յակոբ Ճանպազեանը, պատկան մարմիններու եւ քոյր միութեանց ներկայացուցիչներ, մեծ թիւով գրասէրներ, բարեկամներ եւ ընտանեկան պարագաներ:

Օրուան հանդիսավարն էր Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի նախկին տնօրէն՝ Հոթոյեանի գրչեղբայր Տիար Մարգար Շարապխանեանը, որ նաեւ կատարեց բացման խօսքը:

Այս առիթով Տիար Շարապխանեան ընթերցեց նաեւ ՀՈՐԻԶՈՆ շաբաթաթերթի վարիչ խմբագիր Տիար Վահագն Գարագաշեանի շքանորհաւորական ուղերձը:

Հ.Յ.Դ. «Ս. Թէչլիրեան» կոմիտէի հերթապահ Յակոբ Ճանպազեան ներկայացուց օրուան յորհրդարի կենսագրութիւնը:

Այնուհետեւ Հրակ Փայլեան ասմունքեց Հոթոյեանի «Հայաստանին» բանաստեղծութիւնը:

Մեղեդի Մնացականեան ասմունքեց յորհրդարի «Հայ դպրոցին» բանաստեղծութիւնը:

Ռուբէն Ճանպազեան ասմունքեց մեծաբալի «Հայոց լեզուն» բանաստեղծութիւնը:

Թորոնթոյի հայ դասական երաժշտութեան սիրուած երգչուհի Տիւկին Անահիտ Կոտսուզեան մեկնաբանեց Հոթոյեանի «Երբ ձայնդ



լսեցի», «Քեզ հրեշտակ կարծեցի» եւ «Քեզ տեսնելով սիրուն աղջիկ» երգերը, որոնք եղանակաւորուած էին յարգելի երգչուհիին կողմէ, ընկերակցութեամբ դաշնակահար Վարուժան Մարտիրոսեանի եւ կիթառիստ Հայկ-Աշոտ Պէյլէրեանի:

Ապա կրթական մշակ եւ բազմամաստակ ուսուցչուհի Տիկին Յասմիկ Պապեանը հանգամանօրէն ներկայացուց օրուան մեծարեալը՝ անոր վերջերս հրատարակած «ՃԱՆԱՊԱՐՀ» գրքի վերլուծմամբ:

Յետ ներկայացման, Տիար Յակոբ Ճանպազեան, յանուն Հայ Կեդրոնի բոլոր միութիւններուն եւ կազմակերպութիւններուն, Տիար Գրիգոր Հոթոյեանը պատուեց յատուկ կերպով պատրաստուած գնահատագրով:

Այնուհետեւ խօսք առաւ օրուան յոբելեարը, որ յատուկ կերպով շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, կազմակերպիչ յանձնախումբին եւ բոլոր ներկաներուն՝ իրենց ներկայութեան եւ քաջալերանքին համար:

Աւարտին, հայրական իր պատգամը փոխանցեց թեմիս բարեջան առաջնորդ Սրբազան Հայրը:

Սրբազան Հօր պահպանիչով վերջ գտաւ օրուան հանդիսութիւնը:

Հուսկ ապա օրուան մեծարեալը մակագրեց «Ճանապարհ» հատորը, որուն եկամուտը ամբողջութեամբ յատկացուեցաւ Հայ Երիտասարդական Կեդրոնի շինարարական ֆոնտին:

Այս առիթով եկեղեցւոյս հովիւն ու հոգաբարձութիւնը, «Շողակաթ»ի անձնակազմն ու եկեղեցւոյս հովանիին ներքեւ գործող բոլոր նուիրեալները կը շնորհաւորեն Տիար Գրիգոր Հոթոյեանը, անոր մաղթելով երկար, առողջ եւ արդիւնաբեր տարիներ:

«Շողակաթ», Փետր.-Մարտ 2008



ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ՝  
ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ  
60-ԱՄԵԱՅ ԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻՆ  
ԵՒ ՇՆՈՐՀԱՆԴԷՄ՝  
«ՃԱՆԱՊԱՐՀ» ՀԱՏՈՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ

Թորոնթոյի Հայ Երիտասարդական համալիրի «Համազգային»ի թատերասրահին մէջ, 8 Փետրուար 2008-ին, հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Գանատահայոց Առաջնորդ Խաժակ Ս. Արք. Յա-

կորեանի, կազմակերպութեամբ Հայ Կեդրոնի մէջ գործող բոլոր միութիւններու, կազմակերպութիւններու, Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հոգաբարձութեան, ինչպէս նաեւ Հ.Օ.Մ.ի վարժարանի, մեծարանքի հանդիսութիւն տեղի ունեցաւ նրաւիրուած թորոնթոհայ գաղութի քաջածանօթ բանաստեղծ, արձակագիր, հրապարակագիր, «Հորիզոն» շաբաթաթերթի եւ «Շողակաթ» կրօնական ամսաթերթի թղթակից եւ աշխատակից Գրիգոր Հոթոյեանի 60 տարիներու գրական ու լրագրական վաստակին:

Առաջնորդ Սրբազան Հօր կողքին ներկայ էին Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան, Սիփան Վրդ. Քէչէճեան եւ Վեր. Եսայի Սարմազեան, ինչպէս նաեւ գրասէր հասարակութիւն մը, որ եկած էր յարգելու մեծարեալը:

Բացման խօսքով հանդէս եկաւ օրուայ հանդիսավար, Հ.Օ.Մ.ի վարժարանի նախկին տնօրէն, կրթական մշակ Մարգար Շարապխանեան, որ Հոթոյեանի երկար տարիներու գրական, լրագրական վաստակի յատկանշական կողմերը թուելով՝ աւելցուց, թէ ան երիտասարդ տարիքէն սկսեալ սէր, նուիրում, խոր հաւատք ցուցաբերած է հայ հոգիին, հայ դպրութեան, Հայաստանին, հայ լեզուին, եկեղեցիին եւ հայ արժէքներուն հանդէպ: Իր այս նուիրումը 60 տարիներու ընթացքին եղած էր սիրայօժար եւ անշահախնդիր, առանց որեւէ ազնկալութեան եւ դժգոհութեան, որովհետեւ կատարած էր սիրով ու խանդավառութեամբ եւ տակաւին կը շարունակէր գործօն դեր ունենալ Թորոնթոյի գաղութէն ներս նոյն եռանդով:

Շարապխանեան կարգաց «Հորիզոն» շաբաթաթերթի խմբագիր Վահագն Գարազաշեանի՝ պարբերաթերթի ընտանիքին անունով այս մեծարանքի երեկոյթին առիթով ուղարկած շնորհաւորագիրը:

Այնուհետեւ, Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէի ատենապետ Յակոբ Ճանպազեան ներկայացուց մեծարեալ Գրիգոր Հոթոյեանի կեանքը, համառօտ տեղեկութիւններ տուաւ իր կենսագրականի, հրատարակած գիրքերու, ինչպէս նաեւ տարիներու անխոնջ ծառայութեան համար արժանացած զանազան գնահատագիրներու եւ օրհնագիրներու, ինչպէս նաեւ ստացած շքանշաններու մասին:

Գրիգոր Հոթոյեան հրատարակած է չորս գիրքեր. «Սիրտը Ափին Մէջ», «Նուիրում», «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» եւ «Ճանապարհ»:

Յօդակար Գրիգոր Հոթոյեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. Վեհափառին ձեռամբ 2005-ին Թորոնթոյի մէջ արժանացաւ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանին, իսկ 2007 Հոկտեմբերին՝ Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեան Երեւանի մէջ կայացած մեծարանքի հանդիսութեան ընթացքին զինք գնահատեց «Գրական Վաստակի Համար» ոսկի մետալով:

Յայտագրի գեղարուեստական բաժնին մէջ բանաստեղծ Գրիգոր Հոթոյեանի կողմէ գրի առնուած քերթուածները գեղեցկօրէն արտասանուեցան երեք երիտասարդներու կողմէ: Հրակ Փայլեան արտասանեց հայրենասիրական կտոր մը՝ «Հայաստանին», Մեղեղի Մնացականեան՝ «Հայ դպրոցին», իսկ Ռուբէն Ծանապազեան՝ «Հայոց լեզուն» քերթուածները:

Ծանօթ մեներգչուհի, յօրինող եւ դաշնակահարուհի Անահիտ Կուտսուգեան իր քաղցր ու թաւշային ձայնով երգեց մեծարեալին երեք սիրային բանաստեղծութիւնները՝ «Երբ ձայնդ լսեցի», «Քեզ հրեշտակ կարծեցի» եւ «Քեզ տեսնելով, սիրուն աղջիկ» կտորները, որոնք եղանակաւորուած էին իր կողմէ: Անոր կ'ընկերանային Վարուժան Մարտիրոսեան (դաշնակ) եւ Հայկ Աշոտ Պէյլէրեան (կիթառ):

Շարապխանեան, յրեկեարին հետ ունեցած իր յուշերը պատմելէ ետք, հրաւիրեց բազմամեայ ուսուցչուհի եւ դաստիարակ Յասմիկ Պապեանը, որպէսզի կատարէ աւելի քան 880 էջերէ բաղկացած հաստափոր «Ծանապարհ» գրքին գրախօսականը:

Ան հեղինակի հատորին էութիւնը բնորոշող նախաբանէն տողեր կարդալէ ետք՝ աւելցուց. «Այս էջերը կրնան գրական, գեղարուեստական արժէք չունենալ, բայց գրուած անպաճոյճ եւ խնամուած արեւմտահայերէնը անկասկած, որ գրական անդաստանին կը պատկանի, նոյնիսկ ենթահող կրնան ծառայել գեղարուեստական ստեղծագործ գրականութեան մը եւ այս իրողութեամբ իսկ խիստ կարեւոր ներդրում մը կը դառնան մեր գրականութեան»: Յետոյ մի առ մի արտայայտուեցաւ գրքին հետեւեալ ենթաբաժանումներու մասին, որոնք են՝ յօդուածներ, ուսումնասիրութիւններ, պատմուածքներ, թղթակցութիւններ, հարցազրոյցներ, զանազան առիթներով խօսուածներ, մահագրութիւններ, երգեր, բանաստեղծութիւններ, գրախօսականներ եւ վկայութիւններ, սկսելով 1949-էն մինչեւ մեր օրերը:

Ծանապազեան, բարձր գնահատելով մեծարեալին 60 տարիներու վաստակը, Հ.Յ.Բ. «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէի եւ Հայ Կեդրոնի յարկին տակ գործող բոլոր կազմակերպութիւններու անունով Հոթոյեանին յանձնեց գնահատագիր մը:

Հոթոյեան, իր կարգին, մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազանին, կազմակերպիչ յանձնախումբին, գեղարուեստական յայտագրին մասնակից երիտասարդներուն:

Հուսկ բանքը արտասանելու համար բեմ հրաւիրուեցաւ Առաջնորդ Խաթակ Ս. Արք. Յակոբեան, որ ըսաւ. «Ուրախ եմ, որ այսօր իմ կրտսեր եղբօր պարտականութիւնս կատարելու համար հոս կը գլուխդ տանուիմ: 25 տարիներ Հոթոյեանի հետ քաղցր, լեղի, դժուար, ուրախալի, հարազատ, ընտանեկան բոլոր պահերը ապրած ենք, եւ այսօր կանգնիլ իր վաստակին դիմաց եւ սրտի խօսք ըսել այդ վաստակին նկատմամբ՝ ինձի համար հոգեկան անհուն ուրախութիւն է:

«Հոթոյեանը յատկանշող ամէնէն գեղեցիկ գիծերէն մէկն է բարոյական մարդ, հաւատքի եւ կրօնքի մարդ ըլլալը եւ նոր սերունդը իր սկզբունքներուն իրազեկ դարձնելու եռանդը: Իր գրական աշխատանքին, ճիգին մղում տուող ամէնէն կարեւոր ազդակներէն մէկն այն է, որ ան իր ազգին, իր եկեղեցիին եւ պատմութեան, իր մշակոյթին ծառայած է իր ընթերցումներով, իր փորձառութիւններով եւ հանդիպումներով: Կրցած է հաւաքել զանոնք եւ փոխանցել յաջորդ սերունդներուն: 30 տարիներ Թորոնթօ ապրելով՝ զանազան առիթներով արձանագրեց Թորոնթոյի հայ կեանքին զանազան հանգրուանները, այնպէս որ զինքը կրնան կոչել «ժամանակագիր»:

Սրբազան Հայրը շնորհաւորելով մեծարեալը՝ մաղթեց, որ ան շարունակէ իր ճանապարհը եւ այդ ճանապարհին վրայ շարունակէ ընել իր պեղումները:

Հանդիսութեան աւարտին հեղինակը փափաքողներուն մակագրեց «Ճանապարհ» հատորը: Այս առթիւ կատարուած նուիրատուութիւնները ամբողջութեամբ պիտի յատկացուին Հայ Երիտասարդական Կեդրոնի շինարարական ֆոնտին:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴԵՐՁԱԿԵԱՆ

«Մարմարա», Մարտ 2008



## ՏԻԱՐ ՄԱՐԳԱՐ ՇԱՐԱՊԵԱՆԵԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՕՍՔԸ՝ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ Ի ՊԱՏԻԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՅԱՐԳԱՆՔԻ ԵՐԵԿՈՅԻՆ

Պրն. Գրիգոր Հոթոյեանին 60 երկար տարիներու գրական-լրագրական վաստակին նուիրուած այս հանդիսութիւնը իսկապէս բացառիկ երեւոյթ մըն է բոլորիս համար, քանի մը յատկանշական պատճառներով:

Առաջին: Այսօրուան մեծարեալը՝ Գրիգոր Հոթոյեան, հակառակ իր յարգարժան տարիքին, երիտասարդի մը խանդով տակաւին գործօն դեր ունի մեր գաղութէն ներս թէ՛ իր գրչով եւ թէ՛ գաղութի ձեռնարկներուն իր ընծայած ֆիզիքական ներկայութեամբ, որոնք ոչ միայն իր անձին հանդէպ յարգանք կը պարտադրեն մեզի, այլ նաեւ ուժ ու կորով կը ներշնչեն շատերուս՝ իրեն նմանելու, իրեն պէս ան-

խոնջ աշխատելու մեր ազգային ու միութենական պարտաւորութեանց մէջ, ու ամէն մէկս իր ծիրին մէջ՝ իր նախասիրութիւններուն համաձայն:

**Երկրորդ:** Երբ կը կարգանք իր հրատարակած չորս հատորները, մանաւանդ վերջինը՝ «Ճանապարհ» խորագրով, որ բերքահաւաքն է իր 60 տարիներու գրական-լրագրական անդուլ վաստակին, հոն կը տեսնենք Հոթոյեան մը, որ երիտասարդ տարիքէն սէր, նուիրում, հիացում ու խոր հաւատք ցուցաբերած է հայ ոգիին, հայ դպրութեան, Հայաստանին, հայ լեզուին, հայ եկեղեցիին ու առհասարակ հայ արժէքներուն հանդէպ, որոնց ունեցած փրկարար դերի մասին, ուրիշ բոլորովին անձնական նիւթերու շարքին, էջեր ու էջեր գրած ու հրատարակած է ան թէ՛ Հալէպ ապրած հին տարիներուն եւ թէ՛ Թորոնթօ՝ տակաւին ապրող ու գործող ներկայ տարիներուն: Ու այս նուիրումը, 60 տարիներու երկայնքին, եղած է սիրայօժար, անշահախնդիր, առանց որեւէ ակնկալութեան ու դժկամութեան, որովհետեւ Հոթոյեան անձը, ազգայինը, միութենականն ու կուսակցականը ինչ որ կատարած է իր կեանքին մէջ եւ ինչ որ կը կատարէ տակաւին, կատարած է սիրով ու խանդավառութեամբ: Ու այս մէկը անտես առնուելիք երեւոյթ մը է մեր ազգային, եկեղեցական ու միութենական կեանքին մէջ:

Սէրը, իր բազմակողմանի երեսներով, Հոթոյեանի գրչին ուղղութիւն տուող, սնունդ պարգեւող, հաւատք ներշնչող, զինք պատնէշին վրայ մի՛շտ պահող, անվերջ թելադրող, զինք դալար պահող վերանորոգ զգացում մըն է, որ ան արտայայտած է իր ազգին հանդէպ, իր ժողովուրդին հանդէպ, իր լեզուին հանդէպ, վերջապէս՝ ասոնց յաւերժութիւնը ապահովող հայ դպրոցին հանդէպ: Պրն. Հոթոյեանի արտայայտած սէրը նաեւ լեցուն է բարոյականութեամբ, զուլալ է ու հոգեթով, մանաւանդ երբ ան կը գրէ հայ իգական սեռի մասին:

**Երրորդ:** Պրն. Հոթոյեանը, իր գանատահայ լրատուական յօդուածներով, թորոնթոհայ կեանքը ուղղակի անմահացուց, այն իմաստով, որ սփիւռքահայ պատմութեան մէջ որոշ տեղ մը յատկացուց մեզի՝ մեր գաղութի մասին իր երկար տարիներու ընթացքին հրատարակած գրութիւններով: Ապագայ պատմաբանը եթէ ուզէ Թորոնթոյի հայ կեանքին մասին լրացուցիչ տեղեկութիւններ ստանալ, անպայման պիտի կարգայ զանոնք եւ անոր համաձայն պիտի տայ իր որոշումը: Այս մէկը անգնահատելի մեծ գործ մըն է արդարեւ:

**Չորրորդ:** Այսօրուան այս ձեռնարկը որոշուած ու կազմակերպուած է Հայ Կեդրոնի առաջնորդութեամբ՝ անոր հովանիին ներքեւ աշխատող բոլոր միութիւններուն, հաստատութիւններուն (եկեղեցի, դպրոց) եւ կազմակերպութիւններուն առաջադրանքով ու յանձնարմբային մասնակցութեամբ, ինչ որ միակամութիւն ու բռնցքային կեցուածք կը ցուցադրէ մեր ժողովուրդին առջեւ: Անշուշտ այս հան-

դիսուսթիւնը բարձր հովանաւորութիւնը կը կրէ մեր սիրելի ու յարգելի Սրբազան Հօր՝ Տէր Խաժակ Արքեպիսկոպոս Յակոբեանին:

Մենք միշտ ըսած ենք ու պիտի կրկնենք շարունակ, թէ Հոթոյեանին նման նուիրեալները թող միշտ անպակաս մնան մեր ազգային-միութենական կեանքէն ներս, որովհետեւ անոնց ներկայութիւնը ոչ միայն բարի օրինակ կը ծառայէ մեզի, այլ նաեւ մեր ինքնութիւնը, մեր պատկանելիութիւնը ամրացնող ուժ ու եռանդ կու տայ բոլորիս:

Պարոն Հոթոյեան, սրտանց կը մաղթենք քեզի քաջաւորջուցիւն, նոր կորով ու գործդ շարունակելու աննկուն կամք եւ ուժականութիւն: Վարձքդ կատար, յաւերժ սիրելի ընկեր Հոթոյեան:



## «ՀՈՐԻՉՈՆ»-Ի ՇՆՈՐՀԱԽՈՐԱԳԻՐԸ

Սիրելի՛ ներկաներ,

«Հորիզոն»ի մեծ ընտանիքին անունով կը շնորհաւորենք 60 տարիներու վրայ երկարող ընկ. Գրիգոր Հոթոյեանի գրական վաստակը:

Անցնող 6 տասնամեակներուն, ընկ. Հոթոյեան անսակարկ ու անշահախնդիր նուիրումով ծառայեց հայ գիրին ու մամուլին:

«Հորիզոն»ի հիմնադրութենէն ի վեր, 28 տարի, ընկ. Հոթոյեան հաւատարիմ աշխատակիցը, գործընկերը եւ ներկայացուցիչը եղած է թերթին: Իր գրիչով այսօր թերթի էջերուն մէջ պատմութեան համար արխիւագրուած են գաղութային լուրեր, հայրապետական կամ Հայաստանի Հանրապետութեան կառավարական պաշտօնատարներու այցելութիւններ, Գանատայի տարածքին Հայ Դատի աշխատանքներու մասին տեղեկատուութիւններ եւ բազմաբնոյթ հարցազրոյցներ:

Այլ գետնի վրայ, ան իր ներգրումը բերաւ նաեւ հայ գրականութեան անդաստանին մէջ՝ հրատարակելով «Սիրտը Ափին Մէջ», «Նուիրում», «Ի ինզիր Բարոյական Ճմարտութեան» եւ «Ճանապարհ» հատորները:

Այսօր, երբ կը մեծարենք մեր աւագ աշխատակիցին բազմամեայ գրական վաստակը, կու գանք շնորհաւորելու եւ ուրախութեան մեր անկեղծ զգացումները յայտնելու մեծարեալին, վերահաստատելով այն ճմարտութիւնը, որ շնորհիւ իր նման անխոնջ նուիրեալներու՝ հայ գիրն ու մամուլը կը գոյատեւեն Սփիւռքի տարածքին:

Վարձքդ կատար, սիրելի՛ ընկ. Հոթոյեան:

ՎԱՀԱՆԳՆ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ  
«Հորիզոն»ի վարիչ խմբագիր



## ՏԻԱՐ ՅԱԿՈԲ ԴԱՆՊԱՉԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ Ի ՊԱՏԻՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՅԱՐԳԱՆՔԻ ԵՐԵԿՈՅԻՆ

Ինձի համար պատիւ եւ քաղցր պարտականութիւն է բանաստեղծ, արձակագիր եւ հրապարակագիր Գրիգոր Հոթոյեանի «Ճանապարհ» մեծածաւալ հատորի շնորհահանգէսին եւ հեղինակին գրական գործունէութեան 60-ամեայ վաստակին նուիրուած այս հանդիսութեան ներկայացնել յօբելեարին համառօտ կենսագրական տեղեկութիւնները:

Գրիգոր Հոթոյեան ծնած է Հալէպ, 5 Օգոստոս 1927-ին, սասունցի ծնողներէ:

Աշակերտած է Հալէպի ազգային Սահակեան երկսեռ վարժարանը եւ աւարտած 1941-ին:

1943-ին զինուորագրուած է Ֆրանսական բանակին եւ երեք տարի ծառայել է ետք՝ ենթասպայի աստիճանով հրաժարած է բանակէն:

Հօրը մղումով սորված է գրաշարութիւն Հալէպի Ուսուցչական Միութեան «Սեւան» տպարանին մէջ, որուն պատասխանատու տնօրէնն էր գրագէտ-ուսուցիչ Պրն. Սիմոն Սիմոնեանը:

1947-ին, որպէս գրաշար, սրբագրիչ, թղթակից եւ աշխատակից, մաս կազմած է «Արեւելք» օրաթերթի անձնակազմին:

1950–51 տարիներուն, տնօրէնութեան պաշտօն վարած է Սուրիոյ Ռազգա քաղաքի Ազգային Վարժարանին մէջ, ուր հիմնած է նաեւ կիրակնօրեայ դպրոց, միեւնոյն ժամանակ վարելով անոր տեսուչի պաշտօնը:

1951-ին, ան կրկին պաշտօնի հրաւիրուած է «Արեւելք» օրաթերթին կողմէ՝ ստանձնելու կարգ մը պատասխանատու գործեր:

Մինչեւ իր հասուն տարիքը, Գրիգոր Հոթոյեան որպէս դպիր ծառայած է Հալէպի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ:

Ամէնօրեայ իր դպրոցական ուսման կողքին, Գրիգոր Հոթոյեան մանկութենէն աշակերտած է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կիրակնօրեայ վարժարաններուն: Ապա, 1946-էն մինչեւ 1975, շուրջ 30 տարիներ, ծառայած է որպէս ուսուցիչ, աւագ ուսուցիչ, ներքին տեսուչ եւ ընդհանուր տեսուչ Մեծի Տանն Կիլիկիոյ կիրակնօրեայ դպրոցներուն մէջ՝ ազգային եւ կրօնական ուսում ջամբելով հազարաւոր ուսումնաւորներ հայ աշակերտներուն, արժանանալով

Մեծի Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի օրհնութեան եւ գնահատանքի գիրին:

Գրիգոր Հոթոյեան Հալէպի կիրակնօրեայ դպրոցներու Կեդրոն բաժնի տեսչութեան առընթեր՝ մաս կազմած է Հալէպի Ազգային Առաջնորդարանի Կրօնա-բարոյական Դաստիարակութեան Խորհուրդին եւ Կիւլպէնկեան նախակրթարանի հոգաբարձութեան կազմին:

Մանկութենէն անդամակցած է Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի գայլիկներու վոհմակին՝ մինչեւ երէց սկսուտութիւն: Խմբապետական պաշտօն վարած է Սուրիոյ Օգնութեան Խաչի երիտասարդներու խումբին: Իսկ 1946-էն սկսեալ, վարած է Հալէպի Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան գրական յանձնախումբի ատենապետութիւնը, ապա վարչութեան ատենադպիրի պաշտօնը, մինչեւ 1975՝ Գանատա Հաստատուիլը:

Գրիգոր Հոթոյեան իր հայերէն լեզուի հմտութիւնն ու գիտութիւնը ձեռք բերած է ինքնաշխատութեամբ, գրաշարական աշխատանքով եւ հայագիտական դասընթացքներու հետեւելով: Ան, որպէս թղթակից, աշխատակցած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կիրակնօրեայ դպրոցներու «Մեր Կեանքը» ամսագրին, մաս կազմած է նաեւ «Կանթեղ» ամսագրի խմբագրութեան եւ աշխատակցած իր հայրենաշունչ բանաստեղծութիւններով:

Գրիգոր Հոթոյեանի առաջին բանաստեղծութիւնները հրատարակուած են 1947-էն սկսեալ Հալէպի «Արեւելք», «Կանթեղ», «Ակօս», «Մեր Կեանքը» ամսագրերուն եւ «Սփիւռք» շաբաթաթերթին մէջ: Իսկ թղթակցութիւններ, յօդուածներ, պատմուածքներ եւ բանաստեղծութիւններ լոյս տեսած են «Արեւելք», «Ազդակ», «Հայրենիք», «Ազատ Օր» եւ «Մարմարա» օրաթերթերուն, ինչպէս նաեւ «Սփիւռք», «Ասպարէզ», «Հայրենիք», «Հորիզոն», «Նոր Կեանք», «Հայ Կեանք», «Գանձասար» շաբաթաթերթերուն եւ «Հայ Միտք», «Նոր Դար», «Նաւասարդ», «Դիտակ», «Մարգիկ», «Շողակաթ» ամսաթերթերուն եւ Հայաստանի գրական ամսագրերուն եւ Գանատայի Ազգային Առաջնորդարանի «Լոյս» երկամսեային մէջ:

Ան ձայներիզի միջոցաւ երկար տարիներ իր հարցազրոյցներով եւ մշակութային ելոյթներով աշխատակցած է նաեւ Ուրուկուէյի «Կոմիտաս» ռատիոկայանին:

1975-ին, Թորոնթօ Հաստատուելով, Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէի կողմէ կը նշանակուի նախ «Հայրենիք» եւ ապա «Հորիզոն» շաբաթաթերթի պաշտօնական թղթակից, որ կը վարէ առաջին օրէն մինչեւ այսօր: Երկար տարիներ կը դառնայ պաշտօնական ներկայացուցիչը «Քագին» գրական ամսագրին, «Ազդակ» շաբաթօրեակին, Հայաստանի «Ազատամարտ» եւ «Երկիր» շաբաթաթերթերուն:

Թորոնթոյի մէջ ան վարած է Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան «Գլաձոր» մասնաճիւղի ատենապետի



պաշտօնը երեք շրջան: Մաս կազմած է Գանատայի Համազգայինի Շրջանային Վարչութեան՝ երեք շրջան: Վեց տարիներ մաս կազմած է Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հոգաբարձութեան՝ արժանանալով Կիլիկեան Թեմի Գանատայի եւ Միացեալ Նահանգներու արեւելեան շրջանի առաջնորդ բարձրաշնորհ Տէր Մեսրոպ Սրբ. Արք. Աշճեանի ստորագրութեամբ առաջնորդարանի գնահատագիրօրհնագրին:

Գրիգոր Հոթոյեան, 1977-էն մինչեւ 1987, տասը տարիներ խմբագրած եւ հրատարակած է Հայ Կեդրոնի «Լրատու» ամսագիրը, եւ եօթը տարիներէ աւելի խմբագրած եւ ձայնասփռած է «Հայ Կեդրոնի Ձայն» հեռաձայնային լուրերը:

1984-ին, ան ստանձնած է Հ.Օ.Մ.ի ամառնային վարժարանի տնօրէնութեան պաշտօնը:

Գրիգոր Հոթոյեանի երիտասարդական տարիներուն գրուած բանաստեղծութիւնները ամփոփուած են 1987-ին Թորոնթօ հրատարակուած «Սիրտը Ափին Մէջ» բանաստեղծութիւններու հատորին մէջ՝ արժանանալով գրականագէտներու գնահատանքին:

2002 թուականի Յունիսին, Հայաստանի Գրողներու Միութեան վարչութեան հրաւերով, մասնակցած է Գրողներու Միութեան Համահայկական առաջին Խորհրդաժողովին, եւ խօսք արտասանած Գանատայի գրողներու անունով:

Նոյն թուականի Յունիսին, Հայաստանի «Ուխտատուն» Հիմնարկութեան հրատարակութեամբ եւ բանաստեղծ, պատմաբան, հրապարակագիր եւ Համաշխարհային Ռազմածովագիրներու Ընկերակցութեան փոխնախագահ Սասուն Գրիգորեանի խմբագրութեամբ լոյս տեսած է Գրիգոր Հոթոյեանի երկրորդ գիրքը՝ «Նուիրում» երգերու եւ բանաստեղծութիւններու հատորը, որ գնահատուեցաւ Հայաստանի ու Սփիւռքի շարք մը գրականասէրներու կողմէ:

Գրիգոր Հոթոյեան բազմաթիւ գնահատագրեր ստացած է Սուրիոյ, Յրանսայի եւ Օնթարիոյի կառավարութիւններէն, ինչպէս նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն եւ Գանատայի Ազգային Առաջնորդարանէն: 1999-ին, ՄԱԿի կողմէ յայտարարուած «Տարեցներու Օր»-ուան գնահատագրով եւ շքանշանով պարգեւատրուած է Օնթարիո հահանգի կառավարութեան կողմէ:

28 Յունիսէն 5 Յուլիս 2004, Երեւանի մէջ գումարուած Հայ Գրողներու Համահայկական Ժողովին, նախաձեռնութեամբ Հայաստանի Գրողներու Միութեան վարչութեան, Ռազմածովագիրներու Միջազգային Ընկերակցութեան Հայկական վարչութեան, Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-հիմնարկութեան կողմէ տեղի ունեցաւ Գրիգոր Հոթոյեանի գրական-ստեղծագործական եւ հասարակական գործունէութեան 55-ամեակը Հայաստանի Գրողներու Միութեան սրահին մէջ, ուր ան արժանացաւ Ռազմածովագիրներու Միջազգային Ընկերակցութեան անդամու-

թեան պատիւին եւ Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-հիմնարկութեան «Շնորհազիր»ին:

1 Հոկտեմբեր 2005-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ գահակալ Ն.Ս.Օ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, իր Թորոնթօ այցելութեան ընթացքին, «Ս. Մեսրոպ Մաշտոց» պատուոյ շքանշանով պարգեւատրեց Գրիգոր Հոթոյեանը իր գրական գործունէութեան բազմամեայ վաստակին համար:

2006-ի գարնան, լոյս տեսաւ Գրիգոր Հոթոյեանի երրորդ գիրքը՝ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգշ. Տէր Մեղրիկ Մ. Վարդապետ Բարիքեանի եւ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբի նախաձեռնութեամբ, որոնք յաջողութեամբ համադրեցին եւ հրատարակեցին «Շողակաթ»ի մէջ լոյս տեսած պատմուածքները Գրիգոր Հոթոյեանի՝ «Ի խնդիր Բարոյական Ճշմարտութեան» հատորին մէջ, որ նուիրուած է Հայոց Մեծ Եղեռնի 90-ամեակին:

2007-ի ամրան, Երեւանի մէջ, Հայաստանի Գրողներու Միութեան վարչութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ Գրիգոր Հոթոյեանի գրական-ստեղծագործական եւ հասարակական գործունէութեան 60-ամեայ ու ծննդեան 80-ամեայ յոբելանը, ուր ան պարգեւատրուեցաւ Հայաստանի Գրողներու Միութեան նախագահութեան եւ «Զօրավար Անդրանիկ» Հայոց Համագգային Միութեան ոսկեայ մետալներով ու պատուոյ հաստատագրերով:

Գրիգոր Հոթոյեան թէեւ պաշտօնապէս հանգստեան կոչուած է, սակայն ան տակաւին կը շարունակէ իր գրական մասնակցութիւնը բերել ազգային, եկեղեցական եւ հասարակական կեանքին մէջ:

Միրելի՛ գրասէրներ,

Այսօր Գրիգոր Հոթոյեանի 60-ամեայ գրական գործունէութեան ճանապարհորդութեան ընթացքին գրուած չորրորդ գրքի հրատարակութիւնը՝ «Ճանապարհ» մեծածաւալ հատորը, մեկենասութեամբ իր ծնողասէր դուստրին եւ թոռներուն, շնորհահանգէսի եւ մեծարանքի այս ձեռնարկով կու գայ առաւել հարստացնել վաստակաւոր գրողին կենսագրականը, այն հաստատ համոզումով, որ ընկեր Հոթոյեանը իր 60-ամեայ գրական եւ հրապարակագրական գործունէութեամբ իրեն բաժին ինկած լուծման հաստատապէս դրած է հայ գրականութեան եւ հայ մամուլի գանձարանին մէջ:

Միրելիներ, Ն.Յ.Դ. «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէն հպարտութեամբ կ'անդրադառնայ, որ ընկեր Գրիգոր Հոթոյեանը եղաւ թորոնթոզայ գաղութի կազմակերպութիւններուն, հաստատութիւններուն եւ միութիւններուն գործունէութեանց գնագցող ձայնը, մաքուր եւ ցայտուն հայելին: Հայ մամուլին մէջ իր ստորագրած թղթակցութիւններու շնորհիւ էր, որ Սփիւռքի եւ Հայրենիքի մեր եղբայր-քոյրերը ծանօթացան թորոնթոզայ գաղութի աստիճանաւոր վերելքին,

անոր ազգօգուտ աշխատանքներուն եւ հայրենիքով բաբախող գաղութային գործունէութիւններուն:

Ի խորոց սրտի նախ կ'արժէ շնորհակալութիւն յայտնել այս ձեռնարկը կազմակերպող միութեանց ատենապետերուն կողմէ կազմուած յանձնախումբին, ինչպէս նաեւ ընկեր Հոթոյեանի գրչեղբօր՝ ընկեր Մարգար Շարապխանեանին, որոնք բծախնդրութեամբ համադրեցին եւ կազմակերպեցին Գրիգոր Հոթոյեանի գրական գործունէութեան 60-ամեակին նուիրուած այս կոկիկ յոբելինական ձեռնարկը:

Շնորհակալութիւն Տիկ. Յասմիկ Պապեանին, որ իր գրական տաղանդի պրիսմակէն դիտուած՝ մեզ բոլորս առաջնորդեց «Ճանապարհ» հատորի ընդմէջէն Գրիգոր Հոթոյեանի 60 տարիներու ճանապարհորդութեան անդաստանները: Վարձքը կատար բոլոր անոնց, որոնք իրենց տաղանդներով բաժին վերցուցին յայտագրին մէջ:

Եւ շնորհակալութիւն ձեզի, սիրելի՛ ներկաներ, որ եկաք եւ քաջալեր հանդիսացաք ընկեր Հոթոյեանի 60 տարիներու գրական վաստակի ձեռնարկին: Եւ վերջապէս, մեր նուիրեալ յոբելեարը կը շնորհաւորենք եւ կը մաղթենք երկար եւ առողջ կեանք մը, որպէսզի ան հայոց գրական անդաստանին մէջ 80-ամեայ փորձառութեամբ բայց երիտասարդի հոգիով շարունակէ իր ստեղծագործական եւ ազգօգուտ գործունէութեան երթը՝ յաւերժութիւն տանող ճանապարհներով:



## ՏԻԿԻՆ ՅԱՍՄԻԿ ՊԱՊԵԱՆԻ ԳՐԱԽՕՍԱԿԱՆԸ՝ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ «ՃԱՆԱՊԱՐՀ»-ԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ

Բարձրաշնորհ Տէր Խաժակ Արք. Յակոբեան, Հոգեշնորհ Հայրեր՝ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան եւ Տէր Սիփան Վրդ. Քէչէճեան, Գերյարգելի Հայր Եղիա Ծ. Վրդ. Գիրէջեան, Վերապատուելի Սարմազեան, Հայ Կեդրոնի հովանիին տակ գործող միութիւններու ներկայացուցիչներ, հրաւիրեալներ եւ Գրիգոր Հոթոյեանի անձին ու վաստակին հանդէպ իրենց յարգանքն ու սէրը յայտնելու համար ժամադրուած ներկաներ:

Այսօրուայ այս հաւաքին շարժառիթը Գրիգոր Հոթոյեանի գրական 60-ամեայ բեղուն վաստակին հանդիսաւոր նշումն է եւ իր վերջին արգասիքը եղող՝ «Ճանապարհ» անունը կրող գրքին շնորհահանդէսը:

Որեւէ խօսքէ առաջ, նախ կ'ուզեմ հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել մեծարանքի երեկոյի կազմակերպիչներուն, որոնք պատեհութիւնը ստեղծեցին, որպէսզի կարենամ իմ սիրոյ եւ յարգանքի տուրքս մատուցել Գրիգոր Հոթոյեանի 60 տարիներու վրայ տարածուող իր մշակութային գործունէութեան ու վաստակին: Կարելի չէ երեւակայել թորոնթոհայ կեանքի պաստառը առանց իր անունին, եւ եթէ այս քաղաքի ընկերային-մշակութային օղակին մաս կազմած էք, անպայման ձեր գործունէութեան ընթացքին հասարակաց մտահոգութիւն մը կամ իրագործումի մը ուրախութիւնը բաժնած էք իր հետ եւ գնահատած իր յանձնառու եւ գիտակից կեցողածքը:

Անձամբ Գրիգոր Հոթոյեանի եւ իր ընտանիքին բարեկամութիւնն ու գուրգուրանքը վայելելու բախտաւորութիւնը ունեցած եմ, հետեւաբար կրկնակի ուրախութեամբ է, որ մաս կը կազմեմ մեծարանքի այս երեկոյին:

Յարգելի՛ ներկաներ, այս երեկոյ խօսք առնողները առիթը ունեցան արտայայտուելու մարդուն, գաղափարի ու հանրային սպասարկուին, ընտանիքի նուիրեալ հօր, ամուսինին եւ ուրիշ արժանիքներու մասին:

Ինձմէ ակնկալուած ներդրումը պիտի ըլլայ հպանցիկ ակնարկ մը նետել, որ գրականագէտի, քննարկողի յաւակնութենէն զուրկ է եւ մասնաւորաբար կը ցոլացնէ սիրոյ ու մասնաւոր խորունկ յարգանքի արտայայտութիւն մը՝ հանդէպ Գրիգոր Հոթոյեանի անձին ու վաստակին: Յարգանքս կը թելագրուի 60 տարիներու վրայ երկարող իր բեղմնաւոր արգասիքին, որ յատկանշուեցաւ գլխաւորաբար լրագրութեամբ:

2007 տարեշրջանին լոյս ընծայուած 874 էջերէ բաղկացած պատկառելի այս հատորի բովանդակութիւնը ունի խորհրդանշական եւ արտայայտչական խորագիր մը «Ծանապարհ» անունով: Կողքը՝ Սանահին-Հաղբատ ճանապարհի նկարագարը ու մտարած է արուեստագէտ Յակոբ Ծանապարհան: Կողքի վերջին երեսին տպագրուած են հեղինակին դիմանկարը, կենսագրականը եւ նախկին երկերու անունները՝ «Սիրտը Ափին Մէջ», «Նուիրում» եւ «Ի խնդիր Բարոյական ճշմարտութեան»:

Գիրքին առաջին էջերը կը ներկայացնեն հեղինակին շնորհակալութեան խօսքը՝ ուղղուած բոլոր անոնց, որոնք աջակցած են այս հատորի հրատարակութեան:

Հատորի մեկենասութիւնը ստանձնած են դուստրը՝ Անի Հոթոյեան Ժողին եւ երկու թոռները՝ Քրիստափորն ու Ստեփան-Արմէնը:

Հեղինակը այս հատորը ձօնած է իր կնոջ՝ Շաքէ Հոթոյեանին, որուն հրեշտակային գուրգուրանքին, հոգածութեան եւ հանդուրժողութեան կը պարտի իր գրական գործունէութիւնն ու նաեւ Մեծի

Տանն Կրիկիկոյ Շնորհազարդ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառին կողմէ «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանին արժանանալը:

Գիրքի յառաջաբանը ստորագրած է պատմաբան, գրող Արմէն Տօնոյեան՝ «Ամբողջական մտաւորական Գրիգոր Հոթոյեանին բարի ճանապարհ» խորագրով, ուր Տօնոյեան բարձր կը գնահատէ այս մեծ աշխատասիրութիւնը եւ հեղինակին քաջութիւնը նման մեծածաւալ գործ մը իրականացնելուն համար: Տօնոյեան հետեւեալ խօսքով կը բնութագրէ Հոթոյեանի «Ճանապարհ» գիրքին արժէքը. «Գրիգոր Հոթոյեանի չափածոյ կամ արձակ գործերուն կողքին, այս հատորը իր կեանքի վերընձիւղումներուն պատմագրական գրաւականն է: Հարուստ հատոր մը, որ արժանաւորապէս կը ներկայացնէ գանատահայ գաղութի պատմութիւնը, տեսակ մը տարեգրքային: Մեզի կը մնայ պարզապէս գնահատել նման մեծ աշխատասիրութիւն մը, որ գանատահայ կեանքին մէջ կեանքի թէժ ելեւէջներ ունեցած հեղինակը, ուր օգտուելով ընծայուած այս հնարաւորութենէն, հայութեան հանդէպ իր ունեցած անհուն սիրոյ այս մատենանը կը մատուցանէ մեզի»:

Պիտի փորձեմ դրսեւորել ու կարելիութեան սահմաններու մէջ ընդգծել հատորի էութիւնը, հիմնական երակը կազմող գիծը, որ ընդհանուր բնորոշումով մը կարելի է կոչել իր ժողովուրդի ճակատագրով տագնապած ու հրճուած մարդու մը երկար ճանապարհին յուշագրութիւնը, վկայութիւնը, որ անձի մը փորձառութեան ընդմէջէն կը դառնայ հաւաքականութեան մը կենսագրութիւնը, անոր անցած ճանապարհի վկայութիւնը:

Հպանցիկ բառի գործածութիւնը դիպուածի արդիւնք չէ, յարգելի՛ ներկաներ, գործածուած է դիտումնաւոր կերպով, որովհետեւ մեր տրամագրութեան տակ գտնուող այս 800-է աւելի էջերու վրայ տարածուող ճանապարհը այնքան հարուստ է իր ենթաբաժանումներով ու այլազան երանգաւորումներով:

Եկէք պահ մը միանանք հեղինակին, տեսնելու թէ ի՞նք ինչ ձեւով կը բնորոշէ հատորի էութիւնը՝ հատորի նախաբանին մէջ. «Իմ 60-ամեայ գրական գործունէութեան ճանապարհին բանաստեղծութիւններով, յօդուածներով, թղթակցութիւններով, պատմուածքներով աշխատակցութիւն բերած եմ Սփիւռքի եւ Հայրենիքի մամուլին, որոնցմէ առանձին գիրքով հրատարակուած են «Սիրտը Ափին Մէջ» բանաստեղծութիւնները 1987-ին, «Նուիրում»՝ 2002-ին, «Ի խնդիր Բարոյական Ճշմարտութեան» պատմուածքները՝ 2005-ին, սակայն մամուլին մէջ անտիպ կը մնային մեծ թիւով ուսումնասիրութիւններ, որոնցմէ զատեցի իմ հասկացողութեամբ պատմականօրէն կարեւոր ու սրտիս մօտ եղող գրութիւնները, որոնք ցոյց կու տան կեանքիս հանգրքուանները ու կեանքի որոշ շրջաններու ու հատուածներու մօտ գոյութիւն ունեցող տագնապները, յիշեցնելով մասամբ այդ օրերու Սուրբոյ, Լիբանանի, Գանատայի եւ Հայաստանի կեանքը՝ անձնական

կեանքի մը փորձառութեան ընդմէջէն, սփիւռքահայ ու հայրենի կեանքը յուզող հարցերու արձանագրութիւնը, վկայութիւնը, խորհրդածութիւնը»։ Գրիգոր Հոթոյեան ամենայն պարկեշտութեամբ կը յիշեցնէ մեզի, թէ «այս հատորը գրական գեղարուեստական բովանդակութիւն չունի»։ Գրութիւններէն շատերը լոյս տեսած են 50—60 տարիներ առաջ։ Մամուլի էջերէն դուրս հանելով՝ հեղինակը անփոխարինելի ծառայութիւն մը կը մատուցանէ ապագայ պատմագրին եւ նաեւ նոր սերունդը իրագեկ կը դարձնէ՝ ըսելով, թէ Եղեռնէն ճողոպրած առաջին սերունդը ինչպէ՛ս ապրեցաւ, գլխաւորաբար Սուրիոյ մէջ։

Այս էջերը կրնան գրական գեղարուեստական բովանդակութիւն չունենալ, բայց, գրուած անպաճոյճ ու խնամուած արեւմտահայերէնով մը, անկասկած որ գրական անդաստանին կը պատկանին, նոյնիսկ ենթահող եւ հոռւ նիւթ կրնան ծառայել գեղարուեստական ստեղծագործ գրականութեան մը, եւ այս իրողութեամբ իսկ խիստ կարեւոր ներդրում մը կը դառնայ մեր գրականութեան։

874 էջերէ բաղկացած այս հաստատփոր հատորը ունի հետեւեալ ենթաբաժանումները.

ա.- Յօդուածներ

բ.- Ուսումնասիրութիւններ

գ.- Պատմուածքներ

դ.- Թղթակցութիւններ

ե.- Հարցազրոյցներ

զ.- Առիթներով խօսուածներ

է.- Մահագրութիւններ

ը.- Երգեր

թ.- Բանաստեղծութիւններ

ժ.- Գրախօսականներ եւ վկայութիւններ

Պիտի փորձեմ իւրաքանչիւր ենթաբաժանումի մէջ արծարծուած նիւթերու ամփոփ նշումը ընել եւ ընդգծել էականը։

Յօդուածներու բաժինը կը բաղկանայ 124 էջերէ՝ տարածուելով 1949-էն մինչեւ մեր օրերը։ Յօդուածներու նիւթերը կը բնորոշեն յօդուածագրին հետաքրքրութիւններու եւ մտահոգութիւններու աշխարհը, որոնք այլազան են եւ կը բացայայտուին յիշեալ խորագիրներու մէջ, պատգամելով մշակոյթի, հայ լեզուի, դպրոցի եւ մամուլի կարեւորութիւնը։ «Մշակոյթ եւ հայ դպրոց», «Մշակոյթը մեզի պահպան», «Թարգմանչաց տօնին առթիւ», «Հայ դպրոցը լոյսի աղբիւր մեարդական», «Թարգմանիչներու աւանդը», «Մշակոյթի ընդունակ ազգեր չեն մեռնիր», «Հայ մամուլի կարեւորութիւնը», «Հայ գիրն է ճանապարհն հայուն՝ աշխարհի չորս ծագերուն»։

Ունի յօդուածներ, որոնք կը շօշափեն ընկերային-քաղաքական հարցեր, ինչպէս «Մայիս 28», «Դաշնակցական ընկեր», «Փառահեղ

թուական», «Համայնավարութեան իրական դիրքը կրօնքի հանդէպ», «Ես տեսայ ընկեր Դրօս» եւ այլն...

Շատ կանուխէն Գրիգոր Հոթոյեան հաւատացած է կիրակնօրեայ վարժարաններու դերին, երկար տարիներ ստանձնելով կիրակնօրեայ վարժարաններու տեսչութիւնը եւ այս ուղղութեամբ նաեւ ունի յօդուածներ՝ ջատագովելով անոնց կարեւորութիւնը:

Ուսումնասիրութիւններ ենթաբաժանումին տակ (էջ 145–202) կը հանդիպինք պրպտումի եւ խորունկ ծանօթութեան արդիւնք եղող գրութիւններու, որոնք անվարան կարելի է հրատարակել որեւէ գրական կամ ուսումնասիրական բնոյթ ունեցող հանդէսի մը մէջ:

Նկատի ունիմ Դանիէլ Վարուժանի, Յովհաննէս Թումանեանի, Արշակ Բ-ի նուրուած գրութիւնները: Պատմական–քաղաքական բնոյթ ունեցող նիւթերու շուրջ իր ուսումնասիրութիւնները զգացականէն անդին՝ ըստ էութեան առողջ հաստատումներու վկայութիւններ են: Ինքզինք քաղաքի մասին իր ուսումնասիրութիւնը լոյսին կը բանայ ամբողջ շրջանի ունեցած պատմական կարեւորութիւնը: Կոտորածէն ճողոպրածներու վերընձուղումին եւ իրենց նոր բոյները կառուցողներու կեանքը չէ վրիպած Հոթոյեանի ուշադրութենէն:

Պատմուածքներու ենթաբաժանումը կը բաղկանայ 75 էջերէ եւ շատ աւելի յուշերու, անձնական փորձառութիւններու ընդմէջէն կը նկարագրուի Եղեռնէն ճողոպրածներու կեանքերու ողիսականը, առանց մոռնալու մանկութեան յիշատակներուն հետ կապուած չարածճիւղութիւնները: Նշեմ քանի մը խորագրեր՝ «Շունի պատմութիւն», «Ինչպէ՞ս գտանք արաբացած մօրաքոյրս», «Մենք ալ մանկութիւն չունեցանք», «Հաւատքի զօրութիւնը», «Բարեգործ հայրս», «Դուք հրաշալի ժողովուրդ էք», «Սիրոյ պատմութիւն մը»: Պատմուածքներու հեղինակ Հոթոյեանի մօտ տիրապետող բարոյականն ու հայրենասիրութիւնն է, բայց սիրոյ հետ առնչուող նիւթերը բնաւ զինք անտարբեր չեն ձգած, վկայ՝ «Խորտակուած սէր»ը:

Թղթակցութիւններ: Հատորի առիւծի բաժինը յատկացուած է այս ենթաբաժանումին՝ 278 էջ, երախտագիտական խորունկ յարգանքի արժանի վաստակ: 60 տարիներու վրայ տարածուող վկայութիւններ՝ թղթակցութեան պարզ չոր սահմանումէն անդին անցնելով կը մատուցուին մեզի, սփիւռքահայութեան կեանքը ուսումնասիրող պատմաբանին: Թանկագին ու գնահատելի արխիւ մը կը յանձնուի բոլորիս:

Առանց նսեմացնելու այլ բնագաւառներու իր վաստակը, Գրիգոր Հոթոյեան անվիճելիօրէն պիտի յիշուի որպէս «Ամենայն Հայոց Թղթակից»: Իր առաջին թղթակցութեան թուականը 1949–ն է եւ այդ քղամիդը արժանի կերպով կը շարունակէ կրել իր ուսերուն մինչեւ օրս: Պիտի ուզէի կարգ մը նմոյշներ թուել իր թղթակցութիւններու խորագրերէն, բայց ո՞րմէկու նշումը կատարել, այս է հարցականը:

Մշակութային կեանք, համերգներ, հայ դպրոցի շինութենէն

մինչև հանգանակային ճաշկերոյթի ձեռնարկները, վեհափառներու այցելութիւնը, Ռազգայի մէջ տեղի ունեցած թէյասեղանէն մինչև կիրակնօրեայ վարժարաններու կարեւորութիւնը ընդգծող թղթակցութիւններ:

Խղճամիտ արձագանգ բոլոր ձեռնարկներու՝ առանց խտրութեան:

Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւն, արցախեան դիւցազնական էջերէն մինչև մանկապարտէզի հանդէսի մը նկարագրականը, նո՛յն խանդավառութեամբ, նո՛յն սիրով:

Հարցազրոյցներու ենթաբաժանումը կը բաղկանայ շուրջ 80 էջերէ եւ կը կազմէ հատորի կարեւորագոյն մասերէն մէկը: Ընթերցողին ծանօթութիւնը փոխանցելու «հարցազրոյցի» ձեւը լրագրութեան ընդունուած եւ արդիւնաւոր միջոցներէն մէկն է, ուր փոխանակ թղթակիցը մէջբերումներ ընելու, ուղղակի երկխօսութեան միջոցաւ կարելիութիւնը կը ստեղծէ արծարծուած նիւթը կենդանի դարձնել, անոր տալով անմիջական շունչ մը:

Այս սեւի վարպետը մեր գրականութեան մէջ կը նկատուի Ֆրանսահայ վիպագիր Կարօ Փոլատեանը: Եթէ Փոլատեանի «Զրոյցներ»ը հայ եւ Ֆրանսացի գրագէտներու հետ կատարուած են, Հոթոյեանի հարցազրոյցները հայ կեանքի եւ արուեստի տարբեր բնագաւառներու ներկայացուցիչներու հետ՝ սերտ կապ ունեցած են մեր ամէնօրեային հետ:

Գաղութա այցելող մտաւորականները, կրօնաւորները եւ արուեստագէտները չեն վրիպած թղթակիցի աչքէն: Այս զրոյցներու բաժինը արժանի է առանձին հրատարակութեամբ մը լոյս ընծայուելու. իրենց որակով ու խորունկ ծանօթութեամբ կը կրեն ժամանակի կնիքը եւ ոմանց մէջ արծարծուած հարցերը կը շարունակեն մնալ այնքան ժամանակակից:

Հոթոյեան չէ ծանրացած կամ գոհացած միայն «այցելուներով», այլ՝ մեր տեղոյն եկեղեցական, դպրոցական, շինարարական ծրագիրներու պատասխանատուներուն հետ իր ունեցած հարցազրոյցներով ան գաղութը իրազեկ դարձուցած է մեր կեանքը յուզող հարցերուն:

Խորհրդահայ բանաստեղծ Վահագն Դաւթեանի հետ իր հարցազրոյցը Սփիւռք-Խորհրդային Հայաստան փոխյարաբերութեանց մասին, հետաքրքրական եւ ուսանելի վկայութիւն մը կը կազմէ: Խմբավարներ Յովհաննէս Չէքիճեանի եւ Ալֆրետ Մարտոյեանի, գեղանկարիչ Գրիգոր Մոմճեանի հետ ունեցած հարցազրոյցներու շնորհիւ մենք իրազեկ կը դառնանք իրենց իրագործումներուն եւ ծրագիրներուն: Ամենապատիւ Շնորհք Պատրիարքի հետ զրուցելով՝ մենք կը տեղեկանանք Պոլսոյ ու գաւառներու հայութեան իրավիճակին: Վարուժան Արք. Հերկելեանի միջոցաւ կը փոխադրուինք Կիպրոս՝ ծանօթանալով կիպրահայութեան իրագործումներուն եւ տենչերուն:



Պայծառ իմացականութեան տէր Հայր Լեւոն Զէքիեանի միջոցաւ մխիթարեանականներու նուաճումներուն եւ ծրագիրներուն տեղեակ կ'ըլլանք: Իրանահնդկաստանի Թեմի Առաջնորդ Կորիւն Արք. Պապեանի հետ իր հարցազրոյցը մեզի կը ծանօթացնէ Պարսկաստանի կարեւոր օճախներէն մէկուն՝ Նոր Զուղայի կազմաւորման ու նուաճումներուն: Գրականագէտ, համալսարանի դասախօս Խաչիկ Թէօլէլեանի հետ հարցազրոյցը կարգալը իսկական վայելքի մը կը վերածուի, աւելի քան քսան տարիներ առաջ կատարուած այս հարցազրոյցի ընթացքին արծարծուած հարցերու մէկ կարեւոր մասը կը շարունակեն մնալ այնքան ժամանակակից եւ իրաւ: Ամերիկահայ իրականութեան այս դասախօսին, մտածողին վերլուծումերը, ախտաճանաչումները անպայման նպաստ մը կարելի է նկատել սփիւռքահայ կեանքի կազմակերպման մէջ:

Գրիգոր Հոթոյեան միջոցը գտած է հարցազրոյց ունենալ նոյնիսկ քաղաքական բանտարկեալ Համբէկ Սասունեանի հետ եւ մեզ մասնակից կը դարձնէ գաղափարական բանտարկեալի մը ներաշխարհին:

Հայրենիք այցելութեան ընթացքին, Գրիգոր Հոթոյեան, չմոռնալով «Հորիզոն»ի ընթերցողները, հարցազրոյց ունեցած է եզրփոխներու նախագահ Բաքոյեանի հետ:

Հարցազրոյցներու այս ենթաբաժանումը, ինչպէս նախապէս կը նշէի, կշիռք մը կ'աւելցնէ հատորին ու Հոթոյեանի վաստակին:

Մահազրութիւններ: Այս ենթաբաժանումը չէր կրնար գոյութիւն չունենալ, քանի մահը ամբաժան մասն ըլլալով մեր կեանքին՝ թղթակից Հոթոյեան անպայման իր խօսքն ունի ըսելիք իր սիրելիներուն, գործակիցներուն, հանրային դէմքերու մահերու առիթով, անոնք պատահած ըլլան մեր քաղաքին մէջ թէ՛ այլուր: Այս մահազրութիւնները յաւուր պատշաճի խօսքերէն անդին անցնելով՝ ընթերցողին առջեւ պիտի բանային հանգուցեալներու կեանքերու մասին լայն հասարակութեան անծանօթ յատկանշական պատահարներ:

Թորոնթոհայ ազգային կուսակցական նուիրեալներէն Անդրանիկ Արթինեանի կանխահաս կորուստը սգացող ու անոր արժանիքներուն գնահատումը ընող մահազրութիւնը մաս պիտի կազմէ մեր գաղութի յուշագրութեան: «Թորոնթոյի Աշուղ Յովնանի յիշատակին», «Ազգասէր եւ ազնուական հայրը՝ Յակոբ Սարգիսեան», «Կաղնի մըն ալ տապալեցաւ, Արամ Այվազեանի մահուան առիթով», Ճորճթառնի վերջին տողցմէ Գուրգէն Մակարեանի մահուան առիթով, միշտ ընդգծելով դրական երեւոյթ մը եւ արդար գնահատումը ընելով հանգուցեալներու յիշատակին:

Անդրանիկ Կէտիկեանի մահազրութեամբ մենք կը ծանօթանանք սուրբահայ կեանքը յուզող ու քիչերու ծանօթ պատահարներու: Տակաւին մահազրութիւններու զլուխին տակ տեղ գտած են հեռաւոր ծանօթութիւններ եւ մասնաւոր կապերով գոյութիւն ունեցած մտեր-

մութիւններ: Անդրանիկ Մառուկեանի մահուան առիթով գրուած իր մահագրութիւնը կ'ոգեկոչէ Հայէպի «Նայիրի»ի գրաչարին ու խմբագրին փոխարարեբութիւնը: Սասունցի Սիմոն Սիմոնեանի մահը պիտի քակէր իր յուշերու, յիշատակներու կծիկը:

Հատորը ունի նաեւ բանաստեղծութիւններու ենթաբաժանում մը՝ գրուած զանազան առիթներով ու ձօնուած անձերու, որոնցմէ մաս մը, — յօրինումովը Անահիտ Կոլտսուղեանի, Յակոբ Մանուկեանի, Գէորգ Յարութիւնեանի եւ Սարգիս Համպոյեանի, — ստացած են երաժշտական ձեւաւորում, եւ կը յուսանք կ'արժանանան ժողովրդային լայն խաւերու ընդունելութեան:

«Ճանապարհ»ի վերջին բաժինը յատկացուած է ստացուած նամակներու, վկայութիւններու եւ վերջին հատորներու առիթով արտայայտուած գնահատականներու: Իսկ «Ճանապարհ»ի հրատարակութենէն ի վեր ստացուած գնահատական, շնորհաւորական խօսքերու արխիւը, իր ոչ արհամարհելի ծաւալով, սկսած է Գրիգոր Հոթոյեանի գրադարանը խճողել, եւ եթէ միայն անոնց ընթերցումին յատկացնէի այսօրուայ խօսքս, արդէն սպառիչ գրախօսական մը գրուած կ'ըլլար: Յուսանք, որ այդ արխիւը կ'արժանանայ հրատարակութեան՝ ի խնդիր արդարութեան եւ հատորի արդար գնահատումին:

Ձեր համբերութեան ապաւինելով՝ պիտի փորձեմ գէթ քանի մը մէջբերումներ կատարել, արդար ըլլալու համար ե՛լ հեղինակին, ե՛լ նամակագիրներուն հանդէպ: Յիշենք կարգ մը մտաւորականներ՝ մէջբերելով իրենց կարծիքներէն. — Խաչիկ Թէօլէյեան. «Այս հատորը ձեր գրական կեանքի վաստակը չէ միայն, այլ՝ մեր հաւաքական կեանքին զարկերակը ունկնդրող, շօշափող անձի մը վկայութիւնը»:

Շաքէ Տէր Մելքոնեան-Մինասեան. «Այդ էջերուն մէջ միշտ դէմ յանդիման գալով միեւնո՛յն ազգանուէր, սրտցաւ մտաւորական Գրիգոր Հոթոյեանին հետ, որ իր բազմապիսի կարողութիւնները ի սպաս կը դնէ մեր լեզուական-մշակութային ազգային արժէքներուն»:

Օշական Արքեպիսկոպոս. «Ընթերցողը այնտեղ կը ճամբորդէ ձեզի հետ մեր բոլոր գաղութները, կ'անցնի հայահոծ քաղաքներու ճամբաներէն, դէմ յանդիման կը գտնուի յայտնի անձնաւորութեանց եւ կը հարստանայ մտածումներու եւ խօսքերու ճոխութենէն»:

Վարդգէս Սինանեան. «Կանգնած հայրենասիրութեան պատնէշին վրայ՝ դուն եղած ես այն հազուագիւտ գաղափարապաշտ գրողներու հոյլէն, որուն գրիչը միշտ բաբախած է մեր Հայրենիքի եւ ժողովուրդի երազներուն եւ յոյսերուն իրականացման եւ հզօրացման համար»:

Ժագ Յակոբեան. «Բացառիկ ու եզակի գործ մը թէ՛ բարոյապէս եւ թէ՛ նիւթապէս, որ ձեր քաղաքի ու գաղութին կեանքը կը ներկայացնէ իր զանազան երեսներով, յորդահոսուն գրիչի մը շնորհիւ»:

Վերապատուելի Յ. Սարմազեան. «Մեծ եւ սքանչելի գործ մը կատարած էք այդպէս՝ ձեր 60 եւ աւելի տարիներու զանազան եւ այլազան գրական աշխատանքները մէկ կալի մէջ հաւաքելով, յարդը հովին տուած եւ ցորենը հաւաքած մէկ ամբարի մէջ: Իսկապէս այս համադրումը կարելի է գրական բերքահաւաք անուանել»:

Թորոս Թորանեան. «Գիրքդ բազմազան բովանդակութեամբ առիթ մը եղաւ ինծի համար, որ հաճելի պտոյտի մը ելլեմ ուղեկցութեամբդ դէպի մեր պատանեկութեան աշխարհը, երբ մեզի համար օրերը գեղեցիկ էին ու մենք պատանիի անմեղ հայեացքով կը դիտէինք աշխարհը»:

Կարօ Պետրոսեան. «Ճանապարհ»ը հասաւ եւ ոչ միայն քանիցս մտայ անոր մէջ եւ... քալեցի, քայեցի հին ճամբաներէն եւ զգացի, որ հաճելի էր պտոյտը: Ժամանակը որոշ քաղցրութիւն մը կը դնէ նաեւ դժուարին օրերուն, տառապանքի մէջ, վտիտ ուժերով պայքարներուն մէջ...: Այնքան, որ կը մոռցնէ նոյնիսկ Ռազգայի հեղցուցիչ տաքն ու Տէր Զօրի աւագուտքը եւ... տակաւին ինչե՛ր: Դուն այդ ճանապարհին մէջ ոչ միայն քալող, այլեւ գրչովդ եղար ճանապարհը դէպի նաւահանգիստ հասցնող վառուող մոմ մը կամ՝ գրիչ»:

Բաբգէն Թօփճեան. «Սոյն ծաւալուն հատորը, որ բերքահաւաքը կը հանդիսանայ ձեր տարիներու գրական վաստակին, կ'երեւակայեմ թէ ինչպիսի սպառիչ ու համբերատար աշխատանքով գլուխ հանեցիք զայն, ի մտի ունենալով դիւրացնել գործը սփիւռքահայ պատմութեամբ հետաքրքրուող մտաւորականներու: «Ճանապարհ»ին մէջ ամփոփուած ձեր գրութիւնները հաճոյքով պիտի կարգացունին գրասէր անհատներէ»:

Գրիգոր Փիտէճեան. «Զեր ազգային գիտակցութեամբ ու տաղանդովը ոչ միայն ձեր ստեղծագործութիւններով մաս եւ բաժին բերիք հայ գրականութեան անդաստանի ծաղկումին, այլ՝ նաեւ հրապարակագրութեամբ, հայ մամուլին մէջ երեւցող ձեր նկարագրականներով հայ ընթերցողը կապի մէջ պահեցիք ազգային-մշակութային գետնի վրայ կատարուած այնքան կարեւոր ու ազգաշէն ընթացիկ գործերուն»:

Խօսքս իր աւարտին հասած է, սիրելի՛ ներկաներ, չեմ գիտեր որքանով յաջողեցայ ինծի սահմանուած ժամանակի շրջագծին մէջ «Ճանապարհ» գրքի բովանդակութեան մասին արտայայտուել կարելի ամբողջականութեամբ: Անշուշտ յաւակնութիւն չունիմ անթերի աշխատանք մը կատարած ըլլալուս:

Սիրելի՛ Պրն. Հոթոյեան, այս երախտաշատ պարտականութիւնը առիթ ընծայեց ինծի աւելի լաւ ծանօթանալու ձեր աշխարհին, ձեր անցած ճանապարհին: Դուք առաջնորդեցիք զիս թղթատելու սփիւռքահայ իրականութեան կարեւոր էջերն ու շրջանները, ուր յոյսն ու լաւատեսութիւնը, հայ հոգիի լաւագոյն արժանիքները գտած էին

իրենց հարազատ արձագանգները: Ձեր կամեցողութեամբ, այս երախտիքի երեկոն թող մեծարած ըլլայ նաեւ բոլոր հայ մամուլի աշխատակիցները:

Բանաստեղծ, ուսուցիչ, հրապարակագիր, արձակագիր Գրիգոր Հոթոյեանին կ'ըղձամ քաջառողջութիւն եւ 100-ամեակը գովբեղելու ջերմ մաղթանքներ, ցանկալով, որ ան շարունակէ իր ճանապարհորդութիւնը դէպի նոր հանգրուաններ:

Պատի՛ւ հայ մամուլ սպասարկու մեծարեալին՝ բոլորիս սիրելի Գրիգոր Հոթոյեանին:



## ՅՈՒԹԵԼԵԱՐ ՏԻԱՐ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Բարեշնորհ Տէր Խաժակ Սրբ. Արք. Յակոբեան, Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ Բարիքեան, Հոգեշնորհ Տէր Սիփան Վրդ. Քէչէճեան, Գերյարգելի Հայր Եղիա Ծ. Վրդ. Գիրէջեան, Վերապատուելի Եսայի Սարմազեան, Վերապատուելի Սամուէլ Ալպարեան:

Շատ սիրելի գրասէր ազգայիններ:

Փառք կու տամ Աստուծոյ, որ իմ անցաւոր կեանքս իր ողորմութեամբ հասաւ 80 տարիքը եւ անցաւ, աւելի առիթ տալով, որպէսզի իմ կարողութեանս չափով ծառայեմ հայ ազգին, հայ եկեղեցիին, հայ մշակոյթին, հայ գրականութեան եւ լրագրութեան, որոնց 80-ամեակը եւ 60-ամեակը տօնուեցաւ 2006-ին եւ 2007-ին Հայաստանի մէջ, եւ այսօր՝ կազմակերպուած մեծարանքի այս երեկոյով:

Կրկին փառք կու տամ Աստուծոյ, որ գրական-լրագրական 60-ամեայ գործունէութիւնս զնահատուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ, որ իր Թորոնթօ այցելութեան ընթացքին, 1 Հոկտեմբեր 2005-ին, ինծի շնորհեց «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանը, 2006-ին, Հայաստանի մէջ կազմակերպուած 60-ամեայ գործունէութեանս որպէս զնահատանք ստացայ յատուկ շնորհագիր Հայոց Մեծ Եղեռնի եւ Ազատամարտի «Ուխտատուն» հիմնարկ-թանգարանի տնօրէնութենէն եւ արժանացայ Միջազգային Ռազմածովագիրներու Ընկերակցութեան անդամի պատուին:

Իսկ 20 Օգոստոս 2007-ին, Երեւանի մէջ կազմակերպուած «Ճանապարհ» գիրքի շնորհահանդէսին արժանացայ Հայաստանի Գրողներու Միութեան «Գրական Վաստակի Համար» բարձրագոյն շքանշանին եւ «Զօրավար Անդրանիկ» Հայոց Համազգային Միութեան ոսկէ մետալին:

Այս բոլոր մեծարանքները, գնահատագիրներն ու մետալները, Հայաստանի եւ Թորոնթոյի մէջ, եկան փաստելու, որ Հայ ժողովուրդը եւ Հայ ղեկավարութիւնը իր ժամանակին գիտէ գնահատել Հայ մշակոյթը, գրականութիւնն ու արուեստի բնագաւառներու հաւատարիմ եւ վաստակաւոր ծառայողները, որոնց կարգին՝ զիս, խոնարհ ծառան Հայ գրականութեան եւ լրագրութեան:

Այս առիթով իմ խորին եւ սրտագին շնորհակալութիւններս կը յայտնեմ Գանատայի Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Խաթակ Սրբ. Արք. Յակոբեանին, որ սիրով ստանձնեց մեծարանքի այս ձեռնարկի հովանաւորութիւնը, ձեռնարկը կազմակերպելու աշխատանքները ղեկավարող ընկեր Մարգար Շարապխանեանին եւ ընկեր Յակոբ Ճանպազեանին, կազմակերպիչ յանձնախումբին, գրական գործունէութիւնս եւ «Ճանապարհ» գիրքս ներկայացրնող Տիկին Յասմիկ Պապեանին, իմ կենսագրական հակիրճ տեղեկութիւնները փոխանցող ընկեր Յակոբ Ճանպազեանին, օրուան հանդիսավար ընկեր Մարգար Շարապխանեանին, իմ բառերով եւ իր յօրինումով երգեր մեկնաբանող երաժշտագէտ, յօրինող եւ երգչուհի Անահիտ Կոտսուղեանին, դաշնամուրով ընկերակցող Վարուժան Մարտիրոսեանին, կիթառով ընկերակցող Հայկ Աշոտ Պէլլէրեանին, արտասանողներուն եւ ամէն անոնց, որոնք օգտակար եղան ձեռնարկի յաջողութեան:

Որպէս վերջաբան, գլխագիր շնորհակալութիւն կնոջս՝ Շաքէին, իր համբերութեան եւ հոգածութեան համար, զաւկիս՝ Անդրանիկին, իր բազմազան օգնութիւններուն համար եւ յատկապէս սիրելի դուստրիս՝ Անիին եւ թոռներուս, որոնց նիւթական հովանաւորութեամբ կարելի եղաւ հրատարակել «Նուիրում» եւ «Ճանապարհ» գիրքերս:

Շնորհակալութիւն բոլորիդ:



ԳԵՐՇ. Տ. ԽԱԺԱԿ Ս. ԱՐՔ. ՅԱԿՈԲԵԱՆԻ  
ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ՝ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ  
ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ  
Ի ՊԱՏԻՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ  
ՅԱՐԳԱՆՔԻ ԵՐԵԿՈՅԻՆ

Հոգեկան քաղցր զգացումներով ուզեցի այսօր հոս ըլլալ՝ իմ կրտսեր եղբօր պարտականութիւնս կատարելու համար շատ սիրելի բարեկամի մը եւ գործակիցի մը:

25 տարիներ Պրն. Գրիգոր Հոթոյեանին հետ քաղցր, լեղի, դժուար, ուրախալի, հարազատ ընտանեկան բոլոր պահերը միասին ապրած ենք, եւ այսօր կանգնիլ իր վաստակին դիմաց եւ սրտի խօսք ըսել այդ վաստակին նկատմամբ՝ ինծի համար իսկապէս հոգեկան անհուն ուրախութիւն է:

Շատ մը գեղեցիկ, գեղուն հոգիներէն բխող խօսքեր ըսուեցան Պրն. Հոթոյեանին մասին: Եթէ ես կը ճանչնամ Պրն. Գրիգոր Հոթոյեանը, անոնցմէ ոմանց ըսուած ատեն ինքզինք անհանգիստ զգաց, որովհետեւ կ'ուզեմ երկու աւետարանական մէջբերումներով արտայայտել իմ գիտցած Գրիգոր Հոթոյեանը:

Օր մը, Յիսուսի աշակերտներուն մէջ վէճ ծագեցաւ եւ ըսին, որ, — մանաւանդ երբ լսեցին որ Յիսուս պիտի խաչուի ու պիտի անհետանայ, — իր մեռնելէն վերջ ո՞վ պիտի ըլլայ մեր մէջ մեծը: Յիսուս ըսաւ. « Դուք զիս վարդապետ կը կոչէք, բայց ահաւասիկ ես ձեր մէջ որպէս ծառայ մըն եմ: Ան որ կ'ուզէ մեծ ըլլալ, թող ծառայէ»: Գրիգոր Հոթոյեանի կեանքին մէջ մէկ բան յարատեւօրէն անխռնջ կերպով ներկայութիւն եղած է՝ ծառայութիւնը:

Իր ծառայութիւնը կը սկսի հագիւ իր պատանեկութիւնը վերջացուցած, եւ 60—70 տարիներ վերջ տակաւին ան նո՛յն եռանդով, նո՛յն նուիրումով, նո՛յն սիրով կը շարունակէ ծառայել: Իր կեանքին մէջ բարոյական մարդու նկարագիրը ոսկէ շղթայ մըն է, որ իր կեանքի բոլոր հանգրուաններուն կը քալէ իր հետ եւ կը շարունակէ ըլլալ իր հետ: Գր. Հոթոյեանը յատկանշող ամէնէն գեղեցիկ գիծերէն մէկն է՝ ըլլալ բարոյական մարդ, հաւատքի մարդ, կրօնքի մարդ, եւ ինծի համար զարմանալի չէ, որ իր գրական գործունէութեան մէջ իսկ կարեւոր տեղ կը գրաւէ բարոյական մարդը, որ իր պատմուածքներով, իր բանաստեղծութիւններով, իր յօդուածներով կը ջանայ բարոյական մարդու սկզբունքները ջամբել զինք ունկնդրողներուն եւ մանաւանդ զինք կարդացողներուն, ու մանաւանդ կը ջանայ այդ սկզբունքներուն իրագեկ դարձնել նոր սերունդը: Իր գրական աշխատանքին, ճիգին մղում տուող ամէնէն կարեւոր ազդակներէն մէկը այն է, որ ինքը իր ազգին, իր եկեղեցիին, իր պատմութեան, իր մշակոյթին, այն ինչ որ տարիներու ընթացքին իր ընթերցումներով, իր փորձառութիւններով, իր հանգիստներով կրցած է հաւաքել, զանոնք կրցած է փոխանցել յաջորդ սերունդին: Ասիկա երկրորդ յատկանշական գիծերէն մէկն է Գրիգոր Հոթոյեանին:

Բնականաբար խօսուեցաւ իր բանաստեղծութիւններուն, իր գրութիւններուն, պատմուածքներուն եւ յատկապէս իր «Ճանապարհ» գիրքին մասին: Հոթոյեանը իր կեանքին 30 տարին անցուց թորոնթոյի մէջ եւ զանազան առիթներով մենք խնդրեցինք՝ ինք ուզեց, որ արձանագրէ մեր թորոնթոսայ կեանքին զանազան հանգրուանները: Ինքը առաջինը չէր, որ նման գործ մը ըրած է: Իրմէ առաջ

չատեր ըրած են: Իրմէ առաջ այն մարդիկը որ ըրած են, այսօր կը կոչ-  
ուին ժամանակագիրներ: Այսօր, 800 տարի վերջ, 1000 տարի վերջ,  
900 տարի վերջ կամ նոյնիսկ անցեալ 18-րդ դարու, 19-րդ դարու ժա-  
մանակագիրները, ժամանակի հեռաւորութենէն իրենց կատարած  
գործին մեծութիւնը աւելի արժէք կը ստանայ, աւելի իմաստ կը ստա-  
նայ: Հաւանաբար մեզմէ շատեր այսօր «Ճանապարհ» գիրքին կարե-  
ւորութիւնը, հակառակ որ Յասմիկը շատ լաւ ձեւով բացատրեց, գե-  
ղեցիկ ձեւով արժեւորեց, բայց իրականութեան մէջ տակաւին անոր  
արժէքը մենք չենք հասկնար, չենք կրնար ապրիլ այդ արժէքը, որով-  
հետեւ յաճախ մենք այդ ճանապարհին ճանապարհորդներն ենք,  
միասին քալած ենք, միասին ապրած ենք այդ օրերը, բայց պիտի դան  
մեզմէ վերջ մարդիկ, որոնք այդ ճանապարհէն քալած պիտի չըլլան,  
եւ իրենց ճանապարհը պիտի ըլլայ այդ գիրքը՝ ճանչնալու հոս ապրը-  
ւած կեանքը, այս գաղութին մարտնչումները, այս գաղութին արիւն-  
քտինք մտնելը, հոգեկան խռովքները, որով կարողացան այս կեդրո-  
նը շինել, այս եկեղեցին շինել, այս սրահները շինել, այս վարժարան-  
ները շինել, հայ դպրոց շինել, հայ դպրոցին մէջ մանուկ դաստիարա-  
կել, սերունդ դաստիարակել եւ այդ բոլորին համեստ, լուռ արձանա-  
գիրը հանդիսացաւ Գրիգոր Հոթոյեանը:

Միայն վերջին 20 տարիներուն է, որ այս չորս գիրքերը հրատա-  
րակեց, այն ալ կարծեմ քիչ մը հայ եկեղեցակաւններու քաջալերան-  
քով, — պարզապէս ես քիչ մը կողմնակալ եմ, բայց իրաւունքս է, — եւ  
կը տեսնէք, որ վերջին 20 տարիներուն մէջ, Գրիգորը իր սրտի գե-  
ղումները որ թուղթին տուած էր, ի վերջոյ տուաւ պատմութեան:

Սիրելի՛ Գրիգոր, այսօր իսկապէս ինծի համար յատուկ ուրախու-  
թիւն է, հպարտ եմ, որ քու փոքր եղբայրդ եղած եմ, գործակիցդ եղած  
եմ: Հպարտ եմ, որ քու ճանապարհէդ քիչ մըն ալ մենք քալեցինք քե-  
զի հետ, քու խորհուրդներովդ յաճախ, եւ ուրախ եմ, որ այսօր պէտք  
էր որ ասիկա ըլլար, Թորոնթոյի մէջ պէտք է ըլլար, որովհետեւ, ինչ-  
պէս ըսի, քու ճանապարհիդ՝ կեանքիդ ճանապարհին վերջին 30 տա-  
րիները դուն սիրով, խոնարհութեամբ եւ նուիրումով այս գաղութին  
ընծայեցիր:

Վարձքդ կատար, Աստուած քեզի երկա՛ր երջանիկ կեանք պար-  
գեւէ, տակաւին շարունակես քու ճանապարհդ եւ այդ ճանապարհին  
վրայ տակաւին շարունակես քու գեղումներդ Աստուծոյ օրհնութեամբ  
եւ սիրելի Շաքէին քաջալերանքով: Ապրի՛ս, Շաքէ՛, նաեւ դուն:

Ի վերջոյ, մարդիկ ըսին, որ Գրիգորին հետ ապրիլ շատ դիւրին չէ,  
բայց քեզի պէս ազնիւ մէկը ոեւէ մէկուն հետ կրնայ ապրիլ:

## ՉԱՐՄԱՆԱԼԻ ՄԱՐԴԸ

«Ո՛վ զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ,  
Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ:  
Կամէր մկրտիլ ի ծառայէն իւրմէ,  
Զառնոյր Կարապետն ըզմկրտելն ի յանձն:  
Յորդանան լըւեալ փախստական դառնայր,  
Վըտակ առ վըտակ պատգամաւոր լինէր»:

*Խօսք եւ երգ՝ Գրիգոր Գ. Կաթողիկոս Պաշլաւունի (ԺԱ. դար)  
Դաշնաւորում՝ Կոմիտաս Վրդ. Սողոմոնեան*

\* \* \*

«Ո՛վ զարմանալի...»

Այս տաղը կը սիրէ, որովհետեւ կեանքին խորհուրդը հո՛ն կը տեսնէ, 5 Օգոստոս 1927-ին կեանքին բացուած արմատներով սասունցի այս մարդը:

«Ո՛վ զարմանալի...»

Այս տաղով կը մարմնաւորուի բանաստեղծութիւններով, յօդուածներով, պատմուածքներով եւ թղթակցութիւններով Սփիւռքի եւ Հայաստանի բազմաթիւ օրաթերթերու, շաբաթաթերթերու, ամսագիրներու եւ պարբերաթերթերու աշխատակցած եւ Գրիգոր Վարդգէս գրական ծածկանունով ծանօթ այս մարդը:



«Ո՛վ զարմանալի...»

Այս տաղով կ'արժեւորուի իր ազգային, գրական եւ եկեղեցական գործունէութիւններուն համար պետական եւ ազգային զանազան հաստատութիւններէ բազմաթիւ զնահատագիրներու արժանացած այս մարդը:

«Ո՛վ զարմանալի...»

Այս տաղի ներշնչումով կ'երկնէ, 1984-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետի «Գիր Օրհնութեան եւ Գնահատաց»ին արժանացած, իսկ 1 Հոկտեմբեր 2005-ին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Հայրապետի կողմէ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանին արժանացած այս մարդը:



«Ո՛վ զարմանալի...»

Այս տաղի ըմբռնչումամբ կ'ապրի, 14 Յուլիս 2004-ին, իր գրական գործունէութեան 60-ամեակին առթիւ Հայաստանի Գրողներու Միութեան, Մեծ Եղեռնի, Հայոց Ազատամարտի եւ Միջազգային Ռազմածովագիրներու Միութեան Հայաստանի կազմին կողմէ «Ուխտատուն» թանգարան-հիմնարկի շնորհագիրին եւ Միջազգային Ռազմածովագիրներու Ընկերակցութեան անդամակցութեան պատիւին արժանացած այս մարդը:

«Ո՛վ զարմանալի...»

Այս տաղի անմիջական յուզականութեամբ կ'ապրի, ծննդեան 80-ամեակին եւ «Ճանապարհ» գրքի հրատարակութեան առթիւ, 23 Օգոստոս 2007-ին, Հայաստանի Գրողներու Միութեան նախագահութեան ոսկեայ մետալով եւ թիւ 44 փաստատետրով եւ ապա «Զօրավար Անդրանիկ» Հայոց Համազգային Միութեան ոսկեայ մետալով ու միութեան ընտրեալ անդամի վաւերատետրով գնահատուած այս մարդը:

\*  
\* \*

Խորհրդաւոր այս կեանքին մէջ՝ աստուածային հաւատքով, նըւիրուածութեամբ, ծառայասիրութեամբ ի՛նչ մեծութիւններ աշխարհ կու գան:

«Ո՛վ զարմանալի...»

Այս աշխարհի վրայ երբեմն մարդիկ որովայնէ կ'ընտրուին, ու մանք մեծ կը ծնին, ուրիշներ մեծութիւնը կ'ապրին, իսկ շատեր մեծութիւնը երկունքի վերածելով՝ գեղեցկութիւն, բարիք, շնորհք ու սէր կը բերեն մարդկութեան: Այս վերջիններէն է կոկիկ, կարճահասակ, կեանքի իր պարտքը վճարած եւ այժմ հանգստեան իր երգիքին տակ ստեղծագործող Գրիգոր Հոթոյեանը:

Համեստ բնաւորութեամբ այս մարդը զարմանալիօրէն վտակ առ վտակ ինքզինք կերտեց որպէս գրող, հրապարակագիր, թղթակից, արձակագիր, բանաստեղծ, յուշագրող եւ բարոյական արժէքներու հետամուտ անձ:

Այսօր, այստեղ մեր գտնուելուն պատճառը Հոթոյեանի ՃԱ-ՃԱՆՁՆԵՐ գրքի շնորհահանդէսն է: Շուրջ 400 եւ աւելի էջերու մէջ ներկայացուած բանաստեղծութիւններ, գրախօսականներ եւ վկայութիւններ մեր առջեւէն կը տողանցեն Հոթոյեան մարդուն ընդմէջէն: Զանազան առիթներով, բազմաթիւ մարդոց, որոնց շարքին հայրենիքին եւ հերոսներուն նուիրուած բանաստեղծութիւններով, Հոթոյեան գրողը իր յոյգերն ու զգացումները, տիրութեան թէ ուրախութեան, յաղթանակի թէ պարտութեան մտորումները պարզ բառերով կը հրամցնէ ընթերցողին որպէս առօրեայ մտահոգութիւն, յաւիտե-

*նական պարծանք, երախտագիտութիւն, փառք, պատիւ, սէր եւ երջանկութիւն:*

*Ահա՛ սէրը Հոթոյեանին.—*

## Քեզ ՀՐԵՇՏԱԿ ԿԱՐԾԵՑԻ

*Երածչ.՝ Անահիտ Կուտսուզեան*

Քեզ հրեշտակ կարծեցի  
Եւ սիրեցի խոր սիրով,  
Շատ գիշերներ լուսցուցի  
Քեզ տեսնելու կարօտով:

Սիրելով քեզ իմ աղուոր՝  
Կեանքս դարձաւ ծաղկաբոյր,  
Երազներով մեղրածոր  
Սէրս ցայտեց գերբ աղբիւր:

Սիրոյդ հեւքին անճնատուր՝  
Գինովցայ ես խենթ սիրով,  
Տենչանքներով սիրաբոյր՝  
Օրերս անցան ըզճանքով:

Սակայն, աւա՛ղ, խաբուեցայ՝  
Հաւատալով քու սիրոյն,  
Արցունքներուդ բիւրեղեայ,  
Տարփոտ սիրտիդ զարկերուն:

Աններելի գնացով  
Դուն հեռացար անվրդով,  
Մոռցած խոստում ու գորով  
Եւ ապրումներ հոգեթով:

Տարիները լուռ անցան,  
Չանիծեցի քեզ երբեք,  
Յիշատակներ դալկացան,  
Սէրս մնաց յուսաբեկ:

**\*\***

*Առիթները միջոցներ են իրեն համար եւ այդ միջոցները գրիչով  
կենսաւորելու, հոգեղինացնելու գեղեցիկ պատրուակներ են:*

Տարեգարձ, ծնունդ, կորուստ, թուականի մը կամ միութեան յաւերժացումը խորհրդանշող միջոցառում, այս բոլորը իր գրիչին մտերիմ բարեկամներն են, եւ այեհեր այս գրողը, խօսելու պէս հաղորդական եւ դիւրին իր ոճով, կեանք կու տայ իր մէջ թաքնուած տաղանդին:

Հալէպի մէջ ծնած, սասունցիական հպարտութեամբ իր ծերութեան օրերը վայելող Գրիգոր Հոթոյեանը, որպէս գրաշար, խմբագիր, կիրականօրեայ վարժարաններու ուսուցիչ, տնօրէն, բազմաթիւ օրաթերթերու, շաբաթաթերթերու, ամսագիրներու եւ պարբերաթերթերու աշխատակից, եւ իր ազգային, գրական ու եկեղեցական գործունէութիւններուն համար բազմիցս գնահատուած, հայ իրականութիւնը կ'ապրի իր երգերով ու վէրքերով, ցաւերով եւ սխրագործութիւններով: Անոր համար ալ իր շուրջ պատած ՃԱՃԱՆՁՆԵՐՈՎ հաղորդակից կը դառնայ ե՛լ ազգային գաղափարախօսութիւններով զեղուն մարդոց, ե՛լ քրիստոնէական հոգիով պայծառացած հոգիներուն, ե՛լ բոլոր անոնց, որոնք իրեն կ'երթան քիչ մը աւելի գեղեցկացած տեսնելու համար Հայաստանն ու Ղարաբաղը, Խրիմեան Հայրիկն ու Սայաթ Նովան, Սուրբ Խաչի ճամբան եւ ազատութեան ճայնը, կարօտը, քնքշութիւնը, սիրելիներու յիշատակը, եւ զարմանալիօրէն ուռճացած սէրը:

Ահա՛ իր խաչի ճամբան.—

## ՍՈՒՐԲ ԽԱԶԻ ՃԱՄԲՈՎ

Կեանքի լոյս, Յիսուս, լուսեղէն խորան,  
Աստուծոյ որդի, փրկիչ մարդկութեան,  
Մահապարտներու խաչովը դաժան  
Մահը գրկեցիր կամֆով անասան:

Քու խաչելութեամբ խաչը փայտեղէն  
Պաշտելի դարձաւ Աստուծոյ կամֆով,  
Մարդիկ մարդացան խաչիդ հմայով,  
Լուսաւորուելով ջահով հոգեղէն:

Քու խաչելութեամբ խաչը օրհնաբեր  
Փառքի հիւսելու նշխար մը դարձաւ,  
Ծնար, ապրեցար եւ կեանքի եղաւ  
Մարդկութեան մեղքի փառութեան նուէր:

Քու խաչելութեամբ, Յիսուս մարդասէր,  
Սրբացած խաչը դարձաւ կենարար,

Խաչիդ պարծանքը դարձաւ յուշարար  
Քու աստուածային խօսքերուդ անմեռ:

Քու խաչելութեամբ, լուսատու Յիսուս,  
Մարդկութեան կեանքը լուսաւորուեցաւ,  
Հաւատնով խաչը սիրով օծուեցաւ,  
Սրտերը պատեց նառագայթող լոյս:

Փրկարար Յիսուս, սիրոյ բուրաստան,  
Քու խաչելութեան տառապանքներով  
Եւ խաչին վրայ թափած արիւնով  
Սուրբ խաչը դարձաւ հաւատքի խորան:

Խաչի խորհուրդով եւ հաւատամքով  
Մարդկային սիրտը սիրով ծովացաւ,  
Սիրտէ-սիրտ կապը լոյսով զօրացաւ  
Խաչէդ արձակուող նառագայթներով:

Ազնիւ հայ ազգը դարերով անձայն,  
Իր խաչը շակած իր սուրբ հաւատքով,  
Յիսուսի խաչին կառչած մնալով՝  
Կը քալէ անվերջ Յիսուսի նման:

\* \* \*

«Ի՞նչ զարմանալի...», որ բախտին հետ ճակատագրակից, կեանքի ապրուստին հետամուտ, եւ առօրեայ հոգերով ծանրաբեռնուած այս գրողը միայն իր կեանքի վերջալոյսին կրցաւ առաւել եւս ստեղծագործել, զգալ, որ ստեղծագործական աշխարհին մէջ գրիչի հանդէպ իր սէրը գերազանց սէրն է, անկորնչելի սէրը, մնայուն եւ յաւիտենական սէրը:

Իր կեանքի բոլոր օրերուն՝ Գրիգոր Հոթոյեանը մնաց պարզ, համեստ, ծառայասէր հայ գրի եւ գրչութեան հանդէպ, երկրպագու դառնալու աստիճան խոնարհ սպասաւոր:

Ճշմարիտ է, որ այսօր իր ՃԱՃԱՆՁՆԵՐ հատորի ներկայացման առիթով թերեւս պէտք էր անդրադառնալինք անոր պարունակութեան, թէ գիրքը քանի՞ էջ է, կողքը ի՞նչ գոյն է, քանի՞ բանաստեղծութիւն գրուած է, անոնցմէ քանի՞ն երաժշտութեամբ զգեստաւորուած են, բայց այդ բոլորը գիտնալն ու անոնց ծանօթանալը կը վերապահենք ընթերցողին, որովհետեւ այդ բոլորը տաքուկ եւ ջերմ սրտի մը բղիտման են: Եթէ սիրտը չճանչնանք, այդ սրտին տրոփիւնը չզգանք մեր ձեռքերուն մէջ, պիտի չկարենանք հասկնալ, թէ ի՞նչ

կ'ուզէ այս մարդը, ինչո՞ւ Հայրենիքը կը սիրէ, նահատակները կը մեծարէ եւ քրիստոնէական բարոյախօսութեան հետամուտ ուղղութիւն մը ունի:

Ահա՛ Հայրենասէրը.—

## ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Դարե՛ր-դարե՛ր լոյս ու խաւար՝ հայ բերթողներ երգեցին  
Քու ցաւերդ ու փառքերդ, ազատութեան սէրդ հին,  
Հերոսներուդ անանճնական նուիրումը բացառիկ,  
Որոնք ինկան անմխիթար՝ հողիդ համար, հայրենի՛ք.  
Ես ալ ահա անոնց նամբուն հետեւող մը անվարան,  
Կը նուիրեմ՝ քնարս քեզի, հերոսակա՛ն Հայաստան:

Կը նուիրեմ՝ քնարս քեզի, հերոսակա՛ն Հայաստան,  
Կ'ապրիմ՝ քեզմով, քու անցեալով ու ներկայով ամէն ժամ,  
Քեզ կը պաշտեմ՝ ամբողջ հոգւով ու հաւատով խորարմատ,  
Պատրաստ՝ տալու կեանքս պարման, քեզ պահելու անարատ.  
Դո՛ւն մեր փառքը կոթողական, անմեռ յոյսը ապագայ,  
Նուիրական մայր սիրասուն՝ իմ Հայաստան հնամեայ:

Նուիրական մայր սիրասուն՝ իմ Հայաստան հնամեայ,  
Կը հաւատամ՝ օր մը պայծառ պիտի կրկին բարձրանայ  
Դրօշն հայոց աստանդական Արարատի գագաթին,  
Զքնաղագեղ Տարօն ու Վան պիտի դառնան քու գրկին,  
Եւ աշխարհացրիւ որդիներդ նոր աւիշով պիտի գան  
Ակօսելու դաշտերդ խոպան, աւերակուած Հայաստան:

Ակօսելու դաշտերդ խոպան, աւերակուած Հայաստան,  
Քանի հիմա հոն կը բուսնին տատասկ ու փուշ ընդունայն,  
Հայ քրտինքը չորցած է հոն, անապատ է ամէն կողմ,  
Վայրագ ու խօլ մարդ-գագաններ ժանիքներով մթաւօղ  
Քանդած-փշրած են խնկելի վանքերը մեր սրբազան,  
Իմ Հայաստան լուսանանանչ, մշակոյթի օթեւան:

Իմ Հայաստան լուսանանանչ, մշակոյթի օթեւան,  
Քեզմէ ծնած անգուգական հանճարները մարդկութեան,  
Նարեկացին՝ աղօթասաց՝ բերթողութեան հսկայ բերդ,  
Շիրակացին՝ մեծ գիտնական եւ Մեսրոպը՝ ազգակերտ,  
Վարուժանը՝ հրաշածին եւ Զարեցը՝ բոցաշունչ,  
Յարգա՛նք հողիդ ազնուական, իմ Հայաստան քաղցրահունչ:

Յարգա՛նք հողիդ ազնուական, իմ Հայաստան ֆաղցրահունչ,  
Ձիւնասպիտակ գագաթներով վէս լեռներուդ անմոռունչ,  
Կարկաչահոս աղբիւրներուդ վնիտ ջուրին սառնորակ,  
Արագավազ խոր գետերուդ հզօր երթին անպարփակ,  
Անտառներուդ հմայագեղ եւ դաշտերուդ անսահման,  
Կեանքս ու հոգիս մատաղ քեզի, դրախտային Հայաստան:

\* \* \*

*Ինչո՞ւ այս բոլորը:*

*Ինչո՞ւ ՃԱՃԱՆԱՉՆԵՐՈՒ այս գիրքը:*

*Այս բոլորին պատասխանը գտնելու համար եկած ենք այստեղ,  
քննելու, պեղելու եւ հասկնալու, թէ՛ ինչո՞ւ Հայաստանը Սասունին  
կապած, Սասունը Ֆետայիներով անմահացուցած, Ֆետայիները Հայ  
Յեղափոխական Դաշնակցութեան փառքին կամրջած, բայց միշտ  
պայծառ ու չքնաղ առաւօտեան մը կարօտով ապրած է այս մարդը:*

*Ահա՛ պատասխանը.—*

ԿՈՉ՝

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ

Ո՛վ հայրդիներ, կոչս լսեցէք,  
Հեռու մնացէք օտարի բոյրէն,  
Ձեր արմատներուն ամուր կառչեցէք,  
Որ չկորսուիք պատմութեան բեմէն:

Հայ տունը երբեք Մեսրոպ չի բուրբր  
Երբ օտար հարս գայ՝ սեմէն ներս մտնէ,  
Ծնունդ մանուկը «Կոռուկ»ը չ'երգեր,  
Երբ հասակ առնէ, գգայ եւ երգէ:

Թուրքին ուզածը ինչո՞ւ մենք ընենք՝  
Մեր գաւակները մղելով ջարդին  
Ճերմակ ու դեղին, եւ ամբողջացնենք  
Կարմիրի դերը՝ երազը թուրքին:

Ինչպէ՞ս կը ցանկաք ապրիլ որպէս հայ,  
Երբ ձեր շրթներուն վրայ դաւանան  
Հայոց սուրբ լեզուն լո՛ւտ կը մահանայ  
Եւ հայ բարբերը օթեկ կը դառնան:

Ինչպէ՞ս կ'ուզէիք տէր դառնալ կրկին  
Մեր հայրենական վեհ Արարատին,

Երբ սերունդները գալիք հայածին  
Պիտի աղարտէք յոյսով խառնածին:

Հայ տան, հայ ազգին ակունքը վնիտ  
Հայ մայրն է միայն՝ կաթով անապակ,  
Երբ չբերես հայ կինն ֆու տունիդ՝  
Պիտի ուծանաս, որդի անժառանգ...:

\*  
\*  
\*

Աչք պտըտցուցէք իր գրական գործերուն վրայ եւ առաւելաբար ՃԱՃԱՆՁՆԵՐՈՒՆ վրայ: Հոն պիտի տեսնէք թաքուն, բայց լուսաւոր սենեակ մը, որուն մէջ անմահներ կ'ապրին, Գէորգ Չաւուչէն սկսեալ մինչեւ Զօրավար Դրօ, Մեսրոպ Մաշտոցէն մինչեւ Միսաք Մեծարեանց:

Պեղեցէ՛ք իր միտքը, հոն պիտի գտնէք թաքուն սենեակ մը, որուն պայծառակերպութեանը մէջ պայծառացած են մեր ազգային գոյատեւման բազմաթիւ օրրաններ, Կիլիկեան Դպրեվանքէն սկսեալ մինչեւ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւն, Հ.Մ.Ը.Մ.էն մինչեւ Հ.Օ.Մ., մեր ժողովուրդի երէց սերունդէն մինչեւ նորածին մանուկը:

Պեղեցէ՛ք իր հոգին, գացէ՛ք մինչեւ խորերը իր ապրումներուն, հոն պիտի տեսնէք մեր լեզուին պաշտելիութիւնը, շուշանաբոյր գեղեցկութիւնը հայ իգականութեան, երազներու վերակենդանացումը բոլոր անոնց, որոնք Հայաստանէն դուրս Հայաստանին համար ապրեցան:

ՃԱՃԱՆՁՆԵՐՈՒ Հատորին մէջ մենք կ'ուզենք մա'րդը տեսնել՝ վաւերակա՛ն մարդը, կամքով հզօ՛ր մարդը, քրիստոնէական կրթութեամբ մեծցած եւ այդ կրթութիւնը ծառայութեան վերածած մարդը, ու տեսնելէ ետք, որպէս զինակից ընկեր, աշնանային բնութեան հետ, հոն՝ դաշտերու աղբիւրներու մօտ, անձրեւին տակ ցօղուըռելի կ'ուզենք:

Գարնանային բացուած ծաղիկներուն բուրմունքը կ'առնենք ՃԱՃԱՆՁՆԵՐՈՒՆ մէջէն:

Ձմրան տոկուն արմատներով ուռճացած ծառերուն յաւերժական տողանցքը կը տեսնենք ՃԱՃԱՆՁՆԵՐՈՒՆ մէջ:

Անկեղծ սիրոյ խորհուրդը կը տեսնենք ՃԱՃԱՆՁՆԵՐՈՒՆ մէջ:

Սիրող մը չունեցող, խոր թախծութեան մէջ ինկող եւ մենութեան մէջ գողտրիկ երազով ապրող մարդուն գարմանալի կամքը կը տեսնենք ՃԱՃԱՆՁՆԵՐՈՒՆ մէջ:

Ճշմարիտ, բայց գաղտնի սիրոյ մը սրտակէզ ցաւին որոնումը կը գգանք ՃԱՃԱՆՁՆԵՐՈՒՆ մէջ:

Կեանքի յուսալքման վերջալոյսին անուշ հովով մը երջանկութեան փարոսմը կը գգանք ՃԱՃԱՆՁՆԵՐՈՒՆ մէջ:

*Տեսիլքի, հաւատքի, խոստովանանքի եւ խորհրդաւոր աչքերու  
վայլատակումը կ'ապրինք ՃԱՃԱՆՁՆԵՐՈՎ:*

### ՅԻՇԱՏԱԿԴ ՍԻՐԵԼԻՍ

*Երաժշտ.՝ Սարգիս Համպոյեան*

Յիշատակդ, սիրելիս,  
Պահած եմ ես սիրտիս մէջ,  
Ինչպէ՞ս մոռնամ քեզ հոգիս,  
Քեզ կը փնտոնեմ ես անվերջ:

Յիշատակդ, իմ անգին,  
Մնացած է անթառամ,  
Հին ապրումներ սրտագին  
Քեզ յիշելով կ'արթնան:

Եկո՛ւր, եկո՛ւր, սիրելիս,  
Գիշերները քուն չունիմ,  
Եկուր յոյս տուր երազիս,  
Առանց քեզի կեանք չունիմ:

Երբ կը յիշեմ անցեալի  
Մեր օրերը քաղցրահամ,  
Քաղցր յոյզեր ընձալի  
Սիրոյ աղբիւր կը դառնան:

Ես քեզ երբեք չեմ մոռցած,  
Քեզ կը յիշեմ կարօտով,  
Սիրոյս բոցը սիրարբած՝  
Միշտ կը վառի հոգեթով:

Եկո՛ւր, եկո՛ւր, սիրելիս,  
Գիշերները քուն չունիմ,  
Եկուր յոյս տուր երազիս,  
Առանց քեզի կեանք չունիմ:

\*  
\*  
\*

*Տակաւին բազմաթիւ ճամբաներով, բազմաթիւ ուղղութիւններով  
եւ բազմաթիւ վերլուծումներով երախտագէտ եւ հարազատի զգա-  
ցումներով բաբախող բազկերակի մը զգուանքն ու ուրախութիւնը կը  
տեսնենք ՃԱՃԱՆՁՆԵՐՈՒՆ մէջ:*



Պարոն Հոթոյեան, իր 80 եւ աւելի տարիներու բեռնաւորուածութեամբ, ՃԱՃԱՆՁՆԵՐՈՎ իր լոյսն ու շողերը կը սփռէ բոլոր անոնց վրայ, որոնք կը սիրեն կեանքը:

ՃԱՃԱՆՁՆԵՐՈՒՆ մէջ Հոթոյեան գրողին սիրտը կայ: Սիրտ մը՝ ո՛չ թէ մարմնին մէջ, սիրտ մը՝ մարմնէն դուրս՝ ասիերուն մէջ, ընթերցողին մատակարարուելու:

ՃԱՃԱՆՁՆԵՐՈՒՆ մէջ նուիրում մը կայ, նուիրում հոս՝ այս աշխարհի վրայ, բոլոր անոնց, որոնք փափաք ունին ապրելու մա՛րդօրէն, մարդո՛ւ պէս եւ մարդավայե՛լ հերոսութեամբ:

ՃԱՃԱՆՁՆԵՐՈՒՆ մէջ բարոյական ճշմարտութեանց մոլորակ մը կայ, կանչով մը, զարմանալիօրէն մեղմ ձայնով, բայց խորհրդաւոր եւ դաստիարակիչ մղում ունեցող ձայնով:

ՃԱՃԱՆՁՆԵՐՈՒՆ մէջ ճանապարհ մը կայ դէպի բարին առաջնորդող, դէպի գեղեցիկը տանող եւ դէպի վսեմը հասցնող ճանապարհ մը: Ահա՛ ՃԱՃԱՆՁՆԵՐԸ:

\*  
\*  
\*

«Ո՛վ զարմանալի...»

Չարմանալի է Հոթոյեանը, ոչ թէ որովհետեւ մեծ խորհուրդ մըն է, այլ՝ որովհետեւ իր շրջապատը մեծ խորհուրդին տանող՝ Աստուծոյ տանող գեղեցիկ ճանապարհն է:

Չարմանալի է Հոթոյեանը, որովհետեւ ճիշդ է թափեր գրող, բանաստեղծ ըլլալու համար, ոչ ալ որպէսզի մարդիկ իրեն համար ըսեն թէ գրող է, այլ՝ կարծէք իր գրական ստեղծագործութիւնները իրեն համար են, ինք ուրախ է իր գրածներով, ինք ուրախ է մէկուն յաջողութեամբ, ուրիշի մը ծնունդով, մէկուն մարմնաւոր մահով, ուրիշին բժշկութեամբ, եւ ուրախութիւնը փոխանակ փոխնջ մը ծաղիկով արտայայտելու, դրամագլուխի վերածած է իր փոքրիկ ծաւալով թուղթերը, գրիչը եւ խճողուած սենեակին մէջ տեղադրուած փոքր գրասենդանը:

Հո՛ն են, այդ խճողուած սենեակին մէջ իր ընկերները, ամէնօրեայ իր մտերմութեան մէջ, որոնցմով կը սնուի տեւաբար:

Արդարեւ, ի՞նչ կարելի է սպասել մէկէ մը, որուն ընկերներն են Սիամանթօն, Վարուժանը, Շիրազը, Թումանեանը, Ծառուկեանը, Թէօլէօլեանը...:

«Ըսէ ինձի ո՞վ է ընկերդ, ըսեմ քեզի ո՞վ ես դուն»:

Բացատրութեան կը կարօտի՞ այս նախադասութիւնը: Կրնա՞նք վերլուծել այս խօսքը:

Այո՛: Բացատրութեան մը պահանջքը կայ այստեղ:

Վերլուծումի կարօտ նախադասութիւն մըն է այս ճշմարտութիւնը:

Բայց բացատրութիւնն ու վերլուծումը յստակացնելու, հասկնալու եւ ըմբռնելու համար պէտք է կարգալ ՃԱՃԱՆՁՆԵՐԸ, անոր մէջ կը գտնուին Հոթոյեանին ընկերակցութեան բարի պտուղները:

Հո՛ս է Հոթոյեանին գարմանալիութիւնը:

ՃԱՃԱՆՁՆԵՐ գիրքը իր երկար տարիներու բանաստեղծական վաստակին արգասիքն է: Հոն մի՛ փնտռէք գեղարուեստական պատկերացումներով եւ երեւակայական նիրուանայելիութեամբ պատկերացուած մտածումներ, այլ՝ պարզ, կեանքով սնուած եւ կեանքէն լիցքաւորուած գեղեցիկ թելադրութիւններ, դաստիարակիչ խորհուրդներ, ե՛ւ հայութեան, ե՛ւ հայ ժողովուրդին պատիւ բերելու, ուրախութիւն բերելու, յաղթանակ բերելու, յաջողութիւն բերելու պատգամներ:

Ահա՛ ՃԱՃԱՆՁՆԵՐԸ իր բովանդակ իմաստով եւ պարունակութեամբ:

Կարդացէ՛ք զայն ու պիտի զգաք ջերմութիւնը մեր գրականութեան, տաքուկ յարաբերութիւնը մեր լեզուին եւ բոլր կրակը մեր մշակոյթին:

ՃԱՃԱՆՁՆԵՐԸ ճշմարտութիւններ են, կեդրոնական ճշմարտութենէ մը արտացոլացող, եւ այդ ճշմարտութիւնը Գրիգոր Հոթոյեան ի՛նք է, իր սրտէն բղխող, իր մտքէն ժայթքող եւ իր հոգիէն արտացոլացող ճշմարտութիւններ:

Բարի եւ երջանիկ ծերութիւն մաղթելու գոհունակութեամբ եւ աղօթքով, բեղմնաւոր ծերութիւն կը մաղթենք Գրիգոր Հոթոյեանին ու բանաստեղծին բառերով կ՛ըսենք.

«Աստղերու պէս, ալիքներու պէս ցանկ՛:

Ծիտերն ի՞նչ փոյթ թէ հատիկներդ կ՛աւարեն,

Տեղը Աստուած պիտի մարգրիտ սերմանէ»:

ԳԵՐՊ. Տ. ՄԵՂՐԻԿ Ծ. ՎՐԴ. ԲԱՐԻՔԵԱՆ

Բարեկեդան Յիսնակի Պահոց

21 Նոյեմբեր 2010

Թորոնթօ — Գանատա



**ՀՆՈՐՀԱՀԱՆԴԵՍ  
ԵՒ ԳԻՆԵՉՕՆ**

**ԱՆՅԵԱԼԻ  
ՅՈՒՇԵՐՈՎ  
Կ'ԱՊՐԻՆՔ ՀԱՏՈՊ**

*Հեղինակ*

*Հրապարակագիր, Արձակագիր, Բանաստեղծ, Թղթակից եւ Գրող*

**ԳԻԻԳՈՐ ՀՈՐՈՅԵԱՆ**

*Ընդ Բարձր Հովանաւորութեամբ*

**ԳԵՐՇ. Տ. ԽԱԺԱԿ ՍՐԲ. ԱՐՔ. ՅԱԿՈԲԵԱՆԻ**

*Բարեջան Առաջնորդ Գանաստայի Հայոց Թեմին*

*Կազմակերպութեամբ*

*Ս. Աստուածածին Եկեղեցւոյ*

**ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱՎՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱՍՈՒՄԲԻՆ**

**Բանախօս՝ ՏԻԱՐ ՅԱԿՈԲ ԱՐԹՈՒԿԵԱՆ**

**ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ**

*Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 10 Յունիս, 2011, երեկոյեան ժամը 8:30-ին,*

*Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ*

**Աւարտին՝ Հիւրասիրութիւն**

**Ծանօթ.**

*Հատորի պատուոյ գինը ամբողջութեամբ պիտի տրամադրուի Եկեղեցւոյս Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին*

# ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ ԵՒ ԳԻՆԵՁՕՆ «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ» ՀԱՏՈՐԻ

Կազմակերպութեամբ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին, Ուրբաթ, 10 Յունիս 2011, Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ ներքնասրահը հաւաքուած էր գրասէր, մշակութասէր հասարակութիւն մը՝ ներկայ ըլլալու հեղինակ, հրատարակագիր, բանաստեղծ, թղթակից եւ գրող Գրիգոր Հոթոյեանի «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» հատորի շնորհահանդէս-գինեձօնին, զոր կը հովանաւորէր Բարձր. Տ. Խաժակ Արք. Յակոբեանը՝ Բարեջան Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի: Գեղարուեստական յայտագրի կողքին հրաւիրուած էր ծանօթ մտաւորական Տիար Յակոբ Ալթունեան:

Երկու հանդիսավարներ, յանձին Արմիկ Սաֆարեանի եւ Սիւզի Գալթակեանի, փոխն ի փոխ վարեցին յայտագիրը:

Բացման խօսքով Տիկ. Արմիկ Սաֆարեան հակիրճ կերպով ներկայացուց հեղինակը, որ իր սասունցիական ոգիով, հակառակ իր ալեւոր տարիքին, երկունքէն ծնած «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» հատորով կու գայ գրասէր հասարակութեան հրամցնելու սիրող սրտի մը խոնարհ, ազնիւ, գնահատող, սահուն ոճով եւ երախտապարտութեան մեծ հոգիով դաշնակցականի տիպարը: Իրաւամբ, ընդհանրապէս իր գրական գործերուն մէջ կայ սիրտ մը, որ կը տրոփէ հայկականութեամբ եւ կրօնասիրութեամբ, պատրաստ՝ մատակարարելու ընթերցողի ճաշակին, կարդացողին վայելքի պահեր ըմբռնելով:

Տիկ. Սաֆարեան ներկաներու ուշադրութեան յանձնեց, թէ գիրքերէն իբր պատուոյ գին եղած նուէրները ամբողջութեամբ պիտի տրամադրուին եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբի ծրագիրներուն: Յուշերով լեցուն այս գիշերը վայելքի երեկոյ մը թող ըլլայ բոլորին:

Երգչուհի Այտա Աթիկեան մեներգեց «Սիրուն աղջիկը», խօսք՝ Գրիգոր Հոթոյեանի, երաժշտ.՝ Էդիկ Յովսէփեանի, գեղարուեստական գոհացում ընծայելով ներկաներուն:

Տիկ. Սիւզի Գալթակեան հաճոյքը ունեցաւ հեղինակը ներկայացնելու: Գրիգոր Հոթոյեանի մասին ամփոփ տուած տեղեկութիւններէն դէմ յանդիման կու գանք մարդու մը, որ 84 տարիներու բեռան տակ չէ կքած, մատները տակաւին զօրաւոր են գրիչ բռնելու ու միտքը արթուն՝ անցեալի յուշերով ապրելու, ստեղծագործելու եւ փոխանցելու գալիքներուն:

Երիտասարդ տարիքին աշխատակցած է Սփիւռքի եւ Հայաստանի բազմաթիւ օրաթերթերու, շաբաթաթերթերու, ամսագիրներու եւ

պարբերաթերթերով: Իր ազգային, գրական եւ եկեղեցական գործունէութիւններուն համար արժանացած է բազմաթիւ գնահատագիրներու պետական եւ ազգային հաստատութիւններէ: Շարքը երկար է. 1984-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետի «Գիր Օրհնութեան եւ Գնահատաց», 2004-ին՝ գրական գործունէութեան 60-ամեակին՝ Հայաստանի Գրողներու Միութեան «Շնորհագիր»-ին, 2005-ին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Հայրապետի Թորոնթօ այցելութեան ընթացքին «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանին, Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-հիմնարկի եւ Միջազգային Ռազմածովագիրներու Միութեան Հայաստանի կազմին կողմէ կազմակերպուած ցերեկոյթին արժանացած է «Ուխտատուն» թանգարան-հիմնարկի շնորհագիրին եւ Միջազգային Ռազմածովագիրներու Ընկերակցութեան անդամակցութեան:

Հեղինակը արտադրած է հետեւեալ գործերը.

1. «Սիրտը Ափին Մէջ», բանաստեղծութիւններ, 1987,
2. «Նուիրում», երգեր եւ բանաստեղծութիւններ, 2002,
3. «Ի խնդիր Բարոյական Ճշմարտութեան», բարոյալից պատմուածքներ, 2005,
4. «Ճանապարհ», բերքահաւաք, 2007,
5. «Ճաճանչներ», երգեր եւ բանաստեղծութիւններ, 2010,
6. «Անցեալի Յուշերով Կ'ապրինք», ազգային եւ հոգեւոր բարոյալից պատմուածքներ, 2011:

Շարունակելով՝ Տիկ. Գալթակեան կարգաց վկայութիւն մը գրուած Բաբգէն Սասունիի կողմէ, ուր ի միջի այլոց կ'ըսէ. «Շատ հետաքրքրական գտայ յուշագրական բնոյթ կրող պատումները, որոնցմէ ամէն մէկը նոր երանգ մը կ'աւելցնէ սփիւռք դարձած մեր բեկորներու պատմութեան գունազեղ պաստառին»:

Պատանի Արի Կարապետեան ապրումով ասմունքեց Հոթոյեանի «Հայաստանեայց Եկեղեցի»ն, արժանանալով ներկաներու երկար ծափահարութեանց: Ապա դարձեալ Տիկ. Գալթակեանը Կարպիս Արմէնի վկայութիւնը կարգաց, ուր վերջին տողին մէջ կ'ըսէ. «Շարունակէ գրել ու կեանքը վայելել, ազնիւ բարեկամս»:

Երգչուհի եւ երաժիշտ Անահիտ Կուտսուզեան երգեց «Երբ ձայնդ լսեցի», խօսք՝ Գրիգոր Հոթոյեանի, երաժշտ.՝ Անահիտ Կուտսուզեանի, արժանանալով ներկաներու ջերմ ընդունելութեան:

Տիկ. Սիւզի Գալթակեան ներկայացուց օրուայ գրախօսը, որ իր հասուն տարիքին արժանաւոր ներկայացուցիչ մըն է հայ գրականութեան անդաստանին մէջ: Ծնած է Լիբանան, 1923-ին, եւ ամուսնացած է Օրդ. Արփինէ Քիւրտեանի հետ, որոնք ազգին նուիրած են 3 մանչ եւ 1 աղջիկ: 1998-ին վերջնական կայք հաստատած է Թորոնթօ, ու իր դալար գրիչով, արթուն մտքով, յարատեւ պրպտումներով զանազան պատմական, գրական, ազգային յօդուածներ գրած է, տարբեր

առիթներով եւ տարբեր վայրերու մէջ գանոնք ներկայացնելով: Այսօր պատիւ եւ հաճոյք է ներկայացնել Պրն. Յակոբ Ալթունեանը:

Պրն. Ալթունեանը լաւ ուսումնասիրած էր «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» հատորը, ու համեմուած մէջբերումներով կեանքի բերաւ հեղինակին ինքնութիւնը, որ մօտաւորապէս 47 պատմուածքներով 290-է աւելի էջերու վրայ փոռուած են, կազմելով նկարագիրը, որոնք քառագագաթօրէն կը ցցուին դիմացդ, մէջտեղ բերելով այն մարդը, որուն հոգին ու սիրտը հայկականութիւն կը բուրդէ, որ պարզ՝ բայց տեսիլք ունեցող, զգալու եւ զգացուելու հոգի ունի:

Կը զգաս իր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ պատկանելիութիւնը գիրքի պատմուածքներուն մէջ, իր հայրենասիրութիւնը, սկսած ծննդավայր Հալէպէն մինչեւ խիտ շարքերը այն գաղափարական կուսակցութեան՝ Հ.Յ.Դ.ին, որուն աննահանջ զինուորը եղած է երկար տարիներ: Պրն. Ալթունեան գովեց հեղինակի փեսան ու աղջրկան եւ թոռներու հետ միասին նախաձեռնութիւնը հատորի հրատարակման մեկնաստութեան ու մաղթեց, որ թոռները իրենց մեծ հօր քայլերուն հետեւին, հայութեան գրական անդաստանին մէջ իրենց հունտերը ցանելու:

Պրն. Ալթունեանը գեղագիտական հաճոյք պատճառեց ներկաներուն. տեղ-տեղ ներկայացուց հայրենաբուխ եւ հայրենակարօտ գրութիւններու օրինակներ, որոնցմով ներկաները հաղորդական մեկնաբանութեամբ կրցան հեղինակի հոգւոյն խորը իջնել եւ երազները շոյել: Պրն. Ալթունեանը անտարակոյս գրականութեան սիրահար մըն է, որ ոգեւորուած եւ ներշնչուած կրցաւ ներկաներու սիրտերուն հպիլ: Հոթոյեանի բառերով՝ «Հայութեան նոր գէնքը պէտք է որ ըլլայ հոգիի եւ մտքի լոյսը՝ որպէս վերածնունդ սփիւռքահայութեան»:

Պրն. Ալթունեան հաճելի անհատականութեամբ հրաշալիօրէն ներկայացուց գիրքը, պատուաբեր ցնծութեան պահերուն ներկաները խանդավառութեամբ ծափահարեցին լաւ պատրաստուած այս գրախօսականին համար:

Այտա Աթիկեանը մեներգեց «Ինչո՞ւ համար սիրելիս», խօսք՝ Գրիգոր Հոթոյեանի եւ երաժշտ.՝ Էդիկ Յովսէփեանի, գրաւիչ ձայնով հաճոյք պատճառեց ներկաներուն:

Տիկ. Սիւզի Գալթակեան ընթերցեց վկայութիւն մը եւս՝ գրուած Զաւէն Սարգիսեանի կողմէ, ուր կ'ըսէ. «...Սիրելի ընկեր, բայց դուն հաճիս գրէ, որ մեր պաշարը չպակսի»:

Գրիգոր Հոթոյեանի գրած բանաստեղծութիւնը՝ «Սուրբ Կոմիտաս», ասմունքեց Արէն Մնացականեան, արժանանալով ծափերու: Սիւզին վկայութիւն մը եւս ընթերցեց, ուր Բաբգէն Թօփեանը կ'ըսէ. «Շարունակելով ընթեռնել դէմքերու եւ դէպքերու ձեր առինքնող յուշերը, երանի տալով՝ կը մտաբերենք մեր պատանեկան, երիտասարդական տարիներուն ապրած կեանքին վայելքներն ու ձեռք ձգած փորձառութիւնները»:

«Անկեղծ սէր» երգը ներկայացուց Անահիտ Կուսուռզեան, որ նոյն ատեն երաժշտական յօրինումը կատարած է Հոթոյեանի քերթուածին: Զերմ ծափերու արժանացաւ:

Հանդիսավարը հրաւիրեց մեծարեալը՝ Գրիգոր Հոթոյեանը, իր խօսքը ըսելու: Ան շնորհակալութիւններ յայտնեց բոլոր անոնց, որոնք մասնակցեցան այս շնորհահանդէսին հովանաւորութեան, կազմակերպութեան, գեղարուեստական յայտագրի մէջ բաժին ունեցողներուն ու մասնաւորաբար Պրն. Յակոբ Ալթունեանին այնքան բժախնդրութեամբ պատրաստած գրախօսականին համար, ծխական խորհուրդին եւ հովիւ Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանին՝ իր ներդրումին եւ շնորհահանդէսի պրակի պատրաստութեան: Ներկաները երկարատեւ ծափերով յարգեցին հեղինակը:

Եկեղեցւոյ հովիւ Տ. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան հրաւիրուեցաւ փակման խօսքը ընելու:

Երկար տարիներու արգասիքը Հանդիսացող գրութիւններու հատոր մըն է այս գիրքը: Պրն. Հոթոյեանը, 84 տարիներու բեղմնաւոր եւ երախտարժան հոգիով զարդարուած այս հայորդին, կարելի չէ դըրուատել իր գրական ստեղծագործութիւններուն ընդմէջէն, որովհետեւ առանց ՄԱՐԴԸ ճանչնալու կարելի պիտի չըլլայ թափանցել խորքը բարոյական ճշմարտութիւններուն: Շարունակելով՝ ըսաւ, թէ «Գրիգոր Հոթոյեանը իր գրականութիւնը մշակած է առանց գրագէտ ըլլալու յաւակնութեան: Այսօր լսեցիք Պրն. Յակոբ Ալթունեանի գրախօսականը «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» հատորի, որ այնքան



«Անցեալի Յուշերով Կ'ապրինք» գիրքի շնորհահանդէսէն տեսարան մը

բծախնդրութեամբ պատրաստած էր, ներկայացնելով գիրքն ու հեղինակը:

Հոթոյեանի լեզուն պարզ է, ան ցաւած է իր հերոսներուն հետ, լացած, աշխատած, պայքարած, խնդացած եւ տագնապած, եւ որքան ալ որ հեռացած է իր ծննդավայրէն, հերոսներու աշխարհէն, լաւ պայմանները արգելք չեն հանդիսացած, որ իր հերոսները մեռնին իր մէջ:

Ինք ուղղամիտ ապագայատեսիլ հայ է, հաւատարիմ՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան:

Թորոնթոյի հայոց պատմութեան վերջին շուրջ 35 տարիներու պատմութեան հեղինակը ինք է: Այբուբենի գինուորագրեալ այս մարդը, այս ալեւոր ծերունին, կուսակցական եւ մշակութային առաքելութեանց հաւատացող մարդ է: Սասունցի այս մարդը կարծէք իր հողին վրայ կ'ապրի հպարտ հայրենասիրութեամբ:

Հոթոյեանը քրիստոնեայ եւ հաւատացեալ քրիստոնեայ գրող մըն է, ու ան հաւատարմօրէն ծառայած է հայ եկեղեցւոյ տարբեր բնագաւառներուն մէջ:

Ան ծնած է 1927-ին հալէպցիական հայկականութեամբ: Գանատա գաղթած հայորդիին նպատակը եղած է բարոյական ճշմարտութիւններու փնտռութեան եւ անոր կիրարկումը:

Այս առիթով ես կը մաղթեմ, որ Գրիգոր Հոթոյեանի այս նոր հատորը՝ «Անցեալի Յուշերով Կ'ապրինք»ը ըլլայ հաճոյք ընթերցողին համար, որպէսզի իր հայրենիքէն հայրութեան հաւատքին երախտապարտ այս ազնուահոգին ըլլայ երախտարժան:

Վարձքը կատար՛ր, թող Աստուծոյ շնորհքը, սէրը եւ սրբարար զօրութիւնը հետդ ըլլայ մինչեւ կեանքիդ վախճանը:

Եւ ձեզի, գրասէր հայորդիներ, բարի ընթերցման պահեր»:

Ներկաները երկար ծափահարեցին:

Հայր Սուրբը ասմունքող երկու պատանիներուն մէկական նուէր տուաւ: Ապա հրաւիրեց Պրն. Յակոբ Ալթունեանը՝ անոր ալ յիշատակի նուէր մը տալու: Այս բոլորէն անմասն չմնաց Տիկ. Շաքէ Հոթոյեանը. իրեն ալ խաչ մը նուիրեց եւ թելադրեց Պրն. Հոթոյեանին չխանգարէ ու ձգէ որ գրէ:

Ապա կատարուեցաւ գինեձօն ու աղօթքով վերջացաւ երեկոն:

Ներկաներէն շատեր իբր գիրքի փոխարժէք նուէրներ ձգեցին՝ մակագրուած գիրքէն օրինակ մը հետերնին տանելով:

Հիւրասիրութեամբ վերջացաւ երեկոն:

Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին այս ձեռնարկը գովելի էր եւ որակաւոր: Ի տես այս երեկոյին, զմայլանքով ու հաւատքով կ'ըսեմ բոլորիդ. ձեր վարձքը կատար:

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ

«Նոր Կեանք», Յունիս 17, 2011





## ԲԱՅՄԱՆ ԽՕՍԲ

Կեանքի լոյս Յիսուս, լուսեղէն խորան,  
Աստուծոյ որդի, փրկիչ մարդկութեան,  
Մահապարտներու խաչովը դաժան  
Մահը գրկեցիր կամֆով անասան:

Խաչի խորհուրդով եւ հաւատամքով  
Մարդկային սիրտը սիրով ծովացաւ,  
Սիրտէ-սիրտ կապը լոյսով գորացաւ  
Խաչէդ արձակուող ֆառագայթներով:

*Այս տողերով կը յատկանշուի, կը մարմնաւորուի եւ կ'արժեւորուի իր ազգային, գրական եւ եկեղեցական գործունէութիւններուն համար, պետական եւ ազգային զանազան հաստատութիւններէ բազմաթիւ գնահատագիրներու արժանացած Գրիգոր Հոթոյեանը:*

*Այսօր, յանուն Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին եւ եկեղեցւոյս հոգաբարձութեան, հաճոյքով բարի գալուստ կը մաղթեմ բոլորիդ Հալէպի մէջ ծնած, սասունցիական հպարտութեամբ իր ծերութեան օրերը վայելող Գրիգոր Հոթոյեանի վերջին երկունքէն ծնած «ԱՆՅԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ» հատորի շնորհահանգէսին եւ գինեձօնին:*

*Պարոն Հոթոյեանը պարզ եւ համեստ իր բնաւորութեամբ՝ իր մանկութեան օրերէն եղած է եւ մինչեւ այսօր կ'ապրի ծառայութեան ոգիով:*

*Ես, որպէս Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ քարտուղարուհի, վկան եմ իր հոգեւոր եւ ազգային անկեղծ սիրոյն եւ ծառայութեան:*

*Պարոն Հոթոյեանը որպէս անձ մենք կը սիրենք, որովհետեւ իր մէջ տեսած ենք մարդկային առաքինութիւններու համախմբումը:*

*Պարոն Հոթոյեանը այսօր կը մեծարենք իր «ԱՆՅԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ» հատորի շնորհահանգէսով, որովհետեւ սիրող սիրտ մը ունի, ինքնաքննութեան ուժը ունի, քաղցր է, ներող, խոնարհ, ազնիւ, գնահատող, ճշմարտախօս, օրինակելի, լեզուն՝ միշտ սանձուած, եւ երախտապարտութեան հոգիով՝ մեծ: Իր մէջ տեսած ենք համբերող մեծութիւնը, գոհունակ մարդը, գիշող հաւատացեալը, նեղութիւններու մէջ պարծող դաշնակցականը եւ սրտանց աշխատող հայրը:*

*Իրաւամբ, իր «ՃԱՃԱՆՁՆԵՐ» հատորի լոյս ընծայման առիթով ըստուած էր, թէ Հոթոյեան գրողը, իր 80 եւ աւելի տարիներու բեռնաւորութեամբ, իր լոյսն ու շողերը սփռած էր բոլոր անոնց վրայ, որոնք կը սիրէին կեանքը:*

Իր գործերուն մէջ Հոթոյեան գրողին սիրտը կայ: Սիրտ մը՝ ո՛չ թէ մարմնին մէջ, սիրտ մը՝ մարմնէն դուրս՝ ափերուն մէջ, ընթերցողին մատակարարուելու:

Իր գործերուն մէջ նուիրում մը կայ, նուիրում հոս՝ այս աշխարհի վրայ, բոլոր անոնց, որոնք փափաք ունին ապրելու մա՛րդօրէն, մարդո՛ւ պէս եւ մարդավայե՛լ հերոսութեամբ:

Իր գործերուն մէջ բարոյական ճշմարտութեանց մունետիկ մը կայ, կանչով մը, զարմանալիօրէն մեղմ ձայնով, բայց խորհրդաւոր եւ դաստիարակիչ մղում ունեցող ձայնով:

Իր գործերուն մէջ ճանապարհ մը կայ դէպի բարին առաջնորդող, դէպի գեղեցիկը տանող, եւ դէպի վսեմը հասցնող ճանապարհ մը:

Այս մտորումներով կ'ողջունեմ ձեր բոլորին ներկայութիւնը եւ կը յուսամ, որ այս գիշերը բոլորիս համար կ'ըլլայ հարստացուցիչ գիշեր մը, անցեալի յուշերով լեցուն գիշեր մը:

Թող այս շնորհահանդէսը ըլլայ յարգանքի նուազագոյն տուրք Պրն. Հոթոյեանին, որովհետեւ ինք արժանի է այս գիշերուան:

Այս առիթով կը յիշեցնեմ, որ գիրքին հասոյթը ամբողջութեամբ պիտի տրամադրուի եկեղեցւոյս Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին:

Բարի վայելում եւ բարի ճանապարհորդութիւն անցեալի յուշերով լեցուն այս գիշերուան մէջ:

ԱՐՄԻԿ ՍԱՖԱՐԵԱՆ

«Շողակաթ», Յունիս-Յուլիս 2011



## ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Սիրելի՛ հայրենակից Գրիգոր Հոթոյեան,

Ուրախութեամբ ստացայ «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» հատորը: Ծանօթացայ քեզի եւ հետաքրքրութեամբ կարդացի պատմօ՛ւլաձքներու հաւաքածոյէդ փունջ մը: Կ'ընդհատեմ ընթերցումս՝ չուզելով աւելի ուշացնել սրտանց շնորհակալութիւններս:

Շատ հետաքրքրական գտայ յուշագրական բնոյթ կրող պատմաները, որոնցմէ ամէն մէկը նոր երանգ մը կ'աւելցնէ սփիւռք դարձած մեր բեկորներու պատմութեան գունազեղ պատասաօին:

Կարօ Սասունիի բնութագրումը գտայ ճշգրիտ եւ զգայուն: Տալուորիկի սպաղանաց Գրիգորի գրիչով Անտոք լերան գագաթէն ամպեր անցան...

Հայրենակցական լաւագոյն զգացումներով եւ սիրով՝

ԲԱՔԳԷՆ ՍԱՍՈՒՆԻ

4 Մայիս 2011, Լոս Անջելէս



Յարգելի դաստիարակս՝  
Գրիգոր Հովոյեան,

Ինձի շուրջ «գեղեցկաբոյր» ածականը չեմ համարձակիր քեզի համար գործածել, քանի կը փորձեմ քայլերուդ հետեւիլ՝ իմ ալ գրած համեստ գիրքերու մեկենաս փնտռելով շարունակ:

«Ճանապարհ»ի ընթերցումը հազիւ վերջացուցած, ստացայ նոր հրատարակութիւնդ՝ «Անցեալի Յուշերով Կ'ապրինք»: Գիտեմ թէ մեծ յաջողութիւն պիտի շնորհէ քեզի իր պարզ լեզուով, դիւրընթեռնելի, խորիմաստ եւ բարոյական պատմութիւններով, որոնց մէջ փոքրիկ «կողմնակցութիւն» մը գտայ հետեւեալին մէջ.—

«Յարգենք մեր տարեց հայրերը» կը պատմէ անգուժ թագաւորի մը անհաւատալի հրամանը՝ 60 տարիքը բոլորած իր հպատակները մահուան առաջնորդելու: Կը փրկուի միայն մէկը՝ իր զաւակին գաղտնի պահպանումով: Ու այդ 60-է վեր ծերը 1000 վրաններու 7 ձողերուն մէկը որպէս վառելանիւթ գործածելով՝ բանակը կերակրելու իմաստուն լուծումը կը թելադրէ ու թագաւորը կը յաջողի յաղթել: Հասկնալով իր սխալը՝ տարեցներու խրատէն իր հպատակները զրկելու, կը հրամայէ ազատ ձգել բոլորը, որ ապրին ու կեանքը մինչեւ իր բնական վերջը վայելեն:

Հիացած այս պատմութեան իմաստէն, խորունկ շունչ մը առի եւ գիրքը գոցելով՝ ետեւի էջին վրայ կարդացի, որ հեղինակը 1927-ին ծնած ըլլալով՝ 60-ի ճակատագրական տարիքը շատոնց անցեր է...

Շարունակէ գրել ու կեանքը վայելել, ազնիւ բարեկամս:

ԿԱՐՊԻՍ ԱՐՄԷՆ

1 Մարտ 2011, Վանքուվըր



Սիրելի՛ ընկ. Գրիգոր,

Քրոջս միջոցով ստացած եմ գիրքերդ:

Նախ ըսեմ, որ զգացուած եմ, ապա՝ շատ շնորհակալութիւն նուէրիդ համար: Ընթերցանութեան պաշարս շատցուցիր: Թո՛ղ Ամենակարողը քու կեանքդ երկարէ, որ իմ պաշարս չպակսի: Հաճոյքով կարդացած էի «Սիրտը Ափին Մէջ»ը: Վստահ՝ նոյնքան հաճոյքով կը կարդամ նաեւ ասոնք:

Կը զգաս չէ՞, որ հայ գրականութեամբ զբաղող տարրը, յատկապէս Սփիւռքին մէջ, թէե՛ւ Հայրենիքի վիճակն ալ փայլուն չէ, հե-

տըզհետէ կը նօսրանայ: Դժբախտ է: Դժբախտ է յատկապէս հայրենի «այրերուն» անտարբերութիւնը հանդէպ հայ լեզուի պահպանման, ածին ու զարգացման: Հանդէպ լեզուի ու ազգի յատուկ ռազմավարութեան բացակայութեան... Արդիւնքը՝ այսօրն է:

Կ'ուզեմ լաւատես ըլլալ՝ սակայն յուսալով, որ օր մը կը սրբագրուի: Յուսանք, որ այդ կ'ըլլայ կանուխ:

Սիրելի՛ ընկեր, բայց դո՛ւն հաճիս գրէ, որ մեր պաշարը չպակսի: Վարձքդ կատար:

Քեզ սիրող ընկերդ  
ԶԱԻԷՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ապրիլ 5, 2011



Սիրելի՛ Պրն. Հոթոյեան,

Շնորհակալութեամբ ստացայ ձեր սիրելիութեան հեղինակած վերջին աչքառու հատորը, որ կը բովանդակէ 47 պատմուածքներ՝ արտասպուլած Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ «Շողակաթ» ամսաթերթէն:

Ակնարկ մը նետելով «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» գիրքի պարունակութեան, Հալէպի մասին ձեր պատումները պահ մը զիս փոխադրեցին ծննդավայրս:

Օրինակի համար «Արեւելեան բաղնիք» ձեր գրութեան մէջ, նոյն փորձառութեան ես ալ ենթարկուած եմ ճտէյտէի բաղնիքին մէջ...:

«Ամէն չարիքի տակ բարիք մը կայ» նկարագրութեան մէջ նըշուած Խան Հաճի Մուսան ուշքիս մէջ կարեւոր տեղ գրաւած է, որովհետեւ խանի ջրհորին ճիշդ գիմացը հօրս խանութն էր: Ամառուայ արձակուրդը գրեթէ հոն կ'անցընէի: Խանին բակին մէջ պարապոյ ժամերուն առեւտրականներ կը հաւաքուէին նարտ եւ թուղթ խաղալով՝ վայելելով սրճեփի Հրանդին սուրճն ու թէյը...:

Շարունակելով ընթեռնել դէմքերու եւ դէպքերու Ձեր առինքնող յուշերը, երանի տալով կը մտաբերենք մեր պատանեկան-երիտասարդական տարիներուն ապրած կեանքին վայելքներն ու ձեռք ձգած փորձառութիւնները:

Ձեր սիրելիութեան մաղթելով քաջառողջ կեանք եւ արեւշատ օրեր, մնամ

Յարգանք՝

ԲԱՐԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ

Մոնթրէալ, 19 Փետր. 2011



ԳՐԱԽՕՍԱԿԱՆ  
ՊՐՆ. ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ  
«ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ»  
ԳՐՔԻՆ

Պրն. Գրիգոր Հոթոյեանի առաջարկը՝ իր «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» խորագրուած գրքին գրախօսականը ընելու համար, իրօք անակնկալ մըն էր ինծի համար: Կինս՝ Արփինէն եւ Պրն. Գրիգորը պաշտօնակիցներ եղած են 1950-ական թուականներուն Հալէպի կիրակնօրեայ դպրոցին մէջ: Բայց ես գինք ճանչնալու առիթը ունեցած եմ միայն Թորոնթոյի մէջ, վերջին 10–15 տարիներու ընթացքին: Պրն. Հոթոյեան ազնուութիւնը ունեցաւ իր գրած եւ հրատարակած վերջին երեք գիրքերը նուիրելու, որոնց շնորհիւ պատեհութիւնը ունեցայ ծանօթանալու իր տաղանդներուն, իր մտածումներուն եւ գործունէութեան: Շնորհակալ եմ Պրն. Հոթոյեանին, որ ինծի վստահեցաւ իր վերջին գրքին գրախօսականը ընել:



Բայց նախքան բուն գրախօսականին անցնիլս՝ թոյլ տուէք, որ պատմեմ երկու դրուագներ: Առաջին դրուագ: Օր մը, ութսուն տարիքը անց եւ հանգստեան կոչուած ծանօթի մը հանդիպեցայ: Քիչ մը դժգոհ նայուածքով հարցուց. «Ինչպէ՞ս կ'անցընես օրդ»: Իրօք, տարիքը առած եւ գործէ քաշուած շատ մը անձերու մտահոգութիւնն է անվերջանալի եւ երկար թուող իրարայաջորդ օրերը զբաղեցնելը: Երբ Լիբանանի մէջ Պուրճ Համուտի փողոցներէն կը քալէի, մայթերու վրայ կը տեսնէի դէմ դիմաց նստած, տարիքը առած մարդիկ նարտ կը խաղային, կամ աթոռակի մը շուրջ բոլորուած՝ չորս-հինգ հոգի թուղթ կը խաղային, այսպէս ըսած՝ ժամանակը անցընելու համար: Բայց եթէ հարցումը ուղղենք Պրն. Հոթոյեանին, թէ ինչպէ՞ս կը զբաղեցնէ ժամանակը, հաւանաբար պահ մը խորհելէ վերջ ան ըսէ. «Տարօրինակ, օրս կարճ կու գայ, երանի օրս 25 ժամ ըլլար, կամ քիչ մըն ալ աւելի երկար»: Վերջին ինը տարիներու ընթացքին, երբ Պրն. Հոթոյեան 70-էն 80-ի սեմը կ'անցնէր, հրատարակած է հինգ գիրքեր, զուգահեռաբար իր միւս գրական եւ հասարակական բեղուն աշխատանքներուն, լաւագոյնս արժեւորելով իրեն շնորհուած ժամանակի իւրաքանչիւր րոպէն:

Երկրորդ դրուագ: Լիբանանի քաղաքացիական կռիւները սկսելէն չորս տարի ետք, մեր աշխատանքի հաստատութեան զլխաւոր հաշուապահը տեղեկացուց, որ ստիպուած էր իր պաշտօնը ձգել, որովհետեւ Գանատա պիտի գաղթէր: Հարկաւոր էր զինք փոխարինել: Յետ թերթերու մէջ դրուած ծանուցումներու, պաշտօնին համար դիմող թեկնածուներուն մէջ կար 30-էն 35 տարիքի մէջ երիտասարդ մը, բարձրահասակ եւ գրաւիչ երեւոյթով: Երբ հարցուցի, թէ ի՞նչ վկայականներ ունէր, սեղանին վրայ դրաւ պաքալորէայի վկայականը, ինչպէս նաեւ Լիբանանեան Համալսարանէն ստացած վաճառականական եւ հաշուապահական մասնագիտութեան վկայականները: Փափաքելով իր մասին աւելի ծանօթութիւն ունենալ՝ կարգ մը հարցումներ ուղղեցի, ի միջի այլոց՝ թէ ի՞նչ կը կարդար երեկոները: Պատասխանեց. «Ան-Նահար թերթը կը կարդամ»: Անոնք որոնք Լիբանան գտնուած են, անշուշտ ծանօթ են արաբերէն լեզուով այս որակաւոր օրաթերթին: Բայց պատասխանը զիս չգոհացուց: «Մասնագիտութեանդ վերաբերեալ ի՞նչ գիրքեր կը կարդաս»,— հարցուցի: Զարմացած երեսս նայեցաւ, ու քիչ մը ջղային շեշտով պատասխանեց. «Ի՞նչ կ'ուզեք, որ կարդամ, պէտք եղած գիրքերը արդէն դպրոցը կարդացի»: Այս երիտասարդին համար իր ուսումնառութիւնը աւարտած էր դպրոցին հետ: Բայց այդ պահուն մտքիս մէջ կար Քրանսացի նշանաւոր բանաստեղծ Լամարթինի պատմութիւնը: Երբ Լամարթին դպրոցը աւարտած է, իր ծնողքին նամակ գրած է, որու մէջ, ի միջի այլոց, ըսած է. «Դպրոցս աւարտեցաւ, ուսումս կը սկսի»:

Պրն. Գրիգոր Հոթոյեան բախտաւորութիւնը չէ ունեցած համալսարան յաճախելու, բայց երբ կը կարդանք իր գրութիւնները, յստակ կը տեսնենք, որ ազգային վարժարանի մը դասընթացքները բոլորելէ ետք, ան իր ուսումը աւարտած չէ նկատած: Ան շարունակած է ուսանիլ ու կը շարունակէ մինչեւ այսօր, ամենայն համեստութեամբ եւ իմաստութեամբ: Իր ամբարած աշխարհագրական, պատմական, ընկերաբանական, գրական եւ այլ հարցերու վերաբերեալ գիտելիքներու պաշարը կրնայ ամօթով ձգել շատ մը համալսարանաւարտներ, որոնք քիչ առաջ յիշուած հաշուապահին նման՝ պէտք չեն տեսներ շարունակելու իրենց ուսումնառութիւնը: Աւելին, այն ինչ որ ուշադրութիւնս գրաւեց մասնաւորապէս Պրն. Հոթոյեանի պարագային, իր հաղորդելիք պատմական ղէպքերու, կամ աշխարհագրական տեղեկութիւններու ճշգրտութիւնը բժախնդրութեամբ ստուգելէ վերջ գրի առնելն է, գիտական միտքի մը յատուկ պարտաճանաչութեամբ:

Պրն. Գրիգոր Հոթոյեան հիմնովին գաղափարապաշտ մարդ մըն է: Ան իր գաղափարական տաճարի գմբէթը կառուցած է չորս հաստատուն մոյթերու վրայ, որոնք են՝ 1) իր անդրդուելի հայկականութիւնը, 2) իր հաւատաւոր պատկանելիութիւնը Հայ Առաքելական Եկեղեցւոյ, 3) իր զգացական կապուածութիւնը սասունական արմատ-

ներուն եւ 4) իր անխախտ հաւատարմութիւնը Հ. Յ. Դաշնակցութեան: Այս չորս աղբիւրներէն հոսած գաղափարները ողողած են Պրն. Հոթոյեանի «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» խորագրուած գրքին պատմուածքները: Ան միայն պատմութիւն մը պատմելու սիրոյն չէ, որ ձեռք առած է գրիչը: Իւրաքանչիւր պատմուածք կը հաղորդէ ազգասիրական, կրօնաբարոյական, պատուախնդրական, ընտանեկան մաքուր բարքերու վերաբերեալ օրինակներ եւ պատգամներ:

«Անցեալի Յուշերով Կ'ապրինք» գրքին մէջ կը մտնենք գեղեցիկ եւ յուզիչ պատմուածքով մը, խորագրուած՝ «Աղօթքի գօրութիւնը»: Ան հոգեյոյզ պատմութիւնն է Պօղոս կոչեցեալ սասունցի պատանիի մը, որ 1915-ի պատերազմին բռնի կը զինուորագրուի թուրք զինուորականութեան կողմէ եւ բազմահարիւր այլ հայ պատանիներու եւ երիտասարդներու հետ կը տարուի ամայի նեղ կիրճի մը մէջ, ուր թուրք բարբարոսները կը ձեռնարկեն անոնց ամբողջական ջարդին: Արձակուած փամփուշտներու տարափը հրաշքով կը խնայէ միայն Պօղոսը, որ կը պահուրտի խոշոր ծառի մը բունին մէջ բացուած խոռոչը, ուր ան յուզումով կը յիշէ ընտանիքէն բաժանման սրտաճմլիկ պահուն իր մօրը թախանձանքը՝ «Աստուած, Յիսուս Քրիստոս, Քեզի կը յանձնեմ իմ միակ որդիս»: Իսկ Պօղոսին ուղղելով իր արտասուած խոռոչը՝ ջերմօրէն կը թելադրէ, որ երբեք չմոռնայ իր հաւատքն ու եկեղեցին՝ միշտ յիշելով, որ ինք հայ քրիստոնեայ է: Եւ այն պահուն, երբ թուրք զինուորներ, որոնք բլուրին գազաթէն տեսած էին ողջ մնացած Պօղոսը ու վար իջած գայն սուլիմահար ընելու, Պօղոս ծառի նեղ խոռոչին մէջ ծունկի եկած ջերմեռանդութեամբ կ'աղօթէր՝ արտասանելով Ներսէս Ծնորհալիի «Հաւատով Խոստովանիմ»-ի 24 համարները, ինչպէս որ մայրը յանձնարարած էր իրեն: Զինուորները բազմաթիւ անգամներ կ'անցնին ծառին առջեւէն, կը պոռան, կը կանչեն, սակայն ի գուր: Անոնք չեն գտներ Պօղոսի թաքստոցը: Պօղոս իր փրկութիւնը կը պարտի աղօթքի գօրութեան, համոզումով կը պատգամէ Պրն. Հոթոյեան:

Կրօնաբոյր եւ հոգեպարար նման պատմուածքներ են «Փրկարար խաչը», «Հաւատքի գօրութիւնը», եւ տակաւին ուրիշներ, որոնք կ'արտայայտեն Պրն. Հոթոյեանի խորունկ կրօնասիրութիւնը: Որպէս իսկական քրիստոնեայ, ան կը խոստովանի. «Հոգեկան այն վերացումը եւ գոհունակութիւնը գորս կը զգամ եկեղեցւոյ մէջ պատարագի ընթացքին, ուրիշ որեւէ տեղ չեմ գտներ, մանաւանդ երբ կ'ուսկընդրեմ մեր հոգեզմայլ շարականները, որոնք թանկագին գոհարներ են միջագային գրականութեան մէջ, թէ՛ յօրինուածքով եւ թէ՛ երաժշտութեամբ»:

Քրիստոնէական բարոյականութիւնը նմանապէս տիրական տեղ ունի Պրն. Հոթոյեանի պատմուածքներուն մէջ: Օժտուած լաւատես

խառնուածքով, իրեն համար կրօնական պատուիրաններուն հետեւողը, բարոյալից վարքով գործողը անպայման իր վարձատրութիւնը կը ստանայ, մինչ անդարձ մեղաւորը կը գտնէ իր պատիժը: Այս անշրջելի սկզբունքներուն վրայ հիւսուած պատմութիւն մըն է դասընկերներ Մկրտիչի եւ Սարգիսի պարագան: Մինչ Մկրտիչ պարկեշտ պատանի մըն է, լրջօրէն նուիրուած իր դպրոցական եւ ընտանեկան պարտականութիւններուն, եւ Կիրակի օրերն ալ եկեղեցւոյ ծառայող որպէս դպիր, Սարգիս, ընդհակառակը, ծոյլ եւ անկարգ աշակերտ մըն է, որ ի վերջոյ կ'արտաքսուի դպրոցէն, եւ անտեսելով ծնողքին տուած խրատները, կ'որդեգրէ ապօրինի ընթացք մը: Մկրտիչ փայլուն կերպով կ'աւարտէ դպրոցը, կ'ուսանի իրաւաբանութիւն եւ տարիներու ընթացքին կը հասնի դատաւորի պաշտօնին: Իսկ Սարգիս կը միանայ աւագակախումբի մը եւ իր զբաղումը կ'ըլլայ գողութիւն, եւ նոյնիսկ ոճիր գործել: Ի վերջոյ Սարգիս կը ձերբակալուի եւ դառն ճակատագրի բերումով, ոճրագատ ատեանի մէջ իր նախկին ընկերոջ՝ այժմ դատաւոր՝ Մկրտիչի կողմէ կը դատուի ու կը դատապարտուի իր գործած ոճիրներուն համար: Դատապարտուած Սարգիսը խօսքը ուղղելով դատաւոր Մկրտիչին՝ կը բացագանչէ. «Մերելի դասընկերս Մկրտիչ, հիմա այս պահուս կ'ըմբռնեմ քու խրատներուդ արժէքը եւ կը գղջամ: Ներկայիս ես օրինակ եմ ամէն անոնց, որոնք չեն սիրեր իրենց ծնողքը, ազգը, հայրենիքը, եկեղեցին, դպրոցը եւ չեն հետեւիր իրենց ծնողներուն, ուսուցիչներուն եւ ընկերներուն խրատներուն: Ես հարստանալու անպարկեշտ ձեւին հետեւեցայ եւ հիմա կը քաւեմ մեղքերս»:

Այս եւ նման պատմուածքներով Պրն. Հոթոյեան կ'ընդգծէ անփոխարինելի տեղը, որ գրաւած են իր կեանքին մէջ, եւ որ պէտք է գրաւեն իւրաքանչիւր հայու կեանքին մէջ՝ ծնողք, ազգ, հայրենիք, եկեղեցի, դպրոց, ինչպէս նաեւ անխախտ բարոյականութիւն: Ասոնք կը կազմեն առողջ հաւաքականութեան մը հիմնական արժէքները:

Պրն. Հոթոյեան բուռն հաւատացող մըն է բարեգործութեան բարիքներուն: Բազմաթիւ պատմուածքներու մէջ դիպուկ օրինակներով ան կը ջատագովէ բարեգործութիւնը: Իր ամենագեղեցիկ օրինակներէն մէկն է դանիացի Միս Քարէն Եփփէի պարագան: 1903-ին, 27 տարեկան հասակին, ան կու գայ Ուրֆա քաղաքը եւ մինչեւ իր մահը ամբողջական նուիրումով կը ծառայէ հայ ժողովուրդի բարօրութեան՝ հիմնելով որբանոց, դպրոց, գործատեղիներ, այս վերջին նախաձեռնութիւնը ըլլալով գաղթական հայուն հասութեաբեր աշխատանք հայթայթելու տնտեսական առողջ քայլ մը:

Պրն. Հոթոյեան երախտագիտութեամբ կը յիշէ նաեւ Քարէն Եփփէ հիմնարկին ըրած նիւթական օժանդակութիւնը իրեն եւ բազմաթիւ ուրիշ աշակերտներու՝ դպրոցական տարեթոշակը վճարել կարենալու համար:



Բարեգործութեան ուրիշ հետաքրքրական դրուագ մըն է «Մարդուս կեանքը կախուած է իր ինչքերու կուտակումէն» խորագրուած պատմուածքը, որու մէջ Պրն. Հոթոյեան կը պատմէ իր պատահական հանդիպումը Տիգրանուհի Սարգիսեան անունով տիկնոջ մը հետ: Տիկինը յուզումով կը տեղեկացնէ, թէ թէեւ իր հանգուցեալ ամուսինէն միլիոններ ժառանգած է, բայց դժբախտաբար, յետ անբուժելի հիւանդութեան մը, բժիշկները իրեն միայն վեց ամսուայ կեանք մը նախատեսած են: Կարեկցութեամբ Պրն. Հոթոյեան իր ցաւը կը յայտնէ եւ կը յորդորէ կարգալ աւետարանը, ի մասնաւորի Պօղոս Առաքեալի Առաջին Թուղթը ուղղուած Տիմոթէոսին՝ «Յորդոր հարուստներուն»։ «Այս աշխարհի մեծատուններուն պատուիրէ, որ չհրպարտանան եւ յոյս չդնեն սնտոի հարստութեան վրայ, այլ՝ Աստուծոյ վրայ... Պատուիրէ, որ բարիք գործեն, բարի գործերով հարստանան... իրենց համար բարի հիմ դնելով հանդերձեալին մէջ, որպէսզի ձեռք բերեն ճշմարիտ կեանքը»։ Եւ Պրն. Հոթոյեան խրատ կու տայ տիկնոջ՝ ըսելով. «Խնդրէ մեր բոլորին Փրկիչ՝ Յիսուս Քրիստոսէն, որ քու հիւանդութիւնդ բժշկէ: Աղօթէ՛ ամբողջ հաւատքով եւ ամէն օր»։ Կը յորդորէ նաեւ ունեցած միլիոնաւոր տոլարներէն բաժին հանել ազգային հաստատութիւններուն, եկեղեցական կառոյցներուն, որբերուն, աղքատներուն: «Այդ բարեգործութիւնները քեզ պիտի անմահացնեն եւ երկնային անմահութեան արժանացնեն»,— կ'ըսէ Պրն. Հոթոյեան: Ութ ամիս վերջ ան Տիկին Սարգիսեանէն կը ստանայ նամակ մը, ուր տիկինը կը գրէր. «Սիրելի բարեկամ, Պօղոս Առաքեալին խօսքը սրտիս շատ խօսեցաւ: Հարստութեանս մեծամասնութիւնը նուիրեցի ազգային հաստատութիւններուն, եկեղեցիներուն, դպրոցներուն, աղքատներուն: Ամէն օր հաւատքով աղօթեցի, որ Փրկիչը իր հրաշագործ զօրութեամբ բուժէ հիւանդութիւնս: Վեց ամիս ետք բժիշկը զիս քննելէ ետք՝ քաղցկեղի հետք չգտաւ մարմնիս մէջ: Զարմանքով հարցուց, թէ ինչպէ՞ս բուժուեցայ: Ըսի՝ "հաւատքով աղօթեցի մեր Փրկիչին եւ բոլոր սուրբերուն"»։ Այսպէս է հաւատքի զօրութիւնը: «Եթէ մարդ իր պարտականութիւնը կատարէ եւ վստահի Աստուծոյ, ոչ մէկ բանէ կը վախնայ»,— կ'ըսէ Պրն. Հոթոյեան հաւատացեալի համոզումով,— «թէեւ երբեմն ամէն ինչ մութ ու չարագուշակ կը թուի, սակայն Ան ամէն ինչ կը փոխակերպէ բարիքի»:

Պրն. Հոթոյեանի հայրենասիրական զգացումներն ալ կը ցոլան գրքին գրեթէ բոլոր պատմուածքներուն մէջ: Դարերով իր գոյութեան եւ իր ազատութեան համար մարտնչած հայ ժողովուրդը ահաւոր ջարդի ենթարկուած էր 1915-ին, բայց յամառօրէն պայքարելով՝ ան յաջողած էր Առաջին Համաշխարհային Պատերազմի հետեւող թոհուբոհ մէջ կերտել անկախ հայրենիք մը: Ծնած եւ հասակ նետած այս ճակատագրական դէպքերուն անմիջապէս յաջորդող տարիներուն,

Պրն. Հոթոյեանի սերունդը ապրած է այդ դէպքերուն պատճառած ըմբոստացուցիչ եւ միաժամանակ ոգեւորիչ մթնոլորտին մէջ:

Ահա այս տարամէտ զգացումներն են, որ կ'արտայայտուին «Հայրենասէր Գուրգէնը» խորագրուած պատմուածքին մէջ: Վան քաղաքի պատուական եւ յարգուած ընտանիքներէն մէկն է Իշխանեան ընտանիքը, բաղկացած հօրմէն, մօրմէն եւ չորս զաւակներէն, երեքը՝ մանչ, մէկը՝ աղջիկ: 1915-ին ջարդարար թուրք եւ քիւրտ հորդաներու դէմ քաղաքի ինքնապաշտպանութեան ընթացքին հայրը եւ զաւակներէն երկուքը ճակատի վրայ զոհ կ'երթան իրենց հայրենասիրութեան: Բայց Վանը կը փրկուի շնորհիւ իր հարիւրաւոր մարտիրոսներու զոհողութեան, եւ քաղաքը կ'ապրի երկու տարի խաղաղ ու ապահով: Երբ քաղաքին օգնութեան հասած ռուսական բանակը 1917-ին կը քաշուի դէպի Կովկաս, Իշխանեաններու երրորդ մանչ զաւակը՝ Գուրգէն, կը յաջողի քաղաքէն դաղթող ժողովուրդին հետ մայրն ու քոյրը ողջ հասցնել Երեւան: Կրկին ռազմաճակատ վերադառնալէ առաջ, Գուրգէն կ'ուզէ իրագործել պատանեկան շրջանին կատարած ուխտ մը՝ այցելելով Սուրբ Էջմիածին վանքը: Բայց երբ հոն կը տեսնէ աղեխարչ եւ սրտաճմլիկ պայմաններու ներքեւ հաւաքուած գաղթական բազմահազար ժողովուրդը, արցունքը կը քարանայ Գուրգէնի աչքերուն մէջ, կ'ըսէ Պրն. Հոթոյեան, սիրտը կը բզբտուի անծանօթ ուժերէ: Ինչո՞ւ այս ժողովուրդը, այս հնադարեան մշակոյթով քրիստոնեայ ժողովուրդը կը մեռնէր: Ու ծունկի գալով Էջմիածնայ տաճարի խորանին առջեւ, ան կը վերանորոգէ իր ուխտը՝ մինչեւ մահ կատարելու իր հայրենասիրական եւ ազգասիրական պարտականութիւնները, մանաւանդ, որ այդ միջոցին թշնամին մօտեցած էր Յիսուս Քրիստոսի իջեւանած տաճարին, հայ ժողովուրդի հաւատքի կեդրոնին: Մեր դարաւոր թշնամին, ամբողջ թրքահայութիւնը աքսորելէ եւ ջարդելէ ետք, կ'ուզէր Արեւելեան Հայաստանի հայութեան հաշիւն ալ մաքրել, հիմնայատակ կործանել մեր հաւատքի բերդը՝ Սուրբ Էջմիածինը:

Գուրգէն իր վանեցի մարտիկներուն հետ անձնուիրաբար կը կրճուէր Ղարաքիլիսայի ճակատին վրայ, երբ օր մը, ահաւոր մէկ վայրկեանին, թշնամի դաւաճան ռումբ մը իր քով պայթելով՝ ծանրօրէն վիրաւորեց Գուրգէնը: Հիւանդանոցին մէջ, բժշկական կազմի բոլոր ճիգերը հերոսին կեանքը փրկելու՝ ի դերեւ ելան: Գուրգէնի վերջին խօսքերը, ուղղուած իր արտասուող մօր, եղան. «Սիրելի մայր, ես կատարեցի իմ պարտականութիւնս իմ հայրենիքիս, իմ ազգիս եւ իմ հաւատքիս հանդէպ: Ես քալեցի հօրս գծած ուղիէն: Կ'ուզեմ, որ դուն երբեք չտխրիս եւ չլսաս, այլ՝ հպարտ կանգնիս եւ քալես մեր անկախ հայրենիքի հողին վրայ, որովհետեւ դուն այն մայրն ես, որ սնուցիր ու դաստիարակեցիր երեք մանչ զաւակներ եւ ամուսինովդ միասին զոհեցիր մեր հայրենիքի անկախութեան բազինին»:

Հոյակապ պատմութիւն մըն է այս, գրաւիչ եւ յուզիչ կերպով ներկայացուած Պրն. Հոթոյեանի կողմէ:

Իր պատմուածքներուն մէջ Պրն. Գրիգոր Հոթոյեան միշտ խոր գոհունակութեամբ կը յիշեցնէ, որ ինք հաւատացեալ Հայ քրիստոնեայ է, երկար տարիներ հաւատարմութեամբ ծառայած է Հայ Առաքելական Եկեղեցւոյ որպէս դպիր, մանկութեան յաճախած է կիրակնօրեայ դպրոց, եւ ապա պաշտօնավարած է այդ դպրոցին մէջ որպէս ուսուցիչ եւ տեսուչ: Պրն. Հոթոյեան հպարտութեամբ կը յիշէ նաեւ իր սասունական արմատները: Հայրը՝ Ղազար, այլ անունով՝ Խարզօ, ծնած ու հասակ նետած է Սասունի Սպաղանք կոչուած պղտիկ գիւղին մէջ: Իսկ Պրն. Գրիգորը, իր եղբայրներն ու քոյրերը թէեւ ծնած են Սուրիոյ մէջ, բայց կազմաւորուած են իրենց հօր սասունցիի շունչին տակ: Պրն. Հոթոյեանի գրքին շատ մը պատմուածքներուն մէջ կը հանդիպինք սասունցի դերակատարներու: Սասունցիներէն շատեր արհեստով եղած են ջաղացպաններ ու փռապաններ, սակայն Սասուն տուած է նաեւ, կը յիշեցնէ Պրն. Հոթոյեան, արժէքաւոր մտաւորականներ, ինչպէս Սիմոն Սիմոնեանը, եւ ականաւոր քաղաքական գործիչներ՝ Կարօ Սասունիի նման:

Պրն. Հոթոյեան մասնաւոր հպարտութեամբ կը յիշէ նաեւ փոքր Սպաղանք գիւղի ծնունդ եղող հերոս Փետայիները, մէկը՝ Մակարը, Պրն. Գրիգորի հօր՝ Ղազարի կնքահայրը, եւ միւս երկուքը՝ Գալէն եւ Ակէն, Պրն. Ղազարի հօրեղբորորդիները: Կը յիշէ նաեւ Զօր. Անդրանիկը, Գէորգ Զառուշը, Ռուբէնը եւ ուրիշ Փետայիներ, որոնք Սպաղանքի մէջ կը հաւաքուէին՝ ծրագրելու եւ համադրելու համար իրենց Փետայական գործունէութիւնը:

«Պատուախնդիր եւ քաջ սասունցի» խորագրով պատմուածքի մը մէջ, Պրն. Հոթոյեան հպարտութեամբ կը պատմէ, թէ ինչպէ՞ս Հայ սասունցի երիտասարդ մը հերոսաբար Հայ աղջիկ մը կ'ազատէ թուրք ոստիկանի մը ճիրաններէն: Դէպքը պատահած է 1920-ին՝ Բիւրիս քաղաքին մէջ, Կիլիկիան ազատագրած Փրանսական բանակներու տիրակառութեան շրջանին: Ոստիկանը առեւանգած էր երիտասարդ ու գեղեցկադէմ աղջիկը եւ ձիաքարչ կառքով մը զայն կը տանէր արագավազ, անտեսելով խեղճ աղջկան բողոքի պոռչտութիւնները: Իսկ անցորդները, լսելով հանդերձ աղջկան օգնութեան կանչերը, կը մնային անտարբեր՝ տեսնելով, թէ գործը թուրք ոստիկանի հետ է: Բայց Սասնոյ Սպաղանք գիւղէն յանդուգն եւ պատուախնդիր Հայ երիտասարդ մը, վագելով կառքին ետեւէն, կը հասնի կառքին եւ թուրք ոստիկանին հարուած մը տալով՝ կը տապալէ զայն եւ Հայ աղջկան կը պատուիրէ, որ արագութեամբ հեռանայ: Երիտասարդը կը տարուի Փրանսական ոստիկանատուն, ուր երբ Փրանսացի սպան կ'իմանայ եղելութիւնը, կը շնորհաւորէ սասունցի երիտասարդը իր քաջութեան համար ու գովաբանական նպաստաւոր տեղեկագիր մը կը պատրաստէ:

Պրն. Հոթոյեանի հետաքրքրական պատմուածքներէն մէկն ալ խորագրուած է «Արաբական առաքինութիւն», որու մէջ ան կը պատմէ Ուրֆա քաղաքի հայկական մեծ գաղութին պատկանող Սարգիսեան ընտանիքի պատմութիւնը, 1915-ի Մեծ եղեռնին եւ անկէ վերջ: Ընտանիքին գաւազներէն որբ մնացած հինգ տարեկան Յակոբը կ'որդեգրուի ազնիւ եւ մեծոգի արաբ ընտանիքի մը կողմէ, ուր ան կը ստանայ հոգածութիւն եւ գուրգուրանք: Բայց երբ քանի մը տարի ետք արդէն արաբացած Յակոբի մեծ եղբայրները կը գտնեն իրենց փոքր եղբայրը, Յակոբը որդեգրող արաբը, որ Սուլթան աշիրաթի գըլխաւորն էր, ազնուօրէն կը համաձայնի վերադարձնել պզտիկը իր եղբայրներուն՝ յարգելով ընտանեկան միութեան սրբութիւնը:

Պրն. Հոթոյեան չի սահմանափակեր իր գրութիւնը այս սրտաշարժ պատմութեան տեղեկագրութեամբ: Պատմուածքին որպէս ներածական՝ ան կու տայ Ուրֆա քաղաքի շատ համառօտ պատմականը Մեծն Աղեքսանդրի ժամանակէն սկսեալ, եւ կը նկարագրէ Հոն գըլխուող հոծ հայ գաղութին կացութիւնը 1915-ի Մեծ եղեռնի նախօրեակին:

Պատմուածքներէն շատեր օժտուած են նման պատմական, աշխարհագրական, հասարակական նկարագրական ներածականներով: Նման պարագայ մըն է «Կարնեցի հայ ընտանիքի մը ողիսականը» խորագրուած պատմուածքը, որ կու տայ 1915-ի գաղթականութեան շրջանին Թոքատեան ընտանիքին կրած տառապանքներուն նկարագրականը, բայց չի գոհանար յօդուածը սահմանափակելով միայն յիշեալ ընտանիքին ապրած ողիսականին, այլ պատմութիւնը կը տեղադրէ Կարին քաղաքի պատմական, ընկերային, կրթական եւ աշխարհագրական ճոխ տեղեկութիւններու շրջապատին մէջ:

Պրն. Հոթոյեանի այս կերպ շարագրումը վերեւ յիշուած եւ այլ բազմաթիւ պատմուածքներու պարագային, բարեբաստիկ մօտեցում մըն է, որ մեծապէս կ'աւելցնէ պատմուածքներու շահեկանութիւնը:

«Անցեալի Յուշերով Կ'ապրինք» խորագրով հատորը կը պարունակէ քանի մը պատմական դրուագներ ներկայացնող պատմուածքներ, ինչպէս է. դարուն արաբ էմիր Աղպուղանի ճակատումը Արգաւան հայ իշխանի հետ, կամ ԺԴ. դարուն Լենկ Թիմուրի ունեցած փորձառութիւնը Իջեւանի շրջանի Գօշալանքին մէջ եւ այլն: Գիրքը կը պարունակէ նաեւ քանի մը հեքիաթային պատմուածքներ, ինչպէս ծպտուած թագաւորի մը հանդիպումը խելացի պատանի աշակերտի մը հետ: Սակայն պատմուածքներու մեծամասնութիւնը շատ հետաքրքրական ժամանակագրական պատկերներ են, ընդգրկելով 1915-էն մինչեւ մեր օրերը երկարող ժամանակաշրջանը, առաւելաբար հեղինակին մանկութեան, պատանեկութեան եւ երիտասարդութեան շրջանը: Աշխարհագրականօրէն պատմուածքները կ'ընդգրկեն Թուրքիան եւ Սուրիան, ի մասնաւորի Սասունը՝ Թուրքիոյ մէջ, եւ

Հալէպը՝ Սուրիոյ մէջ, ինչպէս նաեւ Լիբանանը, Եգիպտոսը, Հայաստանը, Ֆրանսան, Գանատան եւ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները: Գրքին մէջ ականատեսի աչքով տրուած առօրեայ կեանքի համայնքային, հասարակական, տնտեսական, քաղաքական եւ այլ կարգի առատ լուրերը կրնան որպէս աղբիւր գործածուիլ ապագայ պատմագիրներու կողմէ:

Այս բոլորը գրուած են պարզ, շատ յստակ, բոլորին մատչելի խօսակցական արեւմտահայերէնով, առանց կնճռոտ դարձուածքներու կամ բարդ ռմաբանութեան: Բայց Պրն. Հոթոյեան գրած է խոր զգացումով, սիրտը ափին մէջ, եւ իր զգացումները ընթերցողին փոխանցող հաղորդական լեզուով:

Գրքին վերջին պատմուածքը կը վերաբերի Պրն. Հոթոյեանի գրոյցին Կոմիտասի աշակերտ եւ շատ սիրուած երգահան Բարսեղ Կանաչեանի հետ: Պրն. Կանաչեան շատ յառաջացեալ տարիքի մէջ էր այդատեն եւ աչքերուն տեսողութիւնն ալ մեծ մասամբ կորսնցուցած: Երբ Պրն. Հոթոյեան կը հարցնէ իր որպիսութիւնը, Պրն. Կանաչեան կը պատասխանէ՝ ա՛խ քաշելով. «Տղա՛ս, ինչպէ՞ս ըլլամ, անցեալի յուշերով կ'ապրիմ»: Պրն. Հոթոյեան կը շարունակէ իր պատմութիւնը՝ գրելով. «Անհասկնալի թուեցաւ ինծի Պրն. Կանաչեանի պատասխանը, որուն իմաստը երիտասարդական տարիներուս չկրցայ ըմբռնել, մինչեւ որ ես ալ մտայ անցեալի յուշերով ապրողներու միութեան մէջ: Ես ալ ներկայիս «ինչպէ՞ս ես» հարցնողներուն իմ կարգին կը պատասխանեմ. «Անցեալի յուշերով կ'ապրիմ»»:

Բայց ո՛չ, Պրն. Հոթոյեան միայն անցեալի յուշերով չ'ապրիր: Այս պարագային, իր պատմուածքներու գիրքով ան կ'ապրեցնէ հին յուշերը, գանոնք կը վերակենդանացնէ, նոր կեանք կու տայ անոնց՝ փոխանցելու համար ապագայ սերունդներուն: Դուք, սիրելի՛ Պրն. Հոթոյեան, միայն յուշերով չէ որ կ'ապրիք: Դուք տակաւին կը ծրագրէք այսօրը եւ յառաջիկայ օրերը: Դուք տարիքը առած գործունեայ երիտասարդ մըն էք, որ, ինչպէս ըսի այս գրոյցին սկիզբը, հաւանաբար փափաքէիք, որ օրերը ըլլային աւելի երկար՝ կարենալ գործադրելու համար ձեր բոլոր ծրագիրները:

Պրն. Հոթոյեանի «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» պատմուածքներու գիրքը օժտուած է կուռ եւ գեղեցիկ յառաջաբանով մը, խրմբագրուած Հոգեշնորհ Հայր Մեղրիկ Ծայրագոյն Վարդապետի կողմէ, ուր ան հանգամանօրէն կը դրուատէ Պրն. Հոթոյեանի ձիրքերն ու առաքինութիւնները:

Գիրքը իր վերջաւորութեան կը վերադառնայ գրախօսականներու, գնահատականներու եւ վկայութիւններու հաւաքածոյ մը՝ վերաբերեալ Պրն. Հոթոյեանի «Ճաճանչներ» խորագրուած նախորդ գիրքին:

Գիրքը օժտուած է նաեւ արուեստագէտ Պրն. Յակոբ Ճանապետանի կողմէ յղացուած եւ գործադրուած շատ գեղեցիկ կողքով մը, ուր Հալէպն ու Թորոնթօն իմաստալից կերպով եւ գրաւիչ գոյներով նրբօրէն գուգորդուած են իրենց յատկանշական յուշարձաններով:

Վերջապէս, կ'ուզեմ ջերմապէս շնորհակտրել Ժողի ընտանիքը՝ Մայքըլը, Անին, Քրիստափորը եւ Ստեփան-Արմէնը, որոնք սիրով ստանձնած են գրքին մեկենասութիւնը: Պրն. Գրիգորը եւ իր կողակիցը՝ Տիկին Շաքէն, բախտաւոր են, որ ունին ձեզի պէս փեսայ, աղջիկ եւ թոռներ: Իսկ դուք ալ բախտաւոր էք, որ ունիք Պրն. Գրիգորին ու Տիկին Շաքէին նման ծնողներ: Իմ սրտագին մաղթանքս է, որ Քրիստափորն ու Ստեփան-Արմէնը միշտ ընթանան իրենց մեծ հօր ուղիով եւ իրենց ուսումնառութիւնն ու մտաւորական աշխատանքը շարունակեն նոյնիսկ դպրոցի աւարտէն վերջ:

Սիրելի՛ Պրն. Հոթոյեան, ձեզի ալ սրտանց կը մաղթեմ երկար, առողջ եւ տակաւին բեղմնաւոր տարիներ:

ՅԱԿՈՒ ԱԼԹՈՒՆԵԱՆ



## ՅՈՒՐԱԿԱՆ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԽՕՍՔՐ

Գերապատիւ Տէր Մեղրիկ Մ. Վրդ. Բարիբեան,  
Գերյարգելի Հայր Եղիա Մ. Վրդ. Գիրէջեան,  
Յարգելի գրասէր եւ մշակութասէր ազգայիններ,

Փառք կու տամ Աստուծոյ, որ իր օրհնութեամբ ինծի առիթ ընծայուեցաւ վայելելու եւ հասնելու ՏՅ տարիքիս եւ արժանանալու իմ գրական աշխատանքներուս արգասիք՝ 6-րդ գիրքիս հրատարակութեան առիթը կազմակերպուած շնորհահանդէս-գինեձօնին:

«Անցեալի Յուշերով Կ'ապրինք» պատմուածքներու սոյն հատորի պատմուածքներէս մաս մը գրուած են Հալէպի եւ Ռազգայի կիրակնօրեայ դպրոցներու մէջ ուսուցչական պաշտօնավարութեան ընթացքին, բարոյալից պատմութիւններով օգտակար դառնալու համար կիրակնօրեայ դպրոցներու աշակերտութեան հայեցի եւ քրիստոնեայ նկարագրի կազմութեան:

Ապա, Թորոնթոյի մէջ, Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ բազմաշնորհ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Մեղրիկ Մ. Վրդ. Բարիբեանի կողմէ հրատարակուող «Շողակաթ»

ամսագիրը առիթ ընծայեց գրելու եւ հրատարակելու նոր պատմը-  
լածքներ:

Գրուած բոլոր պատմուածքները արժանացած ըլլալով ընթեր-  
ցողներու գնահատանքին, որոշեցի հրատարակուած բոլոր պատմը-  
լածքները առանձին հատորով եւ «Անցեալի Յուշերով Կ'ապրինք»  
խորագիրով հրատարակել:

Մեր սիրելի Հայր Սուրբին նախաձեռնութեամբ եւ եկեղեցւոյ  
Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին կազմակեր-  
պութեամբ տեղի ունեցող սոյն շնորհահանգէս-գինեձօնին առիթով,  
ի խորոց սրտի շնորհակալութիւններս կը յայտնեմ Գանատայի Հայոց  
Թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Խաժակ Ս. Արք. Յակոբեանին, որ  
սիրով ստանձնեց ձեռնարկին հովանաւորութիւնը, Գերապատիւ Տէր  
Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանին՝ իր կատարած բոլոր աշխատանքնե-  
րուն եւ քաջալերութեան համար, հոգաբարձութեան, Քրիստոնէա-  
կան Դաստիարակութեան Յանձնախումբին, եկեղեցւոյ Կանանց  
Յանձնախումբին, օրուան հանդիսավար Տիկին Արմիկ Սաֆարեանին,  
հանդիսավար Տիկին Սիւզի Գալթակեանին, գիրքս ներկայացնող շը-  
նորհալի մտաւորական-բանասէր Պրն. Յակոբ Ալթունեանին, գեղար-  
ուեստական յայտագրին սիրայօժար մասնակցութիւն բերող տաղան-  
դաւոր երաժշտագէտ, յօրինող, դաստիարակ, խմբավար, երգչուհի  
Տիկին Անահիտ Կուտսուղեանին, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Զա-  
րեհ Ազնաւորեան» դպրաց դասի վաստակաւոր անդամ եւ նախկին  
դպրապետ, իր առինքնող ձայնով մեզ միշտ հմայող Տիկին Այտա Ա-  
թիկեանին, իմ հեղինակութիւններէս ասմունքողներ՝ Հ.Օ.Մ.ի Ամէ-  
նօրեայ Վարժարանի Զ-րդ կարգի աշակերտներ Արի Կարապետեանին  
եւ Արէն Մնացականեանին, որոնք օժտուած ըլլալով ասմունքելու  
Աստուածային շնորհներով՝ միշտ ընդառաջած են իրենց եղած հրա-  
ւէրներուն:

Սրտագին շնորհակալութիւններ ձեզի, գրասէր եւ մշակութասէր  
հայորդիներ, որովհետեւ միայն ձեր քաջալերութեան շնորհիւ տակաւ  
նօսրացող հայ գրողները կը շարունակեն գրել եւ հրատարակել իրենց  
հեղինակութիւնները:

Աստուածային օրհնութիւնը միշտ ըլլայ առաջնորդ ձեր կեան-  
քին ընթացքին: Ամէն:

## ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ ԾՆՆԴԵԱՆ 90-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹԻ



Հաստատուն մշտադալար ծառ՝ Սասնոյ լեռներուն վրայ, արմատներէն բրտորէն պոկուած ոճրագործ, անգութ ձեռքերու կողմէ, որ պանդուխտի ցուպը ձեռին՝ կը թափառի քաղաքէ քաղաք ու երկրէ երկիր, վերջին հանգրուանը՝ Թորոնթօ:

Պարզ, համեստ, խոնարհ անձ, բազմազան առաքինութիւններով ու ձիրքերով օժտուած, միշտ հաւատարիմ իր սասունցիական արմատներուն ու դադափարական իր համոզումներուն: Քիչերէն է, որ իր համեստ ապրուստը ապահովելու

աշխատանքի կողքին՝ չէ վարանած իր տաղանդն ու գրական կոչումը մղելու ու հոգին պարպելու փորձերէն:

Ան հայերէն լեզուի իր հմտութիւնը ձեռք բերած է ինքնաշխատութեամբ, գրաշարական աշխատանքով՝ զանազան հայ տպարաններու մէջ, ապա հետեւելով հայագիտական դասընթացքներու: Զինք քանիցս առիթը ունեցած եմ տեսնելու Հայէպի «Արեւելք» օրաթերթի տպարանին մէջ, սակայն որեւէ կապ կամ խօսակցութիւն ունենալու չեմ յիշեր իրեն հետ: Հարկ է նշել, որ այդ շրջանին ընկերոջս՝ Զաւէնին վստահուած էր «Արեւելք» օրաթերթի մարզական լուրերու բաժնին պատասխանատուութիւնը, սակայն օրաթերթը զուրկ ըլլալով նիւթական միջոցներէ անդամակցելու լրատուական գործակալութիւններու, մարզական լուրերը Զաւէնը եւ անձս կը հայթայթէինք օրաթերթին՝ երեկոները ժամը 5-ին ունկնդրելով Մոնթէ-Գարլոյի կայանէն ձայնասփռուած մարզական լուրերը կարճ ալիքի վրայ: Յաճախ դժուարութիւն կ'ունենայինք յստակօրէն ունկնդրելու կատարուած հաղորդումները, որոնք քողարկուած կ'ըլլային երկարատեւ աղմուկներով (parasites), ինչ որ պատճառ կը դառնար թերթին փոխանցելու նաեւ անկատար ու թիւր լուրեր...:

Գրիգոր Հոթոյեանին մօտէն ծանօթանալու ու իրեն հետ գործակցելու բախտը ունեցած եմ Գանատայի մէջ՝ Համազգային Հայ Մշակութային Միութեան կազմակերպած համախմբումներուն ծիրէն ներս: Ան, մեղմ ու գիտակից անձ, մեծապէս տպաւորած էր զիս. հաճոյք էր իրեն հետ գործակցիլը եւ հայկական ու զանազան նիւթերու



չուրջ իրեն հետ կարծիք փոխանակելը: Գաղութահայ կեանքին վերաբերեալ իր բոլոր գրութիւնները հաճոյքով կարդացած եմ «Հորիզոն» շաբաթաթերթին մէջ եւ միշտ հիացած ու տպաւորուած իր պարզ, մաքուր ու սահուն հայերէնով արտադրուած ոճին ու մանաւանդ իր պարտաճանաչութեան վրայ: Իր բոլոր հրատարակած հատորները, որոնցմէ ազնուութիւնը ունեցած էր օրինակ մը ինծի առաքելու, մասամբ միայն կարդացած էի բժշկական ծառայութեանս շրջանին՝ բաւարար ժամանակ չունենալու պատճառաւ: Վերջին ամիսներուն ընթացքին ամբողջութեամբ կարդացի ու մեծ հաճոյքով ըմբռնեցի հատորներուն պարունակութիւնը՝ մեծապէս տպաւորուած անոնց թէ՛ քանակէն եւ թէ՛ որակէն. ուսումնասիրութիւններ Ռագալի, ինչպէս նաեւ հայ տաղանդաւոր գրագէտներու մասին, պատմուածքներ, թղթակցութիւններ Թորոնթոյի ազգային կեանքին, ինչպէս նաեւ հոն կատարուած ձեռնարկներուն մասին, զանազան առիթներով արտասանուած խօսքեր ու շարան-շարան տպաւորիչ քերթուածներ, որոնց մէկ մասը երգերու վերածուած՝ դաշնաւորութեամբ ծանօթ երաժշտագէտներու:

Վերջին տասնամեակներուն, դժբախտաբար, պատանեկութիւն ու երիտասարդութիւն գերին դարձան համացանցին՝ անտեսելով գիրք կարդալու սովորութիւնը: Այս առնչութեամբ անոնցմէ մին, վիճաբանութեան մը ընթացքին արտայայտուելով Ֆրանսացի անուանի գրող Անաթոլ Ֆրանսի մէկ գրութեան մասին, ուր ան կը նշէր թէ «գիրքերը կը սպաննեն մեզ՝ մեռցնելով մեր մտաւոր անկախութիւնն ու ինքնատիպութիւնը», բարձրաձայն այսպէս խոսեցաւ՝ «մեծանուն գրագէտը, անոր արտայայտած կարծիքը գտնելով սխալ ու մեծապէս վիճելի»:

Նոր սերունդին համար հայ գիրք կարդալը ու հայ գրականութեան զարգացումներուն մօտէն հետեւելը անհրաժեշտութիւն է ու հրամայական, որպէսզի անոնք հաղորդուին հայ ժողովուրդի անցեալով: Գրականութեան միջոցաւ է, որ մարդուն ներաշխարհի բոլոր խորունկ ապրումները, մտածումները, յուզումներն ու խռովքները կը փոխանցուին հայ մատղաշ սերունդին:

Գրիգոր Հոթոյեան գրագէտ ու արուեստագէտ մըն է, որ յաջողած է իր գրութիւններուն միջոցաւ մեր աչքերուն առջեւ դնել դէպքեր հայ պատմութենէն ու հայ մեծ գրագէտներու կեանքէն՝ ընթերցողը մղելով յուզուելու ու սուզուելու իր գծած տեսարաններուն ու դէպքերուն խորքը: Իր գրականութիւնը հարազատ արտայայտութիւնն է հայ ժողովուրդի հոգեմտաւորական ապրումներուն ու բիւրեղացած զգացումներուն: Գրագէտի իր կոչումը ներքին յուզական խլրտում մըն է, որ Գրիգոր Հոթոյեան յաջողած է փոխանցել ընթերցողին: Ան ունի գրելու ինքնուրոյն եղանակ մը ու մանաւանդ՝ նիւթերու այլազանութիւն, որ գինք կը զանազանէ ուրիշներէն: Ան իր արձակ գրու-

թիւններուն ու քերթուածներուն իւրաքանչիւրին մէջ իր հոգիէն առանձին շեշտ մը, խանդ մը դրած է արտաբերութիւններուն մէջ՝ դարձնելով իր գրութիւնները պարզ, սակայն անձնադրոշմ:

Գրիգոր Հոթոյեանի շատ մը գրութիւններուն մէջ նկատելի է կիրքը, որ իր մօտ յառաջացած խռովքն է, մասնաւորաբար երբ գրութիւնները կը վերաբերին Հայ ժողովուրդին դէմ գործուած անարդարութիւններուն: Այդ կիրքը, փոթորկելով իր ներաշխարհը, իրեն առիթ կ'ընծայէ երբեմն շիկացած բառերով արտայայտել անարդարութիւններն ու ապօրինութիւնները՝ պարպելու համար իր հոգիին մէջ կուտակուած փոթորիկները:

Գրիգոր Հոթոյեան նկարագրի տէր ու անաչառ գրագէտ մըն է, ու իր կոչումը եղած է ընթերցողին խօսիլ ճշմարտութիւններու անունով: Անդրանիկ Ծառուկեանի նուիրուած իր գրութեան մէջ ան մեծապէս կը գնահատէ անոր ցուցաբերած գրական բացառիկ տաղանդը, հակառակ կեանքին վերջաւորութեան ընթացքին գաղափարական գետնի վրայ անոր ունեցած սայթաքումին: Ան գրելու արուեստի գործին մէջ մերկացած է բոլոր կաշկանդումներէ, ու իր գրելու եւ դատելու ազատութիւնը առաջնահերթ պայման նկատած է:

Գրիգոր Հոթոյեան, արմատներով սասունցի, իր գրութիւններուն մէջ անդրադարձած է Սասնոյ ժողովրդական բարքերուն ու սովորութիւններուն, զորս փափաքած է անկորուստ յանձնել ապագայ սերունդներուն ու պատմութեան: Կրօնք, հաւատալիքներ, ծնունդներու ու մահերու առիթներով արտադրուած գրութիւններ՝ կը կազմեն անբաժան մասը բառացուցականին: Ան գրած է Տարօն աշխարհի ու Սասնոյ հողերուն մասին, հողեր՝ շաղախուած արիւնովը այն կտրիճներուն, որոնք կուրծք տուած են թուրք բանակներու գրոհներուն ու իրենց կեանքի գնովը պաշտպանած զանոնք:

Ան հարագատ գաւազն է մայր հողին ու խորապէս կապուած, շաղախուած անոր, հակառակ Սփիւռքի փիերուն մէջ իրեն պարտադրուած կեանքին:

Ներկայ Հայաստանը կառուցուած է Հայ ժողովուրդին քրտինքով ու ան մեծ յարգանք ունի իւրաքանչիւր Հայ անհատի ցուցաբերած զոհողութեան ու թափած ճիգին հանդէպ:

Որպէսզի կանգ չառնէ ներշնչումը, Գրիգոր Հոթոյեան, հակառակ իր յառաջացած տարիքին, մտքով եւ գրչով երիտասարդ է ու մշտավառ կը պահէ գրելու խորոյկը իր հոգիին մէջ՝ գրելով անդադար ու աշխատակցելով բազմաթիւ գրական հրատարակութիւններուն:

Քանակով ու որակով բարձր իր քերթուածներուն մէջ մտածումի ամէն ցուք կը կրէ իր մօտ բանադատութեան դրոշմը, բաղդատմամբ կարգ մը գրողներու, որոնց քերթուածներուն մէջ արտայայտուած լեզուական բարձր ոճին ու ճոխ բառամթերքին կը պակսի տրամաբանութիւնը՝ դարձնելով գրութիւնը անիմաստ...:

Գրիգոր Հոթոյեանի հրատարակած հատորները ձեռով մը արտասուցողացումն են անցնող դարու ընթացքին հայ ժողովուրդին դէմ գործադրուած ջարդերուն, տեղահանութիւններուն ու անարդարութիւններուն, եւ անոնց անմիջական հետեւանք՝ մեզի պարտադրուած Հայ Սփիւռքին համառօտ պատմութիւնը: Ան առանց վարանումի կը հաստատէ իր անխախտ ու վճռական հաւատքը հայ ժողովուրդին յաւերժականութեան նկատմամբ: Փոխ առնելով Խալիլ Ճալաւանի մտածողութիւններէն հետեւեալը՝

«Կը քալենք ծովեզրին վրայ, աւազին ու փրփուրին միջեւ,  
Ծովուն մակընթացութիւնը պիտի ջնջէ մեր քայլերուն հետքերը,  
Հովը պիտի հեռացնէ ծովափին փրփուրը,

Սակայն ծովն ու ծովեզրը յաւերժական են»,

նոյնպէս Հայրենիքի թէ Սփիւռքի ափերուն վրայ սերունդներ պիտի գան ու անցնին, սակայն Հայաստանն ու հայ ժողովուրդը յաւերժական են:

Սիրելի՛ Գրիգոր, կը խոնարհիմ քու տպաւորիչ գրական վաստակիդ առջեւ՝ քեզի մաղթելով առողջութիւն, երկար կեանք ու նորանոր յաջողութիւններ: Վարձքդ կատար՛:

ԲԺ. ՕՀԱՆ ԹԱՊԱՔԵԱՆ



## ԽՈՆԱՐՀ ՈՂՁՈՅՆ ՁԵՉ, ԹԱՆԿԱԳԻՆ ՅՈՒԲԼԵԱՐ

Սիրելի՛ 90-ամեայ Պրն. Հոթոյեան,

90 տարին կատակ չէ. այս կը նշանակէ յաղթել բնութեան:

Իսկապէս Սասունի կտրիճներու արիւնը ցօղեց ու ջրեց Ձեզ:

Այսօր այդ հունձքը հասած է, պէտք է քաղել: Մեզի կը մնայ գերանդին ձեռքերնիս առնենք՝ գիրքերուդ կամ հատորներուդ հասած հունձքը քաղելու համար:

Ձեր գրելու յաջողութիւնը շատ յեղ երկնից շնորհք մըն է, բայց առանց երկրի վրայ աշխատելու՝ վերէն յաջողութիւն չ'իջնէր: «Յաջողութիւնը պատրաստ է իբրեւ արեւ ու անձրեւ, բայց եթէ ազարակը սերմանուած չէ՝ ի՞նչ բուսցնեն երկնից շողն ու ցօղը» (Ղեւոնդ Ալիշան):

Գիտեմ, Պրն. Հոթոյեան, շատ կ'ուզէիր, որ այս 90 տարիներդ անցած չըլլային, բայց այդպէս է բնութեան օրէնքը. տարիքը պիտի գայ եւ անցնելիքը պիտի անցնի, սակայն ամենակարեւորը՝ Ձեր հատոր-

ները այժմ խմբուած են, ամէն փորձանքէ ապահով՝ մեր գրադարաններուն մէջ անոնք շարուած են կողք-կողքի, աննինջ ու խորհրդաւոր, ինչպէս տարիներու խորքէն բանուկ մայրուղիներով անցած, ամէն բան տեսած ու լսած անխոնջ ճանապարհորդներ: Հետեւորդ սերունդներուն համար այս գիրքերուդ շնորհիւ պիտի պահպանուի զարգացող բազմահնչիւն, գունեղ ու ճկուն հայոց լեզուն:

Ապրի՛ր երկար, սիրելի՛ Հոթոյեան. Ձեր հոգին ամէն ժամանակ փիղ մէջ է, ինչպէս Սաղմոս 119:109 համարին մէջ կ'ըսէ:

Թող երջանիկ ու առողջ ըլլայ Ձեր կեանքի երկրորդ ինիսունամեակը:

Ամենաբարի ցանկութիւններով՝  
ՍԵՂԱ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ

5 Օգոստոս 2017, Թորոնթօ



Գրիգոր Հոթոյեանի 80-ամեակին նուիրուած ձեռնարկին՝  
Սասուն Գրիգորեան եւ Գրիգոր Հոթոյեան

**ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ**



ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ՎԵՐՍՏԻՆ ԿԱՐԴԱԼՈՎ

ԵՐԳԵՐՈՒ ՀԵՐԿԵՐ

Հերկերուն մէջ մարմանջահոս արեւաբոյր կեանքի կարօտ ու սիրոյ երգեր:

Հարկինքներու մէջ արբեցած վերընձիւղման բաւիղներու աստղածորան նուիրումի ջերմ ու ՀԱՍՈՒՆ ԵՐԿԵՐ այնպէս բացուած՝ սէր բարբառող գիրքերուն պէս, անմահութեան երթողիով ժամանակներն յաղթահարող մուտք գործելով պատմութեան մէջ մեր վաղեմի, մեր նորընծայ հնչուն երգեր նոր հերկերուն:

Արտամորմոք ճամբորդութեանց անխոնջ հեւքեր ծորան-ծորան:

Հոթոյեանի բանաստեղծութիւնը իր հոգեիմացական յափշտակութեամբ եւ միաժամանակ ապրումային իրապաշտութեամբ դրսեւորումներ են, որոնք ժամանակներու պատեհութիւններու մէջ կ'ընդգրկեն իր շրջապատի անցեալի եւ ներկայի բացայայտուած անձնական ապրումները, կը խմորեն բանաստեղծի կեանքի բոլոր ելեւէջներու յիշատակները, կարօտները եւ ազդեցութիւնները:

Բանաստեղծութիւն կը բուրեն, էջերէն ժայթքող, հասունցած սիրոյ արբշռանքի խառն գեղումները: Սիրահարութիւն, անխելագար խնդութիւն, սիրահարութեան հաճոյքով աւելի իմաստազօրացած սէրը՝ սակայն միշտ վեհ հրճուանքի, ազնիւ տենչանքի:

Սէր էին ածուներու մէջ յիւրացած կարօտներու ընդերքներէն՝ բեհեզի նման մանուշակացած, ուռճացած եւ արեւներէն աճած, հոգեթով եւ հոգեւոր աճումները:

Սէր է, սէր՝ մղկտալի հաճոյք, որ իր նօսրացումի գրոհներուն դէմ կրնայ տոկալ հարուածներու, բայց կը մնայ իր թանձրութեան մէջ, իբրեւ հոգիներու խունկերու բուրվառ, կը ներգրաւէ, կը տիրապետէ շնչող բնութեան հետ, կը կենդանացանէ յաւերժութեան ժպտուն ապրումը:

Սէր, սէր եւ սէր:

Սիրահարութեան բնոյթի խաղով կը հաւաքէ ժպիտները, կը կազմէ ծաղկեփունջ եւ այդ ծաղկեփունջը կը նուիրէ այն աղջկան, որ մեղամաղձ մխիթարութեամբ կ'ըսէ՝

Սիրատեւչիկ նայուածքներով  
Կամրջեցիր սիրտդ արտիս,

Իմաստ տուիր ունայն կեանքիս՝  
Ըղձանգներու մարմին տալով:

*Բանաստեղծութիւն ըսած ենք, Բանի խնդութիւն, գեղեցկութիւնը բանաստեղծութեան մէջ, եւ որքան դժուար է սրտեր կամրջող այս գեղեցկութեան մէջ որոնել կենսագրութիւն, եւ բանաստեղծը յուսահատութեան հողմերուն դիմաց ըղձանքներու, սիրոյ քուրայի մէջ վէտվէտումները հարթելով՝ անոնց զօրութեամբ կը դառնայ երգիչը իր տուայտանքին: Կը մեղմանայ խուժանքի գրգիռը, կը մնայ կապուած աղերսանքը յաւերժին:*

*Շարլ Պօտրլէրի ներշնչումով՝ Չարենց եւս այդ հոգեվիճակին մէջ ընկղմած կ'երգէր:*

*Կարդանք այդ նշանաւոր խորհուրդը մեծ եւ գերագոյն արբեցումի՝*

Արբեցէք,  
Արբեցէք,  
Գինիով, Բանաստեղծութեամբ,  
Առաջինութեամբ,  
Ըստ ձեր ընտրութեան,  
Բայց արբեցէք:

*Եւ բանաստեղծը յուսահատութեան հողմերուն դիմաց, ըղձանքներու սիրոյ քուրայի մէջ վէտվէտումներ հարթելով՝ անոնց զօրութեամբ կը դառնայ երգիչը իր տուայտանքին: Կը մեղմանայ խուժանքի գրգիռը, կը մնայ աղերսանքը յաւերժին եւ անոնց զօրութեամբ կարմիր գինի՝ վերացումի իբրեւ խորհրդանիշ:*

*Իսկ հայ բանաստեղծը մթնշաղին մէջ սէրեր տենչալով՝ կը խոստովանի.*

Երկար ատեն առանց սիրոյ ապրեցայ  
Անյուսութեան բաւիղներու մէջ մթին,  
Խաբուած սիրոյ տառապանքը անխնայ  
Կեանքս դարձուց մեղամաղձոտ վերստին:

*Ապաւինելով Ֆրանսացի բանաստեղծի սիրոյ արբեցումին, ան կը վերջացնէ իբրեւ տխուր շփոթանքներէն հրաւէր զգաստութեան, կը փնտռէ անկեղծ սէրը եւ այդ սիրով է, որ կը մխրթարուի: Արեւմտահայ մեր համեստ ուսմանթիքներու անկեղծ, գեռ ջահել մեր հայկական Պոլիսէն սիրահար, հիւանդ հանճարեղ պատանիէն մինչեւ «գաշտի ճամբու մը վրան» տուն-տեղ որոնող հեշտագին գիշերներու որոնումով միւռնոսուած Հոթոյեան կ'երգէ՝*



Աստղածորան գիշերով  
Կը թափառիմ դաշտերով,  
Ծաղիկներու բուրմունքէն  
Կը վերանամ ես նորէն:

Բանաստեղծը այստեղ կը միացնէ բնութիւնը բանաստեղծութեան շունչին տակ, կը հաւաքէ սրտային միագոյն մարտիրոսները եւ այդ ուժգին հաւատքով կ'երգէ հայրենիքը, որմէ ստացած ապրումները չեն վերածուիր միայն տեղավայրերու յուշումներու, այլ կը դառնան աղօթք, զի քաղցր է շարականը մեր երկրին:

Տակաւին ներշնչումի ներհայեցողութեան մեկնումները կը վերածուին բնագանցական արտայայտութիւններու եւ համեստօրէն գլորուող առուակներու նման կ'ուռճանան իր հերկերու ընդերքներէն ուռճացող մարգերուն տակէն թաքուն հոսող դողերու նման: Եւ այս պոռթկացող արտորանքին մէջ, ինքզինք տուած մխիթարութեան, կը համակուի քաղցրիկ կարօտով՝ հարց տալով.

Հովին տուած մագերդ խօլարձակ,  
Վզիդ հագած ցանցալուր նուրբ մանեակ,  
Ուրկէ՞ կու գաս, քնքոյշ աղջիկ միայնակ,  
Ոլոր-մոլոր ցամբաներէն շարունակ:

Շարունակեցէք կարգալ: Իսկապէս կրակ ժայթքող բարի բանաստեղծի զայրոյթէն հրատոչոր տողերը եւ այս քնքոյշ էակին ներաշխարհի հայելիին մէջ կը ցայտէ ձեր հոգիներուն մէջ հուժկու բերկրանքով, նոյնքան հուժկու համակրանք, որքան սէր, Աստուած իմ, որքան զսպուած աղերսահար ճիչեր, սիրոյ հերկերէն պոռթկացող շփոթանքի խագերէն մակերես եկող ակօսացած յուշումներու եղանակներ:

Այսպէս տարուած իր հրեղէն կառքի ընթացքէն, մենք մեզի կ'ասմունքենք՝ սիրոյ պսակը դնելով մեր ճակտին: Մէրը կը մնայ խաղաղութիւն ըմպած իր հոգիի ծալքերուն մէջ, կը փորձուինք տարուիլ անոր ընծայած թարմ խմորումներու հաղորդութեան, պատարագուած մասերէն աճած: Դիմեցէք միւռոն կաթիլթող իր բառերուն, զեղուն եւ հոգեղէն համեմներով օրհներգուած անտունիներուն: Եւ լացին յուզականութիւնը մեղմացուցած՝ կը վայելէք աշխարհաշրջիկ բանաստեղծին թախծապատ երանութիւնը, ժպիտներու ծիւրով պարուրուած: Բանաստեղծի ծնունդ առած օրէն, ջուրէն, անոնց սերմերով յղացած է, մանկութեան ծնանած է Տարօնի, Սասնոյ եւ մեր նորաշունչ աշխարհի՝ Հայաստանի հոգեկան խայտանքները քով-քովի քարտիզաւորած, կարծէք ենթագիտակցած ալեքաղի մը (ոստար) յաջորդականութեան մատեանը կը վայելենք: Ապրումները աչքի եւ սրտի սեւեռումները դարձուցած են կեանքի հանգրուաններ:

Հայրենասիրութեամբ, գաղափարական նուիրումով կը ջրգեղուի հաւատքը հայութեան ազատագրական քուրային մէջ եւ ինք անոր որդեգիրը, ինչպէս Վազրիկը, իրաւատիրութեան ջահակիրը կը հանդիսանայ եւ իր ազատագրական պայքարի կուռ կուանը քնքշութեամբ կը վերածէ խոյանքներու տաւիղին:

Տաղանդաւոր բանաստեղծութիւնը խինդ է, աւանդութիւն է մեր լուսաւազանին, անիրաւ աշխարհին դէմ, որքան տոկուն հայկականութիւն է թոհուբոհները այգեստանի վերածող, հայ դաշտերը մշակող կամք, որքան ազգահիւթ գեղում է: Եւ համաշխարհային մշակոյթներու ովկիանոսի մէջ թիավարող Գրիգոր Հոթոյեան, արեւներով թրծուած երկինքներու օրհնութեամբ թրծուած՝ կը հասնի մեզի:

Հէ՛յ Սասնոյ լաճ,  
Յետոյ ո՞ւր, յետոյ ո՞ւր,  
Արի գնանք մըր էրգիր:

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ  
Գրող, հեղինակ, պատմաբան,  
խմբագիր, հրատարակիչ, դաստիարակ



## ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ «ՍԻՐՏԸ ԱՓԻՆ ՄԷՋ»Ը

«Հայաստանի սիրտէն՝ Սասունի սրբազան լեռներէն ժառանգած սիրտիս մէջ բոցավառող կրակը զիս երբեք հանդարտ չէ ձգած եւ պիտի չձգէ մինչեւ մահ, որովհետեւ արմատներս կը սերին անձնագոհ Ֆետայիներու այն փաղանգէն, որոնք իրենք կեանքը գոհաբերեցին հայ ժողովուրդի ազատութեան ճանապարհին:

«Եւ եթէ հոգեկան խռովքներէս, մտածումներէս եւ ապրումներէս բխած ազգային, ազատագրական, մարդկային եւ քնարերգական սոյն քերթուածներով կարողացայ ապրումներս փոխանցել ընթերցողներուս, ժողովուրդիս փոքր ծառայութիւն մը մատուցած ըլլալու անսահման գոհունակութիւնը պիտի ունենամ»:

Ահա այս է, որ ընթերցողին է նուիրում Գրիգոր Հոթոյեան իր բանաստեղծութիւնների փնջով, որ անուանել է «Սիրտը Ափին Մէջ»:

Իբրեւ բանաստեղծ, որ չէր կարող անտարբեր մնալ իր հայրենիքի բախտէն ու պայքարէն, Գր. Հոթոյեան իր խոկումներն ու ապրումներն-

ըր արտայայտել է գրչով. «Հայաստան», «Մ. Մաշտոց», «Փա՛ռք Հայ Յեղափոխական Դաշնակցութեան», «Մայիսի օր մը՝ պայծառ ու չքնաղ», «Գէորգ Չաւուշ», «Գալէ Սպաղանցի», «Զօր. Դրօ Կանայեան», «Ապրիլ 24» եւ ուրիշներ, որ ամփոփուած են բանաստեղծական երեք տարբեր շարքերում. «Հայրենական եւ ազգային շունչով», «Յեղափոխական ոգորումներ», «Եղեռնի հետքերով»:

Մէր, կարօտ, բնութեան սէր, ինչպէս «Բնութեան հետ», «Դաշտերուն մէջ», «Գիշե՛ր», «Յիշե՛՛ զիս» քնարական բանաստեղծութիւնները, որ հեղինակը ներկայացրել է «Սրտայոյզ խոկումներ», «Բնութեան հետ» եւ «Սիրային տազնապներ» առանձին բաժիններում:

Գիրքը լոյս է տեսել Թորոնթոյում, 1987 թ. Կարօ Փաշայեանի «Պարոն» տպարանում, ձեւաւորողն է արուեստագէտ Պետրոս Պետրոսեանը:

Կ. ԲՈՒՇԵՐԻԱՆ

«Ասպարէզ», 16 Յունուար 1988



## ՆՈՐ ԳԻՐՔԵՐՈՒ ՀԵՏ

### «ՍԻՐՏԸ ԱՓԻՆ ՄԷՁ»

(Գրիգոր Հոթոյեանի գրքին առիթով)

Գրիգոր Հոթոյեանի «Սիրտը Ափին Մէջ» գրքի մասին արտայայտուելու ատեն, ես պիտի կատարեմ կարգ մը անհրաժեշտ մէջբերումներ այդ հատորէն, որովհետեւ նոյնիսկ ամէնէն հմուտ ու խորաթափանց անձին մօտեցումը կարծիք մըն է միայն ու չի կրնար տալ բնագրի ընթերցումին վայելքը: Եղիւր ճարտար ու քաղցրախօսիկ բեմբասաց, դարձեալ չես կրնար դոյզն չափով իսկ փոխարինել երաժշտական կտորի մը ունկնդրութիւնը:

«Սրտի Ափին Մէջ» գիրքը կը բաղկանայ աւելի քան եօթանասուն քերթուածներէ՝ բաժնուած վեց մասերու:

«Հայրենական ու ազգային շունչով» ենթախորագիրը կրող բաժնին ութ քերթուածներու առաջին տողերէն իսկ կը զգաս, թէ հեղինակը հասակ առած է ազատատենչ հաւաքականութեան մը մէջ: Ան կը խօսի ազատութեան սիրոյ մասին, անանձնական նուիրումով բացառիկ հերոսներու, հայոց դրօշի, Արարատի, Տարօնի, Վանի, խըն-

կելի վանքերու, Նարեկացիի, Շիրակացիի, ազգակերտ Մեսրոպի, Վարուժանի, Չարենցի եւ վերջապէս «մշակոյթի օթեւան՝ լուսաճաճանչ Հայաստանի»:

Այսպէս, յաջորդաբար, իւրաքանչիւր քերթուածի մէջ կը յիշուին նաեւ էրեբունին ու Սարգարապատը: Կը խօսուի Հայոց լեզուի մասին, որպէս «Զմայլելի երաժշտութեամբ մեղեդի վարարուն», «Մեր հնամեայ տաճարներէն վեր բարձրացող աղօթքի սիւն», «Անդնդախոր մեր ձորերէն հոսող ահեղ գետի նման կը սուրաս, յար վազքով անսանձ դէպի պայծառ մեր ապագան»:

Թէեւ գովերգ մըն է Հայոց լեզուին նուիրուած այս քերթուածը, բայց խորքին մէջ պատգամ մը կայ ուղղուած նոր սերունդին, ու նոյն ատեն ձեւով մը կը բացատրէ այս գիրքի լինելութեան իմաստը, երբ կ'ըսէ. «Երկրագունդի չորս ծագերուն սփռուած Հայ բեկորներուն, ճանապարհը կորսնցուցած գաւակներուն փարոս ես դուն, Սուրբ Սահակէ եւ Մեսրոպէ փոխանցուած սերունդներուն, հասած մեզի նոր աւիշով, լուսապայծառ մայր սիրասուն»:

Այսպէս, նոյն ջերմեռանդ ոգիով կը շարանակուին այս հատուածի մնացեալ քերթուածներն ալ:

«Յեղափոխական ոգորումներ» խորագրուած բաժնին մէջ կը բնորոշուին Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութեան բնոյթն ու ֆետայիններուն գործը, ինչպէս նաեւ անկախութեան երազը: Կարդացէք օրինակ՝ «Մայիսի օր մը՝ պայծառ ու չքնաղ» բանաստեղծութիւնը, գտնելու համար հետեւեալին նման տողեր. «Եկար փարեցար վերջին ամրոցին, Լուսաւորչի կանթեղով զինուած վէ՛ս Արագածին: Լքելէ յետոյ ծովակը Վանի, զրահ դարձուցիր լիճը Սեւանի, ալ նահանջ չկա՛ր, ո՛չ ալ պարտութիւն, ազատ էր հայը իր հողին վրայ ու կերտը-լեցաւ Անկախ Հայաստան, հայկական բանակ, եռագոյն դրօշակ, որպէս յուսատու փարո՛ս մշտավառ, հայ բեկորներու անմար երազին, ազատ ապրելու անոնց խոր կամքին՝ Մայիսի օր մը՝ պայծառ ու չքնաղ...»:

Երբ կը մտածեմ՝ այս եւ նման տողերէն ո՛ր մէկը թուել, յանկարծ կը հանդիպիմ շիրագեան մօտեցումով սա տողերուն. «Հայ տան, հայ ազգին ակունքը վճիտ, հայ մայրն է միայն կաթով անապակ, եթէ չբերես հայ կին քու տունիդ, պիտի ուծանաս, որդի անժառանգ...»: Կասկած կրնա՞յ ըլլալ որ այս տողերը մաս կը կազմեն «Կոչ Հայ երիտասարդութեան» քերթուածին:

«Եղեռնի հետքերով» յորջորջուած հատուածը չեմ կարծեր, որ վերլուծումի կարօտի, քանի որ «Զրոյց Եփրատին հետ» քերթուածին մէջ մորմոքած սիրտով կ'ըսէ խօսքը՝ գետին ուղղելով. «Իմ աչքերս չտեսան, բայց դուն տեսար ամէն բան», ու կ'երկարի մտերմախօս հարցումներուն շարքը, հասնելու համար հետեւեալ խօսքերուն. «Կ'ուզեմ գիտնալ հայրենական, ինչպէ՞ս է հիմա հայէ պարպուած

Հայրենիքը մեր, կանգուն կը մնա՞ն մեր սուրբ վանքերն ու տաճարները՝ հոգեպարար կառուցուածքով, կը լսուի՞ մրմունջն աղօթքի, կը մատուցանուի՞ անմահ պատարագ, կ'արձագանգե՞ն հնդիւնները մեսրոպեան Հայոց լեզուին անմահական, սարերուն եւ ձորերուն մէջ Հայրենական...»:

Այսպէս՝ հասնելու համար սա տողերուն. «Մենք կանգնեցինք յուշարձանը Եղեռնի որպէս պատեան Հայ ոգիին կենդանի, որ պատգամէ քարսիրտ դարձած աշխարհին, հայ սուրբ դատի հանգանակը եւ ուղին, բռնադրուած Հայ հողերը վշտախոռով, վերադարձուին՝ խաղաղութեամբ կամ գէնքով»:

Ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ «կամ գէնքով» խօսքին, ուր հեղինակը ըսել կ'ուզէ, թէ մենք համբերատարութեամբ կը դիմենք երկխօսութեան՝ շահագէտ դիւանագէտներուն, սակայն երբ դանակը կը հասնի ոսկորին, մենք գիտցած ենք նաեւ գէնքի դիմել. այս կէտը ծանօթ ըլլալու է ձեզի պատմութենէն, ո՞վ նենգաւոր քաղաքագէտ աճպարարներ: Այս տպաւորութիւնը կը կրեմ ես այս մէկ հատիկ «կամ գէնքով» խօսքէն: Դուն ի՞նչ կ'ըսես, ընթերցող:

Էսպէս կը տարբերին «Սրտայոյզ խոկումներ» բաժնի գրութիւնները մնացեալներէն, կարծես այն պատճառով, որ գրուած ըլլալ կը թուին յուզական վիճակի մը անմիջական ազդեցութեան տակ, մտերմական խօսքերով ու խոհերով: Նոյն այս բաժնի մէջ, «Ո՞վ ընկեր» քերթուածը կարծես ուղղուած է ինք իրեն, իր ներքին անձին, — տեսակ մը մենախօսութիւն իր երազներու մասին, ընկրկումներու, նախանձորդներու. տեսակ մը ներքին պայքար... «Կարօտ մայրական»ը յուզիչ է՝ նման բոլոր մայրերու նուիրուած գրութեանց: Ուշագրաւ է «Կարօտ մանկութեան» քերթուածը, ուր անհուն ըզձանքով կը նայի իր անցած մանկութեան, կ'ուզէ դարձեալ «ըլլալ մանկանց հետ, վազել, երգել երջանիկ», կ'ուզէ նաեւ, որ վշտալի տարիները երազ դառնան, հեռանան, որպէսզի «նոր մանկութիւն ու նոր կեանք ողջունէի անվրդով»: Գուցէ ասիկա իր լաւագոյն քերթուածներէն է՝ իր անմիջականութեան համար:

«Բնութեան հետ» խորագրուած հատուածը, իր ութ ոտանաւորներով, մտածել կու տայ այն նկարիչներուն, որոնք առաւելաբար բնութեան տեսարաններ կը գծեն, բայց իրենց յաջողագոյն գործերը դարձեալ կը մնան դիմանկարները: Գիրքի վերջին հատուածը՝ «Սիրային տազնապներ», կը պարունակէ երեսուներկու քերթուած: Կան որ որոշ չափով կը պարզեն սիրողի մը տուայտանքները: Կան ալ որոնք կարգ մը «տուներու» մէջ, հակառակ քիչ մը մանկական միամտութեամբ ներկայացուած ըլլալնուն, — մի մոռնաք որ պատանեկան օրերէ կը մնան ատոնք, — կը պարզեն իրաւ զգացումներ, ինչպէս օրինակ հետեւեալ տողերը. «Կը բողոքես, թէ ինչո՞ւ ես յայտնած եմ ու-

ըրիշին մեր երազը, մեր սէրը, մեր իղձերը՝ զերդ մանուկ, բայց դուն ինչպէ՞ս կ'ուզէիր բոցավառուի իմ հոգին, մինակուլթեան մէջ իսանձի՝ մեր գաղտնիքով ծանրաշուք: ...Բայց ես ըսի դաշտերուն, թռչուններուն, ծառերուն, զիս ուխտադրո՞ւթ կ'անուանես, ո՛հ, ի՞նչ սրտով, ինչպիսի՛...»:

Ըսողներ կան, թէ Հոթոյեան, իր քերթուածներով, սերունդի մը բանբերն է: Ամէն գրող, առաւել կամ նուազ չափով, բանբերն է իր սերունդին. նոյնիսկ կարգ մը գարտուղի անձեր, որոնք կը յածին ուրիշ ոլորտներու մէջ, (ինչպէս օրինակ՝ Ջրաքեան մը), նոյնիսկ անոնց քով կարելի է գտնել իրենց սերունդէն որոշ բաներ:

Գրիգոր Հոթոյեանի պարագային ատիկա արդիւնքն է խառնուածքին, ստացած դաստիարակութեան ու իր ապրած միջավայրի գաղափարական հոսանքին: Արդէն նամակի մը մէջ կը հաստատէ ասիկա՝ ըսելով. «Ծառայած եմ հայ մամուլին, նախ՝ Հալէպահայ Ուսուցչական Միութեան տպարանը, ապա «Արեւելք» օրաթերթի եւ «Նայիրի» ամսագրին մէջ... կոփուելով Մինաս Թէօլէօյեանի, Անդրանիկ Ծառուկեանի, Սիմոն Սիմոնեանի, Արմէն Անոյշի, Եղուարդ Պոյաճեանի եւ ուրիշներու շունչին տակ»:

Ասոնց վրայ պէտք է աւելցնել, որ Հալէպն ու Լիբանանը եղած են ազատատենչ հայութեան հայաշունչ վառարանները: Ուստի, որպէս իր ժողովուրդի հարազատ գաւակը, բնական է, որ նման միջավայրի մէջ կազմաւորուող անձ մը ազդեցութիւններ կրէ առաւել կամ նուազ չափով: Այս իմաստով, Հոթոյեան իր ամէնէն քնարական տողերուն մէջ իսկ կը կրէ իր սերունդին ռոմանթիզմն ու մոլեռանդութիւնը:

Այս է պատճառը, որ կարգալով իր «Սիրտը Ափին Մէջ» գրքի քերթուածները, կը տեսնենք, թէ Գրիգոր Հոթոյեանի համար սրբութիւն սրբոց են ինչ որ կը կազմեն հայութեան ինքնութիւնը.— Արարատը, տաճարները, հողը, գետերը, հայ դպրութեան ռահվիրաներն ու հայերէնը:

Իր լեզուն ալ իր սերունդի լեզուն է, գտուած օտարամուտ որոմներէ, կոկուած ու հարստացած:

Պէտք է մոռնալ նաեւ ինքնաշխատութեան բաժինը, որ մեծ տեղ կը բռնէ Գրիգորի պարագային:

«Սիրտը Ափին Մէջ» գիրքէն կատարած մէջբերումներս կը յուսամ ցոյց տուին Հոթոյեանի բազմազան հետաքրքրութիւնը,— ազգային, հայրենասիրական, յեղափոխական, մտածման տարրերու, բընութեան ու սիրային տազնապնդումներուն:

Քիչ գրողներ ասոնցմէ անդին հետաքրքրութիւններ կրնան ունենալ:

Այս բոլորով հանդերձ, ես այն կարծիքին եմ, թէ այս էջերը աւելի հաղորդական կը դառնային, եթէ գրուած ըլլային արձակ, առանց

քերթողական օրէնքներու կաշկանդումին: Անտես ընելու չէ հաղորդականութեան պարագան, երբ կ'ուզես, որ գրածդ հասնի հասարակութեան, անոր սրտին ու մտքին: Այս նպատակով է, որ այս գիրքը մկրտուեց է «Սիրտը Ափին Մէջ» անունով:

Չափն ու յանգը պայման չեն որ գրութիւն մը բանաստեղծական ըլլայ: Բանաստեղծական արձակի բազմաթիւ օրինակներ կարելի է բերել մեր գրականութեան էջերէն, օրինակ՝ Թլկատինցիի «Տանիքին աղջիկը», Շաւարշ Նարդունիի «Կարօտ հայ լեզուին» գրութեան երկրորդ հատուածը, բազմաթիւ էջեր Ակսել Բակունցէն, Խ. Զարգարանի «Զարնուած որսորդը»: Ալ չեմ երկարեր թուումս. ո՞ր մէկը յիշեմ. կարելի է առանձին հատոր մը կազմել ազոնցմով:

Հոթոյեան իր «Հեղինակին խօսքը» վերնագիրը կրող յառաջաբանին մէջ կը գրէ. «Եթէ հոգեկան խռովքներէս, մտածումներէս եւ ապրումներէս բխած ազգային, ազատագրական, մարդկային եւ քնարերգական սոյն քերթուածներով կարողացայ ապրումներս փոխանցել ընթերցողներուս, ժողովուրդիս փոքր ծառայութիւն մը մատուցած ըլլալու անսահման գոհունակութիւնը պիտի ունենամ»:

Կը նշանակէ՝ ի մտի ունի ոչ թէ մտաւորականները, այլ՝ հասարակութիւնը, — ինծի եւ քեզի պէս մարդիկ, — մարդիկ, որոնք հայ թերթ ու գիրք կարգալով՝ հոգեկան բաւարարութիւն մը կ'ունենան: «Կ'ուզեմ որ լինի իմ երգս խոնարհ, որպէս կտոր հաց սեղանի վրայ աշխատաւորի», պիտի ըսէր Կոստան Զարեան: Հացը խորհրդանիշ է արդար վաստակով ձեռք բերուած սնունդի, գիրքը, հայ գիրքը՝ հոգեկան սնունդի, որմէ զրկուողը ենթակայ է անհաղորդ մնալու իր ժողովուրդի ապրումներուն ու ոգիին:

Արդ, ես հիմա կ'ուզեմ ըսել իմ գրչեղբայր Գրիգորին. «Մշա՛կ, ցանէ՛... Թեւիդ շարժումն անպարագիծ թող ըլլայ...»:

Գրէ՛ արձակ կամ ոտանաւոր (նախընտրաբար արձակ), միայն գրէ՛, քանի որ ապրումով գրուած տողեր ունիս եւ Հայաստանեայց Եկեղեցիի մասին գիտես արտայայտուիլ հետեւեալ խօսքերով.

«Խորախորհուրդ ծէսերուդ յուզաթրթիռ շունչին տակ  
Հասակ առի, հայացայ՝ աստուածային երկիւղով,  
Հոգիս ցնծաց խանդակաք պաշտամունքով, աղօթքով,  
Երբ հայկական խորանէն կը մատուցուէր պատարագ»:

Պ. Թ. ԿԵՐՈՆԵԱՆ  
Գրագէտ

«Հորիզոն», 31 Հոկտեմբեր 1988



## ԿԵԱՆՔԱ ԳԱԺԱՆ Է ԱՐԴԷՆ

*«Օտարի տունը քեզ հայրենիք չի դառնայ» – հանճարեղ Գէօթէի այս խօսքերն ես ակամայից եմ մտաբերում, երբ ընթերցում եմ դեռ 1987թ. հեռաւոր Տորոնտոյում լոյս տեսած «Աղբիւր» բանաստեղծութեան հետեւեալ տողերը.*

Կեանքս դաժան է արդէն,  
Ինչպէ՞ս ապրիմ ես հիմա,  
Հայրենիքիս կարօտէն  
Ես կը մեռնիմ, հաւատա՛:

Պիտի հիւժուիմ յուլօրէն,  
Քանի կ'ապրիմ ես պանդուխտ,  
Հեռու վանէն, Սասունէն  
Ու լեռներէն մեր գմբուխտ:

*Կարդում ես «Արմատներս հօրենական» քերթուածը, եւ բանաստեղծ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ կենսագրականը յառնում է քո դէմ.*

Արմատներս հօրենական կու գան երկրէն Տարօնի,  
Ծնած, ապրած լեռներուն մէջ հերոսածին Սասունի...

*Յետոյ էլ թէ՛*

Իմ լեռնցի հայրս կու գար դիւցազնական այդ երկրէն,  
Մակար, Գալէ ծնունդ տուած քաջ Սպաղանք աւանէն...

*Հեռաւոր արեան կանչն ու բանաստեղծական տողերում թաքնուած շեշտերը մատնում են իրենց հեղինակի ծնունդը եւ ծննդավայրը, 1927թ. Օգոստոսի 5, Հալէպ, թուրքական եաթաղանից հրաշքով փրկուած, Սուրբ Կարապետի նախկին սան, Սերոբ Աղբիւրի եւ Սմբատի նախկին զինուոր Հոթոյենց Ղազարի (Խարզօ) յարկի տակ: Մայրը՝ Մարիամը՝ առիւծամայր Սոսէի եւ սասունցի Շաքէի բխտաքոյրն էր, իր ամուսնու կեանքի ու զէնքի ընկերը: Ցաւօք, երիտասարդը բաժանուեց կեանքից, որդու սրտում թողնելով ցաւի ու մորմոքի իր յաւերժակրակն ու որբութեան սեւ կնիքը, որոնք յետոյ վերածուեցին դառը վերյուշի եւ դարձան մխացող ցաւերգի:*

Այսօր հոգիիս բուրաստանէն  
Ես փունջ մը ծաղիկ կը փաղեմ հլու,



Տանելու համար գայն խուճկի մը պէս  
Մօրս շիրիմին վրայ բուրելու:

Սրտիս ընդերքէն արձակած նիչով,  
Դառնութիւն բուրող ձայնով ցաւատանջ,  
Կ'անիծեմ բախտս, որ սեւ քմայքով  
Որբութիւն դրոշմեց նակտիս վաղաժամ...

*Որտե՞ղ է ուսանել, ովքե՞ր են եղել բանաստեղծի ուսուցիչները, ի՞նչ է աշխատել, ի՞նչ նպատակներ ունի... եւ բազմաթիւ այլ հարցերի խտացումն է պոէտի «ՍԻՐՏԸ ԱՓԻ ՄէՋ» ժողովածուի (Տորոնտօ, 1987թ.) ներածական այս ինքնածանուցումը. «Ծնած ու մեծցած Հալէպի հայահոծ գաղութի հայաշունչ մթնոլորտին մէջ, սնուած ու դաստիարակուած նուիրեալ հայ ուսուցիչներու (սովորել է Սահակեան վարժարանում — Ս. Գ.), մտաւորականներու, խմբագիրներու եւ մանաւանդ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (եւ սա է պատճառը, որ բանաստեղծը մինչ օրս անյայտ է խորհրդահայ ընթերցողին — Ս. Գ.) հայակերտ հնոցէն ժայթքող հայաբոյր բոցերով, կեանքիս գըլխաւոր իմաստը եղած է կարողութիւններուս ներածին չափով ծառայել ազգիս, գաղափարիս եւ Հայ Մշակոյթին՝ ուսուցչական ասպարէզով, գրչով եւ այլազան պարտականութիւններու գործադրութեամբ...»: Միթէ այսպիսի սրբազան ուխտի չէի՞ն լծուել Համաստեղն ու Մուշեղ Իշխանը, Անդրանիկ Ծառուկեանն ու Ժակ Յակոբեանը, Սիմոն Սիմոնեանն ու Գրիգոր Հոթոյեանը, եւ տասնեակ այլ երախտաւորներ, որոնց գրական եւ ֆիզիկական ելումուտը Մայր Հայրենիք արգելուել էր ստալինեան բռնութիւնների տարիներին պետանվտանգութեան խորհրդային եւ Սփիւռքի վարձու գործակալների զրպարտիչ, կեղծ եւ ազգադաւ նախատուեալների պատճառով: Դպրոցական ուսումնառութիւնից յետոյ որպէս ենթասպայ Գրիգոր Հոթոյեանը Սիրիայում ու Լիբանանում ծառայել է ֆրանսիական բանակում: Զօրացրուելուց որոշ ժամանակ անց նա գրաշար եւ լրագրող էր «Արեւելք» (Հալէպ) օրաթերթում, ուր եւ լոյս են տեսել նրա առաջին քերթուածներն ու թղթակցութիւնները: Գր. Հոթոյեան ուսուցչին եւ դպրոցի տնօրէնին այսօր էլ սիրով եւ երախտագիտութեամբ են յիշում Սիրիայի Հալէպ եւ Ռակկա քաղաքների հայկական վարժարանի նախկին սաները: Աշակերտական, մանկավարժական տարիներից մինչեւ օրս սասունորդի Գրիգորը մուսայի գերին է: «Հայաստանի սիրտէն, Սասունի սրբազան լեռներէն ժառանգած սրտիս մէջ բոցավառուող կրակը զիս երբեք հանդարտ չէ ձգած եւ պիտի չձգէ մինչ մահ, որովհետեւ արմատներս կը սերին անձնագոհ Ֆետայիներու այն փաղանգէն, որոնք իրենց կեանքը զոհաբերեցին հայ ժողովուրդի ազատութեան ճանապարհին»: Ազատութեան այդ ճանապարհի քա-*

Ջարի մարտիկներից Գէորգ Չաուշին, Սպաղանաց Կալէին եւ իգգիրցի Դրաստամատ Կանայեանին ձօնուած Գր. Հոթոյեանի մարտաշունչ եւ ազատամիտ տաղերը ընթերցողի մէջ պատուաստում են ոչ միայն հայրենանուիրուածութիւն եւ քաջութիւն, այլեւ ցասում եւ վրիժաւուածութիւն, ազգային արժանապատուութեան եւ անկախութեան սուրբ իդէալներ՝ յիշեցնելով, որ նման քաջորդիներ եւ Ֆիդայիներ հայ ժողովուրդը նորից կը ծնի՝

Այն ազգը, որ բեզի ծնաւ, այլ հերոսներ դեռ կը ծնի...  
(Գէորգ Չաուշ)

Հայրենական եւ ազգային շնչով (բանաստեղծի ինքնորոշումներն են) գրուած Հոթոյեանի հայրենապաշտ ձօներն ու յեղափոխական երգերն ու ոգորումները, Հայոց Մեծ Եղեռնին, բնութեանը նըւիրուած նրա սրտայոյզ եւ պատկերափայլ տաղերը բացայայտ հետապնդում են մէկ նպատակ.

Ուր որ երթաս, ուր որ ապրիս Սփիւռքի խորք տարածքին,  
Ոչ մէկ ատեն ազգդ, լեզուդ, եկեղեցիդ չմոռնաս...  
(«Պատգամ հայուրեան»)»

«Յեղափոխական ոգորումներ» շարքի բանաստեղծութիւններում ոչ միայն հայ մտաւորականի, այլեւ հայոց համազգային ցաւով եւ ինքնայրումով տառապող մերօրեայ հայ մարդու խռովայոյզ ներաշխարհն է արտացոլուած՝ իր պատմական յիշողութեան անմոռաց ծալքերով, խուլ տուայտանքներով եւ համազգային մտածողութեամբ, մի ներաշխարհ, որն ամէն պահի քեզ սթափ է պահում եւ պահանջում.

Ուր որ երթաս, անհայրենիք կեանքը ունի վերջաբան.  
Գաղթական ես, օտարական՝ ներմակ ջարդին եմքակայ...

Սեւ եւ ճերմակ ջարդ ... քանի՞ տարի նրանք հետապնդում են մեզ, հետապնդում անգամ պապենական հողի վրայ: Դրա համար էլ «Տարփողական Հայաստանի անկախութեան», «Մայիսի օր մը՝ պայծառ ու չքնաղ», «Տարօն աշխարհ» եւ այլ քերթուածների քնարական հերոսը այսօր հետապնդում է մէկ նպատակ՝ Անկախութիւն եւ էրթալ հոն (էրգիր)՝ «Ուր մեր պապերուն գերեզմանները կը գտնուին»: Որքան, որքան արդիական են հնչում հեռաւոր կանադական երկնքի տակ 1975թ. մինչեւ օրս ապրող եւ հայրուծացման դէմ պայքարի անվարձ նուիրեալ, սասնազարմ հայորդու Հայաստանի Անկախութիւնը տենչացող հրաշունչ տողերը: Կարծես թէ դրանք գրուել են այսօր

*Երեւանի Անկախութեան հրապարակում, գրուել են այսօր Արցախում  
եւ ոչ թէ՛ տասնամեակներ առաջ օտար ամերում.*

Ես

Արիագարմ հայորդի մը աներեր,—

Խրոխտ կանգնած՝ քակատս վեր,

Կու գամ այսօր երկրպագել

Վեց դարերու ստրկութեան շղթաները բզկտող՝

Հայաստանի անկախութեան նստագայթող Արեւիկն...

*Կա՞յ, կա՞յ արդեօք այսօր լուսնի տակ մի հայ, մի հայորդի, որ  
գիտակցաբար չհրկրպագի «Հայաստանի անկախութեան ճառագայ-  
թող արեւին»։ Դժուար թէ գտնուի նման մէկը:*

*Հայաստանը, հայն ու հայութիւնը պահպանող ամենագորեղ մի-  
ջոցը հայեցի ընտանիք կազմելն է, հայ աղջկայ հետ ամուսնանալը,  
իսկական հայորդի դաստիարակելը — սա է «Կոչ հայ երիտասարդու-  
թեան» ստեղծագործութեան կենտրոնաձիգ միտքը.*

Հայ տան, հայ ազգին ակունքը վնիտ

Հայ մայրն է միայն կաթով անապակ,

Եթէ չբերես հայ կին քու տունիդ՝

Պիտի ուծանաս, որդի անժառանգ:

*Գրիգոր Հոթոյեանի քառեակներն ու քառատողերը եւս հայոց  
համազգային ցաւից ու բաղձանքից ծնուած անմոռուկներ են.*

Ազգիս ցաւը մշտանորոգ վերքի պէս

Կը հետեւի ամէնօրեայ քայլերուս,

Մղելով զիս ցասումներու սրտակէզ,

Զտեսնելով Արդարութեան ոչ մէկ յոյս:

*Չնայած բանաստեղծը ֆիզիկապէս հեռու է Մայր Հայրենիքից,  
բայց ամէն վայրկեան նա շնչում եւ ապրում է Հայաստան աշխարհով,  
Արարատով ու Էջմիածնով, Սեւանով ու Արագածով, նա իր արմատ-  
ները հայոց հողում է տեսնում, երգումի պէս է հնչում նրա պոէտա-  
կան խոստովանանքը ժողովածուի 46-րդ էջում.*

Ծնած օտար երկնքի տակ, հասակ առած ինչպէս ծառ,

Սակայն արմատս հողիդ մէջն է, իմ պաշտելի Հայաստան,

Կ'ապրիմ մարմնով որպէս պանդուխտ՝ տառապելով անդադար,

Սակայն հոգիս հեւքիդ հետ է, հերոսական Հայաստան:

Ո՞վ է 20-րդ դարի այն հայ բանաստեղծը, որն իր ատելութեան, ցասման եւ վրէժխնդրութեան կծու խօսքը չի ուղղել Հայոց Մեծ Եղեռնի կազմակերպիչներին եւ իրագործողներին: Չկայ այդպիսի հայ բանաստեղծ, չկայ այդպիսի հայ, չկայ այդպիսի դաշնակցական: Գր. Հոթոյեանը եւս պարպել է մասամբ (լրիւ՝ անհնարին է) իր սրտում կուտակուած այդ մաղձը (տես գրքի «Եղեռնի հետքերով» շարքը): Եւ միթէ «Ապրիլի 24», «Զրոյց Եփրատի հետ», «Ցասում», «Եղեռնի յուշարձան» քերթուածների ծնունդը կը բաւէ՞, որ պարպուի, հանգըստանայ իր հայրենի օջախից բռնագաղթուած, իր նախնեաց գերեզմանների եւ Մշոյ Սուրբ Կարապետի ճանապարհները կորցրած սիրիականադահայ բանաստեղծի սիրտը: Իհարկէ՝ ոչ: Էլ ի՞նչ սփռուքահայ, եթէ նա հայոց պահանջատիրութեան եւ Հայ Դատի ուխտեալ պաշտպան է: Էլ ի՞նչ բանաստեղծ (այն էլ սասունցի եւ դաշնակցական), որ իր ընթերցողին ի գէն չկոչի եւ թշնամուն չյիշեցնի:

Յստակ գիտցէք,  
 Ըմբռնեցէք.—  
 Ձեր մշտական,  
 Քարոզչական  
 Աշխատանքով,  
 Հերժումներով,  
 Մերժումներով,  
 Զինու ուժով,  
 Երկրի դիրքով,  
 Պաշտպաններով  
 Ձէք կարեւար  
 Միշտ տեւաբար

Բռնագրաւել,  
 Յաւէտ պահել  
 Հողը Հայկեան  
 Նուիրական:  
 Ձէք կարեւար  
 Ամօքահար  
 Թումբ կանգնեցնել,  
 Պատուար դնել  
 Հայոց Դատին,  
 Իրաւունքին՝  
 Պապենական  
 Ու պատմական...

«Ցասում» բանաստեղծութեան բարոյա-քաղաքական նախատինքն ու լաւատեսութիւնը գալիս են մեր ժողովրդի ազնիւ մտածելակերպից, մեծահոգութիւնից եւ մարդասիրութիւնից, յագեցած են մի անտեսանելի ինտերնացիոնալիզմով եւ խաղաղապաշտութեամբ: Դրա համար էլ բանաստեղծը վստահ է, որ կը գայ Արդարութեան եւ Խաղաղութեան ժամը, եւ մեր գիշատիչ հարեւանը կ'ողղի իր սխալը (հաւատա՞նք — Ս. Գ.):

Բայց ես կ'ըսեմ,  
 Հաւատով եմ,  
 Թէ պիտի տան,  
 Եւ անպայման,  
 Երբ որ հնչէ  
 Ու փողփողէ

Ժամն հատուցման,  
 Արդարութեան,  
 Յանուն կորսուած  
 Եւ փնտռուած  
 Յաւերժական  
 Խաղաղութեան:

Սպասենք եւ յուսանք, թէ՞...

Եթէ Հոթոյեանի քաղաքացիական քնարերգութեանը բնորոշ են սիրամանթոյական շունչը, հրապարակախօսական կիրքն ու մարտական պաթոսը, որոնք իրենց զգացնել են տալիս նաեւ «Սրտայոյզ խոկումներ» շարքում, ապա «Բնութեան հետ» տաղարանն ու «Սիրային տագնապներ» շարքերը մեծարենցեան արեւագալով են ջերմացած, դուրեանական նուրբ ու խոր թախծի հետ շաղախուած է տէրեանական մի հեզութիւն, որն այդ բանաստեղծութիւններին հաղորդում է մի ուրոյն եւ անտեսանելի հմայք: Կարգա՝ «Ով ընկեր», «Խոկում՝ նոր տարուայ սեմին», «Միսաք Մեծարենց», «Թաթուլ Հուրեան» խոհալի, պատկերաշատ, վշտամրմուռ եւ ազգացաւ քերթուածները: Այնժամ նորովի կը կանգնի աչքիդ դէմ «հակախորհրդային, դաշնակ բանաստեղծը», սասուկնցի մի այր, որ հայրենի ցաւից սահմուկած ու գալարուած հեռաւոր Տորոնտոյում գիշերուայ աղօտ լոյսի տակ, ձախ ձեռքը ծնօտին յենած գրում է.

Նոր տարի է, եկէ՛ք խոկանք, փնտոնեմք դարման մեր դատին,  
Եւ դարձնեմք մեր աչքերը վերածնուած հայրենիք,  
Հոնկէ է, որ պիտի բացուին դռները մեծ գալիքին,  
Հոնկէ է, որ պիտի հասնինք Սասուն ու Վան գեղեցիկ...

Այսքան հայրենասիրութիւն, այսքան հայրենանուիրուածութիւն, Հայաստանով լուծուող Հայոց Հարց եւ Պահանջատիրութիւն... եւ դիմացը «մարքսիզմ-լենինիզմի լոյսին» գերի խորհրդահայ կոյր գրականագիտութիւն. ոչ մի խօսք, ոչ մէկ ակնարկ սփիւռքահայ այս բանաստեղծի մասին, քանզի նա դաշնակցական է: Այսպիսի պատճառաբանութիւն այսօր ծիծաղելի է, իսկ երէ՛կ, նախորդ օ՞րը: Ո՞վ կը թողնէր Գէորդ Չառչին, Սպաղանաց Կալէին, Սուլուխի ազատամարտերի անսասան մասնակից հայ ֆիդայիներին եւ Բաշ Ապարանի ու Սարգարապատի քաջարի զօրավար Դրաստամատ Կանայեանին (Դրօ) ձօներգեր հիւսել, դրանք անցկացնել Գլավլիտի (գրաքննութեան, ասել է թէ ԿԳԲ-ի) քաղաքական մութ նեղանցքներից եւ «չարժանանալ սիրերեան ճամբորդութեան»: Բայց գրել է, գրել է նրանց մասին Սիրիայում եւ Կանադայում Գրիգոր Հոթոյեանը, եւ դրանց մեծ մասը տպագրել «Սփիւռք»ում, «Հայրենիք»ում, տպագրել է «Ասպարէզ»ում, «Հորիզոն»ում, «Կանթեղ»ում, «Նոր Կեանք»ում, «Դիտակ»ում եւ Սփիւռքի այլեւայլ պարբերակներում, չիմանալով, որ Խ. Հայաստանում իրենից ջահել մէկ ուրիշ սասնորդի՝ Գալչոյ Մանուկի թողը՝ Մուշեղ Գալչոյեանը, խորհրդային կարգերից յոգնած ու զգուած, մի օր բացայայտ հրապարակելու է, թէ «կը գայ այն օրը, երբ մենք կը համբուրենք հայ ֆիդայիների սրբացած ճակատները»: (Կարդացէք «Մարութայ Սարի Ամպերը»): Եկել է ժամանակը: Մեր

ներսում բանտարկուած Չաուչներն ու Անդրանիկները, Սմբատներն ու Կալէնները վերադառնում են իրենց յաւերժագնայ ու բացօթեայ օջախները: Չես հաւատում, գնա՛ Ուջան ու Սասնաչէն, գնա՛ Աշնակ ու Մաստարա, Սեւքար ու Գորիս... Այո, սեւքարեցի Սաքոյի եւ Գարեգին Նժդեհի ցեղակրօն ինքնայրումը այսօր վառում է մեր հոգու մարած, բայց չյանգած պատրոյգը, լուսաւորում մեր սրտի ու մտքի գալիք ճամբան՝ Մուշից Արցախ, Վանից Սիւնիք, Ջաւախք ու Փայտկարան... «Բանաստեղծին ձայնը տիեզերական յարաբերութեան մը լարը պէտք է ըլլայ, բոլոր գոյութիւններու համադրական թրթռումովը առլցուն» մեծարենցեան այս դաւանանք-պատգամին հաւատարիմ, գրական ուխտաւոր Գր. Հոթոյեանը այսօր յիշեցնում է, որ «Բանաստեղծութիւնը բնութիւնն ու կեանքը, ժողովուրդին ոգին ու երագանքները կը ցոլացնէ ու կը պատգամախօսէ ժողովուրդին հասկընալի, գեղեցիկ լեզուով ու պարզութեամբ, ճոխացած՝ զգացումով, գաղափարով, ապրումով ու երեւակայութեամբ»: Հաւատարի՞մ է, արդեօք, գրական իր այս դաւանանքին բանաստեղծը, թէ՞ ոչ: Ահա-լասիկ իր ստեղծագործական նշանաբանը ապացուցող մի հատուած «Խոկում՝ նոր տարուայ սեմին» բանաստեղծութիւնից.

Նոր տարի է, բայց մենք կ'ապրինք օտար փեր ցանուցիր,  
Պապեմական մեր հողերը դեռ կ'արտասուեն որբացած,  
Կեռ մահիկի գարշապարը տրորած է գերդ բալխիր,  
Հայուն կերտած մշակոյթի կոթողները լուսարծարծ:

Նոր տարի է, բայց մինչեւ ե՞րբ յուսաբեկ ու դառնահամ  
Նոր տարիներ պիտի անցնին իմ դալկահար հոգիէս,  
Ախ, մինչեւ ե՞րբ պիտի մնայ մեր երկիրը պատմական  
Գերեվարուած ու քանդուած, ամայի ու սրտակէզ:

Նոր տարի է. մեծին, փոքրին խնդութեան օր երագուն,  
Բայց իմ սիրտը կը մորմոքի, խոր ցաւերս որո՞ւ լամ,  
Սփիւռքի մէջ տարուէ-տարի կը թառամի մեր լեզուն,  
Ու կ'աղնատին ոգին հայոց ու բարբերը հայկական:

Հայկական ոգու եւ բարքերի աղճատման դէմ մղուող պայքարը Սփիւռքի հիմնահարցերից է: Այդ հիմնահարցի կազմուածման սուրբ գործում իր վճռորոշ դերն ունի մշտնջենական սիրոյ եւ գուրգուրանքի արժանի հայ մամիկը, հայ կինը, հայ աղջիկը: Նրանցից ո՞ւմը իր տղամարդկային սիրտը ափի մէջ չի բացել բանաստեղծ Հոթոյեանը: Տեսնես՝ ինչպիսի զգացում է ապրում Սիրիայում ծնուած եւ յոյժ հայեցի դաստիարակուած Ալիս (Շաքէ) Վարդանի Հոթոյեանը, երբ ընթերցում է ամուսնու «Սիրածիս», «Չգիտցայ երբեք», «Դեռ կը սի-

րե՞ս գիս», «Ինչո՞ւ ինձմէ նեղացար» սիրային բանաստեղծութիւնները: Իր սիրային տաղերում, սոնետներում ու քառեակներում կանադահայ բանաստեղծը մինչեւ հոգու խորքը նորից պարզ է, բարի, սրտացաւ ու ջերմ: Նրա սէրը դիպուածի, երեւոյթի, հրապուրանքի արձագանգ է՝ պարզ եւ անյոյգ, այլ գեղեցիկի, առաքինու, վսեմի գովերգ, հոգու սրբազրում եւ ակամայ խոստովանանք, որն աւելի շուտ յարգարում է սիրոյ եւ ընտանեկան խութերը, քան թէ «կրակի վրայ իւր աւելացնում»:

Հազիւ ամիս մը հեռացած քեզմէ  
Եւ ահա ինչքան կարօտցած եմ քեզ,  
Տակաւին հոգիս կ'այրէ, կը տանջէ  
Վերջին գիշերուան լացդ աղեկէգ:

Կ'ուզէի գիտնալ. դուն ալ ինձի պէս  
Մտահոգուա՞ծ ես այս բաժանումով,  
Մութ թախիծ մը լուռ արդեօ՞ք ինձի պէս  
Պատած է հոգիդ մեր պարման սիրով:

*«Առանձին էր» քերթուածը կարծես թէ ամփոփում է պոէտի սիրոյ փիլիսոփայութիւնը եւ մարդ էակին յիշեցնում:*

Առանց սիրոյ եւ գգուանքի կեանքը փուռ է,  
Եթէ ըլլաս նոյնիսկ հարուստ ու գեղեցիկ,  
Առանձնութիւնն մարդու հոգին կը խաթարէ,  
Առանց ընկեր՝ պիտի ապրիս ապերջանիկ:

Աւարտելով Գրիգոր Հոթոյեանի «Սիրտը Ափի Մէջ» սեւակեան համանման խորագրով Կանադայում հրատարակուած բանաստեղծութիւնների ժողովածուի ընթերցումը, կ'ուզենայի, որ Մայր Հայրենիքում (կամ այլուր) հայեցի հրատարակչութիւններից որեւէ մէկը կանաչ լոյս վառէր եւ քնարերգութեան սիրահար մեր ընթերցողին ներկայացնէր ազգային ցաւից մխացող, Սիրիայում, Լիբանանում եւ Կանադայում հայոց համազգային եւ կրթամշակութային կեանքին իր անբասիր նուիրումը բերած բանաստեղծ Գր. Հոթոյեանի ստեղծագործութիւնների ընտրանին եւ անտիպները: Չէ՛ որ, ինչպէս պոէտն է ասում, «Կեանքը զնայով դառնում է դաժան...»: Բանաստեղծների, արուեստագէտների հանգէպ պէտք է դաժան լինել: Դա են ապացուցում նաեւ Գրիգոր Հոթոյեանի տեքստերով, էդիկ Յովսէփեանի եւ այլ կոմպոզիտորների երաժշտութեամբ հիւսուած «Զօներգ Հայաստանին», «Գարնանային», «Ղարաբաղը կը կանչէ», «Զայն ազատութեան», «Նրիմեան Հայրիկ», «Սիրուն աղջիկ» եւ տասնեակ այլ հայ-

ըենասիրական, խոհա-փիլիսոփայական եւ սիրային երգերը, որոնք այսօր հնչում են Սփիւռքի, յատկապէս Կանադայի հայկական բեմերից եւ ձայնասփիւռներրից:

Գրիգոր Հոթոյեան բանաստեղծն ու հրապարակախօսը այսօր Մոնթրէալում լոյս տեսնող «Հորիզոն» շաբաթաթերթի Տորոնտոյի ներկայացուցիչն է եւ յաճախ է այս պարբերականում հանդէս գալիս ոչ միայն թղթակցութիւններով, այլեւ տարբեր յօդուածներով եւ քերթուածներով:

Վարձքդ ի կատար, հեռաւոր գրչեղբայր:

ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

01.09.91 թ.

Թալիւն-Ներքին Սասնաշէն



Սիրելի հեղինակ քենեկալ,  
Սեփականատէր «ՍԻՐՏԸ ԱՓԻՆ ՄէՋ» քերթողագիրքին

Հպարտ եմ քեզմով, ընկեր բանաստեղծ:

Գօգօ ճան, գրական եւ ի մասնաւորի բանաստեղծութեան մասին խօսելու եւ կամ գրելու կը դժուարանամ, կալուածէս մղոններով հեռու է. չեմ փափաքիր գրական Տօնքիչոտ մը ըլլալ: Այդ երկու սեռերը՝ արձակ եւ բանաստեղծութիւն, քննարկել կարողութենէս շատ վեր է: Ես լոկ հայ գիրն ու գրականութիւնը սիրող մըն եմ, ո՛չ աւելի: Անոր իրաւական տէրը ժողովուրդն է, վերջինս է արդար դատաւորը ու անոր վճիռը մեկին է ու ոսկեքանդակ: Անձնապէս շատ հաւատք չեմ ընծայեր քննադատներու գրածներուն (բացառութիւնները յարգելի են անշուշտ): Յարգ ի՞նչ են սրբագրած, շտկած, եթէ ոչ՝ վազող ձիուն ճակտին զարկած, թոպամահ ըրած... նաեւ պէսպիսի խնամիական կապերով ի՞նչ-ի՞նչ աւերներ ու ոճիրներ գործած են: Յարգանք՝ «չափօ» բոլոր գրչի հերոսներուն:

Հետագայ տողերը լոկ անձնական կարծիքս, տպաւորութիւններս եւ ապրումներս են, իմ՝ ողորմելիիս հասկացողութեան չափանիշով:

Գիրքդ լրջութեամբ լրիւ եւ դանդաղ երկու անգամ կարդացի: Կան քերթուածներ՝ որ հասան 6-ի, շատ սիրելուս եւ կամ լաւ մարտելու համար:

Վայելուչ եւ ներկայանալի հատոր մը: Պետոս Պետրոսեանի — իրաւ արուեստագէտ — կողքի նկարին կը պակսի տրոփումը թուղթին, գորս ամբողջացուցած է հեղինակը իր ընդհանրապէս թախծոտ տողերու ընդմէջէն եւ Կարօ Փաշայեանին բծախնդիր, անվրէպ եւ շնորհա-



ւորելի էջադրումովը: Ճաշակ եւ որակ՝ ձեռք-ձեռքի պար են բռնած: Ակնահասճոյ ամբողջութիւն մըն է երախայրիքդ: Վարձքերնիդ կատար:

Կարելի է գրել մոսսաներուդ բոլոր փսփսուք թելադրանքներուն, խոհերուն մասին: Պատշաճ նկատեցի, արագ ակնարկով, տոպրակել այնպիսիները, որ կախուեցան բուրժ կարթիս: Նաեւ զգուշացայ, որ ուրիշ մը կամ այլք կոկորդէս բռնելու առիթը չունենան:

Մեծ մասամբ թախիժ է որ թափած ես: Խնդրանքի, աղօթքի, տենչի, հայրենասիրութեան, բնութեան հետ զրոյցի, սիրոյ եւ այլն: Գրեթէ յարատեւ թախձախառն կարօտ երգած ես, առաւել ցաւ ու վիշտ: Խոստովանինք, որ լուսացուած են քու եւ սերնդակիցներուդ ուղեղները նոյն ջուրով: Աղերս ունիս, կանչ ես, մարտ ես, ըղձանք եւ կարօտ ես, որսդ՝ հայ, հայրենիք, Հայաստան, սէր, ուսում եւ բնութիւն: Հոգիիդ, սրտի ու մտքի կաթկթուկներդ կը շրջանակեն այդ բոլորը:

Եթէ հեղինակ ըլլայի (քահքահ մը տեղին է), ամաղթեղջիւրը բռնած՝ աւելի առատաձեռն պիտի ըլլայի ստորակէտներու եւ բութերու նկատմամբ, մանաւանդ որ վերջինը գեղչուած բառի մը տեղ դըրուած կամ կէս ստորակէտի արժէք ունի կ'ըսէին մեր յաւերժ սիրելի դաստիարակները:

Բայց, չըլլալիք «բայց»ը, կրկին գլուխը բարձրացուց:

Կ'ուզեմ մօտենալ փորձել մոսսաներուդ փեթակին: Տար Աստուած, որ մեղրախորիսիսին զուգադիպէի: Վայ այն ըոպէին, որ խայթողներու պարսին ճանկն իյնայի:

Այս վերջին «խենդութիւնս» պիտի ըլլայ: Ես նման աղօրիքներու ջորին չեմ կրնար ըլլալ: Բաներ, որ իմ կարողութենէս վեր եւ շատ բարձր են:

Օ՛ն ուրեմն գործի:

Սկսիմ Գօգոյին կալը կամենել:

Օրն էր Կիրակի:

Որպէս դռնբացէք՝ «Հայաստան» բանաստեղծութիւնը: Անկատար տենչեր, յոյս գալիքին (էջ 15): Քիչ ետք, Հինը կը վերափոխուի Նորի եւ որդուց հանճարով կը փառաբանուի (16):

«Հայոց լեզու»

Պատուանշանի արժանի գրութիւն, անկեղծ ու ատոք, վայելենք վարի յիշարժան տողերը.

– Սերունդները իրար զօգող, մեր մայրենի հայոց լեզու:

– Յաւերժօրէն թրթռացող անմահական երգերու տուն (19):

– Դուն կը մնաս անխոցելի, անաղարտ ու յաւերժական: (Ա՛խ, երանի – Ս. Կ.)

Քիչ անդին, պանծացումը ՄԱՇՏՈՅԻՆ: Ի՛նչ հոյակապ հանգիտութիւն:

— Հայ պատմութեան յաւերժական Արարատ (20): Գոռա՛ հպարտութեամբ:

Հապա հայ դպրոցին շնորհուած պատշաճ վերազերներու մարգարտաշարը.

— Որպէս դարբնետուն հայոց հոգիին:

— Դուն արեւածին լոյսի սուրբ խորան,  
Հայ գոյամարտի պողպատեայ վահան,  
Ինքնաճանաչման սրտազին մատեան,  
Ազատութեան տենչ, յոյսի շատրուան:

Որոնք կը բերդանան, կրանիթեայ պարիսպով, վերջին երկու ըսքանչելի քառեակներով (22):

Հայուն սիրելի չքնաղ ամիսն ալ ունի իր կարթը.

— Լիճ դարձած թէեւ՝ ծով դառնալէ վերջ (30):

Երբ քիչ մըն ալ խորանանք՝

«Հէ՛յ ճան Երեւան»ի համն ու հոտը կու տայ, էջ 31-ի գազաթին տասը տողերը եւ մասամբ նորին:

Վե՛րջը վերջ է՝ բայց ետք չէ:

«Հոն»: Այո՛, «Հոն»ը չտեսար, պէտք է ուխտի երթալ, երբ կարելիութիւն ունիս: Գնա՛, տե՛ս, շօշափէ՛, համբուրէ՛, ծունկ մը աղօթք, պտղունց մը խունկ... կը վերանաս, կ'արբենաս առինքնող հողին, օդին, ջուրին հրապոյրէն, Գօգօ ճան (33):

Ազգութեան Չաւուշը, բայց ի՞նչ Չաւուշ: Այս պարագային դուն գոյգ մը խօսք ըսելու աւելի իրաւունք ունիս, ցեղային արմատներդ գուցէ գաղտնի, բայց բնական կապեր ունեցած ըլլան...: Մեղքը (եթէ գոյութիւն ունի) պապուդ ու մամուդ ճիտը թող ըլլայ: Բայց, «Հազար ինն հարիւր»ը եկ, երկձայն երգենք, պարպենք մեր թոքերը դէպի Սիփանայ սարերուն (35):

Պսակին նարօտը հազիւ քակած, հարսը չգրկած, դէպի պարտականութիւն գրոհող Դօն, իր եւ պալիկներուն վերջին կամքը եղած է, որ ուսեն, հասցնեն ու հանգչեցնեն մասունքները Հայկական Պանթէօնին մէջ, ի Թօխմախ Կէօլ, Երեւան, պայմանաւ որ ԱՐԱՄԻՆ պատկից ըլլայ (37):

Խայյամեան քառեակ, կապուտիկեանական «Պատգամ Հայութեան», իսահակեանական պատկեր եւ շիրազեան խօսք (41):

«Կոչ՝ Հայ երիտասարդութեան»

Բարոյական դաս...: Բացառութիւնները մասամբ յարգելի են, անշուշտ ո՛չ սիրելի, ո՛չ ալ ցանկալի: Վերջին համարին՝ այո՛, շատ ճիշդ է: Կրկին չըլլալիք «բայց»ը: Ակամայ մեղանչում: Մունկի աղօթել, Նարեկացիին հետ նոյնանալ եւ խոկալ: Շիրազի սազին լարերը ձայն կու տան: Այս կտորին՝ նախորդ գիրովս լայնօրէն արտայայտուած եմ (42):

«Արմատներս հօրենական»

Ընթացիկ ջուրի պէս հոսուն: Գերդաստանի ծառին պատկերը:  
Լաւ կ'ըլլար, որ ձօնուէր խառնոյին, ՀՕՐՍ վերանգրով (43):

«Հայ յեղափոխական բանակ»

Միամանթոյական ոճ, ուժգնութիւն եւ տարագ (45):

Էջ 46-ի քառեակներուն երկրորդին պատասխանը՝ «Հայ յեղափոխական բանակ» հրացայտ գրութեան ոգիին խորքն է: Էջ 47-ի առաջին քառեակը կրկնել՝ որպէսզի թարմանաս, ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՅԵԼԷ, եւ էն առաջ թօխմախ Կէօլ, արթնցուր իր եօթանասունամեայ քունէն հայրենակերտ, անկրկնելի Արամ Մանուկեանը եւ բաց ու որդիական գրոյցի նստէ:

Մասնակի յաջող պատկերներ ու պատմութիւն Հայ Եղեռնի (51):

Եօթն անգամ եօթը թաթխուէ՛, երդուած սրտառուչ Եփրատի ջուրով՝ մկրտուէ՛, պիտի դառնաս աւելի իմացական եւ վրէժխնդիր սասունցի ու խորիմաստ երգիչ: Եփրատը ջրդեղուած է մեր նախնիքներու սուրբ արիւնով (53):

«Ցասում»

Այնքան զայրոյթ ամբարած ես, որ մոռցնել (դիտումնաւոր) տուած է կէտերու գործածութիւնը (57):

Սրտամօտիկ կոթողաշինութիւն՝ «Եղեռնի յուշարձանը» (59).

— Որ չմոռնան ինքնութիւնը հայկական,

Ու երկիրը, որ կը կոչուի Հայաստան:

Որքա՛ն կարօտ ու բաղձանք ճիկարով ընկերոջ մը նկատմամբ: Ո՞վ կրնայ չափել խորութիւնը այդ անյատակ սիրոյ (64):

Այո՛ եւ յաւիտեան, մայրական կարօտին ոչ մէկ կարօտ կայ հաւասարող, գերազանցող՝

— Մայր իմ սիրասուն, մայր իմ կաթոգին (լոկ մօր համար գործածելի բառ),

Կարօտցած եմ քեզ, կարօտ անցեալին...:

Այս կախման կէտերը մօրը անթեղուած սիրոյ կրակն է (65):

«Կարօտ մանկութեան» գրելաձեւը կը պարտադրէ գործածել բութ եւ ստորակէտ: Ինչե՛ր ունիս տակաւին չըսուած, որ գեղչուած են մեր տղայ (66):

Մարգարէացումը սկսաւ իրականանալ: Խորհրդածէ՛, հպարտացի՛ր խոկումի նոր տարուան սեմին վերջին համարովդ: Հոռուա՛ (67):

Կաղանդ Պապուկին ուղղուած խօսքը զմայլելի է (68):

Սքանչելի ձօն մը Մեծարենցին, հրայրք ունի՞ս Միսաքին նկատմամբ (69):

Խաղաղ, զուլալ, օրհնեալ ջուրի նման պարզ եւ կարեկէր էր թաթխու Հուրեանը ծանօթացնելու կերպը (70):

Բնութեան հետ պատշաճութեամբ անարգել քայլ պահելը հոյակապ է (73):

Հայրենի՛ք, միշտ Հայրենիք եւ տակաւին Հայրենի՛ք, ի՛նչ հաճե-  
լի պատկերներ (74):

Փոխաբերական կրկնակի իմաստով, «Դաշտերուն մէջ»ի 5-րդ  
տունը քերթողի քնքոյշ եւ իմաստալից պատկեր մը՝ կենդանի (75):

Տեսէ՛ք որքան թախիժ «Անձրեւ»ին մէջ եւ հաճելի խորիմաստ  
ասութիւն՝ «Իր արցունքները անձրեւ են դարձեր»: Ինչո՞ւ ձմրան  
այդքան խոհեր, 4-րդ տուն. մի՛ մոռնար, որ գարնան աւարտը աւե-  
տիսն է ձմրան (80):

Մի՛ յուսահատիր, մահացու մեղք է աւետարանի ճամբով (83):

Պ. Դուրեանն ալ վկայութեան կանչած ես (84):

Նոր պատկեր մըն ալ գրաւիչ եւ յուշիկ, 3-րդ տուն (93):

Ուրիշ յար եւ նման պատկեր մը՝ վերջին տունը «Սիրածիս» (94):

Սիրոյ հարցականին մէջ՝ պտղունց մը հեւք ու պատանեկութիւն,  
տե՛ս վերջին համարը (95): Ամէն անկիւն հայութիւն (95):

Զարիֆեանի օրհնեալ ներկայութիւն՝ «Կը սիրէ՞ր զիս» (98):

Քաւարանի կարիքը չունիս, «Խոստովանիր»ի 3-րդ համարի 3-  
րդ տողը, կրանիթով է կերտուած երիտասարդական այս հուրը (106):

Գորովով, երկիւղածութեամբ սիրտդ առած ես ափիդ մէջ ու կտա-  
կած հոգիէդ բխող փրկիստփայլութիւնը, որ ինքնին կոչ եւ խրատ է եւ  
որպէս մարդ ապրելու յորդոր, ամբողջ իմաստասիրական տասնա-  
բանեայ մը, տապանակ ուխտիիդ գանձը: Վարձքդ կատար, հին օրե-  
րէն ցարդ անվկանդ գրչի խնկարկու: Եւ վերջ:

Գրեցի բաներ, սեւցուցի էջեր, գուցէ եւ վստահաբար նաեւ երեսս:  
Ըսի ինչ որ գիտէի. «մարդ իր ունեցածը տալով չէ ամչցած», կ'ըսէ  
հայկական առածը: Եթէ կայ թիւր իմացութիւն մտածումներուդ իմ  
մեկնաբանութեանս ընթացքին՝ ՄԷԱ-ԳՈՒԼԲԱ, կը խոստանամ  
չկրկնել: Շարունակէ՛ երթդ ու մտերիմ զրոյցդ հայ մուսաներու հետ:  
Գնա՛ եւ գացէ՛ք Հայաստան գոնէ անգամ մը:

Ծարաւ քենեկալդ՝

ՍԱՐԳԻՍ ԿՈՆՃԵԱՆ

Ուսուցիչ-հրապարակագիր

Թրիփուլի, Լիբանան

## ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ «ՆՈՒԻՐՈՒՄ»ՈՎ ԻՆՔՆԱԲԱՑԱՅԱՅՏՏՈՒՄԸ

Քիչ անգամ կը հանդիպինք բանաստեղծական հատորի մը, որուն մէջ գտնենք համապարփակ պատմութիւնը մեր եւ «պատմողին»: Բանաստեղծութիւնները այս հատորին, իրենց ենթակայական առումով, կը պատկանին ընդհանրապէս հայ ազգութեան, հետեւաբար եւ մեզի:

Ուստի, բանաստեղծը ըլլալով հոգեվերլուծման բացայայտումներու ենթագիտակցութեան մղումին մէջ, իր անձէն մեկնելով՝ իր բոլոր տեսակի հաւատամքներուն եւ ապրումներուն անպատում պատմութիւնները կը ներկայացնէ ինքնակենսագրականութեամբ:

Առաւել, բանաստեղծ Գրիգոր Հոթոյեանի ներծծական զգացումներու յորձանուտին մէջ կը բարեխառնուին խոկումներ՝ խաղերու խաղերով, որոնք թեմայական պատշաճեցումներով կը դառնան աղօթք, հոգեբուի «Տէ՛ր, ողորմեա՛», խոստովանութիւն, դրական կիրքի բոլոր հանգրուաններու եւ մակարդակներու, պատարագային արարողութեամբ:

Իր կեանքի էութիւնը կլանող բոլոր խտացումներու արտադրումները չեն գար իր գրիչէն միայն, այլ կազմուած են ենթաշխարհայինէն, ազգային, մարդկային, զգացողական եւ յուզապրումային փորձառութիւններէն:

Ան տաղերգուն է թոհուբոհային սաղմոսներուն, յեղափոխութիւններուն, երգ-երգոցներուն, եւ հին օրերու կարօտներուն, նոր երգերու ընկալումի յաճախանքներով, անհատական յուշերու արանքներէն ծլարձակումի կոկոններով, ամպահալած արշալոյսներու ոգորուն ապրումներով:

Բանաստեղծութիւնը իր մօտ ձեւապաշտութիւն չէ, չափազանցութիւն չէ, այլ հոգեմտաւոր խմորումներու ապրումային մատեան, սիրոյ մատեան:

Սէրն է իր նուիրումի հոմանիշը: Սէրը ներքին, պայթուցիկ արտայայտութիւններով, ընդհանրական բացատրութեան գաղափարազգացականութիւն է: Սէրը երգ է, երգ՝ լայն ընդգրկումով, ազատագրական մղկտումներով:

Սէրը՝ ուխտ լինելութեան, համայնական լինելութեան հպարտութեամբ, յաղթանակներու հպարտութեամբ:

Այդ յաղթութեան երգերուն մէջ բանաստեղծը գիտէ ծիրանաւորել մեծ պայքարի տրիբունները, որոնք աշխարհ եկած են ոչ թէ իշխելու, այլ համայնական սրտով նուիրաբերուելու: Նուիրաբերուելու իրենց էութեամբ, քալելով այն ամայքներէն, ուր ազատութեան լոյսը իրենց քայլերը կ'առաջնորդէ, անոնք կ'անցնին արնավառ վայրերու գոհիչներէն, շալակած կեանքի մեղքերը մարդոց, եւ անոնց սրբաբուրեցեամբ սրբութեամբ վերանալու:

Սիրոյ այս հատորին մէջ կան այնքան թովիչ պատարագներ: Իսկ երագները տարիներու ցոլքերէն կը լուսաւորեն մեր եկեղեցիները՝ հայրենիքէն մինչեւ հեռաւոր ափերը մեր ապրած տարածքներու օճախներուն:

Բնականաբար, լոյսի այս հեղեղներու մէջ պիտի բողբոջին թախիծներու տրտմաշուշաններէն ովասիսները յոյսերու, որոնք հրաւէր են ամէն հայու, նախ մոռնալու մորմոքները հոգետանջ, ընկալելու մղումները եւ յուզական պահերը ցնծալի տրոփներու ընկալալոյսն շոյլներով, գաղափարական լայնատարած եւ հայագոյն դրօշներով:

Կը մասնակցինք շղթայագերծուած պայքարին, ներքին թէ արտաքին խայտաբղէտ երեւոյթներուն դէմ, զինուած յաւերժական արժէքներով եւ յարատեւ ստեղծումով նոր արժանիքներու:

Այստեղ կը բռնկուի գայրոյթ՝ ընդդէմ մեր ընթացքին մէջ գրտնուող ուխտի ուրացողներուն:

Բայց եւ կան ծափող յոյսներ այն զինակցութեան, որ կը կոփէ վճռականութիւնը հայ կիզակէտներուն, ի խնդիր միասնականութեան կառոյցներուն:

Եւ կը վերադառնանք կրկին աղօթքի: Գաղափարական թէ գրական անբասիր բառերով երկնուած աղօթքներու, ուր կայ եւ մեր հոգեւոր սնունդը, որ մեր մէջ կենդանի կը պահէ հայրենի գաղափարի իրապաշտ աշխարհագրութիւնն ու պատմութիւնը, իր մշակութային, հոգեմտաւոր եւ ռազմական ենթամասններով:

Այս աղօթքներու մէջ կան հայրենական զգացումներու բողբոջներ: Կայ ճշմարտութեան դրօշը: Ծշմարտութեան ղօղանջը կը հնչէ բանաստեղծական երկունքներու շթաքարերուն հետ:

Գրիգոր Հոթոյեան դեռեւս կը պատգամէ հայրենիքի ծննդեան համայնական օթեւանի իրապաշտութիւնը: Ինչպիսի վարդապետն արշալոյսներ: Ապրած ենք սառնամանիքներու մէջ, տաքցած ենք անկախութեան միտքարութեամբ եւ վայելած սիրոյ անսահման գուրգուրանքը՝ բոլոր նուիրաբերումներով:

Կը կարդանք բանաստեղծին սրտառուչ կոչը դիմելու արմատներուն: Իսկ մեր ունկերուն կը հասնին Արարատի կանչը, էջմիածնի ղօղանջը, մեր աչքերուն կը շողան սեւանեան կապուտաչեայ ժպիտները:

Այստեղ է սփիւռքահայ մեր մաքառումներու հզօրանքը, անոր յաղթանակի գաղափարաբանութիւնը, նոր եւ հին նուաճումներու հերոսական խոյանքները, Սարգարապատէն մինչեւ Արցախ եւ Շուշի նկրտումներու տքնանքը:

«Նուիրում»՝ հայրենիքին յառելով միայն մեր աչքերը:

Բանակներու շարքերը խտացնելու՝ բոլոր տեսակի մարտերու մէջ:

«Նուիրում»՝ քաղաքական քնարերգութեամբ եւ քնարերգական հայրենասիրութեամբ:

Էջերու աւարտին մեր մէջ կը շարունակուի ընթերցումը եղանակաւորուած երգերու, բանաստեղծի զեղուն յուզումներով, էգիկ Յովսէփեանի կատարողութեամբ:

Գրիգոր Հոթոյեան կրցած է մեր Դատի հին եւ նոր կտակարանները միացնել յաջողութեամբ:

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ  
Գրող, մտաւորական,  
հրապարակագիր, հրատարակիչ,  
խմբագիր, մշակոյթի գործիչ  
եւ կրթական մշակ



## ԵՐԳԵՐԻ ՄԻՋՈՎ ՔԱՅԼՈՂ ՀԱՅՐ

Ծանօթութեան խարխիւր երեւանը եղաւ: Ջգացի, որ կանադահայ իմ նոր բարեկամը հայրենասէր ու բարեհոգի մարդ է: Մի քանի տարի անց նորից հանդիպեցինք, այս անգամ Գրողների Համահայկական Առաջին Խորհրդաժողովում: Սփիւռքահայ պատուիրակութեան հետ շրջեցինք Հայաստանի տեսարժան վայրերով եւ կամաց-կամաց ինձ համար Գրիգոր Հոթոյեան մարդն իր մէջ ներառեց անհատականութեան բազմազոյն ասելիքը:

Սեղանիս նրա երկրորդ ժողովածուն է «Նուիրում» խորագրով: Այս մի հատիկ բառն իսկ բաւական է հասկնալու, որ Հոթոյեանն իր հոգու դռներն է բացել ընթերցողի առջեւ: Բառին տուել է անկեղծ ու անմիջական երգելու բազմերգ հնչեղութիւն: Եւ այդ երգը ընթերցողին մտորելու առիթ է տալիս յանուն սիրոյ, հայրենասիրութեան, յանուն մարդու մէջ մարդ մնալու սրբազան առաքինութեան: Երեւի թէ նոյն զգացողութիւնն էր ունեցել վաղամեռիկ արձակագիր Յակոբ Կարապետեանը, երբ Հոթոյեանի առաջին գրքի հրատարակման առիթով

գրել էր. «Այդ որքա՞ն հարուստ ներաշխարհ ես ունեցել: Այդքան սէր ու կարօտ ինչպէ՞ս ես պարփակել սրտիդ մէջ...: Տեսայ քո գեղեցիկ հայերէնը՝ միանգամայն հասուն, ճկուն ու հարուստ: Ուրեմն կեցցէ՛ Հալէպը, որ քեզ պէս բանաստեղծ է տուել...»:

Գրիգոր Հոթոյանի ե՛լ բանաստեղծութիւնները, ե՛լ երգերը, որոնք գետեղուած են «Նուիրում» ժողովածուում, մեզ պատկերացում են տալիս մի մարդու մասին, որի գրական ճանապարհը իր խոր ու կենսական արմատներն ունի: Թէպէտ նա հեռու է ապրում հայրենիքից, բայց հայաստանեան արեւը Հոթոյանի հոգու գերբնական ուժն է: Հայրենիքի ցաւի, տիրութեան, ուրախութեան եւ երազանքի արձագանգը Գրիգոր Հոթոյանի համար գոյատեւման թթուածին է: Այլ կերպ էլ չէ կարող լինել, քանզի Եղեռնից հրաշքով փրկուած Սերոբ Աղբիւրի եւ Սմբատի նախկին գինուոր սասունցի Հոթոյանց Ղազարի յարկի ներքով ծնուած այս արու գաւազը հայ ժողովրդի նման ժառանգել է փիւնիկ թռչունի ճակատագիրը:

Գրիգոր Հոթոյանը միշտ հոգեւոր աշխարհի շնչառութեամբ է ապրել եւ պատահական էլ չէր, որ նրա առաջին բանաստեղծութիւններն ու թղթակցութիւնները լոյս են տեսել «Արեւելք» (Հալէպ) օրաթերթում: Հոթոյանը նաեւ մանկավարժական գործունէութեամբ է զբաղուել, եղել է ուսուցիչ եւ դպրոցի տնօրէն: Այսօր Գրիգոր Հոթոյանին սիրով են յիշում Սիրիայի Հալէպ եւ Ռահկա քաղաքների հայկական վարժարանի նախկին սաները: Սակայն նրա կոչումը խօսքն ու հոգու թռիչքն է: Բանաստեղծ Գրիգոր Հոթոյանի համար բառը ե՛լ սիրոյ նրբութիւն ունի, ե՛լ պայքարի կոչ է, հայրենասիրութեան ազատատենչ կամք: Նա, որ թեմայով էլ որ գրում է, արտայայտում է մարդու հոգու շարժումը, իսկ այդ հոգեւոր շարժման հիմքում բանաստեղծն իր հայրենապաշտ գաղափարի հիմնաքարն է դրել. «Հայաստանի սիրտէն, Սասունի սրբազան լեռներէն ժառանգած սիրտիս մէջ բոցավառուող կրակը զիս երբեք հանդարտ չէ ծագած եւ պիտի չձգէ մինչեւ մահ, որովհետեւ արմատներս կը սերուին անձնագոհ Ֆետայիներու այն փաղանգէն, որոնք իրենց կեանքը զոհաբերեցին հայ ժողովրդի ազատութեան ճանապարհին»: Դրա վկայութեանն են նրա բազմաթիւ հայրենասիրական բանաստեղծութիւնները, որոնցից շատերը դարձել են երգեր եւ հնչում են Սփիւռքի, յատկապէս Կանադայի հայկական բեմերից եւ ձայնասփիւռներից: Ինչպիսիք են «Ղաւրաբաղը կը կանչէ», «Ազատատենչ իմ Հայաստան», «Ձայն ազատութեան» եւ ուրիշներ:

Հոթոյան բանաստեղծը իր հոգու ալեկոծումները էջ առ էջ բացում է ընթերցողի առջեւ, չի կեղծում իրեն, չի ձգտում վերամբարձ ուճի: Իր պարզ ու անպաճոյճ հոգու նուիրումի ծաղիկներն է բաժանում ընթերցողներին: «Նուիրում» ժողովածուն բաղկացած է «Իմ երգարանը», «Որդիական», «Նուիրում» եւ յաւելեալ «Հեղինակի մասին»



բաժիններին: Ամէն մի բաժին իր ուրոյն ասելիքն ունի, բայց ներքին անտեսանելի հոգեբանական շաղկապով հանգուցուած է մէկը միւսին այնպէս, որ մի կուռ ամբողջութիւն է դառնում, ներկայանալով ընթերցողին որպէս հայոց երկրի հարազատ զաւակի սիրոյ վառ արտայայտման դրսեւորում: Գրիգոր Հոթոյեանի պոէզիայում պատկերները շատ են տեսանելի, լինեն դրանք հայրենասիրական, թէ սիրոյ բանաստեղծութիւններ: Հեղինակը բառը բառին թելակարելով, ստեղծում է այն բանաստեղծական աշխարհը, որը միայն իրենն է, թոյլ է տալիս ընթերցողին տեսնելու իր բառի անցեալն ու ներկան: Բառ, որ իր մէջ լուռութիւն ունի, բայց եթէ աչքերիդ բարութեամբ հպուած ես նրան, նա սկսում է ղօղանջել, իսկ այդ ղօղանջի մէջ ընթերցողը պէտք է կարողանայ զգալ, լսել բանաստեղծի սրտի զարկերը, որոնք յուշում են, որ հայրենի երկրից հեռու մտաւորականն իր ժողովրդի հոգեւոր տագնապներով է ապրում, որ հեռավորութիւնը երբեք չի կարող խաթարել այն, ինչ հարազատ է ու սուրբ:

Հայաստան, Հայաստան, երկիր լուսաշող, երկիր Նայիրեան,  
Եռագոյն դրօշով՝ ոգեղէն կամուրջ ամբողջ հայութեան,  
Արեւաշող, բոքր հայրենիք, վահագնածիւն Հայաստան,  
Անգուգական իմ հայրենիք, վերածնեալ Հայաստան:

Գրիգոր Հոթոյեանի սրտի խորանում բացառիկ տեղ ունեն ոչ միայն այն վարժարանը, ուր ուսանել է եւ այն ուսուցիչները, որոնք հայաշունչ կրակ են վառել բանաստեղծի հոգում, այլեւ մեր ժողովրդի նուիրեալ մտաւորականները, որոնց Գրիգոր Հոթոյեանը ձօնել է գողտրիկ բանաստեղծութիւններ: Այդպիսիք են «Նրիմեան Հայրիկ», «Զօն Սայաթ-Նովային», «Սուրբ Կոմիտաս» եւ ուրիշներ: Բանաստեղծն իր հայեացքը յառում է աշխարհին ու մարդկանց, իր ընկերներին կոչ անում, որ նրանք չխաբուեն հարստութեամբ, վայելքներով, որովհետեւ այդ բոլորը անցողիկ են: Հոթոյեանը գտնում է, որ մարդը պէտք է իր բարի գործերով բարի անուն ունենայ, եւ այդ ժամ կ'արժանանայ սիրոյ եւ յարգանքի: Այն մարդը, որ հոգով աղքատ է, ի՞նչ է թողնելու աշխարհին: Բանաստեղծի համար կարեւոր խնդիր է դառնում մարդուն տեսնելու որպէս բնութեան, կեանքի կարեւորագոյն շարժիչ ուժ, ձերբազատուած չարութիւնից, նիւթական պաշտամունքից: Եւ այդ է պատճառը, որ «Նուիրում» գիրքը, առաջին էջից մինչեւ վերջին էջը, տողորուած է մարդասիրութեան, հայրենասիրութեան եւ սիրոյ գաղափարներով: Եւ ինչպէս Հոթոյեան բանաստեղծն է յիշեցնում. «Բանաստեղծութիւնը, բնութիւնն ու կեանքը, ժողովրդի ոգին ու երազանքները կը ցոլացնէ ու կը պատգամախօսէ ժողովրդին հասկանալի, գեղեցիկ լեզուով ու պարզութեամբ, ճոխացած զգացումով, գաղափարով, ապրումով ու երեւակայութեամբ»: Այդ-

պիսին է բանաստեղծի հաւատամքը եւ այդ հաւատամքը լեցուն է առաջին հերթին օտար ասիերում հայեցի ոգին պահելու դժուարին աշխատանքով, որն այսօր Մոնթրէալում լոյս տեսնող «Հորիզոն» շաբաթաթերթում կատարում է Գրիգոր Հոթոյեան բանաստեղծն իր յօդուածներով ու հրապարակասութեամբ: Նա կոչ է անում սիրել ու պահպանել հայոց լեզուն, քանզի այս մարդակուլ աշխարհում հայ մարդու համար մայր լեզուն գոյատեւման անձնագիր է, լինելիութեան փարոս:

Ձմալելի երաժշտութեամբ մեղեդի եւ դուն վարարուն,  
Մեր հնամեայ տաճարներէն վեր բարձրացող աղօթքի սիւն,  
Մեր եռանդուն շինականի ու հովիւի շրթունքներուն  
Յաւերթօրէն թրթռացող անմահական երգերու տուն:

Բանաստեղծ Գրիգոր Հոթոյեանի պոէզիայում կարեւոր ու նշանակալից դեր ունի կինը որպէս սիրոյ, մայրութեան խորհրդանիշ: Նրա սիրային-քնարական բանաստեղծութիւնները լեցուն են քնքուշ մեղեդայնութեամբ: Առանց սիրած էակի, բանաստեղծի համար կեանքը ոչինչ է ու դատարկ: Կարօտից ու բաժանումից ծնուած բանաստեղծութիւններում կնոջ հանդէպ ունեցած սիրոյ նուրբ պատկերներով, հեղինակը սիրոյ խոստովանութեան սրտայոյգ բառեր է շարդում: Գրիգոր Հոթոյեանի համար կնոջ կարեւոր առաքելութիւնը հայրենասէր զաւակներ կրթելու եւ նրանց հայեցի դաստիարակութեամբ օժելու մէջ է:

Հազար պատիւ հայ մայրերուն,  
Որոնց վսեմ նուիրումով  
Եւ սեփական կեանքի գնով  
Հասած է մեզ հայոց լեզուն:

«Նուիրում» ժողովածուն Գրիգոր Հոթոյեանի մի իւրօրինակ հատընտիրն է կարծես նրա ապրած կեանքի եւ գրական վաստակաշատ ճանապարհի: Այս ստեղծագործական հանրագումարը, որ դարձել է գիրք, ուրախալի է, որ տպագրուել է հայրենիքում հեղինակի դստեր եւ թոռների մեկենասութեամբ եւ «Ուխտատուն» թանգարան-ինստիտուտի հրատարակչութեան տնօրէն, խմբագիր, բանաստեղծ Սասուն Գրիգորեանի ջանքերով: Այս գիրքը գալիս է հաստատելու, որ օտար ասիերում ապրող հայ մարդու՝ յատկապէս բանաստեղծի համար հայրենիքը այն միակ հանգրուանն է, որից երբեք չեն հեռանում, այլ միշտ վերադառնում են, ինչպէս արձակագիր Հրաչեայ Մաթեոսեանն է գրում գրքի առաջաբանում. «...նրա համար հայրենիքում սիրելը հրաշք է, հայրենիքում նոր երգ գրելը՝ հրաշքի նման...»:

Ուրեմն ցանկանք, որ Գրիգոր Հոթոյեան բանաստեղծն իր նոր բանաստեղծական ժողովածուներով ուրախացնի իր հայաստանեան ընթերցողին:

Բարին ընդ քեզ, իմ հայրենասէր գրչեղբայր...

ԼԻԼԻԹ  
Բանաստեղծ

«Խորան Լուսոյ»,  
8 Օգոստոս 2002, Երեւան




## ԲԱՆԱՍՏԵՂԾ ՄԱՐԴԸ՝ ԲԱՌԵՐԻ ՄԷՋ

Գրիգոր Հոթոյեանին

եւ նրա «Նուիրում» գրքին ծանօթանալուց յետոյ

Երեւանում ծանօթացանք: Գնացինք սուրբ էջմիածին, եղանք Օշականում, խոնարհուեցինք սուրբ Մեսրոպ Մաշտոցի աճիւնին: Ուր էլ գնացինք՝ սուրբ էր ու սրբբութիւն էր: Յաճախ յառնում էր, ուռճանում, երբ նայում էր սուրբգրային մեր լեւրանը, յաճախ արտասուում էր, յանկարծ զգացի, որ նա կարող է մտնել բառերի մէջ: Անսովոր ոչինչ չկայ: Մարդը ծնուել է այդ բառերից, տարիներ, տասնամեակներ շարունակ պահել-պահպանել է իրեն ծնած բառերը ու սրտի ուզած ժամանակ իրաւունք չունի՞ մտնելու իր բառերի մէջ այնպէս, ինչպէս մտնում են հարազատ տուն, այգի, ինչպէս մտնում են ճանապարհ, տրւում յուշերին: Եղեռնի միջով անցած ծնողների զաւակը բառի եւ պատմութեան ծնունդ է: Առանց կարգալու զգացի՝ բանաստեղծ է: Ու երբ գրչեղբայրս՝ Սասուն Գրիգորեանը առաջարկեց կարգալ ձեռագիրը, մի պահ երկմտեցի. «Մարդը ծնուած օրից բանաստեղծ է», էլ ի՞նչ կարգամ, էլ ինչո՞ւ կարգամ:



Բանաստեղծի մասին շատերն են հիացմունքի խօսքեր ասել ու գրել: Յակոբ Կարապենցի եւ Սասուն Գրիգորեանի «գրաւոր մեղադրանքները» բաւական են, որ ձեռքերս կապուեն: Ձեռքերս կապուած են, բայց կարդում եմ եզակի արձակագիր, ափսո՛ս, վաղամեռիկ Յակոբ Կարապենցի սրտայոյզ-նրբազգաց խօսքը, «Այդ որքան՝ հարուստ ներաշխարհ ես ունեցել: Այդքան սէր ու կարօտ ինչպէ՞ս ես

պարփակել սրտիդ մէջ: Սիրեցի թէ՛ հայրենասիրական երգերդ եւ թէ՛ սիրային տազնապներդ»: «Որքան բոցաշունչ են յեղափոխական երգերդ, նոյնքան տրտմանոյչ են անձնական տուլայտանքներդ», «...այս գրքի մէջ է, որ տեսայ քո գեղեցիկ հայերէնը՝ միանգամայն հասուն, ճկուն ու հարուստ: Ուրեմն, կեցցէ՛ Հալէպը, որ քեզ պէս բանաստեղծ է տուել»:

Յաւօք, ես չեմ կարող վիճել Յակոբ Կարապենցի հետ, չեմ կարող ասել՝ ոչ մի քաղաք ու երկիր բանաստեղծ չեն տալիս: Բանաստեղծ տալիս են ծնողները, բանաստեղծ տալիս է լեզուն, բանաստեղծ տալիս է սէրը: Գրիգոր Հոթոյեանը բանաստեղծ է դարձել ծնողների, լեզուի եւ սիրոյ շնորհիւ: Ասենք, որ նրա համար իր ծնողները պատմութիւն են, իր լեզուն պատմութիւն է, իր սէրը պատմութիւն է: Ես չեմ կարող ասել, թէ ինչ ջերմութեամբ (գուցէ եւ սառնութեամբ, անտարբերութեամբ) կ'ընդունուի բանաստեղծի այս նուիրումը, բայց սիրով ասենք, որ բանաստեղծին բանաստեղծ դարձրած «Սիրտը Ափին Մէջ» գիրքը, որը լոյս է տեսել Տորոնտոյում, 1987-ին, շատերի ուշադրութիւնն է շեղել առ Գրիգոր Հոթոյեանը: Դրանցից մէկն է Յակոբ Կարապենցը, որի խօսքից առատօրէն ծագկաքաղցից: Այսպէս կարող եմ ծագկաքաղցելով «գործս եղա տանել», բայց «Նուիրում»ը, իրօք որ, նուիրում է պահանջում:

Յաճախ բառերի մէջ թաքնուող բանաստեղծը ծննդեան տօն է ստեղծում: Գիրքը, որ բաղկացած է «Իմ երգարան», «Որդիական», «Նուիրում» եւ յաւելեալ՝ «Հեղինակի մասին» բաժիններից, ամբողջովին, ամէն մի բաժնով, բանաստեղծութեամբ, տող ու տնով նուիրում է: Չմոռանանք, երբ ուսուցիչ Գրիգոր Հոթոյեանն է բանաստեղծում, երբեք չի փորձում դաս տալ, յիշեցնել իր ուսուցիչ լինելը: Դա սքանչելի է: Հեղինակի հետ մտերմիկ պահերը, զրոյցները, լուրթիւնը, իրա արմատի, անցած ճանապարհի իմաստին մօտենալը, տպագրածն ու ձեռագիրը, ասես, մէկ արած, նոյն բանն են յուշում, հայրենի եզերքից, տնից, տեղից զրկուածը, Տէր Զօրի անապատներով անցածի սերունդը այլեւս չէր կարող ոչինչ սիրել այնպէս, ինչպէս պէտք է գուրգուրելով, դողահար սիրել մաշտոցեան գիրն ու գրականութիւնը, որի հանդէպ տածած սիրով միայն կարելի է յառնել: Այդպէս կոչուածներից մէկն էլ իր ծնողների, իր ժողովրդի պատմութիւնը քաջ իմացող բանաստեղծ Գրիգոր Հոթոյեանն է, մարդ, որն իրաւունք չունէր մոռանալու իր վարժարանը, իր ուսուցիչներին: Չօնեղբուրթիւնների մէջ ամէն մէկն իր արժանի տեղն է գտել: Կ'ասէի՝ բանաստեղծը ոչ միայն իր «նուիրատուների» հոգեբանութիւնը լաւ գիտի, այլեւ գիտի սուրբ մաշտոցեան բառերի, կ'ասէի՝ գրերի հոգեբանութիւնը: Այդպէս չլինէր, նա չէր կարող բանաստեղծել. «Մնած մեսրոպեան լեզուի հայաբոյր լոյսով սրբազան»: Հայ բանաստեղծի գրչից շատ է արիւն ծորացել, արիւնոտ բառեր շատ ունենք: Պէտք է ուժ ունենալ

սիրոյ երգեր գրելու համար: Ատելու համար նոյնպէս պէտք է սէր ունենալ:

Իր ապրած կեանքի գինը, իր խօսքի արժէքը քաջ իմացող բանաստեղծը երբեք իրաւունք չունի մոռանալու, թէ իր արմատները որտեղից են գալիս, ովքեր են իր նախնիք, ծնողներն ի՛նչ են կորցրել: Ինչո՞ւ մոռանալ, որ ծնուել, հասակ է նետել Հալէպի հայաչունչ գաղթօճախի մէջ, պարտական է նաեւ ուսուցիչներին, մտաւորականներին, խմբագիրներին է պարտական: Նա մինչեւ իր կեանքի վերջին պահը չի մոռանայ իր կուսակցութեանը, թրծուել է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հնոցի մէջ: Երգումի նման է հնչում նրա խօսքը. «Հայաստանի սիրտէն՝ Սասունի սրբազան լեռներէն ժառանգած սիրտիս մէջ բոցավառող կրակը զիս երբեք հանդարտ չէ ձգած եւ պիտի չձգէ մինչեւ մահ, որովհետեւ արմատներս կը սերին անձնագոհ Ֆետալիներու այն փաղանգէն, որոնք իրենց կեանքը զոհաբերեցին Հայ ժողովուրդի ազատութեան ճանապարհին»: Եթէ բանաստեղծի արձակ այս ազնիւ խոստովանութեան տխուր երաժշտութիւնը, բառերի թախիժն ու լացը, հաւատը, յոյսը փորձենք աւելի մանրամասնել, ապա նոյն պահին կը ստացուի այս ժողովածուն, որ կոչուում է «Նուիրում»: Եթէ չափակչուելու լինենք ապրած կեանքը (տարիքային իմաստով) եւ գրական վաստակը, ապա շահողը լինելու է ճանապարհը, որը սասունցու գաւակի հպարտութեամբ անցել է Գրիգոր Հոթոյեանը: Նա միշտ եղել է հայոց բառ ու բանի հետ: Եթէ ճիշդ է, որ նա պահել է լեզուն, ապա ինքն էլ մեր լեզուի, մեր բառի փրկածն է: Եւ նա ոչ միայն բանաստեղծութիւններ է մեզ նուիրում, այլ բառերի, պատկերների, ապրումների հրավառութիւն է սարքում:

Սիրային-քնարական բանաստեղծութիւնների մէջ ասես ծփում է մեր ժողովրդական մեղեդայնութիւնը: Թող միշտ բանաստեղծի գրը-չին պատկանի «երազանքով քաղցրահամ», «դալարագեղ վարդաստան», «ըզձանքներով սիրավառ», «ուղին մթաստուեր», «ջահով օրհնաբեր», նման տասնեակ ու տասնեակ բառապատկերներ, որ լցուած են երգերի մէջ, բայց խորթ պիտի համարեմ, երբ նոյն գրիչը գրում է «գեղեցկուհիս սիրախանձ», եւ նման ոչ բանաստեղծական ամպոտ շերտեր, որ ստուեր են գցում լուսածիր պատկերների վրայ: Գեղեցկութիւն, սրտի նուիրում համարենք ձօներգերը, որից այս գիրքը պակասութիւն չի քաշում: Նուիրումները յաճախ ալպոմային արժէքի են, բայց գլխաւորը մնում է հեղինակի անկեղծութիւնը:

Բանաստեղծը չէր կարող բանաստեղծութիւններ չնուիրել հայոց լեզուին, չապրէր մեր ճակատագրով, բայց սխալուած չենք լինի, եթէ ասենք, որ մեր սրբութիւններն աւելի են սրբանում, աւելի մերը դառնում, երբ զգում ես բանաստեղծի արեան կանչի մտերմութիւնը իր կորուսեալ եւ հաւատի մեծ աշխարհի հետ: Երախտագիտութիւնը պէտք է ուղեկցի մարդուն: Մեր բանաստեղծները երբեք խեղճ չեն ե-

ղել եւ տասնեակ ու տասնեակ բանաստեղծութիւններ են նուիրել աշխարհի սարերին ու գետերին, ժողովուրդներին ու քաղաքներին: Կը խնդրէի ընթերցողին, որ նա հանգիստ կարգայ Սիրիային նուիրուած բանաստեղծութիւնը: Սա արդէն պատմութիւն է՝ լուսաբացի ճշմարտութեամբ:

Գրիգոր Հոթոյեանը, պարզուում է, երգաստեղծ է: Այս գրքում դուք կը հանդիպէք բանաստեղծի գրած շատ խօսքերի, խօսքեր, որ, ինչպէս ասում են, դարձել են երգեր: Հենց բառերը յուշում են, որ նա լաւ երգերի խօսքերի հեղինակ է: Շնորհակալ լինենք երաժշտութեան հեղինակներին, դաշնաւորողներին, երանի նրանց, ովքեր կը լսեն եւ կը վայելեն:

Սիրային ինչ երգ էլ գրած լինի ու գրելու լինի Գրիգոր Հոթոյեանը, սիրոյ նրա անսպառ աղբիւրը եղել ու է՝ իր Հայաստանը, հայոց լեզուն, Արարատը, հայ ժողովուրդը, իր կուսակցութիւնը: Աղբիւր, որ նա պահել ու պահում է մաքուր: Ու հիմա ինչպէս ուրախ չլինի, երբ սրտի ցանկացած ժամանակ գալիս է Հայաստան: Տեսնելու, լցուելու, հաւատալու: Նրա համար հայրենիքում սիրելը հրաշք է, հայրենիքում նոր երգ գրելը հրաշքի նման բան է: Եւ, որպէս գրող, եկաւ, մասնակցեց Գրողների Համահայկական Առաջին Խորհրդաժողովին, նորից լցուեց Հայաստանով, հասցրեց իր «Նուիրում»ը նուիրել մեզ ու...

Բարի ճանապարհ, մինչեւ նոր հանդիպում նոր գրքով, մեր պատմութեան, լեզուի, հայրենիքի հետ արմատներով կապուած, Սասունի ասած, պայքարի եւ հաւատի սասունորդի:

ՀՐԱԶԵԱՅ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ  
Արձակագիր



## ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ (ԾՆՆԴԵԱՆ 75-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ)

Հեռաւոր Կանադայի Տորոնտօ քաղաքում է ապրում նախկին մանկավարժ, էրգրի կարօտով ապրող, բայց էրգիր չտեսած սասունորդի բանաստեղծ եւ հրապարակախօս Գրիգոր Հոթոյեանը՝ Սերոբ Աղբիւրի եւ Սմբատի նախկին գինուոր Հոթոյեանց Ղազարի (Խարզօ) եւ Մարիամի որդին, քաջարի հայդուկապետներ եւ հայոց ազատագրական պայքարի ուխտանուիրեալներ Սպաղանաց Կալէի եւ Մակարի շառաւիղներէից մէկը: Ծնունդով (5.08.1927թ.) Գրիգորը հալէպցի է: Կըրթութիւնը ստացել է Հալէպի Սահակեան վարժարանում: Դպրոցն ա-

լարտելուց յետոյ որպէս ենթասպայ Սիրիայում եւ Լիբանանում ծառայել է ֆրանսիական բանակում: Զօրացրուելուց յետոյ զբաշար եւ լրագրող էր Հալէպի «Արեւելք» թերթում: Այստեղ են լոյս տեսել նրա առաջին թղթակցութիւններն ու գրական թոթովանքները:

Այնուհետեւ որպէս մանկավարժ-դաստիարակ, յետոյ էլ հայկական դպրոցի տնօրէն Գրիգոր Հոթոյեանը աշխատել է Սիրիայի Հալէպ եւ Ռակկա քաղաքներում:

Ուր որ երթաս, ուր որ ապրիս Սփիւռքի խորք տարածքին,  
Ոչ մէկ ատեն ազգդ, լեզուդ, եկեղեցիդ չմոռնաս...

Դպրոցական տարիներից մինչ օրս սա է Գրիգոր Հոթոյեանի կեանքի նշանաբանը, եւ նա հաւատարիմ է իր ուխտին: Դա են վկայում դեռ 1975թ. մինչ օրս Կանադայում ապրող եւ ստեղծագործող, «Հորիզոն» հայկական թերթի աշխատակից բանաստեղծ հայորդու «Սիրարը Ափի Մէջ» (1987թ. Տորոնտո) եւ օրերս Երեւանում լոյս տեսած «Նուիրում» (2002թ.) ժողովածուները:

Կեանքս դաժան է արդէն,  
Ինչպէ՞ս ապրիմ ես հիմա,  
Հայրենիքիս կարօտէն  
Ես կը մեռնիմ, հաւատա՛...

Հայրենի կարօտը 2002թ. Մայիսին բանաստեղծին հայրենիք բերեց: Նա այստեղ մասնակցեց Հայ Գրողների Համահայկական Առաջին Համագումարին: Կանադահայ գրողներ Ռուբէն Մնացականեանի, Մարգար Շարաբխանեանի, Մանուէլ Քօստեանի եւ այլոց հետ ծանօթացաւ իր նորանկախ հայրենիքի առօրեային, եղաւ էջմիածնում, Օշականում, Ծաղկաձորում, Սեւանում, հոգեպէս եւ գաղափարապէս կիսուեց իր գրչեղբայրների եւ ընթերցողների հետ եւ Կանադա վերադառնալուց յետոյ ընդարձակ յօդուածներով անդրադարձաւ Գրողների Համահայկական Առաջին Համագումարին:

«Նուիրում»ը բաղկացած է «Իմ երգարանը», «Որդիական» եւ «Նուիրում» բաժիններից: Թերթում ես ժողովածուի առաջին բաժինը եւ ծանօթանալով Գր. Հոթոյեանի երգատեքստերին եւ նրանց հիմա վրայ հիւսած երաժշտութեանը, չես կարող չուրախանալ, երբ տեսնում ես, թէ ինչպէս է հազարաւոր կիլոմետրերով Հայաստանից հեռու Կանադայում ծերունազարդ բանաստեղծը մենախօսում Արցախի հետ, այլուում հայաստանեան կարօտի հրից, ազատութեան եւ անկախութեան կոչում Մայր Հայրենիքում եւ Սփիւռքում ապրող ողջ հայութեանը, վկայ նրա «Ղարբաղը կը կանչէ», «Ազատատենչ իմ Հա-

յաստան», «Ձայն ազատութեան», «Երազներու ճանապարհով» բանաստեղծութիւնները, որոնց երաժշտութեան հեղինակը նորից Կանադայում պարող կոմպոզիտոր Էդիկ Յովսէփեանն է:

Գր. Հոթոյեանի խոհա-փիլիսոփայական, սիրոյ եւ հայրենասիրական բազմաթիւ բանաստեղծութիւններ եւ երգատեքստեր շնորհիւ կոմպոզիտորներ Էդիկ Յովսէփեանի, Սարգիս Համպոյեանի, Յակոբ Մանուկեանի, Անահիտ Կուտսուզեանի, Արթուր Ռազդոյեւի, Գէորգ Յարութիւնեանի եւ դաշնամուրի բաժինը Գէորգ Անտոնեանի, իրենց քաղցրածոր մեղեդայնութեամբ, վառ հայրենասիրութեամբ եւ քնարականութեամբ յաճախ են հնչում ոչ միայն կանադահայ ռադիոյով եւ հեռուստատեսութեամբ, այլեւ զանազան դաշնակահարներին նուագակցութեամբ յուզում են հայ դպրոցականներին, հնչում տարբեր բեմերից: «Նուիրում» ժողովածուում կան բազմաթիւ ձօներգեր նուիրուած մեր մշակոյթի հանճարեղ եւ անուանի դէմքերին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեանն ու ՀՄԸՄին: Ուշագրաւ է յատկապէս «Մենք՝ երէցներ Հայ Կեդրոնի» քայլերգը (երաժշտ. Գէորգ Յարութիւնեանի):

Մենք՝ երէցներ Հայ Կեդրոնի,  
Կազմած փաղանգ երանելի,  
Գաղափարով նուիրական  
Կը ծառայեմք ողջ հայութեան:

Ողջ հայութեանը այսօր էլ շարունակում է ծառայել բանաստեղծ, հրապարակախօս Գրիգոր Հոթոյեանը: Վկայ՝ արցախեան հերոսամարտին նուիրուած նրա հրապարակումները Կանադայում լոյս տեսնող «Հորիզոն» թերթում: «Նուիրում» ժողովածուի «Որդիական» շարքի բանաստեղծութիւնները ընթերցողիս, ահամայից ծանօթանում ես պոէտի ոչ միայն կենսագծին, այլեւ հաւատամքին, նրա հայեցի այրմանն ու հայդուկապաշտ խառնուածքին: «Ինչո՞ւ գրչի այս համեստ մշակը մինչեւ օրս անծանօթ է մայր հայրենիքում» — թէեւ հարցնի ընթերցողը: Յիշեցնենք, որ նա ուխտեալ դաշնակցական է արմատներով: Իսկ ո՞վ խորհրդային Հայաստանում կը թոյլատրէր ներկայացնել Գրիգոր Հոթոյեանին, երբ Մուշեղ Իշխանն էր արգելուած, Համաստեղն ու Ծառուկեանը: Փոխուել են ժամանակները: Այսօր Մայր Հայրենիքում արդէն կանադահայ դաշնակցական, սասունցի բանաստեղծ հայորդին ունի ե՛լ իր հրատարակիչը, ե՛լ իր ընթերցողը: Շնորհաւորելով նրան իր ծննդեան 75-ամեակի եւ «Նուիրում» ժողովածուի լոյս ընծայման առիթով, ուզում եմ խօսքս վերջացնել Գր. Հոթոյեանին տարիներ առաջ հասցէագրած Յակոբ Կարապենցի մի նամակի սուրբ տողերով. «...Այս որքա՛ն հարուստ ներաշխարհ ես ունեցել: Այդքան սէր ու կարօտ ինչպէ՞ս ես պարփակել



սրտիդ մէջ: Սիրեցի թէ՛ հայրենասիրական երգերդ եւ թէ՛ սիրային տազնապաներդ: Որքան բոցաշունչ են յեղափոխական երգերդ, նոյնքան տրտմանոյչ են անձնական տոււայտանքներդ: Չեմ կարող ասել, թէ ո՞ր երգերը աւելի նախընտրեցի, որովհետեւ իւրաքանչիւր երգ ունի իր ուրոյն կառոյցը, տրամադրութիւնն ու յոյզը...

...Կեցցէ՛ Հալէպը, որ քեզ պէս բանաստեղծ է տուել...»:

ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Երեւան, 1 Օգոստոսի, 2002թ.



## ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ ԵՒ ԻՐ ՆՈՐ ԳՈՐԾԸ

Անհերքելի ճշմարտութիւն է, որ լեզուի եւ մշակոյթի պահպանման գլխաւոր սիւներէն մին հայ գիրքն է: Հեղինակը ինչ-ինչ տազնապաներէ եւ դժուարութիւններէ կ'անցնի՝ լոյս ընծայելու համար իր մտքի արգասիքը: Գիրքը արտացոլումն է իր մէջ կուտակուած տառապանքին, հոգեկան ընդվզումներուն եւ հայրենասիրական ոգիին:

Այս տողերը կը գրեմ Գրիգոր Հոթոյեանի նոր ընծայած «Նուիրում» հատորին առիթով: Հեղինակը ինծի ծանօթ էր իր «Սիրտը Ափին Մէջ» քերթուածներու հատորով՝ լոյս տեսած 1987-ին: Իր այդ գործով ան մեզի կը փոխանցէր իր պատանեկան եւ երիտասարդական տարիներու հայրենիքի եւ ժողովուրդի հանդէպ իր անհուն սէրը եւ նաեւ սիրով տազնապող սրտայոյզ խոկումները:

Բայց նախքան բուն նիւթին անցնիլը, կ'ուզեմ փակագիծ մը բանալ հոս հեղինակի մէկ այլ սիրոյ մասին, որ կը բնորոշուի իր ծառայութեամբ հայ մամուլին: Արդարեւ ինծի համար հաճոյք էր հետեւիլ իր ճաշակով գրուած ծաւալուն թղթակցութիւններուն, որոնք լոյս կը տեսնէին մեր մամուլին մէջ: Մեր թղթակիցները յաճախ անտեսուած են իրենց կատարած գնահատելի աշխատանքին համար: Փայլուն սերունդ մը նուիրեալներու, որոնք առանց դոյզն ակնկալութեան ծառայած են արտասահմանի մեր մամուլին՝ ապագայ պատմաբանին առատ նիւթ հայթայթելով:



Հեղինակի այս նոր գործը՝ «Նուիրում»ը, հրատարակուած է Երեւանի մէջ: Յառաջաբանը ստորագրած է ծանօթ արձակագիր եւ հրապարագիր Հրաչեայ Մաթեւոսեան:

Գիրքը բաղկացած է «Իմ երգարանը», «Որդիական», «Նուիրում» եւ յաւելեալ վկայութիւններու, կարծիքներու եւ գրախօսական բաժիններով:

Գիրքին կարեւոր մասը՝ «Իմ երգարանը», կ'ընդգրկէ հեղինակի բանաստեղծութիւնները՝ եղանակաւորուած էդիկ Յովսէփեանի եւ այլ հանրածանօթ երաժիշտ-յօրինողներու կողմէ: Այս երգերը այսօր կը հնչեն մեր բեմերէն՝ խրախուսելով մեր ժողովուրդը:

Տեղ մը Հոթոյեան կը գրէ. «Սասունի սրբազան լեռներէն ժառանգած սրտիս մէջ բոցավառող կրակը զիս երբեք հանդարտ չէ ձգած եւ պիտի չձգէ մինչեւ մահ, որովհետեւ արմատներս կը սերին անձնագոհ Ֆետայիներուն այն փաղանգէն, որոնք իրենց կեանքը զոհաբերեցին հայ ժողովուրդի ազատութեան ճանապարհին»:

Իրեն համար առաջին այցելութիւնը հայրենիք՝ ուխտագնացութիւն մըն էր, ուր ինք առաջին անգամ վայելց իր երկրի հարազատ բուրմունքը եւ առիթը ունեցաւ տեսնելու Սասնոյ գերդաստանի մնացորդացին արժանաւոր ժառանգորդները այն հերոսներու, որոնք զոհուեցան մեր ազատագրական դատին:

Հոթոյեանի բանաստեղծութիւններուն մէջ զօրաւոր է հայրենասիրական գիծը: Իր տողերուն մէջ կայ խորունկ հաւատք եւ հպարտանք ու մանաւանդ անհուն պաշտամունք մեր հերոսներու հանդէպ:

Ընդհանրապէս կարօտի, բողոքի եւ ըմբոստութեան երգեր են իրը: Անհանգիստ հոգիի մը պոռթկումներն են՝ պատկերաւորուած երազներու փնտռտուքով եւ ջերմութեամբ: Մեր ժողովուրդի ցնցումները, վերիվայրումները խռոված են իր հոգին: Ան իր տողերով կը հաստատէ իր սէրն ու նուիրուածութիւնը մեր հերոսական անցեալի դրուագներուն:

Իր ներաշխարհը կը տապլտկի կարօտախտէ:

Ահա հատուած մը «Սասունական» բանաստեղծութիւնէն, որ փառաբանութիւնն է Սասնոյ.

Ողջո՛յն, Սասուն,  
Իմ հայրենիք դիւցազնական,  
Սանասարի, Պաղտասարի  
Ազատատենչ կամֆով շինուած,  
Քաջութեան բերդ,  
Դրախտային վսեմ երկիր հնադարեան,  
Քեզ կ'ողջունեմ հպարտօրէն  
Սասնակարօտ սրտիս խորէն,

Անլռելի զգայնութեամբ,  
Ուղեղային պատկառանքով:  
Այսօր նորէն կ'ոգեկոչեմ  
Քու անցեալի փառքդ արդար,  
Հերոսական պայքարներդ՝  
Օտարագգի ուժերուն դէմ,  
Վահագնածին հերոսութեամբ  
Դիմադրելով թուրք ասկարներու արշաւանքներուն,  
Վայրագ փւրտերու յարձակումներուն,  
Որոնք կու գային գերեզարելու  
Սարերը Սասնայ  
Եւ գէնֆի ուժով ընկնելու ոգին  
Ազատ ապրելու, ազատ շնչելու  
Անընկնելի ժողովուրդին սասունական...

*Իր բանաստեղծութիւններու էութիւնը հայրենասիրութիւնն է խոր եւ յամառ, իր նկարագրի նման: Հեղինակը ցայտուն գիծերով կը պատկերացնէ հերոսական Սասնոյ պատմութիւնը իր փառաւոր անցեալով:*

*Հոթոյեան նաեւ սիրերգակ է եւ իր քնարական տողերը կը յորդին ազնիւ եւ քնքուշ զգացումներով:*

*Հոս կ'արտագրեմ իր «Շուշանաբոյր գեղեցկուհի» բանաստեղծութիւնը, ճաշակ մը տալու համար իր ներսիդին կուտակուած սիրոյ վճիտ զգացումներուն:*

*Հոս յստակ կը տեսնէք բանաստեղծին սիրով գինովցած հոգեվիճակին պատկերը.*

Շուշանաբոյր այս գիշերով,  
Բարով եկար սիրուն աղջիկ,  
Եկար սիրոյս խոր կարօտով,  
Սիրատոչոյր հեւքով փողփող:

Գինովցած եմ այսօր նորէն  
Բուրմունքովդ կախարդական,  
Ցանկայարոյց աչքիդ բոցէն  
Բաղձանքներս կը բարձրանան:

Արիւնագոյն շրթունքներդ  
Քաղուած դիւքիչ համբոյրներով,  
Կը վերանամ հեշտանքիդ հետ  
Դրախտային երազանքով:

Ինչպէս Հրաչեայ Մաթեոսեան կը հաղորդէ՝ «Սիրային ինչ երգ էլ գրած լինի ու գրելու լինի Գրիգոր Հոթոյեանը, սիրոյ նրա աղբիւրը եղել է ու է իր Հայաստանը, հայոց լեզուն, Արարատը, հայ ժողովուրդը, իր կուսակցութիւնը: Աղբիւր, որ նա պահել ու պահում է մաքուր»:

ՎԱՐԴԳԷՍ ՍԻՆԱՆԵԱՆ  
Գրող, հրապարագիր

«Հայրենիք» շաբաթաթերթ  
8 Նոյեմբեր 2002, Լոս Անճելոս



Նոր Հրատարակութիւններ

## ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ «ՆՈՒԻՐՈՒՄ»

«Գանատա ապրող հայ բանաստեղծ, հրապարակախօս, բազմաթիւ երգերու հեղինակ Գրիգոր Հոթոյեանի ստեղծագործութիւններուն Երեւանի մէջ լոյս տեսնող առաջին գիրքն է այս: Ընթերցողը անոր ստեղծագործութիւններուն ծանօթ է սփիւռքահայ մամուլէն եւ «Սիրտը Ափին Մէջ» բանաստեղծութիւններու ժողովածուէն: «Նուիրում»ին մէջ, բացի հայրենասիրական եւ սիրային նոր գործերէն, ընթերցողը առաջին անգամ կը հանդիպի հեղինակին գրած երգերուն եւ անոնց հիման վրայ հիւսուած երաժշտութեան»: Այսպէս կը կարգանք գիրքին երկրորդ էջին վրայ գետեղուած ծանօթութենէն:

Հատորի խմբագիրն է բանաստեղծ, հրապարագիր եւ պատմաբան Սասուն Գրիգորեան, իսկ հրատարակիչը՝ «Ուխտատուն» թանգարան-ինստիտուտը:

«Նուիրում»ը լոյս տեսած է 2002 թուականին, Երեւանի մէջ: 216 էջեր հաշուող այս գիրքին չափերն են՝ 55/8/82/8: Հեղինակին եւ անոր ստեղծագործութեան մասին կը կարգանք արձակագիր Հրաչեայ Մաթեոսեանի յառաջաբանին մէջ: Իսկ գիրքին մեկենասութիւնը ստանձնած են հեղինակին դուստրն ու անոր երկու որդիները:

«Նուիրում»ը կը բաղկանայ չորս մասերէ: «Իմ երգարանը» կոչուող ձայնագրեալ բաժինը նախ առանձին կը ներկայացնէ բանաստեղծութիւնը, ապա՝ ձայնագրեալ էջերը, միշտ նշելով երաժիշտին կամ դաշնաւորողին անունը: Թեման Հայաստանն է, Ղարաբաղը,

անկախութիւնը, հայոց լեզուն, մայրը, սէրը, ազատամարտիկն ու Դաշնակցութիւնը:

Երկրորդ բաժինը կը կոչուի «Որդիական»: Հոս ամփոփուած են բանաստեղծութիւններ, որոնք հեղինակը կը տանին իր արմատներուն գիրկը՝ Սասուն, Ֆետայիներ, Սուրիա, կիրականօրեայ վարժարան, սէր ու թախիծ:

«Նուիրում» կոչուող երրորդ մասին մէջ կը հանդիպինք վեց բանաստեղծութիւններու, որոնց ներշնչումի աղբիւրը հանդիսացած են հեղինակին հարազատները:

Հատորը կը փակուի «Սիրտը Ափին Մէջ» հրատարակութեան առթիւ կատարուած վկայութիւններու եւ գրախօսականներու փունջով մը: Սասուն Գրիգորեանի, Յակոբ Կարապենցի անուններուն կողքին, շուրջ տասնեակ մը հայրենի թէ սփիւռքահայ մտաւորականներու կարծիքներ կը հնչեն Գրիգոր Հոթոյեան բանաստեղծի մասին:

Ուրախալի երեւոյթ է տեսնել սփիւռքահայ գրողի մը գործերուն երաժշտաւորումն ու երգերու վերածումը: Հայ երգն է, որ հայը հայախօս պիտի պահէ այս ամբողջութեամբ: Երգ չունեցող ժողովուրդը չունի՝ ապագայ: Այս խոհերով է, որ կ'ողջունենք 75-ամեայ Հոթոյեանի երգարանին ծնունդը, յուսալով հայրենասիրական թէ քնարական այդ երգերը լսել մեր վարժարաններու աշակերտութեան շրթներէն:

Հ. ՍԵՓԵԹՃԵԱՆ

«Նոր Կեանք», Մայիս 29, 2003



«Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գիրքի շնորհահանդէսէն տեսարան մը

«Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»  
ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ

«Ի ԽՆԴԻՐ  
ԲԱՐՈՅԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»

Հեղինակ՝ Գրիգոր Հոթոյեան  
Հրատարակութիւն՝

Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ  
Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբի  
«Շողակաք» Մատենաշար, թիւ 1, 2005, Թորոնթօ

*Արմատներով սասունցի, նախկին հալէպահայ եւ այժմու թորոն-  
թոհայ, բազմավաստակ ուսուցիչ, հրապարակագիր, բանաստեղծ եւ  
արձակագիր Գրիգոր Հոթոյեանի «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտու-  
թեան» հատորը իբրեւ արտաքին տեսք՝ ունի գեղարուեստական ճա-  
շակաւոր ձեւաւորում եւ բարձրորակ ու դիւրընթեռնելի տպագրու-  
թիւն:*

*Նոր լոյս տեսած հատորին կողքի առաջին երեսին՝ կապտաւուն  
խորքի մը վրայ հեղինակին անունին, գիրքին խորագրին եւ տպա-  
գրութեան վայրին ու թուականին հետ գետեղուած է նաեւ Անթիլիա-  
սի Ապրիլեան Նահատակաց յուշարձան մատրան գունաւոր լուսա-  
նկարը: Իսկ կողքի վերջին երեսին տպագրուած են հեղինակին գու-  
նաւոր դիմանկարը, հակիրճ կենսագրականը, հեղինակային չորս  
գործերու անունները եւ մատենաշարի անունը:*

*Գիրքը իր փոքրադիր 150 էջերով ունի ընթերցողին դիւրամատ-  
չելի նրբափորիկ հատորի մը տեսքը եւ դիւրընթեռնելի տառատեսակ-  
ներով տպագրութիւն: Գիրքը իբրեւ կրօնաբարոյական հրատարա-  
կութիւն՝ տպուած է հրամանաւ Գերշ. Տ. Խաժակ Արք. Յակոբեանի  
(Առաջնորդ Գանատայի Հայոց):*

*Գիրքին առաջին 7 էջերը կը ներկայացնեն հեղինակին «Արտի  
խօսք»ը, ձօնագրութիւնը (Ձօն ճշմարտութեան վկաներուն՝ Հայոց  
Յեղասպանութեան 90-ամեայ նահատակներուն), Խաժակ Արքազա-  
նին «Խօսք հայրական»ը, «Այս հրատարակութեան առիթով» Քրիս-  
տոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին հրատարակչական  
բացատրողականը, Արամ Ա. Կաթողիկոսին «Խոհեր 90-ամեակի  
սրբատառ կոնդակէն» եւ Յայտնութեան Գիրքէն բնաբան համար մը:*

*Գիրքին բարոյայլից գրութիւնները 24 առանձին խորագիրներով  
կը տարածուին հատորին 1–140 թուագրուած էջերուն վրայ: Այս*

գրուծիւնները ունին արձակ գրական սեռերու այլազան մշակումները, ինչպէս՝ պատմուածք, հեքիաթ, լրագրական հարցազրոյց եւ յուշագրուծիւն՝ բոլորն ալ գրուած բարոյական պատգամի մը խորքով եւ թելադրականութեամբ:

Բարոյալից այս պատումները, հեղինակը իր «Սրտի խօսք»ին մէջ կը գրէ, թէ իր մէջ տպաւորուած ու իր կողմէ պատմուած են կիրակնօրեայ դպրոցներու իր աշակերտութեան եւ ուսուցչութեան շրջաններուն, ապա՝ գրի առնուած եւ «Շողակաթ» ամսաթերթի էջերէն մատուցուելէ ետք ընթերցողներուն, լոյս տեսած են առանձին հատորով, իբրեւ անդրանիկ հրատարակուծիւն «Շողակաթ»ի նորահաստատ մատենաշարին:

«Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գրուծիւններու մեծամասնութեան ընդմէջէն կարմիր գիծի պէս անցնող բարոյական գլխաւոր պատգամը ազգային զօրաւոր ոգիի եւ մարդկային ազնիւ նկարագրի գիծերուն փոխանցումն է, որ ի յայտ կու գայ Յեղասպանութենէն վերապրած եւ հայու անկոտորում կամքով իրենց ազգային պատկանելութիւնը պահած տիպարներուն ընդմէջէն:

Ազգայինէն ետք, «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» հատորին պատումներէն ճառագայթող բարոյականութեան գիծը կրօնասիրական բարեպաշտականն է՝ հաւատք, երկիւղածութիւն եւ վստահութիւն Աստուծոյ նախախնամական եւ գերհզօր ուժին հանդէպ: Աղօթքի եւ Աւետարանի պատգամներու զօրութեամբ է, որ բարին կը տնօրինէ Հոթոյեանի հերոսներուն կեանքն ու ճակատագիրը: Հոն կը հանդիպինք նաեւ ժխտական տիպարներու, որոնց կեանքը կը յանգի չարին ողբերգական եւ անփառունակ պարտութեան:

«Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» հատորին մէջ կը գըտնենք նաեւ ընկերային եւ ընտանեկան բարոյախօսական դասեր... Հոթոյեան իր կարգ մը պատմուածքներուն ընդմէջէն կը պատգամէ ծնողասիրութիւն, յարգանք տարեցներուն հանդէպ եւ երախտագիտութիւն... Հոթոյեանի տիպարները յաճախ մարմնացումն են աշխատասիրութեան, ուսումնաստեղութեան, ընկերասիրութեան եւ բարեսիրութեան բարոյական սկզբունքներուն...:

Սասունէն, Կարինէն եւ Ուրֆայէն ճողոպրած հայ ընտանիքներու ոգիսականները պատմելով, Հոթոյեան մեզի կը փոխանցէ հայ ընտանիքին յատուկ՝ աւանդապահութեան, պատուախնդրութեան եւ ազգասիրութեան պատգամները: Յեղասպանութեան արհաւիրքի տարիներուն իր հերոսները կը խորհրդանշեն հայուն պայքարի եւ վերածնունդի կամքը...: Իբրեւ բարոյական ճշմարտութիւն՝ հոն կը հանդիպինք նաեւ արաբ ժողովուրդը բնորոշող հիւրընկալութեան, հաւատարմութեան եւ մարդասիրական առաքինութիւններուն:

«Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» հատորը ունի նաեւ աշխարհագրական եւ պատմագիտական շահեկանութիւն, Հոթոյեան

մանրամասն եւ շահեկան տեղեկութիւններ կը փոխանցէ մեզի իր պատումներուն մէջ Կարին, էրզրում քաղաքի աշխարհագրութեան եւ երբեմնի ազգային եռուն կեանքի մասին: Մեզի լաւապէս կը ծանօթացնէ նաեւ Եդիսիա-Ուրֆան իր հերոսական պատմութեամբ: Իր արմատներու ճամբով, Հոթոյեան սրտամօտ ջերմութեամբ տեղեկատուական էջեր ունի Ֆետայիներու օրրան Սասունի եւ երազային Հալէպի գաղութային եւ ազգային կեանքի եռուզեռին մասին:

Հատորին մէջ տեղ գտած է նաեւ սրտազին ողջոյնի խօսք մը՝ Խաթակ Սրբազանին գանատական գործունէութեան 35-ամեակին եւ արքութեան տիտղոսին արժանանալուն առիթով: Իսկ հատորը կը փակուի «Անջնջելի յուշեր Երանաշնորհ Ջարեհ Ա. Կաթողիկոսէն» խորագրով յուշագրութեամբ մը, ուր վեր կը հանուի տառապեալ հայրապետին կրօնաբարոյր ու ազգայնաշունչ կեանքի խորհուրդը:

Այս է, սեղմ գիծերու մէջ, բովանդակութիւնը «Ի խնդիր Բարոյական ձյմարտութեան» հատորին, գիրքին 24 գրութիւններէն իւրաքանչիւրը լիովին կ'արդարացնէ ընդհանուր խորագիրը՝ ազգային, կրօնական, ընկերային, ընտանեկան եւ մարդկային պատգամներով:

Գրիգոր Հոթոյեան արձակ իր այս մշակումներով գրական, գեղարուեստական մեծ յաւակնութիւններ չունի կարծես, անոր նկարագրական եւ պատմողական ոճին նպատակը աւելի բարոյական պատգամներու փոխանցումն է, քան՝ գրական, գեղարուեստական մատուցումը, հեղինակին համար ըսելիքն է կարեւորը, քան՝ ըսելու ձեւը, որ աւելի քարոզչական վիպապաշտ ճաշակ մը կը մատնէ իր մէջ, քան՝ գեղապաշտ:

Հեղինակի լեզուն պարզ եւ մաքուր արեւմտահայերէն է, հոն քիչ անգամ կը հանդիպինք քերականական եւ ուղղագրական խախտումներու:

Ես Ապրիլ 24-ին, Թորոնթոյէն Օթթաուա բողոքի ցոյցի երթ ու դարձի ճամբուս վրայ, սկսայ եւ աւարտեցի «Ի խնդիր Բարոյական ձյմարտութեան» գիրքին ընթերցումը: Պէտք է ըսել, որ նպատակաւորմար առիթ ընտրած էի Հայկական Յեղասպանութեան 90-ամեակին ձօնուած այս գիրքը ընթերցելու, որովհետեւ ես այդ օր Հոթոյեանին եւ իր հերոսներուն հետ կրկնապէս ապրեցայ Հայկական Յեղասպանութեան եւ վերածնունդին լինելութեան խորհուրդը:

Գրիգոր Հոթոյեան յաջողած էր պատգամախօսական իր առաջադրանքին մէջ... ջերմապէս կը յանձնարարենք գիրքը ընթերցանութեան համար...:

ՄՈՒՇԵՂ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ  
Ուսուցիչ, դաստիարակ

5 Մայիս 2005  
Թորոնթօ





## «Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»

«Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» հատորի հրատարակութեան առթիւ, Հ.Օ.Մ.ի երկրորդական վարժարանի հայերէն լեզուի ուսուցիչ Պրն. Մուշեղ Գարագաշեան աշակերտներուն կը թելադրէ կարդալ վերոյիշեալ գիրքը եւ իրենց տպատրութիւններն ու կարծիքները գրատր ներկայացնել հայերէնի դասապահին:

Ահա, անոնցմէ հինգ աշակերտներու գրութիւնները:

*Ինծի համար երկրորդ եւ երրորդ պատմուածքները՝ «Հայ հայրերուն» եւ «Յարգենք մեր տարեց հայրերը եւ օգտուինք անոնց իմաստութենէն», ամէնէն շատ հետաքրքրական եւ օգտակար թուեցան, որովհետեւ զոյգ պատմուածքներն ալ կը միտին Հայ հօր հանդէպ աւելի մեծ յարգանք եւ գուրգուրանք ցուցաբերել նոր սերունդներուն կողմէ եւ օգտուիլ անոնց երկարամեայ փորձառութենէն:*

*«Հայ հայրերուն» պատմուածքը կը միտի բացատրել, թէ դրամի համար մարդ պէտք չէ իր հարազատ հայրը զոհէ: Բարոյական իմաստը այս պատմուածքին այն է, որ հեղինակը կ'ուզէ մեր նոր սերունդին փոխանցել այն վտանգը, որ կեանքի մէջ պիտի ունենանք, դրամի պատճառով ազգէն հեռանալով՝ ապագայ կերտելու սխալ խաբկանքով:*

*«Յարգենք մեր տարեց հայրերը եւ օգտուինք անոնց իմաստութենէն» պատմուածքով հեղինակը նորէն պատմութեան ընդմէջէն կը փորձէ մեզի փոխանցել, թէ ինչպէ՞ս մեր երէցները իբր ձրիակերներ սպաննուելով ձախողութեան կը մատնուին պատերազմի ընթացքին, մինչեւ որ ազատած ծերունի հօր խրատը մտիկ ընելով զաւակը կը փրկէ բոլոր բանակը սովէ, եւ վերջապէս յաղթանակի կ'առաջնորդէ հայրենիքը:*

*Այսպէսով պատմուածք առ պատմուածք մենք կը հասնինք գիրքին վերջաւորութեան, բարոյապէս զօրացած եւ գինուած ազգային սովորութիւններով՝ մեր կեանքը Սփիւռքի մէջ հայօրէն ապրելու:*

**ՅԱՐՈՒԹ ԳԱՍԱՊԵԱՆ**  
ԺԲ. կարգ

\*  
\*  
\*

Ես շնորհակալութեամբ, սիրով եւ հաճոյքով կարգացի հեղինակին կողմէ մեզի նուիրուած «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գիրքը. հեղինակը՝ նախկին հալէպահայ եւ այժմ թրոնթոհայ՝ Գրիգոր Հոթոյեան, որ արմատներով սասունցի է եւ եղած է կիրակնօրեայ դպրոցներու ուսուցիչ, իր կեանքն ու հաւատքը կը ցոյցանէ այս գիրքին մէջէն:

Կրնանք ըսել, որ այս գիրքը Գրիգոր Հոթոյեանին կեանքին հայելին է, որովհետեւ յաճախ սասունցիներուն հերոսութիւնները եւ հայոց պատմութիւն կը խառնէ իր պատմուածքներուն մէջ, ան նաեւ իր դասաւանդած քրիստոնէական կրօնքին սկզբունքներուն պատգամները կը թելադրէ մեզի իր պատմուածքներուն մէջէն, օրինակ՝ Աստուծոյ գծած ուղիով մեծնալ, ըլլալ ճշմարտախօս, յարգանք ունենալ ծնողներուն եւ մեծերուն հանդէպ, ըլլալ հայրենասէր ու ազգասէր... Իր տիպարները երբեմն ժխտական մարդիկ են, բայց անոնց մասին գրելով՝ Հոթոյեան մեզի կը սորվեցնէ ծայրայեղութեան գէշ հետեւանքները եւ կը թելադրէ հեռու մնալ անոնցմէ...:

Մաքուր եւ սահուն արեւմտահայերէնով գրուած այս գիրքը ես շատ հետաքրքրական գտայ եւ սիրեցի, իսկապէս բարոյագիտութեան աղբիւր մըն է ան, մանաւանդ նիւթապաշտ եւ բարոյականութեամբ ապականած այս աշխարհի մէջ:

ԳԱՐՈՒԻՆ ԶԱՔՈՒՃԵԱՆ  
ԺԲ. կարգ

\*  
\*  
\*

«Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գիրքը, գրուած Գրիգոր Հոթոյեանի կողմէ, կը բաղկանայ 139 էջերէ եւ 24 փոքր, իւրաքանչիւրը քանի մը էջերով խտացուած պատահարներէ, որոնք առնուած են համեստ մարդոց կեանքերէն: Այս պատմուածքները գրուած են պարզ լեզուով եւ հասկնալի են թէ՛ պատանիին, թէ՛ երիտասարդին, թէ՛ տարեցիներուն եւ թէ՛ քիչ ուսում ունեցողներուն կողմէ:

Այս 24 պատմուածքներուն մէջ կան կրօնական դաստիարակիչ պատմութիւններ: Կան ազգային հերոսական պատմութիւններ սասունցիներուն մասին, որոնք կը ներշնչեն պարկեշտութիւն եւ պարտաւորութիւն հայրենիքին հանդէպ:

Կան պատմուածքներ յոռի մոլութիւններուն հետեւող անպատկառ մարդոց մասին, որոնք իրենց կեանքի ընթացքին եղած են իրենց ծնողներուն եւ պարագաներու հանդէպ անկատար, գող, աւազակ, եւ

որոնց վերջաւորութիւնը յանգած է բանտարկութեան: Այս գրութիւններով հեղինակը կը փորձէ պարկեշտութիւն ներշնչել ծնողաց հանդէպ, յարգանք՝ ազգին, եւ պատուաբեր կեանք ապրել:

Հեղինակը խիստ յուզումնալի եւ ցաւալի զգացումներով տարուած Թուրքիոյ գազանային արարքներէն հայոց հանդէպ, գաղթականութեան ոճիրները նկարագրելով կու տայ պատմութիւնը բարի արաքներուն գութին պտուղը եղած փրկուած որբերուն, որոնք իրենց հարազատ զաւակներու համահաւասար դասելով մեծցուցած ապա վերադարձուցած են զիրենք իրենց հայրենակիցներուն, ինչպէս կը պատմէ Ահմէտ Սուլթան անոնցմէ մէկը, որուն բուն անունը Յակոբ է:

ԾՈՎԱԿ ԱՌԱՔԵԼԵԱՆ  
ԺԲ. կարգ

\*\*\*

...Գրիգոր Հոթոյեանին գիրքը, «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան», շատ հետաքրքրական եւ բարոյական դասեր սորվեցնող պատմութիւններու հաւաքածոյ մըն է: Ես շատ սիրեցի եւ տպաւորուեցայ գիրքին 24 պատմուածքներէն ալ, որոնց բարոյական դասերը կրօնասիրական, ընտանեասիրական, հայրենասիրական եւ ընկերաբարոյասիրական նիւթերու շուրջ էին... Ես ամէնէն շատ սիրեցի առաջին պատմութիւնը՝ «Աղօթքին ուժը», ուր սասունցի հերոսը իր հաւատքի ուժով կ'ազատի ջարդարար թուրքերէն եւ Հալէպի մէջ կը վերամիաւնայ իր ազգին...

ԹԱՄԱՐ ՆԱՃԱՐԵԱՆ  
ԺԱ. կարգ

\*\*\*

...Ես Գրիգոր Հոթոյեանին «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գիրքը կարգացի եւ շատ սիրեցի, որովհետեւ իր գրած պատմութիւնները անմահական նիւթերու մասին են: Իր գրածները թէ՛ մեծերուն եւ թէ՛ պզտիկներուն համար են եւ բոլորն ալ բարոյական դասեր կը սորվեցնեն... Իմ ամէնէն շատ սիրած գրութիւնը «Բարիք ցանողը բարիք կը հնձէ» վերնագրով պատմութիւնն է. այս վերնագիրը շատ իմաստալից խօսք մըն է, իսկ պատմութիւնը մեզի կը սորվեցնէ, թէ բարիք ընելը սրտէն բխած գործ մը պէտք է ըլլայ եւ ոչ թէ կեղծ... որովհետեւ մարդիկ կան հիմա «բարիք» կ'ընեն՝ բարիք ստանալու համար միայն...

ՄԱՐԻԱ ՓԻԼԱԻՃԵԱՆ  
Թ. կարգ



## «Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»

Գրիգոր Հոթոյեան, ազդուած իր շրջանակէն եւ իր անձնական փորձառութիւններէն, գրած է «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» պատմուածքներու շարքը, ուր ներկայացուցած է ճիշդ ապրելու միջոցները: Ան այս պատմուածքներուն ընդմէջէն պատասխանած է զանազան հարցումներու, որոնք կը ծագին իւրաքանչիւր անհատի մտքին մէջ: Եւ աւելին, անոնք հայու մտածումները կը խնդրեն, ըլլան անոնք բարոյական, ընկերային կամ ազգային: Գրիգոր Հոթոյեան կարծես այդ պարզ, բայց արժէքաւոր բառերուն տակ պահած է խաղաղութեան ու բարութեան բանալին, որ պիտի փրկէ մարդիկը սխալ ճամբաներէ: Գիրքին մէջ կան նախադասութիւններ, որոնք կարծես դարձած են մէյ մէկ թնդանօթներ եւ «ուբալիժած» են այն հսկայ պարիսպները, որոնք պաշարելով մարդասիրութեան անդաստանը՝ կ'ուզեն խեղդել աստուածային սուրբ կանչը:

Պատմուածքներու այս շարքը կը թափանցէ մարդոց ամէնօրեայ գաղտնիքներուն, ընտանեկան ու ընկերային յարաբերութիւններու եւ ազգային ու հայրենասիրական մտահոգութիւններու մէջ: Հեղինակը ներկայացուցած է այս բոլոր հարցերուն պատճառներն ու լուծումները դէպի լաւին ձգտելու միտումով: Կարգ մը վերնազիրներու տակ ընթերցողը կրնայ զգալ Յիսուսի շունչը, կարծես ան հրաշքով մը շարժած է գրագէտին ձեռքը եւ կրկին անգամ ըլլալով փոխանցած է իր պատգամները, ինչպէս Պօղոսին փրկութիւնը «Աղօթքին զօրութիւնը» պատմուածքին մէջ, երբ թուրք զինուորներ իջան այն ձորը, ուր 500-է աւելի սասունցի երիտասարդներ արիւնլուայ մեռած էին, թուրքերը տակնուվրայ ընելով այդ դիակները՝ չկրցան գտնել Պօղոսը, որ արտասանելով «Հաւատով խոստովանիմ» ի 24 համարները՝ ազատած էր այդ հրէշներուն ձեռքէն: «Բարիք գործել ամէն օր» պատմուածքին մէջ կը տեսնենք փոքրիկ մանչ մը՝ Սեբրակը, որ հրաշքով մը կրնայ ազատել իր երկու ընկերները՝ Քուէյք գետի յորդառատ ջուրերուն մէջ խեղդուելէն օր մը առաջ ծիծեռնակներու բոյն մը փրկելուն, այսինքն բարիք մը գործելուն պատճառով:

Շարք մը պատմուածքներ կը զօրացնեն ընթերցողին հաւատքը՝ շեշտելով Յիսուս Քրիստոսի պատգամները, ներշնչելով բարիք գործելու շնորհքը եւ իւրացնելով իրաւ քրիստոնեայ ըլլալու տիպարը:

Ուրիշ փունջ մը պատմուածքներու մէջ կ'արտացոլան ընտանեկան ու ընկերային հարցերուն լաւ ու վատ դիմագիծերը՝ վատը միշտ

յաղթուած անհետանալով: Գրիգոր Հոթոյեան խօսած է հայ ընտանիքի արժէքին մասին՝ փառաբանելով հայ հայրերը, ներկայացնելով զանոնք իբրեւ հայ ընտանիքի առաջնորդներ: Ապա բացատրած է յարգանքի անհրաժեշտութիւնը տարեց հայրերուն նկատմամբ եւ խրատած է օգտուիլ անոնց իմաստութեանէն: Յետոյ ան ներկայացուցած է ընկերութեան մէջ լաւ անհատ մը ըլլալու միջոցները, ինչպէս «Բարեգործութիւն եւ ընկերային սէր» պատմուածքին մէջ, ուր Պրն. Հայկ օգնած է աղքատ սաներու՝ շարունակելու համար իրենց ուսումը: Ուրեմն ան շեշտած է այն հաստատումը, թէ մարդ պէտք է ապրի միայն իր անձնական շահերուն համար, այլ նաեւ ընկերութեան շահերը հետապնդելով:

Վերջապէս, Գրիգոր Հոթոյեան ձօնելով այս գիրքը Հայկական Յեղասպանութեան նահատակներուն, ցաւով պատմած է 1915 թուականին պատահած իրողութիւններուն մասին, եւ անոնց ընդմէջէն հաստատած է հայուն վեհանձնութիւնը, հայրենասիրութիւնը եւ ազգասիրութիւնը: Ան շարունակած է բացատրելով, թէ թուրքերը ուզեցին բնաջնջել հայ ժողովուրդը, սակայն չկրցան իրագործել իրենց դժոխային ծրագիրը՝ հայու ապրելու զօրաւոր կամքին շնորհիւ: Աւելին, ան այս պատմուածքներուն ընդմէջէն կը թելադրէ հայ ժողովուրդին սիրել հայ ազգը, հայ եկեղեցին, հայ մշակոյթը եւ երբեք չմոռնալ մայրենի լեզուն, որովհետեւ այս ազգականներն են, որոնք պիտի պաշտպանեն հայ ժողովուրդը ձուլումէ: Ուստի հայ ժողովուրդը միայն պիտի գոյատեւէ, երբ կը սիրէ իր ազգն ու եկեղեցին, կը սորվի իր պատմութիւնն ու մշակոյթը եւ երբ չի մոռնար իր անցեալն ու մայրենի լեզուն:

ՎԱՐԴԻՆԷ ԷԹՈՅԵԱՆ (Վ. Է.)

«Ազդակ»

26 Սեպտեմբեր 2005

## ԼՈՒՍԱԻՈՐ ՃԱՆԱՊԱՐԶ

Ոչ միայն Հայաստանում, Սփիւռքում եւս կան գրական, մշակութային եւ հասարակական գործիչներ, որոնք միայն եւ միայն ծառայում են իրենց ազգասուրբ ուխտին, մատաղ սերնդի հայեցի դաստիարակութեանը, ազատ, անկախ եւ միացեալ Հայաստան ստեղծելու տարածքային եւ գաղափարական միասնութեանը: Նման ազգանուիրեալներից է 1975 թուականից Կանադայի Տորոնտո քաղաքում բնակուող բանասէր, բանաստեղծ, արձակագիր, մանկավարժ, լրագրող, հրապարակախօս, ազգագրագէտ Գրիգոր ՀՈԹՈՅԵԱՆԸ, Սասնոյ Տալուրիկի շրջանի Սպաղանք գիւղից Մեծ Եղեռնի պատճառով Սիրիա գաղթած Ղազարի (Նարգո) եւ Կիլիկիցի Մարիամի որդին, հայ ֆիդայուլթեան փառքերից Սպաղանաց Մակարի, Սպաղանաց Կալէի, սպաղանցի քաջարի հայդուկապետ Յակէի (Յակոբի) շառաւիղը: Գրիգորը ծնուել է Հալէպում 1927թ. Օգոստոսի 5-ին: «Մենք ալ մանկութիւն չունեցանք» եւ «Բարեգործ հայրս» իրապատումները, որոնք որպէս պատմուածքներ գետեղուած են Կանադայում (Տորոնտո) եւ Հայաստանում (Երեւան) 2007թ. հրատարակուած «Ճանապարհ» ստուարածաւալ յուշատեղեկատու ժողովածուում, ոչ միայն ունեն կենսագրական հէնք, գաղթաշխարհում յայտնուած մի ընտանիքի պատմութիւն են, այլեւ՝ ցաւերգութիւն, հաւատքի խտացում սեփական ուժի՝ ազնուութեան, աշխատասիրութեան, բարութեան միջոցով վեհին, գեղեցիկին հասնելու նշանաբան, հոգեկերտուածքի եւ հայասպահանման ձօն:

Հալէպի Սահակեան ազգային վարժարանի եւ հայագիտական դասընթացների շրջանաւարտ սասնորդին 2-րդ Աշխարհամարտի տարիներին ծառայել է Ֆրանսիական բանակի թնդանօթածիգ զօրամասում եւ իր համեստ ներդրումը բերել թուրքական Ֆաշիզմի գերմանացի հովանաւորների յետնորդներին ջախջախելու սուրբ գործում: Նա բանակից զօրացրուել է 1946թ. ենթասպայի զինկոչումով եւ նորից Հալէպում՝ «Նայիրի» տպարանում, անցել աշխատանքի: Եղել է գրաշար «Սեւան» տպարանում, թղթակցել սփիւռքահայ մամուլին: Որպէս սկսնակ գրող եւ ուսուցիչ տակաւին պատանի՝ արժանացել սփիւռքահայ տաղանդաւոր գրողներ Սիմոն Սիմոնեանի, Անդրանիկ Ծառուկեանի սիրուն եւ գուրգուրանքին: Ու թէեւ պարբերական մամուլում Գրիգորը հանդէս է եկել նաեւ բազմաթիւ բանաստեղծութիւններով նուիրուած Անդրանիկին, Գէորգ Չառլչին, Սպաղանաց Կալէին եւ այլ ազգամեծերի, բայց իր չափածոյ քերթուածները

նա տպագրեց, երբ արդէն 60 տարեկան էր (1987թ., Տորոնտո) «Միրտը Ափին Մէջ» խորագրով: Առաջին գրքին հետեւեց «Նուիրում» բանաստեղծութիւնների եւ երգատեքստերի ժողովածուն (Երեւան, «Ուխտատուն», 2002թ.): 2005թ. նորից Տորոնտոյում ընթերցողն ստացաւ այս անգամ արդէն արձակագիր Գ. Հոթոյեանի «Ի Ննդիր Բարոյական Ճշմարտութեան» գիրքը: Ամենակարեւորը, թէ՛ չափածոյում (ես այդ մասին գրել եւ տպել եմ) եւ թէ՛ արձակում Հոթոյեան ստեղծագործողը կարողանում է լինել անկեղծ, սրտաբաց, գրում է կրքոտ, գրում է, երբ չգրելը դառնում է անհնար: Պատկերաւոր մտածողութիւնը, յոյզը, սէրը, ցասումը, զայրոյթը, նուիրումը Հոթոյեանի գրչի տակ դառնում են քնարական բանաստեղծութիւն, ձօնեղբ, ռազմակոչ, կենսապատում, փրկարար խաչ, մեռնաբոյր եւ պատուախնդիր հայերգութիւն:

Առանց իրական եւ անկեղծ սիրոյ, կեանքը մարդկային  
Ունայնութիւն է, տառապանք է լոկ, քախծալից ապրում...

Հաւատարիմ իր այս նշանաբանին, այսօր ընթերցողի սեղանին է 80-ամեայ սասնորդու «Ճանապարհ» պատմաբանասիրական, հրապարակախօսական, արձակ, ժուռնալիստական երկերի ընտրանին: Նրա յօդուածները, հրապարակումները, թղթակցութիւնները, տարբեր առիթներով, յատկապէս Միրիայում եւ Կանադայում, հայ համայնքին եւ հայ մեծանուն ու վաստակաշատ դէմքերին, պետական, կուսակցական, քաղաքական գործիչների է վերաբերում: Դրանք երբեմն մեկնութիւններ են ու զրոյց- խորհրդածութիւններ, ճամբորդական տպաւորութիւններ: Հապա՞ Հոթոյեանի գրախօսականները, նրա հոգեւոր, գրական եւ պատմառազմական (արցախեան ազատամարտը ներառեալ) գործիչներին նուիրուած մեկնութիւնները, դրանց ընթերցողը կը հանդիպի ոչ միայն «Ճանապարհ»ում, այլեւ «Արեւելք», «Հայրենիք», «Հորիզոն», «Շողակաթ», «Նոր Կեանք», «Մեր Կեանքը», «Դիտակ» եւ բազմաթիւ, բազմաթիւ այլ թերթերում ու պարբերականներում: Կարդում ես վաստակաշատ սպաղանցու հրապարակումները, մտօք տեղափոխուում 20-րդ դարի Միջին Արեւելք՝ Միրիա, Լիբանան, հասնում Կանադա, Ամերիկա եւ այլուր: Եւ ամէնուր Գր. Հոթոյեան հրապարակախօսը յուշում է, որ «մշակոյթն է մեզ պահպան, հայ դպրոցը՝ լոյսի աղբիւր մեսրոպեան, մենք պէտք է Վարդանանց ուղիով գնանք, հայ դիրքն է ճանապարհն հայուն»: Հոթոյեանի յօդուածները կեանքաճանաչողութեան դասեր են՝ լոյսով եւ հաւատով լեցուն դէպի հայ մարդը, դէպի հայ սիրտն ու հայ ուղեղը, դէպի հայ հանճարն ու հայ եկեղեցին: Հրապարակախօսութիւնը, այն էլ օրուայ մամուլում, մերկապարանոց ճառասացութիւնն է, այն օրուայ պահանջ է, քննադատութիւն եւ նպատակ յանուն ազգային վերելքի:

«Ճանապարհ» հատընտիրի մի բաժնում (էջ 145—205) գետեղուած Գր. Հոթոյեանի ուսումնասիրութիւնները նուիրուած են Դանիէլ Վարուժանին (գրել է 25 տարեկան հասակում), Արշակ Բ-ի քաղաքականութեանը, Յովհաննէս Թումանեանին, «Անձինք նուիրեալք՝ Սպաղանաց Կալէիին» եւ այլոց:

Մշա՛կ, ցանէ՛, յանուն տանըդ սեղանին,  
Թեւիդ շարժումն անպարագիծ թող ըլլայ,  
Վաղը նետած ցորեններդ այդ կը թափին  
Օրհնութեան պէս՝ թոռնիկներուդ գլխուն վրայ:

Վարուժանական այս պատգամը եւ օրհնութիւնը Հոթոյեանի Անի դատերն ու Հոթոյեանի Քրիստափոր եւ Ստեփան-Արմէն թոռներին ենք մենք այսօր ուղղորդում, քանզի 80-ամեայ սփիւռքահայ-սասունցի մտաւորականի վաստակը նրանց խնայողութիւնների շնորհիւ է լոյս աշխարհ եկել եւ հասել մեզ: Այդ նրանք են հովանաւորել «Ճանապարհ»ի ճանապարհորդելը, ապացուցելով, որ Սիրիայի եւ Կանադայի ազգային ամէնօրեայ, ամառային եւ կիրակնօրեայ վարժարանների տնօրէնը, մանկավարժ ինելուց գատ, կենսափորձով իմաստնացած բանասէր է, հայագէտ, Սփիւռքի եւ հայաստանեան պարբերական մամուլի համահայկական-ազգայական ուխտանուիրեալ:

Եթէ ընդհանուր հանրագումարի բերենք «Ճանապարհ»ում տպագրուած նիւթերի ցաւն ու բովանդակութիւնը, կը տեսնենք, որ սասունցի-հալէպցի-տորոնտոցի Գրիգոր Հոթոյեանը սիրիահայ եւ կանադահայ կեանքի մերօրեայ տարեգիրն է, տաղերգուն, բազմաքնար եւ բազմաժանր հայախօսը: Բաւական է թերթել «Ճանապարհ» հատորեակի «Թղթակցութիւններ» եւ «Հարցազրոյցներ» գլուխները, եւ դուք կը ծանօթանաք մեծանուն կոմպոզիտորների, երգիչների, խմբավարների, կաթողիկոսների, գրողների, գեներալների, գիտնականների, սովորական եւ հռչակաւոր մահկանացուների հետ: Ամենակարեւորը, դրանք լինեն առիթով գրուած զրոյցներ, մահախօսականներ, թէ ծանօթութիւններ, տպագրուած բոլոր յօդուածներում, դիմանկարներում Հոթոյեան լրագրողը, մեկնիչը մնում է իր խառնուածքին հաւատարիմ՝ Ազնուութեան բարձունքին, չի կեղծում ո՛չ իրեն, ո՛չ դիմացիներին, անկախ նրանց մեծութիւնից, գրաւած դիրքից կամ պաշտօնից:

Հոթոյեանի գրքի բոլոր հերոսները, անկախ իրենց ազգային պատկանելիութեան (արաբ, եզդի, ֆրանսիացի, հոլանդացի) առաքինի են, մարդասէր եւ ամենակարեւորը գրչի, խղճի, վրձնի եւ հայապահ գէնքի ու խաչի ուխտանուիրեալներ են: Գրողը կարողացել է իր ամէն մի հերոսի հետ խօսել ողջերի լեզուով, լինի նա Մաշտոց, թէ Գէորգ Չառլշ, Անդրանիկ, թէ Դրօ, Գարեգին Ա. Կաթողիկոս, թէ



ՀԽՍՀ-ի վարչապետ Ֆադէյ Սարգսեան, գեներալ-մայոր, Արցախի հերոս Սամուէլ Կարապետեան, թէ 2-րդ Աշխարհամարտում զոհուած բանաստեղծ Թաթուլ Հուրեան:

Թէեւ, իր խօսքերով ասած՝ «Կեանքը գնալով դառնում է դաժան», բայց 80-ամեայ սասունցի, բազմաժանր, բազմատաղանդ, բազմամեծար Գր. Հոթոյեանը կեանքն ու աշխարհը դիտում է, գննում հոգու, մտքի, խղճի եւ սրտի աչքով: Գր. Հոթոյեանը ողջ կեանքում չի հետեւել գրական եւ ոչ մի ուղղութեան, նրա ուղին մէկն է. գրել պարզ եւ շիտակ, գրել ժողովրդի մասին՝ ժողովրդի համար: Նրա ցաւը հայացաւն է, խնդութիւնը՝ հայեցի, ինքնայրուամբ՝ նայիրեան, ճանապարհը՝ դէպի էրզրո: Նա հայոց հին եւ գալիք քարտէզներին միաձուլման, սահմանագծերի եւ գոյնի պահպանման է գրական եւ կեանքային մոդեռնից հեռու, ծառուկեանական, շիրազ-սեւակեան եւ Սիմոն Սիմոնեան, Խաչիկ Դաշտեցի ու Մուշեղ Գալշոյեան գաղափարագծի անխտոր յետնորդ:

Գրչի մշակ է Գր. Հոթոյեանը, հոգու, գաղափարի, սրտի եւ կամքի, հաւատքի եւ անշահ նուիրումի քայլող վկայութիւն: Ռազմածոժագիրների (ռազմական գրողներ) Միջագային Ընկերակցութեան անդամ, Տարօն-Տուրուբերանի եւ Սասնոյ հայրենակցական միութիւնների անդամ Գրիգոր Հոթոյեանը փառքի եւ գովեստների մուրացկան է: Իր սաների, իր ընթերցողների սէրը մեր գրչեղբոր ամենամեծ շքանշանն են: Թէեւ նա արժանացել է բազմաթիւ շնորհագրերի, մեդալների ու շքանշանների, բայց նրա կուրծքը գարգարող «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանը՝ շնորհուած Մեծի Տանն Կիլիկոյ Կաթողիկոսութեան կողմից, համարում է կեանքում իր ամենամեծ ու ամենասուրբ պարգեւը:

Գր. Հոթոյեանի ոչ միայն հրապարակախօսութիւնը, արձակը, չափածոն, այլեւ նրա սիրերգութիւնը մարդագովք է: Բնութեան, հայրենիքին, ռազմական եւ յեղափոխական երեւելի դէմքերին ձօնուած նրա տաղերը սփիւռքահայ կոմպոզիտորներ էրուարդ Յովսէփեանի, Յակոբ Մանուկեանի, Գէորգ Յարութիւնեանի, Անահիտ Կուտսուգեանի, Սարգիս Համպոյեանի եւ այլոց յորինած երաժշտութեան շնորհիւ դարձել են հոգեբուխ երգ, սիրավառ սիրտ, հայեցի լոյս եւ ուղեկցում քեզ ոչ միայն բեմից, ռադիոյով ու հեռուստատեսութեամբ, այլեւ կեանքում: Թերեւս այս բոլորը նկատել եւ գնահատել են ոչ միայն նրա ընթերցողները, այլեւ գրչընկերներն ու բարեկամները, որոնք այսօր էլ կրկնում են մեծանուն Յակոբ Կարապետեանի խօսքերը. «...Կեցցէ՛ շալէպը, որ քեզ պէս բանաստեղծ է տուել»:

Այո՛, սիրելի գրչեղբայր, այսօր դու Ամենամեծ Սասունցին ես: Ամէն անգամ Հայաստան գալուց ուխտագնացութեան եւ մեկնում Աշնակ, Գէորգ Չառուշի տուն-թանգարան, խոնարհուում Ուղանում, Վ. Սասնաչէնում, Երեւանի Եռաբլուրում մեծն Անդրանիկի արձաննե-

րին, Ապարանում հանգչող Դրոյի յուշարձաններին եւ շիրիմներին ծաղիկներ դնում: Աչքերդ արցունքով են լցւում, երբ ձեռքիդ ծաղկունք՝ խոնարհւում ես արցախեան մերօրեայ հերոսներ, սասունցիտարօնցիներ Գեղազնիկ Չառլշի, Թաթուլ Կրպէեանի եւ Զիւլան Աբրահամեանի յաւերժախօս շիրիմներին: Խոնարհւում ենք քո գրական վաստակի եւ մեծ «Ճանապարհ»ի քո մեծ ազնուութեան եւ 80-ամեակիդ առջեւ:

Ես՝ Սուրբ Կարապետ, մեռնենք քո գօրութեանը, Սպաղանաց Գրիգոր Հոթոյեանի ուխտը անկատար չթողնես, նրան Մովսասարն ու Մարաթուկն են սպասում, Սպաղանաց հօղն ու ջուրն են կանչում, Սպաղանցի Մակարն ու Կալէն, Տալուրիկն ու Արածանին են սպասում:

Ուխտդ ի կատար, իմ քաղցր գրչեղբայր:

ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

20.08.2007թ.

Երեւան



## ՆԱՍԱԿ ՀԱՅ ԳՐԱԳԷՏԻՆ

Սիրելի Պրն. Գրիգոր Հոթոյեան,

Խորին շնորհակալութեամբ ստացայ «Ճանապարհ» հատորը: Գիրքդ վաղուց ստացած էի, սակայն երկու խօսք գրելու ուշացումիս պատճառը պատահած անակնկալ դէպքն էր, որ վիրաւոր ձեռքովս չէի կրնար միտքս շարադրել ու գրել:

Սակայն այդ երկար ժամանակահատուածը ինձի առիթ ընծայեց լրջօրէն, ծայրէ ի ծայր կարդալու գիրքդ: Սուտ խօսած պիտի ըլլամ, երբ ըսեմ, թէ մէկ շունչով կարդացի գայն: Լեցուն՝ որ է, գիրքդ կը պարտադրէ ուշադիր ընթերցում, որպէսզի ըմբոշխնես բոլորը իր բազմազան երեսակներով:

Սիրելի Պրն. Հոթոյեան, մասունքի պէս թանկ արժէր ինձի համար «Ճանապարհ» հատորը: Անշուշտ դժուար է գրութեան մը շրջանակին մէջ համապարփակ երկու խօսք ըսել քու «Ճանապարհ»որդութեանդ համար, գոր կարդացի խորին զգուշութեամբ: Լեցուն՝ ինչպէս կրնայ



լեցողն ըլլալ նուռ մը, իր սեղմ ու արնաներկ ամբողջութեան մէջ: Ան կատարեալ միաձուլումն է այն բոլոր տարրերուն, որոնք կը կերտեն կեանքով բաբախուն սիրտը պատմական եղելութիւններու ընդմէջէն: Այդ տարրերը՝ յուշագրութիւն, տեղեկագրութիւն, դէպքեր, դէմքեր, յօդուածներ, վկայութիւններ, հարցազրոյցներ, երգեր, բանաստեղծութիւններ եւ այլն, եւ այլն... Այս բոլորը դուռն մշակած եւ հաւասար յաջողութեամբ, վարպետի մը նման: Քու ստեղծագործ ոգին կը տրոփէ այս հաստափորիկին ընդմէջէն, ուր շռայլօրէն կերտած եւ բազմաաքանչելի գրութիւններ: Ընթերցողը ճանապարհ կ'ելլէ ոչ միայն տեսնելու Տէր Զօրը, Եփրատը, ճանչնալու Ռաբբան, այլեւ զգալու զանոնք: Քու հոգիդ տրոփած է նաեւ բանաստեղծութիւններու մէջ: Լեզուդ համեղ է եւ ոճաւոր, մեծապէս հարուստ իր բառամթերքով: Համեղ կոչեցի լեզուդ, քանի որ բանաստեղծական երանգաւորումը ճկուն էր, ուր կ'երգես սիրոյ գեղեցկութիւնը:

Ուրեմն կը շնորհաւորեմ գրքին լոյս ընծայումը: Շատ շնորհակալ եմ Զեր ինծի նուիրած օրինակին համար: Սրտառուչ սիրոյ եւ անհուն կարօտի կոթող մըն է «Ճանապարհ»դ:

Այս տողերը գրեցի սիրողական հարկադրանքով:

Արեւշատութեան, քաջառողջութեան ու ստեղծագործական բեղուն գործունէութեան անկեղծ մաղթանքներով մնամ Զերդ յարգաւից՝

ՍԵՂԱ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ  
Մտաւորական, դաստիարակ

14 Դեկտեմբեր 2008



## ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ...

Հաճոյքով եւ հիացումով հետեւեցայ «ՃԱՆԱՊԱՐՀ»իդ եւ կը վկայեմ:

Շարժող անձ մը, ազգը շարժող անձ մը՝ Հոթոյեան Գրիգոր անուն, Տէր Զօրի աւագներէն կազմուած եւ Գանատայի սառոյցներուն վրայ թիավար:

Աքանջելի եւ սքանչացող մարդ, հաւատաւոր եւ արմատական քրիստոնեայ, Հայաստանեայց Եկեղեցւոյ օրինապահ զաւակ եւ սպասաւոր, Մեծի Տանն Կիլիկիոյ դարաւոր Աթոռին անվերապահ պահակ եւ անսակարկ զինուոր, Հայրենիքի անկախութեան «մեռնող» հերոս, հայ մշակոյթի աւանդապահ սպարապետ եւ հայ ոգիի անպատեան սուր:

«ՃԱՆԱՊԱՐՀ»-ը՝ ցեղիս փշապատ թէ գորգապատ շառաւիղնե-  
րու շղթայ, ուր «Փոքր Ածու»ին լուսեղէն թէ մթաստուեր հետքերը  
վայրկեաններու պէս կը սահին՝ կազմելով ցեղիս սեւ ու ճերմակ թէ  
գունագարդ պատմութիւնը վերջին մէկ դարուն:

Սիրելի եղբայր, խորենացիին եւ Եղիշէին աշակերտ ու հիացող  
եղբայրդ երբ խոր համոզումով եւ ակնածանքով կը հետեւի անոնց  
լուսեղէն ճանապարհին, քու «ՃԱՆԱՊԱՐՀ»-ը ընկալելէ ետք՝ անվե-  
րապահօրէն կը յայտարարէ իր յարգանքը մերօրեայ դժուարին եւ  
մութ պայմաններուն դիմաց նոր ճամբաներ կերտող Նոր խորենացի-  
ներուն եւ Եղիշէներուն:

Վարձքդ կատար:

Մնամ սիրով եւ օրհնութեամբ՝  
ՎԱՐՈՒԺԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Կաթողիկոսական Փոխանորդ  
Կիպրոսի Հայոց



## ԵՐԿԱՐ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԱՆԽՈՆՁ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԸ

Մեր եկեղեցւոյ հովիւէն քաջալարուելով, ահաւասիկ երկար տա-  
րիներու դադարէ ետք, երկրորդ անգամ ըլլալով թուղթին կը յանձնեմ  
տպաւորութիւններու փունջ մը:

Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով, թողներուս  
հետ ըլլալու պարտաւորութենէ զերծ մնալով, երբ պատահմամբ օր մը  
այցելած էի Հայր Սուրբին, խճողուած գրասեղանին, պիտի ըսէի սեն-  
եակին մէջ, նշմարեցի հաստափոր գիրք մը: Գրականութեան նկատ-  
մամբ ունեցած հետաքրրութեանս որպէս արդիւնք, ձեռքս երկարեցի  
քննելու համար գիրքը գէթ արտաքինապէս, քանի մը էջերու թերթա-  
տումով:

Հետաքրքրուեցայ. Հայր Սուրբը բացատրեց.

— Նոր ժամանակներու հայոց պատմութեան անբաժանելի ժամա-  
նակահատուածներէն միոյն պատմութիւնն է: Վստահ եմ, որ ապա-  
գային որպէս սկզբնաղբիւր ալ պիտի գործածուի: Լաւ գիրք է: Հա-  
ճոյք պիտի ստանաս: Ա՛ն... կարդա՛...

Բաւարարուեցայ:

Գիրքը առի, նոյն յետմիջօրէին իսկ սկսայ կարդալ:

Չճանճրացայ:

Մէկ էջը միւսին հտեւէն... քանի մը ժամ հոք... արդէն 110-րդ էջն էր... երբ տրեկինս ընդմիջեց յիշեցնելու համար, որ Christmas-ի համար պէտք է պատրաստուինք... որովհետեւ խոստացած էինք ժամը 5:00-ին մեծ աղջկանս տունը հաւաքուիլ:

Պատիժի պէս բան մը եղաւ այդ գիշեր: Ուտել, խմել, լեռնէն ձորէն խօսիլ:

Հապա՞ յղփացած թոռներու գազանի նման եւ կարծէք կեանքերնուն մէջ նուէր տեսած չըլլալու հոգեբանութեամբ կոկիկ փաթթուած նուէրներու բզբտումը: Ահաւոր բան էր:

Ես ալ բազկաթոռին նստած՝ կամայ ակամայ կը հետեւէի անցուդարձերուն, երբ մտովի գացի 110 էջերուն, որոնք կարգացած էի:

Կէս գիշերուան ժամը 12:30-ն էր, երբ հոգեհատոր թոռնուհիէս խնդրեցի, որ զիս տուն տանէր: Չագուկս այտերս համբուրելով եւ «մեծ մանուկ»ի մը խնամք տանելու հոգեբանութեամբ ձեռքէս մըտաւ...

Առաւօտեան ժամը մէկն էր:

Հաստափոր գիրքը կրկին ձեռքս առի:

Տրեկինս, ինչպէս միշտ, բարկացած էր.

— Չոճուխներուն քիթէն բերնէն բերիր: Եթէ արթուն պիտի մնայիր, տէրտղ ի՞նչ էր... կանուխէն տուն եկանք: Christmas է, դեռ Կ.ենք եւ Ս.ենք պիտի գային... Champagne պիտի բացուէր... Բայց ես գիտցա՛յ. այդ գիրքին համար եկար... փորդ պիտի ցաւէր, եթէ այդ գիրքը այս գիշեր չկարդայիր...

Տրեկնոջս սովորութիւնն էր: Վարժուած էի, անոր համար ալ հանդարտութեամբ պատասխանեցի.

— Կնի՛կ, գործիդ նայէ՛: Կրնայիր մնալ: Մօրդ տո՞ւնը Christmas կը տօնէիր: Պրաւօ՛, «ուշ եկար Սասուն, շուտ եղար հասուն»:

Մեր վիճաբանութիւնը իր աւարտին հասաւ: Տրեկինս ալ գիրք մը առաւ ձեռքը: Փառք Աստուծոյ. հիմա սկսանք Christmas տօնել:

\* \* \*

Ահա այս պայմաններու տակ համով հոտով կարդացի գանատահայ մտաւորական եւ թղթակից Գրիգոր Հոթոյեանի «Ճանապարհ»ը: Քանի մը օր, եւ արդէն Նոր Տարուան առաւօտուն աւարտած էի գրքի ընթերցումը առանց սող մ'իսկ փախցնելու:

Կարճուկ, ալեհեր եւ ծիծաղկուն աչքերով Գրիգոր Հոթոյեանին ծանօթ եմ միայն դէմքով: Լսած էի իր մասին: Այժմ ճանչցայ:

Պարզ լեզուով, կարճ նախադասութիւններով, յստակ մտածումներով եւ թափանցիկ ոլորտներով կազմուած գեղեցիկ փունջ մըն էր «Ճանապարհ»ը:

Երբեմն հին յուշեր, երբեմն նոր եւ այժմէական մտահոգութիւններ, յաճախ յուզական, մերթ ընդ մերթ փոթորկալից ցաւերով լեցուն,

մէջ ընդ մէջ նուաճումներով համեմուած եւ անցեալին հպարտութեամբ ակնարկ նետող գիրքի մը տպաւորութիւնը ձգեց վրաս:

Խաբուած չէի:

Քաջ վստահ եմ, որ «Ճանապարհ»ը գեղեցիկ ծաղիկներով զարդարուած եւ ընթերցողին ներկայացուած յախճապակեայ ծաղկաման մըն է, զորս կարելի է հպարտութեամբ գործածել, որքան ալ հին ըլլայ անոր «պատմութիւնը»:

«Ճանապարհ»ը պտղաման մըն է, հրամցուած բոլոր ընթերցասէրներուն, որոնք ուզած պտուղնին կրնան ճաշակել ու համտեսել:

«Ճանապարհ»ը պարզունակ հոգիով, բայց տեսիլք ու հաւատք ունեցող ուխտաւորի մը ճանապարհորդութիւնն է, որ 40-ականներու վերջերէն սկսեալ մինչեւ մեր օրերը հասնող գիրի ու գրչութեան «Առաքեալ» է:

«Ճանապարհ»ը «Սրբազան Սերմնացան»ի մը ցանքին պատմութիւնն է, որ իր դաշտը պտղաբեր դարձնելու համար ցանած է յանուն պատմութեան:

«Ճանապարհ»ը «Անմահութեան Ճանապարհով» ընթացողներուն դիմաց բացուած լուսատու ուղի մըն է:

«Ճանապարհ»ը դէպի «Հո՛ն» տանող արահետն է:

«Ճանապարհ»ը «Խորտակուած Սէր»ն է անյոյս սրտերուն:

«Ճանապարհ»ը «Հաւատքի Զօրութիւնը» իր մէջ խտացնող բաց մատեան է:

«Ճանապարհ»ը հայոց պատմութեան ծով անդաստանին մէջ իր դիրքով եւ պտուղներով արժէք ունեցող թանկագին ծառ է, որուն ճիւղերը հարուստ են ազգային, եկեղեցական եւ մշակութային անանցանելի յուշերով, երգերով ու վէրքերով:

«Ճանապարհ»ը մեր ժողովուրդի մեծերէն ոմանց հանրագիտարանն է, անոնց կեանքին ու գործին վրայ լոյս սփռող:

«Ճանապարհ»ը յիշատակարան մըն է անցաւոր, բայց միշտ կենդանի արժէքներու:

«Ճանապարհ»ը «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գըրուած՝ խոհերու եւ ապրումներու գեղեցիկ յուշամատեան է:

«Ճանապարհ»ը երգերով, խօսքերով ու նուիրումներով՝ շունչ ու ոգի զգեցած պատկառելի հատոր մըն է:

Փառք Աստուծոյ, որ պարզունակ այս մարդը, իր կեանքի ալեւորութեան մէջ, կրցաւ վայելել մեր ժողովուրդի յարգանքը՝ Հայաստանի Գրողներու Միութեան գնահատանքն ու մանաւանդ Կիլիկեան Ս. Աթոռի արժանընտիր գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի սէրը, որուն հայրական գնահատանքին արժանացաւ «Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ» շքանշանի տուչութեամբ: Գրիգոր Հոթոյեան իր այս բերքահաւաքով բարիք կը դառնայ բոլոր անոնց, որոնք օր մը պիտի ուսումնասիրեն, մանաւանդ՝ թորոնթոհայութեան կեանքը:

Մեծարգոյ Պրն. Հոթոյեան,

Վարձքերնիդ կատար:

Վստահ եմ, որ եթէ ապրէիք այնպիսի միջավայրի մը մէջ, ուր կարենայիք միայն ստեղծագործել, գերազանցօրէն պիտի պտղաւորուէիք: Բայց Սփիւռքի մէջ մեծնալ եւ աշխատիլ ընտանիք պահելու համար եւ միաժամանակ գրել՝ մեծ գոհողութիւն է:

Դուք կրցեր էք հաւատալ ձեր կոչումին, որպէս երկար տարիներու Հայց. Առաքելական Եկեղեցւոյ քրիստոնէական դաստիարակութեան ծառայ, ուսուցիչ եւ դաստիարակ: Կրցեր էք ազգային վառ գիտակցութեամբ արմատացնել ազգային ու բարոյական բոլոր արժէքները:

Կրցեր էք ձեր գրիչին մէջ խտացնել ՀԱՅՈՒԹԻՒՆԸ իր սկզբունքներով, բարոյական արժէքներով եւ հաւատքով:

Ամէն մարդու չէ տրուած այս շնորհքը:

Դուք երանելի էք:

Որպէս գրեթէ ձեզի տարեկից հայ, ինքզինքս հպարտ կը զգամ, որ ես ալ երկա՛ր տարիներ ծառայեցի հայ մամուլին՝ լուռ ու մունջ:

Այսօր վարձքս կը ստանամ:

Այս օրերուն, մինչ ոմանք «իրենք գիրենք կը կերտեն» առանց ստեղծագործութեան, դուք պատմութիւն կը կերտէք:

Ահա ա՛յդ թող ըլլայ ձեր վարձքը:

Կը շնորհաւորեմ ձեր «Ճանապարհ»ը, եւ բարի ճանապարհորդութիւն կը մաղթեմ ձեզի «մեծ»երու աշխարհին մէջ, որպէսզի «մեծ»երն ու մեծութիւնները հարազատ վկան դարձնէք մեր պատմութեան սիրագործութիւններուն:

ՏէՏէ

Ինքզինք խոնարհութեան եւ  
պարզութեան մէջ պահող  
սքանչելի մտաւորական մը



## ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻՆ ԲԱՐԻ «ՃԱՆԱՊԱՐՀ»

Իմաստասէրներ՝ մտաւորականութեան մասին իրենց ուղղուած հարցումին կը պատասխանեն ըսելով, որ մտաւորականը ոչ միայն գիր ու գրականութեան նուիրուած ստեղծագործողն է, այլ ազգային, մշակութային, մարդկային արժէքներուն հետեւող, անոնց կերտում-

ներուն եւ պաշտպանութեան նուիրուած առաջնակարգ յանձնառու անձնաւորութիւնն է:

Գրիգոր Հոթոյեանի կտրած կեանքի ուղին եւ գայն պարուրող հարուստ փորձառութիւնը թուղթին, պատմութեան ճակատագրին յանձնումի այս վկայագրութեան առթիւ՝ մեր յարգանքը յայտնելով, պիտի ջանանք կարգ մը հաստատումներ կատարել վերոյիշեալ բացատրութեան ուղեգրութեամբ:

Ան մեր մշակութային բազմաթիւ ներդրումներ իրագործող նր-  
ւիրեալներէն է. հեղինակ՝ ստեղծագործական հատորներու, եւ գրա-  
կանութեան մտերմութեամբ առաջին իսկ տարիներուն՝ մեզի իր  
նուիրումներով, իսկ այսօր այս հատորով մեջ հաճելի անակնկալի կը  
մատնէ այս բացառիկ եւ իր տեսակին մէջ եզակի վկայաշատ երաշխի-  
քով: Հատոր մը, որ պիտի հանդիսանայ փաստական հեւքը հայկական  
գաղութի մը ժամանակի տարածքին կատարած իրագործումներուն:

Ականատես, ականջալուր, մասնակից պատմողն է ընթացքային  
երեւոյթներուն: Վերլուծողական փաստագրական քանդակող մը:

Բանաստեղծութեամբ «Սիրտը Ափին Մէջ» դրած, այդ սիրտը վե-  
րածեց համայնական «Նուիրում»ի, եւ ահաւասիկ աւելի քան ութ  
հարիւր էջերէ բաղկացած կոթողական հատորով մը՝ իր ապրումներու  
գործնական գեղումներու մատուցումը: Կոթողական, ոչ միայն անոր  
ծաւալի գնահատանքով, այլեւ բովանդակութեան այլազանութեամբ,  
հայթայթուած հարուստ տեղեկութիւններով:

«Ճանապարհ» կ'ելլենք Ռազգայէն, Տէր Զօրի եւ Եփրատի հարե-  
ւանութենէն անցնելու համար, պատերազմի թոհուբոհին մէջէն, եւ  
ապրուած խաղաղութիւն, որքան այլաշարժային հանգրուաններ, որ-  
քան առատ շնչառութիւն, թոքերու ինչպիսի առագաստաւորումներ,  
յուշագրութեան հանգրիճումներ, սփիւռքագրութեան սքանչելի վը-  
կայութիւններու պատկերներ, որոնք գրողի ներշնչումներուն կ'են-  
թարկուին իր շրջապատի հեռու եւ մօտ անցուդարձող իրագրութիւն-  
ներով: Ջգացականօրէն իրապաշտ, հիացականօրէն գրանցուած բա-  
ցայալտումներ:

Գրականութիւն, այո, դպրոցներ, ձեռնարկներ, այո, այս բոլորը  
թղթակցութեան պատճառներով կը հասնին մեզի: Կը հասնին ջեր-  
մութեամբ, խանդաղատանքով, կենդանութիւն, ապրում եւ քերթո-  
ղական մթնոլորտ բուրոզ գգայնութիւններով:

Առաջին բաժնով մտաւորական գրողին հետ մուտք կը գործենք  
գաղութի եռեւեփուող աշխուժութեան մէջ շարժանկարային երանգ-  
ներով:

Առանց գրական բոյրի հարստութեան վկայարան պիտի չկրնար  
ըլլալ Հոթոյեանի «Ճանապարհ»ը, անոր անդաստանը պիտի այսպէս  
չլիցքաւորուէր ժամագրութիւններով, ուր այցի կու գան հայ գրակա-



նուլթեան մէջ արդէն իսկ տուն տեղ կերտած դասական դէմքեր: Զը-  
րոյցներ, որոնց կ'ընկերակցին, այդ մեծութիւնները վերարժեւորող իր  
դիտումներն ու դատումները, դէպքերու եւ դէմքերու գնահատան-  
քային արձագանգներով, դէմքեր ու դէպքերու նորովի արտայայ-  
տութիւններու հաճոյալի արձանագրութիւններով:

Այս առաջին բաժնի բովանդակութեան գնահատանքը կը կայա-  
նայ երէկուայ եւ այսօրուայ ժամանակներու հասարակաց կտաւին  
վրայ միացած՝ միեւնոյն ազգակերտ երեւոյթներու ժամանակակցու-  
թիւնը: Երէկի եւ այսօրուայ դաստիարակչական լոգոսներու զօ-  
ղումներով ստեղծուած մարտահրաւէրները կը վերածուին համընդ-  
հանուր գաղափարախօսութեան մը հիմնահարցի ճիւղաւորումներու:

Այստեղ կը միանան մշակոյթին, հայ մշակոյթին առնչուող իրա-  
կանութիւններ, ուսումնասիրութիւններ, դիմաստուերներ եւ միջա-  
վայրային օրերու եւ պայմաններու թելադրութիւններ: Պատմութեան  
ընթացքը կարծէք, կը կարգացուին հեղինակին հոգեշունչ  
նկարագրութեամբ, կ'արարուին այնպիսի ջերմութեամբ, կենդանու-  
թեամբ եւ մանաւանդ հաւատքով: Արձանագրութիւնները անցնելով  
հեղինակին հոգե-աշխարհի քուրայէն, կենդանութեան կը վերածուին,  
երբեմն կը հարստանան կամ կը պահպանեն ներկայացուածներուն  
որակային ճոխութիւնը:

Տրամադրութիւններու բարձր մթնոլորտի մէջ հաւատք կը դառ-  
նան եւ հաւատացէք այնքան գեղեցիկ եւ յարմար նկրտումներով ամ-  
բողջացած՝ կը շղթայուին բաժինները մէկը միւսին:

Եւ մամուլին մէջ տեղ գտած գաղութը, Մերձ-Արեւելքի հայու-  
թեան նոր աշխարհի հոսքը չի կրնար ջերմ աշխուժութեան չվերած-  
ուիլ բանաստեղծի գրիչին տակ: Գաղութը անհանդարտ եռեւեփումի  
մէջ է, անխոնջ, անտեղիտալի, յարաճուն: Ի պատիւ հայ ժողովուրդին  
եւ ի պատիւ անոր գաւազներէն Հոթոյեանին, որ պահերը, շարժում-  
ները, ընթացքները բռնել գիտցած է եւ գայն շնչող, ապրող, թելա-  
դրող վկայութիւններու վերածած:

Կը հասնինք այցելութիւններուն, յոբելեաններուն, մաղթանք-  
ներուն, որոնք իսկապէս մաղթանքային եռացող ներկայացումներու  
հանգամանքով տրուած են: Որքան ճիշդ կայ այնտեղ հայութեան ճի-  
գերը բեղմնաւորող, որքան հիացմունք կայ ժողովուրդիս հատում-  
ները հոգեկան սնունդի վերածող: Մեր գաւազներուն տքնանքները  
գնահատող այդ էջերը, հայրենիքէն մինչեւ գանատական փերուն,  
կը դառնան հպարտութեան ովասիսներ, կը դառնան իրարու յաջոր-  
դող սերնդափոխութեան վերընձիւղումներ:

Ձեռնարկներ, զորս միայն հիացմունքով կարելի է կարգալ, իսկ  
անոնց յառաջացուցած խորհուրդներու զօրութիւնը մեզ պարզապէս  
կը մղեն ակամայ երկու մեծ պռաւօններով արտայայտելու մեր յու-

գումնախառն հպարտութիւնը, մէկը բնականաբար ուղղուած մեր աննման ժողովուրդին, իսկ միւսը իր արժանաւոր գաւկին՝ պատմողին, վկայողին, դէպքերը գնահատական ելոյթներու վերածող հեղինակին:

Հատորներու ստեղծագործութիւնները իրենց արձագանգը գտած են արտերկրի հայրենիքի այս ափերուն, մտաւորականի հաւատքով, գրականութեան փորձառութեամբ, ժողովրդային շրջանակներէն արուեստի եւ մշակոյթի բարձրութեան հասնող երկնամասերով:

Ինք է եւ իր անմիջական շրջապատը, անբաժան գիրն ու գրիչը: Կերտողն ու հիացողը, ժողովուրդն ու մշակները: Անձէն դէպի հաւաքական իրագործում, հաւաքական այնքան արժեւորումի հարստութեամբ օժտուածութիւն: Մեզի համար արդէն պարզ իրականութիւն է կարդալ անուններ, որոնք ժամանակի գնահատանքին հետ այժմէականացած են, եկած եւ մաս կազմած մեր օրերու պատմութեան, միաձուլուած երէկի պատգամով այսօրուայ պատմութեան:

Հայու անժամանցելի, անսահմանագծելի պատմութիւնը:

Նոյնքան գնահատելի է այս հաստատումով, երէկը այսօրուայ ճիգերու վերածող գնահատական նամակներ, որոնք գրուած են կարծէք հեղինակէն պահանջելու այս գիրքին պատրաստութիւնը: Գրուած են սիրողական հարկադրանքով, մտերմիկ ջերմութեամբ:

Ապրողներու եւ մեկնողներու մասին յատկացուած բաժինը նմանապէս հետաքրքրական մօտեցումով դասաւորուած է: Պարզ է մեզմէ յաւէտ բաժնուած մեծութիւններուն նուիրուած իր ջերմութիւնը, որուն ընդմէջէն անոնք կը դառնան յաւերժութեան ճամբորդներ, մեր օրերու ճիգերուն մաս կազմող կամ ճանապարհի ընկերակիցներ հանդիսացող անմահներ:

Անոնք ոչ միայն կը յիշուին, այլ կ'անցնին մեր պատմութեան, կը դառնան մշակոյթի պատմութեան, գաղութային պատմութեան հիմնակէտերը: «Ի խնդիր բարոյական ճշմարտութեան» պիտի ըսէր ինք, իսկ մենք կ'ըսենք՝ ի խնդիր ազգային յաւերժականութեան:

Եկող ու գացող այցելուներ, որոնց հետ Հոթոյեան ցոյց տուած է հարցազրոյցներ արժեւորելու եւ ամէն հնարաւորութիւն ազգային մտահոգութեան թեմաներու վերածելու: Ամէն արժանաւորի հետ դարձնել պահի թելադրող էջը, ներկայի եւ ապագայի միջեւ ինկող հարցերու քննարկումներ կատարելու, պեղելու, անոնցմէ քաղուած արտայայտութիւնները իրարու միացնելով յառաջացնելու տեսակ մը յաճախապատում: Այդ բոլորին մէջ կան ազգային, կրթական, գրական, քաղաքական կարեւոր դիրքեր գրաւած անձնաւորութիւններ:

Գրիգոր Հոթոյեանի չափածոյ կամ արձակ գործերուն կողքին, այս հատորը իր կեանքի վերընձիւղումներուն պատմագրական գրաւականն է: Հարուստ հատոր մը, որ արժանաւորապէս կը ներկայացնէ գանատահայ գաղութի պատմութիւնը, տեսակ մը տարեգրքային:

Մեզի կը մնայ պարզապէս գնահատել նման մեծ աշխատասիրութիւն մը, որ գանատահայ կեանքին մէջ կեանքի թէժ ելեւէջներ ունեցած հեղինակը, օգտուելով ընծայուած այս հնարաւորութենէն, հայութեան հանդէպ իր ունեցած անհուն սիրոյ այս մատեանը կը մատուցանէ մեզի:

Հիմնուած իր գրական լայն պաշարին, խմբագրական ուժեղ գրիչին: Հարկ է կրկնել, որ անհրաժեշտ է շնորհաւորել հեղինակը, որ քաջութիւնը ունեցած է մինակը նման մեծածաւալ գործ մը իրականացընել:

Շնորհակալութիւն եւ շնորհաւորութիւն:

Ապրի՛ս Գրիգոր Հոթոյեան:

Ապրի՛ս, որ ապրեցուցած ես տարիներու պատմութիւն մը, ի մի բերելով հինն ու նորը, հաւասարապէս քու եւ գրչի, մտքի ընկերներուդ արգասիքով:

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԱՆ

Գրող, հեղինակ, պատմաբան, խմբագիր,  
հրատարակիչ, դաստիարակ



## ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

«Ճանապարհ», Թորոնթօ, 2007, 874 էջ, ցկարազարդ,  
հեղինակ՝ Գրիգոր Հոթոյեան

Ահաւասիկ մեծածաւալ հատոր մը, ուր բովանդակուած կը գըտնենք Գրիգոր Հոթոյեանի 60-ամեայ գրական վաստակը:

«Ճանապարհ» խորագրով գիրքի լոյս ընծայմամբ, վաստակաւոր հեղինակը բերքահաւաքը կատարած է՝ տարիներու ընթացքին հայ մամուլին մէջ ստորագրած «ուսումնասիրութիւնները, յօդուածները, թղթակցութիւնները, հարցազրոյցները, երգերն ու բանաստեղծութիւնները» մէկտեղելով:

Սոյն մեծածախս հատորին մեկենասութիւնը ստանձնած է հեղինակին Անի դուստրը, մեծապէս գնահատելով եւ արժեւորելով իր հօր գրական, հասարակական, դաստիարակչական, լրագրական ու մշակութային գործունէութիւնը:

Արմէն Տօնոյեանի յառաջաբանէն ետք (էջ 9–11), հատորը կ'ընդգրկէ հետեւեալ բաժանումները.—

ա. Յօդուածներ (էջ 15–142)

բ. Ուսումնասիրութիւններ (էջ 145–202)

- գ. Պատմուհիներ (էջ 205—284)
- դ. Թղթակցութիւններ (էջ 287—568)
- ե. Հարցազրոյցներ (էջ 571—670)
- զ. Առիթներով խօսուածներ (էջ 673—700)
- է. Մահագրութիւններ (էջ 703—758)
- ը. Երգեր (էջ 761—780)

թ. Բանաստեղծութիւններ (էջ 783—802)

ժ. Գրախօսականներ եւ վկայութիւններ «Նուիրում» հատորի հրատարակութեան առթիւ (էջ 805—831)

ի. Գրախօսականներ եւ վկայութիւններ «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» հատորին հրատարակութեան առթիւ (էջ 835—865):

Հատորը ճոխացած է հեղինակին եւ այլ անձնաւորութիւններու յիշատակելի նկարներով:

«Ճանապարհ» գրքին հրատարակութեան առթիւ Գրիգոր Հոթոյեան հետեւեալը կ'ըսէ.—

«Սոյն հատորը գրական-գեղարուեստական բովանդակութիւն չունի: Հոն ամփոփուած գրութիւնները, որոնցմէ շատերը լոյս տեսած են 50—60 տարիներ առաջ, որոնք մամուլի էջերէն դուրս հանելով պատրաստուեցաւ այս հատորը, որ մեծ դիւրութիւն կ'ընծայէ անցեալին կատարուած ձեռնարկներու նպատակը, բովանդակութիւնը եւ թուականները յիշեցնելու, որոնց ընթերցումը այդ շրջաններուն գործող եւ ապրող հայ ազգայիններուն կը վերյիշեցնէ այդ օրերը: Իսկ նոր սերունդները կ'ունենան անցեալին կատարուած ձեռնարկներէն որոշ գաղափարներ, ընդօրինակելով անոնց հայրենասիրական, ազգային եւ եկեղեցասիրական ոգին»:

Գրիգոր Հոթոյեանի յիշեալ գնահատելի աշխատասիրութիւնը թանկագին աղբիւր մը պիտի ըլլայ ապագային այն ուսումնասէր անհատներուն համար, որոնք պիտի հետազօտեն սփիւռքահայ կեանքն ու պատմութիւնը:

«Ճանապարհ»ը հետաքրքրութեամբ ընթեռնելի հատոր մըն է իր ճոխ եւ այլեւայլ նիւթերու բովանդակութեամբ:

Կը շնորհաւորենք հեղինակը իր այս օգտաշատ աշխատութեան համար ու կը թելադրենք, որ իւրաքանչիւր հայ ընտանիք իր յարկէն ներս ունենայ օրինակ մը «Ճանապարհ» գրքէն:

ԲԱՐԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ  
Մտաւորական, պատմագէտ,  
խմբագիր, հրատարակագիր

Մոնթրէալ



## «ՃԱՆԱՊԱՐՀ» (ՀԵՂԻՆԱԿ՝ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ)

2007-ին Թորոնթոյի մէջ լոյս տեսաւ գանատաձայ հրատարակագիր Գրիգոր Հոթոյեանի «Ճանապարհ» խորագրեալ հատորը, որուն մեկենասութիւնը ստանձնած են հեղինակին դուստրը՝ Անի Հոթոյեան-ժողին եւ թոռները՝ Գրիստափորն ու Ստեփան Արմէնը:


Գրիգոր Հոթոյեան ծնած է Հալէպ, 5 Օգոստոս 1927-ին, սասունցի ծնողներէ: Յաճախած է Հալէպի ազգային Սահակեան երկսեռ վարժարանը եւ աւարտած՝ 1941-ին:

1947-ին, որպէս զբաշար, սրբագրիչ եւ աշխատակից, մաս կազմած է «Արեւելք» օրաթերթի անձնակազմին: Հետեւած է հայագիտական դասընթացքներու: Վարած է ուսուցչական պաշտօն ազգային ամէնօրեայ եւ կիրակնօրեայ վարժարաններու մէջ: 1975-ին կը հաստատուի Թորոնթօ, ուր շնորհիւ եկեղեցական, զբաղման եւ մշակութային կեանքի մէջ իր ցոյց տուած անձնուէր ծառայութեան՝ կ'արժանանայ գնահատագիրներու եւ օրհնագիրներու: Վաղ տարիքին աշխատակցած է հայրենի եւ սփռուքաձայ բազմաթիւ թերթերու՝ ստորագրելով բանաստեղծութիւններ, յօդուածներ եւ պատմուածքներ:

Գրիգոր Հոթոյեան ցարդ հրատարակած է հետեւեալ գործերը. «Սիրտը Ափին Մէջ» (բանաստեղծութիւններ, 1987), «Նուիրում» (երգեր եւ բանաստեղծութիւններ, 2002), «Ի խնդիր Բարոյական Ճօշմարտութեան» (բարոյալից պատմուածքներ, 2005) եւ «Ճանապարհ» (բերքահաւաք՝ 2007):

Հատորը կը բաղկանայ 876 ծաւալուն էջերէ եւ կ'ընդգրկէ հետեւեալ ենթաբաժինները. «Յօդուածներ», «Ուսումնասիրութիւններ», «Պատմուածքներ», «Թղթակցութիւններ», «Հարցազրոյցներ», «Առիթներով խօսուածքներ», «Մահագրութիւններ», «Երգեր», «Բանաստեղծութիւններ», «Գրախօսականներ եւ վկայութիւններ», «Նուիրում» եւ «Ի խնդիր Բարոյական Ճշմարտութեան» հատորներուն հրատարակութեան առթիւ:

Իր յառաջաբանին մէջ Գրիգոր Հոթոյեան կ'ըսէ, թէ «Ճանապարհ» խորագրեալ հատորը զբաղման բարձր մակարդակի պատկանող երկ մը չէ, այլ բերքահաւաքն է ան ազգային եւ ընդհանրական հարցեր շօշափող յօդուածներու, որոնք տարիներ առաջ լոյս տեսած են մամուլի էջերուն:



Հատորին առաջին ենթաբաժինը կը բաղկանայ 32 յօդուածներէ, ուր հեղինակը կը դրուատէ գործն ու արժանիքը Ս. Մեսրոպ Մաշտոցի եւ իր աշակերտներուն: Կը փառաբանէ 1918 թուի մայիսեան փառահեղ յաղթանակով կենսագործուած Հայաստանի անկախութիւնը:

Գաղափարապաշտ հրապարակագիրն է Հոթոյեան, որ ոգեշունչ ապրումով կը պանծացնէ յիշատակը Հայոց մեծանուն հերոսներուն: Մանաւանդ արդար հպարտութեամբ կը յիշէ Չորեքշաբթի, 24 Մայիս 2000 թուականը, երբ Պոսթընէն Երեւան կը փոխադրուի զօրավար Դրոյի աճիւնը:

Հեղինակը կը հանդիսանայ ջերմ պաշտպանը Հայ կրթական հաստատութիւններուն եւ Հայ մշակոյթին: Զերմապէս կը գնահատէ կրօնաշունչ առաքելութիւնը Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ կիրակնօրեայ վարժարաններուն, որոնց յարկին տակ կը դաստիարակուին նորահաս Հայ սերունդները՝ բարոյական առողջ դաստիարակութեամբ:

«Ուսումնասիրութիւններ» ենթաբաժինով Գրիգոր Հոթոյեան կը փոխանցէ կարգ մը պատմական տեղեկութիւններ սուրբական շատ հին քաղաքին՝ Ռազգայի մասին, ուր 1922-ին Եղեռնէն ճողոպրած ուրֆացի Հայ գաղթականներու կողմէ կը կազմուի հայկական գաղութը:

Հեղինակը դիպուկ վերլուծումներով կը պարզէ հիմնական յատկանիշերը Դանիէլ Վարուժանի եւ Յովհաննէս Թումանեանի գրականութեան: Կու տայ բացատրութիւններ Արշակ Բ-ի վարած քաղաքականութեան եւ անոր օրով տեղի ունեցած բախտորոշ իրադարձութեանց մասին: Կը նկարագրէ հերոսական արարքները Սասունի պաշտպան Ֆետայիներէն Սպաղանցի Գալէին, որ եղած է անբաժան զինակիրը Գէորգ Չաւուշին:

Հատորին Գ. ենթաբաժինը կ'ընդգրկէ 15 պատմուածքներ, ուր Գրիգոր Հոթոյեան կը պատկերացնէ տարագրութեան տարիներէն անդրադարձուած սրտայոյզ դրուագներ:

«Ճանապարհ» խորագրեալ Հատորին Գ. ենթաբաժինը յատկացուած է 82 թղթակցութիւններու, ուր հեղինակը կը ներկայացնէ ընթերցասէր հանրութեան, յիսունական թուականներէն մինչեւ ներկայ 2006 թուականը, Հալէպի եւ Թորոնթոյի մէջ տեղի ունեցած գրական, կրթական, եկեղեցական եւ մշակութային հանդիսութիւնները՝ իրենց բովանդակութեամբ, թուականներով եւ անհրաժեշտ մանրամասնութեամբ:

Հարցազրոյցները կը հանդիսանան Հատորին հետաքրքրական ենթաբաժինը, ուր համախմբուած են հեղինակին 23 զրոյցները գրագէտներու, եկեղեցականներու, ազգային գործիչներու, արուեստագէտներու եւ այլ պատասխանատուներու հետ: Այս կապակցութեամբ, շահեկան են Գրիգոր Հոթոյեանի վարած հարցազրոյցները Պոլսոյ Ամենապատիւ Շնորհք Պատրիարքի, հայրենի բանաստեղծ

Վահագն Դավթեանի, երաժիշտ-խմբավար Ալֆրետ Մարդոյեանի եւ Յովհաննէս Զէքիճեանի, Վենետիկի Մխիթարեան միաբաններէն Հայր Լեւոն Վրդ. Զէքիեանի, գեղանկարիչ Գրիգոր Մոմճեանի եւ քաղաքական բանտարկեալ Համբիկ Սասունեանի հետ:

Հատորին «Մահագրութիւններ» ենթաբաժինով Գրիգոր Հոթոյեան կը ներկայացնէ 14 դամբանականներ, ու կը սգայ կորուստը ազգասէր անձերու՝ յուշագրելով անոնց հետ առնչուած յիշատակելի դէպքեր, ինչպէս՝ Անդրանիկ Ծառուկեանի եւ Սիմոն Սիմոնեանի մահուան առիթներով իր ստորագրած յուշագրութիւնները:

Հեղինակը ունի նաեւ չափածոյ գործեր, որոնց մէկ մասը վերածուած է երգի:

Հատորին վերջընթեր եւ վերջին ենթաբաժինները կ'ընդգրկեն կարգ մը գրախօսականներ եւ վկայութիւններ, որոնք նախապէս լոյս տեսած են մամուլի մէջ հեղինակին «Նուիրում» եւ «Ի խնդիր Բարոյական ճշմարտութեան» երկերուն հրատարակութեան առիթով:

Պէտք է ըսել, որ Գրիգոր Հոթոյեանի «Ճանապարհ» խորագրեալ ընդարձակ հատորը արգասիքն է հրապարակագրական մարզի մէջ իր տարած անխոնջ ու երկարատեւ աշխատանքին: Այս յղացքով, օգտաշատ իրագործում մըն է յիշեալ հրատարակութիւնը, զոր պէտք է կարգայ իւրաքանչիւր սփիւռքահայ ընթերցող...

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Բանաստեղծ, արձակագիր,  
հրապարակագիր

«Ազդակ» օրաթերթ  
Պէյրուս, Լիբանան



Գր. Հոթոյեան՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.ի հետ, էջմիածին

«ՃԱՃԱՆՉՆԵՐ»

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ – ԹՈՐՈՆԹՕ – 2010

Հեղինակ՝ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ

Կը ներկայացնե՛ թՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Մեծղի հատոր մը՝ 422 էջեր ընդգրկող: Հեղինակին հինգերորդ հատորն է ճաճանչողը, ուր կը հանդիպինք բազմաթիւ քերթուածներու, զորս եղանակաւորած են յայտնի անուններ մեր երաժշտական աշխարհէն:

Գիտենք, որ Իսահակեանի բանաստեղծութիւններէն շատ-շատեր վերածուած են երգի, երբեմն այն տպաւորութիւնը թողլով, որ այդ երգերը հին դարերէն կու գան: Այդպէս էր, որովհետեւ Իսահակեանը մեծ բանաստեղծ ըլլալով՝ կարծէք ի բնէ ինք դաշնաւորած ըլլայ իր բանաստեղծութիւնները:

Ուրիշ յօրինող մըն ալ ունինք, որուն անունը Աշոտ Գրաշի էր: Անոր եւս գործերէն շատեր վերածուած են երգի, գեղեցկացնելով անոր գործերը:

Բախտաւոր մըն ալ Գրիգոր Հոթոյեանն է, որուն ոտանաւորները երգերու վերածած են երաժիշտ Գրիգոր Փիտէճեանը, Գէորգ Յարութիւնեանը, Էդիկ Յովսէփեանը, Սարգիս Համպոյեանը, մելգոնեանցի Յակոբ Մանուկեանը, Անահիտ Կոլտսուգեանը եւ Արթուր Ռազգոյեւը:

Երաժշտագիր այս ոտանաւորները գրաւած են գիրքին գրեթէ կէսը – 181 էջ:

Այսքան երաժիշտ Գրիգոր Հոթոյեանի գործերուն համար, որոնցմէ շատերուն ծանօթ եմ անձնապէս: Միթէ հարստութիւն մը չէ՞ այս մէկը:

Հատորին Բ. մասը, որ կը կոչուի «Բանաստեղծութիւններ», կը սկսի էջ 182-էն, ուր համախմբուած են աւելի քան հարիւր ոտանաւորներ, որոնցմէ տասնեակէ մը աւելին ձօներգութիւններ՝ յղուած սիրելի անուններու:

Արմատներով սասունցի Գրիգոր Հոթոյեանը ծնած է Հալէպ, 1927-ին ու Հալէպի նկատմամբ իր սէրը հասցուցած Գանատայի Թորոնթօ քաղաքը: Անոր այդ սիրոյն առհասաւտչեան «Սուրբային» քերթուածն է, զոր տուի լաւ արաբերէն իմացող բարեկամի մը, որպէսզի այս գործը արաբերէն լեզուով ալ հնչէ:

Բառին լայն իմաստով հայրենասէր ազգային գործիչ մը եղած է Գրիգոր Հոթոյեանը եւ իր կեանքին ընթացքին մեծարուած իր ապրած



երկիրներուն մէջ: Եթէ մէկը գրիչ վերցուցած է յանուն իր ժողովուրդին, ուրիշ ի՛նչ կրնայ ընել, եթէ ոչ նուիրուիլ իր իսկ ժողովուրդին. ահա թէ ինչո՛ւ Գ. Հոթոյեանին ոտանաւորները որպէս նիւթ ունին առաւելապէս ազգը յուզող հարցերը:

Հոն միշտ ներկայ են Սասունն ու Հայաստանը, մեր Ֆետայիները, ու ամէնէն աւելի ներկայ է սէրը ոչ միայն իր սիրած էակին հանդէպ, այլ նաեւ այն հողին հանդէպ, որուն ծնունդն է հեղինակը:

Տանք օրինակ մը սիրոյ գործերէն.

Սիրեցի քեզ իմ անգին,  
Հոգով, սրտով՝ խենթի պէս,  
Գիշեր-ցերեկ անձկագին  
Քեզ կ'երագեմ բոցակէզ:

Այլ քերթուած մը ահա, որուն խորագիրն է «Ճշմարիտ սէրը».

Ինչպէս երկինքը առանց աստղերու հմայիչ տեսիլն  
Կը պատկերանայ որպէս թախծալի գիշեր սեւաթոյր,  
Նոյնպէս մարդկային կեանքը աշխարհիկ տխուր է ուսին,  
Առանց սիրային փողօրաթոյր կեանքի սնունդի թափուն:

Նման երգերու մէջ չէ՞ք կարծեր, որ սիրոյ ճաճանչները աւելի պէտք է ըլլան:

Հոթոյեանը տուած է իր կարելին ու յամառօրէն հեղինակած բազմահարիւր ոտանաւորներ՝ զարմանալի յարատեւութեամբ:

Հայ դպրոցը իր կայուն նիւթերէն մէկն է իրաւացիօրէն.

Կանգուն կը մնաս, որպէս ատրուշան,  
Հայ ժողովուրդի կամփով անասան,  
Որպէս անտիկ բե՛րդ հայոց լեզուին,  
Որպէս դարբնետո՛ւն հայոց հոգիին:

Անշուշտ ճիշդ են ըսուածները, բայց նկատի ունենալու ենք նաեւ ըսելու ձեւերը, որպէսզի գործը հնչէ որպէս բանաստեղծութիւն:

Նոյնպէս իր հոգիին խորէն ծնած է այլ քերթուած մը, որուն խորագիրն է «Հայաստան».

Իմ Հայաստան, իմ երագ, իմ սէր,  
Արեւաշող երկիր դրախտավայր,  
Անցեալի փառփով սրբանուէր,  
Կանգնած ես վեհ՝ հմայփով տենդավառ:

*Աստուք բոլորը հաստորին Բ. բաժինէն՝ որպէս բանաստեղծութիւններ:*

*Հոթոյեանը գրած է նաեւ քառեակներ: Ահա նմոյշ մը.*

Արարատը տեսնող շրջիկ բարեկամ,  
Եկուր պագնեմ աչքերուդ բիրը հայահոտ,  
Բայց ե՞րբ պիտի հողմահալած հեռանան  
Հայ հողերէն ոսոխները գարշահոտ:

*Ոգին որ քեզ կը մղէ գրելու՝ հրաշալի է: Կը շնորհաւորենք:*

Հալէպ, 19 Յունիս 2010



## ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ Կ՛ԵՐԳԷ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՄԲ ՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՄԲ



*Մեր սեղանին վրայ է գանատահայ մտաւորական ու բանաստեղծ Գրիգոր Հոթոյեանի նոր գիրքը, որ մկրտուած է «Ճաճանչներ» անունով: Թորոնթոյի մէջ տըպուած այս հաստափոր ու գեղատիպ հաստորը կ'ընդգրկէ Հոթոյեանի վերջին շրջաններու բանաստեղծական վաստակը: Այս մէկը հեղինակին հինգերորդ գիրքն է: Եւ այս գիրքը մեզի կը բերէ Հոթոյեան մը, որ իր բանաստեղծութիւնը գրած է երկու շատ կարեւոր գործօններու ծառայութեան մէջ: Առաջինը երաժշտութիւնն է, երկրորդը հայրենասիրական ու ազգասիրական զգայնութիւններու գործօնն է:*

*Հետաքրքրական գիրք, որուն առաջին մասը յատկացուած է բանաստեղծութիւն-երաժշտութիւն գործակցութեան: Հոս եւս գործ ունինք նօթաներու հետ, երգի ու երաժշտութեան վերածուած տողերու հետ: Մեզի ծանօթ ու անծանօթ յօրինողներու խումբ մը կայ մեր դիմաց, որ յօրինած է Հոթոյեանի սա կամ նա բանաստեղծութիւնը: Այս խումբին մաս կը կազմեն Գրիգոր Փիտէճեանը, արդէն յայտնի անուն մը սփիւռքահայ գետնի վրայ, ապա Գէորգ Յարուսթիւնեանը, Էդիկ*

Յովսէփեանը, Անահիտ Կոլտսուզեանը, Արթիւր Ռազգոյեւը: Այս յօ-  
րինողները Հոթոյեանի մէկէ աւելի գործերը վերածած են երաժշտու-  
թեան: Բայց Հոթոյեանի բանաստեղծական արուեստին բուն բնագա-  
ւառը, մեր կարծիքով, հայրենասիրական ու ազգասիրական զգա-  
ցումներու բնագաւառն է: Գիրքին երկրորդ ու աւելի ընդարձակ մա-  
սին մէջ մենք այսպէս քով-քովի կը տեսնենք բանաստեղծութիւններ,  
որոնք ուշադրութիւն կը գրաւեն ո՛չ այնքան բանաստեղծական  
բարձրաթիւզ գիւտերով ու գրական գեղարուեստական մագլցում-  
ներով, որքան՝ մեր ազգային ու մշակութային հարստութիւններէն  
չունչ առնող պոռթկումներով: Հայրենասիրական հզօր տողեր կան  
ասոնց մէջ եւ պէտք չէ զարմանալ, որ Հոթոյեան վերջին տասնամ-  
եակներու ընթացքին արժանացած է բազմաթիւ չքանչաններու ու  
մետայլներու, որոնք բնականաբար անոր կուրծքը կը զարդարեն՝ առ  
ի գնահատանք անոր ազգասիրական այդ գեղումներուն: Ազգասի-  
րական նմանօրինակ պոռթկումներու մէջ Հոթոյեան միշտ կը մնայ  
դասական սիրուած գծի մը վրայ, որ ժողովուրդին սրտին կը խօսի՝  
Հայաստանի մէջ կամ Սփիւռքի: Ահա իրմէ քանի մը տող «Պատգամ  
հայութեան» խորագրեալ բանաստեղծութենէն.

Ուր որ երթաս, ուր որ ապրիս Սփիւռքի խորք տարածքին,  
Ոչ մէկ ատեն ազգդ, լեզուդ, եկեղեցիդ չմոռնաս.  
Հպարտութեամբ որպէս դրօշ վե՛ր բարձրացուր սրտագին  
Հայու պայծառ անունը վեհ ու պատիւը երկնահաս:

Ուր որ երթաս՝ անհայրենիք կեանքը ունի վերջաբան.  
Գաղթական ես, օտարական՝ ներմակ շարդին եմքակայ,  
Եթէ երբեք հոգիդ չօծես խորհուրդովը սրբազան  
Էջմիածնի, Երեւանի ու Սեւանի հեռակայ...

Պատգամը յստակ է, եւ աւելի հրապարակագրական ու ազգասի-  
րական է, քան թէ բանաստեղծական: Այո՛, պատգամը յստակ է եւ մե-  
զի կ'ըսէ. «անհայրենիք մարդը վերջաբան է իր ժողովուրդին կամ  
ազգին համար», այլ խօսքով՝ Սփիւռքի իւրաքանչիւր հայը վերջա-  
բան է ազգային տեսակէտէ, որքան ալ եկող-գացողներով շարունակ-  
ուի Սփիւռք կոչուած գոյակցութիւնը: Անկարելի է որ մենք ալ չճայ-  
նակցինք հեղինակին ու չտեսնենք այն վտանգը, որ հայ մարդուն կը  
սպառնայ, եթէ այդ հայ մարդը կունակ դարձնէ իր ազգային սրբու-  
թիւններուն, կամ Մեսրոպ Մաշտոցին.

Մեսրոպ Մաշտոց, ո՛վ առաջնորդ հոգեթով,  
Հայ պատմութեան յաւերժական Արարատ,  
Սուրբ երազիդ իրագործած խորհուրդով  
Հայոց լեզուն մնաց կայտառ, անարատ:

Հոթոյեանի բանաստեղծական վաստակին մեծ մասը այսպէս ուղղակի կամ անուղղակի կերպով նուիրուած է Հայոց պատմութեան հարուստ պարունակին, որուն մէջ ան տեղ տուած է նաեւ զանազան ազգային հերոսներու ալ անուններուն: Այս բոլորին մէջ մասնաւոր համ կը ստանան նաեւ որոշ բանաստեղծութիւններ, որոնք իրենց ներշնչումը կ'առնեն սիրոյ կամ մարդկային այլ զգայնութիւններէ: Բանաստեղծը ինչո՞ւ հեռու պիտի մնար բոլոր մարդոց սիրտն ու հոգին կրծող այդ սիրոյ զգացումներէն.

Յիշէ՛ զիս գարնան գով առաւօտուն,  
Յիշէ՛ զիս ամրան խանձող օրերուն,  
Յիշէ՛ զիս աշնան թաց գիշերներուն,  
Յիշէ՛ զիս ձմրան ցուրտին սարսուռն,  
Յիշէ՛ զիս ամբողջ տարին անպայման,  
Բայց լոկ ժպիտով՝ առանց տխրութեան:

*Որովհետեւ եթէ յիշելը դառնայ հառաչանքի, տխրութեան ու բոցակէզ կարօտի կրակ, այն ատեն*

Երբեք, երբեք մի՛ յիշեր, մոռցի՛ր:

Հոթոյեանն ալ ծնած է Հալէպի մէջ: 1927-ի ծնունդ է: Շատ կանուխէն սկսաւ բանաստեղծութիւն գրել, բայց ան յատուկ ուշադրութիւն գրաւեց ազգային, եկեղեցական ու գրական իր աշխատանքներով, 2004-ին Հայաստանի Գրողներու Միութեան նախաձեռնութեամբ տօնուեցաւ անոր գրական գործունէութեան վաթսուներեակը: 2007-ին ալ իր ծննդեան ութսունամեակի առիթով ան հրապարակեց նախորդ գիրքը, որ կը կոչուէր «Ճանապարհ»:

Իր հին գիրքերը չենք տեսած, բայց այս նորը՝ Հոթոյեանի «Ճանաչներ» գիրքը, մեզ կը մտերմացնէ Հայոց գիրին, Հայոց պատմութեան ու Հայոց ազգային սրբութիւններուն հաւատարիմ մնացած զինուորի մը հետ: Այս զինուորը երջանիկ է այսօր աւելի քան ութսուն տարեկան հասակին մէջ, որովհետեւ կրցած է ազգասէր մարդու շունչ մը աւելցնել մեր ազգային ապրումներուն վրայ:

ՌՈՊԷՐ ՀԱՏՏԷՃԵԱՆ  
Խմբագրապետ, գրագէտ,  
արձակագիր, հրապարակագիր

«Մարմար»,  
15 Յուլիս 2011



## «ՃԱՃԱՆՉՆԵՐ» (ՀԵՂԻՆԱԿ՝ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ)

2010-ին, Թորոնթոյի «Փոսթնեթ» հրատարակչութեան կողմէ լոյս տեսաւ գանատահայ բանաստեղծ, արձակագիր եւ հրապարակագիր Գրիգոր Հոթոյեանի «Ճաճանչներ» խորագրեալ վերջին հատորը, ուր ամփոփուած են հեղինակին հատորի վերածուած կամ անտիպ մընացած քերթողաշունչ ստեղծագործութիւնները: Սոյն ծաւալուն գործը հրատարակուած է մեկենասութեամբ Հոթոյեանի դուստրին եւ թոռներուն:

Պէտք է ըսել, թէ «Ճաճանչներ» քերթողագիրքը կը հաստատէ այն իրողութիւնը, որ Գրիգոր Հոթոյեան, հակառակ իր բազում հոգերուն եւ զբաղումներուն, եղած է հաւատարիմ խնկարկուն հայ քերթողական արուեստին՝ ըմբոշխնելով մտերմութիւնը հայ գրականութեան եւ մշակոյթի երախտաւորներուն:

Հիմնականին մէջ, «Ճաճանչներ» խորագրեալ հատորը կը բաղկանայ 427 էջերէ եւ կ'ընդգրկէ հետեւեալ բաժինները. «Յառաջաբան՝ երգերու հերկեր», «Երգեր» եւ «Բանաստեղծութիւններ» եւ «Գրախօսականներ եւ վկայութիւններ «Ճանապարհ»ի հրատարակութեան առթիւ»:

Գրիգոր Հոթոյեանի քերթուածներուն գլխաւոր թեման սէրն է, որուն շուրջ կը թաւալին իր ազգային, հայրենասիրական եւ քնարաշունչ ապրումները: Ան կը հաւատայ, թէ առանց սիրոյ՝ բնութիւնը կը պարզէ յատկանշական ոչ մէկ իմաստ, եւ թէ սիրոյ բարերար ներգործութեամբ կը քաղցրանայ կեանքը՝ յուսադրիչ գեղումներով, ինչպէս կը վկայեն հետեւեալ տողերը.

Սիրատենչիկ նայուածքներով,  
Կամրջեցիր սիրտդ սրտիս,  
Իմաստ տուիր ունայն կեանքիս,  
Ըղձանքներու մարմին տալով:

Հատորին երկրորդ բաժինը կը կրէ «Բանաստեղծութիւններ» խորագիրը, որուն բաղկացուցիչ տարրերը կը հանդիսանան հայրենիքը, հայ ժողովուրդի պատմական անցեալը, Սասունը, մանկութեան օրերը, մայրական սէրը եւ հայ մշակոյթը:

Գրիգոր Հոթոյեանի չափածոյ գործերէն ոմանք ունին կենսագրական բնոյթ, ինչպէս՝ «Արմատներս հօրենական» խորագրեալ բանաստեղծութիւնը, ուր հեղինակը կ'ըսէ, թէ ինք սասունցի է, թէ եւ ծնած ու մեծցած արաբական Հալէպ քաղաքը, բայց իր ընտանիքին

արմատները կը ստանան իրենց ոգեղէն աւիշը հայ քաջորդիներու արծուերոյն Տարօն բնաշխարհէն: Այս առնչութեամբ հեղինակը կու տայ հետեւեալ վկայութիւնը.

Իմ լեռնցի հայրս կու գար դիւցագնական այդ երկրէն,  
Մակար, Գալէ ծնունդ տուած քաջ Սպաղանք աւանէն,  
Ուր մեծցած էր ազգայնաշունչ մթնոլորտով հայկական,  
Ուսանելով Սուրբ Կարապետ վանքի լոյսով սրբագան:

Արդարեւ, Սասնոյ լեռնաշխարհին, դալարագեղ հովիտներուն եւ ծաղկածիծաղ վայրերուն վայելչութիւնը կը գովաբանէ նաեւ Հոթոյեան «Սասունական», «Գէորդ Չաւուշ», «Գալէ Սպաղանցի» եւ «Տարօն աշխարհ» խորագրեալ քերթուածներով:

Այս առումով, գաղափարապաշտ բանաստեղծն է ան, որ կ'ընթանայ Սասուցի Դաւիթներու, Մհերներու, Մամիկոնեաններու, Գէորդ Չաւուշներու, Սերոբ Աղբիւրներու, Դրօններու եւ արիւթեան վսեմ գործեր կատարած հայ մեծանուն հերոսներու գաղափարական ուղիէն:

Բանաստեղծ Հոթոյեան ազգասիրական խոր տենչերով կապուած է իր ցեղի արիւնոտ տառապանքին, որուն սրտայոյզ վկայութիւնն է «Զրոյց Եփրատին հետ» խորագրեալ քերթուածը, ուր ան կ'ոգեկոչէ յիշատակը այն բիւրաւոր հայ կոյսերուն եւ մայրերուն, որոնք 1915 թուականի եղեռնաշուք տարիներուն յանձնուեցան Եփրատ գետի մահազալար յորձանքներուն՝ իրենց պատիւն ու արժանապատուութիւնը անաղարտ պահելու նախանձախնդրութեամբ...:

Այս իրողութեամբ բանաստեղծը կ'ըսէ, թէ 1915-ի արհաւիրքէն ճողոպրած տարագիր հայերը աշխարհի տարբեր գաղթօճախներու մէջ կերտեցին յուշարձանը Եղեռնի՝

Որպէս կոթող ու դամբարան արիւնի,  
Նահատակուած երկու միլիոն հայերու,  
Երկու միլիոն տառապահար սրտերու,  
Որոնց անթաղ մասունքները անտերունջ  
Լո՛ւն կ'արտասուեն գիշեր-ցերեկ դառնաշունչ:

Հայրենասէր բանաստեղծն է Գրիգոր Հոթոյեան, որ կը հաւատայ մեր հայրենի երկրի լուսապայծառ ապագային: Ակնարկելով պատմական Հայաստանի բռնազրաւեալ հողերուն՝ կ'ըսէ, թէ պիտի գայ այն օրը, երբ հայկական դրօշը պիտի ծածանի Արարատի գագաթին եւ Տարօնն ու Վանը պիտի վերամիանան Մայր Հայրենիքին:

Կրօնասէր բանաստեղծ է նաեւ Գրիգոր Հոթոյեան, որ կ'ըսէ, թէ Սուրբ Էջմիածինը, Լուսաւորիչի կանթեղը, հայոց հնազարեան տաճարները, սրբատաշ խաչքարերը, Մեսրոպ Մաշտոցն ու հայոց լե-

զուն, հոգեւոր երաժշտութիւնն ու շարականները եւ հայ հոգին կը հանդիսանան սրբախորհուրդ իմացումները հայ ժողովուրդին:

Հատորին երրորդ եւ վերջին բաժինը յատկացուած է հայրենի եւ սփիւռքահայ կարգ մը գրողներու այն գրախօսականներուն, որոնք կը վերաբերին Հոթոյեանի «Ճանապարհ» խորագրեալ գործին:

Արդարեւ, կ'ուզենք հաստատել, թէ «Ճանապարհ» խորագրեալ հատորը վկայութիւնն է այն աշխատանքին, զոր կատարած է Գրիգոր Հոթոյեան երկար տարիներ՝ յարատեւ եւ անսակարկ նուիրումով...:

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Պէյրուք-Լիբանան



## ԱՂՕԹՔՈՎ ՈՂՈՂՈՒԱԾ ԵՐԳԵՐ

ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ

«ՃԱՃԱՆՉՆԵՐ» ԳՐՔԻ ԱՌԻԹՈՎ



Ողջը՝ հայրենիք, ողջը՝ կարօտ, անցեալը՝ ներկայ, ներկան՝ անցեալի կորուստներով միշտ կենդանի, յոյսը երազի նման ձգուած ծննդավայր Տալուրիկի Սպաղանք գիւղից Հալէպ ու Թորոնթօ, ապա Երեւան ու կրկին Սպաղանք: Այդպէս էլ միտքը նոյնպէս բումբերանգի հակում ունի, որովհետեւ բանաստեղծներու հոգիի բանալին սիրոյ շաղախից է: Նրանք, ովքեր այդ նիւթի բաղադրութիւնը չեն կեղծում, այդ բանալին միշտ սիրով եւ առատութեամբ է բացւում հոգեւոր այն փխրուն դասի գունագեղ աշխարհի դռները:

Հոթոյեանի բոլոր ստեղծագործութիւնները թէ՛ Հայոց Մեծերին՝ Մեսրոպ Մաշտոցին, Խրիմեան Հայրիկին, Դաշնակցութեան առաջնորդներին ու հերոսներին, Սայաթ Նովային ու միւսներին, թէ՛ հայ ժողովուրդի պատմութեան էջերից քամուած մեր հաւաքական պայքարի առանձին դրուագներին նրկիրուած ներբողներն ունեն մէկ անուն՝ «Կարօտ առ հայրութեան»: Հոթոյեան բանաստեղծի համար չկայ հայ ժողովուրդի հատուածականութեան ջրբաժանը: Ուր էլ որ ապրելիս լինի հայը, նա իր ազգի մէկ մասնիկն է, գուցէ հենց այն մէկը, որին միշտ սպասում է հայրենիքը:

«Ճաճանչներ» նոր գրքում Հոթոյեանն ամփոփել է «Սիրտը Ափի Մէջ», «Նուիրում» եւ «Ճանապարհ» ժողովածուները, ինչպէս նաեւ նոր, անտիպ գործերը:

Շարունակելով հայ գրականութեան արեւմտահայ եւ արեւելահայ բանաստեղծութեան դասական աւանդոյթները, Հոթոյեանը, պիտի ասել, որ առաջին հերթին հաւատարիմ է մնացել իր արեան կանչին, իր տեսակին ներյատուկ ոգեկոչմամբ, որին սպասողն ու միակ անփոխարինելին հայրենիքն է:

Նրա բանաստեղծութիւնների զարմանալի լաւատեսութիւնը իր պոէզիայի երակներով տարածւում է բանաստեղծութեան աշխարհամարմնում, ուր տրոփում է դարի անպարզեւ ցաւը, մտահոգելով հոթոյեանական ստեղծագործութիւնների գգայուն սիրտը:

Սիրոյ, փիլիսոփայական նրա բանաստեղծութիւնների քնքուշ ու խոհական տողերից շատ առանձնակի ուշադրութեան են արժանի Հոթոյեանի հայրենասիրական ներշնչանքով գրուած գործերը:

Այս թեմայի նկատմամբ յատուկ ուշադրութիւն ունի իր տարօնական ակունքներն ու անցնելիք ճանապարհը, քանզի ամէն բան աշխարհի վրայ ծերանում ու հեռանում է ժամանակակիցների ու ժամանակի հետ, միշտ երիտասարդ թողնելով հայրենիքը, որը ծնւում է իւրաքանչիւր հայ մանկան հետ, միշտ մնալով առինքնող ու բացառիկ: Յեղի նահատակների համար խնկարկող բանաստեղծը նախնիների ոգուց մի կաթիլ առած՝ ապագայ սերունդի ձեռքին թողնում է որպէս վառուող ջահ՝ պատգամելով, որ այն փոխանցուի սերունդէ սերունդ:

Թէեւ փոքրիկ ածու մըն եմք՝ թիւով չնչին, աննշան,  
Բայց որակով ազնիւ՝ Արարատի նման վէս,  
Անխոնջ բռնած ջահը անշէջ մշակոյթի, գիտութեան,  
Քառասուն դար կը փալեմք յար ճամբաներէ հրակէգ:

Դժուար է նրբագագ պտոյտի համար նախնիների աճիւնները թողնել իր պապերի յիշողութեան հայրենիքում, իսկ յոյսը՝ նոր յառնող Հայաստանում, եւ ապրել բոլորովին այլ՝ իր արեան հետ կապ չունեցող հողի վրայ:

Կ'ապրիմ օտար այս ափերը գաղթական,  
Անհայրենիք կեանքը մուք է, գերթ գիշեր...

Վերապրողի իրական զգացողութիւններով է 82-ամեայ հեղինակը անդրադարձել հայոց Մեծ Եղեռնի թեմային: Շուտով դարը կը բոլորի: Եղեռնագործները խորամանկօրէն խուսանաւելով պատասխանատուութիւնից, կարծում էին՝ ժամանակը մոռացութեան է մատնելու յիշողութիւնը, սակայն միլիոն ու կէս զոհերին մոռանալու հա-



մար միլիոն ու կէս դար է պէտք...: Բանաստեղծի հոգուց ելնող ցաւի գետը հոսում եւ աղմկում է բանաստեղծութեան տողատակերում եւ կ'աղմկի այնքան, քան դեռ աշխարհի մարդկութիւնը չի ստիպել Թուրքիային ճանաչելու իր նախնիների ոճրագործութիւնը:

Հայաստանի Ազգային Գրադարանում, Մարտի 12-ին, Հայաստանի Գրողների Միութիւնը, Ազգային Գրադարանը եւ «Ուխտատուն» թանգարան-հիմնարկութիւնը սիրով ընթերցողների ուշադրութեանը ներկայացրեց Գրիգոր Հոթոյեանի «Ճաճանչներ» գիրքը: Բոլոր ելոյթ ունեցողների՝ Ազգային Գրադարանի տնօրէն Դաւիթ Սարգսեանի, «Ուխտատուն» թանգարան-հիմնարկութեան տնօրէն, բանաստեղծ, ռազմական պատմաբան Սասուն Գրիգորեանի, բանաստեղծներ գեներալ-մայոր Սամուէլ Սաֆարեանի, բանաստեղծուհի Խանդութի, Հոթոյեանի մտերիմ ընկեր բժիշկ Սարգիս Տօնոյեանի, բանաստեղծ դոկտ. փրոֆեսոր Թաթուլ Մանասէրեանի եւ ուրիշների ելոյթներում, գնահատանքի ջերմ խօսքեր էին արտասանուել նուիրեալ Հայրենասէրի, ընկերոջ, իսկական մարդու, Հայ ազնուական այն տեսակի մասին, որի համար իր իսկ խօսքերով ասած՝ «Հայ բանաստեղծութիւնը ոչ միայն ազնուութեան, այլեւ՝ ապրելու, գոյատեւելու վկայականն է, քանի որ բանաստեղծութիւնը այլ բան չէ, քան տուեալ ժողովուրդի ոգին»:

ՌՈՒԶԱՆ ԱՍԱՏՐԵԱՆ  
Բանաստեղծուհի,  
հրապարակագիր

Երեւան, 12 Մարտ 2010



«Սիրտը Ափին Մէջ» գիրքի շնորհահանդէսին՝  
Գրիգոր Հոթոյեան եւ տիկինը՝ Շաբէ, Թորոնթօ, 1987

## «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ»Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Երկար տարիներու արգասիքը հանդիսացող գրութիւններու հատոր մըն է այս հատորը եւ հեղինակութիւնը կը վայելէ մէկու մը, որ պարզունակ, բայց տեսիլք ունեցող եւ այդ տեսիլքը հոգեշնչող նիւթեղէն էականերու վերածող հերոս մըն է

### ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ

Ութսուն եւ առաւել տարիներու բեղմնաւոր ու երախտարժան հոգիով զարդարուած այդ հայորդին կարելի է չէ դրուատել պարզապէս իր գրական ստեղծագործութիւններուն ընդմէջէն, որովհետեւ առանց ՄԱՐԴԸ ճանչնալու՝ կարելի պիտի չըլլայ թափանցել խորքը բարոյական այն ճշմարտութիւններուն, որոնք քրիստոնեայ հաւատացեալի ապրելակերպին պատկերացումը կը բերեն մեզի:

Առանց ճանչնալու ՄԱՐԴԸ, կարելի պիտի չըլլայ համտեսել երկա՛ր ճանապարհորդութեան մը ճամբեգրին գտնուող քաղցրահամ ծառերու պտուղը, կարելի պիտի չըլլայ վայելել զանոնք, որովհետեւ Գրիգոր Հոթոյեան կոչուած այս մարդը երեւակայական ստեղծագործութիւններով է, որ կը հարստացնէ մեր գրականութիւնը, այլ՝ ճշմարիտ եւ ապրուած կենդանի օրինակներով: Անոր համար ալ պէ՛տք է ճանչնալ այս մարդը, որպէսզի կարելի ըլլայ ճանչնալ իր հերոսներուն հոգեկան ներկայութիւնը՝ գրական իր այս հատորին մէջ:

Այս առիթով կ'ուզեմ ընթերցողին յիշեցնել քանի մը ճշմարտութիւններ, որպէսզի նախ կարելի ըլլայ ճանչնալ 80-ամեայ երկար ճանապարհորդութեան բարի այս ճանապարհորդը եւ ապա հետեւիլ իր ոտնահետքերուն, որովհետեւ ամէն մէկ քայլափոխի ետին Գրիգոր Հոթոյեան կը ձգէ քաղցր, յուզիչ, երբեմն հոգեզուարճ, երբեմն հոգեխռով տրպարներ, որոնք կու գան մե՛ր կեանքէն, մե՛ր առօրեայ տագնապներով հրաբխացած, մե՛ր առօրեայ հոգերով ծանրաբեռնուած, յաղթանակներով՝ հպարտութիւն առթող, եւ պարտութիւններով՝ դաստիարակութեան վերածող:

1.— Գրիգոր Հոթոյեան իր գրականութիւնը մշակած է առանց զըրագէտ ըլլալու յաւակնութեան: Կեանքի փորձառութիւնը, իր ազգին հանդէպ ունեցած նւիրուածութիւնը, բարոյական արժէքներու հետամուտ ըլլալու իր արտորանքը, իր առջեւ բացած են ճանապարհ մը, որուն գրեթէ աւարտին երբ մարդ նայի անցեալէն եկող եւ ցարդ իր կատարած ճանապարհորդութեան, կը տեսնէ, որ այդ ճանապարհոր-

դուլթիւնը եղած է ի շարս եկեղեցական եւ ազգային գործունէութեան, նաեւ գրական գործունէութեան ժամանակաշրջան մը:

Գեղագիտական, լեզուաբանական, արուեստագիտական ճախրող լեզու մը չունի այս պարզ գրողը, կարծէք ինք այդ բոլորով ալ հետաքրքրուած չէ, էականը իրեն համար յայտնել է ու արտայայտել այն հոգեվիճակը, զոր ինք կ'ապրի եւ կը սիրէ հաղորդակից դարձնել բոլոր անոնք, որոնք զգալու եւ զգացուելու սիրտ ու հոգի ունին:

Պարզ է իր լեզուն եւ ճիգ չի թափեր, որպէսզի բառ գտնէ ու նախադասութիւն կազմէ: Անոր համար ալ իր հերոսները կարծէք իրենց պարզունակութեամբ, բայց բացարձակ յարգելիութեամբ մեզի կը ներկայանան:

Հալէպի մէջ ծնած, հալէպեան աւանդապահութեամբ սնուած, հոգեւոր հարուստ ներաշխարհով պարուրուած եւ ազգային արժանապատուութեան վառ գիտակցութեամբ ապրող գրիչ մըն է Գրիգոր Հոթոյեանը: Բառին ամբողջական հասկացողութեամբ՝ մեծ պարզութիւն մըն է Պարոն Հոթոյեան, եւ այդ պարզութեան համար իր գրութիւնները սիրելի են բոլորին կողմէ, բայց մանաւանդ անոնց կողմէ, որոնք իրենց կեանքին մէջ ցաւ տեսած են, գրկանք, նախատինք, հալածանք, ընտանեկան սրբութեան պակաս, եւ ով որ Հոթոյեանի գործերուն մէջ փորձէ փնտռել գեղարուեստական գրականութիւն, կը նշանակէ, որ գրկած կ'ըլլայ Հոթոյեանին արժէքը իր բուն արժէքէն:

Հոթոյեանը «տէպրտով» գրող անձ է, որովհետեւ ցաւած է իր հերոսներուն հետ, լացած է իր հերոսներուն հետ, աշխատած է իր հերոսներուն հետ, պայքարած է իր հերոսներուն հետ, պարտուած է իր հերոսներուն հետ, յաղթանակած է իր հերոսներուն հետ, խնդացած է իր հերոսներուն հետ, տազնապած է իր հերոսներուն հետ, եւ որքան ալ որ հեռացած է իր ծննդավայրէն, իր հերոսներու աշխարհէն, ո՛չ ժամանակները, ո՛չ նիւթական լաւ պայմանները արգելք չեն հանդիսացած, որպէսզի իր հերոսները մեռնին իր մէջ:

2.— Գրիգոր Հոթոյեան գրողը ուղղամիտ, ապագայատեսիլ եւ մանաւանդ անշահախնդիր հայ է: Որպէս Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հաւատարիմ գաւակ, պատանեկան հասակէն սկսեալ, ազգային գաղափարախօսութեամբ ճախրող եւ ազգային ինքնութեան պահպանութեան համար ջահակիր եղած է ոչ միայն խօսքով, այլ՝ գործով:

Երկա՛ր տարիներ, ոչ միայն իր անուանական մասնակցութեամբ, այլ՝ գործօն մասնակցութեամբ անուղղակիօրէն եղած է պատմութիւն հիւսող եւ պատմութիւնը կենդանի վկայութեան վերածող անձ մը:

Եթէ նկատի ունենաք միայն իր թղթակից ըլլալու հանգամանքը, պէտք է գիտնաք, որ Թորոնթոյի հայոց պատմութեան վերջին շուրջ 35 տարիներու պատմութեան հեղինակը ի՛նք է, եւ գաղութի մը հասարակական, մշակութային, եկեղեցական կեանքի պատմութեան գը-

րառուժը այնքան սիրով կատարած է Այբուբենի զինուորագրեալ այս մարդը, որ ապագային պատմագէտներ երախտագիրտութեամբ եւ գերագոյն աստիճանի յարգելիութեամբ շնորհակալ պիտի ըլլան 80-ամեայ ալեւոր այս ծերունիին:

Որպէս ազգային, կուսակցական եւ մշակութային առաքելութեանց հաւատացող մարդ, երբ իր հետ խօսիք, ինք չէ, որ ձեզի կը պատասխանէ, այլ՝ իր կեանքին գլխաւոր հերոսները: Հալէպի «Արեւելք» տպարանէն մինչեւ Պոսթոնի «Հայրենիք» եւ Մոնթրէալի «Հորիզոն», Անդրանիկ Ծառուկեանէն մինչեւ Համաստեղ, Կարապենցէն մինչեւ Թէօլէօլեան, Զարեհ Կաթողիկոսէն մինչեւ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս, Արամ Հայկազէն մինչեւ Ռոպերթ Հատտէճեան: Եւ տակաւին, անօրինակ կերպով հպարտ սասունցի այս մարդը կարծէք իր հողին վրայ կ'ապրի: Սասունն է, որ իր մէջէն կը խօսի, ու Հալէպցիութեամբ հպարտացող այս բարի մարդը կը խօսի անշահախնդիր, հանդարտութեամբ, խոհուն խորհողութեամբ եւ հպարտ հայրենասիրութեամբ:

Իրեն համար հայրենասիրութիւնը հող, քար, ջուր, Արարատ, Արաքս եւ Սարգարապատ չէ, իրեն համար հայրենասիրութիւնը անցեալէն եկող եւ ապագային նայող, անցեալը, ներկան եւ ապագան իրար զօդող հոգեկան այնպիսի զգացում մըն է, որ երբեք չի կործանիր, ու հայրենի հողին կու տայ յաւիտենականութեան սխրանք, Արարատին կու տայ ճախրող խոյանք ու Սարգարապատին կու տայ սուրբ արիւնով նուիրագործուած հերոսներու արքայարանի վայելք: Այս է Հայաստանը պարտադրաբար Գանատա հաստատուած, բայց մահու աստիճան եւ հայրենիքը կեանքէն աւելի սիրող հայ Հոթոյեանին համար:

3.— Գրիգոր Հոթոյեանը քրիստոնեայ եւ հաւատացեալ քրիստոնեայ գրող մըն է: Իր կեանքի վերջին շրջանին երբ առիթ ընծայուեցաւ իրեն Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ ՇՈՂԱԿԱԹ ամսագրին մէջ յօդուածներ ստորագրելու, «Սասուն գաւառում» չծնող այս մարդը, Հալէպի մէջ աղքատութեամբ մեծցած, բայց պատիւով ընտանեկան սրբութիւնը պահպանած այս գրողը, սկսաւ գրել հոգեթով այնպիսի պատմուածքներ, որոնք խորքին մէջ բարոյական ճշմարտութիւններու փնտռութիւնն է, որ կը կատարեն:

Աղօթքի զօրութեան հաւատացող սիրտ ունի երկա՛ր տարիներու կիրակնօրեայ վարժարաններու ուսուցիչ եւ տեսուչ եղած այս մարդը: Իր գրութիւններուն ընդմէջէն կ'ուզէ, որ մարդիկ ուրախ ապրին, կ'ուզէ, որ մարդիկ բարիք գործեն, երախտագիրտութեամբ դրսեւորեն իրենք զիրենք, միւռտնաբոյր եւ օրինակելի կեանք մը ունենան, պատուախնդիր, քաջ, քրտնաշահ եւ ընտանեկան սրբութեան հետամուտ ըլլան:

Գրիգոր Հոթոյեանը Հայ Առաքելական Եկեղեցւոյ որպէս հաւա-

տարիմ զաւակի, գերազանց նուիրուածութեամբ ծառայած է Հայ Եկեղեցւոյ՝ տարբեր բնագաւառներու մէջ եւ ցարդ, իր եկեղեցասիրութիւնը, քրիստոնէական հաւատքի վկայութիւնը միայն յարգանք կը պարտադրեն կոկիկ, կարճահասակ, ժպտուն, պարզունակ այս պարզ եւ հանդարտաբարոյ մարդուն նկատմամբ:

\* \* \*

Այսօր, երբ այս հատորով ձեր առջեւ կը բացուի վեցերորդ հատորը Գրիգոր Հոթոյեանի հեղինակութեամբ,

Գիտցէ՛ք, որ այս բարի մարդը իր կեանքի բոլոր օրերուն իր սիրտը դրած է ափին մէջ ու նուիրած ազգին, հայրենիքին եւ սուրբ հաւատքին:

Գիտցէ՛ք, որ 1927-ին ծնած եւ հալէպցիական հայկականութեամբ մեծցած այս մարդուն կեանքը եղած է միայն նուիրում:

Գիտցէ՛ք, որ Գանատա գաղթած հայորդիին կեանքին նպատակը եղած է բարոյական ճշմարտութիւններու փնտռտուքը եւ անոր կիրարկումը:

Գիտցէ՛ք, որ այս մարդուն ճանապարհը եղած է վարդալից, բայց միշտ փուշերով պարուրուած: Դո՛ւք ալ պիտի ցաւիք իր ցաւին հետ, դո՛ւք ալ պիտի հպարտանաք իր հերոսներու հաշուոյն, եւ պիտի կարենաք ըմպել ու համտեսել ա՛յն բաժակին համը, որուն մէջ լեցուած է ոչ միայն քաղցր գինի, այլ՝ դառն ու լեղի:

Այս առիթով ես կը մաղթեմ, որ Գրիգոր Հոթոյեանի այս նոր հատորը՝ «Անցեալի Յուշերով Կ'ապրինք», ըլլայ ոչ միայն հաճոյք, այլ՝ տազնապ իւրաքանչիւր ընթերցողի համար եւ կ'ուզեմ մաղթել, որ մեր սիրելի Պարոն Հոթոյեանին սէրը, խնդութիւնը, խաղաղութիւնը, երկայնամտութիւնը, քաղցրութիւնը, բարութիւնը, հաւատարմութիւնը, հեղութիւնը, ժուժկալութիւնը, արդարութիւնը եւ ճշմարտութիւնը ըլլայ յաւիտեան, որպէսզի իր հայրենիքին, հայութեան, հաւատքին երախտապարտ այս ազնուահոգին ըլլայ երախտարժան:

Վարձքդ կատար, սիրելի Պարոն Հոթոյեան, թող Աստուծոյ շքանորհքը, սէրը եւ սրբարար զօրութիւնը հետդ ըլլայ, այսօր եւ միշտ, մինչեւ կեանքիդ վախճանը:

Եւ բարի ընթերցման պահեր ձեզի, գրասէր հայորդիներ:

Աղօթարար՝

ՄԵՂՐԻԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՐԻՔԵԱՆ

Հովիւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ

եւ հոգեւոր տեսուչ Հարաւային Օնթարիոյի

ՏՕՆ ՇՈՂԱԿԱԹԻ

14 Օգոստոս 2010, Թորոնթօ



## «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ»

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ,

ՀԵՂԻՆԱԿ՝ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ

ԹՐՈՐՈՆԹՕ, 2011, 302 Էջ

Հրատարակի վրայ է Գրիգոր Հոթոյեանի «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» խորագրեալ հատորը: Ան գիրքին անուանումը փոխ առած է Բարսեղ Կանաչեանի մէկ խօսքէն: Օր մը, Հոթոյեան Կանաչեանին որպիսութիւնը հարցնելուն՝ ստացած է հետեւեալ պատասխանը. «Տղաս, ինչպէ՞ս ըլլամ, անցեալի յուշերով կ'ապրիմ»:

Գրիգոր Հոթոյեան այս լոյս տեսած հատորը ձօնած է «Սասունի Տալուորիկ շրջանի Սպաղանք գիւղը ծնած, Հայ յեղափոխական եւ Ֆետայական շարժման հերոսներ Մակարի, Գալէի եւ Ակէի ազգական եւ զինակից հօրը՝ Ղազար (Խարզօ) Հոթոյեանին՝ սիրով եւ որդիական ու գեշունչ զգացումներով»:

«Անցեալի Յուշերով Կ'ապրինք» հատորին մէջ ամփոփուած 47 պատմուածքները նախապէս հրատարակուած են Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Շողակաթ» ամսաթերթին մէջ: Հատորին տրպազրութեան ծախսը ստանձնած է Անի Հոթոյեան-ժողի ընտանիքը:

Գեր. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանի հաւաստումով. «Գրիգոր Հոթոյեան կոչուած այս մարդը, երեւակայական ստեղծագործութիւններով չէ, որ կը հարստացնէ մեր գրականութիւնը, այլ՝ ճշմարիտ եւ ապրուած կենդանի օրինակներով... Ան իր գրականութիւնը մշակած է առանց գրագէտ ըլլալու յաւակնութեամբ... Էականը իրեն համար յայտնել է ու արտայայտել այն հոգեվիճակը, զորս ինք կ'ապրի եւ կը սիրէ հաղորդակից դարձնել բոլոր անոնց, որոնք զգալու եւ զգացուելու սիրտ ու հոգի ունին»:

Հատորին բովանդակած բոլոր պատմուածքներն ալ շնորհքով ներկայացուած են: Այդ յուշապատմներու դէմքերն ու դէպքերը իրական պատահած եղելութիւններ են՝ շարադրուած ականատեսի վրկայութեամբ: Ընթեռնելով զանոնք կը գիտակցինք, որ Պրն. Հոթոյեան իբր նախկին ուսուցիչ-տնօրէն իր գրութիւններով տակաւին կը շարունակէ մեզ կրթել իր հաւատացած եւ ընդգրկած կրօնական, ազգային ու հայրենասիրական բարձր ու վսեմ արժէքներով: Անոր բարելիք մտահոգութիւնն է դաստիարակել ու բացայայտել քրիստոնէական բարոյականի, մարդկայնութեան ու իմաստութեամբ ապրուած կեանքի գաղտնիքները, որպէսզի այս աշխարհի մէջ ունենանք «առաւել կեանք»ը:

Պատմուհիներու ընթերցումը հեզասահ կ'ընթանայ, որովհետեւ հեղինակին ոճը պարզ է ու լեզուն հաղորդական: Այլազան պատումներու ընդմէջէն կարգացողին կ'ընծայուին հաճելի ու շահեկան պահեր: Մարդկային նկարագրի ինքնուրոյնութեան ծանօթացումին ու մեկնութեան համար՝ կ'արժէ կարդալ հատորը, օգտուելու եւ անձնական կեանքի մէջ կիրառելու Գրիգոր Հոթոյեանի բանիմաց եւ իրատես պատմուածքներէն:

ԲԱՐԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ

Մոնթրէալ



## «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ»

(ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ,  
ՀԵՂԻՆԱԿ՝ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ)

2011-ին Թորոնթոյի մէջ «Փոսթնեթ» հրատարակչութեան կողմէ լոյս տեսաւ գանատահայ բանաստեղծ եւ հրապարակագիր Գրիգոր Հոթոյեանի «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» խորագրեալ պատմուածքներու հատորը՝ մեկենասութեամբ հեղինակի դուստրին եւ թոռներուն:

Գրական երկար ճանապարհ կտրած գրագէտն է Գրիգոր Հոթոյեան, որ ցարդ հրատարակած է հետեւեալ երկերը. «Միրտը Ափին Մէջ» (1987), «Նուիրում» (2002), «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» (2005), «Ճանապարհ» (2007), «Ճաճանչներ» (2009) եւ «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» (2011):

Հիմնականին մէջ սոյն ծաւալուն գործը կը բաղկանայ 304 էջերէ եւ կ'ընդգրկէ առհասարակ յուշագրական բնոյթ կրող այլազան բաժիններ:

Հատորին ընդհանուր մթնոլորտը կրօնաշունչ է, եւ այս երեւոյթը արդիւնք է այն իրողութեան, թէ Գրիգոր Հոթոյեան վաղ պարմանութենէն մինչեւ ծերունագարդ տարիքը ապրած եւ սնած է Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ինկաբոյր կամարներուն ներքեւ եւ ներչնչուած՝ շարականագիր մեր հայրապետներուն երկնահաս աղօթքներով:

Այս յղացքով, հեղինակին պատմուածքները կը բովանդակեն դաստիարակչական խորք ու թելադրանք եւ կը տագնապին առաւելաբար արդարութեան փնտռտուքով:

Իր գրուածիւններով Գրիգոր Հոթոյեան կը շեշտէ, թէ առաքինու-  
թիւնը յառաջ կու գայ բարիի եւ չարի հակադրութեամբ: Ըստ իրեն,  
առաքինութիւնն է, որ, իբրեւ ծանրութեան կեդրոնը բարոյական  
կեանքի, կը պահէ իր հակակշիւն տակ մարդոց նկարագրածին տե-  
սակարար յատկանիշները:

Այս իրողութեան ցայտուն օրինակն է «Մկրտիչ եւ Սարգիս» խո-  
րագրեալ պատմուածքը, ուր հեղինակը կը պատկերացնէ երկու դա-  
սընկերներու կեանքին ողբսականը: Անոնք կ'ապրին կենցաղական  
ներհակ ըմբռնումներով:

Արդարեւ, Հոթոյեան կ'ըսէ, թէ Մկրտիչ եւ Սարգիս մատղաշ դա-  
սընկերներ էին, որոնք 1890-ական թուականներուն կը յաճախէին  
Պոլսոյ Բերա թաղամասի Թարգմանչաց վարժարանը: Մկրտիչ աշխա-  
տասէր եւ հնազանդ աշակերտ էր, իսկ Սարգիս դասարանին ծոյլ եւ  
անփոյթ աշակերտներէն կը համարուէր: Մկրտիչ կը ծառայէր թաղի  
եկեղեցւոյ՝ իբրեւ դպրաց դասի անդամ, բայց Սարգիս չէր ուզեր հե-  
տեւիլ իր դասընկերոջ օրինակին: Մկրտիչ կը թախանձէր շարունակ,  
որ Սարգիս հետեւի հայ եկեղեցւոյ սրբակենցաղ հայրապետներու հո-  
գեպարար պատգամներուն, սակայն օր մը Մկրտիչի յորդորաշունչ  
խօսքերը այն աստիճան գայրոյթ պատճառեցին Սարգիսին, որ անոնք  
սկսեցան բաժնուեցան իրարմէ:

Շարունակելով սոյն պատմուածքը՝ Գրիգոր Հոթոյեան կ'ըսէ, թէ  
կ'անցնին տարիներ, Մկրտիչ կը ստանայ համալսարանական ուսում  
եւ կը վկայուի իբրեւ իրաւաբան: Շնորհիւ իր ջանքերուն՝ կը տիրա-  
նայ բարձր տիտղոսներու: Իր համբաւը կը տարածուի ամէնուրեք՝  
իբրեւ ոճրագատ ատեանի դատաւորի:

Իսկ Սարգիս կը միանայ աւագակախումբի եւ ապօրինի միջոցնե-  
րով կը հարստանայ: Օր մը, տուն վերադարձին, կը ձերբակալուի ոս-  
տիկաններու կողմէ ու կը բանտարկուի: Յետ դատավարութեան, Պոլ-  
սոյ ոճրագատ ատեանը, իրաւաբան Մկրտիչի ներկայութեան, մահ-  
ուան կը դատապարտէ Սարգիսը: Հեղինակը կ'աւարտէ սոյն յուզիչ  
պատմուածքը այն տխուր հաստատումով, թէ կախաղանին առջեւ  
մետասաներորդ ժամու գղջումն ու արտասուեալթոր պաղատանքները  
չեն կրնար մաքրաջրել ոճրագատ Սարգիսին անքաւելի յանցանք-  
ները...:

Կարելի է ըսել, թէ Գրիգոր Հոթոյեանի «Անցեալի Յուշերով  
Կ'ապրինք» խորագրեալ հատորը բարոյալից արժէքաւոր պատմը-  
լածքներու ժողովածու մըն է: Այս առումով, ուշագրաւ է «Բարեգոր-  
ծութիւն եւ ընկերային սէր» խորագրեալ պատմուածքը, ուր հեղինա-  
կը կը ստեղծէ հակադրութիւն՝ երկու ամերիկահայ տիպարներու մի-  
ջեւ: Կ'ըսէ, թէ յիշեալ տիպարներէն առաջինը՝ ձեք Ադամեան, կծծի  
հայ մըն է, որ կ'ապրի Միացեալ Նահանգներու Տիթրոյթ քաղաքին



մէջ եւ ունի ընդարձակ գործարան, ուր կ'աշխատին բազմաթիւ գործակորներ: Հակառակ մեծահարուստ ըլլալուն՝ նիւթական ո՛չ մէկ օժանդակութիւն կ'ընծայէ հայ ժողովուրդին:

Հեղինակը կ'ըսէ, թէ ձեք Ադամեան խորապէս կ'ընդվզի, երբ, օր մը, «Հայրենիք» օրաթերթէն կ'իմանայ, թէ նոյնպէս Տիթրոյթ քաղաքէն Հայկ Երէցեան անունով մեծահարուստ մը կը նուիրէ իշխանական գումարներ Ամերիկայի հայկական բարեսիրական միութիւններու...:

Այս հարցին շուրջ մանրամասն տեղեկութիւններ իմանալու համար ձեք Ադամեան հեռաձայնով կը ժամադրուի Հայկ Երէցեանի հետ: Անոնք կ'ունենան քաղաքավարական հանդիպում մը, որուն ընթացքին Հայկ Երէցեան կը համոզէ Ադամեանը, թէ հայերս ո՛ւր որ ալ ըլլանք, ի՛նչ պայմաններու տակ որ ալ ապրինք, պէտք է սիրենք հայ ազգը, հայ եկեղեցին եւ մշակոյթը: Որովհետեւ, առանց հայ ժողովուրդի հոգեւոր ժառանգութեան, չենք կրնար անխախտ պահել մեր ազգային ինքնութիւնն ու դիմագիծը: Ձեք Ադամեան, որ տասնեակ տարիներ հեռու ապրած էր հայկական միջավայրէ, իմանալէ ետք Հայկ Երէցեանէ շահեկան ծանօթութիւններ հայ ժողովուրդի մասին, կը խոստանայ օգնել «Հայ ազգի բոլոր կարօտեալներուն եւ հաստատութիւններուն»:

«Անցեալի Յուշերով Կ'ապրինք» խորագրեալ պատմուածքներու հատորին մէջ Գրիգոր Հոթոյեան կ'արծարծէ բազմաբնոյթ հարցեր, որոնք կը վերաբերին ազգային, գրական, եկեղեցական, մշակութային եւ հասարակական երեւոյթներու:

Ազգային, կրթական եւ ուսումնական իրականութեան մէջ, կ'ըսէ Գրիգոր Հոթոյեան, յատկանշական է հայ գիրքի ցուցահանդէսը, որ ամէն տարի յատուկ արժանաւորութեամբ կը տօնախմբուի Անթիլիասի մայրավանքի շրջափակին մէջ:

Ապա կ'անդրադառնայ Հալէպի Քարէն Եփփէ ազգային ճեմարանին, որ հիմնուեցաւ դանիացի բարերարուհի Միս Քարէն Եփփէի բարենպաստ ջանքերով եւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Զարեհ Սրբազան Փայասլեանի բարոյական զօրակցութեամբ:

Եզրափակելով «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» խորագրեալ պատմուածքներու հատորը՝ կ'ուզենք յայտնել, թէ Գրիգոր Հոթոյեան, հակառակ իր ալեհեր տարիքին, կը գործէ գրական մթնոլորտի մէջ՝ մշտանորոգ ոգեւորութեամբ: Գրականութեան հանդէպ իր յարատեւ սէրն է, որ ո՛չ միայն կը շնչաւորէ իր անցեալագեղ յիշատակները, այլ կը կենսաւորէ նաեւ իր հոգեմտաւոր ապրումները՝ վարակիչ զգացումներով...:

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Մարտ 2011, Պէյրուք



## ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ» ՀԱՏՈՐԸ

Շնորհակալութեամբ ստացած եմ Գրիգոր Հոթոյեանի «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» պատմուածքներու հատորը:

Գրիգոր Հոթոյեան իր երիտասարդական տարիներէն սկսեալ բանաստեղծութիւններով, յօդուածներով, թղթակցութիւններով եւ պատմուածքներով ծանօթ անուն մըն է՝ աշխատակցած ըլլալով մեր մամուլին եւ իր հրատարակած եօթը հատորներով:

Ծնած Հալէպ, ան եղած է խմբագիր, ուսուցիչ եւ տնօրէն ազգային մէնսօրեայ, ամառնային եւ կիրակնօրեայ վարժարաններու՝ Սուրիա եւ Գանատա:

Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ «Շողակաթ» ամսաթերթին մէջ լոյս տեսած այս պատմուածքները կը վկայեն տարօրինակ կենսունակութիւնը եւ խանդավառութիւնը մէկու մը, որ աւելի քան կէս դարէ ի վեր երիտասարդական աւիւնով կը ծառայէ մեր գրականութեան եւ արտասահմանի մամուլին, ըլլալով նաեւ ուշագրաւ ներկայութիւն մը մեր հանրային-հասարակական կեանքին մէջ:

Մեղուաջան աշխատանքի եւ անխոնջ ճիգի արդիւնք է այս հատորը, որ կը կարգացուի մէկ շունչով, հոգեկան բաւարարութիւն ընծայելով ընթերցողին: Հեղինակը այս հատորով գնահատելի ներդրում մըն է, որ կատարած է հայ գրականութեան սուրբ խորանին:

Իր ներածականին մէջ Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան հետեւեալ տողերով կ'ողջունէ հեղինակը. «Երեւակայական ստեղծագործութիւններով չէ, որ կը հարստացնէ մեր գրականութիւնը, այլ ճշմարիտ եւ ապրուած կենդանի օրինակներով: Էականը իրեն համար յայտնել է ու արտայայտել այն հոգեվիճակը, զոր ինք կ'ապրի եւ կը սիրէ հաղորդակից դարձնել բոլոր անոնք, որոնք զգալու եւ զգացուելու սիրտ ունին»:

Արդարեւ, այս հատորը կը ներկայացնէ Միջին Արեւելքի եւ Հիւսիսային Ամերիկայի՝ մասնաւորաբար Գանատայի հայ բեկորներու կեանքէն դրական եւ բացասական ապրումներ ու յուշեր: Սփիւռքի մէջ ապրուած կեանքի մը նօթագրութիւնն է այս՝ իր կեանքի ելեւէջներով եւ տագնապներով: Իր պարզ եւ հաղորդական ոճը դէմքերու եւ դէպքերու նկատմամբ՝ հեղինակը կը դարձնեն սրտամօտ ընթերցողին:

Հոթոյեանի միտք բանին այդ է արդէն: Իր պատմուածքներու եւ օրը-օրին արձանագրած դէպքերու եւ դէմքերու ու եղելութիւններու ընդմէջէն փոխանցել ազգային, բարոյական եւ հոգեկան սկզբունքներ եւ արժէքներ: Իր պատմուածքները նաեւ դաստիարակչական բնոյթ կը կրեն անոնց մօտ, որ անհաղորդ մնացած են մեր ժողովուրդի պայքարունակ ոգիին եւ հարուստ վաստակին:

Գաղտնիք մը չէ, որ մեր ազգային ու մշակութային գործերը պարտադրուած են մեր մտաւորականութեան ուսերուն: Մեր մտաւորականութիւնը խորապէս ներշնչուած է մեր ժողովուրդի անցեալէն եւ մշակութային արժէքներէն: Հոթոյեան կու տայ այդ խոնարհ մարդոց կենցաղը եւ հոգեբանութիւնը: Ան հաւատացող է մեր մշակոյթի փառքին ու անսասանութեան:

Ան կ'արձագանգէ հոգեկան ապրումները եւ տառապանքները՝ առանց ընդհանրացումներ կատարելու: Իր պարզ ոճով եւ հասկնալի լեզուով կու տայ հայ բեկորներու կեանքը իրենց բոլոր երեսներով:

Հայու տիպարներ են իր հերոսները: Անոնք կը պատկանին այն փաղանգին, որ կարօտով ու յիշատակներով եւ իրենց ներաշխարհով կապուած են հայրենիքին:

Պատմուածքներու այս ծաղկեփունջը արգասիքն է Գրիգոր Հոթոյեանի մտքի եւ հոգիի երկունքին:

ՎԱՐԴԳԷՍ ՍԻՆԱՆԵԱՆ

«Նոր Հայաստան», Ապրիլ 13, 2011



«Անցեալի Յուշերով Կ'ապրինք» գիրքի գինեձօնը

## ՅԱՌԱՋԱԲԱՆ՝ «ԵՕԹՆԵՐՈՐԴ ԶԱՆԳՐՈՒԱՆ» ԳԻՐՔԻՆ

Եօթներորդ անգամ ըլլալով կ'ողջունուինք Գրիգոր Հոթոյեանին կողմէ որպէս բարի, ազնիւ, խաղաղասէր, հայրենասէր, գրասէր ու մանաւանդ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ հաւատարիմ գաւակ:

Գրիգոր Հոթոյեանը մեզի կը յիշեցնէ անցեալ դարու կէսերուն ապրած ա՛յն հերոսները մեր կեանքին, որոնք կը բնութագրուէին որպէս խոնարհներ:

Գրիգոր Հոթոյեանը իր պարզունակ բնութեամբ, ազգային եւ եկեղեցական իր բարի եւ հոգիով ըմբռնուած հասկացողութեամբ, հաճելի ներկայութիւն մըն է մեր կեանքին մէջ, որովհետեւ բարկութեան մէջ անգամ քաղցրութիւն ունի, բարկանալ չգիտնալուն համար:

Գրիգոր Հոթոյեանը իր պարզունակութեամբ յարգանք պարտադրող բարի մարդ է. առանց յետին հաշիւներու եւ նպատակներու, առանց ուրիշը թերագնահատելու, միշտ բարին տեսնելու, դրականը արժեւորելու եւ մեր կեանքին մէջ դրական երեւոյթներով հպարտացող ազնիւ հոգի է:

Թէ մեր կեանքին ցաւերը զինք կը նեղե՞ն. անկասկա՛ծ. որովհետեւ եթէ այդ պահուն իր աչքերուն նայիք, հոն ալեկոծ ծով կայ:

Թէ ազգին դժբախտութիւնները, ցաւերը զինք կը վշտացնե՞ն. անկասկա՛ծ. այդ պահուն նայեցէք իր դէմքին, ճարահատ եղնիկի մը ոստոստումը ունի:

Թէ այսօրուան մեր կեանքի վերիվայրումները զինք կը խելագարե՞ն. անտարակո՛յս. այդ պահուն նայեցէք իր ձեռքերուն, պիտի տեսնէք բացուած երկու ափեր, որոնց մէջ միայն մէկ սիրտ կայ: Սիրտ մը, որ հայութեան սիրտն է, սիրտ մը, որուն երակներէն կ'անցնի մեր դարաւոր սուրբերու, վկաներու, նահատակներու եւ հերոսներու արիւնը:

Պարոն Հոթոյեան իր այս հատորով մեզի կը ներկայանայ դարձեալ բարոյական արժէքներով, քրիստոնէական սկզբունքով եւ ազգային արժանապատուութեամբ զեղուն սրտով մը, որովհետեւ Գրիգոր Հոթոյեան կը նշանակէ՝ բարոյական արժէքներով եւ սկզբունքներով առլցուն խորհուրդ:

Մորհուրդ է Պարոն Հոթոյեանը իր նուիրումի զգացումներով, որոնց գագաթը ազգը, հայրենիքն ու մայրենի եկեղեցին են: Իր շուրջ 85 եւ աւելի տարիներու կեանքի ճանապարհորդութիւնը պայքար մըն է ի խնդիր բարոյական ճշմարտութիւններու:

Ճանապարհ մը, որուն եզրին շողացող ճաճանչները իր երկնաբեր լոյսին պատճառ կը դառնան, որպէսզի մենք՝ զինք ճանչցողներս, յարգենք ու մեծարենք զայն որպէս կենդանի յուշարձան, անցեալէն եկող ու անցեալի յուշերը մեզի բերող:

Հոթոյեանին հերոսները չմեռնող հերոսներ են: Անոնք չեն մեռնիր, որովհետեւ Հոթոյեան չ'ուզեր, որ անոնք մեռնին, ընդհակառակը, Հոթոյեանին համար անցեալը եւ անցեալի պարունակին մէջ ապրող մեր ժողովուրդի հերոսները մնայուն սրբութիւններն են մեր կեանքին:

Գրիգոր Հոթոյեանը գրագէտ է:

Գրիգոր Հոթոյեանը հպարտ սրտով լեցուն աշակերտն է Մեսրոպ Մաշտոցին, Սահակ Պարթեւ Հայրապետին, Սուրբ Նարեկացիին, Սուրբ Ծնորհալիին, ի՛ր իսկ բառերով՝ Սուրբ Զարեհ Սքանչելիին եւ բոլոր անոնց, որոնք պայքարեցան ի խնդիր հայ ժողովուրդի յաւիտենականութեան եւ գոյապահպանման:

Գրիգոր Հոթոյեանը գրագէտ է:

Գրիգոր Հոթոյեանը հայ դպրութեան եւ գրագիտութեան մեծ հերոս է, որովհետեւ իրեն համար հայ մնալու, հայօրէն ապրելու եւ հայօրէն մեռնելու հպարտութիւնը հայ գրականութեան եւ գրչութեան զգլխիչ սէրն է:

Գրիգոր Հոթոյեանը գրագէտ ըլլալու ալ պէտք չունէր եւ չունի, որովհետեւ իրեն համար գրելը ո՛չ ջանք է եւ ո՛չ ճիգ, այլ՝ մղում, ճշմարտութեան փնտռութեւք, յաւիտենականութեան թափանցում, եւ այս բոլորէն ետք ի՞նչ փոյթ, թէ ծիտերն հատիկները կ'աւարեն, տեղը Աստուած պիտի մարգարիտ սերմանէ:

Մարգարիտը մեր կեանքին Գրիգոր Հոթոյեանն է: Աստուած ի՛նք սերմանեց Գրիգոր Հոթոյեանը, որպէսզի մանաւանդ թորոնթահայ կեանքի հայելին իրմով շողարձակուի հայոց պատմութեան էջերուն մէջ:

Հետեւաբար, համբուրելով մեր սիրելի Հոթոյեանին ձեռքերը, կը շնորհաւորեմ պատուական հերոսը մեր համայնքին, անոր մաղթելով առողջ կեանք եւ երջանիկ ծերութեան օրեր:

Սիրելի ընթերցողներ,

Կարդացէ՛ք այս գիրքը, հոն դուք ձեզ պիտի տեսնէք՝ ձեր պատկերը, ձեր նմանատիպը, ձեր հոգին, ձեր միտքն ու զգացումը:

Կարդացէ՛ք այս գիրքը, որովհետեւ այս գիրքը արդիւնք է ալեկոծ սրտի մը խաղաղ նաւարկութեան աւարտին:

Կարդացէ՛ք այս գիրքը, որովհետեւ այս գիրքը մեր անցեալի վերջին մոհիկաններու բուրմունքը կը բերէ մեզի, մոհիկաններ, որոնք մանկութիւն չունեցան, երազային Հալէպի թաղերուն մէջ մեծցան աղքատիկ, բայց միշտ հայու արժանապատուութեամբ:

Կարդացէ՛ք այս գիրքը, որովհետեւ հաճոյք է զայն կարդալը:

Միշտ սիրով եւ ազօթարար՝

ՄԵՂՐԻԿ Ծ. ՎՐԴ. ԲԱՐԻՔԵԱՆ



## ԳՐՈՂԻ ԿԵԱՆՔԸ ԱՇԽԱՏԱՆՔ Է

«Եօթներորդ Հանգրուան» գիրքի հրատարակութեան առթիւ

Մեծայարգ եւ սիրելի Պրն. Հոթոյեան, շնորհակալութեամբ ստացայ նոր գիրքը՝ «Եօթներորդ Հանգրուան» հատորը՝ նուաստիս շուայած խօսքերովդ մակագրուած, որը շոյեց անձս: Սակայն ձեր տաղանդի ուժով եւ վարպետութեամբ դուք ինձ ստիպեցիք այս անգամ եւս հետեւիլ ձեր հոգեկան աշխարհին:

Ճանապարհորդութեանդ եօթներորդ հանգրուանը ճանապարհորդութիւն է դէպի անիմանալին, ես այնուամենայնիւ մտնելով ձեր՝ գրողի աշխարհը, մուտք գործեցի նաեւ իմանալիի ոլորտները: Գիրքդ կարդացի մէկ շունչով, որը աչքի կ'իյնար բազմաթեմայնութեամբ, կերպարներու այլազան բնոյթով եւ անոնց համապատասխան տարբեր ոճերով: Անոր բազմաթեմայնութիւնը կը բացատրուի գրողի, բանաստեղծի հոգեկան աշխարհի հարստութեամբ:

Գիրքիդ յառաջաբանին մէջ հետեւեալ միտքը կ'արտայայտէ Տէր Մեղրիկ Սրբազան Եպիսկոպոս Բարիքեան.

«Պրն. Հոթոյեան իր այս հատորով մեզի կը ներկայանայ դարձեալ բարոյական արժէքներով, քրիստոնէական սկզբունքով եւ ազգային արժանապատուութեամբ զեղուն սրտով մը, որովհետեւ Գրիգոր Հոթոյեան կը նշանակէ՝ բարոյական արժէքներով եւ սկզբունքներով աուցուն խորհուրդ»:

Պրն. Հոթոյեան, այդ առանձնայատկութիւնդ գրաւեց նաեւ իմ ուշադրութիւնը ընթերցման ժամանակ: Իմ կարծիքով, ձեր բոլոր գրութիւններուն մէջ, ըլլան անոնք պատմութիւններ, յօդուածներ, բանաստեղծութիւններ, տարբեր գրութիւններ, ի սկզբանէ գրուած է հոն ինչ որ հոթոյեանական խորհուրդ: Այսպէս օրինակ՝ ձեր պատմուածքները մարդկային խորհուրդներու փոխանցման միջոց են, քանզի ընթերցողի մտքին կը ներշնչեն համակրելի, գրաւիչ եւ զօրաւոր մտածողութիւն մը, ներթափանց եւ մտերմիկ, որոնց մէջ դուք կրցած

էք խորհուրդները արտայայտել ճշգրտորէն, հարազատորէն եւ պարզորէն, անոնք մնայուն արժէք ունեցող բարոյական դաս մը կը պարունակեն, կարդացողին սրտին կը խօսին եւ անոր յիշողութեան կը փակչին դիւրութեամբ: Եւ այդ հիւսուած պատմութիւններուն մէջ բազմաթիւ են այն էջերը, ուր բնորոշ է հերոսի կամ հեղինակի դրական ու սրտակից վերաբերմունքը:

Այդպէս կը հնչեն ինձ համար նաեւ ձեր բոլոր բանաստեղծութիւնները: Գործերուդ մէջ կայ նաեւ թիւերու պոեզիա՝ 215-ամեայ, 50-ամեայ յոբելեան ունեցող պատմական իրադարձութիւններ, ծրնրնդեան թիւ, տարեդարձ: Ես գիտեմ, որ հայ ընթերցողին համար այդ թիւերը սուրբ են: Թիւը բանաստեղծութեան մէջ կը շարժի ո՛չ որպէս մարգագաշտի «թուատախտակ», ո՛չ որպէս լուսային ազդեան վրայ, այլ որպէս գրողի, պատմողի կենդանի ձայն:

Սիրելի գրող, ձեր բանաստեղծութիւններուն մէջ դուք նաեւ գրծագրիչ էք. «Հալէպ սիրասուն» գործին մէջ կ'ըսէք.

Ես կարօտցած եմ քու հնադարեան  
Բերդը տեսնելու սիրով անասեման...

Ես կարօտցած եմ անապատային  
Ձով գիշերներդ՝ լուռ, երազային...

Ես կարօտցած եմ Քառասնից Մանկանց  
Առաքելական Սուրբ Եկեղեցին...

Հալէպ կամ Բերիա՝ քաղաք տարանցիկ  
Կարաւաններու առեւտրական...

Այստեղ դուք խօսքի գծագրիչ էք: Այս բնանկարներու մէջ դուք կրցած էք տալ դիմանկար, դիմանկարի մէջ՝ բնանկար: Այս բոլորը բառեր են, որ թուղթէն պիտի փոխադրուին կտաւի վրայ: Առանց այս արբեցուցիչ, զնգուն անուններու, ի՞նչ նշանակութիւն պիտի ունենար Հալէպը կամ Բերիան, հնադարեան բերդը, բազմադարեան հայերէն լեզուն, կամ Քառասնից Մանկանց Առաքելական սուրբ Եկեղեցւոյ մասին ձեր յիշատակութիւնները...

Այս բոլորի աշխարհը չէր բացուեր, եթէ անոր հետ միաժամանակ չբացուէր ձեր աշխարհը, գրելու աշխարհը, ինչպէս Սուրբիան, անոր կոթողները, արեւը, լեռները շնչաւորած էք, իսկ մարդը՝ յաւերժացուցած: Ինչպէս՝ զաւակներուդ եւ թոռներուդ մասին, հոգեւորականներու մասին, բանաստեղծի մասին, Վարագի մասին: Եւ ինձ թուաց, թէ ես ոչ միայն բանաստեղծութիւն կը կարդամ, այլ նաեւ կը գրուցեմ կեանքով ապրող ժամանակակից կերպարներու հետ: Գրելով այս տողերը՝ ես գրեթէ Ֆիզիքապէս զգացի պատասխանատուութիւն, պա-

տասխանատուութիւն եւ երկիւղ, երկիւղ եւ ուրախութիւն: Այս աշխարհէն գացած բոլոր հոգիները կը լռեն, իսկ այս աշխարհի մէջ ողջ առողջ ապրողները կը յուզուին եւ կ'ուրախանան:

Եւ այս բոլորը կենդանի մարդու կենդանի ուղեկիցներն են, զգացումներու եւ խոհերու ճշմարիտ թարգմանները, եւ չխուճացող վաւերաթուղթերը միաժամանակ: Որքան մեծ է տաղանդը, այնքան աւելի աշխատանք կը պահանջէ: Կը նշանակէ՝ դուք աշխատած էք, ինչպէս «վաստակած սերմնացանները»:

Պրն. Հոթոյեան, ձեր հոգին նման է գինիով լի սափորի, ուր կ'եռայ նոր քամուած գինին, կը թափի սափորի կաւէ շուրթերէն բնական խօսքով, պարզ ու խտացուած:

«Եօթներորդ Հանգրուան»ի մէջ առկայ էր կեանք, կենդանի շունչ, ապրումի իսկութիւնն ու բանականութիւնը: Եւ վերջապէս, «Եօթներորդ Հանգրուան» իսկական ստեղծագործութիւններու ուղեւորութեան հանգրուանն էր:

Սիրելի Պրն. Հոթոյեան, կը ցանկամ, որ ձեր ջահի թեթեւ ու խրնդուն լոյսը շողայ երկար տարիներ եւ բազում սերունդներու ճանապարհէին:

Կը մաղթեմ ձեզի, նաեւ համեստափայլ տիկնոջդ՝ Շաքէին, քաջառողջ կեանք եւ արեւշատ օրեր:

Մնամ անկեղծ եւ ջերմ զգացումներով եւ յարգանքով՝

ՍԵՂԱ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ  
Մտաւորական, դաստիարակ,  
հրապարակագիր



Զախէն աջ՝ Գրիգոր Հոթոյեան, բանաստեղծ Լուսֆիլի Դուրեան  
եւ Սասուն Գրիգորեան



## ՄՏԱԾՈՂ ՄԱՐԴՈՒՆ ՄԻՏՔԸ ՄԻՇՏ ԱՆՎԵՐՁ Է

Գրիգոր Հոթոյեանի «Մայրամուտի Ցուլքեր»  
գիրքի հրատարակութեան առթիւ

Գիրքերը ձեր միտքի նաւերն են, որ կը  
նանապարհորդեն ժամանակի ակիֆներու  
վրայով եւ զգուշաբար կը տանին իրենց  
թանկագին բեռը սերունդէ սերունդ:

*Սիրելի Պրն. Հոթոյեան, սրտաշարժ ուրախութեամբ ստացայ եւ  
կարգացի «Մայրամուտի Ցուլքեր» գիրքդ: Մանաւանդ ինքզինքս եր-  
ջանիկ համարեցի՝ գիրքին յառաջաբանի պատուին արժանանալուս  
համար: Հազար պատիւ Ձեզի՝ մօտաւորապէս 90-ամեայ ճանապար-  
հորդ: Ձեր կեանքը դեռ մոմի պէս լոյս կու տայ, որ մեր սիրելի Հայ ժո-  
ղովուրդին մշակոյթը յաւերժ պահպանուի:*

*Պրն. Հոթոյեան, այս անգամ եւս վերահաստատեցիք Ձեր հաւա-  
տոյ հանգանակը հանդէպ մեր ազգին: Ձեր վերջին գիրքը՝ «Մայրա-  
մուտի Ցուլքեր»ը տակաւին ծերացած է: Ձեր միտքն ու գործը յարա-  
տեւ են:*

*Ձեր բոլոր հատորները, այս վերջինին հետ միասին, ուղղուած են  
ամէն հայու, որ տակաւին է՛լ կորսնցուցած զգացումը ազգային հը-  
պարտութեան, գնահատանքը՝ Հայ գրականութեան: Այս գիրքը նոյն-  
պէս կենդանի խօսող փաստ է: Անկեղծութիւնը յաջողութեան բանա-  
լին է գրական այս 209 էջնոց գիրքին, որուն էջերուն մէջ տրուած են  
ծանօթագրութիւններու արժէքը, հարստութիւնը. փոխանցուած գի-  
տելիքներու տարածքը հիացումի արժանի է:*

*Առաջին էջերուն մէջ կը կարդանք կարեւոր տեղեկութիւններով  
հարուստ յօդուածներ: Ընթերցողին կը ներկայացնէք սեղմ ուսում-  
նասիրութիւն մը արցախեան աշխարհի մասին: Տեղահանութեան  
դրուագներ ու հերոսական սխրանքներ, պատմութիւններ եւ եղելու-  
թիւններ:*

*Պրն. Հոթոյեան, դուք փաստերով նկարագրած էք, թէ Ղարաբաղի  
բարբառը ինչպիսի՛ր՝ ծագում ունեցած է ժողովուրդներու նախալեզ-  
ուին մէջ: Բաղդատութիւններ ըրած էք, թէ արցախեան բարբառին  
մէջ կան բազմաթիւ բառեր, որոնք գործածական են միայն այդ բար-  
բառով եւ չեն մտած հայերէնի ընդհանուր բառապաշարին մէջ: Ինչ-*

պէս նաեւ Ղարաբաղի բարբառին մէջ կան բազմաթիւ բառեր, որոնք իրենց արտայայտած իմաստով պահպանուած են տարբեր լեզուներու մէջ: Ձեր այս ուսումնասիրութեան մէջ դուք եղած էք լեզուի մտածողութեան աշխատաւորը:

Գրած էք նաեւ Լեռնային Ղարաբաղի մշակութային եւ հոգեւոր ժառանգութեան մասին: Կը յուսամ, որ այս յօդուածը օգտակար պիտի ըլլայ կարգացողներուն՝ որպէս տեղեկութեանց եւ գաղափարներու աղբիւր: Այստեղ նաեւ յատկանշական է Ձեր մարդկային ու բարոյական հաւատարմութիւնը անցեալի եւ հարազատ արմատներու հանդէպ:

Բաւական է թերթի գիրքին էջերը եւ հոն անգամ մը եւս կը տեսնենք հայ կեանքին եւ իրականութեան հայելին, կը տեսնենք, որ բոլոր հերոսները ազգային պատկանելիութիւն ունին: Դուք անհատները կը նկարագրէք իրենց իսկ էութեամբ, կը նկարագրէք զանոնք ինչպէս որ են: Այս երկուքը նմոյշներ են անկեղծութեան: Ձեր զգացումները վեհ են ու արդար:

«Ձօս Գերապատիւ Տէր Մեղրիկ Մ. Վարդապետ Բարիքեանին՝ եպիսկոպոս ձեռնադրութեան եւ օծման առթիւ» գրութեան մէջ կ'ըսէք:

Եկեղեցական շարականներով,  
Սաղմոսներով եւ աղօթքներով ու  
Աստուածային սուրբ օրհնութիւններով,  
Կեանքի դարձուցիւր կանթեղ մշտավառ:

Անտարակոյս, մասունքի պէս համբուրելի կը գտնենք այս երախտաւորին՝ Մեղրիկ Սրբազանին նուիրուած պաշտամունքի աստիճանին հասնող հրացական այս տողերը, ուր բանաստեղծութիւնը կ'առանձնանայ եւ ցոյց կու տայ Սրբազանին հոգեւոր արժէքներուն գեղեցիկ իրականութիւնը:

Պրն. Հոթոյեան, Ձեր գիրքին մէջ ներկայացուցած էք հանգուցեալ Գերաշնորհ Տ. Կորիւն Ս. Արք. Պապեանի յիշատակը յաւերժացրնելու մտածումը, անոր իրական կեանքի կենդանի պատկերներով եւ դէպի բարին ու գեղեցիկը ունեցած հաւատքով: Դուք կրկին գեղեցկացուցած էք Կորիւն Սրբազանի մարդկային եւ հոգեւոր կեանքը: Նմանապէս՝ հոգելոյս Տ. Արմէն Աւագ Քահանայ Իշխանեանի յիշատակին եւ Յակոբ Արսլանեանի յուղարկաւորութեան մասին: Այս բոլորը գրած էք Ձեր կեանքի փորձառութեամբ, մարդոց հետ յարաբերութիւններու պարզ ու ջերմ, անկեղծ զգացումներով, իմաստասիրական ու հաւատքի խոր ըմբռնումներով:

Այս բոլորին հետ մեծ էր զարմանքս, երբ զգացի, որ ամէն մէկ անձ կարծես իմ առջեւ բացաւ նոր, չտեսնուած աշխարհ մը՝ կարդալով այս արժանաւորներուն զգացմունքներուն, մտքերուն ու յարաբե-

ըռւթիւններուն մասին, որոնք ինծի ծանօթ չէին եւ չէի տեսած զիրենք:

«Պաշտելի մօրս յիշատակին» բանաստեղծութեամբ կը վերադառնաք Ապրիլեան Եղեռն: Այս բանաստեղծութիւնը այն խորհուրդն է, որով դուք կը ստեղծէք Ձեր թափանցիկ աշխարհը, յուսաբեկ, շլմորած կ'ոգեկոչէք անցեալը, ուր ամենայն մանրամասնութեամբ պատկերած էք դժոխային այն ճանապարհը, ուրկէ անցած է Հայ ընտանիքը: Բանաստեղծութեան մէջ ինքնակենսագրական փաստերով թափանցած էք պատմական ծանր ժամանակաշրջանէ մը ներս: Դուք իրադարձութիւններն ու ժամանակի դէպքերը արձանագրած էք Ձեր յիշողութեան մէջ եւ գեղարուեստական բարձր արժանիքներով ներկայացուցած էք ընթերցողին: Կը պատմէք մօր, ընտանիքի, քրոջ եւ զաւկի սէրերուն մասին: Սակայն ասիկա սոսկ ընտանիքի մը պատմութիւնը չէ, աւելին՝ այս մէկը ամբողջ ժողովուրդի մը Հայածանքի ու դեգերումներու պատմութիւնն է: Ասիկա ամբողջ սերունդի մը կորուստի շարունակուող ցաւն է՝ 1915-էն ցայսօր պաշտօնուող կարծրացած կարօտը, սուր ցաւի նման խոցող ամենաանասելի պահերուն անգամ:

Մայր իմ,  
Դուն եւ որդիդ կը գտնուէիք  
Եփրատի հոսող ջուրերուն վրայ,  
Մօրդ գլուխը մարմինէն բաժնուած  
Կը տեսնես, որ կը ծփար ազատօրէն,  
Պատճառ դառնալով սարսափելի լացի  
Եւ աղաղակի:

Մայրական սիրերգութիւնը դարձած է Ձեզ Համակող էութիւն՝ իր բազմազան երեւոյթներով: Խորապէս ապրուած զգացում, ուր Դուք բազմաթիւ բառեր կ'որոնէք՝ մօր սիրոյ կարօտը զգալով: Համոզուած ըլլալով, որ մօրդ սէրը անհասանելի է, սակայն իբրեւ բալասան՝ կ'ամօքէ Ձեր տառապանքը: Հակառակ տարիներու թաւալին, Դուք հետեւած էք Ձեր սրտի թելադրանքին:

Բաւականին լայն է, Պրն. Հոթոյեան, Ձեր հետաքրքրութիւններու շրջագիծը: Մանր ու մեծ հատորներով, բազմաթիւ ու բազմազան յօդուածներով նուաճած էք սեփական ստորագրութեան իրաւունք: Այս հսկայածաւալ գիրքերը գրելով՝ աշխատած էք վառ պահել Հայ ոգին: Ամէնէն առաջ այդ «Հոգին» է, «Կենդանի շունչը»՝ դրոշմուած անկենդան թուղթի վրայ: «Գրողին մեծագոյն գրգռիչ գաղափարը դիւրամատոյց ըլլալն է», ըսած է Միսաք Մեծարեհ: Ահա թէ ինչո՞ւ Ձեր գիրքերը ընթերցելու ժամանակ կը թուի, թէ Հոթոյեանը կը խօսի քեզի հետ եւ դուն կը զգաս, որ կը ճանչնաս Հոթոյեան մարդը: Ձեր

խմբագրած եւ ծանօթագրած հատորներուն շնորհիւ՝ մեր ծանօթութիւնը կը զարգանայ ու կը խորանայ:

Այսպիսով, Պրն. Հոթոյեան, Ձեր մտաւորականի գանձը հայրենասիրական սխրանքն է: Ձեր գրական ժառանգութիւնը ծայրէ ի ծայր ներծծուած է վսեմ հայրենասիրութեամբ: Այդ ոգիով դաստիարակած էք Ձեր դուստրը՝ Անին, ամուսինը՝ Մայքըլը եւ թոռներդ՝ Քրիստափորն ու Ստեփան-Արմէնը, որոնք կրկին անգամ ստանձնած են այս հատորին մեկենասութիւնը:

Ընդունեցէ՛ք, խնդրեմ, անկեղծ շնորհակալութիւնս, որ Ձեր վերջին գիրքը՝ «Մայրամուտի Յոլքեր»ը ինծի արժանացուցիք:

Միբեի՛ր Պրն. Հոթոյեան, գոյգ տօներուն՝ Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան առթիւ կը մաղթեմ Ձեզի եւ ազնուափայլ տիկնոջդ՝ Շաքէին, քաջառողջ կեանք, խաղաղ ու արեւշատ օրեր:

Մնամ յարգանքով՝  
ՍԵՂԱ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ

24 Դեկտեմբեր 2016  
Թորոնթօ



Զախէն աջ՝ Գրիգոր Հոթոյեան, Գերշ. Խաժակ Արք. Յակոբեան  
եւ Հոթոյեանի Հալէպի կիրակնօրեայ վարժարանի սաներէն  
Աստղիկ Մելիֆոնեան

## ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ ԲԱՐՈՅԱԽՕՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԲՈՒՆԵՐԸ

Մեր սեղանին վրայ է թրոնթոյաբնակ յայտնի մտաւորական ու գրող Գրիգոր Հոթոյեանի նոր մէկ գիրքը, որ կու գայ աւելնալ վաստակաշատ գրագէտին կողմէ աւելի առաջ հրատարակուած հաստատիր գիրքերուն վրայ: Այս նոր գիրքը կոչուած է «Հայաշունչ Պատմուածքներ»: Եթէ սկսիք գիրքը թղթաթել, անմիջապէս պիտի հասկընաք, որ հոս խնդրոյ առարկայ են ո՛չ միայն Հայաշունչ, այլ նաեւ բարոյախօսական պատմուածքներ: Հոթոյեան իր այս նոր գիրքին մէջ ճամբայ կ'ելլէ իր ընթերցողները հաղորդելու համար մարդուս բարոյական ու մարդասիրական աշխարհը հարստացնող ապրումներու ու թելադրութիւններու հետ:



Ընդհանրապէս գրականութեան մէջ բոլոր գրողները կերպով մը կը վերադարձնեն այն ազդեցութիւնները, որոնք իրենց վրայ ուսուցիչներու կամ մերձակորներու կողմէ դրուած են անոնց մանկութեան կամ ուսանողութեան շրջանին: Այս գիրքին մէջ պարագան նոյնն է հեղինակին համար: Գրիգոր Հոթոյեան գիրքի նախաբանին մէջ կը պատմէ, որ իր մանկութեան շրջանին, երբ Հալէպի մէջ կը յաճախէր կիրակնօրեայ դպրոց, մասնաւոր ուշադրութեամբ մտիկ կ'ընէր իր ուսուցիչներուն կողմէ պատմուած «բարոյալից պատմուածքներ»ը: Շատ բան սորվեցաւ անոնցմէ եւ ան անոնցմէ հասնող բարոյական սկզբունքները ո՛չ միայն գործադրեց կեանքի մէջ, այլ նաեւ զանոնք օգտագործեց, որպէսզի ինք ալ յօրինէ բարոյալից պատմուածքներ: Այս գիրքը անոնց մէկ համադրութիւնն է:

Հարուստ բովանդակութիւն ունի գիրքը ու էջերը դարձնելով պիտի տեսնէք, որ հատորին էջերը միայն բարոյալից պատմուածքներու մասին չեն, այլ կան նաեւ ուրիշ գրողներու վկայութիւններ, նամակներ, խորհրդածութիւններ, եւ այս բոլորին առընթեր՝ հարիւրա-

ւոր լուսանկարներ, որոնք Հոթոյեանը ցոյց կու տան ինչ-ինչ ծանօթ հայ դէմքերու հետ քով-քովի:

Բարոյալից պատմուածքներու պարագային՝ Հոթոյեան ունի հր-նարելու ու նիւթ ստեղծելու վարպետութիւն, հարուստ երեւակայու-թիւն: Պատմուածքները անակնկալներով լեցուն են: Այս պատմը-ւածքները կը սորվեցնեն սիրել մարդը՝ ինչ ցեղի ալ պատկանի ան, օգնել մարդոց, հաւատալ Աստուծոյ, քիչ երջանկութեամբ գոհանալ: Այսպէս է որ մանուկ մը, որ իր շուրջիները կը սիրէր բացի մէկ հոգիէ, որ սեւամորթ մըն էր, քիչ վերջ պիտի տեսնէ, որ այդ սեւամորթը անոր կեանքը պիտի փրկէ, մինչ բոլոր միւսները անտարբեր պիտի մնան: Նմանօրինակ բարոյախօսութիւններով լեցուն է գիրքը: Հոն է պատ-մութիւնը մէկու մը, որ բոլոր հարստութիւնները կը մերժէ ու իրեն կը պահէ միայն պղնձեայ խաչ մը, որուն արժէքը բարոյական է: Բայց կը սխալի: Պղնձեայ կարծուած խաչը ծանրածանր ոսկի է ու մեծ հարու-ստութիւն կը նշանակէ: Հաւատքին զօրութիւնն էր, որ կը վարձատրէր զինքը:

Հոթոյեանի պատմուածքները շինարար են ու հաճելի ընթերցա-նութեան նիւթ: Անտարակոյս, հայ մշակոյթի սիրահար մարդը ուրիշ հետաքրքրական ու առինքնող նիւթեր ալ պիտի գտնէ գիրքին երկ-րորդ մասին մէջ, ուր հրատարակուած են վկայութիւններ ու նամակ-ներ:

Հոթոյեան բազմաթիւ շքանշաններու արժանացած գրող է, բայց իրական շքանշանները հեղինակներուն գործերն են ու այս գիրքն ալ մեր տեսակէտով նոր շքանշան մըն է Հոթոյեանի կուրծքին վրայ:

ՌՈՊԷՐ ՀԱՏՏԷՃԵԱՆ  
Խմբագրապետ, գրագէտ,  
արձակագիր, հրատարակագիր

«Մարմար»,  
22 Յունիս 2017



## ՍՓԻՒՌԻ ՄԷՉ ՀԱՅ ԳԻՐԻՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀՈԳԱԾՈՂ ՄՏԱՒՈՐԱԿԱՆԸ

Սիրելի՛ Պրն. Հոթոյեան, շնորհակալութեամբ ստացայ վերջին «Հայաշունչ Պատմուածքներ» հատորը: Այս գիրքովդ կու գաս աւել-ցընելու թարմաշունչ գեղարուեստական բոյր մը, որ ունի իր տեղը եւ

արժանի է գնահատանքի: Գրիգոր Հոթոյեանի հատորները կարգալու ժամանակ կը մտածես, որ այդ մարդը նպատակ է ունեցած իր մարդկային կեանքին մէջ ընդգրկել ամբողջ մարդկութեան կեանքը՝ իր անսահման բազմազանութեամբ:

Շատ քնքուշ կսկիծ, շատ թախիծ կայ այս գիրքիդ էջերուն մէջ, եւ այդ բոլորը ոչ թէ ստուերներ են, այլ ճաճանչներ՝ բնութեան, մարդու, աղօթքի զօրութեան, հաւատքի զօրութեան, հերոսական սիրոյ, հայու ճակատագրի, բարոյականութեան, արդարութեան, հայրենիքի սիրոյ, հայու հանդէպ անհուն սիրոյ ճաճանչներ:

Պրն. Հոթոյեանը խոհուն, ինքնավստահ, բայց համեստ, եռանդուն, գործիմաց, խիզախ մտայղացումներու տէր է, եւ այս բոլորը յամառօրէն իրագործող գրող մըն է: Անկասկած՝ սփիւռքահայ տարեգրութեան մէջ պատկառելի մշակներու շարքին արժանաւորապէս կը դասուի Գրիգոր Հոթոյեանի անունը: Պրն. Հոթոյեան, գրութիւններդ, պատմութիւններդ կը համեմուին մտածումներովդ ու յուշերովդ:

Քու գիրքերուդ մէջ հայրենիքը իրականութիւն է, ճակատագիր, հող ու երկինք, մարդ, լեզու, թուիչք ու երգ, եւ այս բոլորի կողքին կայ բնատուր (բնութենէ տրուած) մակդիրը:

Իբրեւ սասունցի՝ ունիս քու զուլալ, մաքուր արիութիւնն ու խիզախութիւնը: Հերոսներդ նոյնպէս սասունցիներն են՝ Մակարի, Գալէի եւ Ակէի նման քաջազուն ֆետայիները, որոնք իրենց արիւնը թափեցին հայ ժողովուրդի ազատ ու անկախ ապրելու ճանապարհին:

Հանդիպեցայ պատմութիւններու, ուր կը միւսն կրակներ, կը ծրփան տառապանքի ու տրտմութեան ալիքներ: Կային պատմութիւններ, ուր ողբերգութիւնը կարմիր թելի նման կ'անցնի գրողի ստեղծագործութեան միջոցով: Հայրդ, Սասուն գաւառի Տալուրիկ շրջանի Սպաղանք գիւղը ծնած Ղազար (Խարզօ) Հոթոյեան, Սասնոյ ազատագրական եւ ինքնապաշտպանական կռիւններու ընթացքին Սասունէն հեռանալուն՝ այստեղ բանաստեղծը — հայ ոգիի ու մարդկային բարձր արժանիքներու ջատագովը — կը մրմնջայ.

Հայր իմ սիրասուն,  
Քու ծննդավայրէդ հեռու ապրելով՝  
Շատ տառապեցար,  
Հայոց Եղեռնի մահուան դարպասէն,  
Թուրք գազաններու եաթաղաններէն  
Քաջագուն սրտով միշտ ազատեցար  
Եւ հաստատուեցար քաղաք Հալպայ,  
Ուր ապրեցար քու ծննդավայր Սասնոյ կարօտով,  
Յուսալով ընդմիշտ օր մը անպայման

Վերադառնալու ու տէր կանգնելու քու պապեմական  
Տունին ու դաշտին:  
Սակայն երագդ անկատար մնաց...

Իր ապրած տեղի կարօտը զգալով, հրգիր երթալու փափաքով,  
Սասունէն հեռու՝ օտար հողերու մէջ կը թաղուի:

Բանաստեղծը նոյնպէս տառապած է ու կը տառապի իր հարա-  
զատ հօր անկատար երագով: Պատահական չէ, որ հեղինակը ընտրած  
է իր քաղաքը, որուն նկատմամբ ունեցած է սէր, ապրում ու երագ:

Պրն. Հոթոյեան, դուք ձեր մէջ կրեցիք ձեր հօր երագը, ու այդ ե-  
րագը աւանդեցիք սերունդներուն, ուր ցաւը, մորմոքը, ցասումն ու  
բորբոքը կ'արտայայտեն իր փոթորկախառն ելեւէջները:

Ես կը կարծեմ, որ Գրիգոր Հոթոյեանի համար գրելը ո՛չ զբաղ-  
մունք է, ո՛չ ալ մասնագիտութիւն, այլ՝ վերուստ տրուած ճակատա-  
գիր: Ոչ ոք գիտէ, թէ առհասարակ քանի՞ տողերէ է բաղկացած մարդ-  
կային ճակատագիրը: Հաւանաբար այդ Հոթոյեանի ճակատէն կա-  
խում ունի. որքան լայն ու պայծառ է այդ ճակատը, որքան աւելի լե-  
ցուն է խոհերով՝ անոր վրայ դրոշմուած տողերը այնքան աւելի շատ  
են: Այսպէս է նաեւ այս գիրքին մէջ, եւ ա՛յս է անոր հիմնական ար-  
ժէքը, եւ ա՛յս է, որ այս գիրքը կամ գիրքերը Հոթոյեանի՝ պիտի դար-  
ձընէ սփիւռքահայ գրականութեան վերջին տարիներու գեղեցիկ ու  
թարմ երեւոյթներէն մէկը, նամանաւանդ նոր սերունդի յիշողութեան  
մէջ:

Այնուամենայնիւ, մեզի համար ամէնէն կարեւորը գրողի, բա-  
նաստեղծի կերպարն է, այն գրողի, որ իր կեանքը բաշխած է մարդոց,  
իսկ ինք մնացած է դատարկ, եւ հարուստ է այդ դատարկութեամբ:

Սիրելի՛ Պրն. Հոթոյեան, այդ է քու երջանկութեան հաւատամքը,  
որուն մենք կը հաւատանք անվերապահօրէն:

Պրն. Հոթոյեան, այս հատորին մէջ գետեղած էք արժէքաւոր լու-  
սանկարներ՝ իրենց անուններով, յիշարժան դէպքերով եւ իրադար-  
ձութիւններով, հաճելի անակնկալ մը պարգեւելով գիրքդ ընթերցող  
գրասէրներուն: Գեղանկարիչ, քանդակագործ ընկ. Յակոբ Ճանպազ-  
եան կողքի ձեւաւորումը կատարած է իր ուրոյն ու սեփական մտա-  
յղացումով, ուր հեղինակը ընտրած է անըլային տեսարան մը:

Սիրելի՛ գրող, ձեր հայրենասիրական գաղափարներն ու հերո-  
սական կեանքի պատմութիւնները մեզի համար վառ օրինակներ եւ  
կեանքի ուղեցոյցներ են: Եւ վերջապէս, ձեր բոլոր թեմաներով գըր-  
ուած պատմութիւններուն մէջ դուք նկարագրեցիք սերունդի մը կեն-  
սագրութիւնը, ուր պատմուածքէ պատմուածք, բանաստեղծութենէ  
բանաստեղծութիւն վերածեցաւ սերունդի մը ճակատագիրը, որուն  
ենթախորագիրն է «Հայաշունչ Պատմուածքներ»:



*Ապրի՛ր երկար եւ առողջ, սիրելի՛ Պրն. Հոթոյեան: Ձեր սիրով ու ջերմութեամբ տաքցուցէ՛ք ձեր ընտանիքը, ձեր զաւակներուն ու թոռներուն եւ շատերուն վարակեցէ՛ք ձեր հայրենաբաղձ շունչով:*

*Կը ցանկամ ձեզի քաջառողջութիւն, երկարատեւ ու երջանիկ ծերութիւն:*

*Մնամ ջերմ յարգանքով՝  
ՍԵՂԱ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ  
Մտաւորական, դաստիարակ,  
հրապարակագիր*

Մայիս 2017  
Թորոնթօ



Չախէն աջ՝ Տէր Արմէն Ա. Քինյ. Իշխանեան, Գրիգոր Հոթոյեան  
եւ Օշական Արք. Զոլոյեան, 23 Փետր. 2011, Թորոնթօ

## ԱԼ ԻՆՉՈ՞Ւ Կ'ԱՊՐԻՄ, ԵԹԷ ՊԻՏԻ ՉԳՐԵՄ

(Գրիգոր Հոթոյեանի

«Ողբելունչ Քերթուածներ Եւ Զօներգութիւններ» գիրքի  
հրատարակութեան առթիւ)

Գիրքը կը մշակէ մարդու ճաշակը,  
կը զարգացնէ սէր դէպի լեզուն, ոճը,  
գեղեցիկի ըմբռնումը:

Գրիգոր Հոթոյեանի կենսագրութիւնը ամէնքս գիտենք: Այս գիրքին, «Ողբելունչ Քերթուածներ Եւ Զօներգութիւններ», ծնունդով ես պիտի նշեմ անոր կեանքը ու իր հոգիին կենսագրութիւնը՝ իր ձօներգութիւններուն եւ բանաստեղծութիւններուն ընդմէջէն:

Գրիգոր Հոթոյեան, այս անգամ դուք կրկին ընթերցասէր հայորդիներու ձեռքերուն կը յանձնէք ապրումներով ու զգացումներով լեցուն բանաստեղծութիւններու եւ ձօներգութիւններու գիրք մը՝ յիշողութիւնները թարմացնելու համար: Կը կարծեմ, որ Հոթոյեանի «յանդգնութեան» հիմերը յուսալի են եւ ամուր: Անոր լաւագոյն բանաստեղծութիւնները յայտնուելով քով-քովի՝ բնաւ չեն կորսնցուցած իրենց արժէքը: Իր բանաստեղծութիւններուն մէջ հեղինակը կը ստեղծէ մարդկային լիարիւն եւ լիարժէք կերպարներ:

Պրն. Հոթոյեան, բանաստեղծութիւններդ ինքնին զարդ են, զարդերու զարդը: Սիրային տազնապներուդ մէջ կան խօսքեր բնական ու խտացուած, պարզ ու հասարակ, որոնց մէջ կը ծնին ազնիւ զգացումներու խոհեր: Ա՛յս է արուեստի այն մակարդակը, որ բացի վարպետութենէ՝ արդիւնք է նաեւ կեանքի խոր ճանաչողութեան:

Սիրելի՛ բարոյ, ձեր բոլոր նիւթերը մեզ հաղորդակից կը դարձնեն հայրենասիրական, մշակութային, կրօնական, ազգային-յեղափոխական, Եղեռնի եւ նամանաւանդ սիրային տազնապներուդ: Քնարերգութիւն, ուր մենութեան վերյուշերը միահիւստուած են սքանչելի սիրոյ հետ, ուր հզօր ուժով դրսեւորած էք անոր ձգտումը դէպի գեղեցիկը: Դուք կ'ընձ կամ աղջկայ կերպարը հանդէս բերած էք որպէս բարձրագոյն գեղեցկութեան սիմպոլ:

Հոթոյեանի տեսածն ու ապրածը ազդակ կը դառնան ստեղծագործական երեւակայութեան համար:

Ե՛ս,  
Գարնանային օրով այս հմայիչ,  
Բնութեան չֆնաղ փթթումին հետ  
Կու գամ այսօր ոգեկոչել  
Հայոց երկրի հրաշածին Ազատութեան  
Արիւնաներկ թուականը պատմական:

*Իր բանաստեղծութիւններուն մէջ հետաքրքրութիւնները չափազանց լայն են ու բազմաբնոյթ: Ան լաւատես է եւ լաւատեսութիւնը կը համարէ իրականութեան հանդէպ միակ բարեբեր ու մարդուն արժանի սկզբունքը:*

Մե՛նք կը յիշենք քեզ, հերոս Անդրանիկ,  
Հայ մեծ գօրավար, յաղթապանձ մարտիկ,  
Դուն միշտ պիտ' ապրիս մեր սիրտերուն մէջ,  
Հայդուկ սիրասուն, դուն կ'ապրիս անվերջ:

*Այստեղ հեղինակին իտէպը կը կայանայ անոր մէջ, որ իր հերոսներուն մէջ կը տեսնէ, կը գտնէ անշահախնդիր վեհանձնութիւն, սէր, արարքներ գեղեցկութեան եւ հոգիի վսեմութիւն:*

*Ան կը ձգտի բացայայտել նաեւ ժողովրդային կեանքի միասնականութիւնը.*

Ժողովուրդը, իր բանակով միասնական,  
Ազատութեան իրաւունքով պաշտպանուեցան,  
Եւ անձնագոհ մարտիկներով մահապարտեան՝  
Խոյանցներով հնչեց փողը ազատութեան:

*Այս գիրքին մէջ երգ ու երաժշտութիւն կան եւ միշտ առկայ է բնութեան իմաստուն վեհութիւնը.*

Կանաչագարդ դաշտերու  
Քովերն ի վեր կը քալեմ,  
Աչքերս հեռո՛ւ սարերու  
Բարձունքները կը գերեմ:

Եփրատն անդին կը հոսի  
Երաժշտութեամբ մը սիրուն,  
Կարծես անձայն կը խօսի  
Հոգիիս հետ վարարուն:

*Հոթոյեանի գիրքը իր պարզութեամբ ու խորութեամբ կը յիշեցնէ հայրենի վճիռ ջուրերը, որոնց յատակի քարերը պարզ կ'երեւան, սա-*

կայն երբ նայիս, անոնք այնքան մօտ կ'երեւան, որ կը թուի թէ ձեռքով կրնաս հասնիլ. բայց երբ կը փորձես, այնքան են խորունկ, որ ձեռքդ չի հասնիր անոնց եւ կարօտակէզ աչքերով միայն կ'երագես: «Աղբիւրի մօտ» բանաստեղծութեան մէջ կ'ըսէ.

Վնիտ ջուրիդ ընդմէջէն,  
Հայրենիքիս հոգեթով  
Աղբիւրները կ'երագեմ  
Կարօտակէզ աչքերով:

Այդպիսին է նաեւ Հոթոյեանի գրիչը. այնքան պարզ է, որ կը թուի, թէ դուն ալ կրնաս այդպէս գրել: Սակայն ատիկա գրողի այն բարձունքն է, որ քիչերը կը բախտաւորուին զայն նուաճել:

Անոնք, որոնք քիչ թէ շատ ծանօթ են Հոթոյեան մարդուն, կրնան վկայել, որ անոր մարդկային նկարագիրը եւ գրականութիւնը լիակատար համերաշխութեան մէջ են: Իսկ այս պարագային գրողը ինչ ալ որ գրէ՝ երբեք չի ստեր, եւ այն ինչ կը ստեղծէ ան՝ կ'ըլլայ ազնիւ մղումներու, անկեղծ պոռթկումներու արդիւնք, սրտի թելադրանք եւ ոչ թէ կեցուածք:

Հոթոյեանը իր գրած բոլոր բանաստեղծութիւններուն ընդմէջէն գրականութեան բերաւ իր սերունդի կենսագրութիւնը, ուր բանաստեղծութենէ բանաստեղծութիւն վերաճեցուց սերունդի մը ճակատագիրը:

Հոթոյեանը ինչ որ գրած է, գրած է իր համոզումներուն հաւատարիմ: Կ'ըսեն՝ «ճանապարհ անցնողը ուզէ կամ չուզէ կը փոշոտի»: Հոթոյեանը ինչպէ՞ս կրցաւ անցնիլ այնքան երկար եւ փոշոտ ճանապարհ եւ չփոշոտեցաւ բնաւ:

Հիմա ես կ'երեւակայեմ, որ Հոթոյեանի միտքին մէջ դեռ չգրուած ստեղծագործութիւններ կան, սակայն անհոգ եղիր, Պրն. Հոթոյեան, այդ չգրուածն աւելի է գրուածէն:

Միւրեւի՛ գրող, իրենց ժամանակին արդէն իսկ ձեռք բոլոր գիրքերը գրախօսուած են հայ գրականագէտներու կողմէ՝ արժանանալով բարձր գնահատանքի եւ դրուատանքի, եւ այսուհետեւ դուք կաք, եւ ոչ միայն կաք, այլեւ ձեռք բոլոր հատորներով պիտի անմահանաք դալիք սերունդներուն աչքին:

Կը ցանկամ ձեզի արեւշատութիւն եւ քաջառողջութիւն:

Ջերմ մաղթանքներով՝  
ՍԵՂԱ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ

Սեպտեմբեր 2017  
Թորոնթօ




# ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՈԳԵՇՈՒՆՉ ԵՐԳԵՐ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԷՆ

Թորոնթոնյան մեր սիրելի բա-  
րեկամը՝ բանաստեղծ ու արձակա-  
գիր Գրիգոր Հոթոյեան, հայ մշա-  
կութային ուստայնէն ներս մեզի  
յայտնի է որպէս ազգասէր ու հայ-  
րենասէր մարդ, որ իր ժողովուրդին  
ու իր հայրենիքին նկատմամբ իր  
հաւատարմութիւնն ու հիացումը կը  
սիրէ արտայայտել հայոց լեզուի  
գեղահիւս բառերով ու մաշտոցեան  
պաշտամունքի մը ընդմէջէն:

Երբ գինքը ճանչցանք եւ առա-  
ջին անգամ սեղմեցինք ձեռքը Երե-  
ւանի մէջ, գրական համագումարի  
օրերուն, ան արդէն հրատարակած  
էր բազմաթիւ հատորներ, բոլորն ալ  
իր ազգասիրական հոգիէն ծնունդ  
առած հաղորդական գործեր: Այ-  
նուհետեւ մեր սեղանին վրայ դրուեցան նորանոր գիրքեր, որոնք  
մերթ բանաստեղծութեան, մերթ արձակի ճամբով մեզի կը ներկա-  
յացնէին Հոթոյեանի դիմագծութիւնը: Նոյնիսկ կարելի էր ըսել, որ  
ամէն նոր հատոր նոր գիծ մը, նոր գոյն մը կ'աւելցնէր Հոթոյեանի դի-  
մագծութեան վրայ:

Իր նախընթաց հատորն էր բարոյախօսական պատմուածքներու  
հաւաքածոյ մը, որուն մասին եւս արտայայտուած էինք հաճոյքով ու  
գնահատանքով: Այժմ ի ձեռին ունինք Հոթոյեանի նորագոյն գիրքը,  
որ կոչուեր է «Ոգեշունչ Քերթուածներ եւ Զօներգութիւններ»: Փա-  
ռաւոր նոր գիրք մըն ալ ահաւասիկ, որ կազմուեր է հեղինակին պա-  
տանութենէն մինչեւ այսօր ազգային զանազան առիթներով գրի առ-  
նուած «ձօներգութիւն»ներով: Հեղինակին մտահոգութիւնը հոս այ-  
լեւս գրականութիւն չէ, այլ ազգասիրութիւն:

Չկայ ազգային իրադարձութիւն կամ տօնակատարութիւն, չկայ  
ազգային հերոսական դէմք, չկայ հայրենական երկրի քաղաք կամ  
տարածքաշրջան, որ չմտնէ Հոթոյեանի ներշնչումի շրջանակէն ներս:  
Բոլորին մասին ալ պաշտամունքի խօսք ունի Հոթոյեան ու մենք հա-



ճոյքով կը կարգանք զանոնք, մտածելով որ Հոթոյեան իր խօսքին մէջէն կ'ըսէ նաեւ այն ինչ, որ մենք ալ պիտի ուզէինք ըսել այդ մասին: Ուրեմն ան կը խօսի նաեւ մեր անունով: Հոթոյեանի բառապաշարը հարուստ է, բայց աւելի հարուստ են անոր զգայնութիւնները:

«Որոշեցի ի մի հաւաքել պատանեկան տարիքէս մինչեւ ծերութիւն գրուած բանաստեղծութիւններն ու ձօները» կ'ըսէ ան գիրքին նախաբանին մէջ, յայտնի դարձնելով, որ այստեղ հրատարակուածներուն մէկ մասը տեղ գտած են նախորդ հատորներու մէջ եւս: Բայց անոնք հոս հիմա մէկտեղուած են գիրար ամբողջացնելու համար:

Հեղինակը բարի եղեր է իր գիրքին որպէս յառաջաբան հրատարակել «Մարմարա» մէջ 2011 թուականին հրատարակուած մեր մէկ գրախօսականը, որ կոչուեր է «Գրիգոր Հոթոյեան կ'երգէ երաժշտութեամբ ու բանաստեղծութեամբ»: Հայրենասիրական բոլոր նիւթերու ու վայրերու մասին մաշտոցեան բառերով հիւսուած երգ մը ունի ան: Այո, երգերուն մէջ իրարու ձեռք կու տան ազգային, պատմական, քաղաքական, եկեղեցական ու մշակութային ապրումներէ ներս գրի առնուած քերթուածներ, «սրտայոյզ խոկումներ», զաւակներու ու թոռներու ձօնուած մաղթերգութիւններ եւ դեռ շատ բան: Թէ ինչպիսի պաշտամունք ու լեզու ունի Հայաստանի հողին ու պատմութեան նկատմամբ, կարելի է գաղափար կազմել կարգալով տողեր բանաստեղծութենէ մը, որ նուիրուեր է Սասունի ու նուիրուեր է նոյն անունը կրող գրագէտ Սասուն Գրիգորեանին: Այս երկարաշունչ բանաստեղծութեան մէջտեղերէն քանի մը տող կարգանք բարձրաձայն.

Ողջո՛յն Սասուն,  
Իմ հայրենի չքնաղ երկիր,  
Եղեմական իմ հայրենիք:  
Քեզ կը սիրեմ երակներէս ինձ կեանք տուող  
Սասունական ազատատենչ արեան կանչով,  
Հայրենապաշտ զգացումով,  
Անհուն սիրով, պաշտամունքով:  
Քեզմով կ'ապրիմ ես ամէն ժամ,  
Ամէն վայրկեան:

Գիրքը, որ ընդհանրապէս իւրաքանչիւր նիւթի տակ կը դնէ նաեւ այդ նիւթին կամ հոն խօսուած անձին մասին լուսանկար մը, այս կերպով կը դառնայ ընտանեկան ալպոմ մը, բայց ոչ միայն Հոթոյեան ընտանիքի ալպոմ, այլ նաեւ ամբողջ Հայ ազգի ընտանիքի ալպոմ: Հետաքրքրութեամբ կը կարդացուին նաեւ գիրքին վերջին մասերուն մէջ դրուած ու զանազան անձնաւորութիւններէ եկած ողջոյնի ու գնահատանքի նամակներն ու գրութիւնները:

Գիրքը ունի շատ գեղեցիկ կողք մըն ալ, որ պատրաստուեր է Մերուժան Խաչատրեանի կողմէ: Կողքի նկարը արդէն շատ բան կը բացատրէ ներսի բովանդակութեան մասին:

Հեղինակին նկատմամբ, շնորհաւորական մեր խօսքին առնթեր, ունինք նաեւ շնորհակալութեան անձնական խօսք, քանի որ ան շատ խանդավառ բանաստեղծութեամբ մը մեծարեր է նաեւ մեր անձն ու մեր գրականութիւնը: Քովի սիւնակներուն մէջ նոյնութեամբ կ'արտատպենք մեր մասին գրուած այդ խանդավառ բանաստեղծութիւնը:

Սրտանց կը մաղթենք, որ մեր սիրելի Հոթոյեանին սիրտն ու միտքը տակաւին երկար ատեն լուսաւորուին «ոգեշունչ քերթուածներով ու ձօներգութիւններով»:

Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆ

«Մարմար»

16 Նոյեմբեր 2017



Սիրելի՛ Պրն. Հոթոյեան,

«Ոգեշունչ Քերթուածներ Եւ Ձօներգութիւններ» գիրքին հրատարակութեան առթիւ փոխան գրախօսականի գրած յօդուածս՝ «Ալ ինչո՞ւ կ'ապրիմ, եթէ պիտի չգրեմ» խորագրով, տպագրուած էր «Մարմար» թերթի 23 Նոյեմբեր 2017-ի թիւին մէջ, որ ինծի համար հաճելի անակնկալ մըն էր: Անշուշտ այս յօդուածի կատարելութեան գործին դուք մեծ երախտիք ունիք:

Ակամայ կը յիշեմ սփիւռքահայ գրականութեան խոշորագոյն գրողներէն մէկուն՝ Յակոբ Մնձուրիի հարցը. «Ուրեմն ինչո՞ւ կը գրենք...»: Եւ իր իսկ պատասխանը՝ «Որովհետեւ չենք կրնար չգրել, կու գան...»:

Գրողին համար գրելը բնական արարք մըն է, ինչպէս արեւը կը ծագի ամէն օր:

Պրն. Հոթոյեան, կը հաւատամ, որ դուն ալ գրելով՝ հայրենասիրական ակտ մը կատարած եղար, ուժերուդ ներած չափով սատարեցիր մեր ոսկեղնիկ լեզուի պահպանման ու տարածման: Զեր բոլոր գիրքերը մեղուաջան աշխատանքի արդիւնք են, անձնական յարաբերութիւններու, գրական լայն կապերու արդիւնք: Դուք գրող եւ բանաստեղծ էք, քանի որ մեր ամէնօրեայ գորշ, շահամոլական կեանքէն բարձրացուցիք այնպիսի կերպարներ, որոնք երբեք չեն նսեմանար, որոնց դուք անմահութիւն տուիք: Քաջերու սերունդները միշտ քաջ կ'ըլլան: Հոթոյեանական գրչին տակ կայ արիւն, աւիւն, ծուէններ. անոր համար է, որ կը յուզուին եւ կը յուզեն:

Պրն. Հոթոյեան, Ձեր միտքերը եւ գրածները ինծի համար եղած են միշտ արժէքաւոր, իսկ Ձեզի համար Ձեր գիրքերը հսկայական ուժ են: Յովհաննէս Թումանեան ըսած է. «Ի՞նչ կայ աւելի լաւ բան, քան գիրքն ու գրականութիւնը»: Եւ վերջապէս, Ձեր բոլոր գիրքերը եղան պարզ, սահուն, ջինջ ու անմիջական, ջերմ ոճով թելադրուած:

Պրն. Հոթոյեան, ապրեցար ու գրեցիր այնպէս, որ ծերութեանդ օրերուն ունեցար վերյիշելու գեղեցիկ բաներ:

Նոր Տարուայ եւ Ս. Ծննդեան սեմին կը մաղթեմ քեզի եւ թանկագին Շաքէին խաղաղ, ուրախ եւ առողջ կեանք:

Մշտապէս Ձեզ յարգող՝  
ՍԵՂԱ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ

20 Դեկտեմբեր 2017



Յակոբ Ճանպազեան Գրիգոր Հոթոյեանին կը յանձնէ Հայ Երէցներու Ընկերակցութեան գնահատագիրը՝ 6 Մայիս 1996-ին



**ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ  
ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐ**



Գու՛ք կեանքի երկնակամարին վրայ կանգնած՝  
Այն ոսկիաճաճանչ կանթեղն է՛ք,  
Որուն մէջ լեցուցած եմ երակներէս ժայթֆող արիւնը.  
Իմս ես դուն, իմ արեանս մէկ մասնիկը,  
Արիւնովս լեցուն ոսկի կանթեղ,  
Սիրովս լեցուն հսկայ կանթեղ,  
Հաւատովս լեցուն աստուածացած կանթեղ՝  
Պարոն Հոթոյեան:

Որդիաբար՝  
ՀԱՅՐ ՄԵՂՐԻԿ

\* \* \*

Մեծայարգ Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Շաֆէ Հոթոյեան  
Որ ի Թորոնթօ — Գանատա.

Սիրելի, անմման եւ կարօտալի Պարոն Գրիգոր եւ Տիկին Շաֆէ.

*Շնորհաբաշխ, շնորհալից եւ շնորհընկալ  
Նոր Տարուան  
Ու Սուրբ Ծննդեան  
Բենատես<sup>1</sup> տօներուն առիթով,  
Հոգիիս ամենաջերմ զգացումներով,  
Արեւին պէս գեղեցիկ տեսնելով ձեզ,  
Իւղենիին<sup>2</sup> պէս մաքուր եւ բարի ձեր հոգիներուն  
Ուրախութիւն կը մաղթեմ եւ  
Բախագուարճ<sup>3</sup> օրեր՝ Աստուծմով գեղեցկացած:*

*Նագովրեցի՝ մեծագոյն ուխտաւոր, մանուկ Յիսուսին ընծայած  
Ոգեպինդ, յոյսերով լեցուն եւ  
Բենական<sup>4</sup> օրհնութեամբ կեանք Ձեր ընտանիքին:*

*Տարիներուս ամէնէն գեղեցիկ օրերուն եւ պահերուն համար  
Անհունօրէն երախտապարտ՝  
Բահետացած<sup>5</sup> մտքովս սիրագեղ եւ  
Իմովսանն<sup>6</sup> աղօթքով ձեզի են մաղթանքներս սիրալից:*

*Երկնաբերձ<sup>7</sup> օրերու ակնկալութեամբ,  
Իհւսապայծառ<sup>8</sup> երկինք կը մաղթեմ ձեր կեանքին վերեւ:*

*Սրբութեան, Շնորհքի, ճշմարտութեան եւ յաւիտենականութեան հոգի,  
Որդեգրութեան, կեանքի, հաւատքի հոգի,*

՚Իրախուլթեան<sup>9</sup>, խոստման, փառքի հոգի,  
Րամաթուիչ<sup>10</sup> մխիթարութեան, Իմաստութեան եւ յայտնութեան հոգի,  
Բոլորի՛դ, բոլորի՛դ Հօր Աստուծոյ եւ մանկացեալ Յիսուսի Հոգին կը  
մաղթեմ:

Ծննդեան այս շնորհապայծառ եւ  
Նոր Տարուան շնորհատեսլութեամբ օծուն օրերուն՝  
Ողջոյն եւ բիւր օրհնութիւն ձեզի,  
Իւթեղինագուարթ<sup>11</sup> հարազատներ,  
Նոքայանալու<sup>12</sup> ամենաջերմ մաղթանքով ու  
Դարգայանալու<sup>13</sup> անսպառ յոյսով՝

Բոլորիդ պաշիկներ:

Ողջոյններա ձեր որդւոյն, դստեր, ամուսնոյն եւ տղոց:  
ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ:

Միշտ Ձերդ  
Աղօթահայց մաղթանօք աղօթամատոյց



ՄԵՂՐԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

2017-2018

Անթիլիաս-Լիբանան

<sup>1</sup> Աստուածատես:

<sup>2</sup> Ձիթենի:

<sup>3</sup> Ուրախագուարճ:

<sup>4</sup> Աստուածային:

<sup>5</sup> Արահետ:

<sup>6</sup> Կրցածիս չափ:

<sup>7</sup> Մինչեւ երկինք բարձրացած:

<sup>8</sup> Պայծառապէս հիսուած:

<sup>9</sup> Ուրախութեան:

<sup>10</sup> Աստուածաթուիչ:

<sup>11</sup> Մարդու եւ հրեշտակի յատկութիւն ունեցող:

<sup>12</sup> Փայլք, հանճար:

<sup>13</sup> Իմաստութեան գոհար:



Երեւան, 18 Մայիսի 2005թ.

Իմ քաղցր գրչեղբայր,  
Սիրելի իմ Գրիգոր, մեր Գրիգոր,

Որքան ժամանակը եւ տարածութիւնը հեռանում են, այնքան դու վեհանում ես աչքիս, ես այսօր քեզ հոգու աչքերով դիտեցի, երբ կարդացի քո «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գիրքը: Մարդ Աստծոյ, թաքնուած տաղանդաւոր արձակագիր, հոգեբան, նուրբագագ մանկավարժ-դաստիարակ եւ լուակեաց վրիժաւու սասունցի տեսայ ես ձեր այս աշխատութեան մէջ: Էլ չեմ ասում, թէ ինչ քաղցր յուշագրութիւն եւ ազնուացնող հոգեկերպարներ տեսայ: Ձեմ ուզում առանձին-առանձին հոգեկերտ վանկներով ծալքերը նամակով բանալ, քանզի այն էլ աւել ազնիւ մեկնութեան է արժանի...

Շնորհակալ եմ Վրէժին պատուէրդ տեղ հասցնելու համար: Մեծ ցաւ զգացի, որ այս՝ 14-րդ ՀԳՄ համագումարին չպիտի մասնակցես, ինչն՞... ասացին, որ արտերկրից միայն տեղի ԳՄ պատասխանատուներն են հրաւիրուած: Ինչեւէ: Դու միշտ ինձ հետ ես. իմ սրտում, իմ մտապատկերում, իմ արեան եւ ինքնայրումի մէջ: Ուրիշ տեսակ սասունցի կա՞յ... Ա՛խ, երնէկ գնայինք էրգիր: Վառուում եմ կարօտից եւ աշխարհի հզօրների թատերական-քաղաքական խաղերից. ճիշդ է ասուած. «Միայն գէնգով կայ հայիս փրկութիւն»:

Արի, արի, արի քո 80-ը եւ իմ 70-ը 2007-ին սասունցնակ նշենք: Գրքեր գրում եմ, թէ՛ չափածոյ եւ թէ՛ փաստագրական: Պատրաստ է տպագրութեան իմ «Մուսանները Չլուեցին» գրքի II հատորը (2-րդ Աշխարհամարտի մասնակից եւ զոհուած հայ գրողները), իմ քերթուածների նոր ու անտիպ «Աւօրեայ Յաւերթեր» ժողովածուն (650 էջ) եւ էլի մի քանի աշխատութիւններ, բայց ե՞րբ լոյս աշխարհ կը գան՝ չգիտեմ, որովհետեւ որքան բեղուն է գրիչս, այնքան աղքատ է գրպանս:

Լաւ ենք, փառք Աստծոյ: Մարին մի կերպ ետլա է գնում, ես էլ՝ հետը: Մհերը եւ իմ աստուածային թոռները իմ հոգեբարոյական եւ ազգաշարունակ սնունդ են: Մեռնեմ իրենց:

Մէրս, կարօտս, համբոյրներս փոխանցիր քո ընտանիքին:

**ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ**

Բանաստեղծ, պատմաբան, հեղինակ,  
«Ուխտատուն» թանգարան-հիմնարկի տնօրէն



*Սիրելի Պր. Գրիգոր Հոթոյեան,*

2012 թուականը ինձի ու ընտանիքիս համար շատ ալ բախտաբեր չեղաւ: 6 Յունուարին, Ս. Ծննդեան օրով կրիփալ վիճակ մը ունեցայ, հիւանդանոց գացի ու գլխուս բազմաթիւ գործեր բացուեցան, քննութիւններ ու քննութիւններ, կասկածներ եւ այլն. բաւական սիրտ մաշեցուցի: Յետոյ բժիշկները որոշեցին քիչ մը սպասել ու յետոյ դարձեալ քննել: Եւ այս բոլորը կարծես չէին բաւեր, այս անգամ ալ կիսս վիրաբուժական գործողութեան ենթարկուեցաւ, քանի մը օր անոր ընկերացայ հիւանդանոցին մէջ մնալով: Սա օրերուն ամէն ինչ աւելի լաւ է, կիսս բարւոքած է, իսկ իմ մասին քննութիւնները մօտ օրէն պիտի շարունակուին, բայց կը կարծեմ, որ մտահոգուելու բան չկայ: Բայց այս բոլորը կը գրեմ յայտնելու համար, որ պարբերաբար բացակայեցայ իմբագրատունէն, իսկ երբ չէի բացակայեր, այս անգամ ալ տրամադրութիւններս խանգարուած էին: Ասոր վրայ աւելցնենք կարգ մը շատ մօտիկ ընկերներու ծանր հիւանդութիւնը: Ասոնցմէ ամենակարեւորն է մեր սիրելի բանաստեղծ ու իմ աւելի քան յիսուն տարուան գրչեղբայր Զարեհ Խրախունիի վիճակը: Աւելի քան քառասուն օր է ի վեր խտացեալ խնամքի բաժնի մէջ կը դարմանուի յուսահատօրէն, գործողութեան մը հետեւանքով կը տառապի փնէօմոնիէ, վիճակը դժբախտաբար լաւ չէ: Կ'աղօթենք, որ յաղթահարէ:

Այսօր որոշեցի ձեզի գրել տրուած ըլլալով, որ վերջերս ձեզմէ ստացած էի ձեր գիրքերը, նաեւ նամակ մը, որուն կցուած էր Արմէն Տոնոյեանի մէկ նամակն ու յօդուածը: Ձեմ ուզեր, որ իմ մասիս ժխտական կարծիք ունենաք եւ մտածէք, որ չեմ իսկ պատասխաներ իմ բարեկամներուս, կամ ինձի զրկուած սիրալիր նամակներու: Բայց չէք կրնար երեւակայել, թէ որքան բազմազբաղ եմ եւ թէ երբեմն բնաւ տէր չեմ իմ կամքիս: Իմբագրի աշխատանքը կը պարտադրէ, որ ամէն բանի նայինք երկրորդականի աչքով ու առաջնակարգ նկատենք թերթը հրատարակելու ստիպողական պարտականութիւնը: Մնաց որ, գոնէ իմ պարագայիս, կը հաւատամ, որ մարդիկ իրենց բարեկամներուն ու սիրած մարդոց հետ թղթակցիլ, խօսիլ, գործակցիլ եւ այլն կ'ուզեն երբ լաւ տրամադրուած են, իսկ երբ տրամադրութիւնները լաւ չեն, կարծես այդ բոլորը կը յետաձգուին աւելի լաւ ժամանակի մը ու աւելի լաւ տրամադրութեան մը:

Մենք մեր թերթին հասցէին ամէն օր անհամար գիրքեր կը ստանանք ու քառասուն տարի է ի վեր մերժած եմ գիրքերուն համար միայն մէկ տողով «Ստացանք» մը գրել, ինչպէս երկար տարիները-

րաւ անմոռանալի «Յառաջ» թերթի խմբագրութիւնը: Ես, ճիշդ կամ սխալ, ամօթ նկատեցի ինծի զրկուած գիրքի մը մասին պարզապէս «Ստացանք» մը գրել, միմիայն անուներ տալ ու անցնիլ: Ես միայն խմբագիր չեմ, այլ նաեւ գրող եմ, գրող մը, որ միայն իր գրածին չի նայիր, այլ կը նայի նաեւ ուրիշներու գրածին: Գրականութեան սիրահար մարդ եմ: Ուստի, որպէս խմբագիր, միշտ ուզեցի ինծի զրկուած գիրքերու մասին կարճ ալ ըլլայ, ծանօթացման գրութիւններ կամ լաւագոյն պարագային՝ երկարաշունչ գրախօսականներ գրել: Բայց ատոր համար պէտք է, որ գիրքը ուսումնասիրուի: Նոյնիսկ եթէ չես կրնար գիրքը ծայրէ ծայր կարդալ, գիրքը ճանչնալու միջոցներ կան եւ ես յաճախ կ'ուզեմ դիմել այդ միջոցներուն, նայիլ թէ ինչ է գիրքին բովանդակութիւնը, ինչ է հեղինակին ոճն ու ճաշակը, եւ այսպիսի բաներ: Ձեր գիրքերէն մէկուն մասին գրած եմ արդէն, միւսներուն մասին ալ պիտի արտայայտուիմ երբ որ երջանիկ ժամանակը գայ: Միայն թէ ես իմ բարեկամներուս կ'ըսեմ, որ ինծի զրկուած գիրքերուն բոլորն ալ, անոնց մասին գրախօսական կամ ծանօթացման գրութիւն գրեմ կամ չգրեմ, իրենց տեղը ունին, ոչ մէկը պարապ տեղ զրկուած կ'ըլլայ ինծի, ես օր մը անպայման կ'օգտագործեմ զայն այդ գիրքին մասին խօսելով, այդ գիրքէն արտատպում մը ընելով կամ իմ աշխատասիրութիւններուս նիւթ դարձնելով: Ինծի զրկուած գիրքերը առնուազն երկու տարի աշխատասեղանիս վրայ կը դրուին, նախ քան գրադարանի մէջ տեղաւորուիլը: Եւ, չեմ գիտեր թէ ճիշդ պիտի հասկընա՞ք զիս, ես քիչ մը չեմ սիրեր գիրքերը գրադարանի մէջ տեղաւորելը: Գիրքը գրադարանի մէջ տեղաւորելը առաջին քայլ մըն է այդ գիրքը մոռնալու համար: Եթէ հիմա սա պահուն հրաշքով մը Պոլիս գայիք ու այցելէիք մեր խմբագրատունը, պիտի տեսնէիք, որ իմ երկու աշխատասեղաններս կ'քելու չափ բեռնաւորուած են վերջին մէկուկէս տարուան ընթացքին ինծի զրկուած գիրքերով: Ձերիններն ալ անոնց մէջ պատուոյ տեղ ունին իրենց այլազան բովանդակութեամբ:

Արմէն Տոնոյեանի յօդուածը, որ ուրուագիծ մըն է ամերիկահայ գրականութեան մասին, կարծես քիչ մը աճապարանքով գրուած է, բայց հեղինակը արդէն գրած է, որ ասիկա ակնարկներու յօդուած մըն է: Մօտ օրէն պիտի հրատարակեմ այդ յօդուածը, որովհետեւ օգտակար տեղեկութիւններ կու տայ: Տոնոյեանը ճանչցած եմ Ամերիկայի մէջ, ինչպէս կը գրէ իր նամակին մէջ, անմոռանալի հանդիպումներ ունեցած ենք, ձեռնարկներու մասնակցած ենք: Կը գրէ, որ «Նաւասարդ» դադրեցաւ դժբախտաբար: Արդէն ես չէի տեսներ այդ հրատարակութիւնը ու գաղափար չունէի, թէ կը շարունակուէ՞ր թէ ոչ: Ատեն մը ամերիկահայ գրականութիւնը ինծի համար սփիւռքահայ փառաւոր գրականութիւն էր արեւմտահայերէնով: Հիմա, քանի մեկնեցան սփիւռքահայ մեր հին սերունդի վաւերական գրողները, այնքան հայաստանցիներ եկան գրաւել անոնց տեղերը ու այս անգամ

արեւմտահայերէնն ալ իր տեղը թողուց արեւելահայերէնին: Ես արեւելահայերէնի դէմ չեմ, շատ կը սիրեմ, բայց ինծի համար սփիւռքահայ գրականութիւնը պէտք է ըլլայ արեւմտահայերէն, որովհետեւ կարծես Աստուած ու հայ ժողովուրդին բախտը այնպէս տնօրիններ են, որ արեւմտահայերէնը պաշտպանուի միայն Սփիւռքի մէջ գործող գրագէտներու, բանաստեղծներու ու թերթերու կողմէ: Իսկ հիմա մեր գրական հրապարակը, մեր եկեղեցիները, մեր ընկերային ապրումները ողողուեցան արեւելահայերէն խօսող քոյրերով ու եղբայրներով: Որքան լաւ կ'ըլլար, որ անոնք յարգէին նաեւ արեւմտահայերէնին գոյատեւելու իրաւունքն ու հրամայականը:

Ինծի այնպէս կը թուի, թէ խօսելու շատ բան ունինք ձեզի հետ, բայց արտօնեցէք, որ այս նամակը հոս վերջացնեմ, սիրելի Պր. Հոթոյեան: Արտօնեցէք նաեւ, որ ձեզմէ խնդրեմ, որ ներողամիտ գտնուիք եթէ երբեմն ուշանամ պատասխանելու նամակներու կամ գիրքերու: Հաւատացէք, որ նոյնիսկ եթէ գրաւոր նամակ չգրեմ, մտքիս մէջ նամակ կը գրեմ: Այսպիսի սովորութիւն ունիմ, մի խնդաք: Երբ նամակ մը կը ստանամ, առաջին հինգ վայրկեանի մէջ արդէն մտքէս նամակ մը կը շինեմ: Եւ ինչ մեղք, որ յաճախ այդ նամակը հոն կը մնայ որպէս միտք, նաեւ կարօտ, ու իրական նամակ չի դառնար: Ասիկա ճակատագիր մըն է ինծի համար:

Սիրով կ'ողջունեմ ձեզ եւ կ'ուզեմ աւելցնել, որ ձեր հրաշալի խորագրով գիրքին ըսածին պէս՝ մեզի պէս մարդիկ այլեւս կարծես «անցեալի յուշերով կ'ապրինք», այնքան լաւ բարեկամներ ու ապրումներ ունեցանք անցեալի մէջ: Բայց եկէք նաեւ գուրգուրանք ներկային վրայ եւ ներկան ալ լեցնենք այն գեղեցիկ ապրումներով, որոնք վաղը մեր յիշողութեան ատաղձը պիտի դառնան:

Սիրալիբ զգացումներով

ՌՈՊԷՐ ՀԱՏՏԷՃԵԱՆ

Խմբագրապետ, գրագէտ,  
արձակագիր, հրապարակագիր

\*  
\*\*

Պոլիս, 27 Ապրիլ 2012

Սիրելի Պր. Հոթոյեան

Իսկապէս շատ մեծ ուրախութեամբ կարդացի այն հրաշալի բանաստեղծութիւնը, զոր գրի առած էք համեստիս Մեսրոպեան ծառայութիւնը գովերգելու համար: Ես ու գլխաւոր օգնականուհիս՝ Մաքրուհի Յակոբեան, քանիցս կարդացինք ու հիացանք ձեր գրելու ոճին ու ձեր ազնիւ մերձեցումին վրայ: Ես նմանօրինակ գովեստներ փրնտ-



ուողը չեմ, նոյնիսկ անհանգիստ կ'ըլլամ անոնցմէ, բայց ճշմարտութիւն է նաեւ, որ մարդ շատ կ'ուրախանայ երբ կը տեսնէ որ, մինչ իր քթին տակ գտնուողները արժանի հասկացողութիւնը ցոյց չեն տար, ամէնէն հեռուոր հորիզոններու վրայ կը գտնուին գնահատողներ: Այս գնահատանքին արժէքը դրամով չի չափուիր եւ դիւրին ալ չի մոռցուիր:

Դուք ալ Մաշտոցի արժանաւոր աշակերտ էք ձեր պատկառելի գիրքերով, եւ ձեզի պէս մէկը երբ այսքան գեղեցիկ տողեր գրի կ'առնէ իմ մասիս, ատիկա կրկնապէս կը բարձրացնէ գրուածին արժէքը:

Ինչ մեղք, սիրելի Հոթոյեան, որ, ինչպէս բոլորս գիտենք, հակառակ շնորհալից յայտարարութիւններու ու հանդիսութիւններու, հակառակ Հայաստանի մայրաքաղաքը գիրքի մայրաքաղաք հռչակելու, հակառակ գրական համագումարներու, հակառակ Անթիլիասի մէջ ալ տարին գիրքի տարի հռչակելու, ասդին, Սփիւռքի մէջ գիրքերու երեսը նայող չկայ: Երեւանը եթէ տասն անգամ ալ գրքի մայրաքաղաք դառնայ, ատիկա պիտի ծառայէ միայն անմիտ ինքնախաբէութեանց ու երեւոյթները փրկելու աճաբարութեան: Մայրաքաղաքը գրքի կեդրոն հռչակողները հետաքրքրուած իսկ չունին, թէ Սփիւռքի հայ գրողը ի՞նչ գիրք կը հրատարակէ եւ ի՞նչ գոհողութեանց գնով կը հրատարակէ, յիշատակութիւն մը իսկ ընել չեն ուզեր, որովհետեւ արդէն լուր չունին:

«Ողջոյն արեւիդ, Ռոպէր Հատտէճեան» գրեր էք, սիրելի Հոթոյեան: Ես ալ կ'ողջունեմ ձեզ լուսաւորող արեւը, որուն ճառագայթներուն մէջ Մեսրոպեան շող մը ու փայլ մը կայ: Դեռ կը խօսինք իրարու հետ, բայց այս նամակը ընդունեցէք որպէս եղբայրական շնորհակալութեան խօսք:

Բարի աշխատանք ձեզի՝

Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆ

\* \* \*

Իսրայիլ, 21 Մայիս 2016

Սիրելի Պր. Գրիգոր Հոթոյեան,

Շնորհակալ եմ ձեր գնահատանքի սիրուն նամակին համար, ինչպէս նաեւ 100 տողարի գումարին համար, գոր դրկած էք «Մարմարա»ի: Ես շատ ուրախ եմ, որ ունիմ ձեզի նման բարեկամ մը: Մենք փոխադարձաբար կը գնահատենք մէկգմէկու ծառայութիւնը հայ գիրի ու մշակոյթի կալուածէն ներս:

Ես ալ ձեզի կը մաղթեմ առողջութիւն ու բեղուն աշխատանք:

Սիրալիւր զգացումներով

Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆ




Դեկտեմբեր 21, 1987  
Քրնեթիֆըք

*Սիրելի Գրիգոր Հոթոյեան,*

*Հաճոյքով կարգացի «Սիրտը Ափին Մէջ» քերթուածներիդ գիրքը:*

*Թէեւ մամուլի մէջ մերթ ընդ մերթ հանդիպել էի բանաստեղծութիւններիդ, սակայն ամբողջութիւնը եղաւ աւելի տըպաւորիչ, աւելի գգլխիչ: Այդ որքա՛ն հարուստ ներաշխարհ ես ունեցել: Այդքան սէր ու կարօտ ինչպէ՞ս ես պարփակել սրտիդ մէջ: Սիրեցի թէ՛ հայրենասիրական երգերդ եւ թէ՛ սիրային տազնապներդ: Որքան բոցաշունչ են յեղափոխական երգերդ, նոյնքան տրտմանոյշ են անձնական տուայտանքներդ: Չեմ կարող ասել, թէ ո՞ր երգերը աւելի նախընտրեցի, որովհետեւ իւրաքանչիւր երգ ունի իր ուրոյն կառոյցը, տրամադրութիւնն ու յոյզը:*



*Ես ծանօթ էի քո հրապարակագրական յօդուածներին ու հաղորդագրութիւններին, սակայն այս գրքի մէջ է, որ տեսայ քո գեղեցիկ հայերէնը՝ միանգամայն հասուն, ճկուն ու հարուստ: Ուրեմն, կեցցէ՛ Հալէպը, որ քեզ պէս բանաստեղծ է տուել: Այլեւս ես Թաւրիզով չպիտի հպարտանամ:*

*Այս բոլորն ասում եմ ասած լինելու համար, որ ըմբոշխնեցի գիրքդ, որ շնորհակալ եմ քո երգերը ինձ հետ բաժանած լինելուդ համար եւ որ գրիչդ միշտ դալար մնայ:*

*Առիթից օգտուելով շնորհաւորում եմ Նոր Տարիդ եւ Սբ. Ծնընդեան տօները՝ քեզ ու ձերոնց մաղթելով առողջութիւն ու երջանկութիւն:*

*Ընկերական ջերմ բարեկներով՝*

**ՅԱԿՈՒ ԿԱՐԱՊԵՆՑ**

*Արձակագիր*



*Սիրելի ընկ. Գրիգոր Հոթոյեան,  
 Ժամանակին ստացած եմ բանաստեղծութիւններդ, նմանապէս  
 Եդուարդ Մսրըլեանը ուղարկած էր օրինակներ, զորս արժանաւորնե-  
 րու նուէր տուած եմ:*

*Նախ ուրախ եմ, որ նման նախաձեռնութեան մը եղած ես: Ես  
 միշտ հաւնած եմ անձը եւ քու հոգիիդ մէջ գտած եմ այն հարազա-  
 տութիւնը, որ կու գայ մեր երկրի արեւէն: Տողերդ կու գան անսեթե-  
 ւեթ ապրումներէն եւ անոնց երգային հէնքը ցոյց կու տան պաճու-  
 ճանքագերծ այս երկնումներդ, որոնք աւելի զգայնութիւններ են ա-  
 ւելի, ապրումներ են առիթները եղանակի եւ գրելու բերող:*

*Ես առաջին մէկ օրէն, հաւանաբար տասեանի մը տարիներ առաջ,  
 մօտդ գտած եմ հեռաւոր ընկերը, որ գիտէ ուրախանալ ընդհանրա-  
 կան յաջողութիւններով: Այս ապրումն էր, որ ունեցայ գիրքդ ամ-  
 բողջութեամբ մի քանի անգամ կարդալով: Որքան լաւ կարգադրու-  
 թիւն ըրած էք մեր երգային գրականութիւնը ճոխացնելով: Ես վստահ  
 եմ այս մասին Հայաստանը եւս պիտի ուրախանայ, եթէ անշուշտ  
 կարգ մը մարդիկ իրենց մէջէն վանեն սփիւռքահայր ստորագնահա-  
 տելու սովորութիւնը:*

*Ինչո՞ւ չես աշխատակցիր «Նաւասարդ»ին:*

*Ուրախ պիտի ըլլայի, եթէ փափաքէիր ստանալ մեր ամսագիրը եւ  
 երբեմն նաեւ գանատահայ գրականութեան մասին գրէիր մեզի:*

*«Հորիզոն»ի մէջ յաճախ պէտք է երեւիք, ձեզմէ գատ քիչ կան, որ  
 այդ ափերուն հայ գրականութիւնը կանգուն կը պահեն:*

*Մնացեալը կը կարդաս «Նաւասարդ»ին մէջ:*

*Համբոյրներով՝*

*ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ*

*Գրող, պատմաբան, հրատարակիչ,  
 խմբագիր «Նաւասարդ» ամսագրի,  
 դաստիարակ*

20 Յուլիս 2004  
 Լոս Անճելոս

*\*\**

Մարտ 26, 2005

*ՍԻՐԵԼԻ ԸՆԿ. ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ*

*Սիրելի ընկերս,*

*Նամակ գրել, որտեղէ՞ն սկսելով: Սկսիլ թորոնթոյի մեր հանդի-*

պում-զրոյցէ՞ն, որուն հազիւ թէ տեղ տուն «Հորիզոն»ի խմբագիր-ները:

Սկսիլ այն հանդիպումէ՞ն, որ զիս տարաւ Հալէպ, «Արեւելք»ի տպարանը, ուր, դողդողալով, կազմած մի քանի էջերը հատորիկի վերածելով ձեր խնամքին կը յանձնէի, այն հպարտութեամբ, թէ մեծ գործ մը կատարած եմ:

Սիրելի ընկ. Գրիգոր, երեւակայէ, որ այդ պատանեկան օրերուս, այդ էջերու գիրքի վերածումով աւելի երջանիկ էի քան հիմա, որ տպարանէն պիտի բերեմ 50-րդ հատորս: Չեմ գիտեր Հալէպն էր, միջավայրն էր, տարր՞քս էր, թէ լիցքաւորուած յոյսս էր մեծ բան մը ըրած ըլլալու յաւակնութեամբ:

Հալէպի օրհնութիւնը ժամանակին հետ գնաց, ու մենք՝ դուն ու ես եւ մեզի պէսները ինկանք այս գլանին տակ՝ Ամերիկա կոչուող դրախտային արշակաւանին մէջ, ուր գոնէ մենք, գրողներս, կուսակցականներս, խմբագիրներս բանայինք մեր սրտերը ուրախութեամբ, ծափերու վերածէինք մեր սրտի տրոփները, հաւատայինք գրի զօրութեան, այդ հաւատքով վարակէինք զիրար:

Կրնաս երեւակայել, կը հաւատա՞ս սրտային զրոյցի: Վստահ եմ կը հաւատաս, երբ հեռաձայնով ձայնդ եթերը անվախ կտրելով կը հասնէր ինծի, ուրախութենէս յուզումը պատեց էութիւնս: Եւ յանկարծ երազեցի Սուրիան, որ եղանակաւորուեցաւ ազնուականօրէն:

«Արաբական ազնիւ երկիր, չճնադագեղ իմ Սուրիա,  
Ուր ծնած եմ եւ անցուցած կեանք մը ամբողջ հայօրէն»:

Էհ, այս երգը բոլորիս կը պատկանի, երբ Ամերիկան եւ Գանատան՝ մեր այս տարիքներուն դեռ կը դառնան մղիչ թրթիռները երթալու Սուրիաները, Հալէպները:

Սիրելի ընկերս, ՆԱԻԱՍԱՐԴ ամսագիրը, անոր առընթեր ՀԱՅ ԲՈՅՓը եւ հազարումէկ մեծ ու փոքր պարտաւորութիւնները, ժողովուրդին անշնորհակալ վերաբերմունքները, աթոռ գրաւող մարդոց յիշաչար զգացումները չեն կրցած եւ պիտի չկրնան մեզ թեքել մեր բռնած ուղերնթացէն:

Այս առթիւ կը մտածէի քեզի ուղարկել իմ կարեւոր ուսումնասիրութիւններէս մէկը, որ կը կոչուի ՀԱՅԵՐԷՆ: Ծաւալուն այս ուսումնասիրութիւնը պատրաստած էի Հայաստանի մէջ իմ դոկտորականս պաշտպանելու, աւելի քան 15 տարիներ առաջ, բայց ազատ մտածողութիւնը, ազատախոհութիւնը տակաւին չէր դարձած մտաւորականներու եւ լեզուաբան-մասնագէտներու մտահոգութիւն, ուստի թեւադրեցին քաշել եւ անոր տեղ էր, որ յետոյ ԱՄԵՐԻԿԱ ՀԱՅ ԳՐԱ-ԿԱՆՈՒԹԵԱՆ նիւթին վերադարձայ:

Սիրելի ընկերս, այս առիթէն օգտուելով միտքս եկաւ, որ Գանատայի ձեր տպագրական պայմանները շատ աւելի նպաստաւոր են. յե-

տոյ ես այնտեղ հայրենակից մօտիկ հալէպցի բարեկամներ ունիմ՝  
Զաւէն Սարգիսեանը եւ իր ընտանիքը, որոնք հաւանաբար պիտի  
ուզէին նման հատորի մը հրատարակութեան մեկենասները ըլլալ: Ե-  
թէ նման մտածողութիւն մը զարգացնենք, ես կրնամ հատորին բնու-  
թագրութիւնը կազմել եւ ուղարկել, այս յոբելինական թուականին  
գոնէ հայութիւնը փայլի հրատարակութեամբ մը:

Է՛հ, սիրելիս, ծանրաբեռնեցի քեզ: Նաեւ կարգ մը գիրքեր կ'ու-  
ղարկեմ ըստ քու թելադրութեանը, ինչպէս եւ կը խնդրեմ, որ ձեր կամ  
Մոնթրէլի գրատարածը, որուն ուղարկած եմ գրքեր, դուրս բերէ եւ  
վաճառքի ենթարկէ՝ լուծելու համար այդ ճղճիմ հաշիւը:

Իսկ եթէ հարց տաս ՆԱԻԱՍԱՐԴի մասին, յայտնեմ, որ նիւթա-  
կան բեռը զիս մղեց, որ զայն վերածեմ ԿԻՍՍՄԵԱՅ ՏԱՐԵԳԻՐՔԻ:  
Այդ մասին յաջորդին:

Համբոյրներով՝

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ

\* \* \*

Սիրելի ընկերս Գրիգոր Հոթոյեան,

Օտար արեւներու տակ կը ջանանք ջերմ պահել մեր Ֆիզիքական  
էութիւնները՝ առանց զգալու, թէ որքան հեռացած ենք մեր մայր  
ջերմութենէն, որ մեր արեան բջիջներուն կը ներարկէ ասպնական թէ  
անդենական սնունդը մեր գոյութեան:

Հայրենի հողին բոլոր որքան մխիթարական է, որքան ուժեղ կու  
զայ անոր բոլոր՝ եթէ մանաւանդ քեզի նման անոր հողին ու երկնին  
կիզակէտային այրուցքով մեզի դողէրոցքով կը փոխանցես հայրենի-  
քի արբեցումի ըմպումները:

Սիրելի գրչի եւ զգացական երկնումի երկուորեակ,

Տաք անձրեւի տակ յանկարծ ես զիս գտայ Սալիպէի օձապտոյտ  
ուղիներու մթութեան մէջ: Կը քայլի այնտեղ, ուր խումբ մը հասուն  
եւ «գիտակից» խենթեր՝ խմբագրատուն-հոգետունի մէջ, հայ գիրի  
հետ խաղով կը զուարճանային: Այնտեղ էիր դուն, այնտե՛ղ էիր փայ-  
լուն, Տարօնի քաջ, այնոյդը, ներշնչող ու հաւատք ծնանող ժպի-  
տովը: Նստեցայ մեծերու շարքին: Ներսը Մեսրոպ Մաշտոց ձեր վրայ  
կը ծիծաղէր, հայրական օրհնութիւն տալով քաջալերական լուռ հը-  
պարտութեամբ:

Բարեւիս վախկոտ թրթռացումը հասաւ քու աչքերուդ, որոնք  
ինծի պատասխանեցին երէց եղբօր Հացեկացի հայրենակիցիդ բարի  
գալուստի հրաւերով:

Արեւելքի մէջ, Արեւելքի տղայ էինք, իսկ դուն արդէն մակոյկդ  
փոխարինած էիր անծով երկնքի տակ հոգեղէն առագաստանաւով:

Շատ մոլթ էր Հալէպի այդ փողոցը, որ սակայն չունէր ահ, այլ քեզ եւ այդ օրերուն ինծի կը ներշնչէր փառաւոր Մշոյ Սուլթանին հասնելու մեծամիտ հպարտութիւնը:

Սիրելի, իսկապէս սիրելի ընկերս Գրիգոր,

Հալէպ, Թորոնթօ... Այ տնաշէն գիժ:

Այժմ ահա յենած թնդանօթի հզօրութեամբ գրասեղանիս, միշտ ուսումով աջ ձեռքիս, մատներուս մէջ խուժելու ճիգին կը հասնի Յայսմաւուրքը: Երեւակայէ, որքան թափանցիկ եւ որքան փոխանցիկ են այնտեղ բազմած սիրոյ վէտվէտումները, որքան հպարտ, որքան հոժով, որքան որքան... Գիրքդ թոյլ չի տար անզօր բեմագիրներով զգացական, տեսիլներով կենսագիր հիւսելու:

Իմ թանկագին Հալէպցի,

Կարճ ժամանակի մը համար եկած էի Թորոնթօ, Հոգիիդ հրաւէրին ընդառաջելով, կը խօսէին քու մասիդ, իսկ ես աւելի ապաւինած էի աչքերուդ կայծկտումներուն, այո, սիրելիս, եւ ուստումնային խոկումներուդ, ուր որքան անցեալի տառապանքներուն մեղմացումներուն ի լուր՝ գրգանք կար, խոստում կար, գրութիւններդ երդմագրի վերածած՝ ծառայութեան պատրաստակամութիւն կար: Կայսրութեան վրայ ուրախ եւ հպարտ նայուածքով թագաւորի մը նման նուիրաբերուելու, տուածդ կրկնապատկելու աղուոր վեհապետութիւն կար, կար մտքիս պաստառին կերտուած պատկեր մը, ուր ամէն բանէ առաջ կը տեսնէի բանաստեղծի թագը ճակտիդ, խոպոպ մագերուդ անհանդարտութիւնը գլխուդ եւ այնքան արագ եւ այնքան հոսող քրտինքը:

Զինուոր ընկերս Գրիգոր,

Անգաւազան հովիւ ընկերս՝ վշտակից, խնդակից, արիւնակից եւ մանաւանդ բախտաւոր ընկերս,

Վեհափառ աղամանդին վայել է հոգիդ:

Տեսնել քեզ, ըմպել քեզ հետ գինին դարաւոր օրհնութեան, բռնել ձեռքդ, զայն պահել ափիս մէջ եւ ներաշխարհիս փոխանցել, թէ ինչպէս անհնար է ծովին, հովին, լեռան ու մարդոց մեծ հոգիներու միացումը խանգարել:

Թոյլ տուր այժմ ուղեկցել քեզի, ըլլալ ընկեր ճանապարհի, քալել ու քալել, քալել ու քալել:

Եւ շարունակել քալել, մինչեւ ո՞ւր, մինչեւ միանանք Յայսմաւուրքիդ ճանապարհ խաչին, հանել երազներու պարոյկները ու եղանակներուդ բանով, մեղեդիներուդ արբունքով պարել Սասունցիներու Պարը:

Դուռդ շուտ բաց, որ չմըսիմ Թորոնթոյի ձիւներուն տակ:

Համբոյրով՝

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ

10 Յունիս 2008

Սիրելի ընկ. Գրիգոր ջան,

Որքան հեռացած էր Գանատան մեզմէ... յանկարծ այս իրակա-  
նութեան անդրադարձած՝ վազեցի գրասեղանիս, ուր այնքան հա-  
մեստ հպարտութեամբ իրարու մօտ նստած ինծի կը ժպտային ՃԱ-  
ՃԱՆՁՆԵՐՈՒ գերբիւրեղացումներու ՃԱՆԱՊԱՐՀ բացող հարազատ  
ժպիտներ:

Ոհ այո, հարազատ ժպիտներ, եթէ կարելի ըլլայ տեսնել, ըմբռնու-  
նել, ապրիլ շրջապատիդ մէջ այսուհետեւ այդ ժպիտներէն: Որքան  
երջանիկ ես, սիրելի՛ս, որ երկրէ երկիր գտած ես մարդիկ, որոնց  
շրթներէն սիրոյ անմեղուութեան ճառագայթներ կը լուսաւորեն իրենց  
աչքերէն եւ շրթներէն: Եւ այս լոյսի պատառներէն լիցքաւորուած կը  
խօսիմ քեզի հետ: Կը խօսիմ ներկայի մասին, թէ ինչպէ՛ս գիս նետեցին  
այս ափերուն, իսկ դուն այնտեղ, այնտեղ, գանատական Հալէպի մէջ:  
Երկու գիրքերդ կիսաբաց՝ նայեցայ ճակատիդ, որ մաքրուեցաւ կըն-  
ծիւներէն՝ ըսելու համար, թէ Կլենտէյլ ու Ամերիկան միթէ մեր բոլո-  
րին Հալէպը չէ՞:

Այստեղ, այս քանի տարի է, որ մենք գիրար չենք տեսած, ինչո՞ւ,  
այդքան հեռո՞ւ է միթէ մէկ Հալէպը միւսէն: Այսօր արդէն կու գամ  
քեզի այցելութեան:

Այսօր ես գիս աւելի լաւ կը զգամ, հակառակ որ Դիոգինէսեան  
լապտերը ձեռքիս՝ կը փնտռեմ ընդմիջտ գրուցակից: Կը փնտռեմ բա-  
րեկամներ՝ անոնց յայտնելու, որ ահա երրորդ տարին է ՇԱԻԱԽՔԻ  
նուիրուած գիրքս չէ կրցած դուրս գալ եւ ընթերցողներու հանդիպիլ:

Տակաւին քանի օր քեզի հետ մնայուն գրոյցի եմ, կը խնդրեմ, որ  
օգնես ինծի՝ հրատարակելու համար մօտ 600 էջնոց ՀԱՅ ԲԱՆԱՍ-  
ՏԵՂԾՈՒԹԵԱՆ նուիրուած ծաւալուն հատորս, որ Բարի Սամարացիի  
մը կը սպասէ դառնալու համար գիրք:

Երեւակայէ, սիրելիս, տասնեակ մը տարիներ աշխատած եմ այս  
գիրքին վրայ, որուն մասին տամ կարգ մը տեղեկութիւններ, թերեւս  
Մեսրոպ Մաշտոցի ծեր աշխարհէն գտնուի մէկը, որ օգնութեան ձեռք  
երկարէ:

Հատորը կը կոչուի

**ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ**

ԱՆԳԼԵՐԷՆ ԵՒ ՀԱՅԵՐԷՆ ԼԵՁՈՒՆԵՐՈՎ

Բովանդակութիւնն է.

1.- Ընդարձակ ուսումնասիրութիւններ՝ նուիրուած արեւմտա-  
հայ եւ արեւելահայ բանաստեղծութիւններուն:

2.- Քառասուն բանաստեղծներ՝ իրենց լուսանկարներով, կեն-  
սագրական եւ վերլուծական տեղեկութիւններով:

3.- Իւրաքանչիւր բանաստեղծէն առնուած ստեղծագործական նմոյշներ:

4.- Այս բոլորը նոյնութեամբ, մասնագիտական թարգմանութեամբ ներկայացուած ԱՆԳԼԵՐԷՆՈՎ:

5.- Մօտ 650 էջերու սահմաններու մէջ:

Անցեալ տարիներուն հրատարակած էի հայ արձակիին նուիրուած կրկին եկեղուանի հատոր մը՝ ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ, վերոյիշեալ դասաւորումով եւ անոր գտած յաջողութիւնը ուրախացուցած էր զիս, փաստ՝ որ մէկ օրինակ իսկ չգտայ, որ քեզի ուղարկեմ:

Քեզ իմ հարազատ եղբայրս համարելով՝ այս մտահոգութիւններս կը յանձնեմ քեզի: Այս յոյսը հաւանաբար զիս աւելի արագ ապաքինման առաջնորդէ:

Սիրելի Գրիգոր, ձեր խմբակը եթէ ժողով մը գումարէ այս հատորիս հրատարակութեան նպատակով՝ մեծապէս երախտապարտ պիտի ըլլամ: Պատրաստ եմ ձեռագիրները ամբողջութեամբ ուղարկելու:

Թող շողերով լուսաւորուին ձեր հոգիները եւ ընդունեցէք իմ տակաւին հաւատացեալ աղօթքներուս մեղմ մրմունջները:

Նաեւ խոստացէք իմել իմ կենացս լիբանանեան օդիով:

Համբոյրներով՝

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ

Յունիս 2010

\* \* \*

Յունիս 9, 2010

Սիրելի եւ թանկագին ընկեր Գրիգոր Հոթոյեան,

Մղկտանքիս մէջ սպեղանի մը եղաւ քեզի հետ ունեցած մեր զրոյցը: Անկեղծութիւնը, խռովքներու երկուստեք յառաջացուցած մխիթարութիւնը որքան ջերմացուց մեր հոգիները: Անցեալի ամպհոփանիին տակ՝ յիշեցի բանաստեղծը, որ նախ կեանք կը խնդրէ, ապա՝ հակառակ պարագային՝ լացող մը իր վրայ:

Հատորիս հրատարակութեան հանդէպ ցոյց տուած խանդաղատանքդ ուրախութեամբ յուզեց զիս: Ես կը հաւատամ քեզի: Կը հաւատամ եղբօր մը նման եւ ահա ընդունիր իմ ջերմաբոյր շնորհակալութիւնները:

Շատ, շատ շնորհակալ եմ:

Համբոյրներով՝

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ





Սիրելի Գրիգոր,

Շատ հաճելի անակնկալ մը եղաւ այս առտու Նիկողոս Թաշճեանէն «Նուիրում»ի օրինակ մը ստանալս: Զերմ շնորհակալուծիւն եւ վստահ եմ, որ այսքան բանաստեղծուծիւն գրելէ ետք, ամէն օր, ամէն ժամ նոր քերթուածներ կը խորհիս ու կը շարունակես թուղթին յանձնել: Մարմաջը կը ճանչնամ, թէեւ չեմ կրնար յաւակնիլ թէ արտադրածս նոյնքան յաջող է: Սրտագին շնորհաւորուծիւններ...

Կը տեսնեմ թէ հրատարակիչդ Հայաստան է, իսկ տպագրիչդ Թորոնթօ: Ես յուսահատեր եմ հայ հրատարակիչ փնտռելով ու ի վերջոյ ներփակած գրքոյկիս ձեւին ապաւինած — այսինքն համակագրիչով ես ինքս պատրաստել նախօրինակը եւ 100 օրինակ պատճէագրել ու կազմելէ ետք՝ սենեակի անկիւն մը նետել: Եկուր տես որ Ալիսը կը գանգատի, որ ամբողջ մեր տան գետնայարկը եւ նստասենեակը գիրքերուս տուփերով լեցուեր է եւ դժուար կը գտնէ սալայատակը մաքրելը...: Իսկ Համագրայինը՝ Մոնրէալ, Թորոնթօ, Նիւ Եորք կամ Լոս Անճելըս, գիրքերը կը ստանայ՝ բայց վճարել չի գիտեր...

Այս բոլորէն պիտի եզրակացնես, թէ բուն խնդիրս արտադրածս շուկային անցընել ու սպառել է, բայց հայ կարգացողը ո՞ւր, գրքի շուկայութեամբ ապրուստ մը ճարողը ո՞ւր... Լաւ որ քիչ մը ուսաներ ու որպէս ճարտարապետ ապրուստ մը կը հանեմ:

Վստահ եմ, թէ դուն տարիներ առաջ խնդիրը լուծեր ես եւ շատ պիտի խնդրէի, որ փորձառուծիւնդ իմացնէիր :

Հիացումով՝

ԿԱՐՊԻՍ ԱՐՄէՆ

Գրող, թարգմանիչ, հրապարակագիր,  
գիտնական, ճարտարագէտ

28 Հոկտեմբեր 2004

Օրթաուա

\* \* \*

Իմաստուն Գրիգոր Հոթոյեան,

Այս ածականով քեզ կը նկարագրեմ՝ մեր նախագահին ուղղած բաց նամակը կարդալէս անմիջապէս վերջ՝ յուսալով, որ պիտի ընդունիս թէ «սրտէս բխած ազնիւ խօսք եմ ասում» — սա մեր ծանօթ պարուկահայ բարեկամի մը ոճն է, որ Ալիսը եւ ես յաճախ կը կրկնենք իրարու՝ շեշտելու համար խօսքի մը անկեղծուծիւնը:

Կը հիանամ նաեւ նամակիդ դիւանագիտական վերջաւորութեան եւ յուսամ, թէ նախագահը իր... ճոմպրուկները պատրաստելէն մի քիչ ձանձրացած՝ ժամանակը պիտի գտնէ իրեն շատ պատուաւոր այդ հրամանագիրը գրելու եւ հրատարակելու: Որովհետեւ վախ մը ունիմ, որ իր յաջորդը, պինդ-գլուխ «աբեղեանական» մը ըլլալով, պիտի մերժէ այդպիսի հրամանագիր մը պատրաստել կամ պիտի ՀՀ խորհրդարանի քուէարկութեան դնէ: Այդպիսի պարագային՝ այլեւս պիտի մոռացուի մատնուի խնդիրը, քանի ուղղագրութիւնը փոխելու բազմաթիւ հակառակորդներու հանդիպելու հայրենիք երեք այցելութիւններուս:

Եւ խորհիլ, թէ Աբեղեան ի՛նք կը յուսար, թէ Ստալինի «խարանը կրելով»՝ իր ճնշումի տակ կատարածը «ուշ կամ կանուխ ճշգիւ կը տայ Հայ ժողովուրդը»:

Կարդացի նաեւ 8 Փետրուար 2008-ին տեղի ունենալիք մեծաբանքի երեկոյի մասին: Դարձեալ շնորհաւորութիւններ եւ «բերքահաւաքիդ» անվերջ սպառում: Յուսամ օրինակ մը մնացած պիտի ըլլայ, երբ օր մը դարձեալ Թորոնթոյի Հայ Կեդրոնը այցելելու առիթը ունենամ, կամ երբ Հայաստան հանդիպիմ... Մարգար Շ.ին:

Միջանկեալ, իմացայ նաեւ, թէ 80-ի տարիքը թեւակոխեր ես եւ կը մաղթեմ, որ յունական առածին ասումով՝ «Հարիւրը կը գերազանցես»: Քեզ տեսողներ «80 տարեկան երիտասարդ» կը կոչեն քեզ, իսկ ես պարզապէս նկարէդ դատելով՝ «65-ի մօտ» կը կարծէի քեզ, իսկ գրածներդ կարգալով՝ կը զգամ թէ եռանդը անսպառ է: Դէ՛, մի քանի «բերքահաւաք» եւս կը գրես ու յաւերժ կը վայելենք քեզ:

Կատարեալ հիացումով՝

ԿԱՐՊԻՍ ԱՐՄԷՆ

24 Փետրուար 2008

Վանքուվըր

\*  
\*  
\*

Հիանալի եւ առատաձեռն Գրիգոր Հոթոյեան,

«Ճանապարհ»ի ծանր երկդ ղրկելդ իսկապէս անակնկալ եղաւ եւ գիշերներ կու տամ՝ ժամ առաջ ըմբռնելու կեանքիդ գանազանութեամբ հարուստ ապրումներդ: Առաջին հակազդեցութիւնս եղաւ 60 տողարնոց մը ղրկել, բայց Ալիսը «Ամօթ է, մարդը քեզի ձօնագրեր ղրկեր է» ըսելով՝ սաստեց:

Իսկապէս հպարտ պէտք է ըլլաս սասունցի հօր զաւակ ըլլալուդ, եւ կը մաղթեմ պատմուածքներու գիրք մը գրես այդ արծուբերոյնին վրայ: Ներփակած հակիրճ գրութիւնս Անդրանիկի մասին, համեստ

փորձս է Վանգուվըրի երիտասարդները Սասնոյ Արծիւին մասին հետաքրքրելու՝ որ կարդան, բայց հոս ճրի ալ տաս, կը զգաս թէ քիչեր ժամանակը պիտի տրամադրեն ծայրէ ի ծայր կարգալու:

«Ճանապարհ»ին մէջ մեծ հետաքրքրութեամբ կարդացի Քարէն Եփփէի վրայ գրութիւնը: Մեկգոնեանի օրերէս կը հիանայի անոր «Թռչնոց Բոյն»ին վրայ՝ հոն ուսանած դասընկերներ ունենալով: Կը խորհիմ, թէ հայերս պարտաւոր ենք անոր կիսանդրին կանգնելու եւ գոնէ տանեմարքացիներու հասկնալի լեզուով հրատարակութեամբ մեր երախտագիտութիւնը արտայայտելու:

Պատմուածքներէդ «Խորտակուած սէր»ը եւ մի քանի հատ եւս, ժամանակը պէտք է գտնես որպէս վէպ մշակելու, իսկ «Շունի պատմութիւն»ի վերջաւորութեան ողբերգութիւն մը կայ, որ յուսամ ատոր ժամանակ պիտի գտնես ընդլայնելու: Ապրումներդ շատ հարուստ են եւ կը խորհիմ, թէ Աստուած ծրագիր մը ունի քեզ մեր մեծ անուններու կարգին տեսնելու, զանոնք մշակելու համար երկար կեանք տալով քեզի: Վստահ եմ Թումանեանն ալ քեզի պէս գրելու մարմաջը ունեցողներուն համար գրեր է «Մարդու գործն է միշտ անմահ»:

Գիրքերուս ցանկին վրայ գիները ջնջելէ վերջ կ'ուղարկեմ՝ յուսալով, թէ գոնէ մի քանի հատ կարգալու հետաքրքրութիւնը պիտի զգաս ու իմացնես, որ ղրկեմ: Պիտի տեսնես, թէ աւելի «նիւթեր պրպտող» եմ, քան թէ գրական խառնուածքով մշակող — այդ քու տաղանդն է:

Անխառն հիացումով՝

ԿԱՐՊԻՍ ԱՐՄԷՆ

24 Փետրուար 2008

Վանքուվըր

\*\*

28.07.08

Միշտ հիանալի Գրիգոր Հոթոյեան,

Անցեալ ՀՈՐԻՉՈՆներուն մին ամալերջի հանդէսներու յօդուածներովդ լեցուած էր — վստահ եմ նոր մրցանիչ մը քեզի համար...:

Բոլոր ծանօթներուս մէջ՝ Հայաստանի մէջ հրատարակուած հեղինակներուն երկրորդն ես, առաջինը ըլլալով Մարգարը, որ շարունակ Հայաստան կ'երթայ-կու գայ: Ուստի քեզի կը դիմեմ վարի նորօրինակ խնդիրս լուծելու:

Վերջին գրածս Հայաստանի ժողովրդի օգտին գրուած ըլլալով — «Երկրաշարժակայուն ձարտարապետութիւն եւն. եւն.» — երկու բարերարներու դիմած եմ հրատարակութեան նպաստ խնդրելով: Ա-

նոնցմէ մին բաւական մանրամասն գիններ կ'ուզէ՝ 2.000 օրինակի հետեւեալ ծախսերու.-

Արեւելահայերէնի խմբագրում	\$..... (Հիմա կատարուած)
Գրաշարման ծախս	\$.....
Տպագրութեան ծախս	\$.....
Կազմաւորում	\$.....
Շուկայում — իմա՛ տարածում	\$.....
Այլ աննախատեսելի ծախսեր	\$.....

Այսքան մանրամասն տեղեկութիւն միայն Պրն. Լեւոն Անանեանը կրնայ հայթայթել, որուն հետ արդէն գործակցեր ես դուն: Քեզմէ կը խնդրեմ նաեւ գաղափարդ իմացնես, թէ այդ 2.000 օրինակի հաշիւս որքա՞ն իրատես կամ «երազային» կը նկատես: Գիտնալով, թէ գրածիս կարգ մը գլուխները — 4-րդ եւ 6-րդ — պիտի հետաքրքրէին հայաստանցի բոլո՛ր հայերը՝ 2 միլիոն տպելը կամ ձրիօրէն տարածելը՝ «մի քիչ» անիրատես պիտի ըլլար:

Վստահ եմ նամակցութեան կապ մը կը պահես Պրն. Անանեանին հետ եւ այս նամակիս պատճէնը դժուար պիտի չըլլար իրեն ղրկել:

Միշտ հիացումով առատ արտադրութեանդ համար՝

ԿԱՐՊԻՍ ԱՐՄԷՆ

\* \* \*

3 Դեկտ. 2008

Սիրելի Գրիգոր,

Կ'ենթադրեմ, թէ ետեւի նամակիս որեւէ պատասխան չես ստացած 4 ամիս սպասելէ ետք:

«Ձեմ զարմանում», ինչպէս ըսաւ հայաստանցի բարեկամ մը՝ երբ իրեն պատմեցի այլ հայաստանցիէ մը երկար սպասումս: Թէեւ Լ. Անանեան իր մէկ օգնականին պիտի անցընէր հաշիւի գործը, կ'երեւի թէ բոլորն ալ «չափազանց զբաղուել են»:

Վստահ եմ դուն ալ տպաւորութիւններ ունիս այս մասին...:

Կը վստահեցնեմ քեզ, թէ մեր բարեկամութիւնը բնաւ չէ ազդուած այս դէպքէն:

ԿԱՐՊԻՍ

\* \* \*

3 Յունուար 2009

Սիրելի Գրիգոր,

Անունս նախորդող 6 արհեստ եւ արուեստները որ ինծի կը շնորհէի՝ վայրկեանի մը համար խնդացուցին, բայց քիչ վերջ բուն նամակդ տխրեցուց — այն իմաստով, թէ մարդ հարկ է, որ անձնապէս Հայաստանի տպագրատուններուն մէկ առ մէկ երթայ, առաջարկուած

գիրք մը ցոյց տալու, որպէսզի գին մը տրուի եւ ամիսներէ վերջ այդ տպուի:

Առաջին 4 գիրքերս տպուեցան Հարաւային Քորէա եւ Միացեալ Նահանգներ՝ պարզապէս նամակցելով տպարաններուն հետ — գին ստանալու, ձեռագիր ղրկելու, սրբագրութիւններ իմացնելու եւ տպագրուած գիրքը ստանալէ ետք՝ վերջնական վճարումը ղրկելու: Որպէս գործարար, ե՞րբ պիտի սորվին մեր ազգակիցները այսպիսի արդիական գործելակերպի մը միջոցաւ իրենց շահ բերող ծրագիր մը իրագործել ու անմիջապէս յաջորդին անցնելով՝ իրենց արտադրութիւնը եւ շահը աւելցնել: Հարաւային Քորէա եւ Չինաստան այս ձեւերով սորվեցան գործել ու իրենց արտադրութիւնը եւ շահը աւելցրնել:

Վստահ եմ այս բոլորին ծանօթ ես եւ չեմ փափաքիր բազմազբաղ գրողի մը արժէքաւոր ժամանակը խլել: Երկրաշարժաբխութեան վրայ 51-րդ տարիիս մտայ 2009-ին՝ շարունակ կարգաւով եւ գրելով, եւ հիմա ամէնէն իմաստալի գրութիւնս պէտք եղած երկրին մէջ Տրատարակելու համար, պէտք է ամէնէն նախնական ձեւին ապաւինիմ — անձամբ 4.000 քմ. երթալ ու բանակցիլ:

Բոլոր խրատներուդ ամէնէն տրամաբանականը նկատեցի Սփիւռքի տիկին նախարարուհիին գրելը, գրքիս ամփոփումը կցելով եւ խնդրելով, որ յարմար այլ նախարարութեան յանձնարարէ տպել եւ ցրուելը, կարելի եղածին չափ աժան — եթէ ոչ ՁԲԻ, քանի 6-րդ գլուխը երկրաշարժէ ապահով մնալու եւ այլ դրացիներ փրկելու մասին է: Կ'ենթադրեմ, որ նամակս «Կառավարութեան Տուն, Հանրապետութեան Հրապարակ» ղրկելով՝ ի վերջոյ իրեն պիտի հասնի: Եթէ ծանօթ ես աւելի ճշգրիտ այլ հասցէի, խնդրեմ ժամ առաջ ինծի իմացուր: «Հ»ի բացառիկին մէջ իրեն հետ տեսակցութիւնը կարդացած ըլլալով՝ ամէնէն հաւանական հասցէն ա՛յդ կը նկատեմ:

Աւելի ուրախ նիւթի մը անցնելով՝ պատմեմ, որ Ալիսը եւ ես մեր մանչերուն, անոնց հայ հարսերուն, զաւակներուն եւ մեր խնամիններուն հետ չորս օր վայելցինք: Ինչ մեծ տարբերութիւն տղայութեանս արձակուրդներէն, երբ միայն հօրս եւ մօրս հետ կ'անցընէի արձակուրդները, քանի Եղեռնի պատճառաւ ոեւէ երէցներ չկային մեզի միանալու...:

Յուսամ դուն ալ մեծ ընտանեկան համախմբումով վայելցիր ու Ծնունդը եւս անոնց հետ պիտի վայելես եւ ազատ ժամեր գտնելով՝ անմահ գրիչդ շարժման դնես: Եթէ հասցէդ մօտ է Տիրուհի Սամանձեան-McLean նախկին դասընկերուհիս — որուն Քրիստափոր զաւակը հայ աջկայ մը ամուսնացաւ Մոնրէայ — ջերմ բարեկներս փոխանցէ: Իր պատմութիւնը վստահ եմ քեզ պիտի ներշնչէ, որ պատմուածք մը — եթէ ոչ վէպ մը — գրես...:

ԿԱՐՊԻՍ

\* \* \*

Հիանալի եւ հոգևով միշտ երիտասարդ Գրիգոր,

Երէկ, «Քարահունչ»ի ջրաներկ մը գծած ատենս, Ալիսը մեզի զրկուած նամակներուն հետ բերաւ նորատիպ գիրքդ՝ «Ճաճանչներ» ինքնատիպ խորագրով: Այս որքա՞ն երգեր յղանալով՝ երաժիշտ բարեկամներուդ առիթը ստեղծեր ես իրենց յօրինողի տաղանդը ի յայտ բերելու: Բարեկամ Սարգիս Համպոյեանը գիտէի, թէ երաժշտութեան հակում ունէր, բայց երգեր յօրինելը բոլորովին նորութիւն մը եղաւ ինձի — շնորհաւորութիւններս փոխանցէ: Իսկ Անահիտ Կոտսուղեանը իր երգելու տաղանդով ճանչցած էինք ու անոր ալ յօրինած երգերը հիացուցին մեզ: Վեց երգերու ծնունդ տուեր է «Յիշատակդ, սիրելիս» քերթուածը եւ բնաւ չեմ գարմանար, քանի երիտասարդի մը իսկական ոգիով գրեր ես: Ազնիւ ու երիտասարդ ոգիիդ բաբախումը բացայայտ է ամբողջ այս նոր գիրքիդ էջերուն վրայ:

Որպէս համեստ արձագանգ սքանչելի նուէրիդ, կը ներփակեմ վերջին հրատարակութիւնս՝ անմահ Դանիէլ Վարուժանի չորս գիրքերը՝ ամփոփուած մէկ գիրքի մէջ: Անգլերէնի թարգմանած եմ՝ յուսալով, որ Վանքուվրի հայ երիտասարդութիւնը աւելի պիտի հետաքրքրուի անոր խիտ ու շատ իմաստալի յանգերը աւելի ծանօթ մէկ լեզուով կարդալով: Ուրախ եմ գրելու, թէ ամէնէն մեծ թիւը Գրական Շրջանակի ամսական հանդիպման ծախուեցաւ:

Անսպառ տաղանդիդ նորանոր ցոլքեր տեսնելու ակնկալութեամբ՝

ԿԱՐՊԻՍ ԱՐՄԷՆ

Վանքուվր  
28 Մարտ 2010

\* \* \*

16 Յուլիս 2011

Իսկապէս բարեկամ Գրիգոր,

Երբ ստացայ «Շնորհահանդէս եւ գինեձօն» թռուցիկդ՝ ԱՆՅԵԱ-ԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ գրքիդ, կարծեցի, որ բարձր արձակի գրագէտի համբաւիդ փառաբանութիւնը կը կրկնէ:

Զարմացայ 13-րդ էջին վրայ կարդալով «վկայութիւն»ներուն առաջինը, որ կատակ մը ըլլալուն հակառակ՝ վկայութիւն անունով պատուի երկրորդ տեղ գրաւեր էր...: Շնորհակալ եմ եղբայր եւ երախտապարտ, որ աշակերտներուն հայերէն/անգլերէն փոխնիփոխ արտասանութեան մաս դարձուցեր ես իմ մէկ բանաստեղծութիւնը: Ծիշդ է, որ կարգ մը յաւելումներ կան այդ թարգմանութեան մէջ որպէսզի «անգլիականացում» ըլլայ արդիւնքը, բայց յուսամ ունկնդիրները հասկցան այդ եւ «ներեցին»:

«Հորիզոն»ի գրականին մէջ կարդացի Ֆրանսական պարբերաթերթի մը արեւմտահայերէնը «մեռնող» լեզու որակելուն, բայց քեզի պէս քաջալու արեւմտահայերէնի գրագէտներ շատ աւելի երկար կեանք պիտի շնորհեն այդ լեզուին:

Կը մաղթեմ նման շնորհահանդէսներուդ թիւը շարունակ աւելնայ:

Համեստօրէն՝

ԿԱՐՊԻՍ

\*\*\*

16 Սեպտ. 2014

Շատ սիրելի Գրիգոր,

Ստացայ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆՆԸ՝ հիանալով, որ նամակագրութեան այս սուղ օրերուն կը համարձակիս ծանր գիրքեր հրատարակել եւ ուղարկել բարեկամներուդ: Այդ սղութեան պատճառով կը նախընտրեմ գիրքերս... կարճ ու ամփոփ պահել եւ կը խորհիմ, թէ հայ գրողներ եթէ նոյնպէս խորհին, պիտի յաջողինք մեր հարստութիւնը... ՀԱՅ ԴԱՏԻՆ միայն տրամադրել:

Բոլոր գրութիւններուդ ամէնէն հետաքրքրականը ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ մասին գրածդ կը նկատեմ եւ կը զարմանամ, թէ այդպիսի խոր ուսումնասիրողի գործը շատ ալ ծանօթ չէ տակաւին հայութեան: Միայն Ծիծեռնակաբերդի յուշարձանին նախաձեռնողը ըլլալով եւ անոր գաղափարը թարխանեանին ու Գալաշեանին փոխանցելուն՝ իր անունը անոնց անուններուն կողքին պէտք է անմահ մնայ...

Որպէս պատմաբան — ինչու ոչ՝ ՊԱՏՄԱԳԻՐ — իր գործը շատ կարեւոր պիտի նկատուի օր մը եւ մեր դասարաններու մէջ մտնէ: Հիացայ, որ իր նպատակներուն համար ԳԵՐԱԶՆԻԻ ածականը գործածեր ես, բայց ցաւեցայ, որ յաջորդ էջին մէջ չափազանց երկար ԳՐԱԿԱՆԱԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ եւ ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ բառերը գործածեր ես իր գործը նկարագրելու: Յուսամ ստիպուեր ես այդ բառերը գործածել, որովհետեւ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ աղբիւրներուդ մէջ էին: Ես որպէս հայերէն լեզուի ուսուցիչ՝ այդպիսի երկար բառեր երբեք չեմ գործածեր, ոչ ալ կը քաջալերեմ, որ աշակերտներս գործածեն:

Ուրախ եմ, որ գիրքդ ՍԱՍՈՒՆԻ գրողներու եւ քարտէսի մը վրայ ներշնչուելով գրած ես եւ կը մաղթեմ, որ ամէն հայ գրող օրինակիդ հետեւելով՝ յաւերժացնէ իր հայրենի միջավայրին եւ տոհմին անունը:

Ալիսին եւ իմ կեանքը հիմա բոլորովին Վանգուվըրի մեղմ կլիման վայելել է ամառները եւ նաւապտոյտներու մասնակցիլ ձմրան: Ամերիկահայ ընկերութեան մը առաջարկեցի իրենց մէկ պտոյտին երկու լեզուով դասախօսութիւն մը տալ եւ տակաւին յստակ պատաս-

խան մը չեմ ստացած: Յո՛ւնուարի կիսուն արդէն Գուպա կղզիին շրջանը կատարելու նաւապտոյտի տոմսակներ ապահոված ենք եւ ճամպրուկները կը պատրաստենք:

Շատ պիտի ուզէի ներփակած պատմուածքներու գրքիս վրայ խրատ եւ տպաւորութիւններդ ստանալ:

Միշտ հիացումով անհատնում գրութիւններդ վրայ՝

ԿԱՐՊԻՍ ԱՐՄԷՆ

\* \* \*

22 Հոկտ. 2014

Շատ սիրելի Գրիգոր,

Ուրախ եմ իմացնելու, թէ մեր Գրական Շրջանակը իր անցեալ Հաւաքոյթին խօսակցութեան նիւթ դարձուց Սասուն Գրիգորեանի գործը — ինչպէս ետեւի էջը ցոյց կու տայ: Զարմացան բոլորը թէ ինչո՛ւ անծանօթ մնացեր է իր գործը Սփիւռքի մէջ եւ պիտի խնդրէի, որ գնելու աղբիւրներ իմացնես մեզի, որպէսզի մենք ալ ճանչնանք այդ սքանչելի ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ գործէն նմոյշներ:

Շատ ածականներ եւ արհեստներ կը շռայլես ինծի վերջին նամակովդ եւ Ալիսին հետ կը զարմանանք, թէ ե՞րբ պիտի դադրի այս «իրար գովելու բայց նաեւ հպարտացնելու» հաճելի խաղը: Կը ներփակեմ թատերգութիւն մը, բայց ես թատերագիր պիտի չնկատեմ ինքզինքս միակ գրութեամբ: Այսուհանդերձ քու դատողութիւնդ մեծապէս պիտի յարգէի:

Շնորհակալ եմ պատմուածքներս հետաքրքրական գտնելուդ եւ կը խոստանամ նոյն նպատակով հայ տղամարդոց վերաբերեալ հատոր մը գրել ու ղրկել: Ուրախ եմ յայտնելու, որ մեր նամակցութիւնը զիս կը մղէ նոր բաներ ու գրութիւններ «ստեղծելու»:

Կը մաղթես — կամ կը յուսաս — որ գրելու ոճս զարգացնեմ աւելի երկար գրելով: Այդ կը խորհիմ, թէ ընթերցողիս իրաւունքը խել է — ի՞ր հոգիով եւ զգացումով գրածս «թարգմանելու եւ իմաստաւորելու»: Կը յարգեմ այդ իրաւունքը եւ չեմ երկարեր գրութիւնս՝ զրկելու համար զինք այդ ազատութենէն:

Նամակիդ վերջին բառով զիս «եղբայր» կոչելդ իսկապէս յուզեց զիս եւ օր մը վստահաբար պիտի հպարտանամ այդ բառը ինծի շռայլելուդ:

Տարիներ առաջ երբ Անգլիոյ ներքին գործոց նախարարը որոշեց անգլիական քաղաքացիութիւնը «չնորհել» Ալիսին եւ ինծի, անգլերէնով գիրք մը գրեցի եւ իրեն ղրկեցի երախտագիտութիւնս յայտնելու համար: Անուղղակի կերպով ՀԱՅ ԴԱՏԸ բացատրելու ձեւ մըն էր այդ գրութիւնը եւ հիմա այդ գիրքը հայերէնով ալ կը գրեմ: Խոնար-



հաբար պիտի ուզէի գաղափարդ ունենալ եւ կարդալ՝ երբ վերջանայ գրութիւնը եւ քեզի շնորհակալ: Գիտեմ, որ բազմազբաղ գրող մըն ես եւ կը տատամսիմ ժամանակդ «գողնալու»:

Խորին յարգանքով՝

ԿԱՐՊԻՍ

\* \* \*

22 Դեկտ. 2014

Շատ սիրելի Գրիգոր,

«Յօթներորդ Հանգրուան»ը կարդալու հետաքրքրութիւնս մեծապէս աւելցաւ, երբ «ՀՈՐԻԶՈՆ»ի մէջ նպաստաւոր յօդուած մը կարդացի եւ ընդհանուր գաղափար մը ունեցայ: «Հեղինակին կողմէ» մուտքի երկու էջերդ ալ կարդալով՝ ա՛լ աւելի իմաստալից դարձան կարդացած պատմուածքներս:

Մօտ հինգ հարիւր էջնոց գիրք մը ի՞նչ մեծ համբերութեամբ կըրցեր ես ձեռագրով գրել — փոխան համակարգիչի — իսկապէս զարմանալի կը գտնեմ: Եւ խորհիլ, թէ աւելի քան վաթսուոն տարիէ ի վեր մեր լեզուով կը գրես, միշտ նորը եւ հետաքրքրականը փնտռելով: Բու գրածդ իսկական գրականութիւն է, ամբողջովին մտքէդ ու հոգիէդ ծնած եւ մի քանի տեղեր միայն ուսումնասիրութեան վրայ ապաւինելով:

Պատմած հէքեաթներդ անգամ — «Արդարութիւն, քեզ կը սպասենք» — պարզ փոքրիկներու յարմար պատմութիւններ ըլլալէ անդին՝ հայրենասիրական ներշնչումով գրուած են եւ շատ իմաստալից են եզրակացութիւններդ: Կը մաղթեմ, որ ամէն հայ որ Հարիւրամեակի բողոքներուն մասնակցի՝ կարդացած ըլլայ այդ պատմութիւնը եւ գիրքդ ամբողջ, նախքան բողոքի շարքի մէջ մտնելը:

Ես ալ մի քանի ամիս առաջ, նկարներով ու քարտէսներով հարուստացած, մեր Դատի մասին պահանջներու շարք մը գիրքով մատնանշեցի: Մեր նախակրթարանի ուսուցիչներէն մէկուն թոյլ տուի, որ էջ-առ-էջ թերթատէ ու հասկնայ պարունակութիւնը: Երբ գինը տեսաւ, «Ես գալ տարի այլեւս ուսուցիչ պիտի չըլլամ» ըսելով՝ գիրքը վար ձգեց ու հեռացաւ...: Այսքան անտարբերութիւն մեր Դատի մասին՝ հաւատալս չեկաւ:

Կը զարմանամ, թէ ինչո՞ւ կարգ մը գրութիւններուդ մէջ բոլոր հերոսներդ — բարի ըլլան թէ չար — օտար անուն ունին: Եթէ նոյնիսկ իրողութեան վրայ հիմնուած են այդ հերոսները, կ'արժէ երբեմն հայ անուններով կոչուիլ: Մանաւանդ Հալէպի բնակիչներ, իսկապէս զգացումներով ՀԱՅ են, ըստ Մելգոնեանի ծանօթներու:

Բոլոր պատմածներուդ ամէնէն հայրենասիրական եւ իմաստալիցը նկատեցի Լենկթիմուրի յարձակման ընթացքին «Զանգեզուր»

նահանգին կոչումը եւ այդ շարժող սիւնը գոմէշներով փլելու փորձը: Երբ այդ սիւնի «երկրաշարժի ազդարար» յատկութիւնը իմացայ եւ ինններորդ դարուն հնարուած ըլլալը կարդացի՝ իսկապէս հիացայ մեր ազգի իմաստութեան վրայ: Այլ ազգեր սոսկալով երկրաշարժի ահեղ ուժին վրայ՝ միայն իրենց փախչելու մասին կը խորհին եւ ոչ՝ անոր մօտենալը իմացնող «ազդարար» մը հնարելու մասին:

ԿԱՐՊԻՍ ԱՐՄԷՆ

\*\*\*

Շատ սիրելի եւ իրատես բարեկամս,

Նամակդ տխրեցուց բայց նոր յոյսեր տուաւ ինձի՝ մեր սփիւռ-քահայ գրողներու ողբերգութիւնը յիշեցնելով:

Որքա՛ն այլ յաջող ըլլան մեր գրութիւնները որպէս գրականութիւն — սրտին խօսող եւ յուզիչ յատկութիւններով — անկարելի է գրողին դրամարկումով բաւարար թիւ մը տպագրել, որ օտարներուն հասնի որպէս թարգմանուած գրականութիւն, շատերու կողմէ կարդացուի եւ տարիներ վերջ կարենայ մրցանակի արժանանալ — օր. Նոպէլեան կամ այլ աւելի համեստ:

Իմ դեկավարած Գրական Շրջանակը որոշեց Դանիէլ Վարուժանի եւ Վահան Թէքէեանի լաւագոյն քերթուածները թարգմանել ու Սթոքհոլմ դրկել, բայց սորվելով, թէ հրատարակուած գիրք միայն նկատի կ'առնեն, մէկ կողմ դրինք մեր բոլոր թարգմանածները:

Իմ պարագայիս գրելու հաճոյքն է, որ զիս կը մղէ նորէն ու նորէն գիրք մը սկսելու, եւ եթէ նոյնիսկ տասը օրինակ ծախուի՝ գոհունակութիւնս բաւարար է:

Այո՛, պիտի սրբագրեմ ուղղագրական սխալները — թէեւ ամէն սփիւռքահայու շուարումը հասկնալի է, քանի յաճախ սխալագրութիւն կարդալով՝ կը ստիպուի բառարան մը միշտ քովը պահել: Կը յուսամ, թէ մինչեւ կեանքիս վերջը արեւմտահայերէնը պիտի դիմանայ, բայց վախնամ, թէ իմ հին ուսուցիչ Վահրամ Մավեանի պէս գրող մը նոյնպէս սխալներ ունէր... Տես իր «Ամբողջական Երկեր»ը:

ԿԱՐՊԻՍ ԱՐՄԷՆ

\*\*\*

24 Մարտ 2017

Միշտ սիրելի, միշտ յիշատակելի Գրիգոր,

Երկար ատեն լուռ մնալուս պատճառը այն է, թէ կաթուածահար ինկած եմ 2 ամիսէ ի վեր եւ գրութիւնս տուժած է — բարեկամներս դժուար կը գտնեն կարդալ եւ իմ գրելս այլ՝ շատ դանդաղ եւ անընթեռնելի:

ԳԵՂԱՐԴ շատ կարճացած է գրածս եւ փառք Աստուծոյ քեզի պէս գրասէրներ կրնան հասկնալ ոգին եւ քաջալերել: Շնորհակալ եմ: Շատ տուժած եմ այս կաթուածէն եւ ոչ իսկ տպարան կրնամ երթալ եւ գրածներս հրատարակել: Լուռ մնալը տառապանք է:

Գրական խումբը շատ կը փափաքի, որ վերադառնամ եւ հանդիպումներ դարձեալ սկսիմ կազմակերպել:

Կեանքը վայելէ, եղբայր,  
ԿԱՐՊԻՍ

\*\*

1 Օգոստոս 2017

ԱԶՆԻԻ ԳՐՉԱԿԻՑ ԲԱՐԵԿԱՄ,

Ուղարկած «Հայաշունչ Պատմուածքներ»-ը հազիւ երէկ ստացայ եւ շատ շնորհակալ եմ զիս յիշելուդ: Նախ ուզեցի մի քանի պատմուածք կարդալ եւ շատ հաւնեցայ ՅԱՐԳԵՆՔ ՄԵՐ ՏԱՐԵՑ ՀԱՅՐԵՐԸ: Վախնամ հայրենաշունչ չգտայ: Մաղթեմ հայրենաշունչ շունչով կը շարունակես գրել:

Իմ գրածներս, կաթուածի ենթարկուելէ առաջ, աւելի կարճ են կարծես՝ աճապարանքի մէջ ներշնչուած ըլլալով: Քաղաքական ծաղրանկարներէ ներշնչուած կատակալի պատմուածքներ ալ կը գրեմ, բայց ՀՈՐԻՋՈՆԻ խմբագիրը իր կուսակցութեան դէմ ուղղուած կը նկատէ եւ չի հրատարակեր: Ես որեւէ կուսակցութեան չեմ հաւատար, մանաւանդ հայրենիքէն դուրս: Այս մասին շատ պիտի փափաքէի գաղափարդ իմանալ — անպայման գրէ՛:

Մնամ միշտ քեզի հիացող՝  
ԿԱՐՊԻՍ

\*\*

1 Նոյեմ. 2017

Սիրելի Գրիգոր,

Վերջին գիրքդ սքանչելի բանաստեղծութիւններով հիացուց եւ կը զարմանամ, որ աւելի յաճախ ինչո՞ւ քերթուածներ չէիր գրեր:

Կը մաղթեմ ասկէ վերջ քերթուածներուդ գիրքերը ստանալ:

Հիացայ նկարներուն վրայ, եւ կը մաղթեմ էջ 157-ի աղջկան հետ տակաւին կը յարաբերիս...:

Գիրքիդ կողքին վրայ կայ քերթուածի աստուածուհի մը (մուսա), եւ կը մաղթեմ, որ աւելի յաճախ ներշնչէ քեզ:

Մեծագոյն յարգանքով՝  
ԿԱՐՊԻՍ  
(կաթուածահար)

\* \* \*

*Թանկագին Գրիգոր,  
Շնորհակալու թիւն «ՄԱՅՐԱՄՈՒՏԻ ՅՈՒՔԵՐՈՒԴ» համար եւ  
մօտ օրէն պիտի դրկեմ իմ վերջին Յուքս, թէ եւ գիտեմ թէ պիտի շարու-  
նակենք երկուքս ալ գրել:*

*Շնորհակալու թիւն նաեւ դատերդ, քանի իր մեկենասութեամբ  
ինծի ցոյց տուաւ հայերէնի տպագրիչ մը, որուն կը յուսամ նոր բան  
մը տալ տպելու, քանի Վանգուվըրի մէջ կարելի չէ այդ տեսակ մաս-  
նագէտ մը գտնել:*

*Միշտ հիացմունքով՝*

*ԿԱՐՊԻՍ*

\* \* \*

### ՄԵՐ ԱՒԱՆԴԸ ՍԵՐՈՒՆԴԻՆ ԶՈՐՐՈՐԴ

Զարդէն վերջ ծնած մեր ներկայ սերունդը չորրորդ  
Հայուքեան նոր յոյսն է, սեւ Սփիւռքի մեր լոյսը,  
Լուռ տառապանքէն ետք կէս դարու-եւ-ֆառորդ,  
Մեր ազգի աղիւսն է ան՝ նոր հայրենիքի մը յոյսը:

Առաջին սերունդը վերապրած այս դժբախտ ազգին,  
Գայլի նախնիքէն վերջ՝ արեան ու բռնաբարման,  
Հեգ որբ մըն էր տակաւին՝ շուարած այդ որդին  
Սարսափած մօր մը, որ արիւնլուայ իջաւ գերեզման...:

Երկրորդ սերունդը Հայ Տուն մը շինեց ու դպրոց,  
Փորձեց Լոզանի մեծ խաղը հասկնալ այդ վարոց,  
Զոհեք տուաւ Ստալինի ու Հիթլերի անձնապաշտութեան  
Եւ վեր կանգնելով՝ պոռաց ան Կարս ու Արտահան...:

Երրորդը՝ բռունցք բարձրացուց, լուծում պահանջեց  
Երկու կողմէն ու իրաւագուրկ՝ անհայրենիք սեւ գոյութեան,  
Յուշարձաններ Եղեռնի ու մտքի դարբնոցներ կերտեց  
Ու իր ցանցով տարածուն՝ ֆալեց ճամբով Եանիկեան:

Կարգը բուկդ է հիմա, սերունդ նոր, տէ՛ր կաց մեր Դատին,  
Զա՛րկ անարգ Գայլին, բայց նաեւ գրէ՛, խօսէ՛, փուէ՛ գործածէ,  
Որ Արեւմուտքէն հատուցում առնես Սեւրի մուրհակին,  
Ու Զարդի «լուծումը» փուն փաստես ամբողջ աշխարհին:

*ԿԱՐՊԻՍ ԱՐՄԷՆ*

*Վանգուվըր*



## ՅՈՐԵԼԵԱՆ

Գրիգոր Հոթոյեանը սփիւռքահայ ժամանակակից գրականութեան առաւել շքնորհակալի եւ ճանաչուած դէմքերից է: Նրա ստեղծագործութիւնները պատանեկան տարիքից տպագրուել են Միջին Արեւելքի, յետագային՝ նաեւ Հիւսիսային Ամերիկայի եւ Եւրոպայի հայալեզու պարբերականներում:

Հոթոյեանի քերթուածների գողտրիկ պատկերները եւ երաժշտականութիւնն իրենց վրայ են բեւեռել երգահանների ուշադրութիւնը, իսկ նրա բառերով ստեղծուած երգերը հաւասարապէս սիրելի են թէ՛ մանուկներին, թէ՛ երիտասարդներին, եւ թէ՛ մեծահասակներին համար:

Վերջին տարիներին Գրիգոր Հոթոյեանի գրական արուեստին հաղորդակից են դարձել նաեւ Հայաստանի ընթերցողները: Ինքը՝ բանաստեղծը 1997թ. եւ 2000թ. այցելել է իր Հայրենիք եւ այս դժուարին պայմաններում աւելի սիրել եւ կապուել նրա հետ: Աւելին, Գրիգոր Հոթոյեանը հայ գրողներից եւ բանաստեղծներից շատերին օգնել է ներկայանալ Սփիւռքի ընթերցողին, միաժամանակ իր եւ իր բարեկամների սրտաբուխ նուիրատուութիւններով հովանաւորել այսօր արդէն հայ ընթերցողների կողմից սիրուած մի քանի գրքեր:

Հայրենիքից հեռու ձեւաւորուած, բայց խիստ աւանդապաշտ Հոթոյեանների ընտանիքի երրորդ սերունդն է չարունակում իր նախնիների պատգամած հայապահպանման սրբազան ուխտը Կանադայում: Արտերկրի հաւատացեալ, զգացմունքային եւ պահանջատէր հայութեանն իր անուրանալի վաստակը բերած բանաստեղծի փառապանծ յոբելեանին յղում ենք մեր բարեմաղթանքը՝ «վարձքդ կատար, սիրելի Գրիգոր Հոթոյեան»:

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԷՐԵԱՆ  
Տնտեսագէտ, բանաստեղծ,  
դոկտոր-փրոֆեսոր

Երեւան

\*\*\*

Բարեւ ձեզ հարազատներս,

Ընդունէք իմ ջերմ ողջոյնները, ինչպէս նաեւ Կարէնի եւ միւս տղաների ու աղջիկների բարեւները: Օգտագործելով առիթը, որ պրոֆեսոր Հրանտ Պօղոսեանը լինելու է Տորոնտոյում, որոշեցի ձեզ հետ հաղորդակցուել: Ցաւօք Մոսկուայի միջոցով ֆաքս չեմ կարողանում ուղարկել, թէեւ փորձելու եմ նորից Գրեգ Շիթիլեանի ֆաքսը նոյնպէս օգտագործել:

Մա իմ երկրորդ նամակն է ձեզ, բայց չնայած պատասխան դեռ չեմ ստացել, որոշել եմ անընդհատ (որպէս տարիքով կրտսեր) կապի մէջ լինել:

Մեզ մօտ իրավիճակը կարծէք մի փոքր հանդարտուել է, չնայած դժուարութիւններ դեռեւս շատ կան: Նոր պառլամենտը ամէն օր աշխատում է եւ անելիքներ շատ ունի: Իմ աշխատանքում հաւանաբար նոր փոփոխութիւններ կը լինեն, հաւանաբար նաեւ՝ Կարէնի մօտ: Ինչպէս եւ սպասուում էր, վերադարձից յետոյ եռակի լարուածութեամբ եմ աշխատում: Տանը շատ քիչ եմ լինում ու երբեմն օրերով տան անդամներին չեմ տեսնում:

Նախորդ նամակում գրել էի, որ ձեր նամակները յանձնեցի Մերուժանին (ինքը տանը չէր, դրեցի փոստարկղի մէջ), յետոյ մի քանի անգամ իրար հեռաձայնեցինք եւ զրուցեցինք ձեր ընտանիքի մասին եւ այն մասին, թէ ինչպէս ձեզ կ'ուզենք տեսնել Հայաստանում: Իմ բոլոր ընկերներին ու հարազատներին պատմել եմ ձեր ընտանիքի մասին եւ ցոյց տուել Ֆոտոները: Այնպէս որ եթէ դաք Հայաստան, արդէն շատերը ձեզ նկարով կը ճանաչեն: Պարոն Հոթոյեանի յօդուածը յանձնել եմ միանգամից 3 իմբագրութիւնների եւ մօտ ժամանակներս սպասում եմ իրենցից պատասխանի: Անդրանիկի համար ազատ ժամանակ արժանի աղջիկ եմ ման գալիս, որ գալուց ծանօթացնեմ:

Կարէնը իր կնոջ հետ Հոկտեմբերի սկզբից մեկնել է Մերձպալթիկա եւ Մոսկուա՝ հանգստանալու եւ իր արձակուրդը անցկացնելու:

Ճիշտն ասած հենց մի փոքր ժամանակ է լինում, բացում, նայում եմ մեր նկարները ձեր տանը, դրսում եւ նորից կարօտում եմ ձեզ ու այն լաւ օրերը, որ անցկացրինք ձեզ հետ:

Պարոն Հոթոյեանի խնդրանքը հանրագիտարանների վերաբերեալ չեմ մոռացել, սակայն առայժմ լրիւ չեն հրատարակուել: Հենց որ երեւայ վաճառքում, անմիջապէս ինչ-որ ձեւով կ'ուղարկեմ ձեզ:

Խնդրում եմ իմ կողմից ջերմ բարեւներ հաղորդէք Անիին եւ Մայրլին, որին արդէն վերաբերում ենք որպէս հայ եւ նոյնպէս իրենց ուրախ կը լինենք ընդունելու Հայաստանում:

Անդրանիկի նուիրած ժամացոյցը միշտ թեւիս է, օժանելիքը շատ մեծ հաճոյքով օգտագործում եմ, իսկ նկարը դրուած է հեռուստացոյցի վրայ, միւս նկարների հետ միասին:

Սրանով աւարտում եմ նամակս եւ սպասում ձեր պատասխանին (կարող էք նամակը յանձնել պրոֆեսոր Հրանտ Պօղոսեանին): Խնդրեմ ջերմ բարեւներ հաղորդէք Վրէժ Արմէնին, Լիզա Քեքեղեանին, ինչպէս նաեւ Ճգնաւորեանների եւ Թաշղեանների ընտանիքներին:

Բոլորիդ ջերմ համբուրում եմ՝

Թ.Ա.Թ.ՈՒԼ ՄԱՆԱՍԷՐԵԱՆ

*Միրելի Հարազատներս,*

*Ստացայ ձեզնից նոր՝ 2 նամակ, որը ինձ յանձնեց Սերոբ Վեսոյ-  
եանը: Ամէն անգամ ձեզնից լաւ լուրեր ստանալիս սիրտս հաճելիօրէն  
ալեկոծւում է: Յիշում եմ այն երանելի օրերը եւ զգում եմ, որ ո՛չ տա-  
րածուլթիւնը, ո՛չ էլ ժամանակը ի զօրու են որեւէ բան փոխելու մեր  
հարազատութեան մէջ:*

*Մենք ողջ եւ առողջ ենք, նոր տարին էլ ձեր բարեմաղթութիւն-  
ներով կարծէք թէ լաւ է սկսուել (ստացայ ձեր շնորհակարարական բացի-  
կը): Դրանից առաջ ստացայ յօդուածներս՝ «Հորիզոն»ում, որի հա-  
մար հոգաչափ շնորհակալ եմ կանադացի իմ ծնողներին եւ եղբօրից ու  
քրոջից: Ստացայ նաեւ բանաստեղծութիւնները՝ գրական յաւելուածի  
մէջ, որը յատկապէս շատ յուզեց մայրիկիս: Մայրս խնդրեց յատուկ  
շնորհակալութիւն յայտնել ձեզ դրա համար: Նա միշտ ասում է  
«Շուտ արա, թող պարոն Գրիգորը եւ տիկին Շաքէն իրենց զաւակնե-  
րով դան մեզ մօտ»: Ձեզ հրաւիրելու մասին խօսեցի նաեւ Մերուժանի  
հետ, նա ասեց, որ դեռ լուր չունի ձեզնից: Խնդրում եմ գրէք, թէ ինձ-  
նից ինչ է կախուած ձեր փաստաթուղթերը ձեւաւորելու համար:*

*Սերոբի հետ ուղարկում եմ նաեւ Հանրագիտարանի 1-ին հատո-  
րը, որը մի քանի շաբաթ է պատրաստ սպասում էր ձեզ: Միւս հատո-  
րները (ընդամէնը 4 հատոր է) լոյս տեսնելուն պէս որեւէ մէկի միջոցով  
նոյնպէս կ'ուղարկեմ:*

*Ուզում եմ ասել նաեւ, որ Փետրուարի վերջին – Մարտի սկզբին  
մեզ մօտ կը տպագրուի նաեւ մեծարգոյ Գրիգոր Հոթոյեանի բանաս-  
տեղծութիւններից մի քանիսը, որը կ'ուղարկեմ նոյնպէս որեւէ մէկի  
միջոցով:*

*Փետրուարի 20-ին պէտք է մեկնեմ միջազգային համահայկա-  
կան սիմպոզիումի, որը տեղի կ'ունենայ Լոս Անջելեսում: Իմ զեկու-  
ցումը, որը մտել է ծրագրի մէջ, կոչւում է «Հայաստանի դրամական  
համակարգը եւ ազատ շուկայական տնտեսութեան կազմաւորումը»:  
Մնացել է շատ քիչ ժամանակ եւ ամբողջ ուժերս լարելով, փորձում եմ  
հնարաւորին չափ լաւ պատրաստուել սիմպոզիումին, միաժամանակ  
աշխատելով ձեռնարկութիւնում եւ դասախօսութիւններ կարդալով  
«Գլաձոր» համալսարանում:*

*Այսքանով աւարտում է իր նամակը ձեր որդին եւ հարազատը:*

*Համբուրում եմ բոլորիդ՝ պարոն Գրիգորին եւ տիկին Շաքէին,  
Անդրանիկ եղբօրս եւ քրոջս՝ Անիին իր ամուսնու հետ:*

*Ձեր՝*

*ԹԱԹՈՒԼ*

30 Յունուարի 1991թ.

*Բարեւ սիրելիներս,*

*Մեծ ուրախութեամբ կարգացի Ձեր նամակը, շատ շնորհակալութիւն «Հորիզոն» թերթի համար: Ուրախ եմ, որ արդէն ստացել էք Հայաստան գալու հրահանգը եւ եթէ ամէն ինչ լաւ ընթանայ, շատ շուտով Ձեզ պիտի տեսնենք մեզ մօտ: Նախորդ նամակով ստացել էի նաեւ Ձեր ուղարկած նկարները, որի համար նոյնպէս շատ շնորհակալ եմ:*

*Ինչ վերաբերուում է Ձեր առողջական վիճակին, ապա պիտի ասեմ, որ շատ պէտք է անհանգստանալ, որովհետեւ այդտեղի բժիշկները որքան էլ որ զօրեղ լինեն ժամանակակից տեխնիկայով եւ դեղամիջոցներով, այնքան էլ թոյլ են ժողովրդական բժշկութիւնից: Մայրս խորհուրդ է տալիս սրտի, գլխի եւ ինքնազգացողութեան համար օգտագործել մի բուռ չորացրած դաղձ կամ նանա, որը դրուում է թէյի յախճապակեայ բաժակի մէջ (սովորական մեծ թէյի բաժակ), որի մէջ լցում է կէս բաժակից մի քիչ շատ նոր եռացրած ջուր, ծածկում սրբիչով 30 րոպէից 40 րոպէ, որից յետոյ պէտք է քամել, նորից մի փոքր տաքացնել եւ աւելացնել մէկ ճաշի գդալ մեղր (եթէ Ձեր արեան մէջ շաքարայնութիւնը բարձր է): Այդ պատրաստուած թուրմը պէտք է խմել վաղ առաւօտեան ժամը 5:00-ից 6:00-ը եւ խմելուց յետոյ 20-30 րոպէ պառկել կամ քնել, որպէսզի սնուցուեն մկանները: Եթէ Ձեր արեան մէջ շաքարայնութիւն կայ, ապա մեղրից քիչ պէտք է անել: Այս թուրմը պէտք է խմել 40 օր, կամաց-կամաց թուրմը դարձնելով 1 լրիւ մեծ բաժակ ամէն օր:*

*Յուսով եմ, որ դա կ'օգնի Ձեզ, որովհետեւ այս դեղամիջոցը դեռ միջնադարում հայերի մօտ ընդունուած արդիւնաւէտ միջոց էր, որին մայրս ծանօթացել է Մատենադարանի արխիւներից (Մխիթար Հերացու աշխատութիւններից):*

*Մինչեւ պրն. Զոհրաբ Սարգսեանի վերադառնալը անպայման կը փորձեմ իմանալ այլ հնարաւոր բուժման ձեւեր եւ Ձեզ նամակով գրել: Բացի դրանից կը հետաքրքրուեմ նաեւ այլ բժիշկների մօտ եթէ դուք Հայաստանում լինէք, Ձեր բուժման հնարաւորութիւնների մասին: Ամենակարեւորը ինքնաներշնչումն է, միշտ պէտք է Ձեզ ներշնչէք, որ ամէն ինչ կարգին է եւ ոչինչ Ձեզ չի անհանգստացնում:*

*Միւրելի պարոն Հոթոյեան, մի քանի օր առաջ Աշոտ Պօղոսեանը (կոմունալ մինիստրութիւնից), որը անցեալ տարի Կանադա էր, ինձ ասեց, թէ Դուք արդէն Երեւանում էք: Ես իրար անցայ, ամբողջ տունը ուրախացաւ, սկսեցինք Ձեզ փնտռել բոլոր հիւրանոցներում (չնայած զարմացայ, որ նախարէս ոչ մի լուր չունէի), բայց յետոյ երբ որ խօսեցի Մերուժան Գրիգորեանի հետ, պարզուեց, որ նա Ձեզինք նամակ է ստացել եւ Աշոտին ասել է, իսկ վերջինս ճիշտ էէր հասկացել: Շատ*



ափսոսացի, բայց հաւատում եմ, որ շուտով դա իրականութիւն կը լինի եւ մենք պատիւ կ'ունենանք Ձեզ տեսնել Հայաստանում:

Մեր ընտանիքի ջերմ բարեկենքը (յատկապէս մօրս կողմից) Ձեզ, տիկին Շաքէին, եղբօրս եւ քրոջս եւ Մայքլին:

Ամուր գրկում եւ համբուրում եմ՝

ԹԱԹՈՒԼ

\*\*\*

Բարեւ սիրելիներս,

Ստացանք Ձեր նամակն եւ շատ ուրախացանք: Իւրաքանչիւր նախադասութիւն ընթերցելիս կարծէք թէ կողք-կողքի գրուցում ենք միմեանց հետ: Մեր ընտանիքում Դուք՝ պարոն Հոթոյեան եւ Ձեր տիկինն ու զաւակներն առանձնայատուկ պաշտամունք էք: Այդօրինակ զգացմունքների գամման ստեղծուեց երբ ես անձամբ այցելեցի Ձեր ընտանիքը: Շատ դրական, հաճելի տպաւորութիւն գործեցին այն դրացիները, որոնք Ձեր տանն էին այդ օրը եւ կը խնդրեմ մեր ողջոյնները հաղորդէք նրանց եւս:

Պարոն Հոթոյեան, ես եւ Թաթուլն անչափ անհանգստացել ենք Ձեր առողջութեան համար եւ բոլորովին չենք կարող հաշտուել այդ մտքի հետ, որ այդտեղի բժիշկները զօրու չեն բուժելու, կամ որոշակիութիւն չեն մտցնում հիւանդութեան արտորոշման նկատմամբ: Թաթուլի նախորդ նամակում գրուած դարմանները վերցուած են մեր Մատենադարանի ոսկեայ ֆոնդից՝ հին Հայաստանում ժողովրդական բուժումներից: Եթէ լաւ զգայիք եւ գայիք Հայաստան, ապա հիմա արդէն յայտնի են անուններ, որոնք այդ ուղիներով բուժում են: Շատ լաւ կը լինէր, որ աստիճանաբար այդ հիւանդութիւնը նահանջէր եւ Ձեզ մեզ մօտ տեսնէի ապաքինուած: Դուք մանրամասն գրել էիք այդ մասին, սակայն խորհուրդները մեր կողմից եղել են համապատասխանօրէն, ուղղակի ի՞նչպէս է որ դրական ներգործութիւնը նշմարելի չէ:

Մեզ ուրախացրեց Դաշնակցութեան թերթում Ձեր մասին գրուած յօդուածը, որն ուշացումով է հանդէս գալիս, բայց ոչինչ, սա վերջինը չէ. նոր է սկսում իսկական հայրենասէրի, ազգասէրի նկարագիրը տրուող յօդուածաշարը, յանձինս Ձեզ հայ ժողովուրդը ծանօթանում է տարիների ընթացքում իր մասին թէկուզ հեռուից, օտար ափերից ուշի-ուշով ազգի ճակատագրին հետեւող, գործով ծառայող, մտքերով սնող, իր իսկ անձնական օրինակով անհատականութիւն ներկայացնող իսկական հայորդու, որը տառապել է, բայց չի զիջել, դաւանափոխ չի եղել, անզիջում պայքարել է ազգի լուսաւոր ապագայի համար: Եւ այդ մասնակիօրէն արտայայտուել է թերթի այդ յօդուածում: Ձեր պոէզիայի հետ ծանօթանալու համար յատուկ ժամա-

նակ պէտք է յատկացնեմ, որպէսզի կարողանամ գոնէ մասամբ «սեփականացնել»: Չնայած մինչ այս յօդուածը Թաթուլն շատ էր բանալոր պատմել, բայց մօտիկից ծանօթանալն իմ սրբազան պարտքն է:

Սիրելի տիկին Շաքէին եւ Անիին, Անդրանիկին ու ձեր յարգարժան փեսային ջերմագին բարեւներ, ողջութիւն եւ բարի տեսութիւն Հայաստանում: Որքան էլ գրեմ, չեմ կարող յագեցնել իմ կարօտը, որն այժմ քան երբեւէ սահման չունի եւ միայն յարաբերական, առերեւոյթ կարող եմ հաշտուել այս մի քանի տողերի հետ, որոնք պիտի ցրեն այրող կարօտս:

Համբոյրներով՝ միշտ ձեզ հետ

ՌԻՄԱ, ԹԱԹՈՒԼ ԵՒ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

30/V/92թ.

\*  
\*  
\*

Բարեւ սիրելիներս,

Շատ ցաւում եմ, որ երկար օրեր է, ինչ չենք հաղորդակցւում իրար հետ նամակով, բայց իրականում շատ ու շատ կարօտել եմ բոլորիդ, մանաւանդ իմ պաշտելի Կանադայի հօրը՝ պրն. Գրիգոր Հոթոյեանին: Ձեր առողջական վիճակը խիստ անհանգստացնում է թէ՛ ինձ, թէ՛ մօրս եւ միւս ընտանիքի անդամներին: Ուզում եմ հաւատալ, որ գոնէ հիմա փոքր-ինչ լաւ վիճակում էք եւ այլեւս այդքան սաստիկ ցաւեր չունէք: Որքան որ առիթ է եղել, թէ՛ Յակոբ Կէտիկեանից, թէ՛ Սիլվա եւ Գէորգ Չարչաֆեաններից միշտ հարց ու փորձ ենք անում հարազատների՝ ձեր մասին:

Անկեղծօրէն ուզում եմ ձեր ընտանիքը տեսնել մեզ մօտ եւ Հայաստանը իրար հետ վայելենք: Յաճախ հանդիպում կամ հեռախօսով զրուցում եմ ձեր ազգականների՝ Մերուժանի եւ Ժորայի հետ, որոնց նամակները եւ ամսագրերն ու գիրքը ուղարկում եմ Ձեզ եւ ուղղուած Ձեր եղբօրը:

Գիտեմ, որ Կանադայում տնտեսութիւնը անկում է ապրում, բայց այն ինչ կատարւում է Հայաստանում, պարզապէս աննկարագրելի է: Թէ՛ տնտեսութիւնը եւ թէ՛ քաղաքականութիւնը այնպիսի ապաշնորհ եւ կասկածելի մարդկանց ձեռքերում են, որ ոչ մի երաշխիք չունենք վաղուայ օրուայ հանդէպ: Հայաստանը վերածուել է մի դժոխային երկրի, որտեղ միայն վախն ու անորոշութիւնն են իշխում: Ձեմ ուզում ձեր մէջ վատ զգացմունքներ ավնացնել, բայց իրական պատկերը սա է եւ եթէ մենք այդ «մարդուկներին» եւ ինքնագոհ քաղաքական գործիչներին վայր չիջեցնենք ավթոռներից, վաղը շատ բան կը կորցնենք անվերադարձ: Դրա համար պէտք է զինուկենք համբերու-

թեամբ եւ տոկանք: Վստահ եմ, որ Գէորգ Չարչաֆեանից եւ միւսնե-  
րից աւելի շատ բան կը տեղեկանաք:

«Արմէնթրէյդը» կարծես որոշ յաջողութիւնների ակնկալիքներ  
արդէն ունի եւ վերջին 1-2 ամսում արդէն սկսել է առաջին profit-ը  
ստանալ: Մի փոքր պայմանների բարելավման դէպքում վստահ եմ,  
որ տասնապատիկ մեծ կը լինեն արդիւնքները:

Անձնական հարցերը նոյն վիճակում են: Միայն մի փոքր տեղա-  
շարժ է սպասուում Հոկտեմբեր ամսուայ կողմերը: Կամ երեխայի մայ-  
րը կը գայ Երեւան, կամ ստիպուած կը լինեմ յատուկ դրա համար իրեն  
հանդիպել եւ փորձեմ որոշ փոփոխութիւններ մտցնել մտածելակերպի  
մէջ:

Այս եւ բոլոր այլ հարցերում ապաւինում եմ Աստծուն եւ խորը  
հաւատ ունեմ, որ լաւ պէտք է լինեն այն մարդկանց գործերը, ովքեր  
դրան արժանի են:

Ամուր գրկում եւ համբուրում եմ բոլորիդ:

Կարօտում եւ սպասում եմ ձեզնից լաւ լուրերի:

Միշտ ձերը՝

ԹԱԹՈՒԼ ԵՒ ՄԱՆԱՍԷՐԵԱՆ ՆԵՐՒ ԸՆՏԱՆԻՔ

27.08.92, Երեւան

P.S.- Մասնաւոր բարեւներ մայրիկիս կողմից բոլորիդ:

\*\*\*

Բարեւ սիրելիներս,

Ընդունէք իմ ջերմագին շնորհաւորանքներն ու բարեմաղթանք-  
ները Նոր Տարուայ եւ հայկական Սուրբ Ծննդեան տօների կապակ-  
ցութեամբ: Թող 1999 թուականը Ձեր ընտանիքի համար լինի յաջո-  
ղութիւնների, բարի իրագործումների, քաջառողջութեան, երջանկու-  
թեան ու բարեկեցութեան տարի: Նաեւ թող Նոր Տարին առիթ լինի  
միմեանց հետ հաղորդակցուելու եւ ուրախանալու բարի ու լաւ լու-  
րերով, եւ առիթ ընձեռնի նոր հանդիպումների համար: Խաղաղու-  
թիւն եւ տնտեսական վերելք Հայաստանին եւ հայապահպանման յա-  
ջող իրագործումներ՝ Սփիւռքում, յարատեւում մեր բարեկամութեա-  
նը:

1998 թուականի վերջին ամիսներն ինձ համար նշանաւորուեցին  
բազմազբազ օրերով, որոնց արդիւնքները, կարծում եմ, կ'երեւան  
1999 եւ յաջորդող տարիներին: 1998թ. Նոյեմբերին կայացած Հա-  
յաստանի տնտեսական հիմնահարցերին նուիրուած ազգային գիտա-  
ժողովին իմ կողմից ներկայացրած Տնտեսական Օրագիրը հաւանու-  
թեան արժանացաւ մասնագէտների կողմից եւ շուտով կը ներկայաց-

ուի ՀՀ նախագահին եւ ՀՀ վարչապետին: 1998թ. Սեպտեմբերից սկսած աշխատում եմ որպէս ՀՀ նախագահին կից Քաղաքական Խորհրդի Տնտեսական Ենթայանձնախմբի նախագահ, որին անդամակցում են 11 քաղաքական կուսակցութիւններ ու հասարակական կազմակերպութիւններ: Յուսով եմ, որ այս պաշտօնում կատարուող աշխատանքն աւելի անմիջական ազդեցութիւն կ'ունենայ տնտեսութեան զարգացման ընթացքի վրայ:

Յուսով եմ, որ Ձեր ընտանիքում ամէն ինչ կարգին է: Իմ կողմից ջերմ բարեւէք Տորոնտոյի մեր ընկերներին: Իմ նոր հեռախօսն է 3742 - 58 38 68 /նաեւ՝ Ֆաքսի թիւը/:

Ամանորեայ ջերմ մաղթանքներով,

Ձեր՝

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԷՐԵԱՆ

29 Դեկտեմբեր 1998թ.  
Երեւան

\* \* \*

Բարեւ իմ սիրելի ու հարազատ Հոթոյեաններ,  
Սիրելի Գրիգոր Հոթոյեան,

Նախ, խնդրում եմ ներողամիտ լինէք իմ երկարատեւ լուռութեան համար: Այդ ընթացքում ես ստացել եմ ձեր նամակները, բայց ծայր աստիճան խառը եւ լարուած պայմաններում, ցաւօք, չեմ կարողացել պատասխանել: Այս օրերին յարաբերական խաղաղութիւն է կարծես թէ՛ ընդհանրապէս Հայաստանի կեանքում, թէ՛ իմ գործերում եւ թէ՛ անձնական, ընտանեկան կեանքում: Իրականում շատ եւ շատ կարօտել եմ բոլորիդ եւ ամէն մէկիդ առանձին-առանձին: Շատ քչերն են մնացել, որոնց անկեղծօրէն ձգտում եմ տեսնել, կամ առնուազն լսել նրանց մասին: Կեանքն այստեղ գնալով վատացաւ եւ կարծում եմ քաջատեղեակ էք վերջին անցուղարձից: Միայն աւելացնեմ, որ այն ինչ պատահեց Հոկտեմբերի 27-ին, մեր տանից ճիշտ 20-25 մետր հեռաւորութեան վրայ էր (հիմա մեր ընտանիքը տեղափոխուել է նոր բնակարան 1998թ. Հոկտեմբերից): Ինչ վերաբերուած է իմ աշխատանքին, ապա վարչապետ Վ. Սարգսեանի օրօք մի քանի լաւ առաջարկներ ստացայ պաշտօնավարելու կառավարութիւնում: Իմ ներկայացրած տնտեսական ծրագիրը ամբողջովին ընդունուեց կառավարութեան կողմից, իսկ ինձ մասնաւոր, յատուկ շնորհակալութիւն յայտնեցին: Սակայն ճակատագրի բերումով, մինչ իմ նշանակումը եւ մինչ Հոկտեմբերի 27-ը այլ փոքր խժոժութիւններ եւս եղան քաղաքական ասպարէզում, որը նախ յետաձգեց իմ նշանակումը, այնուհետեւ առայժմ օրակարգից դուրս բերեց իմ ակտիվ մասնակցութիւնը: Հիմա շարունակում եմ իմ մանկավարժական աշխատանքը եւ դասաւան-

դուժ եմ Երեւանի պետական համալսարանում: Շարունակում եմ յօդ-  
ուածներս, որոնց երեւի նոյնպէս տեղեակ էք: Իսկ ընտանեկան կեան-  
քում, երեւի նաեւ աշխատանքում, կարծես թէ սպասուում են լաւ փո-  
փոխութիւններ, իսկ թէ ինչպիսին, կը տեղեկացնեմ յաջորդ անգամ:

Ցաւօք սրտի, ինձ համար առայժմ անհնար է հեռախօսով զրուցել  
ձեզ հետ, քանի որ նիւթական դժուարութիւնների պատճառով  
առայժմ չեմ կարողացել մարել long distance line-ի նախորդ պարտքը:  
Միաժամանակ, կարող եմ յայտնել, որ ինձ հետ կապի լաւագոյն մի-  
ջոցներից մէկը կարող է լինել e-mail-ը, որն ամէն օր օգտագործում  
եմ, ստանում եւ ուղարկում նամակներ:

Ամէն դէպքում յայտնեմ նաեւ իմ նոր հեռախօսն ու հասցէն:

Եթէ կարողանաք e-mail-ի հաղորդակցութեան միջոց գտնէք,  
չատ երջանիկ կը լինեմ նորից կայուն կապ հաստատելու: Իմ համ-  
բոյրները Անդրանիկին, տիկին Շաքէին, Անիին, իր ամուսնուն, փոք-  
րիկ Քրիստոֆորին, եւ Իհարկէ, իմ Կանադայի հօրը Գրիգոր Հոթոյեա-  
նին: Ձերմ բարեկներ ընդունէք նաեւ իմ ընտանիքից: Առիթ լինելու  
դէպքում բարեկներս հաղորդէք ձեր եղբօրը Յովհաննէսին, ինչպէս  
նաեւ մեր մտերիմներին եւ բարեկամներին Տորոնտոյի Հայ Կենտրո-  
նում:

Յուսով եմ շուտ եւ լաւ տեղեկանալ ձեր մասին:

Համբոյրներով,

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԷՐԵԱՆ

Յունուար 18, 2000թ.

\* \* \*

Սիրելի եւ կարօտալի Հոթոյեաններ,

Շնորհակալ եմ նամակի եւ «Հորիզոն»ի համար, որ ուղարկել էիք  
Վրէժ Աւագեանի հետ: Ցաւում եմ, որ չկարողացայ Վրէժի հետ հան-  
դիպել, բայց հեռախօսով զրուցելով շատ տպաւորուեցի եւ յոյս ունեմ,  
որ իր յաջորդ այցելութեանը պիտի կարողանամ հանդիպել:

Ինձ մօտ կարծես թէ ոչ մի մեծ նորութիւն դեռ չկայ: Աշխատում  
եմ արտգործնախարարութիւնում եւ դասախօսում եմ Երեւանի պե-  
տական համալսարանում: Եղբայրս՝ Արթուրը շուտով կը տեղափոխ-  
ուի իր նոր բնակարանը Նորքում: Արթուրին երկրորդ դուստրը ծըն-  
ուեց Սեպտեմբերին եւ հիմա չորս անձ դարձան: Ես դեռ իմ անձնա-  
կան հարցերում որեւէ նորութիւն չունեմ, սպասում եմ ընտանիքիս  
համաձայնութիւններին: Մայրս շատ բարեւ է անում բոլորիդ: Իր ա-  
ռողջութիւնը առաջուայ նման փոփոխական է, յուսամ փոքր-ինչ կը  
լաւանայ: Թամարան շուտով նոր աշխատանք կ'ունենայ:

Միակ նորութիւնը նոր գրքիս լոյս ընծայումն է, բայց դրամի  
չգոյութեան պատճառով տպարանին մեծ պարտքեր ունեմ: Կ'ուզե-

նայի խնդրել, որ մի քանի օրինակ օգնէիք վաճառելու Տորոնտոյում, որը կը փոխանցեմ տպարանի տիրոջը: Գրքի նկատմամբ հետաքրքրութիւնը մեծ է: Մի քանի օր յետոյ կը լինի գրքի շնորհահանդէսը, որին ներկայ կը լինեն գիտնականներ, գործարարներ եւ կառավարութեան ներկայացուցիչներ: Եթէ ժամանակ եւ ցանկութիւն ունենաք, կարելի է գիրքը ներկայացնել նաեւ «Հորիզոն»ի էջերում: Շնորհահանդէսին պէտք է հրաւիրեմ Սասուն Գրիգորեանին՝ իր խօսքն ասելու:

Սրանով աւարտում եմ նամակս: Մնացածը՝ e-mail-ով:

Ջերմ եւ կարօտալի բարեւներ բոլորին, շնորհաւորէք տիկին Շաքէին եւ Մայքլին գալիք տարեդարձները:

Համբոյրներով՝

ԹԱԹՈՒԼ

7 Հոկտեմբերի 2000թ.

\* \* \*

Երեւան, 1 Դեկտեմբերի 2000թ.

Սիրելի Գրիգոր Հոթոյեան եւ ընտանիք,

Նոյեմբերի 28-ին ծնուեց զաւակս եւ այսօր իր մօր հետ տուն բերեցինք: Ինձ համար շատ ուրախալի օր է: Տանս դարձեալ մանկան ճիշ լսուեց եւ ես դարձեալ հայրիկ եմ: Առողջ մանկիկ է, ինձ նման է: Միակ ափսոսանքս այն է, որ մայրս եւ քոյրս այս օրերին քաղաքում չեն, սակայն արդէն լուր ունեն զաւակիս ծննդեան մասին: Երկու շաբաթ առաջ մեկնել են Ամերիկա, առայժմ կարճ, բայց անորոշ ժամանակով: Մօրաքոյրս մեզ հետ է եւ փորձում է ամէն կերպ օգնել խնամելու մանկիկին: Ինչպէս արդէն e-mail-ով տեղեկացրել եմ, ընկեր Յարութիւնից ստացել եմ ծրարը՝ նամակով, «Գանձասար» շաբաթաթերթով եւ 100 ԱՄՆ դոլարով, որի համար անչափ շնորհակալ եմ: Տպագրական ծախսերի մի մասը հնարաւոր եղաւ հոգալ այդ գումարով: Բարեբախտաբար 10 գրքի պատուէր ունեմ Մոնրէալից՝ Jack Berberian անունով մի մարդուց, որը իմ Մոնրէալ եղած ժամանակ 1990թ. ծանօթացած է եւ օրերս տեղեկանալով գրքիս լոյս ընծայման մասին, խնդրել է 10 օրինակ իրեն ուղարկել: E-mail-ով տեղեկացրել է իր հասցէն: Խնդրում եմ ինձ օգնէք գրքերի Մոնրէալ հասցնելու կամ իրեն e-mail-ով կը տեղեկացնեմ, որ ձեզինք ինչ-որ ձևով վերցնի:

Ինչ վերաբերում է «Հորիզոն»ին, ես Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմնից թոյլտուութիւն ունեմ դաշնակցական մամուլում ազատ տպագրուելու (ընկեր Հրաչի կողմից) եւ մօտ օրերս իմ դիմումի համաձայն յոյս ունեմ հարցերը եւս հարթել 1-2 դաշնակցական ընկերների հետ, որոնք պատճառ էին դարձել խնդիրներիս համար: Իմ

կապերը Դաշնակցութեան հետ շատ ամուր ու ջերմ են եւ կ'ուզեմ յայտնել, որ Դաշնակցութիւնն ինձ համար միայն կուսակցութիւն չէ, դա ինձ համար ազգային եւ ընտանեկան սուրբ արժէք է եղել, կայ եւ կը լինի միշտ:

Ինչ վերաբերուում է իմ գրքի շնորհահանդէսին, ապա այն անցաւ մեծ յաջողութեամբ, ներկայ էին նախարար Վարդան Օսկանեան, այլ նախարարներ, Ազգային Ժողովի պատգամաւորներ, գիտնականներ, ակադեմիկոսներ, մտաւորականներ, գործարարներ: Սիրվա Կապուտիկեանը եւս խօսեց, Սասուն Գրիգորեան եւ այլ ընկերներ ջերմ խօսքեր ասացին: Սասունի հետ պայմանաւորուել ենք շուտով հանդիպելու եւ անպայման կը հարցնեմ «Դէպի Երկիր» գրքի մասին: Մինչ այդ, ուզում եմ յայտնել, որ մինչեւ տարեվերջ հայաստանեան երկու շատ տարածուած թերթերում կը տպագրուեն բանաստեղծութիւններ «Սիրտը Ափին Մէջ» ժողովածուից՝ Ձեր լուսանկարներով: Անմիջապէս տպագրութիւնից յետոյ Ձեզ կ'ուղարկեմ թերթը:

Դարձեալ շատ շնորհակալ եմ այն ամէնի համար, որ զգում եմ Ձեր կողմից: Միշտ ինձ հետ էք մտովի, սրտով եւ հոգով: Աղօթում եմ Ձեր եւ Ձեր ընտանիքի ազնուահոգի անդամներից բոլորի համար: Առողջութիւն եւ մաղթում Ձեր եղբօրը՝ Յովհաննէսին, որին շատ սիրում ենք եւ յարգում:

Ձեզ բարեւում են բոլորը, Մանուկ Յարութիւնեանը (փրիխոփայ, որ հանդիպեցինք Աբովեան փողոցի վրայ քայլելիս): Շատ տպաւորուած էր Ձեզնից: Հանգստի կոչուելուց աւելի հետաքրքիր ժամեր կ'անցկացնէք Ձեր թոռների հետ՝ նրանց տալով Ձեր ոգեղէն, մտաւոր եւ հայրենասիրական արժէքները:

Կարօտալի համբոյրներով՝

ԹԱԹՈՒԼ ԵՒ ՄԱՆԱՍԷՐԵԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔ

\*\*\*

Իմ շատ սիրելի Գրիգոր Հոթոյեան եւ ընտանիք,

Շատ շնորհակալ եմ Ձեր ուղարկած \$100 նուէրի եւ դեղերի համար: Ընկեր Վրէժից ստացայ եւ կարդացի նաեւ բանաստեղծութիւնները, որոնք ինձ վրայ շատ մեծ տպաւորութիւն գործեցին: Դրանք անպայման կը փորձեմ տպագրել Հայաստանում լոյս տեսնող թերթերից մէկում: Դեռ անցեալ տարուայ Դեկտեմբերին երկու թերթերում խոստացել էին տպագրել «Սիրտը Ափին Մէջ» ժողովածուից: Այդ թերթերից մէկն այլեւս չի տպագրուում, իսկ միւսը միշտ խոստանում է, որ միւս ամիս կը տպագրուի (դա «Հայաստան» թերթն է): Ամէն պարագայում պէտք է հաշուի առնել երկրի թերթերի (յատկապէս գրական եւ արուեստի գործեր տպագրող) ծանր նիւթական վիճակը:

Իսկ միև թերթերն ուղղակի քաղաքական լուրեր են տպագրում, երբեմն՝ տնտեսական: Յոյս ունեմ, որ ընկեր Վրէժի հետ Սասուն Գրիգորեանի գրքերից եւս մի քանիսը Տորոնտո կը հասնեն՝ յանձնելու հովանաւորներին:

Մեր փոքրիկ Արմէնը Յունիսի 28-ին 7 ամսական կը լինի, առողջ եւ խելացի երեխայ է: Կինս եւս համեստ եւ նուիրուած է ընտանիքին: Մի քիչ դժուար է առանց մեծերի փոքրիկին մեծացնել, բայց դիմանում ենք: Մայրս եւ քոյրս դեռ Ամերիկայում են: Քոյրս ցանկութիւն ունի սովորել եւ աշխատել այնտեղ, իսկ մայրս ուզում է քոջս կողքին լինի այնքան ժամանակ, մինչեւ որ նա ինքնուրոյն կեանք սկսի, որից յետոյ գայ Հայաստան: Մայրս եւ քոյրս շատ են ուզում, որ ես էլ իմ ընտանիքով գնամ իրենց մօտ, բայց Ամերիկան ինձ պէտք չի, ես ինձ Հայաստանում եմ լաւ գգում եւ ուրիշ երկիր չեմ գնայ ապրելու: Այսօրուանից տեղափոխուում եմ այլ աշխատանքի՝ կառավարութեանը կից մի կառույցում պէտք է ղեկավարեմ միջազգային համագործակցութեան բաժինը: Իրենց վարձատրութիւնը կը բաւարարի նուազագոյն կարիքների համար, իսկ մի փոքր գումար էլ կը վաստակեմ համալսարանում դասաւանդելիս: Արտաքին գործերի նախարարի խորհրդականի պաշտօնը այլեւս կը վարեմ առանց վարձատրութեան եւ աւելի քիչ ժամանակ կը տրամադրեմ դրան:

Իմ առողջութիւնը քիչ-քիչ կայունանում է եւ յոյս ունեմ մի փոքր սպորտով եւ մարզանքով բարելաւել վիճակս:

Շատ եւ շատ եմ ցաւում Յովհաննէսի կորստեան համար, մեր ընտանիքը յատուկ սէր ու յարգանք ունէր իր հանդէպ եւ միշտ պէտք է յիշի իր պայծառ անունը: Մայրս եւս տեղեակ է եւ իր ցաւակցութիւնն է յայտնում Ձեզ:

Շնորհակալ եմ Ձեզ կրկին անգամ ամէն մի քայլի եւ վերաբերմունքի համար: Կարօտագին գրկում եւ համբուրում եմ բոլորիդ:

Ձեր որդի՝

ԹԱԹՈՒԼ

22 Յունիսի 2001թ.

\*  
\*  
\*

Սիրելի Գրիգոր Հոթոյեան,

Ընդունէք իմ սրտից բխած կարօտալի համբոյրները եւ շնորհաւորանքները Ձեր բարի ծննդեան տարեդարձի առթիւ: Վստահ եմ, որ Օգոստոսի 5-ը Ձեր ընտանիքում համերաշխ, ուրախ մթնոլորտում կը նշէք, իսկ ես մտովին կը յիշեմ 1990թ. Օգոստոսի 5-ը, երբ ուշ գիշերին միացանք Ձեր տանիքի տակ եւ հրաշալի ժամանակ անցկացրինք:

Վերջապէս, երկարատեւ փորձերից յետոյ, Հայաստանի ամենատարածուած եւ յայտնի օրաթերթը՝ «Առաւօտ»ը տպագրեց Ձեզ ուղ-



ղուած իմ շնորհակարանքը, իսկ Հայաստան-Սփիւռք ծրագիրը Օգոստոս 5-ին ազգային ուղիորդով կը հեռարձակի Ձեր բանաստեղծութիւններէց մի փունջ: Այս ամէնը մի տեսակ տօնական տրամադրութիւն է հաղորդում ինձ, որով փորձում եմ փարատել իմ կարօտը:

Մաղթում եմ Ձեզ եւ Ձեր օրինակելի ընտանիքին քաջ առողջութիւն, երկար կեանք եւ երջանկութիւն: Թող Ձեր գործը շարունակեն Ձեր սերունդները, իսկ Ձեր ստեղծագործութիւնները՝ միշտ կարդացուեն փոքրերի, մեծահասակների եւ երիտասարդների կողմից: Եւ թող Ձեր հայրենանուէր իղձերն ու երազները իրականանան՝ թող Հայաստանը հզօրանայ եւ Սփիւռքի հայերին իր գիրկն առնի:

Ամենայն բարիք եւ առողջութիւն եմ մաղթում Ձեզ իմ եւ ընտանիքիս բոլոր անդամների կողմից:

Կրկին շնորհակարում եմ, ամուր գրկում եւ համբուրում՝

Թ.Ա.Թ.ՈՒԼ ՄԱՆԱՍԷՐԵԱՆ

30 Յուլիսի 2001թ.

Երեւան

\*  
\*\*

Իմ շատ սիրելի Գրիգոր Հոթոյեան եւ ընտանիք,

Խորին շնորհակալութիւն եմ ուզում յայտնել «Հորիզոն»ի յատուկ համարի եւ 100 ԱՄՆ դոլարի համար:

Այսօր արդէն իմ վերջին օրն է հին աշխատավայրում: Վաղուանից կը տեղափոխուեմ Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի իմ աշխատասենեակը: Շատ լրջօրէն եմ տրամադրուած աշխատելու օրինաստեղծ բնագաւառում եւ վստահ եմ, որ իմ համախոհների թիւը քիչ չի լինի: Միաժամանակ ուզում եմ յայտնել, որ իմ յարաբերութիւնները ՀՅԴ բիւրոյի հետ առաջուայ նման ջերմ են եւ հին հաշիւներ այլեւս չկան: Խօսել եմ Հրանտ Մարգարեանի հետ եւ որոշել ենք լուրջ համագործակցութիւն ծաւալել այն հարցերում, ուր հնարաւոր է համատեղ աշխատանք: Թէ՛ Հրանտը եւ թէ՛ մեր միւս ընկերները հասկացել են, որ իմ դէմ հնչած բոլոր մեղադրանքները սուտ են, իսկ իրենց որոշումը՝ սխալ: Ի վերջոյ, բացի օգտակար, ստեղծագործ, արդիւնաւէտ աշխատանքից, ուրիշ բան չեն տեսել: Իսկ իրենց հովանաւորութեամբ, միայն չահել են եւ բարձրացրել կառոյցի հեղինակութիւնը: Կարծում եմ այս լուրը Ձեզ կը հետաքրքրի նոյնպէս:

Ես ընդգրկուած եմ ՀՀ Ազգային Ժողովում որպէս անկախ պատգամաւոր եւ յաղթել եմ ընտրութիւններում Մայիսի 25-ին, որն իմ մեծ որդու՝ Արմէնի ծննդեան օրն է: Այդ օրը նա դարձաւ 17 տարեկան: Յուսով եմ, որ իր հօր յաղթանակի լուրն արդէն առել է ԱՄՆ-ում: Իմ փոքրիկները քայլում են, ու առաջին բառեր են արտաբերում:

Փոքր Արմէնը, որ ծնուել է 2000թ. Նոյեմբերի 28-ին, արդէն մանկապարտէզ է գնում, իսկ զոյգ աղջիկները, որ ծնուել են 2001թ. Դեկտեմբերի 1-ին, քայլում են եւ սկսել են խօսել:

Երեւանում շատ շոգ է եւ պէտք է ժամանակ գտնեմ մի քանի օրով մեկնեմ Հանգստանալու: Թէ չէ երեխաները եւ կրնս չեն դիմանում շոգին:

Ուրախ եմ, որ Ձեր ընտանիքը եւս լաւ է ու առողջ: Ե՞րբ նորից առիթ կ'ունենամ տեսնելու: Իսկապէս շատ կարօտել եմ եւ միշտ հաճոյքով եմ յիշում մեր անցկացրած հաճելի պահերը:

Մայրս եւ քոյրս դեռ ԱՄՆ-ում են: Փորձում եմ համոզել, որ գոնէ մայրս վերադառնայ: Քոյրս առայժմ չի ուզում Հայաստան գալ:

Եղբայրս նոր աշխատանք է փնտռում: Յուսամ շուտով մի գործ կը գտնի:

Իմ ջերմ բարեւներս հաղորդէք Ձեր ընտանիքին եւ մեր ընկերներին:

Սիրով ու կարօտով՝ Ձեր՝

ԹԱԹՈՒԼ

19 Յունիսի 2003թ.

Երեւան

\* \* \*

Մեր շատ սիրելի Գրիգոր Հոթոյեան,

Սիրելի հոգեւոր հայր,

Ընդունէք իմ եւ մեր ողջ ընտանիքի կողմից անսահման սիրոյ եւ որդիական կարօտի, խորին յարգանքի ու երախտագիտութեան զգացումներով օծուած ողջոյնի եւ բարեմաղթանքի ջերմ խօսքերը՝ Ձեր բարի ծննդեան 90-ամեակի կապակցութեամբ:

Ամէնից առաջ, մեր երախտագիտութիւնն ենք յայտնում Աստծուն, որ մեզ պարգեւել է նման բարձր արժանիքներով օժտուած հայորդի, բազմաշնորհ արուեստագէտ, օրինակելի ընտանիքի հայր-նահապետ, ազգային եւ հասարակական բացառիկ գործիչ:

Ձեր անունը վաղուց յայտնի է ինչպէս Սիրիայում, Կանադայում, Միացեալ Նահանգներում, այնպէս էլ Հայաստանի Հանրապետութիւնում՝ ընթերցողների լայն շրջանակներին, ազգային եւ պետական իշխանութիւններին, միլիոնաւոր հայ մարդկանց:

Մեզ համար Դուք հայրենանուիրման, հայապահպանման, հայրենաշինութեան եւ ճշմարիտ արուեստի ակունքները հարստացնող Մեծ Սասունցու օրինակ էք եւ որպէս այդպիսին Ձեր հետեւորդներն ունէք ինչպէս Սփիւռքում, այնպէս էլ Մայր Հայրենիքում:

Այսօր, երբ տարիների իմաստաւորուած պաշարով ոտք էք դնում կեանքի ու ստեղծագործութեան մի նոր հանգրուան, տակաւին հա-

լատարիմ էք մնացել երիտասարդ տարիքում դաւանած այն արժէք-  
ներին, որոնք Ձեզ բերեցին արժանի փառք ու պատիւ եւ մեծարում:  
Վստահ ենք, որ Գրիգոր Վարդգէսն այսօր էլ գրական արարման, նոր  
ստեղծագործութիւնների եւ ծրագրերի պրպտումների մէջ է, որոնք  
անպայման իրականութիւն պէտք է դառնան:

Կարեւոր ենք համարում, որ քրիստոնէական հաւատքով անցած  
Ձեր կեանքի ուղին գնահատուել է նաեւ Հայոց Առաքելական սուրբ  
Եկեղեցու կողմից, նախ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոս  
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետի «Գիր Օրհնութեան եւ Գնահա-  
տաց»ին՝ 1984-ին եւ ապա՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողի-  
կոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Հայրապետի Թորոնթօ այցելութեան ընթաց-  
քին, 1 Հոկտեմբեր 2005-ին արժանացած էք «Սուրբ Մեսրոպ Մաշ-  
տոց» շքանշանին:

Բազմաթիւ պատուաւոր կոչումներից, պարգեւներից ու շքանը-  
շաններից կարեւորագոյնը թերեւս Հայ ժողովրդի սէրն է Ձեր հան-  
դէպ, սիրելի յոբելեար, իսկ լաւագոյն ձեռքերումը՝ Ձեր տիկնոջ՝ տի-  
կին Շաքէի հետ ստեղծած հրաշալի ընտանիքն է, Ձեր զաւակները՝ Ա-  
նին եւ Անդրանիկը, ինչպէս նաեւ Ձեզ արժանի թոռները, որոնք շա-  
րունակում եւ շարունակելու են Գրիգոր Հոթոյեան Մեծ Հայի գործը:

Մէկ անգամ եւս, խորին խոնարհումով, մեր շնորհաւորանքներն  
ենք յղում Ձեզ՝ ծննդեան 90-ամեակի առթիւ եւ մաղթում արեւշա-  
տութիւն, երջանկութիւն եւ նոր ստեղծագործական բարձունքներ:

Միշտ սիրով եւ երախտագիտութեամբ՝

ՊՐՈՅ. ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԷՐԵԱՆ  
եւ ՄԱՆԱՍԷՐԵԱՆ ՆԵՐՐԻ ԸՆՏԱՆԻՔ

Երեւան, 2017



(Վրէժ Արմէնին ուղղուած նամակէն)

Ի դէպ յիշեցի Պրն. Գրիգոր Հոթոյեանին, որ հոն եղած ատենս իր  
բանաստեղծութեանց գիրքը նուիրեց ինձի եւ ես՝ ապերախտս, մինչեւ  
հիմա տող չեմ գրած իրեն, թէեւ շատոնց կարդացած եմ զայն եւ գնա-  
հատած հեղինակին գերագոյն անկեղծութիւնն ու բանաստեղծելու  
ձիրքը եւ հաւատաւոր կուսակցականի ազնուութիւնը: Կը խնդրեմ  
շնորհակալութեանս հետ փոխանցէ իրեն այս կարծիքս եւ ջերմ բա-  
րեւներս:

ԱԲՐԱՀԱՄ ԱԼԻՔԵԱՆ  
Բանաստեղծ

ՊԵՋՐՈՒՔ



Շատ սիրելի Գրիգոր,

Յուսամ առողջութեամբ լաւ ես ու կը շարունակես միշտ պատեն-  
չի վրայ կենալ շարունակելով գրութիւններդ, որոնք մեծ հաճոյքով  
կը կարդամ «Հորիզոն»ին մէջ: Շատ մը գրութիւններ (հրատարակ-  
ուած գիրքերու մէջ) մի քանի անգամ կարդացած եմ, որոնցմէ ոմանք,  
իբր անցեալի անմոռանալի ու անվերադարձ դէպքեր ու յիշատակներ,  
ապրած ենք միասին Հալէպ, Գանատա կամ այլուր:

Գրութիւններդ արտացոլացումն են հայ գաղութային կեանքին՝  
իւր դժուարութիւններով ու մասնակի կամ ամբողջական յաջողու-  
թիւններով:

Հագուագիւտներէն ես, որ հակառակ յառաջացած տարիքիդ,  
գրիչդ հանգստեան չես կոչած ու կը շարունակես յորինել քերթուած-  
ներ ու արտադրել արձակ էջեր: Զերմապէս կը շնորհակարտ եմ քեզ,  
մաղթելով երկար կեանք առողջ մարմնի մէջ: Քու ցուցաբերած հա-  
մեստութիւնն ու պարզութիւնը աւելի եւս կը շեշտեն արժէքդ քեզ  
ճանչցող ու գրութիւններդ գնահատող անձերու մօտ:

Գալով ինծի, հանգստեան կոչուելէ ետք, ժամանակս ամէն օր մեր  
չըջանի նոր ու արդիական գրադարանին մէջ կ'անցընեմ կանոնաւո-  
րաբար: Փոքր տարիքէս միշտ սիրած եմ հայ ինչպէս նաեւ Ֆրանսա-  
կան գրականութիւնը: Վերջին տաս ամիսներու ընթացքին վերստին  
կարդացած եմ Ֆրանսական գրականութեան մեծագոյն դէմքերուն  
գիրքերը (Victor Hugo, Balzac, Stendhal, Ronsard, Verlaine եւ այլն),  
ինչպէս նաեւ հայկական գրականութեան մեծագոյն դէմքերէն շատ  
մը գիրքեր: Բժշկական ծառայութեանս շրջանին անկարելի էր դա-  
նոնք վերստին կարդալը:

Այժմ շատ հետաքրքրական ուսումնասիրութիւններ կը կատարեմ  
15-րդ եւ 16-րդ դարերու ընթացքին Իտալիան ղեկավարած BORGIA  
եւ MEDICIS ընտանիքներուն վարած զեղիս ու անբարոյ կեանքերու  
մասին, ինչպէս նաեւ MACHIAVEL-ի ունեցած դերի մասին՝ այդ  
չըջանի կրօնաքաղաքական ու դիւանագիտական կեանքին մէջ: Այս  
երկու ընտանիքները 4 Պապեր «պարգեւած» են Կաթոլիկ Եկեղեցւոյ,  
որոնցմէ երկուքը ապօրինի գաւակներ եղած են...

Սիրելի Գրիգոր, քեզի վերստին կը մաղթեմ առողջութիւն ու եր-  
կար կեանք, ու կը խոստանամ դարձեալ գրել...

Սիրով՝

ԲԺ. ՕՀԱՆ ԹԱՊԱՔԵԱՆ

\*\*\*

Շատ սիրելի Գրիգոր,

Ատենին ստացած եմ ինձի առաքած հատորներդ, որոնց համար մեծապես շնորհակալուծվեցի կը յայտնեմ քեզի:

Անկեղծ ըլլալու համար, ժամանակին թերթատած էի հատորներդ, սակայն գործիս պատճառաւ ժամանակ չէի ունեցած ամբողջութեամբ կարդալու ու վայելելու գրութիւններուդ պարունակութիւնը:

Հիմա, որ Յուլիս 1-էն սկսեալ ինքզինքս հանգստեան կոչած եմ, առաջին առիթով կարդացի «Ճանապարհ» եւ «Եօթներորդ Հանգըրուան» հատորներդ: Հրապարակած գրքերդ, որոնք գլխաւորաբար կը պարփակեն ազգային, կրթական, ուսումնական, եկեղեցական ու մշակութային հարցեր, ներկայացուած են պարզ, հաճելի ու դիւրամատչելի ոճով, ներշնչուած անցեալէն ու մշակութային արժէքներէն:

Գրականութեան հանդէպ նոր սերունդին ունեցած անտարբերութիւնը ու մտաւորականութեան նօսրացումը, աւելի եւս կը շեշտեն գրիչիդ արժէքն ու կարեւորութիւնը:

Իբր անձ ունեցած պարզութիւնդ ու ցուցաբերած մարդկային ջերմութիւնդ առաւել մըն են ունեցած տպաւորիչ վաստակիդ:

Սիրելի Գրիգոր, քեզի կը մաղթեմ նախ առողջութիւն ու ապա երկար կեանք ու արեւշատ տարիներ:

Սիրով ու շնորհակալութեամբ՝

ԲԺ. ՕՀԱՆ ԹԱՊԱՔԵԱՆ

\*\*\*

Մոնրէալ, 3 Նոյ. 2016

Շատ սիրելի Գրիգոր,

Կը յուսամ թէ մարմնապէս առողջ ես, ու ըստ սովորութեան կը շարունակես գրական աշխատանքներդ: Իբրեւ բժիշկ, կը փափաքիմ նկատողութեանդ յանձնել այն իրողութիւնը, որ անձի մը համար երկրորդական կարեւորութիւն ունի իր տարիքը, երբ ան մարմնապէս առողջ է ու մտքով պայծառ. շարունակէ գրութիւններդ, ու բոլորս հաճոյքով պիտի ըմբոշխնենք զանոնք: Օտար շատ մը գրագէտներ իրենց գլուխգործոցները արտադրած են հասուն ու երբեմն յառաջացած տարիքին:

Պէտք է ամօթով խոստովանիմ, որ ցարդ գրութիւններդ մասամբ միայն կարդացած էի. սակայն անցնող 2-3 շաբաթներու ընթացքին, ամբողջութեամբ կարդացի հատորներուդ մէջ տեղ գտած բոլոր արձակ գրութիւններդ, ինչպէս նաեւ բանաստեղծութիւններդ. ու այժմ կարող եմ անվարան հաստատել, որ անոնք մեծապէս տպաւորիչ են թէ՛ իրենց քանակով եւ թէ՛ որակով: Անոնք կենդանի պատկերներն են հայ ժողովուրդի բեկորներուն աստանդական կեանքին երեսները

ընդգրկող բոլոր դեպքերուն, գաղութներու կեանքը կերտող նուիրեալ վաստակաւոր անձերուն, ինչպէս նաեւ ապրումներու ու տառապանքներու, արտադրուած պարզ, սահուն ու մաքուր լեզուով. սպառիչ ու համբերատար աշխատանք՝ սքանչելիօրէն կատարուած:

Շատ ազդուած եմ կարդալով Հալէպի, ինչպէս նաեւ Սուրիոյ ձօնուած բանաստեղծութիւնները, որոնք Հայ ժողովուրդին սէրն ու երախտագիտական զգացումները կը վերահաստատեն սուրիացի ազնիւ ժողովուրդին հանդէպ, որ մօտ դար մը առաջ «ասպետական ոգիով» տէր եղաւ Հայ որբերուն:

Մեր բոլորին սիրելի եւ պաշտելի երազային Հալէպը անցեալին կը պատկանի այլեւս...: Դէպքերու, կացութիւններու, ու նաեւ սրտիդ խորքէն բղխած գրութիւններդ սքանչելի բերկրանք մը կարելի է նրկատել. կը շնորհաւորեմ քեզ ջերմապէս, յուսալով վերստին ըմբռնել այլ գրութիւններդ:

Բարեկներով՝

ԲԺ. ՕՀԱՆ ԹԱՊԱՔԵԱՆ

\*  
\*  
\*

Մոնրէպ, 8 Դեկտ. 2016

Շատ սիրելի Գրիգոր ու Թանկագին բարեկամ ու ընկեր,

Նախ սրտաբուխ շնորհակալութիւն կը յայտնեմ քեզի «Մայրամուտի Յուլքեր», ինչպէս նաեւ նախօրօք հրատարակած բոլոր հատորներդ ինծի նուիրելու ազնուութիւնը ունենալուդ համար:

«Մայրամուտի Յուլքեր» հատորը ստացած օրս իսկ յափշտակութեամբ, մէկ շունչով ու ամբողջութեամբ կարդացի ու ըմբռնանքի գրութիւններդ: Հատորը ձեռով մը արտացոլացումն է ու հարազատ պատճէնը վերջին տասնամեակներուն մեր գաղութային կեանքը ընդգրկող բոլոր երեսներուն, ինչպէս նաեւ այդ կեանքը դարբնող բոլոր անձնուէր անհատներուն, որոնց հանդէպ պարտինք բոլորս ցուցաբերել յարգանք ու երախտապարտութիւն: Անկախ քու ունեցած գրական տաղանդէդ ու պատկառելի վաստակէդ, դուն եւս այս գաղութային կեանքը կերտող ու զայն ուռճացնող անձերու փաղանգին կարապետներէն մին ես. վկայ հատորներուդ ետեւի կողքին վրայ արձանագրուած հարուստ կենսագրականդ...:

Համեստօրէն կը խոնարհիմ վաստակիդ առջեւ ու ջերմապէս կը մաղթեմ, որ առաքած «Մայրամուտի Յուլքեր» հատորիդ վերնագիրը գրքին պարունակութեան պատշաճ վերնագիր մը սեպուելի միայն եւ ոչ թէ վերջակէտի մը նախանշանը գրական պատկառելի վաստակիդ: Կ'աղօթեմ առ Աստուած, որ քեզի պարգեւէ առողջութիւն ու ուժ, որպէսզի մօտ ապագային դարձեալ վայելենք զրջէդ ելած այլ գրութիւններ ու հատորներ:

ինչպէս իր գրութիւններէն միոյն մէջ մեծանուն գրագէտ Խալիլ Ճըպրան նշած է՝ «յուշերը ձեւով մը անցեալին հետ հանդիպումներ են...»:

Միրով ու յարգանք՝  
ԲԺ. ՕՀԱՆ ԹԱՊԱՔԵԱՆ

\* \* \*

Մոնրէպլ, 2 Յունիս 2017

Շատ սիրելի Գրիգոր,

«Հորիզոն» շաբաթաթերթին վերջին թիւին մէջ լոյս տեսած յայտարարութիւնը հրապարակած վերջին հատորիդ նկատմամբ («Հայաշունչ Պատմուածքներ»)՝ մեծապէս հրճուեցուց զիս գլխաւոր երկու պատճառներով. նախ փարատեց մտավախութիւնս, որ գրիչդ մէկդի չես նետած ու կը շարունակես արդէն իսկ որակով թէ քանակով արգասաւոր տպաւորիչ վաստակդ աւելի եւս բեղմնաւորելը, ապա՝ որովհետեւ սոյն հատորը առիթ պիտի ընծայէ ինծի, ինչպէս նաեւ վըստահաբար այլ գրասէրներու փաղանգին, վերստին ըմբոշխնելու հայաշունչ գրութիւններդ:

Սիրելի Գրիգոր, տարիներու ընթացքին քու ունեցած ներդրումդ սփիւռքահայ ազգային թէ գրական կեանքին մէջ օրինակելի է ու մեծապէս գնահատելի:

Սրտանց քեզի կը մաղթեմ առողջութիւն, երկար կեանք ու այլ յաջողութիւններ:

Քեզմէ կը խնդրեմ ինծի ուղարկել վերջին հրատարակած հատորէն մակագրուած օրինակ մը:

Խորին շնորհակալութեամբ ու ջերմ բարեկներով՝

ԲԺ. ՕՀԱՆ ԹԱՊԱՔԵԱՆ

\* \* \*

Մոնրէպլ, 27 Յունիս 2017

Շատ սիրելի Գրիգոր,

Այսօր վերջացուցի «Հայաշունչ Պատմուածքներ» հեղինակած հատորիդ ամբողջական ընթերցումը. գանց առնելու միտումով յայտնի գրագէտ ու մտաւորական Ռ. Հատտէճեանի սոյն հատորին մասին գովեստներով լի գրախօսականին ազդեցութիւնը իմ վրայ, անոր ընթերցումը համացանցի վրայ վերապահեցի վաղուան:

Բոլոր գրութիւններդ անխտիր արտադրուած են պարզ, յստակ, սահուն հայերէնով, ուր առաջին պատմուածքի ընթերցումով իսկ ի յայտ կու գայ տասնեակ տարիներէ իվեր մարզուած գրիչ մը, որ ճարտարութիւնը ունի գատորոշելու կարեւորը երկրորդականէն, ու արուեստը՝ գանոնք համեմելու, հեռու մնալով հանդերձ գունաւոր ու

անտեղի ածականներու գործածութենէն: Սրտանց շնորհաւորութիւններ:

Գրութիւններուդ միայն վերնագիրները կարդալով՝ հեշտ է յըստակ կարծիք մը կազմել քոն ապրած օրինակելի կեանքին մասին, ուր լուսարձակի տակ կը դրուին մարդկային կեանքի բոլոր առաքինութիւնները՝ աղօթքը, հաւատքը, հայրենասիրութիւնը, արդարամտութիւնը, բարեգործութիւնը, երախտագիտութիւնը, պատասխանատուութիւնը, նիւթապաշտութենէ հեռու կենալը եւ այլն, որոնք անխախտ ուղեցոյցը հանդիսացած են ազգային, եկեղեցական, ուսուցչական ու այլ ծիրերու մէջ ունեցած բեղուն գործունէութիւններուդ:

Մեծ հաճոյքով կարդացի Հալէպի վերաբերեալ երիտասարդական յուշերդ, որոնցմէ շատերը միասին ապրած ենք — տարբեր ակնոցներով ու տարբեր անկիւններէ դիտուած — ու այլ յուշեր՝ ինծի համար բոլորովին նորութիւն, որոնց ընթերցումը զիս մղած է տրտում խորհրդածութիւններու՝ հայ ժողովուրդին վիճակուած արիւնոտ ճանապարհին ու նախախնամութեան հայ ազգին վերապահած ժլատ վերաբերմունքին նկատմամբ:

Արեւշատութեան ու քաջառողջութեան ջերմ մաղթանքներով ու սրտաբուխ բարեկներով՝

ԲԺ. ՕՀԱՆ ԹԱՊԱՔԵԱՆ

\* \* \*

Մոնրէպ, 3 Յունուար 2018

Շատ սիրելի Գրիգոր,

Ատենին ստացայ եւ մեծ հաճոյքով ըմբռնեցի ինծի առաքած «Ուեշունէ քերթուածներ եւ ձօներգութիւններ» հատորդ, որուն համար ընդունէ իմ սրտաբուխ շնորհակալութիւնները:

Քերթուածներ՝ ձօնուած Հայաստանին, Հայ լեզուին, Հայ դպրոցին, Հայ եկեղեցոյ, Հայ յեղափոխութեան, եղեռնին, սիրային տագնապներու սրտայոյզ խոկումներ, ինչպէս նաեւ մաղթանքներ մեր կազմակերպութիւններուն, բանաստեղծներուն, ազգային գործիչներուն, ինչպէս նաեւ քոն անմիջական սիրելիներուդ:

Գրողներուն մեծամասնութիւնը իրենց սիրտերն ու ներքին հուրը կը պարպեն արձակ գրութիւններով եւ կամ քերթուածներով: Քիչերէն ես, որ արձակին կողքին՝ յանգաւոր ու չափածոյ գրութիւններովդ հասած ես խորունկ ներդաշնակութիւններու, որովհետեւ քեզ մօտ հզօր է ներշնչումը, ու խօսքերդ կը կրեն Աստուծմէ պարգեւուած շնորհներու գրոջմը:

Քերթուածներդ կարդալէ ետք, անճիշդ ու սխալ կը գտնեմ գրական կարգ մը շրջանակներու մօտ տեղ գտած կարծիքը, թէ ոտանաւորը կը կաշկանդէ գրողը՝ ազատօրէն ճախրելու զգացումներու ու մտքի աշխարհին մէջ:



*Սիրելի՛ Գրիգոր, ընդունէ իմ սրտաբուխ, անկեղծ շնորհակալութիւններն ու շնորհակալութիւնները:*

*Քեզի կը մաղթեմ քաջառողջութիւն (մարմնային ու նաեւ մտային) ու արեւշատութիւն: Ընկերական ջերմ բարեկեցումով՝*

*ԲԺ. ՕՀԱՆ ԹԱՊԱՔԵԱՆ*

*\*  
\*\**

Մոնրէպլ, 19 Մարտ 2018

*Սիրելի ու թանկագին ընկեր Գրիգոր Հոթոյեան,*

*Մեծ հաճոյքով կը վերակարգամ ու կը վերըմբռնեմ գեղեցիկ, հետաքրքրական ու տպաւորիչ գրութիւններդ՝ իրենց բազմերանգ նիւթերով ու դաստիարակիչ եւ բարոյալից բովանդակութեամբ: Անոնցմէ ոմանք մտքիս մէջ կը վերակենդանացնեն յիշատակը մեզմէ յաւէտ բաժնուած անձնուէր ու վաստակաւոր անուններու, որոնց հետ գործակցելու պատեհութիւնն ու բախտը ունեցած եմ մօտակայ անցեալին...:*

*Ներփակ կը զրկեմ նկարներէս մին, ինչպէս նաեւ ուրիշ մը՝ նկարահանուած 23 Յուլիս 1983-ին Լոս Անճելոս, «Նաւասարդ»-ի իմբազրատան մէջ, Արմէն Տօնոյեանի ու բժիշկ Յարութիւն Սաղրեանի հետ միասին:*

*Առողջութեան ու յաջողութեան մաղթանքներով ու ջերմ բարեկեցումով՝*

*ԲԺ. ՕՀԱՆ ԹԱՊԱՔԵԱՆ*



Ձախէն աջ՝ Բժ. Օհան Թապաբեան, Արմէն Տօնոյեան եւ Բժ. Յարութիւն Սաղրեան



Սիրելի Գրիգոր Հոթոյեան,  
Ուրախառիթ էր մեր հանդիպումը, որ սակայն դժբախտաբար  
կարճ տեւեց պարագաներու բերմամբ:

Անակնկալ մը եղաւ ինծի հատորդ, որուն համար կը փափաքէի  
անձամբ շնորհակալութիւն յայտնել:

Ձայն կը յայտնեմ այս արագ երկտողով, տաքը տաքին՝ ինչպէս  
կ'ըսեն, ալլապէս յաջորդ զբաղումը կրնայ գրաւել տեղը: Ա՛յս է  
կեանքը:

Արեւշատութեան եւ նորանոր պտղաբերումի մաղթանքներով,

ԺԱԳ ՅԱԿՈՒԲԵԱՆ

Բանաստեղծ, թատերագիր, հրապարակագիր

Յ.Գ.— Ներփակեալը ընդունէիր որպէս շատ չնչին մասնակցութիւն  
մը նիւթական ծախսերուն, գիտնալով թէ ի՛նչ գերհերոսութիւն է հա-  
յերէն գրքի մը հրատարակութիւնը:

Նոյ. 23, 1987

\* \* \*

Սիրելի գրագէտ եւ բարեկամ Գրիգոր Հոթոյեան,  
Շուտ մը արձանագրելու նպատակով, անմիջապէս օրտըր (*order*)  
մը գնեցի, թուական՝ 6-14-2007:

Անկէ ի վեր, ամէն օր կը ծրագրեմ գրել եւ չեմ յաջողիր՝ բազմազ-  
բաղութեան պատճառաւ: Առաջին երեք ամիսներուն մէկական ելոյթ  
կը պատրաստեմ, եթէ Տէրը կամի:

Կը ցաւիմ ուշացումիս համար:

Այսօր, հերքիւլեան ճիգով մը ձեռք առի գրիչս «Ճանապարհ»իդ  
առիթով:

Բացառիկ ու եզակի գործ մը՝ թէ՛ բարոյապէս թէ՛ նիւթապէս, որ  
ձեր քաղաքին ու գաղութին կեանքը կը ներկայացնէ իր զանազան ե-  
րեսներով: Յորդահոսուն գրիչիդ շնորհիւ անոր պատմութիւնը պիտի  
չկորսուի: Արխիւային մեծ արժէք կը ներկայացնէ հատորդ:

Սրտագին շնորհաւորութիւններս:

Նոր յաջողութեանց ջերմագին մաղթանքներով՝

ԺԱԳ ՅԱԿՈՒԲԵԱՆ

17 Յուլիս 2007

Փասատինա, Ա.Մ.Ն.

\*  
\*\*

Թանկագին եւ սիրելի գրչակից բարեկամ Գրիգոր Հոթոյեան,  
Մեծապէս զգածուեցայ ձեր ծաղկալից շնորհաւորագիր բացիկէն,  
որ ինծի յիշեցուց ձեզի հետ իմ ապրած օրերս ձեր երկինքին տակ:  
Խորապէս շնորհակալ եմ:  
Քաջառողջութեան եւ գրական յաջողութեանց մաղթանքներով՝

ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

Օգոստոս 27, 2016



21 Հոկտեմբեր 1991

Սիրելի ընկ. Գրիգոր,

Կը յիշես անշուշտ մեր խօսակցութիւնը անցեալ օր հօրս ձեռագիրներու կապակցութեամբ: Քեզի կը խօսէի զանոնք մեկնաբանելու կամ կարգալու դժուարութեան մասին ու դուն յանձն առիր փորձել այդ գործը: Ուստի ահա կը զրկեմ խնդրոյ առարկայ ձեռագիրները, որ ԿԱՐԵԼԻ ԵՂԱԾԻՆ ՉԱՓ ՇՈՒՏ կարգաս ու ետ ինծի յղես: Այս անպարանքին պատճառը այն է, որ մենք կը մեկնինք այս աշխարհամասէն այս տարուայ աւարտին ու պէտք է լմննայ ամէն ինչ — սրբագրութիւն, մեկնաբանական ամէն աշխատանք, տառաշարութիւն, հրատարակութիւն — մեր բաժանումէն առաջ: Ես հրատարակչական ուրիշ շատ կարեւոր գործի մըն ալ լծուած եմ — Քրիստափոր Միքայէլեանի ամբողջական գործերը եւ այլն — եւ շատ քիչ ժամանակ ունիմ: Կարմիր մատիտով նշանակած եմ այն բառերը, որոնց մեկնաբանութիւնը կ'ուզեմ: Պարզապէս արձանագրէ գտած բառերդ բնագրին քով ու ետ զրկէ ինծի: Քեզի ըսի՞, որ քեզմէ առաջ երկու այլ անձեր փորձեցին մեկնաբանել Օշականի ձեռագիրը: Առաջինը Յարութ Երէցեան, Ապրիլ գրատան-հրատարակչատան սեփականատէրը, Լոս Անձեյըսէն, որ սակայն ոչինչ կրցաւ ընել ու հրատարեցաւ: Ապա գործը ձեռք առաւ Երուսաղէմի Թորգոմ Պատրիարքը, որ մասամբ միայն յաջողեցաւ: Դուն վերջինն ես...:

Կ'ուզեմ որ գիտնաս, թէ խորապէս շնորհապարտ եմ քեզի, որ այս աշխատանքը կը ստանձնես կամովին: Անհամբեր կը սպասեմ պատասխանիդ:

Անկեղծ զգացումներով

Վ. ՕՇԱԿԱՆ



22 Յուլիս 2002

Սիրելի Պր. Հոթոյեան,  
Այսօր Տէր Արմէնին ձեռամբ ստացայ Երեւան հրատարակուած Ձեր «Նուիրում» (եղգեր եւ բանաստեղծութիւններ) հատորը:

Խորին շնորհակալութիւն յայտնելով Ձեր սիրելիութեան, կը մաղթեմ արեւշատ օրեր ու նորանոր յաջողութիւններ Ձեր մտաւորական աշխատանքներուն:

Մնամ յարգանօք՝  
ԲԱԲԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ  
Գրող, մտաւորական, իմբագիր

\* \* \*

8 Մայիս 2005

Սիրելի Պրն. Գր. Հոթոյեան,  
Շնորհակալութեամբ ստացայ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին հրատարակութեամբ լոյս տեսած ձեր սիրելիութեան «Ի խնդիր Բարոյական Ճշմարտութեան» աշխատութիւնը, ձօնուած՝ Հայոց Յեղասպանութեան 90-ամեայ նահատակներուն:

Հետաքրքրական պատմմաներով դուրեկան գրքոյկի մը վերածուած է պատեհ առիթներով գրուած ձեր յօդուածները:

Ձեր գրութիւնը կը սիրեմ կարգալ, որովհետեւ անոնք հրամցուած են սահուն հայերէնով, պարզ ոճով, իմաստալից բովանդակութեամբ ու դաստիարակիչ մտադրութեամբ:

Կը շնորհաւորեմ ձեր բեղուն եւ հայօգուտ գրիչը՝ ձեզի ու ձեր ընտանեկան պարագաներուն մաղթելով երկար եւ արեւշատ օրեր:

Մնամ յարգանքով ու լաւագոյն նկատմաներով՝

ԲԱԲԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ

\* \* \*

Մոնթրէալ, 3 Մայիս 2007

Յարգելի գրչեղբայր Գր. Հոթոյեան,  
Շնորհակալութեամբ ստացայ անունիս մակագրուած ձեր վերջին կոթողական հրատարակութիւնը՝ «Ճանապարհ» վիպասութեամբ:

Սոյն ծաւալուն հատորը, որ բերքահաւաքը կը հանդիսանայ ձեր տարիներու գրական վաստակին, կ'երեւակայեմ թէ ինչպիսի սպառիչ ու համբերատար աշխատանքով գլուխ հանեցիք զայն, ի մտի ունենալով դիւրացնել գործը սփիւռքահայ պատմութեամբ հետաքրքր-

ուող մտաւորականներու: Հատորին ընթերցումը ցոյց կու տայ, թէ որքան բծախնդրութեամբ դասաւորուած ու խմբագրած էք զայն: Վստահ եմ, այլեւայլ նիւթերով ճոխացած «Ճանապարհ»ին մէջ ամփոփուած ձեր գրութիւնները հաճոյքով պիտի կարդացուին գրասէր անհատներէ:

Կրկին անգամ յայտնելով շնորհակալութիւնս, ձեզի եւ ձեր ընտանեկան պարագաներուն կը մաղթեմ քաջաւուղջ կեանք եւ արեւ-չատ օրեր:

Մնամ լաւագոյն նկատումներով՝

ԲԱԲԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ

\*\*\*

Մոնթրէալ, 1 Ապրիլ 2010

Սիրելի Պրն. Գրիգոր Հոթոյեան,

Ս. Յակոբի դիւանապետ Կարօ Նոխուտեանի ձեռամբ շնորհակալութեամբ ստացայ «Ճաճանչներ» վերնագրով նոր հրատարակութիւննիդ:

Արագ ակնարկ մը նետելով լաթակազմ հատորին՝ երազեկ եղայ բովանդակութեան, որ կը պարունակէ Ձեր սիրելիութեան տարիներու ընթացքին ստեղծագործած բանաստեղծութիւնները՝ զանազան առիթներով յօրինուած: Վայելուչ է կողքը ու ճաշակաւոր տպագրութիւնը:

Նկատեցի, որ Ձեր կարգ մը բանիմաց քերթութիւնները երգի վերածուած են Դպրեվանքի մեր նախկին ուսուցիչ՝ երաժշտագէտ ու շարականագէտ «Հայր» Գրիգոր Փիտէճեանի կողմէ՝ բարձր գնահատելով Ձեր տաղաչափութեան տաղանդը:

Կրկին անգամ յայտնելով շնորհակալութիւնս, Ձեր գրչեղբայրութեան կը մաղթեմ արեւչատ ու բարօր տարիներ, նաեւ շնորհաւորելով մեր Փրկչին՝ Յիսուս Բրիստոսի Յարութեան տօնը:

Մնամ յարգանօք՝

ԲԱԲԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ

\*\*\*

Մոնթրէալ, 22 Սեպտ. 2011

Սիրելի Պր. Հոթոյեան,

Խորին շնորհակալութեամբ ստացայ ու հաճոյքով կարդացի «Շողակաթ»ի Յունիս-Յուլիս համարը, որու մէջ տեղ գտած է «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» հատորին ուշագրաւ շնորհահանդէս եւ գինեձօն ընդունելութեան տեղեկատուութիւնը: Ուրախ եմ, որ զիս ալ մասնակից դարձուցիք Ձեր խնդակցութեան:

Շնորհակալություն է նաև Ձեր խնամեալ ու կատարեալ նկարագրու-  
թիւնը Ս. Աստուածածնայ Եկեղեցւոյ մէջ գործադրուած ձեռնարկու-  
թեանց արարողութեանց: Զայն կարգացողներ հասու կը դառնան ու  
կը գիտակցին օրուայ խորհուրդին:

Կրկին անգամ յայտնելով շնորհակալութիւնս, մնամ սիրալիր  
բարեւներով ու քրիստոսաւանդ սիրով՝

ԲԱԲԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ

\*  
\*  
\*

Մոնթրէալ, 22 Սեպտ. 2014

Սիրելի Պր. Հոթոյեան,

Հաճելի անակնկալ էր ստացումը վերջերս հրատարակուած Ձեր  
«Եօթներորդ Հանգրուան» ստուար հատորին:

Իրապէս լաւ մտածած էք մամուլի մէջ ստորագրած Ձեր պատ-  
մուածքները, յօդուածները, ուսումնասիրութիւնները, բանաստեղ-  
ծութիւնները, մահագրութիւններն ու շնորհահանդէսի նկարագրու-  
թիւնը մէկտեղուած տեսնել հատորի մը մէջ՝ զանոնք փրկելու կորուս-  
տէ եւ մոռացումէ:

Այս անգամ եւս զբքին տպագրութեան ծախսը հոգացած են Ձեր  
արժանի դուստրը՝ Անին, ամուսինը՝ Մայքըլը եւ մանչերնին: Անոնց  
սէրը Ձեր հանդէպ գրաւականն է իրենց հոգածութեան եւ երախտա-  
պարտութեան:

Սրտագին շնորհակալութիւնս յայտնելով, Ձեզի կը մաղթեմ ա-  
ռողջ, երջանիկ եւ արեւշատ օրեր, որպէսզի շարունակէք վայելել Ձեր  
ընտանեկան աստուածահաճոյ կեանքը: Մնամ

Յարգանօք՝

ԲԱԲԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ

\*  
\*  
\*

Մոնթրէալ, 8 Դեկտ. 2016

Սիրելի Պրն. Հոթոյեան,

Շնորհակալութեամբ ստացայ Ձեր սիրելիութեան հեղինակած  
«Մայրամուտի Յոլքեր» նորատիպ հատորը:

Ձեր այս 12-րդ աշխատասիրութիւնը եւս, նախորդներուն նման,  
կը բովանդակէ հետաքրքրական եւ ուսանելի նիւթեր՝ ի վայելումն  
ընթերցասէրներու:

Յոյժ գնահատելի են Ձեր կատարած պրպտումները, պատումնե-  
րը, յիշատակութիւններն ու յուշագրութիւնները, որոնցմով մեզ հա-  
ղորդակից կը դարձնէք Ձեր մտաւորական-հոգեկան առանձնայա-  
տուկ մտածողութեան ու արդիւնաւոր ապրումներուն:

*Զեզի մաղթելով առողջ, երջանիկ եւ արեւշատ օրեր, մնամ  
լաւագոյն նկատումներով՝  
ԲԱՐԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ*

*\*\**

*Մոնթրէալ, 9 Յունիս 2017*

*Սիրելի գրչեղբայր Գր. Հոթոյեան,  
Ուրախութեամբ եւ հիացումով ստացայ Ձեր սիրելիութեան հրատարակած «Հայաշունչ Պատմուածքներ» գեղատիպ ժԲ. Հատորը:*

*Սքանչացած եմ Ձեր ժրաջանութեան ու բծախնդրութեան վրայ. ջանք չէք խնայեր ինքնուրոյն եւ իւրայատուկ նիւթերու վերյուշ պատումներով, վայելուչ կրթական գրութիւններով ընթերցումի հաճելի պահեր հրամցնել գրասէր հասարակութեան:*

*Ի մասնաւորի, յոյժ գնահատանքի արժանի են Ձեր ծնողասէր դուստրը՝ Անին եւ ընտանիքը, այս եւ նախորդ Հատորներուն տպագրական ծախսերը հոգալնուն համար: Տիպար հօր տիպար աղջիկը. թող հազարապատիկը ստանան Աստուծմէ:*

*Ամենակալէն կը խնդրենք, որ Ձեր սիրելիութեան պարգեւէ քաջառողջ կեանք, որպէսզի ընտանեկան ջերմ մթնոլորտի մէջ միասնաբար շարունակէք վայելել երկնապարգեւ խաղաղութիւնն ու բարօրութիւնը:*

*Մնամ, սիրալիր բարեւներով ու լաւագոյն նկատումներով՝*

*ԲԱՐԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ*

*\*\**

*Մոնթրէալ, 3 Հոկտ. 2017*

*Սիրելի Պրն. Հոթոյեան,*

*Շնորհակալութեամբ ստացայ Ձեր սիրելիութեան հրատարակած 13-րդ Հատորը, որ կը կրէ «Ոգեշունչ Քերթուածներ Եւ Զօներգութիւններ» խորագիրը:*

*Իրապէս հիացիկ է Ձեր տածած սէրն ու եռանդը հանդէպ հայ գրականութեան ու մշակոյթին:*

*Սոյն գեղատիպ ու պատկերազարդ Հատորին մէջ ջանասիրութեամբ ի մի հաւաքելով ժամանակի տեւողութեան վրայ Ձեր մտաւոր ու սրտագեղ ստեղծագործութիւնները, զանոնք հրամցուցած էք գրասէր հասարակութեան, մեկենասութեամբ Ձեր սիրասուն դուստրին ու ընտանիքին, որոնք արժանի են լիիրաւ գնահատանքի ու գովաբանութեան:*

*Զեզի մաղթելով յարատեւ առողջ ու բարօր կեանք, մնամ  
սիրալիր բարեւներով՝  
ԲԱՐԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ*



Սիրելի՛ ընկեր Գրիգոր Հոթոյեան,  
 Շնորհակալութեամբ ստացած եմ «Սիրտը Ափին Մէջ» քերթը-  
 Լածներուն հատորը:

Անհուն սիրով եւ հայրենասիրական ջերմեռանդ ոգիով հրամցը-  
 Լած բանաստեղծութիւններու այս գեղեցիկ փունջը վստահ եմ պիտի  
 գնահատուի բոլոր անոնց կողմէ, որոնք կը սիրեն մեր գիրն ու գրա-  
 կանութիւնը:

ՎԱՐԴԳԷՍ ՍԻՆԱՆԵԱՆ  
 Գրող, հրապարկագիր

Շիֆակօ

\* \* \*

Սիրելի Գրիգոր Հոթոյեան,  
 Շնորհակալութեամբ ստացած եմ «Ի Խնդիր Բարոյական Ճշմար-  
 տութեան» հատորդ՝ բարոյալից պատմուածքներու հաւաքածոն, որ  
 նուիրուած է մեր պաշտելի նահատակներուն 90-րդ տարելիցին:

Որպէս հրապարկագիր, բանաստեղծ եւ թղթակից տասնամեակ-  
 ներ շարունակ ծառայած ես մեր գրականութեան եւ մշակոյթին: Այս  
 գիրքը եւս արգասիք է քու մտքի եւ սրտի երկունքին:

Շատեր գնահատած են կատարած ազնիւ գործը եւ զոհաբերու-  
 թեան ոգիդ: Ուրեմն ես եւս կը ձայնակցիմ անոնց՝ գնահատելով քեզ  
 իբրեւ հայ գրիի եւ մամուլի անխոնջ նուիրեալ, որու միակ նպատա-  
 կակէտը եղած է եւ է ամբողջական սէր եւ ծառայութիւն մեր ժողո-  
 վուրդին եւ իր մշակոյթին:

Վարձքդ կատար: Եղբայրական ջերմ բարեկներով՝

ՎԱՐԴԳԷՍ ՍԻՆԱՆԵԱՆ

7 Հոկտեմբեր 2005

\* \* \*

Սիրելի ընկ. Գրիգոր Հոթոյեան,  
 Անխառն ուրախութեամբ եւ հպարտանքով իմացայ, որ Արամ  
 Վեհափառը պատուած է քեզ «Ս. Մեսրոպ Մաշտոց» պատուանշա-  
 նով:

Կը շնորհաւորեմ քեզ այս մեծ պատիւին համար, որուն դուն լիո-  
 վին արժանի ես: Այս պատուանշանը կը հանդիսանայ պսակը քու  
 տարիներու անշահախնդիր եւ նուիրեալ ծառայութեանդ մեր ժողո-  
 վուրդին ու իր մշակոյթին:



Քեզի կը մաղթեմ ուժ եւ կորով ու մանաւանդ քաջառողջութիւն,  
որ կարենաս շարունակել քու գործը նորանոր բեղմնաւորումներով:  
Ընկ. ջերմ բարեկներով՝

ՎԱՐԴԳԷՍ ՍԻՆԱՆԵԱՆ

14 նոյեմբեր 2005

\*\*\*

Շատ սիրելի բարեկամս Գրիգոր Հոթոյեան,  
Շնորհակալութեամբ ստացած եմ «Ճանապարհ» հատորը:  
Վարձքդ կատար:

Իւրաքանչիւր գրքի մը ծնունդը հրճուանքով եւ հպարտանքով  
կը լեցնէ սիրտս: Անշուշտ խօսքս հայ գրքի մասին է:

Կանգնած հայրենասիրութեան պատնէշին վրայ՝ դուն եղած ես  
այն հազուադէպ գաղափարապաշտ գրողներու հոյլէն, որուն գրիչը  
միշտ բաբախած է մեր հայրենիքի եւ ժողովուրդի երազներուն եւ յոյ-  
սերուն իրականացման եւ հզօրացման համար:

Այս կոթողական հատորը կը հանդիսանայ մեր շարք մը գաղութ-  
ներու իրագործումներուն բովանդակալից արձանագրութիւնը: Ա-  
պագայի պատմաբանի համար գիրքդ հում նիւթ կը հայթայթէ, որուն  
համար երախտապարտ պէտք է ըլլայ մեր ժողովուրդը:

Գրիչդ միշտ մնայ դալար: Քեզի կը մաղթեմ նորանոր նուաճում-  
ներ:

Շատ սիրով՝

ՎԱՐԴԳԷՍ ՍԻՆԱՆԵԱՆ

10 Յունիս 2007

\*\*\*

Թանկագին եւ սիրելի Գրիգոր Հոթոյեան,  
Շնորհակալութեամբ ստացած եմ նօթագրեալ բանաստեղծու-  
թիւններուդ ու ներբողականներու հոյակապ հատորդ:

Հայեցի պահպանման միտող այս գործը մեծապէս գնահատելի է  
ու ծափահարելի: Քու կեանքի վաստակը կը հիացնէ զիս: Իբրեւ ազ-  
նիւ մտաւորական, ուսուցիչ, տնօրէն եւ մեր մամուլի վեթերան աշ-  
խատակից, դուն այն ընտրեալներէն ես, որ մեր մշակոյթի ու գրի եւ  
գրականութեան սէրը եւ պաշտամունքը ներմոծեցիր մեր նորահաս  
սերունդներուն:

Յանձինս քեզի, մեր մշակոյթը ունի մշտարթուն դրօշակակիր մը,  
որ անսպառ եռանդով, տաղանդով ու մանաւանդ ազգային գիտակ-  
ցութեամբ կը սատարէ մեր ժողովուրդի ազգային կենսունակութեան:  
Քու մէջ միաձուլուած է իրաւ մտաւորականը եւ հայրենասէր հայը,

որու պաշտամունքի խորանը հայ գիրն ու գրականութիւնն է: Արդարեւ այս բացառիկ երեւոյթ մըն է մեր իրականութեան մէջ:

Վերջապէս, քեզ կը նկատեմ հետզհետէ նօսրացող մամուլի աշխատակիցներու փաղանգի ամէնէն փայլուն ներկայացուցիչներէն մին:

Գրիչդ միշտ դաւար:

Շատ սիրով՝

ՎԱՐԴԳԷՍ ՍԻՆԱՆԵԱՆ

Լոս Անճելըս Մօնթրօզ,  
Ապրիլ 12, 2010

\*\*\*

Սեպտ. 20, 2014

Շատ սիրելի ընկ. Գրիգոր Հոթոյեան,


Սրտագին շնորհակալութիւններ «Եօթներորդ Հանգրուան» հատորիդ համար, որ բարեհաճած էիր նուիրելու նուաստիս:

Ամէն անգամ, որ նոր հատոր մը կը հրատարակես, կը հիանամքու աշխուժութեանդ եւ նուիրումիդ՝ իբրեւ դրօշակակիրներէն մին մեր գրականութեան եւ լեզուին: Քոն կատարած գործդ կը գնահատուի, որովհետեւ դուն այն ընտրեալներէն ես, որ շարունակ պայքարած ես ի խնդիր ազգային եւ բարոյական արժէքներու:

Վարձքդ կատար:

Շատ սիրով՝

ՎԱՐԴԳԷՍ ՍԻՆԱՆԵԱՆ



Գրիգոր Հոթոյեան ընկերասէր մարդը եւ ազգասէր հայը իր հրատարակած գիրքերուն մէջ ընթերցողին կը ներկայացնէ կուսակցական հաւատարմութիւն, կեանքի բազմատեսակ փորձառութիւն եւ լաւին, գեղեցիկին ու արժէքին հանդէպ մեծ սէր ու յարգանք:

Զինք մօտէն ճանչցողը, ինծի պէս, իր մէջ ամէն բանէ աւելի կը տեսնէ թունդ հայը, գրասէրը, տիպար միութենականը եւ վարպետորդի համակարգողը:

Հաճելի է գրուցել իր հետ եւ եզակի երեւոյթ պէտք է նկատել անոր սրամտութիւնը

յառաջացած այս տարիքին մէջ:

ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Իրաւաբան, հրապարակագիր

7 Ապրիլ 2018  
Թորոնթօ



*Սիրելի եւ յարգելի ընկեր Հոթոյեան,*

*Այսօր ստացայ Ձեր նոր հրատարակուած «Եօթներորդ Հանգըր-  
ուան» հատորը: Կը շնորհաւորեմ Ձեզ Ձեր անխոնջ աշխատանքին  
համար: Մեծապէս կը գնահատեմ Ձեր ազգանուէր գործունէութիւնը  
Սփիւռքի հայութեան մտաւորական, կրթական, մշակութային, կու-  
սակցական-քաղաքական եւ այլ բազմաթիւ բնագաւառներու մէջ:*

*Սրտանց կը մաղթեմ Ձեզի քաջառողջութիւն՝ շարունակելու հա-  
մար Ձեր շինիչ եւ բազմակողմանի ներդրումը սփիւռքահայ կեանքին  
մէջ: Նաեւ կը յուսամ, որ բախտը կ'ունենամ Ձեզի դարձեալ հանդի-  
պելու Թորոնթոյի կամ Մոնթրէալի մէջ մօտ ապագային:*

*Շնորհակալութեամբ եւ ջերմ բարեւներով՝*

**ՎԱԶԳԷՆ ՏԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ**

Մոնթրէալ  
20 Նոյեմբեր 2014

**\*\***

Մոնթրէալ, 11 Յունիս 2017

*Շատ յարգելի եւ սիրելի ընկեր Գրիգոր Հոթոյեան,*

*Մեծապէս շնորհակալ եմ Ձեր ուղարկած «Հայաշունչ Պատմը-  
ւածքներ» գրքին համար: Ծայրէ ծայր թղթատեցի եւ ապա սկսայ  
կարդալ:*

*Գրքին մէջի գրութիւնները եւ լուսանկարները շատ հետաքրքը-  
րական են եւ անցեալի յիշատակներ կը վերակենդանացնեն (ինչպէս  
Ձեր ընկեր Դրոյի աճիւնները փոխադրելը եւ Վահէ Օշականին հետ  
առնուած լուսանկարը): Ընկեր Դրօն իմ կուսակցականի երդման ա-  
րարողութեան կնքահայրը եղած է Լիբանանի մէջ, իսկ Վահէ Օշա-  
կանն ալ երէց ընկերս՝ Պէյրութի Հ.Յ.Դ. Զաւարեան Ուսանողական  
Միութեան մէջ:*

*Մաղթելով, որ մօտ ապագային դարձեալ հանդիպելու առիթը եւ  
հաճոյքը կ'ունենանք, ընկերական ջերմ եւ յարգալի բարեւներով՝*

**ՎԱԶԳԷՆ ՏԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ**

**\*\***

Մոնթրէալ, 8 Հոկտեմբեր 2017

*Շատ յարգելի եւ սիրելի ընկեր Գրիգոր Հոթոյեան,*

*Մեծ ուրախութեամբ եւ հետաքրքրութեամբ ստացայ Ձեր ու-*

ղարկած «Ոգեչունչ Քերթուածներ եւ Զօներգութիւններ» հատորը: Շատ շնորհակալ եմ այս գրքին համար ալ, որ իր մանրամասնութիւններով ծայրէ ծայր թղթատեցի եւ մեծ թուով էջեր ալ մանրամասնօրէն կարդացի:

Իմ կարդացած էջերս հայու եւ դաշնակցականի զգացումներս հպարտութեամբ եւ յուզումով լեցուցին «Եղեռնի հետքերով» բաժնին մէջ: Մի քանի անգամ եւ խոր յուզումով կարդացի Ձեր գրութիւնը, որ կը կրէ «Պաշտելի մօրս յիշատակին» վերնագիրը: Ան կը ներկայացնէ Մեծ Եղեռնին զոհ եղած ընտանիքներու անասելի հոգեկան ցաւերը, մանաւանդ մօր ու զաւկի փոխադարձ շատ յուզիչ զգացումներով արտայայտուած: Ու անձնական խոր յուզումներ յառաջացնելէ անդին, կը վկայէ հայութեան տառապանքը թրքական անգութ վայրագութիւններուն պատճառաւ: Անկարելի էր խորապէս չյուզուիլ այս գրութեան զգացական խորունկ ազդեցութեանէն: Անկարելի է նաեւ մոռնալ այս գրութիւնը իր բոլոր մանրամասնութիւններով:

Զգացական շատ յուզիչ գրութիւն մը ըլլալէ անդին, այդ տողերը իրական վկայութիւն մըն են թուրքերու կողմէ գործադրուած ցեղասպանութեան մը, որ մեզի համար աններելի է, նոյնիսկ եթէ օր մը թուրք պետութեան պատասխանատուները ընդունին Հայկական Ցեղասպանութեան իրենց ոճիրը: «Եղեռնի հետքերով» Ձեր գրքի այդ բաժինը ներկայի եւ ապագայի հայ սերունդներուն համար անմոռանալի եւ աններելի եղելութիւններու փաստ է:

Սիրելի ընկեր Հոթոյեան, դուք այս գրքի մասնաւորաբար այս բաժնի գրութիւններով, անհերքելի կերպով եւ հիմնուած «Եղեռնի հետքերով» Ձեր գրութիւններուն վրայ, կը դատապարտէք այն ժամանակուան թուրք ղեկավարութեան ոճիրները: Կը յուսամ, որ շուտով պիտի գայ այն օրը, երբ միջազգային պետական հաստատութիւնները պիտի պաշտօնապէս դատապարտեն Թուրքիան իր ոճրագործութիւններուն համար: Կը յուսամ, որ Հայկական քաղաքական կազմակերպութիւնները կ'օգտուին Ձեր գրքին մէջ յիշուած փաստերէն, որոնք հայ նոր սերունդին ազգային, մարդկային եւ քաղաքական դատարարակութեան համար կրնան մեծ դեր կատարել:

Այս բոլորէն ետք, կ'ուզեմ նամակս ակելի լաւատես ալիքի մը վրայ փոխադրել: Պայքարներու երկար շրջանէ մը ետք, այսօր ունինք երկու Ազատ ու Անկախ Հայկական պետութիւններ: Մօտ ապագային կը յուսանք ունենալ Միացեալ Անկախ Պետութիւն մը իր բոլոր առաւելութիւններով, որ կրնայ առաջը առնել ջարդերուն եւ բռնագրաւումներուն, Հայաստանը վերածելով օրինակելի հայրենիքի մը, իր երջանիկ եւ հպարտ նոր սերունդներով:

Յարգանքով եւ ընկերական ջերմ բարեկներով՝

ՎԱԶԳԷՆ ՏԷՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ



Բարեւ Ձեզ պարոն Գրիգոր,

Շատ ուրախացանք մայրս եւ ես, որ ձեզանից նամակ ստացանք: Շատ շնորհակալ ենք, որ մեզ չէք մոռացել եւ մանաւանդ Ձեր մատուցած անակնկալի համար:

Երեւանը լողում է շոգի ալիքների մէջ, բայց կեանքը իր յոյսն է ներշնչում: Օրերը վազում են, իսկ հայ մարդը փորձում է չընկճուել ու հաւատով նայել վաղուայ օրուան: Փորձում եմ ինչ-որ ձեւով մանկական գիրքս հրատարակել, հովանաւոր փնտռելով: Այն նուիրել եմ Հայաստանում Քրիստոնէութեան ընդունման 1700-ամեակին, նրա մէջ գետեղելով նոր պատմուածքներս, նուիրուած Յիսուս Քրիստոսին: Իմ շնորհակալութիւնս յայտնել ընկ՛հ. Նուարդ Աղամեանին եւ իմ ջերմ բարեկները նրան:

Ուրախ ենք, որ լաւ էք, կ'ուզենայինք Ձեզ տեսնել կրկին Հայաստանում 1700-ամեակի տօնակատարութեան օրերին: Յոյսով ենք, որ կը հանդիպենք Հայաստանում...

Շատ բարեկներ Ձեզ մայրիկիցս...

Գրում եմ հապշտապ, ներող կը լինէք...

ՄԵՏԱՔՍԷ – ԼԻԼԻԹ

22 Յունիսի 2001թ., Երեւան



Մեծարգոյ բարեկամիս, պատուարժան Գրիգոր Հոթոյեանին, հայ գրի, լեզուի ասպետին, մշակոյթի ազնիւ պահապանին – եղբայրական սիրով, էն հաւատով, որ Հայաստանը հա՛յ կը մնայ ու երբեք էլ լքողներ չենք ունենայ:

Համբոյրներս ընտանիքիդ, ամէն ազնիւ հայի:

ՀՐԱԶԵԱՅ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

2 Յունիսի 2000, Երեւան



Հպարտօրէն, ազնուաբար ի՛ր ճանապարհը երգով, խօսքով հարստացրած բարեկամիս, միշտ սիրելի Գրիգոր Հոթոյեանին՝ ֆեդալական ոգի ունեցող բանաստեղծին:

– Բարի ճանապարհ:

– Բարի վերադարձ:

Արժանանաք արմատներիդ կանչին:

Լոռեցու սիրով

ՀՐԱԶԵԱՅ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

15.07.04, Երեւան



*Մեծայարգ Պրն. Գրիգոր Հոթոյեան  
Թորոնթօ*

*Յարգարժան Պարոն Հոթոյեան,*

*Արփինէն ու ես շնորհակալութեամբ եւ մեծ հաճոյքով ստացանք ձեր կեանքի «Յուշամատեան»ը, համեստօրէն, բայց իմաստալից կերպով խորագրուած՝ «Ճանապարհ»ը: Նկատի ունենալով գրքին բովանդակած տեղեկագրութիւններու լայն ժամանակաշրջանը, տարածուած աւելի քան 60 տարիներու վրայ եւ հայթայթուած մեծածաւալ անձնական, հասարակական, կրթական, եկեղեցական եւ այլ տեղեկութիւնները, չեմ վարանիր ձեր նոր հրատարակութիւնը «Յուշամատեան» կոչելու:*

*Անշուշտ անհնար է գիրքը կողքէ-կողք կարդալ քանի մը ժամուան, նոյնիսկ քանի մը օրուան մէջ: Մենք զայն կ'ըմբռնինք կամաց-կամաց: Սակայն քանի մը յօդուածներու ընթերցումը («Բարեգործ հայրս», «Ի փառս պատուի եւ հայրենեաց» եւ այլն), բաւարար էր բացայայտելու բովանդակութեան պէսպիսութիւնը, պատմութեանը ներու հետաքրքրաշարժ բնոյթը, լեզուի պարզութիւնը, սահունութիւնը եւ մատչելիութիւնը, եւ մանաւանդ մարդկային, ազգային եւ կրօնական արժէքներու հանդէպ ձեր կապուածութիւնը: «Ճանապարհ»ը հարազատօրէն կը ցոյցնէ նաեւ մեր համայնքային կեանքին հասարակական, քաղաքական, գրական եւ գեղարուեստական երեսները, Հալէպէն մինչեւ Թորոնթօ, ընդգրկելով աւելի քան կէս դարու ժամանակաշրջան մը:*

*Ձերմօրէն կը շնորհաւորենք ձեր երկար տարիներու արժանաւոր վաստակը՝ պսակուած այս գեղեցիկ հատորով: Ապրի՛ք, շատ ապրի՛ք, երկար ու առողջ ապրի՛ք, որպէսզի շարունակէք ձեր յոյժ բեղմնաւոր գործունէութիւնը:*

*Սիրով՝*

*ՅԱԿՈՒ ԱԼԹՈՒՆԵԱՆ  
Պատմագէտ, մտաւորական*

*12 Մարտ 2008*

*\*\**

*Մեծայարգ Տիար Գրիգոր Հոթոյեան  
Թորոնթօ*

*Շատ սիրելի Պարոն Գրիգոր,  
նոր հաճոյքով ստացանք Տիկին Սիրվարդ Միքայէլեանի ձեռամբ*

ձեր «Ճաճանչներ» գեղեցիկ խորագրով նոր հրատարակուած հատորը, որ ազնուութիւնը ունեցած էք մեզի զրկելու, ձեր բուզիս մակագրութիւնով միասին: Արփինէն կը միանայ ինծի՝ յայտնելու մեր խոր շնորհակալութիւնը եւ անկեղծ գնահատանքը ձեր բեղուն գրական վաստակին համար:

Դուք համեստութեամբ կ'ըսէք՝ «Քիչ արտադրեցի, որովհետեւ շատ արտադրելու ժամանակ չունէի...», սակայն շատ-շատեր բարինախանձը պիտի ունենան ի տես ձեր ցարդ հրատարակած հինգ ծաւալուն հատորներուն: Ձեր կեանքի բազմագրադութեան գուգահեռ, ձեր գրական վաստակի ծաւալը եւ որակը իսկապէս գնահատելի եւ գովելի երեւոյթ մըն է, որով կրնաք (համեստօրէն) հպարտ ըլլալ:

Արփինէին ու ինծի համար երեկոները, առօրեայ զբաղումներէ վերջ, հաճոյք մըն է թղթատել «Ճաճանչներ»ու էջերը եւ ապրիլ ձեր ազնիւ զգացումներուն, յոյզերուն, ուրախութիւններուն եւ երազներուն հետ:

Սրտանց կը մաղթենք, որ Աստուած ձեզի առողջ ու երկար կեանք տայ եւ ձեր գրիչը մնայ միշտ արգասաբեր:

Բարեկամական լաւագոյն զգացումներով՝

ՅԱԿՈՒԲ ԵՒ ԱՐՓԻՆԷ ԱԼԹՈՒՆԵԱՆ

Թորոնթօ, 22 Մարտ 2010

\* \* \*

Յարգարժան Պրն. Գրիգոր Հոթոյեան,

Արփինէն ու ես խոր հաճոյքով ստացանք ձեր նոր հրատարակած «Ոգեչունչ Քերթուածներ Եւ Զօներգութիւններ» վերնագրուած գիրքը: Մեզի համար այս գիրքը հետաքրքրական եւ յուզիչ վերաքաղ մըն է՝ ոչ միայն երկար տարիներու ձեր գրական հարուստ աշխատանքին, այլ նաեւ ձեր բեղմնաւոր կեանքին, տարածուելով ձեր պատանեկան տարիքէն մինչեւ ձեր հասուն ներկան:

Գիրքը կը պարունակէ շատ մը անմոռանալի պատուէրներ, ինչպէս՝

«Ուր որ երթաս, ուր որ ապրիս, Սփիւռփի խորթ տարածփին,  
Ոչ մէկ ատեն ազգդ, լեզուդ, եկեղեցիդ չմոռանաս»:

Մեր հայրենիքը, մեր ազգը եւ մեր լեզուն գովերգող տողերը բազում են եւ հոգեպարար, ինչպէս՝

«Կու գամ այսօր հպարտօրէն քու փառքերը գովերգելու,  
Պաշտամունքով տարփողելու սուրբ գիրերդ մեսրոպածին,

Երկրի վրայ տարտղտնուած հնադարեան հայոց ազգին  
Սեբոււնդնեբը իրար զօդող, մեր մայրենի չքնաղ լեզու»:

*Գիրքը նման իմաստալից եւ գրաւիչ տողերով յագեցած է, որուն  
համար ձեզ կը շնորհաւորենք ջերմօրէն, եւ ձեզի կը մաղթենք քաջա-  
ռողջութիւն ձեր այս փայլուն աշխատանքը շարունակելու համար:*

**ՅԱԿՈՐ ԵՒ ԱՐՓԻՆԷ ԱԼԹՈՒՆԵԱՆ**

Յ.Գ.— Ներփակ կը դրկենք 100 տոլարնոց փոխգիր մը, որ կրնաք  
նուիրել ձեր նախընտրած հաստատութեան, որպէս արտայայտութիւն  
մեր գնահատանքին:



*Յարգելի ընկ. Գրիգոր Հոթոյեան,*

*Երէկ գիշեր մեր Կեդրոնը կը գտնուէի, երբ Կ.Կ.ի քարտուղար  
ընկեր Յակոբ Յակոբեանը ինծի յանձնեց ձեր «Նուիրում» հատորին  
օրինակը, զոր ազնուութիւնը ունեցած էիք ինծի վերապահելու՝  
յայտնելով, թէ ատենէ մը ի վեր գիրքը գրասենեակին մէջ կը սպասէր,  
մինչեւ որ չհասցէագրուած պահարանէն դուրս հանելով՝ գրքին  
մակագրութենէն վերահասու եղաւ, թէ որուն պէտք է յանձնէ:*

*Այս մանրամասնութիւնները կու տամ, որպէսզի չմտածէք, թէ  
գիրքը շատոնց ստացած եւ սակայն շնորհակալութիւն մը իսկ  
արտայայտելու թերացած եմ: Ահա թէ ինչու, տուն վերադարձիս,  
ծայրէ ի ծայր կարգացի քերթուածները, որովհետեւ կ'ուզէի առանց  
յաւելեալ ժամանակ կորսնցնելու ձեզի գրել:*

*Ուրեմն նախ՝ կը շնորհաւորեմ գրքին լոյս ընծայումը, ապա՝ իմ  
ջերմ գնահատանքս կը յայտնեմ ազգային-հայրենասիրական-  
հասարակական թէ անհատական ձեր անկեղծ ապրումները  
արտայայտող այնքան ջինջ ոճին համար: Պէտք է յայտնեմ, որ  
հատորին սկիզբը տրուած դաշնաւորումները, որոնց գոյութենէն  
տեղեակ չէի, յաւելեալ գոհունակութեան աղբիւր հանդիսացան:*

*Եւ վերջապէս, շատ շնորհակալ եմ ձեր ինծի նուիրած օրինակին  
համար: Կը մաղթեմ, որ Աստուած ձեզի երկար ու քաջառողջ կեանք  
պարգեւէ, որպէսզի ցարդ ձեր ունեցած գրական-լրագրական-  
հասարակական գործունէութիւնները միշտ նոյն խանդով, կորովով  
եւ յաջողութեամբ շարունակէք:*

*Բարի երթ. ջերմ բարեւներով՝*

**ՓՐՈՑ. ՇԱՔԷ ՄԻՆԱՍԵԱՆ**

**Գրող, հրատարակիչ**

Մոնթրէալ, 16 Հոկտեմբեր 2003





Հիանալի բանաստեղծ Պրն. Գրիգոր Հոթոյեան,

Ձիս կանխեցիք, մտադրած էի ձեզի գրել «Նուրում»ին մասին, որովհետեւ ամէն օր կը կարդամ, բայց ահա «Սիրտը Ափին Մէջ» բանաստեղծական հատորը հասաւ, որուն մասին կարգ մը գրախօսականներ եւ կարծիքներ կարդացած էի «Նուիրում» գիրքիդ մէջ: Իրապէս գնահատելի հատոր մըն է:

Եթէ բանաստեղծ Յովհաննէս Շիրազ ողջ ըլլար, ձեզ պիտի կոչէր «Հոթոյենց Գօգօ Սասունի», Սասունի արեւէն, պաղ ջուրէն խմած-մեծցած հօր գաւակ, որուն արեան մէջ կարմիր եւ ճերմակ գնդիկները սիրով լեցուն են: Ամէն ինչ սէր է եւ այս որչա՛փ սէր...:

Քերթուածներդ կարդալով՝ մարդ սիրահարութեան կը մատնուի: «Նուիրում»ը կարդալով թերթ առ թերթ՝ կու գամ ըսելու, թէ դուք օժտուած էք մեղեդիական եւ քնարական փափուկ ու նուրբ, խոհական եւ կարօտաձայն, մերթ յուսաբեկուած, մերթ գոհուելու ցանկութիւնով, բայց իշխողը սէրն է: Քու բանաստեղծութիւններդ կարդալով՝ իգական սեռի բոլոր սիրուները քեզի պիտի սիրահարին, որովհետեւ անոնց ականջին շատ հաճելի բառեր ունիս:

Մնամ անկեղծօրէն՝

ԽԱԶԻԿ ԹԱՇՃԵԱՆ

Մտաւորական, ասմունքող

Լոս Անճելըս



Շատ սիրելի եւ թանկագին գրող եւ բանաստեղծ,  
յարգարժան Գրիգոր Հոթոյեան

Թանկագին եղբայր,  
Ճանապարհը հասաւ, ճանապարհներով լեցուն,  
Ճանապարհ բանաստեղծութիւն,  
Ճանապարհ բարոյագիտութիւն,  
Ճանապարհ քրիստոնէական հաւատքի,  
Ճանապարհ ականատեսի վկայութիւն,  
Ճանապարհ հոգեկան ապրումներու,  
Ճանապարհ մտաւորականի արգասիքի,  
Ճանապարհ ընկերային եւ ազգային հարցերու,  
Ճանապարհ գնահատանքի եւ վերլուծումներու:

Գրողի մը համար ամենաերջանիկ պահը եւ ուրախալի առիթը այն է, որ իր կեանքի տեւողութեան իր գրչի արգասիքը հանդիսացող գործերուն հրատարակուիլը տեսնէ:

Թող ապրին ձեր թոռնիկները եւ սքանչելի գուստրը, որոնք տես-  
լական ունեցած են մեծ հայրիկին եւ հօր գործը հրատարակել:

Վարձքդ կատար, սիրելի Պրն. Հոթոյեան:

Անկեղծ զգացումներով կը ներփակեմ պզտիկ գուժար մը առ ի  
գնահատանք եւ պիտի փափաքէի, որ ձեր տիկնոջ հետ միասին CN  
Tower-ի վերը ընթրիք մը ունենայինք եւ կենաց մը խմէինք ձեր եւ  
տիկնին արեւշատութեան համար:

Անկեղծօրէն՝

ԽԱՉԻԿ ԹԱՇՃԵԱՆ

11 Նոյեմբեր 2007

Լոս Անճելոս

\*\*

### ԴԻՏԵԼՈՎ ՏԵՍԱԵՐԻՁՐ

Իր գրական, բանաստեղծական, հայրենասիրական, կրօնական,  
մարդկային ու ազգային մտահոգութիւններով լեցուած՝ հոգեկան  
ազնիւ եւ մեծ սիրտ հայասէր գրող եւ հրապարագիր բանաստեղծ Պրն.  
Գրիգոր Հոթոյեանին գրական վաստակին 60-ամեակին նուիրուած  
հանդիսութեան տեսաբերիզը հիացմունքով ընկալեցի: Արդարեւ, Պրն.  
Գրիգոր Հոթոյեան մէկը եղաւ այն քիչերէն, որոնք հայ լեզուին նըր-  
բութիւնները եւ բիւրեղացած հայերէնը տուին մեզի: Սիրոյ երգին  
նուազողը, սպասարկուն եւ գրական գանազան շարժումներու  
դպրապետը եղաւ: Երանի թէ հոն ըլլայինք եւ մեր սրտի խօսքը ը-  
սէինք այս պատկառելի անձին, որ իր ամբողջ կեանքը նուիրած է ազ-  
գին, հայրենիքին եւ համայն հայ ժողովուրդին՝ ծառայելու անխար-  
դախ զգացումներով:

Այսօր կը խոնարհինք իր անսահման գործին առջեւ եւ կայտա-  
ռութիւն, ուժ եւ կորով կը մաղթենք իրեն գալիք տասնամեակներուն  
իր տալիք ստեղծագործութիւններուն համար:

Ջերմ համբոյրներով՝

ԽԱՉԻԿ ԹԱՇՃԵԱՆ

20 Մարտ 2008

Լոս Անճելոս

\*\*

Շատ սիրելի եւ ազնուագոյն բանաստեղծ՝  
Գրիգոր Հոթոյեան,

Այսօր, տիկինս եւ ես կը մեկնէինք Kenya եւ Rouanda 12 օր ար-  
ձակուրդի, ինձի հետ կը տանիմ «Ճաճանչներ» գիրքը, զոր ստացայ

վերջերս. ինձի ընկեր պիտի ըլլայ եւ քու մտային յօրինումներուդ մասնակից պիտի ըլլամ՝ կարգալով երգ-բանաստեղծութիւնները եւ շնորհասգահէսի բոլոր գնահատագիրները: Հայ երգի բնագաւառին մէջ ահա քու երգերդ ալ պիտի գան աւելնալու մեր մշակոյթի շուկային մէջ: Վարձքդ կատար, սիրելիս:

Անկեղծօրէն՝

ԽԱՉԻԿ ԹԱՇՃԵԱՆ

Լոս Անճելըս

\*\*\*

Պատուարժան եղբայր՝

Գրիգոր Հոթոյեան,

Վերջերս հիւանդանոց փոխադրուեցայ սուր ոտքերու ցաւերու պատճառով: Ամիս մըն է բժիշկէ բժիշկ կը ղրկեն զիս. քու գիրքը՝ «Անցեալի Յուշերով Կ'ապրինք», զիս ցաւերէ ամոքեց, մոռցուց, ինձի ընկեր եղաւ, մէկ խօսքով՝ ծայրէ ի ծայր կարդացի:

Կրօնաբարոյական, ընկերային ու ասպետական պատմուածքներ. Ս. Գրիգորին կողքին՝ ամէն տուն օրինակ մը պէտք է ունենայ այս գեղեցիկ եւ համով հատորէն:

Արդարեւ, այս մեր վերջին 60-70 տարիներու Հալէպի եւ շրջակայ քաղաքներու, գիւղերու ու աւաններու պատմութիւնն է, գրուած գեղարուեստական ոճով եւ շատ պատկերաւոր, կարծես շարժապատկերի մը նկարներն են, որոնք աչքիս առջեւ կը տողանցեն: Գրող, բանաստեղծ, ուսուցիչ-տնօրէն, հասարական գործիչ, Ֆրանսական եւ արաբական սպայակոյտի սպայ, գարեջուրի գործարանի ելեկտրագէտ, վաղ հասակէն հօրը կողքին ուսին շալկած բաճկոններ ծախող, եւ այս բոլորն լուռ ու հնազանդ կերպով: Աստուած երբ մէկը կը սիրէ՝ կ'օգնէ անոր: Այո, Աստուած ձեզ սիրած է, եղբայր Հոթոյեան. շատ ապրիս, գրիչդ դալար, երկար կեանք կը մաղթեմ:

Այս առիթով Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Ս. Գրիգոր Լուսաւորչի կանթեղին իւղագին կ'ուղարկեմ, առ ի գնահատանք եւ որպէս շնորհակալութիւն:

Սիրով՝

ԽԱՉԻԿ ԹԱՇՃԵԱՆ

Լոս Անճելըս

\*\*\*

Թանկագին եւ պատուական եղբայր

Պր. Գրիգոր Հոթոյեան,

Հ.Բ.Ը.Մ.ի ազգային նշանաբանը կ'ըսէ՝ «Հայը հայով, հայուն համար»:

Ես ալ կ'ուզեմ աւելցնել այսպէս.— Հայութեաննէն՝ հայութիւնով, հայութեան համար ծնած, մեծցած, անոր ամէն բլիջներէն կազմաւորուած եւ կեանք մը ամբողջ անխարդախ անձնուիրութեամբ ծառայած Պրն. Գրիգոր Հոթոյեան:

Լիբրաւ արժեւորումով Գերշ. Մեղրիկ Սրբազանի յառաջաբանը իսկապէս կը ցոյացնէ ձեր անձը:

Մէր եւ յարգանք քեզի, առողջ կեանք եւ դալար գրիչ:

Համբուրելով ձեր ճակատը՝  
մնամ՝

ԽԱՉԻԿ ԹԱՇՃԵԱՆ

28 Օգոստոս 2014  
Լոս Անճելըս

Յ. Գ.— Ներփակ \$ US 100 տոլար Ս. Աստուածածին Եկեղեցւոյ նուէր, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ: Նոյն

«Յօթներորդ Հանգրուան»ը արդէն կէսը կարդացի. շատ լաւ է: Նոյն

\* \* \*

Սիրելի Գրիգոր Հոթոյեան,  
Ականջին շատ հաճելի բառեր ունիս:

Ասկէ առաջ 5 անգամ Թորոնթօ եղած եմ, բայց նոր հանդիպեցայ ձեզի. ուրախ եմ անոր համար: Ուրախ պիտի ըլլամ ձեզի նորէն հանդիպելու. եթէ Տէրը կամենայ, յառաջիկայ Հոկտեմբեր ամսուն հոն պիտի ըլլամ՝ ձեր սքանչելի Հայր Մեղրիկին փափաքով: Ասմունքի երեկոյ մը պիտի ըլլայ՝ ամբողջ յայտագրով:

Յոյս ունիմ, որ ժամանակ պիտի ունենամ ձեզ նորէն տեսնելու եւ վայելելու:

Մնամ անկեղծօրէն՝

ԽԱՉԻԿ ԹԱՇՃԵԱՆ

Լոս Անճելըս

\* \* \*

ՊԱՇՏԵԼԻ ՄՕՐԱ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գրեց՝ Գրիգոր Հոթոյեան

Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին առիթով հրատարակուած այս երկարաշունչ, տեսլական, իրական եւ հոգեկան անհերքելի պատմութեամբ շարժապատկերի նկարներու շարանին պէս տողանցեցին իմ առջեւ: Արդարեւ, այս գրութիւնը պէտք է անգլերէնի թարգ-

մանուկի եւ Ամերիկայի եւ Գանատայի գոնկրէսմէններու եւ սենազի բոլոր անդամներու մէկական օրինակ պէտք է տրուի, որպէս իսկական եւ ճշմարիտ եւ անհերքելի փաստ, որ 1915-ի Եղեռնը այո՛ տեղի ունեցած է: Ասկէ աւելի լաւ փաստ չի կրնար ըլլալ, եւ դուք, սիրելի բանաստեղծ Գրիգոր Հոթոյեան, այս բոլորը 80 տարի է՝ ամբողջ կեանքի ընթացքին վերջիշած էք եւ հոգեկան ապրումով այսօր թողութիւն յանձնած էք. կշռադատուած տողերով սքանչելի գրուածքներ մը, զոր ամէն հայ Ապրիլ 24-ին պէտք է կարդայ:

Յաւակից եմ՝ եղբայրօրէն,  
ԽԱԶԻԿ ԹԱՇՃԵԱՆ

Յ. Գ.— Հեռաձայնով արդէն իրարու հետ խօսեցանք:

Նոյն

\*\*\*

## ՆԿԱՐԸ

### Գրիգոր Հոթոյեանին

Նստած, ձեռքը այտին,  
Ան կը նայի քեզի՝  
Շնորհարոյր ժպիտ մը դէմքին,  
Շրջապատուած թաւալող  
Տարիներու նկարներով՝  
Ան կը նայի քեզի...

Դէմքը շնորհք կը ցոլայ,  
Աչքերն անոր գթացող  
Ու հայրական իմաստութեամբ  
Ուղիղ քեզի կը նային:

Այբ, բեն, գիմի մասնագէտ՝  
Ան կը շարէ տողեր,  
Որոնք գիրքեր են դարձեր՝  
Թիւով տասն եւ մէկ.  
Առաջնայնքն են քեզի,  
Սիրելի՛ ընթերցող, որ  
Դուն ալ հայատրոփ  
Այս գրողէն բան մը սորվիս.—  
Իմաստութիւն, շնորհք,  
Հայրենասիրութիւն  
Եւ ազգասիրութիւն,



Եկեղեցի եւ դպրոց,  
Միութիւն եւ կուսակցութիւն:

Ահա կատարեալ մարդը՝  
Գրիգոր Հոթոյեանը:

ԽԱԶԻԿ ԹԱՇՃԵԱՆ

Շատ սիրելի եւ մեծարգոյ թանկագին Գրիգոր Հոթոյեանին,  
Գրականութեան սպասարկու, ուսուցիչ, տնօրէն, մեծ հայր,  
հասարակական գործիչ, կուսակցութեան ղեկավար եւ այլն, եւ այլն:

Նախ՝ շնորհակալութիւն եղբօրս մահուան առթիւ գրած բացիկիդ  
համար, երկրորդ՝ ղրկած գիրքերդ ստացայ իրենց ժամանակին:  
Երկրորդին հոս չէի, տիկնոջս հետ Փարիզ գացած էի եղբօրս՝ Հայր  
Ժիրայրին առողջական կացութիւնը տեսնելու, յետոյ Հոլանտա  
գացինք եւ Ռոն գետին վրայ սահող նաւ մը առինք եւ 8 օր վերջ *Basel*  
հասանք, եւ վերջը վերադարձանք տուն:

Երրորդ՝ եթէ Միամանթօ, Վարուժան, Մեծարենց, Զոհրապ,  
Իսահակեան, Թումանեան, Աղայեան, Դուրեան,— եւ շարքը մեծ է,—  
ողջ ըլլային, իրենք շատ ուրախ պիտի ըլլային եւ հոգեկան անհուն  
գոհունակութիւն պիտի ունենային ի տես այս երեւոյթին, որ կը  
կոչուի Գրիգոր Հոթոյեան, որ հեռու-հեռու, աշխարհին միւս կողմը՝  
Գանատայի մէջ հայ գրականութիւն կ'ընէ, իր խօսքով եւ գրիչով  
համայնք, ուսանողութիւն եւ ծնողք կը դաստիարակէ, կը խրատէ,  
կ'ուղղէ իր նմանը: Մաշտոցի խնկարկու սարկաւազն էս:

Փառք քեզի, քեզ ծնած ծնողքիդ, կողակցիդ եւ զաւակներուդ,  
փեսայիդ եւ թոռնիկներուդ: Յաւէտ յարգանք եւ հիացմունք:

Անկեղծօրէն եւ եղբայրաբար՝

ԽԱՉԻԿ ԹԱՇՃԵԱՆ



Մեծայարգ սիրելի, ազգասէր եւ հայրենանուէր բանաստեղծին՝  
ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻՆ

Լաւագոյն մաղթանքներով կու գամ շնորհաւորել Ամանորը եւ Ս.  
Ծնունդը՝ մաղթելով նորանոր յաջողութիւններ: «Սիրտը Ափին  
Մէջ»՝ սիրտէ սիրտ, Զեր արմատները հօրենական կու գան երկրէն  
Տարօնի, ծնած, ապրած մեր լեռներուն վրայ հերոսածին Սասունի...:

Հոգեկան, զգացական մեծ գոհունակութեամբ եւ շնորհակալու-  
թեամբ հաղորդուեցայ, կարծես ծանօթներ եղած ըլլայինք իրարու՝  
ծանօթանալով Զեր անկեղծութեան եւ բաց սրտին, նուիրումին հայ  
գրականութեան անդաստանին:

Զեզ յարգող, գնահատող գրասէր՝

Յ. ԱՆՄԱՀՈՒՆԻ

Կիպրոս, 1993



Յարգարժան Գրիգոր Հոթոյեան,

Հայաստանի Գրողների Միութեան «Նոր Դար» ամսագիրը նպատակ ունի Սփիւռքի մտաւորական կեանքը լայնօրէն ներկայացնել իր էջերում: Մեզ համար մեծ պատիւ կը լինի, եթէ Դուք հանդիսանաք մեր ներկայացուցիչը Տորոնտոյում եւ նիւթեր ներկայացնէք մեր եւոսմսեայ Հանդէսին: Վաղուց ժամանակն է համախմբել մեր գրական մտաւորականութեանը:

Մեծ նպատակ է, սակայն հաւատացէք, միանգամայն՝ իրագործելի:

Սպասում եմ Ձեր պատասխանին:

Միրով եւ եղբայրօրէն՝

ԱԲԳԱՐ ԱՓԻՆԵԱՆ

«Նոր Դար»ի գլխաւոր խմբագիր

27.06.2001

\*\*

Հայաստանի Գրողների Միութեան

«Նոր-Դար» ամսագրի պաշտօնական ներկայացուցիչ

Գրիգոր Հոթոյեանին

Միրելի Գրիգոր,

Ստացայ նոր գիրքդ՝ «Նուիրում»՝ քո մակագրութեամբ, որի համար յայտնում եմ խորին շնորհակալութիւն:

Ձեզ մօտ է Մհեր Եղիազարեանը, իմ լաւ բարեկամ՝ Կառլոս Եղիազարեանի որդին: Առիթից օգտուելով ուղարկում եմ «Նոր-Դար»ի տարբեր համարներից: Խնդրում եմ կազմակերպես տարածումը եւ վաճառքը: Մհերը Կանադայում կը մնայ ոչ երկար ժամանակ, այնպէս որ գումարը կարող ես Երեւան ուղարկել այլ ճանապարհով:

Ես քեզ շատ կարօտել եմ: Դու լաւ մարդ ես, լաւ գրող, լաւ հայ: Առողջ եղիր, աշխատիր նոյն եռանդով մեր գրականութեան, մեր ժողովրդի համար:

Մենք լաւ ենք, ես այժմ աշխատում եմ, որ Հանդէսը Կանադա կարողանամ առաքել «Հայփոստ»ի միջոցով:

Խնդրում եմ հասնես այն բանին, որ աստիճանաբար ընդլայնուի մեր ընթերցողների թիւը:

Կարօտով, հանդիպման յոյսով՝

ԱԲԳԱՐ ԱՓԻՆԵԱՆ

1.07.2003

Երեւան

**\*\***

Սիրելի Գրիգոր,  
Սիրով եւ շնորհակալութեամբ ստացայ գրութիւններդ եւ գումար՝ 250 տոլարի չափով:

Շատ զգացուած եմ քո եղբայրութեան համար:

Գրական գործին աջակցելու քո պատրաստակամութեան համար:

Նամակս գրում եմ շտապ:

Մանրամասները յաջորդել:

ԱՐԳԱՐ ԱՓԻՆԵԱՆ

2.10.2003

**\*\***

Գրիգոր ջան, գիրքդ ստացայ: Կարդացի մէկ շունչով, մեծ բաւականութիւն ստացայ: Զերմ յարգանք ունենք քո անձի եւ գործի հանդէպ: Յոբելեանդ կը նշենք Երեւանում սիրով:

Եղբայրաբար՝

ԱՐԳԱՐ ԱՓԻՆԵԱՆ

Համահայկական Գրողների Միութեան  
նախագահ

3 Յունիս 2017



Օգ. 22, 2016

Յարգելի Պր. Հոթոյեան,

Շնորհակալութեամբ ստացայ ձեր Օգ. 20 թուակիր նամակը եւ գնահատական խօսքերը:

Շնորհակալ եմ նաեւ ձեր թելադրութեան համար:

Ձեր կայքէջը բանալով՝ ձեր գրքերը աչքէ անցուցի եւ ծանօթացայ ձեր հարուստ վաստակին:

Աստուած երկար կեանք տայ, որ շարունակէք ստեղծագործել:

Շնորհակալ ենք «Երջանիկ Յոյս»ին զրկած նուէրին համար, որուն վրայ ինձի զրկուածն ալ գումարեցի, որովհետեւ իմ գրքերս ձեզի նուէր են:

Մէկ ամիս ետք թորոնթօ պիտի այցելենք, յուսամ զիրար տեսնելու առիթ կ'ունենաք:

Սիրով՝

ՄԻՔԱՅԷԼ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ





Շատ սիրելի ընկ. Գրիգոր,

«Ճանապարհ»ը հասաւ: Եւ ոչ միայն քանիցս մտայ անոր մէջ եւ քալեցի: Քալեցի հին ճամբաներէն եւ զգացի, որ հաճելի էր պտոյտը: Ժամանակը որոշ քաղցրութիւն կը դնէ նաեւ դժուարին օրերուն, տառապանքին մէջ, վտիտ ուժերով պայքարելուն մէջ: Այնքան, որ կը մոռցնէ նոյնիսկ Ռազգայի հեղցուցիչ տաքն ու Տէր Զօրի աւագատեղը: Եւ տակաւին ինչե՛ր:

«Ճանապարհ»ի մէջ պատահականութեամբ մտած՝ որեւէ հատուած երբ կ'ուզէի կարդալ համ մը, բոյր մը առնելու, թոյլ չէր տրուէր, որ ընդհատեմ. ամէն գլուխ «ճանապարհ»ին մէջ, ամէն վերնագիր — ազդանշան — կը թելադրէր, որ շարունակեմ ճամբորդութիւնս. կարդա՛մ. յաճախ կը թուէր ինծի, որ այդ ճամբաները ծանօթ էին ինծի եւ եղած են նաեւ ի՛մ ճանապարհը:

Ջերմօրէն կը շնորհակտրեմ պատկառելի հրատարակութիւնը թէ՛ իբրեւ յղացք, թէ՛ իբրեւ բովանդակութիւն:

Դժուար գրուելիք այդ ժամանակաշրջանէն պատմութեան համար հարուստ նիւթերու հաւաքածոյ է: Թող պատմաբանը մտածէ եւ գրէ, թէ այդ սերունդը ինչպէ՞ս պայքարեցաւ՝ ոտքի կանգնելու եւ կեանքին բարեւ տալու:

Երախտաւոր սերունդ է ան, ու դուն՝ այդ ճանապարհին մէջ ոչ միայն դէպի «նաւահանգիստ» հասցնող վառուող մոմ մը կամ՝ գրիչ:

Այս առիթով քեզմէ աւելի կ'ուզեմ շնորհակտրել հոյակապ աղջիկդ՝ Անի Հոթոյեան-ժոլին, որ յաջողած է իւրայատուկ ձեւով տօնել արժանաւոր հօր մը յոբելեանը:

Մնայուն գրքի արժէքը թող դառնայ իր հոգիին անսպառ բաւարարութիւն տուողը:

Կը բաժնեմ ուրախութիւնը նաեւ ազնիւ տիկնոջը:

Ձերդ սիրով՝

ԿԱՐՕ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Գրող, հեղինակ, դաստիարակ

Յուլիս 6, 2007  
Լոս Անճելըս

\*\*

Սիրելի՛ ընկ. Գրիգոր Հոթոյեան,  
Հաճոյքով եւ հաճոյքով ստացայ եւ կարդացի «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» վեցերորդ գիրքդ:

Նորագիրը՝ իսկ եւ իսկ բովանդակութիւնն է: Զրկանքներով ապրուած կեանքիդ կարեւոր մէկ հանգրուանը, զոր, շնորհիւ բնութեանական լաւատեսութեանդ, փոխադրած ես ներկային մէջ՝ անոր տալով յուշապատումին յատուկ անուշցած երանգները:

Ուսանելի շատ բաներ կան հոն...: Եթէ տարիքային կամ տարիներու թուահամարը պատճառ է, որ գործնապէս ուսուցչութիւն չընես այլեւս, այսօրինակ գիրքը սակայն կու գայ փոխարինել քեզ այդ ասպարէզին մէջ: Պատանիներ, սկառուտներ որքան պիտի սիրէին իւրովի ոճով տրուած աւետարանական դրուագները, եւ ա՛յլ պատումներ, որոնց խորքին մէջ խտացուած են բարոյութեան բիւրեղ սկզբունքներ եւ թելադրելի գաղափարներ:

Այսուհանդերձ, մեր ժողովուրդի ամէնէն դժնդակ շրջանին մասնակից կեանքիդ յուշերը վստահաբար կը բերեն նաեւ արժէքաւոր ծանօթութիւններ եւ գիտելիքներ՝ տրուած ժամանակաշրջանի ընկերային-հասարակական մեր կեանքի վերականգնումին համար թափուած ճիգերուն կապակցութեամբ: Այդ տեսանկիւնէն՝ պատումներդ եւ յուշագրութիւններդ կը նկատեմ կենդանի վկայութիւններ յետդեռնեան կիսադարու հայ կեանքի մարտնչումներուն:

Զերմ շնոհաւորութիւններս:

Բարի օրերու մաղթանքով՝

Սիրով՝

ԿԱՐՕ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Ռէսիտա, Գալիֆ.

Ապրիլ՝ 2011

\*  
\*  
\*

Սիրելի՛ եղբայր Գրիգոր,  
Հաճելի էր եւ այլապէս բաւարարող հանդիպիլ քեզի Թորոնթոյի մէջ, մանաւանդ խոհակից եւ ազնիւ դէմքերու հետ:

Եղբօրս մահուամբ ստեղծուած պայմաններուն մէջ, վերադարձիս միայն առիթը ունեցայ մուտք գործել «Եօթներորդ Հանգրուան»: Իրա՛ւ եօթներորդ, կարծես՝ տեսակ մը խորհրդաւոր եօթներորդ երկինք, ուր կը գտնես հետաքրքիր պատումներ եւ ուր, մինչեւ հոն՝ հայուն Ոսկեդնիկը եւ անոր նկատմամբ հայ գրողին մտահոգութիւնները:

Գնահատանքի զգացումներ ունիմ բազմաշխատ եւ բազմերանգ նիւթերուն կապակցութեամբ: Ընդարձակ արտերկրին մէջ իբր գրող, այս քանի՛ տեսակ թեմաներ հայ մտաւորականը պէտք է շօշափէ, որ բաւարարուի իր յար տագնապող հոգին:

Ուրախ եմ, որ տարիներուն հետ կ'աճի նաեւ արարումներուդ հարստութիւնը: Հարստութիւն՝ որ անկորնչելի է եւ մնայուն:

Արդար հպարտանք պէտք է նկատել բովանդակալից եօթը հատորներու վաստակը:

Կը բաժնեմ ուրախութիւնդ:

Ձերմօրէն կը գնահատեմ սիրով գեղուն ընտանեկան պարագաներուդ գուրգուրալից վերաբերմունքը:

Նոր տարուան սեմին՝ առողջութեան մաղթանքներով եւ լաւագոյն զգացումներով՝

ԿԱՐՕ ՊԵՏՐՈՍԵԱՆ

12-13-14



Մոնրէալ, 14 Նոյ. 1992

Սիրելի գրչեղբայր Գրիգոր,

«Հորիզոն»ի 16 Նոյ. 92 թիւին մէջ լոյս տեսած «Շնորհակալիք»էն իմացանք, թէ բարեյաջող գործողութենէ ետք ապաքինած ես. փառք Աստուծոյ: Կը յուսանք բուժումը վերջնական ըլլայ եւ դուն կարենաս շարունակել ազգանուէր կոչումդ:

Այս առիթով վերստին կարդացի «Դաշնակցութիւն» թերթին մէջ լոյս տեսած Սասուն Գրիգորեանի գրախօսականը Հոթոյենց Ղազարի յարկի տակ լոյս աշխարհ եկած Գրիգորի քերթողական երկի մասին:

Ուրախալի է, որ հայրենի գրողը տողերուդ մէջ կը տեսնէ հոգեկան հայրենիքով ապրող բանաստեղծը եւ նոյն այդ հոգեկան մթնոլորտով ապրող աշխարհացրիւ ազատատենչ հայուլթիւնը:

«Որքա՛ն, որքա՛ն արդիական են հնչում հեռաւոր կանադական երկնքի տակ ապրող, ուժացման դէմ պայքարի անվարձ նուիրեալ, սասունազարմ հայորդու Հայաստանի անկախութեան տենչացող հրաշունչ տողերը», կը գրէ ան:

Ու կը շարունակէ հետեւեալ տողերով.

«Գրիգոր Հոթոյեանի քաղաքացիական քնարերգութեանը բնորոշ է սիամանթոյական շունչը, հրապարակախօսական կիրքն ու մարտական պաթոսը»:

Ուրախացայ կարգալով այս տողերը, որովհետեւ, քու վրայով, իր այս կարծիքը կ'երթայ նաեւ մեր սերունդին, այսինքն այն փաղանգին, որ կ'ապրի ու կը գործէ հայուլթեան ու Հայաստանի անկախութեան երազին իրականացման ի խնդիր:

Կրկին ընդունէ մեր,— իմ եւ կողակցիս՝ Շաքէին,— ամբողջական ապաքինումի սրտանց մաղթանքները:

Ուժ, կորով եւ յարատեւութիւն:

Քոյդ՝

ՊԵՐՃ ՄՈՄՃԵԱՆ



Սիրելի եւ յարգելի Տ. Տ.  
Գրիգոր եւ Շաքէ Հոթոյեան,

Խորին շնորհակալութեամբ ստացած եմ Ձեր երջանիկ ամուսնութեան 50-ամեակին առթիւ կազմակերպուած տօնախմբութեան հրահրը:

Երկար տարիներու վրայ տարածուող մեր բարեկամութիւնը կը պարտադրէր, որ ներկայ գտնուէի այս հրճուառիթ երեկոյին, սակայն հակառակ հանգստեան կոչուած քահանայ ըլլալուս՝ դեռ բարոյական պարտականութիւններ կը կապեն զիս Մոնթրէալի բանաւոր հօտիս:

Հետեւաբար, մարմնով ներկայ ըլլալով պիտի չկարենամ միասնաբար վայելել այս յիշատակելի պահը, սակայն կը վստահեցնեմ Ձեզ, թէ հոգևով եւ աղօթքով պիտի գտնուիմ Ձեր կողքին:

Սիրելիներ, ամուսնական կեանքը, որ փոխադարձ հասկացողութեան եւ անկեղծ սիրոյ վրայ հաստատուած պէտք է ըլլայ, այսօր կորսընցուցած է իր անցեալի նուիրականութիւնը. գոյգեր չեն դիմանար ամուսնութեան այսպէս ասած կապանքներուն եւ փոքրիկ ցնցումէ մը կ'ազդուին ու կ'անջատուին:

Հետեւաբար, 50 տարուան հաւատարիմ ամուսնական կեանքը կատակ չէ, երկուստեք բացառիկ սէր ու նուիրուածութիւն կ'ենթադրէ...

Սիրելի ընկեր Հոթոյեան, մեծ համակրանքով ու գնահատանքով հետեւած եմ ձեր գրական ու ազգային աշխատանքներուն, որոնք պատկառելի համեմատութեան հասած են: Ըլլայ ձեր գողտրիկ բանաստեղծութիւններուն մէջ, ըլլայ թղթակցութիւններուն՝ գտած եմ լաւատեսութիւն, դրական մօտեցում եւ յատկապէս նուիրուածութիւն: Ձեր բանաստեղծութիւններէն նուազ արժէքաւոր չեն ձեր համապարփակ թղթակցութիւնները, որոնց համար Թորոնթոյի համայնքը ընդմիշտ երախտապարտ պէտք է մնայ: Արդարեւ, կը խոնարհիմ բազմատեսակ վաստակիդ առջեւ, մաղթելով քաջառողջութիւն եւ դալար գրիչ՝ շարունակելու համար ընտիր ստեղծագործութիւններդ:

Այս բոլորէն, այսինքն Աստուծոյ բաժինը Աստուծոյ տալէ ետք, պարտիմ Կայսրին բաժինն ալ տալ արժանաւոր կողակցիդ՝ Տիկին Շաքէին, որուն ներշնչումը, սէրն ու հասկացողութիւնը եթէ չըլլար, դուք այսօր ո՛չ 50-ամեայ յոբելեան կ'ունենայիք, ո՛չ ալ գրական նախանձելի վաստակ:

Աստուած օրհնած է քեզ արժանաւոր կողակցով, որու սիրայօժար գրկանքներուն շնորհիւ դուք ստեղծագործած ու հայ ազգին նուիրած

էք լաւատեսութեամբ յագեցած գործեր: Թող Աստուած դեռ երկար տարիներ անբաժան պահէ Ձեզ՝ վստահ ըլլալով, որ նոյն թափով ու զգացումներով պիտի շարունակէք Աստուծոյ պարգեւուած կեանքը արժեւորել:

Հետեւաբար, ընդունեցէք իմ ու երէցկնոջ (որը նոյնպէս Շաքէ կը կոչուի...) լաւագոյն բարեմաղթութիւններն ու աղօթքները:

Միշտ համակրանքով աղօթարար՝  
Տ. ԱՐՄԷՆ ԱԻ. ՔՀՆՅ. ԻՇԽԱՆԵԱՆ  
ԵՆ ԵՐԷՅԿԻՆ ՇԱՔԷ



ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԷՅԴԻԽԱՆԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ «ЭЗДИХАНА» АРМЕНИИ



REPUBLIC OF ARMENIA «YEZDIKHANA» SOCIO-POLITICAL ORGANIZATION

№ 0/27

«27» Դեպ/իւ/թ 199 թ.

**Հարգարժան «Հորիզոն» Թորոնթոյի թղթակից պարոն Գրիգոր Հաթոյան.**

Ստացա «Հորիզոն» թերթի Ձեր ողարկած համարը, որտեղ տպագրած էր մեր հարցազրույցը: Այն Հայաստանում մեծ արձագանք է գտել և նույնիսկ ձայննափովել է եզդիների համար տրվող ուղիտ հաղորդումներում: Հայտնելով մեր խորհին երախտագիտությունը տեղյակ եմ պահում Ձեզ, որ այն իր ուրույն դերը ունեցավ հայ և եզդի ժողովուրդների բարեկամության հետագա ամրապնդման համար:

Պատրաստ եմք մշտապես աջակցել Ձեզ հետաքրքրող հարցերին պատասխանելու և մեր համագործակցությունը շարունակելու:

Հարգանքներով՝

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ԲԱՔՈՅԱՆ



Յարգելի Տիար Գրիգոր Հոթոյեան,

Երկու շաբաթ առաջ, խորին շնորհակալութեամբ ստացայ ձեր այնքան գեղեցիկ կազմով պատրաստուած եւ մակագրուած «Նուիրում» բանաստեղծութեանց հատորը:

Յիրաւի ուրախալի երեւոյթ է: Որովհետեւ բազմագոյն ու բազմալեզու տիեզերքին վրայ տարածուած սփիւռքացած հայուն համար իր մայրենի լեզուն, գիրն ու գրականութիւնը պահելու, ծաղկեցնելու եւ զարգացնելու մաքառումին մէջ իւրաքանչիւր որակաւոր, իմաստալից ու օգտակար հրատարակութիւն յաղթանակ մըն է: Ձեր «Նուիրում» գիրքը այդպիսին է:

Սրտի անհուն գոհունակութեամբ կարդացի եւ մեծ հաճոյքով երգեցի ձեր «Նուիրում» հատորին նիւթերու հարուստ բովանդակութեամբ բանաստեղծութիւններն ու երգերը, որպէս ձեր զգայուն եւ տաղանդաշատ բանաստեղծի հոգւոյ ճառագայթումներու:

Որպէս երաժիշտ ըսեմ, որ չեմ հանդիպած հայ բանաստեղծի մը, որուն գործերը այս համեմատութեամբ եղանակաւորուած ու երգի վերածուած ըլլան: Մեծապէս բախտաւոր եւ շնորհաւորելի էք:

Մաղթանքս պիտի ըլլայ, որ օր մը այս երգերը հայրենի արհեստավարժ լաւ երգողներու կատարումներով խտասալիկի վրայ առնուէին եւ ժողովուրդին մատուցուէին, որպէսզի ձեր գործին այդ երեսը եւս ծանօթացուէր հասարակութեան:

Այսու հաճեցէք ընդունիլ կրկին անգամ շնորհակալութեանցս հետ սրտագին շնորհաւորանքներս հայ գրականութեան անդաստանը ծաղկեցնող այս բանաստեղծութեանց վարդափունջին համար:

Ի սրտէ կը մաղթեմ ոյժ ու կորով եւ կ'ըսեմ գրիչիդ միշտ դալար:

Շնորհակալութեամբ՝  
ԳՐԻԳՈՐ ՓԻՏԷՃԵԱՆ  
Գրող, երաժիշտ, յօրինող

29 Սեպտեմբեր 2002  
Նիւ Եորք

\*\*

Սիրելի եւ յարգելի հարպարակագիր, բանաստեղծ-մտաւորական՝  
Տիար Գրիգոր Հոթոյեան,

Օրին մեծ ուրախութեամբ ստացայ ձեր գործունէութեանց մէկ երեսը ներկայացնող «Ճանապարհ» լայնածաւալ գիրքը, որ համագումարն է հայ գաղթաշխարհի մէջ անշահախնդիւր նուիրեալներու բա-

նակին կողմէ կատարուած այն հսկայական եւ հրաշքի համազօր ճիւղերուն ու աշխատանքներուն, որոնց շնորհիւ հայ գաղութներու մը-շակոյթին երկու թեւերը՝ հոգեւոր ու աշխարհիկ, մինչեւ մեր սերունդը գէթ, ըստ կարելոյն ու ըստ հարկին փառաւոր կերպով զարգացաւ՝ շնորհելով մեզի ազգային դիմագիծ ու ինքնութիւն:

Դուք, ահաւասիկ, նուիրեալ մը այդ բանակէն, ձեր գիտակցական կեանքը նուիրելով հայ մշակոյթին, մտաւորականի ձեր ազգային գիտակցութեամբն ու տաղանդովը ոչ միայն ձեր ստեղծագործութիւններով մաս եւ բաժին բերիք հայ գրականութեան անդաստանի ծաղկումին, այլ՝ նաեւ հրապարակագրութեամբ, հայ մամուլի մէջ երեւցող ձեր նկարագրականներով հայ ընթերցողը կապի մէջ պահեցիք ազգային-մշակութային գետնի վրայ կատարուած այնքան կարեւոր ու ազգաշէն ընթացիկ գործերուն:

Մեծապէս ուրախացայ, երբ տեղեկացուցիք, թէ «Տէր Զօր»-ս կատարուեր էր:

Ձեր «Ճանապարհ» գրքին շնորհակալագրիս ուշացման պատճառը «Իմ անգին» եւ «Շուշանաբոյր գեղեցկուհիս» երգերուն տպագրութիւնն էր:

Ձեր գործերէն այս երկուքը հրապուրած ըլլալով զիս՝ երգի վերածեցի զանոնք:

Շնորհակալութիւն եւ շնորհաւորութիւններ ձեր «Ճանապարհ»-ին համար:

Մեծ ուրախութեամբ տեղեկացայ, թէ Ուրբաթ, Փետրուարին, մեծարանքի յատուկ եւ բացառիկ հանդիսութեամբ մը պիտի գնահատուի ձեր 60-ամեայ գրական-լրագրական վաստակը:

Այս առթիւ ջերմագինս կը շնորհաւորեմ ձեզ եւ սրտագինս կը մաղթեմ քաջառողջութիւն, պայծառամտութիւն եւ բեղուն գրիչ:

«Մշակ արժանի է վարձոյ իւրոյ»:

Սիրով՝

ԳՐԻԳՈՐ ՓԻՏԷՃԵԱՆ

25 Յունուար 2008

Նիւ Եորք

\*  
\*  
\*

Սիրելի եւ յարգելի Պրն. Գրիգոր Հոթոյեան,  
Օրին անհուն շնորհակալութեամբ ստացած էի Ձեր մեծարանքի մասին զրկած մամուլի գրութիւններն ու փառահեղ հանդիսութեան տեսասալիկը:

Թէեւ վերջին գրութեամբս շնորհաւորած էի Ձեզ, այս առթիւ եւս սրտագին կը շնորհաւորեմ Ձեզ, յատկապէս Համազգայինի 80-ամեակին առթիւ յօրինած Ձեր «Մաղթերդ Համազգայինի» սքանչելի բա-

նաստեղծութեան համար, որ սրտիս խօսած ըլլալով՝ ահաւասիկ երաժշտութեան վերածեցի:

Այս էր պատճառը, որ այսքան ուշացումով կը յայտնեմ շնորհակալութիւնս Ձեր ուղարկածներուն համար: Արժանի էք: Ուզեցի անպայման երգերս վերջացնելէս ետք՝ այսպիսի անակնկալով մը յայտնել շնորհակալութիւններս:

Կարծելովս, շատ հաւանաբար ալ այս գործը ըլլայ կարապի երգս: Որովհետեւ տարիքիս եւ շաքարախտիս հետ տեսողութեան եւ ֆիզիքական դժուարութիւններ յառաջացած են մօտս:

Ինչ որ ծրագրերներ ունիմ յառաջիկային համար, արդէն իսկ եկող հինգ տարիներս լեցուած են:

Որպէս յաջորդ երկ, աշխատասիրութիւն մը յամձնած եմ էջմիածնայ թեմի Առաջնորդ Խաթակ Արք. Պարսամեանին: Շատ հաւանաբար այս տարի գրքով մը լոյս կը տեսնէ: Գործը Հայ Եկեղեցւոյ երաժշտութեան պատմական ամփոփ, սակայն համապարփակ ներկայացում մըն է: Յաջորդ գիրքը պիտի ըլլայ մեր բազմաձայնային երաժշտութեան դպրոցի հիմնադիր Քրիստափոր Կարա-Մուրզայի մասին: Դէմք մը, որ դժբախտաբար գրեթէ մոռացութեան մատնուած է: Ապա, Ակնարկ «Հայ Եկեղեցւոյ Շարականագրութեան Պատմութեան» նիւթով ծրագրած եմ պատմաբանական ու երաժշտական ուսումնասիրութիւն մը պատրաստել:

Մեծ հաճոյքով կը կարդամ Ձեր տեղեկատուական գրութիւնները առ հասարակ «Հորիզոն»ի մէջ ու երբեմն ալ այլուր:

Առողջութիւն եւ գրիչնիդ միշտ դալար:

Սիրով՝

ԳՐԻԳՈՐ ՓԻՏԷՃԵԱՆ

Յունիս 10, 2009

Նիւ Եորք



Բարի երեկոյ, սիրելի Գրիգոր Հոթոյեան,

Մեծ ուրախութեամբ տիկիւնս եւ ես ստացանք քու գիրքը՝ «Նուիրում»ը: Տիկիւնս անմիջապէս սկսաւ երգերը նուագել, շատ հաւնեցաւ, ես ալ բանաստեղծութիւններու մեծ մասը կարդացի: Շատ լաւ էին: Շուտով կ'աշխատիմ քեզի համար բան մը գրել: Սրտանց կը շնորհաւորեմ քեզ:

ԳԷՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ

Դոկտ.-փրոֆեսոր

Լոս Անճելես,

9 Նոյ. 2002





Նիւ Եորք, 2 Սեպտեմբեր 1982



Սիրելի ընկ. Հովթոյեան,

Ստացած եմ 28 Օգոստոս թուակիր ձեր նամակը, ինչպէս նաեւ Թորոնթոյի Հայ Կեդրոնի պարբերաթերթ «Լրատու»ի Յունիս-Յուլիսի թիւը: Զգացուած եմ եւ շնորհապարտ թէ՛ նամակին եւ թէ՛ պարբերաթերթին համար: Շնորհապարտ մանաւանդ, որ իմ յօդուածս նկատած էք ու գընահատած ձեր գաղութին իրագործած հսկայական աշխատանքներուն սատար բերող որպէս փորձ: Այդ վիթխարի իրագործութեանց դիմաց յուզումի, հիացմունքի ու հպարտութեան ճիշմըն էր միայն իմ այդ յօդուածս, ինչքան ուրախ եմ, որ պիտի կրնայ ուրիշներու ալ փոխանցել այդ նոյն յուզումը ու մանաւանդ խանդավառել շինարարութեան գործին ի նպաստ:

Չէք գիտեր ինչքան հրճուեցայ դարձեալ՝ արդէն իսկ ոտքի կանգնած վարժարանի պատերուն նկարները դիտելով: Ձիւնի, ցիւխի ու սառոյցի փոս մըն էր այնտեղ եղած միջոցիս, հագիւլ քանի մը ամիսներ առաջ, բայց ահաւասիկ, որ ձեր գաղութի անզուգական այդ տղոց անընկճելի կամքն ու կորովը այդ փոսէն կեանք ու ժպիտ յաջողած են դուրս բերել: Ովասիս է, հաւատացէք, ովասիս է Թորոնթօն, յոյս ու հաւատք, վստահութիւն ներշնչող պայծառ աղբիւր մը, հողմատարած մեր այս ցրուածութեան մէջ: Ապրի՛ք ամէնքդ, շարունակեցէք այսպէս: Ապագայի հայ սերունդները եւ անոնց գրած հայոց պատմութեան գիրքը վարձահատոյց կ'ըլլան ձեզ:

Բարեւներ բոլորին, անխտիր:

Կարօտով՝

ԺԻՐԱՅՐ ԱԹԹԱՐԵԱՆ

Գրող-արձակագիր, հրապարագիր

\*\*\*

Սիրելի Գրիգոր Հովթոյեան,

Ստացած եմ «Նուիրում» խորագրեալ հատորդ անհուն գոհունակութեամբ եւ նոյնքան աւելի մեծ շնորհակալութեամբ: Զայն լրջօրէն, ծայրէ ի ծայր կարդալու առիթ եւ ժամանակ չեմ ունեցած տակաւին, տօնական օրերու յառաջացուցած իրարանցումին, տեղափոխութեանց եւ այլ պատճառներով: Մէջընդմէջ կատարած այդպէս

Հապճեպ ընթերցումներէս դատելով սակայն՝ այն համոզումը գոյացուցած եմ, որ շատ հաճելի ու յագեցնող ընթերցում մը կատարելու առիթ պիտի ունենամ:

Կը շնորհաւորեմ ու խնդակցութիւնս կը յայտեմ սոյն հատորին լոյս ընծայման առիթով: Ներկայի սփիւռքեան մեր պայմաններուն մէջ Հայերէն գիրքի լոյս աշխարհ գալը հրաշքի համագոր իրագործում է ու մանաւանդ պատկառանք ազդող, մեր հրաշագեղ արեւմտահայերէնի գոյատեւումը ապահովելու կոչուած մէկ նոր նուաճում:

Կը մաղթեմ, որ գրիչդ միշտ դալար մնայ վերը յիշուած առաքելութեան ճամբուն վրայ: Կը մաղթեմ քեզի տեւական ոյժ ու կորով:

ԺԻՐԱՅՐ ԱԹԹԱՐԵԱՆ

28 Դեկտեմբեր 2002

Նիւ Եորք

\*\*\*

Սիրելի ընկեր Գրիգոր Հոթոյեան,

Ստացած եմ «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» խորագրեալ հատորդ անհուն շնորհակալութեամբ: Շնորհակալութեան խօսք ունիմ նաեւ 90-ամեակիս առիթով անարժանիս ներկայացուցած բարեմաղթութիւններուդ համար: Ինչ կը վերաբերի... Հարիւրամեակի մաղթանքներուդ, շնորհակալութիւն յայտնելով նաեւ այդ ազնիւ դիտաւորութեանդ համար՝ թոյլ տուր յայտնեմ այստեղ, որ հարց եղած է ինծի միշտ, հարց է մանաւանդ Հիմա, որ բժիշկներու եւ դեղագործներու ստրկութեան իրավիճակին դատապարտուած ըլլալը օրհնութի՞ւն պիտ' համարել, թէ՞... պատիժ:

Ես ալ իմ կարգիս արեւշատութիւն ու մշտարթուն, բեղուն գրիչ մաղթելով քեզի,

Բարեկամբար՝

ԺԻՐԱՅՐ ԱԹԹԱՐԵԱՆ

Յուլիս 2, 2005

Նիւ Եորք



Իրաւամբ «Սիրտը Ափին Մէջ» քերթուածներու հատորը գրական աշխատանքի մշտաբոյր եւ անթառամ փունջ է, զարդարող ամէն հայ ընտանիքի անձնական գրադարանը եւ հոգեկան հաճոյքի եւ մտաւոր զարգացման միջոց, ամէն մի ընթերցողի:

ԹԱԴԷՈՍ ԽԱՆ ԲԱԲԱՅԵԱՆ

Հրապարակագիր

Տիբրոյք



Ապրիլի 26, 1983  
(Անճնական)

Սիրելի Գրիգոր,

Այս քանի մը տողը անճնապէս քեզի կը գրեմ, չպաշտօնականացրնելու համար:

Կը խնդրեմ, որ անյապաղ նկատի ունենաս եւ արդէն իսկ ուշացած կարգադրութեան ընթացք տայ տեղւոյդ Համազգայինը:

Հինգ ամիս առաջ, իր 29 Նոյեմբեր 1982 թուակիր նամակով, տեղւոյդ Համազգայինը ուղղակի ինձմէ 10 օրինակ Բ. Հատորէս ուզած էր, այդտեղ եղած օրերուս ալ նախապէս հաղորդելով, որ կը փափաքի իրեն համար մասնաւոր գին մը ունենալ:

Իմ 3 Յունուար 1983-ի պատասխան նամակով հաղորդած էի, որ Թորոնթոյի մասնաճիւղին համար գին ճշդած եմ հատը 25 ԱՄԵՐԻԿԵԱՆ տոլար, ուրեմն 10 օրինակը՝ 250 ամերիկեան. նկատելով, որ թղթատարը (չեմ գիտեր ինչո՛ւ) այդ օրը մերժեց պարզ թղթաբերով ստանճնել գիրքերու առաքումը եւ ըսաւ, որ միայն *air freight* կրնայ ընդունիլ, ուրեմն ճամբու ծախս ալ վճարեցի 36 ամերիկեան: Ընդհ. գումարը եղաւ 286 տոլար: Այս գումարէն 11 տոլար եւս զեղչեցի եւ խնդրեցի ղրկել 275 ամերիկեան տոլար:

Ձեմ ըմբռներ, թէ ինչո՛ւ մինչեւ այսօր որեւէ նամակ, մանաւանդ ՎՃԱՐՈՒՄԸ չեն ըրած:

Պիտի խնդրեմ քեզմէ՝ հետաքրքրուիլ այս հարցով եւ ԱՆՅԱՊԱՂ փակել հաշուական խնդիրը, ի հարկին վերադարձնելով հատորները (եթէ սպառելու յոյս չկայ): Ինձի ըսուած էր, որ իրենց ղրկուած օրինակները (Մոնթրէալէն) սպառած էին եւ կ'ուզէին 10 օրինակ ունենալ «մասնաւոր գինով»:

Ներողամիտ կ'ըլլաս նաեւ գրիս անփութութեան համար: Նոր վերադարձած եմ տուն՝ հիւանդանոցէն, ուր գործողութեան մը ենթարկուեցայ. տակաւին բոլոր ուժերս չեմ վերագտած, սակայն լաւ եմ: Կը գրեմ պառկած տեղս...

Ձերմ բարեկենդրով՝ քոյդ

ՄԻՆԱՍ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

\* \* \*

29 Հոկտեմբերի 1986

Ուոթրթաուն

Սիրելի Գրիգոր,

Շնորհակալութիւն՝ 23 Հոկտ. թուակիրիդ համար, զոր ստացայ ժամ մը առաջ:

Վեց օրէ ի վեր Սան Ֆրանսիսքօ կը գտնուէինք ու վերադարձանք  
երէկ գիշեր:

Ներողամիտ կ'ըլլաս պատճառած տաղտուկիս համար:

Սխալ է այն տպաւորութիւնը, որ կրնամ տրամադիր չըլլալ քանի  
մը տող գրելու՝ իբրեւ գրքիդ մուտքի բաժին. ուղեցի անկեղծ ըլլալ,  
երբ արձակագրութեան թելադրանք մը դրի երկտողիս մէջ: Պիտի ջա-  
նամ մինչեւ գալս աչքէ անցընել քերթուածներդ (ի հարկին հոդ լրա-  
ցընել), ապա — լրիւ կարդալէ ետք — ամփոփ բան մը գրել իբրեւ խոր-  
հրդածութիւն: Չափազանց ծանրաբեռնուած եմ այս օրերուն, հե-  
տեւաբար կը խնդրեմ, որ չկամութիւն չտեսնես ու վերագրես հեւ ի  
հեւ վիճակիս:

Այդտեղ առիթ կ'ունենանք առանձնանալու ժամ մը եւ խօսելու  
քիչ մը աւելի երկար:

Կրկին շնորհակալութիւն,  
եւ ջերմ բարեկներով՝

ՄԻՆԱՍ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ



1 Հոկտեմբեր 2014

Սիրելի բազմավաստակ հայրենակիցս՝ ընկեր Գրիգոր Հոթոյեան,  
Ստացած եմ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԴ. շնորհակալութիւն-  
ներս եւ սրտանց շնորհակալութիւն: Հազիւ խորագիրներուն վրայէն  
անցայ. անոնք կ'ընդգրկեն ամբողջ հայոց աշխարհը, Հայրենիքէն  
Սփիւռք:

Հետաքրքրութեամբ կարդացի յուշերդ ու վկայութիւններդ  
գրական դէմքերու եւ հայութիւնը յուզող հարցերու մասին: Շատ ու-  
շագրաւ գտայ Հալէպի սասունցիներու մասին նշմարդ եւ Սասնոյ ու  
Ֆիտայիներու մասին ընդարձակ տեղեկութիւնները:

Գալիք ՀՄԸՄի ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ խաղերու առթիւ, անպայման  
պէտք է վերահրատարակել Անդրանիկ Ծառուկեանի «Ճամբայ բա-  
ցէք» գրութիւնը, որուն տեղ տուած էիր այս՝ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՀԱՆ-  
ԳԸՐՈՒԱՆԻն մէջ:

Ուրախ եմ, որ անդրադարձ կար Մուշեղ Գալշոյեանի մասին, եւ  
վերջինիս գրիչով՝ Խաչիկ Դաշտենցին: Վերջինիս ԽՈՒԴԵՏԱՆը իւրա-  
քանչիւր սասունցիի տան անբաժան մասնիկը պէտք է ըլլայ, որպէս  
անլուելի յուշ Սասնոյ չքնաղ եւ կորուսեալ երկրի մասին:

Գրիչդ դալար ութերորդ հանգրուանին համար, հայրենակցական  
գգացումներով եւ ընկերական ջերմ բարեկներով՝

ԲԱԲԳԷՆ ՍԱՍՈՒՆԻ



Արուեստագէտ բանաստեղծ ընկերոջս՝  
Գրիգոր Հոթոյեանին.

Թանկագին ընկեր,

Անհուն շնորհակալութիւններով է, որ կ'արձանագրեմ ստացումը «Սիրտը Ափին Մէջ» խորագրով քերթուածներու գիրքիդ եւ ներփակուած երկտողիդ, ուր իմ մասին զգացած արտայայտութիւններդ արձանագրած էիր. կրկին շնորհակալութիւններ:

Մեր ըրածը, սիրելիս, քու եւ իմ, եւ դեռ մեզի պէս սրբազան խենթերունը քիչ է. մենք պէտք է տանք մեր ազգին ու անհաշիւ ծառայենք մեր արուեստին՝ հայու արուեստին, որ ճշմարտագոյնն է, եւ որ ամէնուրեք կը պսպղայ նսեմացնելով այլ աստղեր:

Արուեստի գիտակցութիւն ունենալը տիրացումն է այն զգացումներուն, որ մեզի կը պարգեւէ ըմբոշխնման գեղեցկութիւնը այլ կամ երաժշտութիւն, ուր չկան խաբէութեան որեւէ նշոյլ, այլ միայն անկեղծ ու վարար հոսանքներ գոյնի ու ձայնի, հասկացողութեան ու ըմբռնողութեան:

Եթէ անձ մը փափաքի հնարել՝ իր արուեստը յայտնաբերել, անհրաժեշտ է նախ գիւտ ընել, կարեւոր յայտնաբերում մը երեւան հանել, ապա իր տաղանդը ի գործ դնել որպէսզի իր արուեստին միջոցաւ միտքը կարենայ լաւագոյնս յայտնաբերել՝ արժանանալով մարդկանց հասկացողութեան, գնահատման չեմ կրնար ըսել, գիտես, որովհետեւ մարդս այնքան թերութիւններ ունի սրբագրելիք... ուրկէ գնահատելու գիտակցութեան աստիճանին երբ հասնի, թերեւս երրորդ անգամ աշխարհ գալու է:

Ես կը հաւատամ հոգիի անմահութեան, վերստին երկիր այցելութեան, ու ամէն անգամ, որ վերստին հասնի աշխարհ, ոչ թէ սկիզբէն կը սկսի, այլ իր վերջին ձգած վիճակէն վերսկսելով յառաջ կ'երթայ. այս առումով է, որ կ'ըսեմ, թէ երրորդ աշխարհ գալուն սրբագրած ըլլալով այլ թերութիւններ, թերեւս գնահատման աստիճանին հասնելով, ջանայ անկեղծօրէն գնահատել տարուած աշխատանք մը՝ արուեստի գործ մը:

Ինձի համար արուեստը աստուածային է, աստուածանման է քան գիտութիւնը, որովհետեւ գիտութիւնը կը յայտնաբերէ, իսկ Աստուած կը ստեղծէ: Արուեստագէտներ Աստուծոյ ներկայութիւնը չե՞ն միթէ:

Արդարեւ, արուեստի մասին խօսքս աւարտելով ըսեմ, թէ եթէ արուեստ գոյութիւն չունենար, ինչպէս մարդիկ չունենային հագուստ-զարդարանք, համայն աշխարհը պիտի նմանէր խոպան ու վայրի վայրի մը. յուսամ հոն չի հասնիր:

Չեմ գիտեր ինչն'լ ունեցայ վերելի արտայայտութիւններս. նըպատակս երկտողով մը ներփակել էր երաժշտական արուեստս՝ մաղթանուագս (օրաթօրիօ), որ բանահիւսած եմ վերոյիշեալ գիրքէդ առնուած «Հայոց լեզու» քերթուածիդ շուրջ, որ ունի չորս միայնակներու բաժին, քառաձայն երգչախումբի ու երկու դաշնամուրի բաժիններ. կատարման պարագային՝ երկու դաշնամուրները անհրաժեշտ են. բարի ըմբոշխնում կը մաղթեմ:

Յառաջիկայ գործունէութիւններուդ համար, ըլլան գրական կամ հրապարակային, յաջողութիւն կը մաղթեմ. գիտեմ ապրումը կայ, եւ քանի որ աւիւնն ու կորովը անպակաս են, որեւէ արգելք չունիս դանդաղելու կամ դադրելու արտադրելէ. քեզմէ աւելին կը սպասուի:

Ուրեմն, սիրով կը ներփակեմ մաղթանուագս, քաջառողջութիւն կը մաղթեմ քեզի:

Անկեղծօրէն քոյդ՝

ՅԱԿՈՒ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Թորոնթօ



15 Փետր. 2012

Շատ սիրելի՛ հայրենակից,

Բազմավաստակ հրապարակագիր, տարօնաշունչ բանաստեղծ եւ վաղեմի բարեկամ, Գրիգոր Հոթոյեան, Թորոնթօ.

Շնորհակալութեամբ ստացայ ջերմ մաղթանքներով լեցուն բացիկդ այն օրերուն, երբ Ուաշինկթընի «Անի» երգչախումբը ազնիւ գաղափարը ունեցաւ նշելու ծննդեանս 80-րդ տարեդարձն ու երաժշտական-մշակութային գործունէութեանս 60-ամեակը:

Մեծարանքի երեկոն անցաւ բացառիկ խանդավառութեան մթնոլորտի մէջ, լիցքաւորման նոր թափ յառաջացնելով մէջս: Երանի ներկայ ըլլայի՛ր եւ ըմբոշխնէ՛իր վաստակաշատ հայրենակցիդ հանդէպ երախտագէտ երիտասարդութեան ցուցաբերած սէրն ու յարգանքը:

Ինչ խօսք, որ տասնամեակներու ընթացքին, հաւատարիմ մեր կոչումին, հետամուտ եղանք յարատեւ այն ազնիւ ճիգին, որ կը ջանայ երաժշտութեան եւ արուեստի հուրը վառ պահել սերունդներու շարքերէն ներս: Մեզի ընծայուած սէրն ու յարգանքը միաժամանակ ուղղուած է հայ երգին ու երաժշտական այն միաւորներուն, որոնք երկար տարիներու ընթացքին հետեւեցան մեր ծրագրերուն, սատար հանդիսանալով հայապահպանման սուրբ գործին:

Սիրելի՛ Գրիգոր, կրկին անգամ շնորհակալ եմ ուշադրութեանդ համար: Կը մնամ տարօնական ջերմութեամբ՝

ԱՐՄԷՆ ՍԱՅԵԱՆ



Սիրելի ընկ. Հոթոյեան,

Շատ ուրախ եմ, որ վերստին հանդիպեցանք եւ որ ձեր հատորը փոխանցեցիք: Օղակայանը յապաղում կար մէկ ժամ, ապա՝ թռիչքը, եւ ամերիկեան վէպը մէկ կողմ դրած՝ «Ճանապարհ»ը կարդացի:

Նախ ըսեմ, որ վերնագիրը, գրքին անունը շատ լաւ ընտրուած է: Երկրորդ, եւ շատ աւելի կարեւոր, շատ ուրախ եմ, որ հրատարակած էք այս գործը: Ձեր գրական կեանքի վաստակը չէ միայն, այլ մեր հաւաքական կեանքին գարկերակը ունկնդրող, շօշափող անձի մը վկայութիւնը:

Ձէի ակնկալեր լուսանկարներ տեսնել, ուր մնաց լուսահոգի հօրս «հանդիպիլ» էջ 49-ի վրայ եւ անկէ ետք: Ձէի ակնկալեր նաեւ, որ ձեր յուշերն ու փորձառութիւնները այնքան յաճախ զօդուած պիտի ըլլային իմիններուս: Ես 1944-ի ծնունդ եմ: 4 տարեկանի յուշերս առաջին յուշերով յիշատակներս են Հալէպէն, ուր մնացի մինչեւ 1956: Կը յիշեմ, որ հայրս ձեռքս բռնած ակումբ տարաւ գիս՝ Զօր. Դրոյի այցելութիւններէն առաջինին,՝ այն տարին, կարծեմ, երբ Յակոբ Օշականը մահացաւ: Մեր տիտաններէն տարտամ յուշեր՝ մանկութենէս:

Եւ յետոյ, երբ էջ 108 հասայ, վերստին առիթն ունեցայ յիշելու «Արեւելք»ի խմբագրատունը եւ դաշնակցական Հալէպը, ուր Դաշնակցութեան ամէնէն ազնիւ եւ նուիրեալ տարբերակին փորձառութիւնը ապրեցայ՝ թերեւս այնտեղի ազգային շունչը կը պարտինք բազմաթիւ ազգականերու, որոնցմէ մէկն ալ... Սպաղանի մօտ ըլլալն է: Կրկնեմ՝ կը շնորհակարտ եմ եւ շնորհակալ եմ:

Ձերդ՝

ՓՐՈՅ. ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

Մտաւորական, հրապարակախօս, դաստիարակ

6 նոյեմբեր 2007

\*\*\*

13 Դեկտ. 2016

Սիրելի ընկ. Գրիգոր,

Ողջունելի անակնկալ մըն է ձեր նոր հատորը: Ձէի գիտեր թէ «Ճանապարհ»ի հրատարակութենէն ետք կը շարունակէք գրել, մշակել, ստեղծագործել: «Մայրամուտի Յուլի»-ն մէջ ամփոփուած գրողութիւններուն մեծ մասը բոլորովին անծանօթ էին ինձի, մեր բոլորին յարգելի ու սիրելի Տ. Կորիւն Արք. Պապեանի վախճանման քառասունքին առթիւ ձեր պատրաստած յուզիչ ու տպաւորիչ գրողութիւնը:

Առողջական ձեր կացութեան բարելաւումի ջերմ մաղթանքներով՝

ԽԱՉԻԿ



Յարգելի եւ սիրելի Պարոն Հոթոյեան,

Մի քանի օր առաջ շնորհակալութեամբ եւ մեծ գոհունակութեամբ ստացայ ձեր «Ճանապարհ» հատորին այն օրինակը, զոր ինծի վերապահելու ազնուութիւնը ունեցած էիք: Անոր այլազան բաժիններէն ոմանց ընթերցումը արդէն իսկ աւարտած եմ:

Ամէն բանէ առաջ կ'ուզեմ ընդգծել, թէ ինծի համար ինքնին յուզիչ է մէկ հատորի մէջ խմբուած գտնել ձեզի պէս ազգանուէր հայու մը ցարդ ապրած կեանքին մտաւորական-հանրային-գրական բազմակողմանի վաստակը: Յուզիչ եւ օրինակելի կը գտնեմ նաեւ այն, որ ձեր անձնուրաց գործունէութեան տեսանելի արդիւնքը մէկ յարկի տակ խմբելու առաջին պահանջը զգացողները՝ իրենց մեկենասութեամբ իսկ հանդիսացած են ձեր դուստրն ու թոռները: Սիրտ ջերմացընող օրինակելի նախաձեռնութիւն:

Ինչ կը վերաբերի բովանդակութեան՝ յայտնեմ, թէ առաջին մէկ օրէն եղած եմ «Հորիզոն» շաբաթաթերթի մէջ հրատարակուած ձեր բոլոր գրութիւններուն հաւատարիմ ընթերցողը, անոնց հետաքրքրական բնոյթէն անդին մեծապէս դնահատելով նաեւ անոնց համագաղութային առումով կենսական դերը: Արդարեւ, Թորոնթոյի նման կենսունակ հայկական հաւաքականութեան մը իրադարձութիւնները այս շաբաթաթերթին միջոցաւ կանոնաւորաբար փոխանցելով Գանատայի բոլոր բաժանորդներուն՝ դուք օժանդակած էք եւ կը շարունակէք օժանդակել համագանատական առումով մեր համայնքներու մերձեցման կարեւոր գործին:

Անձանօթ էի ձեր Հալէպ ապրած շրջանի տեղեկագրական-կենսագրական-պատմական-ուսումնասիրական գրութիւններուն, կիրականօրեայ դպրոցներու ի նպաստ ունեցած գործունէութեան, պատմուածքներուն, որոշ հարցազրոյցներու եւ այլն: Զարմանալի չէ ուրեմն, որ «Ճանապարհ»ի ընթերցումը ասոնցմով սկսայ: Այդ էջերուն մէջ միշտ դէմ յանդիման գալով միեւնո՛յն ազգանուէր, սրտցաւ մտաւորական Գրիգոր Հոթոյեանին հետ, որ իր բազմապիսի կարողութիւնները ի սպաս կը դնէ մեր լեզուական-մշակութային-ազգային արժէքներուն:

Աստուած ձեզի պարգեւէ քաջառողջութիւն՝ դեռ երկար տարիներ պատնէչին վրայ պայքարելու համար:

Սիրով՝

ՓՐՈՅ. ՇԱՔԷ ՏԷՐ ՄԵԼՔՈՆԵԱՆ-ՄԻՆԱՍԵԱՆ

29 Հոկտեմբեր 2007, Մոնթրէալ



\* \* \*

Յարգարժան Գրիգոր Հոթոյեան,

Մի քանի օր առաջ մեծ շնորհակալութեամբ ստացայ ձեր ինծի վերապահած եւ մակագրած տպաւորիչ «Ճաճանչներ» հատորը:

Բոլորովին անկեղծօրէն յայտնեմ անմիջապէս, որ բովանդակութեան վրայ աչք նետած պահէս՝ մեծ անակնկալի մատնուեցայ եւ ինքս ինձմէ ամչցայ: Պատճառն այն է, որ ցարդ ձեզ միայն կը ճանչնայի որպէս արձակագիր եւ «Հորիզոն» շաբաթաթերթի մէջ ձեր գրութիւններով Թորոնթոյի եւ Մոնթրէալի մեր համայնքները իրարու զօդող ներհուն յօդուածագիր: Ինչը ինքնին արդէն բաւարար էր ձեր նկատմամբ մեծ յարգանք եւ գնահատանք տածելու համար:

Բնաւ չէի գիտեր, թէ բանաստեղծ ալ էք եւ ձեր յանգաւոր հեղինակութիւններէն շատեր եղանակաւորուած ալ են: Ասոնցմէ առաջինները կարգալէ ետք՝ գիտեմ, թէ մեծ հաճոյքով պիտի տեղեկանամ մնացեալներուն ալ բովանդակութեան, յետոյ պիտի ջանամ զանոնք երգել...

Կրկին շնորհակալութիւն ձեր ինծի պարգեւած այս հաճոյքին համար: Վարձքերնիդ կատար:

Քաջառողջութեան եւ նորանոր թռիչքներու սրտագին մաղթանքներով եւ ջերմ զգացումներով՝

ՓՐՈՓ. ՇԱՔԷ ՏԷՐ ՄԵԼՔՈՆԵԱՆ-ՄԻՆԱՍԵԱՆ

Մոնթրէալ, 28 Մարտ 2010



Յարգելի Պրն. Հոթոյեան,

Անցեալին, խնդրանքիս ընդառաջելով, սիրով զրկեցիք Ձեր գրած գիրքերէն օրինակներ, որոնք օրին հաճոյքով կարդացի եւ իմ կարգին ամառուայ արձակուրդին երբ թոռներս մօտս կը մնային, կը պատմէի իրենց՝ թէ՛ զբաղելու եւ թէ՛ դասեր քաղելու այդ շինիչ պատմութիւններէն:

Այժմ, Պրն. Հոթոյեան, ընդունեցէք այս չնչին նուէրը փոխադարձ յարգանքի: Աստուած Ձեզի երկար եւ առողջ կեանք պարգեւէ, որով տակաւին լայն պաշար ունիք թուղթին յանձնելու:

Սիրով՝

ՇԱՔԷ ՖԵՐՄԱՆԵԱՆ



Սիրելի՛ Պրն. Հոթոյեան,

Շնորհակալութեամբ ստացանք ձեր գրական վաստակին հաւաքածոն հանդիսացող նորագոյն հրատարակութիւնը՝ «Ճանապարհ» հատորը: Ընթերցողը այնտեղ կը ճամբորդէ ձեզի հետ մեր բոլոր գաղութները, կ'անցնի հայահոտ քաղաքներու ճամբաներէն, դէմ յանդիման կը գտնուի յայտնի անձնաւորութեանց եւ կը հարստանայ մտածումներու եւ խօսքերու ճոխութենէն:

Ձեր գրական արժէքներուն առաջին վկայութիւնը չէ այս հատորը եւ կը յուսանք, որ վերջինը չ'ըլլար:

Այս առիթով անգամ մը եւս կը շնորհակարարեմ ձեզ, մաղթելով առողջութիւն եւ մեր ազգային ու մշակութային կեանքին մէջ մնայուն ներկայութիւն:

Մնամք սիրոյ ողջունելու,

Աղօթարար՝

ՕՇԱԿԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈԼՈՅԵԱՆ

Առաջնորդ

Ամերիկայի Արեւելեան Թեմին

23 Յուլիս 2007



Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԼԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ, ԹՈՐՈՆՏՕ  
SAINT MARY ARMENIAN APOSTOLIC CHURCH, TORONTO

4 Մայիս 1990

Մեծայարգ

Տէր եւ Տիկ. Գրիգոր Հոթոյեան

Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Եկեղեցւոյս Հովիւն ու Հոգաբարձութիւնը, ինչպէս եւ Շինարարական Յանձնախումբն ու յարակից մարմինները, ուրախութիւնն ունին ձեզի տեղեկացնելու, թէ եկեղեցւոյս նորակառոյց շէնքին օծումը պիտի կայանայ յառաջիկայ Մայիս 27, 1990, Կիրակի առաւօտեան ժամը 11-ին:

Մեր հայրենի գաւառներուն եւ պապերու կեանքին մէջ, դարեր շարունակ նմանօրինակ իրադարձութիւններ հանդիսացած են աղ-

բիւր մարդակերտումի, հոգեկան հզօրացման եւ ազգային վերածաղկումի:

Այսօր պատմութեան ջահը վառ պահելու եւ փոխանցելու անգուգական պատեհութիւնը մերն է ու ձերը:

Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսը յատկապէս հրաւիրուած է Լիբանանէն, որպէսզի թեմիս առաջնորդ Բարձր Տ. Մեսրոպ Արք. Աշճեանի եւ այլ հոգեւոր եղբայրներու մասնակցութեամբը կատարէ եկեղեցւոյ օժման հոգեպարար արարողութիւններն ու հանդիսապետէ այս առիթով կազմակերպուած ձեռնարկներուն:

Մեր սրտագին փափաքն է որ մեզի հետ ըլլաք այս առիթներով ու բաժնէք մեր ուրախութիւնը:

Ներփակ կը գտնէք հրաւիրագիր-ժամանակացոյցը: Պիտի խնդրէինք որ մեզ կանխաւ տեղեակ պահէք ձեր մասնակցութեան ծրագիրներուն մասին:

Ձեզ անձամբ ողջունելու ջերմ յոյսով, մնամբ լաւագոյն բարեմաղթութիւններով միշտ ձերդ

Աղօթարար

ԽԱԺԱԿ Ծ. ՎՐԴ. ՅԱԿՈԲԵԱՆ

Հոգեւոր Հովիւ

\*\*

11 Մայիս 1994

Մեծայարգ Տէր եւ Տիկ. Գրիգոր Հոթոյեան,

Ընթացիկ տարւոյ Յունուար 9-ին, բարձր հովանաւորութեամբը Թեմիս Բարեջան Առաջնորդ Բարձր Տ. Մեսրոպ Արք. Աշճեանին, հանդիսաւորապէս նշուեցաւ Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Եկեղեցւոյ կազմութեան եւ հիմնադրութեան 10-ամեակը:

Համայնքիս բոլոր գաւակներուն համար անխտիր եւ յատկապէս եկեղեցւոյ սրտակից ու քաջալեր մեր բարերարներուն եւ նուիրատուներուն համար խանդավառութեան եւ հպարտութեան օրեր էին այս առիթով կազմակերպուած հանդիսութեանց օրերը: Տասնամեայ դժուարութիւններէ, զոհողութիւններէ եւ լարուած աշխատանքէ ետք, որպէս համայնք կու գայինք հաստատելու, որ այս եկեղեցին մեր գաղութի ծոցին մէջ ոչ միայն կրցած էր իրագործել առաքելութիւն մը, այլ նաեւ յաջողուցած էր իրականացնել գեղեցիկ եւ շքեղ երազ մը, եւ թէ ան պիտի շարունակէր իր կենսական ու սրբազան ա-

ուաքելութիւնը թորոնթոհայ գաղութի գոյապահպանման եւ հոգեւոր մատակարարման աշխատանքին մէջ:

Այս յաջողութիւնը բնականաբար կը պարտինք այն գուրգուրանքին, որով դուք բոլորուեցաք այս եկեղեցիին՝ հայութեան այս կենսատու եւ թանկագին «Հաւատքի Բերդին» շուրջ ու սիրով տէր կանգնեցաք ու պաշտպանեցիք զայն ամէն տեսակի դժուարութիւններու դիմաց:

Բնականաբար, տակաւին կը գտնուինք աշխատանքի սկզբնաւորութեան, եւ հաստատութիւններու կեանքին մէջ 10-ամեակը թէեւ կարեւոր հանգրուան մըն է կազմաւորման տեսակէտէ, սակայն լոկ ակնթարթ մըն է արդիւնաւորման եւ պտղաւորման տեսանկիւնէն:

Լաւատեղեակ էք անշուշտ, որ տակաւին բազում աշխատանք կայ մեր դիմաց եւ բազում դժուարութիւններ յաղթահարելիք, որոնց գլխաւորն է եկեղեցւոյ պարտքին փակումը եւ պարտամուրհակին ոչնչացումը:

Մենք յուսալից ենք, որ միասնական աշխատանքով եւ ցարդ ցուցաբերուած սիրոյ անսակարկ նուիրումի ոգիով մենք պիտի կարենանք այս մարտահրաւէրը եւս յաղթահարել, ձեր եւ ձեզի նման սրտակից բարեկամներու աջակցութեամբն ու օժանդակութեամբը:

Յարգ կարելի եղած իրականացումներուն շնորհաւորութիւնն ու շնորհակալութիւնը եւ յաջողութեան արդար հպարտութիւնը առաջնահերթ կերպով ձեզի կը պատկանի, որովհետեւ այս բոլորը, մեծ չափով մը, ձեր նուիրումին, գոհողութեան եւ անսակարկ առատաձեռնութեան արդիւնքն են:

Գրքոյկը, զոր այս առիթով ձեզի կ'ուղարկենք, ամփոփ եւ համեստ պատկերն ու պատմութիւնն է անցնող տասնամեայ ճիգին եւ իրագործումներուն, որուն դուք եւս բերիք ձեր թանկագին մասնակցութիւնը: Կը յուսանք, որ զայն կ'ընդունիք որպէս արտայայտութիւնը մեր անհուն շնորհակալութեան ու կը պահէք զայն, որպէս վկայութիւնը պատմութեան:

Կը հաւատանք, որ յառաջիկայ ճիգին մէջ եւս պիտի չզլանաք ձեր սրտակցութիւնը եւ թանկագին օժանդակութիւնը:

Երախտագիտութեամբ, կանխայայտ շնորհակալութիւններով եւ բարօրութեան եւ արեւշատութեան ջերմագին մաղթանքներով մնամք միշտ ձերդ

Սիրով Աղօթարար՝

ԽԱԺԱԿ Ծ. ՎՐԴ. ՅԱԿՈԲԵԱՆ





Յուլիս 8, 1989  
Թիւ 118



Մեծայարգ Տիար Գրիգոր Հոթոյեան,  
Հաւանաբար լսած էք արդէն, որ շուրջ  
երկու տարիներէ ի վեր եկեղեցին կը կազմակերպէ հայերէնի դասընթացքներ, որուն կը հետեւին առաջին հերթին սկսնակները եւ այնուհետեւ երկրորդ դասարանի դասընթացքներուն կը մասնակցին անոնք, որոնք կ'ուզեն աւելիով կատարելագործել իրենց հայերէնի գիտութիւնը: Երկրորդ դասարանի դասատուն է Տիար Անդրանիկ Զիլինկիրեանը: Տիար Անդրանիկ Զիլինկիրեան եւ իր աշակերտները մաս կը կազմեն մեր կողմէ հրաւիրուած յանձնախումբի մը, որուն պարտականութիւնը պիտի ըլլայ պատուել թորոնթոհայ հեղինակները: Արդ այս առիթով կ'ուզենք կազմակերպել մասնաւոր երեկոյ մը, յատուկ կազմակերպուած ծրագրի մը գործադրութեամբ: Այս ծրագիրը պիտի ի գործ դնենք աշնան ընթացքին:

Մեր խնդրանքն է, որ ընդառաջէք մեր ծրագրին, մեզի ուղարկելով առաջին հերթին Ձեր կողմէ հեղինակուած գիրքերէն մէկական օրինակ, որպէսզի մեր կողմանէ պատրաստուելիք գրքոյկին մէջ անդրադառնանք Ձեր կողմէ կատարուած ստեղծագործական աշխատանքին: Այնուհետեւ կը փափաքինք լսել Ձեզմէ եւ կը խնդրենք ընթացք տալ մեր փափաքին, որպէսզի կարելի ըլլայ կազմակերպել սոյն ձեռնարկը, առիթ ընծայելով Ձեզի, որպէսզի ի պատիւ Ձեզի կազմակերպուի գեղեցիկ ձեռնարկ մը:

Մանրամասնութեանց համար կը խնդրենք հեռախօսել Տիար Անդրանիկ Զիլինկիրեանին եւ կամ ի պահանջել հարկին անձամբ մեզի:

Մնամք լաւագոյն մաղթանքներով,

Աղօթարար՝

ՅՈՎՆԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Հովիւ

Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ

\*  
\*  
\*

Ազատատենչ ողջ հայուքեան  
Խրոխտ կամֆով Վահագնածին,  
Փիւնիկի պէս ծնար կրկին  
Յաւերժական իմ Հայաստան:

Դուն իմ երագ, իմ միակ սէր,  
Դուն իմ արեւ կենսապարգեւ,  
Կարօտավառ քեզի բարեւ,  
Իմ Հայաստան աւետարբեր:

### Գրիգոր Հոթոյեան

*Թանկագին եւ սիրելի Պրն. Հոթոյեան,*

*Երախտագէտ սրտով կու գանք յայտնել մեր սէրն ու գոհունակութիւնը Ձեզի այն գեղեցիկ ապրումներուն համար, որոնք բառ ու երգ են դարձած եւ հոգեւոր գործիք՝ թարգմանութեանը համար շատ-շատերու զգացմանց, որոնք նոյնը կը զգան ինչ որ ձերն է եւ կը դըրսեւորուի ձեր անձին մէջէն:*

*Արդարեւ ձեզ կը ճանչնանք դեռ եւս այն տարիներէն, երբ Թորոնթոյի մէջ հովուական ծառայութեան էինք կանչուած: Եւ դուք եղաք ամէնուրեք ձեր քաղցր ժպիտով, եւ ամէն ձեռնարկ վերակենդանացաւ ձեր գրչով, որուն հպարտութեամբը ներշնչեցիք շատ ու շատեր:*

*«Յաւերժական իմ Հայաստան» հաւատամքը ձեր՝ դարձուցիք շատերուն հաւատամքը եւ իրօք մեծագոյն նուէրը, որպէս գանձ անկողոպտելի, որուն համար վստահ եղէք սերունդներ երախտապարտ պիտի մնան ձեզի:*

*Սիրելի եւ յարգելի Պրն. Հոթոյեան, երբ կը վերընթերցեմ ձեր հոգելից բառերով երգ դարձած «Ազատատենչ իմ Հայաստան»ի բառերը, ապա կը զգամ ճշմարիտ հայրենասէրին սրտին կրակի ջերմութիւնը.*

Դուն իմ երագ, իմ միակ սէր,  
Դուն իմ արեւ կենսապարգեւ,  
Կարօտավառ քեզի բարեւ,  
Իմ Հայաստան աւետարբեր:

*Բայց, աւելին, այս նոյն ոգին ալ կը խօսի ու կը պատգամէ ձեր բոլոր գրութիւններուն մէջէն: Սիրոյ ու նուիրումի նոյն զգացողութիւնը կը դրսեւորուի «Նուիրում» վերնագրուած ձեր հատորի բոլոր էջերուն մէջ, ամէն մէկ բան ու խօսքի մէջ: Եւ ի գուր չէ, որ Հրաչեայ Մաթեւոսեան այնքան արդարօրէն կը գրէ ձեր մասին հետեւեալ բառերով. «Սիրային ինչ երգ էլ գրած լինի ու գրելու լինի Գրիգոր Հո-*

*Թոյեանը, սիրոյ նրա անսպառ աղբիւրը եղել է ու է՛ իր Հայաստանը...  
Աղբիւր, որ նա պահել ու պահում է մաքուր»:*

*Օրհնեալ ըլլայ ձեր գրիչը, վարձքերնիդ կատար:*

*Մնամ սիրոյ ջերմ ողջունիւ,  
Աղօթարար՝*

*ՅՈՎ ՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Գանատահայոց*

Մոնրէալ, 14 Փետրուար 2003

\*  
\*  
\*



WESTERN DIOCESE OF

THE ARMENIAN CHURCH OF NORTH AMERICA

Հայաստանեայց Եկեղեցի Հիւսիսային Ամերիկայի Երեմբեան Թեմ

HIS EMINENCE ARCHBISHOP HOVNAN DERDERIAN, PRIMATE

09.21.2010

Mr. Krikor Hotoyan  
511-34 Leith Hill Rd  
North York ON M2J 1Z4  
Canada

Մեծահարգ Տիար Գրիգոր Հոթոյեան,


Ընդունեք մեր սրտի խորին գնահատանքն ու շնորհավորանքը, Ձեր նոր հրատարակված «Ճանաչներ» գրքի կապակցությամբ:

Ձեր նախորդ ստեղծագործությունների պես, այս գիրքը այն է զարնում իր խորաթափանցությամբ եւ յուրահատուկ բանաստեղծական ոճով: Այն օգնում է ընթերցողին մտորել կյանքի այնպիսի արժեքների շուրջ, որոնք են սերը, հայրենիքը, ընտանիքը, տակավին սրբություններ, որոնք լեցնում են մեր միտքն ու հոգին բարոյականով: Ձեր մտքի պայծառությունը եւ նույն միտքը վարպետորեն շարադրելն է, որ ընթերցողին օգնում է ավելի մոտիկից եւ ավելի խորը ընկալել «Հայությունը ազնուածին» եւ ճանաչել «Հայաստանը սիրասուն»:

Բանաստեղծական միտքը այսօր ցավոք սրտի քչերն են ընկալում, սակայն Ձեր իմացական սխրանքների եւ նվաճումների շնորհիվ մենք կարողանում ենք հաղորդակցվել զգացումային իրականությանը եւ վայելել բանաստեղծության մեջ թաքնված ճշմարիտին եւ գեղեցիկին:

Սրտանց շնորհակալ ենք Ձեր այս աշխատանքի համար եւ մաղթում ենք Ձեզ արգասաբեր գործունեություն, քաջառողջություն եւ արթուն միտք: Աղոթում ենք, որ Աստված լցնի Ձեր օրերը իր առատ օրհնություններով եւ աստվածային սիրո գիտությամբ:

Սիրոյ ողջունիւ եւ օրհնութեամբ,  
Աղօթարար՝

  
Յովնան Արքեպիսկոպոս  
Առաջնորդ



Մեծայարգ Տիար Գրիգոր Հոթոյեան  
Աստ

Սիրելի Պրն. Հոթոյեան,

Մեծ հաճոյքով ծանօթացայ ձեր գրչին պատկանող «Նուիրում»  
երգերու ժողովածուին:

Ձեր երգերու մէջէն ընթերցողը կարող է ծանօթանալ ձեր հայրե-  
նասիրական ոգուն, որուն փայլուն վկայութիւնը ժողովածուի Մայր  
Հայրենիքի մէջ տպագրութիւնն է:

Այս առթիւ իմ շնորհաւորութիւնները Ձեզ եւ Ձեր բանաստեղ-  
ծութիւնները եղանակաւորող երաժշտագէտներուն եւ բոլոր անոնց,  
որոնք բարոյապէս եւ նիւթապէս օժանդակեցին «Նուիրում»ի հրա-  
տարակութեան:

Թող բարին Աստուած օրհնէ Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ եւ ա-  
րեւշատ տարիներ:

Սիրոյ օրհնութեամբ՝

Տ. ԶԱՐԵՀ Ա. ՔՀՆՅ. ԶԱՐԳԱՐԵԱՆ

Հոգեւոր հովիւ

Թորոնթոյի Ս. Երրորդութիւն

Հայ Առաքելական Եկեղեցւոյ

28 Օգոստոս 2002



Մեծայարգ Տիար Գրիգոր Հոթոյեան  
Թորոնթօ

Յարգելի մտաւորական բարեկամս,

Շնորհակալութեամբ ստացայ քրոջս՝ Լենային հոգածութեամբ եւ  
ձեռամբ թորոնթոբնակ Մարգար Պոյաճեանի, նուաստիս մակա-  
գրուած բերքահաւաքիդ՝ «Ճանապարհ» կոթողական հատորը, նոր  
տարուան նախօրեակին հատոր, որ կը խոստանայ իբր յիշողութիւն  
հայաշունչ սերունդներուն նուիրելու ապրուած կեանքի վկայագրու-  
թիւնը՝ այնքան հարուստ նիւթերով ճոխացած:

Երկրի եւ արտեղրի մամուլին մէջ արդէն ճանչցուած եւ գնա-  
հատուած իբր համեստ հայ գրի մշակ եւ հեղինակութիւն, բազմաթիւ  
հատորներով կը շարունակէք բերել ձեր արդար լուծման՝ կենսունակ  
եւ ապրող հայութեան մը կեանքը պատկերացնելով:



Գոհունակութեամբ կը հետեւիմ արդէն Ձեր թղթակցութիւններուն գանատական հայկական մամուլի «Հորիզոն»ի էջերէն, որոնք անպայմանօրէն պիտի հանդիսանան ատաղձը հայաշունչ ոգիով թրծուած վաղուական պատմիչին՝ կանգուն պահելու մեր ազգային կառոյցները միասնականութեան անվեհեր գիտակցութեամբ:

Մեր Ազգային Եկեղեցին միշտ հարուստ է ազգային բնաւորութեան, կրթական ոգիով եւ հալածական վիճակով յիշատակելի յոբելինական տարեդարձներով, միշտ արթուն պահելու յաջորդական սերունդները՝ կեանքով մահուան յաղթելու վճռականութեան:

Նոր Տարուան սեմին եւ հայկական Սուրբ Ծննդեան տօնին առթիւ աղօթքս ու մաղթանքս է՝ ձեր ներշնչումներով լիցքաւորուած սերունդներ շարունակեն տէր կանգնիլ բոլոր հայ մանուկներուն, մանկացեալ Փրկիչի խաղաղութեան եւ հաճութեան օրհնութիւններով նոր խանդավառութիւն եւ կենսունակութիւն պարգեւելով հալածութեան արդար սպասումներուն:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, Ձեզի եւ մեզի մեծ աւետիս»:

Սիրոյ շերմ ողջունիւ եւ օրհնութեամբ՝

Աղօթարար՝

ԺԻՐԱՅՐ Ծ. ՎՐԴ. ԹԱՇՃԵԱՆ

Փարիզ, 14 Դեկտ. 2009



31 Յուլիս 1988

Սիրելի՛ Պրն. Հոթոյեան,

Ժամանակին ստացած եմ խորին շնորհակալութեամբ Ձեր «Սիրտը Ափին Մէջ» քերթուածներու ժողովածուն: Կը մաղթեմ նորանոր ներշնչումներ:

Ձեզի առանձին թղթատարով կը ղրկեմ իմ կարգին վերջին հրատարակութիւնս՝ «Բաց մեզ, Տէր» հատորը:

Կը յուսամ բոլորդ լաւ ըլլաք: Սիրոյ եւ կարօտի ամենաշերմ ողջոյններս հաճեցէք հաղորդել բոլոր ծանօթներուն, բարեկամներուն, ընկերներուն:

Լաւագոյն իղձերով Ձերդ

Հ. ԼԵԻՈՆ ԶԷՔԻԵԱՆ

\*\*

15 Օգ. 2010

Սիրելի՛ Պրն. Գրիգոր,

Նախ եւ առաջ կը շնորհաւորեմ շատ շնորհալի եւ համակրելի թոռնիկիդ համար:

Ի սրտէ շնորհաւորութիւններս՝ նախ շատ գեղեցիկ հատորներուդ համար, որոնցմէ օրինակ մը ուղարկած ես ինձի:

*Արտանց շնորհակալութիւնս այս շատ հաճելի նուէրին եւ հաճելի ընթերցումին համար:*

*Առողջութեան, արեւշատութեան եւ ամենայն բարեաց լաւագոյն մաղթանօք՝ քեզի, ընտանիքիդ եւ բոլոր սիրելիներուդ համար եւ վերատեսուծի ակնկալութեամբ, մնամ սիրով եւ աղօթքով քոյդ՝*

*Հ. ԼԵՒՈՆ ԶԷՔԻԵԱՆ*



**ՀԱՅ ԱՒԵՏԱՐՄԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ, Թորոնթօ**  
*Armenian Evangelical Church of Toronto*

Minister:  
Rev. Yessayi Sarmazian B.A. M. Div., Th. M.



13 Օգոստոս, 2004

Սիրելի Տ. Տ. Գրիգոր Հոբոյեան,

Յուսամ Աստուծոյ շնորհով հանգիստ էի:

Շատ հաւամբար արդէն լսած էի որ 42 տարի հովուական եւ այլազան մարզերէ ներս ծանայել ետք, որոշած եմ հանգստեան կոչուիլ: Անշուշտ, ինչպէս Աստուծոյ խօսքը կ'ըսէ՝ «Ամէն բանի ժամանակը կայ»: Հիմա հանգիստի ժամանակն է, եթէ կարելի է այսպէս ըսել եւ ընել:

Ամէն պարզապէս, այս առիթով մեր եկեղեցիի վարչութիւնը կազմակերպած է հրաժեշտի նշանակալից մը, Շաբաթ 18 Սեպտեմբեր 2004, Հայ Կեդրոնի Սրահին մէջ: Ես բելադոնցի իրենց որ պաշտօնական մարմիններու եւ աններու հրաւերները իրենք դրկեմ, քայքայ իմ բարեկամներուն եւ կ'ուզեմ անձամբ հրաւիրել, որոնցմէ մէկը դուք էք անշուշտ:

Արդ, սիրով կը հրաւիրեմ ձեզ ներկայ գտնուելու այս նշանակալիցին, որու վերջաւորութեան պիտի տամ իմ սրտարուխ վերջին խօսքերս, իմ այնքան շատ սիրած բորոնքոսայ գաղութին, որու կը ծառայեմ 24 տարիէ ի վեր անարժանաբար, իբր հոգևոր հովի: Ներքակ կը գտնէք ձեր հրաւիրատուները:

Երբ նաշանակալի յանձնախումբի անդամները ուզեցին գիտնալ թե՛ ինչ է իմ վափա՛ս կեանքիս այս կարևոր հանգրուանին առիթով, իրենց ըսի՝ «Ինչպէս գիտէք, հոս գալու ի վեր իմ երազ էր որ ունենամ գեղեցիկ եւ հայկական ոճով եկեղեցիի շէնք մը, որ փառք Աստուծոյ, ունեցնէր երկար տարիներ ետք (19 Ապրիլ, 1998) շնորհիւ ձեր, մեր բոլորին, եւ հարիւրաւոր Թորոնթոնայերու առատաձեռն նուիրատուութեան: Հետևաբար, իմ վափա՛ս է որ բոլոր նուիրատուութիւններն ալ ըլլան եկեղեցիի Շէնքի ձեռքին, որպէսզի չարտամուրհակը վճարուի, գոցուի եւ որքան որ կարելի է շուտով այրենք գանձիկս»:

Նկատի ունենալով որ այս առիթով Ալպոմ մըն ալ պիտի հրատարակուի եւ քաճուի նաշանակալի մասնակցողներուն, անոնք որոնք կը փափաքին զայն հովանաւորողներն մէկը ըլլալ (200 տոլարի), փոխարէնը պիտի ստանան երկու հրաւիրատուներ: Հովանաւորել ուզողներուն անունները եկեղեցիի գրասենեակ տրուելու են մինչեւ Օգոստոս 25, 2004:

Ժամը 6,00-ին պիտի սկսի բոքթլը, իսկ 7,00-ին՝ ընթրիք:

Յուսալով որ ձեր լաւագոյնը պիտի ընէք ներկայ գտնուելու, ձեր տոմարը ապահովելու եւ տեղերը որոշելու համար, կը խնդրուի առաջին առիթով իսկ հետագայնալ եկեղեցիի գրասենեակ (905) 305-8144 կամ ժիրայր Փանոսեանին (416) 494-0547:

Կը մնամ ձեզի համար աղօթող եւ սիրով՝

Վեր. Ե. Սարմազեան



Շատ սիրելի՛ Պրն. Գ. Հոթոյեան,

Անցեալ շաբաթավերջին ստացայ ինծի համար յատուկ մակա-  
գրուած, ձեր վերջին լոյս ընծայած «Ճանապարհ» խորագրով այդ  
սքանչելի հատորը:

Նախ շնորհակալ եմ այդ մեծ եւ թանկագին նուէրին համար եւ  
ապա մասնաւոր շնորհակալութիւն նաեւ ձեր մակագրած այն ազնիւ,  
անմիջական եւ քաջալերական խօսքին համար:

Ի՛նչ մեծ եւ սքանչելի գործ մը կատարած էք այդպէս ձեր 60 եւ  
աւելի տարիներու՝ զանազան եւ ալլազան գրական աշխատանքները  
մէկ կալի մէջ հաւաքելով, յարզը հովին տուած եւ ցորենը հաւաքած  
մէկ ամբարի մէջ՝ «Ճանապարհ» անունով: Իսկապէս երկար գրական  
«Ճանապարհ» մը՝ իր դարձուածքներով եւ ելեէջներով հարստացած:

Իսկապէս գրական ձեր աշխատանքներուն այս սքանչելի համա-  
գրումը կարելի է գրական բերքահաւաք անուանել: Տարբեր նիւթե-  
րով, տարբեր ժամանակներու եւ վայրերու մէջ կատարուած ձեր այս  
գրական աշխատանքներուն մէկտեղուիլը, կրնայ վաւերական աղ-  
բիւր նկատուիլ օր մը ապագայ պատմագիրին համար, մանաւանդ  
Թորոնթոյի հայ գաղութի պարագային:

«Ճանապարհ» խորագրով ձեր այս լայնածաւալ գրական աշ-  
խատասիրութիւնը իր նիւթերու ալլազանութեամբ միշտ կը մնայ հե-  
տաքրքրական ընթերցանութեան համար:

Այս առթիւ կրկին անգամ շնորհակալութիւն յայտնելէ ետք, կը  
մաղթեմ եւ կ'աղօթեմ, որ Աստուած ձեզի քաջառողջութիւն պարգեւէ,  
որպէսզի շարունակէք ձեր օրհնաբեր աշխատանքը մեր գրական այ-  
գեստանին մէջ:

Միշտ սիրով եւ ազօթքով՝

ՎեՐ. Յ. ՍԱՐՄԱԶԵԱՆ

Մայիս 24, 2008

Գէյմպրին



Սիրելի Պր. Հոթոյեան,

Շնորհակալութեամբ ստացանք ձեր վերջերս հրատարակած  
պատկառելի մէկ գործը՝ «Ճանապարհ» խորագրով, որ կը ներկայա-  
ցընէ ձեր շուրջ վաթսուն տարիներու հրապարակագրական, գրական,  
բանաստեղծական, լրատուական գործունէութիւններու հետաքրքր-  
րական, գեղեցիկ եւ տպաւորիչ համայնապատկեր մը:

Վստահ ենք, որ մեր գրադարանին մէջ ձեր նոր գործը պիտի  
գրաւէ իր պատուոյ տեղը եւ մեր ընթերցողները հաճոյքով պիտի վա-  
յելին գայն:

Մրտանց կը շնորհաւորենք ձեզ եւ կ'աղօթենք, որ Բարձրեալն Աստուած բեղուն գործունէութիւններու երկար տարիներ պարգեւէ ձեզի:

Անկեղծօրէն՝

ՄԻՀՐԱՆ ՃԻԶՄԷՃԵԱՆ

Գրադարանապետ

Լեւոն Ֆերմանեան գրադարան  
Հայ Աւետարանական Եկեղեցի

15 Յուլիս 2007

Թորոնթօ

\*  
\*  
\*

ՀԱՅ ԵՎԱՆԳԵԼԻԱԿԱՆ  
ԵՂԵՂԵՅԻ ԹՈՐՈՆՏՕ

Rev. Serop Mezerditchian, Pastor



ARMENIAN EVANGELICAL  
CHURCH OF TORONTO

Rev. Yessayi Sarmacion, Pastor Emeritus

14 Դեկտեմբեր, 2016

Mr. Krikor Hotoyan  
34 Leith Hill Rd., # 511  
Toronto, Ontario  
M2J 1Z4

Մեծայարգ Տիար  
Գրիգոր Հոթոյեան,

Շնորհակալ եմ որ միշտ Թորոնթոյի Հայ Աւետարանական Եկեղեցիի Լեւոն Ֆերմանեան գրադարանը եւ զիս յիշելով, թու հեղինակած գիրքերէն օրինակներ կը դրկէս: Մեծապէս կը գնահատեմ եւ հաճոյքով կը կարդամ թու գրիչէդ լոյս տեսած հոգեւոր պատմութիւնները, բանաստեղծութիւնները եւ ազգային հրատապ հարցերու շուրջ արձակ յօդուածները:

Վերջերս, շնորհակալութեամբ ստացած եմ Դրն. Յակոբ Մուզէնեանի ձեռամբ 2016-ին լոյս տեսած Ցրդ. նոր գիրքդ «Մայրամուտի Ցրքեր» հատորը, սիրալիք մաղթանքներով մակագրուած: Ստացած եմ նաեւ նոյն հատորէն օրինակ մը Լեւոն Ֆերմանեան Գրադարանին համար, գրաւելու իր պատշաճ տեղը աւելի քան 4000 Հայերէն եւ Անգլերէն լեզուներով գրուած հատորներու շարքին:

Մաղթանքս եւ աղօթքս է, որ Բարձրեալն Աստուած շարունակէ առողջ եւ կայտառ պահել քեզ՝ որ վայելէս ընտանիքիդ, թոռներուդ եւ ազգիդ գաւակներուն նորանոր յաջողութիւնները:

Սիրով՝

Միհրան Ճիզմեան  
Գրադարանավար



**ՆՈՐԱՅՐ Ա. ԲՆՅՅ. ԲԱԹԱՆԵԱՆ**  
**ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ ՄԻՏՆԻՒ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ**  
**FATHER NORAYR PATANIAN**  
 PARISH PRIEST HOLY RESURRECTION CHURCH IN SYDNEY  
 61 WICKS ROAD - NORTH RYDE 2113, N. S. W.  
 SYDNEY - AUSTRALIA

CHURCH PHONE (02) 94198056  
 CHURCH FAX 99048446

HOME PHONE (02) 98885190  
 MOBILE PHONE 0409391047

*Ընթերցելով ձեր բանաստեղծութիւններու հատորը՝ մեծապէս ոգեւորուեցայ ձեր սրտի զգացումներով, որ ունեցած էք հանդէպ հայրենասիրութեան, յեղափոխական կեանքի, սրտայոյզ խոկումներու, բնութեան ու սիրային տազնապներու մասին գրած ձեր քերթողական աշխատանքին, որ կը բխի երեւոյթները մեկնաբանելու առողջ սկզբունքներու յառաջընթացով եւ կը զեղու իսկապէս առողջ տեսլականի տէր ձեր սրտի թրթռումներէն եւ զգացումներէն: «Սիրտը Ափին Մէջ», որ ներքին ազնիւ զգացումներու գողտրիկ հատոր մըն է:*

**ՆՈՐԱՅՐ ՔԶՆՅ. ԲԱԹԱՆԵԱՆ**  
 Հոգեւոր Հովիւ Սիտնիի  
 Ս. Յարութիւն Եկեղեցւոյ

Սիտնի (Աւստրալիա)

\* \* \*

*Մեծայարգ Տիար Գրիգոր Հոթոյեան*  
Գանատա

*Շնորհակալութեամբ ստացանք ձեր Ամանորեան եւ Ս. Ծննդեան շնորհաւորական քարթը, գրուած՝ Ս. Գեղարդի վանքի գեղեցիկ նկարը պարունակող բացիկի վրայ:*

*Մեծապէս ոգեւորուած եմ եւ ուրախ ձեր անկեղծ սրտի զգացումը յայտնող բառերով, որուն համար կը յայտնեմ իմ անհուն ուրախութիւնն ու շնորհակալութիւնը:*

*Իմ աղօթքը կ'առաքեմ առ բարձրեալն Աստուած, որ ձեզի շնորհէ կեանքի երջանիկ ժամանակաշրջան մը, որպէսզի կարողանաք իրականացած տեսնել ձեր բոլոր իղձերն ու ակնկալութիւնները՝ առողջութեամբ, երջանկութեամբ ու խաղաղ օրերով:*

*Ամանորեան եւ Ս. Ծննդեան այս խնկելի օրերուն, կու գամ ջերմապէս շնորհաւորել ձեզ՝ մաղթելով, որ Աստուծոյ հովանին միշտ ձեր վրայ ըլլայ, պահէ ու պահպանէ ձեզ իր օրհնութիւններով:*

Շնորհակալույթեամբ եւ յաջողութեան լաւագոյն մաղթանքներ ձեռքի, ձեռք ազնիւ տրկնոջ, զաւակներուն եւ թոռներուն:

Մնամ ջերմ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար՝  
ՆՈՐԱՅՐ ՔՀՆՅ. ԲԱԹԱՆԵԱՆ

Սիւնի, 1 Յունուար 1998

\* \* \*

Սիւնի, 4 Յունուար 1999

Մեծայարգ  
Տիար Գրիգոր Հոթոյեան եւ ընտանիք,

Շնորհակալույթեամբ ստացանք ձեր շնորհաւորական գիրը Ամանորի եւ Ս. Ծննդեան գոյգ տօներուն առիթով:

Մեզի համար մեծ ուրախութիւն է ձեզ նման ազնուահոգի հինաւորաց բարեկամէ մը ստանալ շնորհաւորական մաղթանք, որ վստահաբար կը բխի ձեր սրտի անկեղծ զգացումէն հանդէպ մեզի, որպէսզի շարունակուի մեր տարիներու բարեկամութիւնը՝ մնալով անմոռանալի յուշ մեր սրտերուն ու հոգիներուն մէջ:

Մեր սրտագին աղօթքն ու մաղթանքն է, որ բաժրեալն Աստուած ձեզի պարգեւէ քաջառողջութիւն եւ բեղուն տարիներ, որպէսզի 1999 տարին երջանկաբեր տարի մը ըլլայ ձեզի, լի՝ Աստուծոյ օրհնութիւնով:

Ամանորի եւ Ս. Ծննդեան գոյգ տօներուն առիթով ընդունեցէք իմ եւ ընտանիքիս լաւագոյն մաղթանքները յաջողութեան ու երջանկութեան:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ.  
Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի:

Մնամ ջերմ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար՝  
ՆՈՐԱՅՐ ՔՀՆՅ. ԲԱԹԱՆԵԱՆ

\* \* \*

Սիւնի, 30 Մարտ 2001

Մեծայարգ  
Տիար Գրիգոր Հոթոյեան

Շնորհակալույթեամբ ստացայ ձեր ուղարկած նամակը եւ կիրակնօրեայ դպրոցներու մասին ձեր գրած յօդուածն ու բանաստեղծութիւնը:

Մեզի համար ուրախութիւն է հրատարակել ձեր հեղինակութեամբ գրուած հետեւեալ շահեկան գրութիւնն ու բանաստեղծու-

Թիւնը, զորս Մարտի Թիւին մէջ հրատարակեցինք նաեւ անգլերէն լեզուով՝ իր շահեկանութեան համար:

Ձեզի կ'ողորակեմ եկեղեցւոյս պաշտօնաթերթ ԼՈՅՍ ամսագրի հետեւեալ երկու թիւերը, ուր պիտի տեսնէք ձեր գրութիւնները:

Յաջողութեան եւ առողջութեան լաւագոյն բարեմաղթութիւններով՝

Մնամ ջերմ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար՝

ՆՈՐԱՅՐ ՔՀՆՅ. ԲԱԹԱՆԵԱՆ

\* \* \*

Մեծայարգ Տիար Գրիգոր Հոթոյեան,

Արտի անհուն ուրախութեամբ եւ գոհունակութեամբ ստացայ ձեր «Նուիրում» քերթուածներու գեղատիպ հատորը՝ տպուած Մայր Հայրենիքի մէջ:

Հատորը ինքնին կը փաստէ ձեր հայրենասիրական ու ազգասիրական այն վեհ հոգին, որ իր սկիզբը կ'առնէ «Ղարաբաղը կը կանչէ» բանաստեղծութեամբ, որ երաժշտութեան վերածուելով պիտի հնչէ իւրաքանչիւր հայ տան մէջ, ուր հայրենասիրական հոգին գերիվեր է այն ամէն տեսակի երաժշտական յորինուածքներէն, որոնց մէջ կը պակսի հայրենասիրական հոգին:

Հատորին մէջ իրարայաջորդ կարգով տեղ տրուած է հայ ժողովուրդի ազատագրական պայքարի ռահվիրաներուն եւ բոլոր այն նուիրեալներուն, որոնք հպարտութիւնն են ստեղծագործ մեր հայ ժողովուրդին: Ակնառու են նաեւ հոն ձեր սրտի թրթուումները հանդէպ մարդկային անհուն սիրոյ զգացումներուն, զորս կ'ունենայ իւրաքանչիւր անհատ իրարու նկատմամբ:

Ձերմապէս կը գնահատենք ձեր այս աշխատասիրութիւնը եւ կը մաղթենք, որ ձեր գրիչը միշտ դալար մնայ, այն ակնկալութեամբ, որ մեր նոր սերունդի զաւակները ընթերցեն ձեր այս ստեղծագործական աշխատանքը եւ պահեն իրենց տրամադրութեան տակ, որպէսզի մեր մեսրոպատառ եւ մեծասքանչ լեզուի բառերը անջնջելիօրէն դրոշմըւին իրենց սրտերուն ու հոգիներուն մէջ, որ բաղձանքն է իւրաքանչիւր հայ անհատի, որուն սրտին խորքը լի է ազգասիրական ու հայրենասիրական զգացումներով:

Յաջողութեան եւ քաջառողջութեան լաւագոյն մաղթանքներով՝

Աղօթարար՝

ՆՈՐԱՅՐ ՔՀՆՅ. ԲԱԹԱՆԵԱՆ

20 Օգոստոս 2003  
Սիտնի, Աւստրալիա

\*  
\*  
\*

Սիսուհի, 29 Դեկտեմբեր 2003

Մեծայարգ  
Տիար Գրիգոր Հոթոյեան,

Շնորհակալութեամբ ստացանք ձեր ուղարկած 9 Սեպտեմբերի նամակը եւ անոր կողքին ԵԿԵՂԵՑԻ պաշտօնաթերթի թիւ 15, 19 եւ 22 ու ՇՈՂԱԿԱԹ ամսաթերթի թիւ 1, 2 եւ 3 համարները, ուր մեծ հաճոյքով ու գոհունակութեամբ ընթերցեցի ձեր բարոյալից մտորումներն ու պատմուածքները: Շատ ներողամիտ կ'ըլլաք, որ ժամանակին չկարողացայ պատասխանել ձեր նամակին, որուն յաջորդեց ամանորի եւ Ս. Ծննդեան ձեր շնորհաւորական բացիկը, ուր արտայայտած էք ձեր սրտագին բարեմաղթութիւնները Ամանորի եւ Ս. Ծննդեան գոյգ տօներուն առիթով:

Փառք Ամենակալին, որ մեզ կ'արժանացնէ տեսնելու առաւել եւս նոր տարիներ եւ վայելելու մեր հարազատներն ու սրտագին բարեկամները, որոնք սփռուած են աշխարհի հեռաւոր վայրերուն մէջ, եւ տօնական օրերը լաւագոյն առիթներ են իրարմէ ստանալու նամակներ եւ վերյիշել մեր անցեալի քաղցր օրերը, որոնք կը մնան որպէս ամոռաց յուշ մեր յիշողութեան մէջ:

Իմ սրտագին աղօթքն ու մաղթանքն է, որ բարձրեալն Աստուած ձեզի շնորհէ առողջ, կայտառ ու երջանիկ տարիներ՝ ձեր ընտանեկան պարագաներով, միասնաբար արժանանալու աստուածային օրհնութեան եւ վայելելու ու արժանանալու առաւել եւս նոր ու օրհնաբեր տարիներու:

Ձեզի կ'ուղարկեմ մեր եկեղեցւոյ պաշտօնաթերթ ԼՈՅՍ ամսագիրէն համարներ՝ տեղեակ պահելու համար ձեզ մեր գաղութային անցուդարձներուն:

Հարազատի ջերմ զգացումներով ու Ամանորի եւ Ս. Ծննդեան լաւագոյն բարեմաղթութիւններով,

Աղօթարար՝

ՆՈՐԱՅՐ ՔԶՆՅ. ԲԱԹԱՆԵԱՆ

\*  
\*  
\*

Մեծայարգ Տիար Գրիգոր Հոթոյեան,

Շնորհակալութեամբ ստացայ ձեր հեղինակած «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գողտրիկ հատորը, զոր ստացայ եկեղեցւոյ գրասենեակէն: Հետաքրքրութեամբ եւ մեծ հաճոյքով ընթերցեցի ու պահ մը տարուեցայ անցեալի այդ գեղեցիկ օրերու ամոռանալի յիշատակներով, զորս դուք ձեր ճկուն գրիչով եւ դէմքերն ու դէպքերը իրենց իսկական հասկացողութեամբ դիտելու եւ նկարագրելու ճարտարութեամբ ներկայացուցած էք, որ արժանի է ամէն զնահա-



տանքի եւ կ'արդարացնէ գիրքին անունն ու արժէքը: Ընթերցողը երբ իր կեանքի անցեալի յիշատակները կը կարգայ իր իսկական դիմագծով ու հասկացողութեամբ, անկասկած որ կը գնահատէ ձեր տարած աշխատանքը՝ անցեալի քաղցր յիշատակները վերյիշելու, արժեւորելու եւ թարմացնելու երախտապարտ աշխատանքին մէջ:

Ձեզի կ'ուղարկեմ մեր եկեղեցւոյ պաշտօնաթերթ «Լոյս» ամսագիրը, որուն էջերուն մէջ արդէն իսկ հրատարակուած կը գտնէք «Բարեգործութիւն եւ ընկերային սէր» գրութիւնը եւ կը յուսամ ապագային եւս այլ յօդուածներ տեղ գտնեն մեր եկեղեցւոյ թերթի էջերուն մէջ:

Մեզի համար մեծ ուրախութիւն է, որ Երեւանի մէջ ձեր գրական գործունէութեան վաթսունամեակի յոբելեանը տեղի ունեցած է եւ ջերմապէս կը շնորհակտրենք ձեզ՝ մաղթելով, որ բարձրեալն Աստուած ձեզի շնորհէ բեղուն, քաջառողջ եւ երկար տարիներ, ձեր գրիչը միշտ դալար մնայ եւ դուք յարատեւօրէն արժեւորէք մեր նախահայրերէն ժառանգուած մեծաաքանջ հայերէն լեզուի դիւթիչ բառերը:

Իմ աղօթքն ու մաղթանքն է, որ ձեր կեանքի ամբողջ ընթացքը ըլլայ բերրի, քաջառողջ ու երջանկաբեր ժամանակաշրջան մը, լի՝ Աստուծոյ օրհնութեամբ:

Բարեկամական եւ հարազատի ջերմ սիրոյ ողջունիւ՛

Աղօթարար՝

ՆՈՐԱՅՐ ՔՀԷՅ. ԲԱԹԱՆԵԱՆ

26 Սեպտեմբեր 2005

Սիւնի, Աւստրալիա

\*  
\*  
\*

Մեծայարգ եւ շատ սիրելի Տիար Գրիգոր Հոթոյեան,

Սրտի անհուն գոհունակութեամբ եւ շնորհակալական ջերմ գգացումներով ստացայ ձեր հեղինակած «Ճանապարհ» բովանդակալից մեծ հատորը, գոր մեծ հաճոյքով պիտի ընթերցեմ պարբերաբար:

Հսկայական եւ անխոնջ աշխատանք մըն է, որ տարած էք ձեր 60 տարիներու վաստակաշատ գրութիւնները ի մի հաւաքելու եւ հրատարակելու ընթերցասէր հասարակութեան՝ ձեր կոթողային այս գրքի ի լոյս ընծայումով, որ կը բխի մտաւորականի ձեր գրիչէն, որ արժանի է ամէն գնահատանքի եւ շնորհակտրութեան:

Ընթերցելով հատորին մէջ ներփակուած գրութիւնները, կիրակնօրեայ վարժարաններու, ազգային ձեռնարկներու եւ հայրենասիրական ու բարոյական գգացումներու զօրացման ի նպաստ տեղ գտած յօդուածները, մեր յիշողութիւնը կը տանի անցեալի յիշատակներու թարմացումին, որ մեծ հետաքրքրութեամբ պիտի ընթերցեմ: Նկար-

ներու գետեղումը հատորին մէջ՝ մեզ կը տանի անցեալի այն երանելի օրերու մեր բարեկամներուն եւ ընկերներուն վերյիշումին, որ հոգեկան գոհացում ու երջանկութիւն կը պարգեւէ բոլոր անոնց, որոնք անմոռանալի յիշատակներ ունին անցեալէն:

Ձերմապէս կը շնորհաւորեմ ձեր ծննդեան 80-ամեակը եւ գրական գործունէութեան 60-ամեակը եւ այն գնահատական մրցանակները, որոնց արժանի էք դրական հասկացողութեամբ, աղօթքով ջերմագին, որ բարձրեալն Աստուած ձեզի շնորհէ շնորհաշատ, առողջ եւ երկար տարիներ, որպէսզի ձեր բեղուն գրիչը շարունակէ իր աշխատանքը բեղուն ժամանակաշրջանով եւ դուք ունենաք գոհունակութիւնն ու հոգեկան հրճուանքը՝ ձեր պարտականութիւնը լիուլի կատարած ըլլալու հասկացողութեամբ, հանդէպ մեր ժողովուրդի անկորըչնելի արժէքներու պահպանումին՝ մատուցելով մեր ընթերցասէր հասարակութեան:

Ձեզի կ'ուղարկեմ մեր եկեղեցւոյ պաշտօնաթերթ ԼՈՅՍ ամսագիրէն օրինակներ, ուր կարգ մը թիւերուն մէջ կը գտնէք ձեր բովանդակալից եւ բարոյալից հետաքրքրաշարժ գրութիւններէն, զորս արտատպած ենք ձեր ուղարկած եկեղեցւոյ «Շողակաթ» պաշտօնաթերթէն: Ամանորի եւ Ս. Ծննդեան խնկաբոյր տօներուն առիթով ջերմապէս կը շնորհաւորեմ ձեզ ամենալաւագոյն մաղթանքներով:

Բարեկամական ջերմ սիրով եւ ողջունիւ՝

Աղօթարար՝

ՆՈՐԱՅՐ ՔԶՆՅ. ԲԱԹԱՆԵԱՆ

26 Գեկտեմբեր 2007

Սիտնի, Աւստրալիա

\* \* \*

Մեծայարգ Տիար Գրիգոր Հոթոյեան,

Շնորհակալութեամբ ստացայ ձեր ուղարկած տեսասկաւառակը ձեր հրատարակած «Ճանապարհ» մեծածաւալ եւ բովանդակալից հատորին առիթով տեղի ունեցած մեծարանքի երեկոյին, ուր խօսք առնողներ իրենց սրտբաց արտայայտութիւնները կատարեցին հանդէպ հայ գրչի անխոնջ նուիրեալ ձեր անձին, որուն համար մեծապէս արժանի էք ամէն գնահատանքի, քաջալերութեան եւ պարգեւատրումի:

Խօսք առնողները լաւագոյնս մեկնաբանեցին ձեր գրքի բովանդակութիւնը, որ բերաքահաւաք մըն է անցեալ վաթսուն տարիներու ձեր գրական աշխատանքներուն, զորս ես եւս ըմբռնխնեցի՝ կարդալով մեծ մասը ձեր գրութիւններուն, որոնք անցեալի յիշատակները թարմացնող յօդուածներ են՝ մեզ տանելով անցեալի քաղցր յիշատակներուն, որոնք անջնջելի կերպով դրոշմուած կը մնան մեր սրտերուն ու հոգիներուն մէջ:

Երբ ձեզ բեմ հրաւիրեցին արտայայտելու ձեր սրտի զգացումները հանդէպ իրենց իրաւացի դատողութեան եւ սրտի անկեղծ խօսքերուն, պահ մը տարուեցայ անցեալի մեր երիտասարդական օրերուն, լսելով ձեր ձայնը՝ վերլիչում մը եղաւ ինծի, երբ միասնաբար կ'աշխատէինք Հայէպի «Արեւելք» օրաթերթի եւ «Արեւելք Մարգաշխարհ»-ի գրաշարական եւ տպագրական աշխատանքներուն մէջ:

Մեծ գոհունակութիւն եղաւ ինծի համար, որ ձեր ծննդեան 80-ամեակին առիթով ձեր սրտի առաջին խօսքը եղաւ փառք տալ Աստուծոյ, որ ձեզ արժանացուցած է տեսնելու ձեր ծննդեան 80-ամեակը, որ հազուադէպ երեւոյթ է եւ լաւագոյն փաստը բանաստեղծութիւն, արձակ եւ կամ հրապարակագրութիւն կատարող անձնաւորութիւններու սրտէն բխած այս հաւատք բուրոզ եւ երախտագիտութիւն արտայայտող անձնաւորութիւն մը ըլլալու ճշմարիտ հասկացողութեան:

Եղան մաղթանքներ, որ ձեր գրիչը յարատեւէ ստեղծագործել հայ ժողովուրդի եւ հայ գրականութեան յաւերժացումին ի խնդիր: Մենք եւս, մեր հաւատացեալ ժողովուրդին հետ միասնաբար, կ'աղօթենք եւ կը մաղթենք, որ անվհատ կամքով եւ երիտասարդական արիւնով շարունակէք ձեր գրական աշխատանքները, ի պահպանութիւն մեր մեսրոպատառ եւ մեծասքանչ հայերէն լեզուին, որ մեծ անհրաժեշտութիւն է պահպանելու մեր հայեցի դիմագիծը եւ արդար ժառանգորդները հանդիսանանք մեր նախահայրերու գծած փշոտ, սակայն լուսաւոր ճանապարհին:

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Սուրբ Յարութեան տօնին առիթով ջերմապէս կը շնորհաւորեմ ձեզ եւ ձեր ընտանիքը՝ մաղթելով, որ քաջաւորջութիւնն ու անխառն երջանկութիւնը ձեր կեանքին անբաժան մէկ մասնիկը դառնան, լի՝ բարեբեր տարիներով: Բարեկամական ջերմ սիրով եւ ողջունիւ՝

Աղօթարար՝

ՆՈՐԱՅՐ ՔԶՆՅ. ԲԱԹԱՆԵԱՆ

20 Մարտ 2008

Սիւնի, Աւստրալիա

\*\*\*

Սիւնի, 4 Հոկտեմբեր 2011

Մեծայարգ եւ սիրելի բարեկամս

Տիար Գրիգոր Հոթոյեան

Թորոնթօ — Գանատա

Շնորհակալութեամբ եւ սրտի անհուն գոհունակութեամբ ստացայ ձեր հեղինակութեամբ լոյս տեսած «ՃԱՃԱՆՁՆԵՐ» եւ «ԱՆՅԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ» երկու գողտրիկ հատորները, զորս մեծ

հրճուանքով կ'ընթերցեմ՝ տարուելով անցեալի յիշատակելի օրերու քաղցր յուշերով:

Մեծապէս կը զնահատեմ ձեզ, որպէս անխոնջ մշակ հայ գիրի ու գրականութեան անդաստանին մէջ, գոր անձանձրոյթ նուիրումով կը կատարէք՝ միշտ վառ պահելու հայ գիրն ու գրականութիւնը ընթերցասէր հայ հասարակութեան առօրեայ կեանքին մէջ:

«ՃԱՃԱՆՁՆԵՐ» հատորը, որ իր բովանդակութեամբ կը պարու-նակէ հաւատքի, հայրենասիրութեան, յեղափոխական կեանքի, մար-դասիրութեան, բնութեան գեղազարթումին եւ այլ բաժիններու նը-ւիրուած բանաստեղծական հատորի մը բոլոր ստորագելիները, կը ցո-լացնէ ձեր սրտին ու հոգիին ներաշխարհի զգայնութիւնները, որոնց դուք հոգեպէս նուիրուած էք այդ աշխատանքներու իրականացու-մին, ձեր մտասեւեռումին մէջ միշտ նպատակ ունենալով ծառայել մեր ժողովուրդի գաղափարապաշտութեան եւ անկեղծութեան, իրենց հանապազօրեայ կեանքի ընթացքին մէջ:

«ԱՆՅԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ» հատորը հին յիշատակնե-րը կենդանացնելու եւ մարմնաւորելու գեղեցիկ յիշատակարան մըն է, գոր շարունակականօրէն կ'ընթերցեմ՝ պահ մը տարուելով անցեալի այդ անվերադարձ օրերուն, որոնք անմոռաց յիշատակներ եւ ան-փոխարինելի արժէքներ են մեր անցեալի կեանքի յիշատակներուն եւ անջնջելի կերպով դրոշմուած են մեր սրտերուն ու հոգիներուն մէջ:

Մտքիս մէջ միշտ թարմ կը մնայ այն գեղեցիկ օրերու յիշատակը, երբ միասնաբար կ'աշխատէինք «ԱՐԵՒԵԼՔ»ի տպարանին մէջ:

Ձեզի կը մաղթեմ քաջառողջութիւն եւ բեղմնաւոր երկար տարի-ներ, որպէսզի նոյն անվհատ ու ձեռներէց հոգիով շարունակէք ձեր հայ գրականութեան նուիրեալ հոգին՝ մաղթելով, որ ձեր գրելը միշտ դալար մնայ: Բարեմաղթութիւններս ձեր ազնիւ տիկնոջ, որ քաջալեր կը հանդիսանայ ձեր գրական աշխատանքներուն, նոյնպէս զաւակ-ներուն եւ թոռներուն, որոնց մեկենասութեան ու քաջալերութեան շնորհիւ կ'իրականանայ ձեր գրական վաստակը տեսնելու երջանկու-թիւնը:

Ձեզի կ'ողորկեմ մեր եկեղեցւոյ պաշտօնաթերթ ԼՈՅՍ ամսա-գիրէն օրինակներ, որ երկար տարիներէ ի վեր լոյս կը տեսնէ իմ աշ-խատանքով ու պատասխանատուութեամբ:

Մօտալուտ ամանորեան եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով իմ սրտագին աղօթքն ու մաղթանքն է, որ բարձրեալն Աստուած ձեզի շնորհէ քաջառողջ ու բարեբեր տարի մը, լի՝ խաղաղութեամբ ու եր-ջանկութեամբ:

Բարեկամական ջերմ սիրոյ ողջունիւ՛

Աղօթարար՝

ՆՈՐԱՅՐ ՔՀՆՅ. ԲԱԹԱՆԵԱՆ



Շատ սիրելի ընկ. Գրիգոր,  
 Շնորհակալութեամբ ստացայ եւ կարգացի ձեր ինծի մակագրուած բանաստեղծութիւններու փունջը՝ «Սիրտը Ափին Մէջ» հատորը, որոնց մէջէն հայ ժողովուրդի սրտի տրոփիւնը եւ հոգւոյն ցուքը զգացի: Ձեզի պէս հայորդիներ հազար տարի պէտք է ապրին: Կը մաղթեմ, որ ողջ մնաս, առողջ մնաս եւ միշտ արտադրես յաջորդ սերունդներուն համար:

ՏՈՔԹ. ՀԱՅԿ Տ. ԱՍՏԱՐՃԵԱՆ  
 Պատմաբան-հրապարակագիր

Նաշուա, Մ. Նահանգներ



**ԴՈՐԻՉՈՆ**  
 Եօրօրօր

**Horizon**  
 Hebdomadaire arménien  
 Armenian Weekly

26 յունուար 1988

Համազգայինի 60-ամեակին առթիւ

Սիրելի ընկ. Գրիգոր,

1988 տարեշրջանը կը զուգադիպի «Համազգային»ի 60-ամեակին, որուն պիտի նուիրենք մեր 25 ապրիլի թիւը:

Արդ կը խնդրենք որ ձեր աշխատակցութիւնը բերէք մեր այդ բացառիկին, գրելով ձեր մտորումները «Համազգային»ի նուաճումներուն, ներկայ վիճակին կամ ապագայ առաքելութեան մասին, ձեր յուշերը «Համազգային»ի կապակցութեամբ, եւ այլն:

Ձեր գրութիւնը մեզի հասած պէտք է ըլլայ մինչեւ 5 ապրիլ 1988:

Կանխայայտ շնորհակալութեամբ՝

Վրէժ-Արմէն Արթինեան  
 Խմբագիր

*Ահի՛ն Ե՛կ. Կրթից Զորայեա՛ն*

## Հրաւեր կլոր սեղանի

Ս. Աստուածածին եկեղեցւոյ օժումով, Քորոնթոյի Հայ կեդրոնի Համալիրը հասաւ իր ամբողջական աւարտին. համալիրին հետ՝ Հայ կեդրոնի շուրջ համախմբուած համայնքը իր զարգացման մէկ փուլը անցաւ, մտաւ նոր հեռանկարներու եւ նոր նուաճումներու հանգրուանը:

Այս առթիւ խմբագրութիւնը ձեռք կը հրաւիրէ կլոր սեղանի շուրջ ստուլիսի մը, ուր կ'առաջարկենք ձեռք հետ յետադարձ ակնարկ մը նետել գաղութի անցած ուղիին վրայ ու միասին որոնել զարգացման գալիք ուղղութիւնները:

Արդ, հետեւեալ նախնական հարցադրումները կը կատարենք, որոնցմով պիտի յահմանափակենք մեր զրոյցը.

1. — Ինչպէ՞ս կը զնահատէք անցնող 25-30 տարիներուն կատարուած զործը — որուն իրականացման մէջ դուք ալ անձամբ կարեւոր դերակատարութիւն ունեցաք:

Ի՞նչ յատկանշական կէտեր կ'ուզէք մատնանշել որոնք կրնան լաւ օրինակ հանդիսանալ սակէ նաք ալ, ի՞նչ թերիներ՝ որոնցմէ խուսափելու ենք սպա- գային:

2. — Ի՞նչ ցանկալի, նաեւ անբաղձալի յարաբերութիւններ ստեղծուեցան այս անցնող տարիներուն՝ գաղութի ղեկավարութեան եւ հասարակութեան անդամներուն միջեւ, կուսակցութեան եւ այլ կազմակերպութիւններու (կուսակցութիւն, եւսյն) միջեւ, Հայ կեդրոնէն ու գանատական շրջանակներուն միջեւ:

3. — Հայ կեդրոնը որչափով նպաստեց նոր սերունդի մէկ կողմէ հայացման, միւս կողմէ երկրի կեանքին հետ համարկումի զործընթացներուն:

Որքա՞ն կրցանք բացուիլ դէպի մեր շրջապատը — նաեւ, որքա՞ն կրցանք հաւատարիմ մնալ մեր ուրոյն գիմագիծին ու ձգտումներուն:

4. — Ինչպէ՞ս կը տեսնէք գաղութի սպազայ զարգացումը — ամբողջացնելիք կառոյցներ, նոր ուղղութիւններ, եւսյն:

Մեր հանդիպումը տեղի կ'ունենայ ուրբաթ, 29 յունիս 1990, երեկոյեան ժամը 9:00-ին՝ Հայ կեդրոնին մէջ:

Սպասելով ձեր ներկայութեան,

Ձեր մ բարեւանքով՝

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ ԱՐԹԻՆԵԱՆ  
խմբագիր

31 մայիս 1990



## ՍԱՍՆԱՅ ԾԱՌ

*Արմատներով Սասունցի  
Գրիգոր Հովոյեանին*

Սասնայ նման հզօր  
Եւ արիական ցեղից  
Նոյնքան հիւքեղ  
Ինչպէս միրգը ծառին,  
Քո մտքերն են թափում  
Աստոյ դրան շեմքից,  
Որ հասու չէ երբեք  
Արիւնախում ցեղին:  
Նրանք շուրջը վխտում,  
Քեզ կործանել կ'ուզեն,  
Ձեռն հասկանում մի բան.  
Քեզ տրուած է վերուստ  
Վտանգն զգալ հեռուից:  
Դու հզօր ես արեամբ,  
Սասնայ շիղդ է եռուն,  
Պիտ' զօրացնես մարտը  
Առաքեալի շնչով,  
Որ արիանայ հոգին  
Քնած լեքան վրայ:  
Եւ թշնամին թունեղ  
Լեզուն կտրած շան պէս  
Հոգին առնի, գնայ:  
Դո՛ւ, Սասնայ ծուռ հզօր,  
Քեզ տեսնելուց պիտի  
Ձարքը կուլ տայ լեզուն:



ԽԱՆԴՈՒԹ ԶՈՒՌՆԱՃԵԱՆ

*Երեւան, 5.06.05թ.*

*«Ձայն Թագաւորաց» գիրքէն*



*Բարեւ ձեզ, պարոն Հոթոյեան...*

*Ձեզ ողջունում է Տիկին Հայկուհի Յովհաննիսեանը եւ մաղթում առողջ երկարակեցութիւն: Հանդիպման յաջորդ օրն իսկ, Գոհարիկս իմ խնդրանքով փնտռել էր ձեզ, բայց չկարողանալով գտնել, ապրապրանք էր թողել հիւրանոցում ամսագրի հետ միասին: Եթէ յանձնել են ձեզ, ուրախ եմ: Յաջորդ օրը գնացել էր հիւրանոց, տեղեկանալու արդիւնքի մասին, տեղում ոչինչ էլ չէր եղել:*

*Ճիշտն ասած, եթէ ինձ վերապահուէր ձեր մասին խօսք ասել, ապա յաւուր պատշաճի ասուած այդ երկար-բարակ ճռումաբանութիւնների փոխարէն, ձեր եւ ձեր քերթուածքների էութիւնը կը ներկայացնէի ստորեւ տրուած համառօտ տողերով, որոնք սակայն իրենց մէջ ամփոփում են այն ամէնը, ինչ կայ ձեր գործերում:*

*Կարծում եմ ինձ հետ համամիտ կը լինէք, եթէ ասեմ, որ երկար են խօսում նրանք, ովքեր տեղեակ չեն, կամ քիչ են տեղեակ այն նիւթի մասին, որի առիթով խօսում են՝ մի բան ասած լինելու համար:*

*Իմ ողջոյնները հաղորդէք նաեւ ձեր սիրելի տիկնոջը:*

*Հ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ*

### **ՆԵՐՔՆԱՇԱՂԱԽ**

(Յարգարժան պարոն Հոթոյեանին)

Սէրն է հեւում Հոթոյեանի երգերում.  
Սէրն է թեւում Գրիգորի տաղերում.  
Պատանի է սիրով վառուած տողերում.  
Սէր, նուիրում, քննչութիւն կայ տողերում:

Սիրուց դադուած մորմոճում կայ տողերում.  
Լուռ ներումի տառապանք կայ տողերում.  
Բաժանումի ցրտութիւն կայ տողերում.  
Հանդիպումի ջերմութիւն կայ տողերում:

Մայր փնտոողի խոր թախիժ կայ տողերում.  
Հայրենիքի կարօտ կայ իր տողերում.  
Սասնոյ մեծ Տան ծուխն է ելնում տողերում...  
Այս ամէնը առկայծում է իր հոգում:

*ՀԱՅԿՈՒՀԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ*

*17.7.04 Երեւան  
(Ձեզ նուիրում ցերեկոյթից յետոյ)*





ԶՕՆ՝  
 ՀՈԹՈՅԵԱՆ ԱՄՈԼԻ  
 ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ  
 50-ԱՄԵԱԿԻՆ



Սուրիոյ պատմական բերդով անուանի՝ Բերիա ֆաղափի  
 Հայ գաղութի երիտասարդներէն մին էր ան՝ առափնի.  
 Ոչ միայն ժամ-պատարագ չէր փախցնէր ամէն Կիրակի,  
 Նաեւ տնօրէնն էր կիրակնօրեային Քառասուն Մանկանցի:

Գրոց-բրոց էր, կատակասէր ու պատրաստաբան,  
 Հալէպի «Արեւելք» օրաթերթի գրաշարն էր ժրաջան.  
 Համագգայնական էր ու ՀՄԸՄ-ական,  
 Նաեւ երդուեալ ու հաւատաւոր դաշնակցական:

Հայրենասէր էր, անկասկած, բայց աւելի՝ սա՛սնասէր,  
 Պապենական արմատները Տարօնէն էր ժառանգէր.  
 Հայրը Սերոբ Աղբիւրի զինուոր Հոթոյենց Խըրզօն էր,  
 Իսկ մայրը ամուսնուն կեանքի եւ գէնքի ընկեր Մարօն էր:

Հագուստ-կապուստով մի՛շտ կոկիկ, ներկայանալի,  
 Փողկապը կարծէք անբաժանելի մէկ մասն էր իր մարմնի.  
 Մագէն թել մի՛սկ չէր շարժեր՝ յագեցած օժանելիքով պրիանթինի,  
 Անութին տակ անպայման ունէր թարմ օրինակ մը օրաթերթի:

Արդեօք ո՞վ էր այս երիտասարդը օրինակելի,  
 Վարք ու բարքով, նիստ ու կացով խիստ գովելի,  
 Օրիորդներու երազանքն ու բաղձանքը անհասանելի...  
 Սա ի՛նքն էր, Գրիգոր Հոթոյեանը՝ հպարտ սասունցի:

Արտաֆնապէս գոհ եւ ինքնաբաւ ըլլալ կը թուէր,  
 Սակայն բոլորին աներեւոյթ՝ սրտին մե՛ծ խոց մ՛ունէր.  
 «Կեանքը փուն է առանց սիրոյ եւ գգուանքի»՝  
 Հառաչանքներն էին երիտասարդ բանաստեղծի:

Դուք մի՛ ըսէք, ան սիրահարուած էր նման խելագարի  
 Կիրակնօրեայէն շրջանաւարտ օրիորդի մը գեղանի՝  
 Տէրտէրեան Շաֆէի, որ իր հասակով գերդ բարտի,  
 Խելքը գլխէն կը տանէր բոմանթիք երիտասարդի:

Գրիգոր դարձած տանջահար բանաստեղծ,  
Գիշեր-ցերեկ չճնաղ օրիորդի թաղը կ'երթեկեկէր.  
Սիրոյ երգեր կը յօրինէր, թղթիկ կ'ուղարկէր,  
Յուսալով որ օր մը անպայման սիրտը կը գրաւէր.—

*«Իմ սիրասուն գեղեցկուհիս աննման,  
Ո՞ւր ես, եկո՛ւր կարեկցութեամբ անսահման,  
Սիրտդ ըրած արեւաբորբ վառարան,  
Վարակէ գիս ջերմութիւնով անխափան»:*

Ի լուր այս կանչին, Շաֆէն ինչպէ՞ս կրնար խուլ ձեւանալ,  
Կեղծ ամօթխածութեամբ կոնակ դարձնել, շտապ հեռանալ,  
Տուն երթալ՝ աղի արցունք թափել, անվերջ լալ-ողբալ,  
Չուտել, չխմել, անհուն մնալ, օրէ օր մաշիլ ու դալկանալ:

Մօր սիրտը փխրուն էր, չդիմացաւ,  
Օր մը, հօրմէն գաղտնի, աղջկան մօտեցաւ,  
Յորդորեց դուռը լման չփակել, նեղք մը բաց ձգել  
Ու սիրավառ տղան զգո՛յշ ներս հրաւիրել:

Շաֆէն լսածին չհաւատաց, բայց խրախուսուեցաւ,  
Արցունքը կուլ տուաւ, լա՛յն-լա՛յն ժպտեցաւ,  
Եղնիկի պէս արագավազ՝ դունէն դուրս նետուեցաւ,  
Շիտա՛կ դէպի «Արեւելք»-ի խմբագրատուն սլացաւ:

Գրիգոր զինք որ տեսաւ՝ սիրտը բարախելէ դադրեցաւ,  
Երա՞գ էր, ուրուակա՞ն, թէ՞ իրաւ, այդ լաւ չիմացաւ.  
Կարեւոր չէր թէ ինչ էր, խի՛ստ ուրախացաւ,  
Սրտի մուրազին հասաւ, Շաֆէն իրեն մօտեցաւ:

Օրիորդը ուրախ, երջանիկ էր, բայց մեր տղան անհամբեր էր,  
Քանզի Հոթոյենց Խըրզոյի օրհնեալ օնախը դեռ ամուլ էր.  
Հարկ էր որ բազմապատկուէր, հօրենական տունը ծաղկեցնէր,  
Հայր դառնալու մարմաջէն հանգիստ չունէր ու կ'երգէր.—

*«Քանի մեր սէրը յաւիտենական կնիք ունի,  
Կ'ուզեմ մի՛շտ ըլլալ ընկերը կեանքիդ, քա՛ղցր հայուհի,  
Ապրիլ միասին՝ կազմելով բոյն մը մաքուր հայկական,  
Սնած մեսրոպեան լեզուի հայաբոյր լոյսով սրբագան»:*

Շաֆէն պատրաստ էր, նազ-տուզ չըրաւ, յօժարեցաւ,  
Իրենց ուխտը ծնողաց օրհնութեան արժանացաւ.

*Բոյն մը մաքուր հայկական կեանքի կոչուեցաւ,  
Անդրանիկի ու Անիի ճշոցներով իսկոյն շէնացաւ:*

Շատ չանցած, Միջին Արեւելքը անապահով բուեցաւ,  
Ուստի Հոթոյեան ընտանիքը Գանատա փոխադրուեցաւ.  
Օնթարիոյ նահանգի Թորոնթօ քաղաքը հաստատուեցաւ,  
Ապագայի փայլուն հեռանկարներով յուսադրուեցաւ...

Սակայն, աւա՛ղ, առաջին օրերը որ իջաւ՝  
Գրիգորի մաքը իսկոյն ներմկեցաւ.  
Տուն քանդել, նո՛ր տուն շինել դիւրին չէր,  
Փա՛նք Աստուծոյ, որ Շաբէն իր կողքին էր:

Ինք՝ դուրսը, Շաբէն՝ ներսը, բերդը կանգուն պահեցին,  
Անին ամուսնացուցին, թոռնիկներ ժամանեցին.  
Քրիստափորն ու Ստեփանը զիրենք ոգեւորեցին,  
Աշխուժացուցին, տունը ծափ ու ծիծաղով ողողեցին:

Գրիգոր երջանկութենէն զգլխած՝  
*Սիրտը ափին մէջ* երկա՛ր պահած,  
Ափսո՛ս, չիմացաւ որ արիւնաքամ էր ըրած,  
Նոյնիսկ չորս երակներ ալ չորցուցած:

Բժիշկները իրար անցան, տագնապեցան,  
Սիրտը կրծքավանդակին մէջ գետեղելու լծուեցան.  
Զորցած երակները նորերով պատուաստուեցան,  
Գրիգորի կեանքն ու երազները փրկուեցան:

Քնարական ու հայրենասիրական բազմաթիւ տաղեր  
Սփռուքի զանազան թերթերու մէջ էին լոյս տեսեր.  
Տակաւին շատ անտիպներ դարակին մէջ դիզուեր,  
Գրիգորի բաղձանքն էր որ զանոնք հրատարակէր...

«*Սիրտը Ափին Մէջ*» գրքէն վերջ երկրորդը պատրաստ էր,  
Այս անգամ Անին իր կորիւններուն հետ մեկեմաս էր.  
«*Նուիրում*» հատորը Հայաստան կը տպագրուէր,  
Ծննդեան 75 եւ ամուսնութեան 50-ամեակին կը զուգադիպէր:

Երկու զաւակ, երկու գիրք, երկու սիրասուն թոռնիկ՝  
Մէկ նժարի մէջ, միւսին՝ անգին Շաբէն, մէ՛կ հատիկ,  
Գրիգոր բռնած կեանքի կշիռքը՝ անհունօրէն երջանիկ,  
Փառք կու տայ Ամենակալին՝ որպէս երախտիք:

Կիրիգ՝ անմար, գրիչդ՝ թաց, գիրդ դալար մնայ, Գրիգոր ջան,  
Յաւէտ կանգուն, կորովդ՝ վարարուն, Ժպիտդ՝ շողշողուն, Շաֆէ ջան,  
Երկա՛ր ապրի՛ք անբաժան, ընդմի՛շտ կայտառ մնա՛ք,  
Մոռնե՛ր գրկելու, գգուելու երանութեան արժանանա՛ք:

ԺԻՐԱՅՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Յունուար 18, 2003

Թորոնթօ



## ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻՆ

Շառաւիղ մը Սասնայ տունէն,  
Թէեւ պոկուած արմատներէն,  
Իր գրիչով սասունական  
Եւ գիրերով Սուրբ Մեսրոպեան,  
Գրած է ան գիրք յիշարժան,  
Կնքած լոյսով հայ դպրութեան  
Եւ կոչած գայն գիրք «Ճանապարհ»՝  
Ապրումներով մշտադալար,  
Եւ այդ նամբով եւ այդ գիրքով,  
Արեւարոյր ջերմութիւնով  
Եւ լուսածին հանանչներով,  
Անընկեղի պոռթկումներով  
Լուսաւորած հայոց ուղին,  
Որպէս կանթեղ հրաշածին,  
Եւ այս առթիւ արդարօրէն  
Գնահատուած ժողովուրդէն:

Իմ սիրելի գրող ընկեր,  
Որպէս մաղթանք սրբանուէր  
Վաթսունամեայ քու վաստակին  
Եւ հայրարոյր բեղուն կեանքին.  
– Երգիդ շունչը միշտ վառ մնայ,  
Կեանքիդ հեւքը յաւերժանայ,  
Բանաստեղծի սրտով պայծառ,  
Քալես հպարտ՝ փառքով անմար:

ՍՏԵՓԱՆ ՓԱՆՈՍԵԱՆ

4 Մայիս 2008

Քեմպրիճ, Օնթարիօ

Գանատա



Միրելի Գրիգոր Հոթոյեան,

Երազային Հալէպէն կը գրեմ, սիրելի Գրիգոր, 865 էջանի հատորդ «Կիլիկիա» հիւրանոցի տէր եւ տնօրէն Գոգոյէն առնելով՝ ամբողջ չորս ժամ թղթատեցի, բազում էջեր կարդացի եւ գտայ, որ նոյն նպատակին համար տարբեր ուղիներէ երկար վազք մը եղած է մեր կեանքը:

Գրած ես Նշան Շահէնի մասին, անոնց տունին, փուռին մասին, ծանօթ վայր մը Աճուր Թարլան ինծի համար:

Խօսած ես դամասկոսահայ Յարութիւնեանի եւ Արթօ Չաքմաքճեանի, Պայրաքտարեան երգչուհիին, Լեւոն Ֆերմանեանի գրադարանին, ընկերոջս՝ Մարգար Շարապխանեանին, հայր եւ որդի Թէօլէօլեաններուն, Կորիւն Արք. Պապեանին, Ազնաւուրեան Արքեպիսկոպոսին, Հայր Լեւոն Վրդ. Զէքիեանին, խմբավար Զէքիճեանին, Վարուժան Արք. Հերկելեանին, վաղամեռ երջանկայիշատակ Զարեհ Ա. Հայրապետին, ինծի շատ սիրելի Համպոյեանին, ուսուցիչիս՝ Սիմոն Օվէի որդի Սիմոնեանին, Անդրանիկ Ծառուկեանին, բոլորն ալ ինծի ծանօթ մարդիկ, մինչեւ «Լոյս»ի խմբագիր Բաբգէն Թօփճեանը: Նոյնքան ծանօթ հայրենի մտաւորականներու եւս մասին:

Ինքքան իր հայ դպրոցով, կիրակնօրեայ վարժարաններով:

Ես եւս մէկ տարի ուսուցիչ եղած եմ Հայաստանեայց Առաք. Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցին մէջ, երբ տնօրէն Պրն. Ներսոյեանը ուսիս դպչելով հարց տուաւ ինծի, թէ ի՞նչ կը խօսիմ աշակերտներուս, պատասխանս եղաւ. «Պրն. Յիսուսի հայրենասիրութեան մասին կը խօսիմ»: Մեզի համար ամէն ինչ հայրենիքով կը սկսէր՝ անվերջ շարունակուելու համար:

Չորս ժամ քեզի հետ եղայ՝ մինչեւ պարգեւատրումներդ ու թողներդ, քեզի զինակից տեսնելով կեանքիդ ընկերուհին:

Միրելի Գրիգոր, մի՛ մոռնար, որ ոչ միայն Լեւինը, այլ նաեւ դադափարախօս Միքայէլ Վարանդեանը եւս ըսած է կրօնը աֆիօն է:

Գիրքդ, մէկ խօսքով, բազմազան բովանդակութեամբ առիթ մը եղաւ ինծի համար, որ հաճելի պտոյտի մը ելլեմ ուղեկցութեամբ դէպի մեր պատանեկութեան աշխարհը, երբ հակառակ մեր ժողովուրդին նիւթական ծանր պայմաններուն, մեզի համար օրերը գեղեցիկ էին, որովհետեւ գեղեցիկը մեր պատանեկութիւնն էր, ու մենք պատանիի անմեղ հայեացքով կը դիտէինք աշխարհը:

Շնորհակալութիւն այս պտոյտին համար:

Ջերմօրէն՝

ԲԺ. ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Գրող, բանաստեղծ, արձակակիր, հրապարակագիր

Հալէպ, Սուրիա



Սիրելի Պրն. Գրիգոր Հոթոյեան,  
 Սիրելի գրչեղբայր ու բարեկամ,  
 Անհուն ուրախութեամբ ստացայ «Ճաճանչներ» հատորդ, զոր  
 լոյս ընծայած ես երեք տարիներ ետք միայն քու «Ճանապարհ» հա-  
 տորիդ:

Այս հատորները կը վկայեն ա՛յն երիտասարդ եւ կորովի ոգին, որ  
 Աստուած պարգեւած է ձեզի եւ շնորհիւ որու կը շարունակէք ձեր  
 գրական եւ հոգիի ճանապարհորդութիւնը դէպի հոգեկան-իմացա-  
 կան ոլորտները: Ձեր երգերը թող յաւերժ երգուին մեր հայ մանուկ-  
 ներու եւ պատանիներու շրթներէն: Ձեր բանաստեղծութիւնները  
 դառնան պատգամ եւ խորհուրդ մեր նոր սերունդներուն համար եւ  
 ձեր ջահը փոխանցուի դարէ դար մեր գալիք ժամանակներուն: Միթէ  
 այս չէ՞ իւրաքանչիւր գրողի սրտի փափաքը:

Հագար ապրիք, երկար շունչ, յարատեւութիւն կը մաղթեմ ձեզի՝  
 ցանկալով, որ իւրաքանչիւր անձ, որ Մեսրոպի գրիչով կը ծառայէ  
 մեր չորսհազարամեայ ազգին երթին, կարենայ անմար պահել ջահը  
 նախ իր հոգիի կանթեղին եւ ապա մեր մշտնջենաւոր Լուսաւորչի  
 կանթեղին: Թող ձեր գրիչը ճաճանչաւորուի միշտ ազնիւ խօսքին,  
 ճշմարտութեան ու ազգային հպարտութեան բան ու գիրով:

Շնորհակալութիւն մակագրուած հատորներուն համար: Կրկին  
 հանդիպելու փափաքով,

ԽԱՉԻԿ ՏԷՏԷԱՆ  
 Բանաստեղծ, մտաւորական

Պէյրուք, Լիբանան



### ՄՐՏԻ ԵՐԿՈՒ ԽՕՍԳ

Սիրելի Գրիգոր Հոթոյեան,  
 Հաճոյքով կարդացի «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան»  
 վերնագիրը կրող երկդ:

Մեր առօրեայի իրականութենէն առնուած պատմուածքներու եւ  
 կարգ մը յուշերու փունջ մըն է: Բայց այդ պզտիկ փունջին մէջ ես  
 գտայ մէկը միւսէն հետաքրքրական, մէկը միւսէն հաճելի, երբեմն  
 հէքեաթային բնոյթ ունեցող, բայց խորքին մէջ դաստիարակչական,  
 սահուն հայերէն լեզու, եւ բաւարարուած՝ գոչեցի:

— Գրիգոր, վարձքդ կատար, նորանոր յաջողութիւններ քեզի:

ՍԱՄՈՒԷԼ ՄԿՐՏԻՉԵԱՆ

10 Յուլիս 2005



## ԲԱՐԵՒԱԳԻՐ

Մարտ 21, 2011

*Յարգելի երէց եղբօրս՝ Գրիգոր Հոթոյեանին.*

Տողերու սկսելէ առաջ, նախապէս կը հարցնեմ թանկագին կենացդ որպիսութիւնը, նաեւ՝ համեստուհի տիկնոջդ՝ Շաքէին, զաւակներուդ, թոռներուդ, բոլորիդ կը մաղթեմ քաջառողջութիւն: Ես ինձ հպարտ կը զգամ, որ ունիմ 4 գիրքերդ, կարդացեր եմ բոլորը, բայց վերջինը, որ ստացայ՝ «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» հատորը, իսկապէս իւրաքանչիւր պատմուածք, էջեր՝ որ լեցուն են բարոյական, գիտակցական, տառապագին անցեալի, դէմքերու, դէպքերու, ապրած-գացած կերպարներու, որ կը տողանցեն էջերուն մէջ, թէեւ իմ ծնունդէս առաջ ապրած են անոնք, բայց իմ մանկութեան, պատանեկութեան օրերուն կ'ապրէին տակաւին: Գրքիդ ամէն մէկ էջը, այնտեղ ապրողներուն հետ գացի, ման եկայ, Հալէպի այնտեղերը, հոգետունը, Նոր-Գիւղը, ամէնուրեք՝ հոն եմ ես, քայլ առ քայլ, պտոյտ կատարեցի անցեալին մէջ, Աճուր-Դարլան — իմ մանուկ օրերու թաղերը, դաշտերը, մեր տուները, ուր հայեր կ'ապրէին մինչեւ 1946, առաջին ներգաղթի դէպի հայրենիք. այն օրերու պատկառելի մեր սասունցի տարեցները, հայրդ՝ Խարզօն, Խոտետանը, Առաքելը, Յիւլիբը, Խաչօն, Քիւլիւկ Մկրէն, Ղազարը եւ դեռ շատեր, որ ամէն երեկոյ կը հաւաքուէին հօրս՝ Մկրտչին-Քէնկոյին-Շարոյին փուռը, երեք «օրթախներ»՝ ինչպէս իրենք կ'ըսէին, բոլորն ալ հասած էին աշունը ավարտելու սեմին, սակայն կ'ապրէին յիշելով հայրենի տունը, երագելով դաշտն ու այգին, ժայռոտ լեռները, զմրուխտ արտերը, այն օրերու պատանիներէն դարձած: Շարունակեմ, կեանքիս 28 տարիները անցան Աճուր-Դարլային մէջ, Թէքքէլեան անունը կրկին զիս տարաւ հոն, Նշան Շահէն, եղբօրս՝ Գրիգորին ընկերն էր, հայրը, Թէքքէլի Արթին կ'ըսէինք անոր, հացթուխ էր, վարպետ հացթուխ: Նշան Շահէնին հանդիպեցայ Լոս Անճելըս, 1989 թուականին՝ Հոլիվուտ, բարեկեցի՝ չճանչցաւ զիս, երբ եղբօրս անունը տուի, պահ մը յուզուեցաւ եւ յանկարծ փաթաթեց վզիս, եւ «վայ Տիկին Մարի, որքան հեռուները տարիք զիս, հայրս, հայրդ, եղբայրդ, մեր ապրած թաղերը, վայ-վայ, այս ինչ գեղեցիկ հանդիպում», եւ տեսայ, որ աչքերը տամկացեր էին: Մխրճուած եմ կրկին գրքիդ էջերուն մէջ, շարունակեմ գիրս, կրօնաբարոյական, ազնիւ խրատականներով, անհաւատները դարձի բերող

պատմուածքներ, ամէն մէկ կարգացողը պիտի ըսէ.— Ահա մաքուր հայ քրիստոնեայ մարդ մը, որ արժանի է ամէն գնահատանքի:

Հալէպի Բերիոյ Թեմի ղէմքերէն, պատկառելի եկեղեցական, Առաջնորդ Զարեհ Սրբազանը, յետագային Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկոյ, քոյրը՝ Ռոզինը, դերձակուհի էր, իմ օժիտիս բոլոր հագուստները ան կարեց, 1950 թուականն էր: Քարէն Եփփէ ազգային ճեմարանը շատ լաւ կը յիշեմ, այդ օրերու որբանոցը, հոն կ'ապրէին մեր ծանօթներէն ոմանք, ես շատ խաղացեր եմ այդ մեծ տարածութիւն ունեցող բակին մէջ իմ տարեկիցներու հետ. յայտնեմ, որ հայրս մեզ Հալէպ բերած է 1938-ին, Սանճագի պարպումին, Աճուր-Դարլա, իր հօրեղբօր տղուն՝ Ռաշօ Պաղտասար Տօնոյեանին տունը: Ան՝ Ռաշօն, ժառանգ չունենալուն պատճառաւ, կալուածը, այսինքն ապրած տունը եւ փուռին ունեցած բաժինը, կտակած էր եղբօրս անունին:

Սուրբ Գէորդ Եկեղեցին, կիրակնօրեայ դպրոցը եկեղեցւոյ մէջ, ուր կը բաժնուէին դասարանները նստարաններով, որ մեզի՝ պատանիներուն ջամբէին ազգային, կրօնական դաստիարակութիւն, ուսուցչուհիս անունը Օրիորդ Ովսաննա էր, իսկ տնօրէնը՝ Պարոն Ռուբէն Տիրարեան. յուշեր, յուշեր, վայրեր, տեղեր անցեալի, տխուր թէ ուրախ օրեր, սակայն միշտ յիշատակելի. կրկին սլացայ Հալէպի փոշոտ փողոցները, քարքարոտ դաշտերը, Նոր-Գիւղ-Աճուր-Դարլա իրար կապող «Նաւասարդեան» դաշտը, ուր ամէն տարի Սասունի, Տարօն-Տուրուբերանի Հայրենակցական Միութիւնը կը կազմակերպէր եօթնօրեայ «քէրմէս»:

Այժմու Հալէպը հսկայական փոփոխութիւն ունի անցեալի Հալէպէն, սակայն երբ ես կ'երթամ հոն (ամէն տարի) երկու դուստրերս եւ ընտանիքը տեսնելու, այնտեղ ես կը միանամ հինին, իրար կապելով Հալէպ ատիմը Հալէպ նըտիտին հետ:

Այսպէս, յարգելի եւ սիրելի հայրենակից, ազիզ եղբայր, քաջերու տոհմէն սերած հայորդի, հօրդ՝ Ղազարի, հօրս՝ Մկրտչի, անոնց հայութեամբ տրոփող այժմ դադրած սրտերը, անոնց հոգիներուն համար ըսենք «Հանգիստ յողնատանջ ոսկորներուն, լոյս հոգիներուն իջնէ»:

Ինչպէս հռոմէացի զօրավարը ըսած է «վէնի, վիտի, վիչի» (եկայ, տեսայ, յաղթեցի), իսկ ես պիտի ըսեմ «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» հատորին համար՝ «ստացայ, անյազ կարդացի, յուշերով ապրեցայ»:

Գրիչդ, մատներդ դալար, միտքդ լուսապայծառ մնայ միշտ:

Հալէպցիական, սասունցիական  
անկեղծ, բարի, ջերմ զգացումներով  
եւ մեծ յարգանքով՝

ՄԱՐԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ ԳՐԱԼԵԱՆ

Լոս Անճելոս





13 Դեկտեմբեր 2014  
Սենթ Գաթրինգ, Օնթ.

Սիրելի ընկ. Հոթոյեան,

Մեծ հաճոյքով ստացայ 2014-ի «Եօթներորդ Հանգրուան»ը, որը արժանաւորապէս ձօն ես նուիրել Հայոց Հայրենիքին եւ Հայ Ազգի յաւերժութեան:

Հաճոյքով եւ հետաքրքրութեամբ կարդացի բոլոր հաւաքածոյէդ փունջ մը, եւ մանաւանդ «Փետրուարեան ապստամբութիւնը» եւ «Հայկական կեանքը Թրիփոլի մէջ», որոնք հին եւ թանկագին յուշեր արթնցուցին իմ մէջ:

Այս առիթով իմ ջերմ եւ սրտագին շնորհաւորութիւններս կը մաղթեմ քեզի:

Գրիչդ տակաւին միշտ կանգուն մնայ, սահուն ընթանայ եւ միշտ արտագրէ, իսկ ճկուն մատներդ ալ երկար ու անխոնջ թող միշտ գործադրեն:

Բարի օրերու մաղթանքով, ընկերական լաւագոյն զգացումներով եւ սիրով՝

ՍԵՊՈՒՀ ԹՈՒՔԱՃԵԱՆ

\*\*

Շատ սիրելի ընկ. Գրիգոր Հոթոյեան,

Վաղեմի Թրիփոլիէն ծանօթ ընկեր, մտաւորական, բանաստեղծ, յօդուածագիր, թղթակից Գրիգոր Հոթոյեան:

Բարձրօրէն կը գնահատեմ, սիրելի Գրիգոր, գրական վաստակդ, նամանաւանդ այս վերջին «Հայաշունչ Պատմութիւններ» գիրքդ եւ հրատարակած նախկին գիրքերուդ մէջ ունեցած ներդրումդ Թրիփոլի եւ Սենթ Գաթրինգի գաղութներու նկատմամբ:

Կը մաղթեմ ձեզի, նաեւ համեստափայլ տիկնոջդ՝ Շաքէին, քաջառողջ կեանք եւ արեւշատ օրեր:

Գրիչդ միշտ դալար մնայ եւ վարձքդ կատար:

Առողջութեան եւ ապագայի ծրագիրներուդ եւ ցանկութիւններուդ ջերմ եւ լաւագոյն մաղթանքներով եւ զգացումներով,

Սիրով՝

ՍԵՊՈՒՀ ԹՈՒՔԱՃԵԱՆ

\*\*

Շատ սիրելի ընկ. Գրիգոր Հոթոյեան,

Շնորհակալութեամբ եւ մեծ հաճոյքով ստացայ «Ոգեշունչ Քեր-

թուածներ եւ Զօներգութիւններ», ինչպէս նաեւ «Հայաշունչ Պատմութեան» հատորները:

Կան մարդիկ, կ'ըսէ պատմահայր իտրենացին, որոնք թէեւ մահկանացու ծնած են, բայց անմահ յիշատակ մը կը ձգեն իրենց ետին, անոնք ապագայ սերունդներուն մշուշոտ հորիզոնին վրայ շողալով՝ առիթ կ'ըլլան հպարտութեան: Այդ կարգի անմահներէն քեզ կը դասեմ, ընկ. Գրիգոր:

Լայնածաւալ էջերուդ վրայ ականատես եղայ սիրոյ ու գուրգուրանքի արտայայտութիւններու, ողջոյնի եւ դրուատիքի խօսքերու, պատմութեանը, որոնք անբաժան մասը կը կազմեն քու ներշնչումներուդ փառաւոր ու պատմական անցեալին: Անխորտակելի երկու գանձեր, որ այսօր ա՛լ աւելի ճոխացան ուրիշ ներբողալից էջերու յաւելումով:

Քաջառողջութեան եւ արեւշատութեան ջերմ մաղթանքներ ձեզի եւ ձեր ազնիւ տիկնոջ՝ Տիկին Շաքէին:

Գրիչդ միշտ դալար ու վարձքդ կատար:

Ընկերական ջերմ ու սրտաբուխ բարեկներով՝

ՍԵՊՈՒՀ ԹՈՒՔԱՃԵԱՆ

Սենթ Գաթրինգ  
Հոկտեմբեր 2017



Դեկտ. 24, 2017

Սիրելի ընկ. Հոթոյեան,

Հայու նախանձախնդրութեամբ ապրուած կեանքի մը արտացոլումն է նաեւ այս 13-րդ հրատարակութիւնը. կը յիշեմ առաջինը ստացայ՝ «Սիրտը Ափին Մէջ», երբ տարիներ առաջ Ռ. Մնացականեանին հետ Մոնթրէալ կը ճամբորդէինք «Համազգային»ի ժողովի մը միասնաբար:

Թերեւս ոմանք միամտութիւն սեպեն հայերէն գիրք գրելը այս նիւթապաշտ երկրամասին վրայ, սակայն շատ մը հարուստներէ աւելի ժառանգ կը թողուն նման «միամիտներ» իմ կարծիքով. վարձքդ կատար:

Սակայն ըստ կարգ մը աւանդութեանց՝ թիւ 13-ը բախտաւոր թիւ է՛ եղեր: Ի՞նչ կը մտածէք 14-րդ հրատարակութեան մասին:

Վարձքդ կատար, ընկ. Հոթոյեան: Շնորհաւոր Նոր Տարի եւ Ս. Ծնունդ:

Այս փոքր նուէրը՝ իմ եւ Ասպետ Փանոսեանին կողմէ:

ԿԱՐՊԻՍ ՀԱՆԷՇԵԱՆ



# ԿՈՄԻՏԱՍ ՌԱՏԻՕԺԱՄ

ՀԻՄՆՈՒԱԾ 1935

ՄՈՆԹԵՎԻՏԵՕ-ՌԻՐՈՒԿՈՒԱՅ

AUDICION ARMENIA GOMIDAS

EJIDO 1469 AP. 8 - TELS. 91 77 91 98 47 11

MONTEVIDEO - URUGUAY

Մոնթեվիդեո, 6-3-85

Սիրելի ընկ. Գրիգոր,

Ուրախ եմ, որ այս առիթը ներկայացաւ քեզ հետ հաղորդակից դառնալու: Քեզի ծանօթ եմ մեր մամուլի մէջ գրած թղթակցութիւններէն, որ յաճախ կը ձայնասփռուի «Կոմիտաս» ռատիօժամէն: Վերջերս «Հորիզոն»ին մէջ լոյս տեսաւ հասցէդ, որով բախտը կ'ունենամ հասցնելու ընկերական ջերմ բարեկներս:

Կը խորհիմ, որ այս նամակը անակնկալ մը պիտի ըլլայ քեզի համար, քանի որ իրար չենք «ճանչնար»: Այս բառը չսկերտի մէջ առի, քանի որ կը պատկանինք նոյն կուսակցութեան եւ կ'աշխատինք նոյն նպատակին համար:

Սիրելի ընկեր, չեմ գիտեր եթէ դուն ծանօթ ես մեր աշխատանքին՝ «Կոմիտաս» ռատիօժամին, որ կը գործէ Մոնթեվիդեոյի մէջ եւ պաշտօնական մամուլն է (բանաւոր) տեղւոյս Հ.Յ.Դ.եան Վրաստանի կոմիտէի: Եթէ չեմ սխալիր, ձեր շրջանի կոմիտէութիւնն ալ նոյն անունը կը կրէ: Ալ ով կ'ըսէ, թէ մենք իրար չենք ճանչնար:

Մենք հոս մօտէն կը հետեւինք Օնթարիոյի շրջանի տարած աշխատանքներուն եւ իրազեկ ենք, որ մեր կուսակցութիւնը մեծ նուաճումներ կ'արձանագրէ այդտեղ ամէն բնագաւառներու մէջ: Ասիկա շատ գեղեցիկ երեւոյթ է:

Իսկ ինչ կը վերաբերի մեր աշխատանքին, «Կոմիտաս» ռատիօժամը կը հաղորդէ ամէն օր մէկ ու կէս ժամ եւ Կիրակի օրերը 4 ժամ ծրագիրներ: Մենք ունինք աշխատակիցներ Լ. Անճելըս, Պէյրոնթ, Երուսաղէմ, Աթէնք, Պ. Այրէս եւ այլն, եւ ամէն կողմերէ նիւթեր կը ստանանք եւ կը հրամցնենք շահեկան եւ ճոխ յայտագիրներ:

Այսու կ'ուզենք գիտնալ՝ ի՞նչ կարելիութիւններ կան, որպէսզի բախտը ունենանք օգտուելու քու աշխատանքէն, քանի որ կը տեսնենք, թէ գաղութը եռուն գործունէութեան մէջ է եւ բազմաթիւ կարեւոր արուեստագէտներ եւ մտաւորականներ կ'այցելեն եւ կ'ոյթ կ'ունենան Թորոնթոյի մէջ: Արդեօ՞ք կարելի է ձայնագրել այդ ելոյթները եւ կամ համերգները, ունենալ հարցազրոյցներ անոնց հետ:

Քանի որ կը խորհինք, որ դուն մօտէն շփում կ'ունենաս անոնց հետ եւ կը կարծենք, որ ունենաս նաեւ փորձառութիւն:

Արդարեւ կը մօտենայ Մեծ Եղեռնի 70-ամեակը ու նաեւ «Կոմիտաս» ռատիօժամը այս տարի կը նշէ իր հիմնադրութեան 50-ամեակը: Կը դիմենք քեզի եւ կը խնդրենք, որ օգտակար դառնաս մեզի, որպէսզի աւելի մօտէն իրազեկ դառնանք գանատահայ գաղութի կեանքին, որ կ'աճի օրէ օր:

Ուրեմն այն յոյսով, որ մօտ ատենէն բախտը կ'ունենանք հաղորդակից դառնալու հետք, կը ներփակեմ գասէթ մը, որպէսզի մօտիկ գաղափար մը կազմես մեր աշխարհի մասին:

Ընկերական սիրալիր բարեւեւներ:

ԱԲՕ ՊԵԼԵԱՆ

\* \* \*

Մոնթեվիդէօ 20-5-85

Սիրելի ընկ. Գրիգոր,

Օրին ստացած եմ զրկած երկու թանկագին ծրարները եւ շատ յուզուած եմ ցոյց տուած պատրաստակամութեանդ եւ քաջալերական խօսքերովդ եւ չեմ գիտեր ինչպէս յայտնեմ մեր գոհունակութիւնը:

Միւս կողմէ պէտք է ըսեմ, որ Հալէպի ընկերոջմէ մը ուրիշ բան չես կրնար սպասել: Հալէպ երթալու բախտը չեմ ունեցած, բայց հալէպցի ընկերներու գլխարկս կը հանեմ:

Մենք բուն Դամասկոսէն ենք, ապա պէյրութցի: Եղբայրներս Հ.Մ.Ը.Մ-ի սկառտ էին եւ Հալէպ կ'երթային միջմասնաճիւղային հանդիպումներուն եւ կը պատմէին հալէպցիներու հիւրասիրութեան եւ ընդունելութեան մասին: 1978-ին հոս հրաւիրեցինք հալէպցի պարզ ու համեստ տղան՝ Ճօրճ Թիւթիւնճեանը: Ինչ ըսեմ, անկից առաջ ուրիշ շատ երգիչներ ալ եկած են, բայց աւելի լաւ է չյիշել զանոնք. բայց Ճօրճ տարբեր համ ունէր եւ մինչեւ հիմա ալ կը նամակցի եւ յաճախ ձայներիզներ ալ կը զրկէ:

Ուրեմն, սիրելի Գօգօ, շատ-շատ շնորհակալ եմ քեզի, որ հակառակ բազմապիսի զբաղումներովդ՝ մեր խնդրանքն ալ չես մերժեր եւ կարելիդ կ'ընես ձեռք մը երկարելու «Կոմիտաս» ռատիօժամին, որպէսզի քիչ մը աւելի զօրանայ այս 50-ամեակի տարուան մէջ:

Ղրկած ձայներիզը հետաքրքրական էր, մաս առ մաս ձայնասրբուցինք մեր լսարանին եւ մօտիկ գաղափար մը կազմեցինք ձեր գաղութի հանդիսութեան մասին: Սակայն այն ինչ որ գիտեմ, կարճ ժամանակի մէջ Թորոնթօն մեծ նուաճումներ արձանագրեց եւ լաւ կազմակերպուած կը թուի: Ես կարգացի յօդուած մը, որ գրած էր ժիրայր Աթթարեանը եւ շատ լաւ կ'արտայայտէր իր տպաւորութիւնները: Այժմ քու միջոցաւ աւելի մօտէն պիտի ծանօթանանք եւ ծանօթացրնենք Թորոնթօն: Եթէ չեմ սխալիր, այնտեղի կոմիտէութիւնը կը կոչուի Վ.Ուսմեան, ճիշդ մեր շրջանի կոմիտէութեան պէս:

Սիրելի ընկեր, նամակիդ մէջ կ'ըսէիր, թէ անզգալաբար հինուց ի վեր հոգեկան կապ մը գոյութիւն ունի եղեր մեր միջեւ. ճիշդ է, ասա զգալի դարձաւ եւ ես ուրախութեամբ կը գրեմ քեզի, ընկերական ջերմ բարեւներով եւ յետագային աւելի մանրամասնութիւններով կը պատմեմ մեր գործունէութեան մասին եւ մեր մասին:

Նաեւ նամակիդ մէջ կ'ըսես «մշակները քիչ են»: Հոս՝ մեր երկրին մէջ, շատ աւելի քիչ են: Նկատի ունեցիր այս երկրի պատիկութիւնը եւ տնտեսական դժուարին կացութիւնը 12 տարիներու զինուորական ամբողջատիրական կարգերէն ետք: Պատիկ երկիր մը երկու հսկաներու միջեւ կը պահէ հսկայ բանակ մը: Ես կը հարցնեմ՝ որո՞ւ դէմ պիտի կռուի: Ուրուկուլայ 3 միլիոն, Արժանթին 28, Պրագիլ 100 միլիոն ժողովուրդ:

Եւ հայերը ասիկա լաւ գիտեն: Այնքան հայեր դուրս ելան Լիբանանէն, Պարսկաստանէն, մէկ հոգի չեկաւ հոս: Մենք մեր իւզով կը տապկուինք եւ կը տապկուինք՝ պահելու համար մեր հաստատութիւնները:

Այժմ առնենք մետալի միւս կողմը: Ուրուկուլայ կը մնայ հաւատարիմ 1970-ի եւ 72-ի որոշումներուն. Մ.Ա.Կ.ի մէջ թիկունք կանգնիլ հայոց պահանջատիրութեան: Եւ ինչպէս որ ըսի, 12 տարի ետք նորէն գացինք խորհրդարան եւ դռները բաց էին ամէնուրեք: Ապրիլ 17-ին Ծերակոյտը վերահաստատեց իր հայաստան կեցուածքը: Նոյնը ըրաւ նաեւ խորհրդարանը: Այդ պատմական նիստին ներկայ գտնուեցանք եւ քեզի ալ կը զրկեմ անոր ձայնագրութիւնը:

Նաեւ կ'առաքեմ Պէյրութէն ստացած նիւթերը: Կաթողիկոսի խօսք եւ ընկ. Սարգիս Ազնաւուրեանի յուղարկաւորութեան առթիւ արտասանուած խօսքերը, որ շատ յուզիչ են: Չայներիզի մէջ կայ նաեւ անակնկալ մը քեզի եւ ձեզի համար:

Սիրելի Գօգօ, նամակիդ մէջ յստակ չէր վաշիւնկիւթըն երթալու պարագան. միայն կ'ըսէիր, թէ երգչախումբը ելոյթ պիտի ունենայ հոն եւ Մայիս 18-ին: Մեզի համար շահեկան է ունենալ երգչախումբի ելոյթի մաքուր ձայնագրութիւնները՝ հին կամ նոր:

Իսկ ինչ կը վերաբերի ունեցած հարցազրոյցներուդ, կամ անոնք, որ պիտի ունենաս, եթէ մեզի զրկես՝ կը ձայնասփռենք: Չմոռնամ ըսելու, որ արդէն յայտարարեցի քեզ որպէս «Կոմիտաս»ի աշխատակիցը Թորոնթոյի մէջ. այլեւս փախուստի ճամբայ չունիս:

Լաւ, հիմա աւելի գլուխդ չցաւցնեմ: Ըսելիք բաներ շատ կան: Ներկայիս գործի վրայ ենք՝ գլուխ հանելու Կոմիտասի 50-ամեակի հանդիսութիւնները: Պէտք է պատրաստենք ոսկեայ մատեանը, հրաւէրներ, բարոյական եւ նիւթական ապահովելու ձեռնարկներ, զորն ասեմ որ մէկը խոստովանիմ, շատ գործ կայ, բայց բարեբախտաբար մինչեւ տարուան վերջը ժամանակ ունինք:

Սիրելի Գրիգոր, վերջացնելէ առաջ կ'ուզէի հարցնել եթէ Կոմի-

տաս Վրդ-ի վերաբերեալ ֆիլմ մը կամ վիտէօ մը կայ ձեր մօտ: Ձէ՞ որ Հոկտեմբեր 21-ին անոր վախճանման 50-ամեակն է: Յուշ երեկոյ մը պիտի կազմակերպենք, կ'ուզենք ժապաւէն մըն ալ ցուցադրել:

Այժմ ընկերական սիրալիր բարեկենսորով կը մաղթեմ յաջողութիւններ անձնական եւ միութենական բոլոր աշխատանքներուն, որ ըլլան շատ արդիւնաւոր:

Շատ սիրով՝  
ԱԲՕ ՊԷԼԵԱՆ

\* \* \*

Մոնթեվիդէօ, 1 Հոկտեմբեր 1985

Սիրելի ընկ. Հոթոյեան,

Ստացայ զրկած 18/9/85 թուակիրը եւ գոյգ ձայներիչները եւ չեմ գիտեր ինչպէս յայտնել ուրախութիւնս եւ յուզումս՝ կարդալով գողտրիկ տողերդ ու լսելով այդ թանկագին աշխատակցութիւններդ:

Առաջին անգամ լուր տուի Հայր Յակոբին, որ վազելով եկաւ քովս եւ շատ յուզուած մտիկ ըրաւ քեռիին եւ քեռիինին խօսքերը եւ անկէ ետք մեր տղայոց իմացուցի, թէ Թորոնթոյի մէջ ալ պիտի նշուի Կոմիտասի 50-ամեակը Համազգայինի նախաձեռնութեամբ:

Իսկապէս չեմ գիտեր ինչ կրնամ ըսել, որ այսքան կարճ ժամանակի ընթացքին այնքան ջերմ մտերմութիւն եւ գործակցելու պատրաստակամութիւն ցոյց տուիր մեզի հանդէպ:

Դուն չեմ կրնար երեւակայել ինչ կը նշանակէ մեզի եւ ինծի համար, որ մեր լսարանին տարեդարձն ալ պիտի յիշուի այդ հեռաւոր քաղաքին մէջ:

Մենք դիմեցինք նաեւ հոս՝ մեր անմիջական մօտիկ շրջանակները, Պ. Այրէս, Ս. Փառլօ, Գորտոպա եւ ցարդ ոչ մէկ պատասխան ստացած ենք... Բայց բազմահազար քիլօմեթրէն ընկերներ կը հասկնան մեզ...

Ուրեմն, սիրելի Գրիգոր, ըսած բոլոր թելադրութիւնները գործադրեցի, դիմելով Համազգայինի եւ ընկեր Ա. Արթինեանի: Կը ներփակեմ անոնց զրկած նամակներու պատճէնները ու նաեւ գրութիւններ, որոնք լոյս տեսած են մեր մամուլի մէջ «Կոմիտաս» յառնչութեամբ: Մօտերս կը ստանաս այլ տեղեկութիւններ լսարանի հիմնադրութեան շրջանէն:

Անշուշտ հետագային կ'իմացնես ձեռնարկի թուականը, որպէսզի մենք ալ ժամանակ ունենանք նամակ մը գրելու կամ ձայներիչ մը առաքելու:

Եթէ դուն եւ ընկերները յարմար կը տեսնէք, քանի որ ընկ. Ա. Արթինեանը մեր պատուոյ ցանկին մաս կը կազմէ, փափաքելի է, որ ինքը նախագահէ օրուան հանդիսութեան:

Իսկ ինչ կը վերաբերի զրկած ձայներիզներուդ, շատ յաջող են եւ հետաքրքրական, մանաւանդ Թիթիզեաններու հետ կատարուած բացառիկ հարցազրոյցը. եղան բազմաթիւ խնդրանքներ կրկին ձայնասփռելու համար, իսկ մեր սպաններէնի խօսնակը՝ Արմենուհին, աշխատանք կը տանի անոր սպաններէն թարգմանութեան համար: Չմոռնամ ըսելու, որ շատ լաւ կ'ընես հարցազրոյցի վերջաւորութեան առաջարկել բարի մաղթանքներ լսարանի 50-ամեակի առթիւ:

Գօգօ ջան, մեր մօտ օրերը կը սահին շատ արագ: Ասկից մինչեւ Նոր Տարի մեզ կը սպասեն տենդագին աշխատանքներ՝ գլուխ հանելու համար այս պատմական տարեդարձը: Հոկտեմբեր 27-ին Կոմիտաս Վրդ-ի յիշատակին նուիրուած հանդիսութեան պիտի խօսի ղեկավար Ժան Ալմուխեան՝ Պ. Այրէսէն: Նոյեմբեր 16-ին ունինք շքեղ ճաշկերոյթ, շարք մը հրաւիրեալներ, իսկ Դեկտեմբերին՝ եզրափակիչ հանդիսութիւն:

Իսկ Կոմիտասի ֆիլմին համար, ինչպէս որ կ'ըսես նամակիդ մէջ, դիմած ենք Մեսրոպ Սրբազանին եւ ան խոստացաւ սիրով տրամադրել մեզի:

Ուրեմն ես յոյսով եմ, որ այս տողերը հանգիստ կը գտնէ քեզ հանդերձ ընտանեօք եւ մօտ ատենէն կ'իմանամ բարի խապրիկներ: Ով գիտէ, մեծ անակնկալ մը կ'ընես եւ անձամբ կը մասնակցիս մեր տօնախմբութեան: Երանի թէ այդպէս ըլլար:

Կարօտալից համբոյրներով քեզի կը մաղթեմ քաջառողջութիւն եւ այնքան ուրախ եմ, որ այս հոգեկան կապը հաստատուեցաւ մեր մէջ: Կը սպասեմ այն յատուկ նամակին, որ պիտի գրես:

Շատ սիրով՝

ԱԲՕ

Յ.Գ.— Նկատի ունեցայ որ հարցազրոյցի համար գործածած ձայնբերիզ սուղնոց տեսակէն է: Ընդհանրապէս այդ երիզը կը գործածենք երաժշտութեան համար, որովհետեւ աւելի դիմացկուն է: Կը խնդրեմ նկատի ունեցիր:

\* \* \*

Մոնթեվիտէօ, 3 Հոկտ. 1985

Սիրելի Գօգօ,

Ասկից մի քանի օրեր առաջ զրկեցի ծրար մը, որ կը պարփակէր նիւթեր «Կոմիտաս» ռատիօժամի մասին եւ կը յուսամ, որ ստացար:

Քու զրկած վերջին նամակի հետ ստացայ պաշտպան կոմիտէի նամակը եւ հաղորդագրութիւն թիւ 4-ը: Ուրեմն զօրակցութեան նամակներ զրկեցի կոմիտէին եւ քաջասիրտ տղայոց: Կը զրկեմ քեզի զրկուած նամակներու պատճէնները:

Ընկերական սիրալիր բարեւաններով՝

ԱԲՕ

\* \* \*

Մոնթեվիդեո 12-12-85

Սիրելի ընկ. Գրիգոր,

Ստացայ 25/11/85 թուակիրը եւ գոյգ ձայները գնները եւ կը շտապեմ հասցնել այս տողերը, քանի որ հոս մեր նամակատունը գործադուլի մէջ է, եւ այս նամակը շուտով պէտք է հասցնեմ ընկերոջ մը, որ կը մեկնի Պ. Այրէս եւ այնտեղ պիտի յանձնէ թղթատարին:

Ուրեմն ուրախ եմ յայտնելու, որ Կոմիտասի 50-ամեակի նուիրուած հանդիսութիւնները հասան իրենց վերջաւորութեան Պ. Այրէսի մէջ եւ մենք Քիզիքապէս բաւական յոգնած ենք: Տակաւին կը մնայ լոյս ընծայել «Արմենիա»ի բացառիկը եւ մեր յուշամատեանը եւ կը խորհիմ, որ մինչեւ նոր Տարի կ'ամբողջացնենք այդ գործը:

Այս առիթով առաքեցի թղթակցութիւն մը, թերթիկներ եւ նկարներ «Հորիզոն»ին: Մենք իրենցմէ ստացանք ողջոյնի հակիրճ խօսք մը: Մեր փափաքն էր, որ թերթը իր կողմէ լոյս ընծայէ խմբագրական մը:

Ուրեմն ես խորհեցայ, որ եթէ դուն ստացար իմ զրկած նախորդ նամակը, ուր բաւական տեղեկութիւններ կու տայի լսարանի սկզբնական շրջանի մասին եւ այժմ յաւելեալ մանրամասնութիւններ 50-ամեակի տօնախմբութեանց առթիւ, կը փափաքիմ, որ դուն յօդուած մը գրես եւ զրկես «Հորիզոն»ին, եւ եթէ չեմ սխալիր՝ դուն այդպիսի փափաք մը յայտնած էիր ինծի նախորդ նամակիդ մէջ:

Ուրեմն ես յետագային նորէն կը գրեմ քեզի ու նաեւ նամակով մը կը շնորհաւորեմ երգչախումբի ղեկավարը՝ Էդիկ Յովսէփեանը: Ի մէջ այլոց յայտնեմ, որ վերջերս ձայնասփռեցինք իր հետ կատարուած հարցազրոյց մը Ուաշինկթընի մէջ Լիլի Թրապլեանի կողմէ:

Արդ կը մաղթեմ, որ նամակատան գործադուլը երկար չտեւէ եւ նորից բախտը ունենամ լսելու բարի խապրիկները:

Ընկերական տաքուկ բարեկեցութիւններով եւ համբոյրներով կը մաղթեմ յաջողութիւններ բոլոր ազգանուէր եւ անձնական աշխատանքներուն:

Շատ սիրով՝

ԱԲՕ

Յ.Գ.— Կը ներփակեմ թերթիկներ եւ յիշատակի նկար մը մեր 50-ամեակէն:

\* \* \*

Մոնթեվիդեո, 6-7-87

Սիրելի ընկ. Գրիգոր,

Ստացայ զրկած թանկագին ծրարդ. բազմապիսի նիւթերով եւ ու-



րախուժեամբ կարգացի անուշ տողերդ եւ լսեցի սիրասուն դուստրիդ շահեկան զրոյցը Հայր Լեւոնին հետ:

Նաեւ ուրախ եմ, որ գործողութեան ենթարկուած ես եւ վրայէդ հեռացուցած այդ անհանգստութիւնը: Կը յուսամ եւ կը մաղթեմ, որ երբ արդէն կը կարդաս այս տողերը՝ լաւագոյնս վերագտած կ'ըլլաս բոլոր ուժերդ:

Միրելի Գօգօ, գիտես անշուշտ, այս օրերուն մեր գլխաւոր նիւթը Եւրոպական Խորհրդարանի պատմական որոշումն է, որ խանդավառած է մեզ: Կը խնդրեմ եթէ այս առնչութեամբ նիւթ ունենաս կամ ձայնագրութիւն, հաճիս զրկէ մեզի:

Ղրկած ձայներիզներդ հետաքրքրութեամբ ունկնդրեցինք եւ ձայնասփռեցինք: Իսկապէս՝ երթալով աւելի մօտ կը զգամ ձեր գաղութը եւ կրնամ ըսել, որ այսպէս սիրահարուած եմ ձեր տարած կազմակերպուած աշխատանքներուն, հանդիսութիւններուն:

«Լրատու»ի էջերը խօսուն ապացոյցներ են այն գործունէութեան, որ դուք կը տանիք այնտեղ:

Ասկից առաջ կուսակցական ընկերոջ մը, Բիւրոյի անդամ, հարցուցած էի, թէ ո՞ր մէկ գաղութը ամենալաւ կազմակերպուած է Եւրոպայի եւ Ամերիկաներու մէջ: Անոր պատասխանը եղաւ՝ Գանատան:

Իսկ վերջերս ընկ. Վահէ Եագուպեանը այցելեց մեր շրջանը եւ նոյն հարցումը ըրի: Ընկ. Վահէ ըսաւ, որ ամենալաւ կազմակերպուած գաղութը Թորոնթօն է:

Վերջերս մենք «Կոմիտաս» ռատիօժամէն ալ արտայայտուեցանք այս մասին՝ նիւթեր քաղելով «Լրատու»էն:

Տես դուն տարբերութիւնը. «Լրատու»ի մէջ կը կարդայինք տասը ամուսնութիւններ, զուտ հայկական. նոյն ատեն Ս. Փաւլոյէն ստացուած պարբերաթերթի մէջ կը կարդայինք 10 ամուսնութիւններ, տասն ալ խառն եւ այլն:

Ուրեմն ես կրկին կ'ուզեմ յայտնել ուրախութիւնս, որ շնորհիւ քեզի՝ մենք բախտը ունինք իրազեկ դառնալու ձեր պատուական գաղութի բոլոր գործունէութեանց:

Կը խնդրեմ յայտնէ շնորհաւորութիւններս դուստրիդ, որ մեր պաշարը հարստացուց այդ շահեկան հարցազրոյցով եւ կը խորհինք, որ վերջինը չպիտի ըլլայ:

Միրելի Գրիգոր, դարձեալ քեզի մաղթելով կատարեալ քաջառողջութիւն՝ կը յուսամ, որ մօտ ատենէն նորէն հաղորդակից կը դառնամ քեզ հետ եւ օր մըն ալ բախտը կ'ունենամ անակնկալօրէն դուռդ գարնելու:

Ընկերական կարօտալի համբոյրներով՝

ԱՐՕ ՊԷԼԵԱՆ



Ընկեր Գրիգոր Հովթոյեան  
Ուիլյամսոն

Թանկագին ընկեր,

Շատ կարճ ժամանակով ծանօթացանք եւ արդէն մտերիմ կը զգամ քեզի հանդէպ: Շնորհակալ եմ, որ կանոնաւորաբար կը ստանամ «Լրատու»ն, որ գիտեմ, թէ քու ազնիւ կարգադրութեամբդ է:

Այն օրը որ հանդիպեցանք՝ կարելի էր լման արտայայտուիլ: Ստիպողաբար վերի յարկը գացի կարճ ժողովի մը համար եւ վերադարձիս արդէն ցրուած էր հաւաքոյթը. մինչդեռ ես ծրագրած էի փոքր, անպաշտօն յայտարարութիւն մը ընել այն հարցին շուրջ, որ մանրամասնուած է ներփակ գրութեան մէջ: Նախ ցանկը շինեմ ասոնց, այսպէս.

1) Տաճատ Թէրլէմէզեան հերոս ընկերոջ Մարտ 16 թուակիր նամակին լուսապատճէնը, որ ուղղուած է ինծի, կարդալէ ետք Հ.Յ.Դ. օրուայ առթիւ քու տուած թղթակցութիւնդ «Հայրենիք»ի Մարտ 14 թիւին մէջ (որ ես չեմ ստացած տակաւին):

2) Նոյնպէս ես իրեն գրած էի ի պատասխան իր «Երկաթէ Շերեփ» յօդուածին, որ հաճոյքով կարդացած էի «Հայրենիք»ի Յունուար 11, 1979 համարին մէջ, շերեփի ձեւով գեղեցիկ քարէ ցայտաղբիւր մը շինելու իր առաջարկին իբր արձագանգ: Ղրկած էի \$20-ի չնչին գումար մը՝ մասնակից ըլլալու այդ հրաշալի գործին: Կը ներփակեմ այդ յօդուածին լուսապատճէնը, որ ղրկած է ինծի:

3) Կը ներփակեմ նաեւ Զօրի Բալայեանի արտայայտութիւններուն լուսապատճէնը:

Վստահ եմ կարդացած ես Զարթօնքը (Մալխասի) եւ պիտի յիշես հերոսութիւնը պատանի Տաճատին, որ զգետնեց դաւաճան Դաւօն (Բերդի գէնքերուն պահեստը թուրքերուն յանձնողը): Այս Տաճատն է այս Թէրլէմէզեանը, հիմա իր 80+ հասունութեան մէջ (ի՛նչ կ'ըսեմ — 91 տարեկան է — ծնեալ Դեկտ. 6, 1888):

\* \* \*

Այդ իրիկուն, եթէ ցրուած չըլլար հաւաքոյթը, երբ վար իջայ այդ կարճ խորհրդակցութենէն, պիտի պատմէի Տաճատին ինծի գրած առաջին նամակին պարունակութիւնը, որ Հայաստանի մէջ երկաթէ շերեփի ցայտաղբիւրը պիտի շինուի եւ պիտի առաջարկէի որ հինգով, տասով — կամ աւելիով — ներկաները կրնային մասնակցիլ այդ ցայտաղբիւրի շինութեան ծախսերուն, առ ի գոհացում իրենց սրտի փափաքին եւ որպէսզի օր մը երբ Հայաստան այցելեն՝ հպարտօրէն

զգասն, որ իրենք ալ մասնակցած են այդ երկաթէ շերեփի աղբիւրի շինութեան:

Բայց ուշ էր արդէն եւ յուսահատ տուն գացի եւ քու թղթակցութեանդ վրայ Տաճատը նորէն գրեց ինծի եւ ղրկեց օրինակներ ներփակ նիւթերէն:

Ուրեմն եթէ թիւ մը ընկերներ փոքր կամ մեծ (կարեւոր չէ) գումարով կ'ուզեն մասնակցիլ, գումարները եւ անունները կրնաք ինծի կամ ընկ. Տաճատ Թէրլէմէզեանին ղրկել հետեւեալ հասցէով, որ կ'երեւայ իր նամակին վրայ. Dajad Terlemezian, 77 Franklin Turnpike, Waldwick, N. J. USA 07463:

(Դաւոյին տերրորին մասին գրքոյկ մը ունիմ ձեռքս — ինք ղրկած է — որ օր մը կը ցուցնեմ քեզի, նկարներով եւլն.):

Յոռսամ ծանրաբեռնուած չես զգար այս գործով, որ, կը կարծեմ, հաճոյք պիտի պատճառէ քեզի ալ, ընկերներուն ալ:

Սիրով ու բարի մաղթանքներով՝

ԱՐԱՄ ԱՅՎԱԶԵԱՆ

Պատմաբան-հրապարակագիր

Յ.Գ.— Վերադարձուցած ձեռագիրը անշուշտ ատենին ստացած եմ քու 7/3/79 երկտողովդ:

ՆՈՅՆ

\*  
\*\*

17 Յունիս 1982

Թանկագին ընկ. Հովթոյեան,

Միայն հապճեպ առիթներով կրնանք տեսնուիլ — հեռու, բազմազբաղ եւլն.:

Մուրատեան Արա(Տոքթ.)ին մասին քեզի՝ ալ իմացուցի, Վրէժ Արմէնին ալ իմացուցի — ինչպէս Սարգիսին, Գալթակեանին եւլն.: Յոռսամ «պատիւն արժանաւորաց» կ'անդրադառնաք — W5-ի կրկնուելիք յայտագիրը (անմոռաց ծրագիր) գրեթէ վստահ թուականն է 29 Օգոստոս — եթէ, եթէ փոխուի ըսուեցաւ, երկու շաբաթով կարելի է, որ փոխուի: Անշուշտ կարելի է աւելի մօտ թուականի մը 100% վերջնական թուականը հաստատել:

Ուրիշներ կը պայքարին ամէնօրեայ հացի համար, մենք հացը կը հանենք քարէն, քրտինքէն, եւ ժամանակ կը գտնենք — պէտք է գրտնենք — Հայ Դատ եւ անիրաւուած ժողովուրդի մը արդար ճակատագիրը հետապնդելու:

Սիրալիբ բարեմաղթուածներով՝

ԱՐԱՄ ԱՅՎԱԶԵԱՆ

Յ.Գ.— Կը ներփակեմ ոսոխին հարգատ պատկերը:

Նոյն

\*  
\*  
\*

Ազգանուէր քերթող,  
ընկեր Գրիգոր Հոթոյեան,

Հայ պատմութիւններու ճակատագիրը բուրոզ ապրումներուդ փոթորկոտ աշխարհը ալիք առ ալիք փռուած է քերթուածներուդ սա գրքոյկին մէջ, որ գրասեղանիս վրան է հիմա: Շնորհաւորութիւններս անոր համար, որ ո՛չ միայն կրնաս ալեկոծուիլ, վերանալ ու զգալ՝ ինչպէս մեզմէ շատերը, այլ կարող ես նաեւ զգացուածը մտածումի վերածել եւ մեսրոպեան պաշտելի տառերով փոխանցել հայորդիներու հոգիներէն ներս, ինչ որ ամէն մահկանացուի գործ է:

Ապրիս:

Վստահ եմ՝ տակաւին բերրի է դաշտդ եւ նորանոր սխրանքներ կրնաս փորձել գրական անդաստանէն ներս: Ի խորոց սրտի յաջողութիւն կը մաղթեմ քեզի:

Ընկերական բարեմաղթութիւններով՝

ԱՐԱՄ ԱՅՎԱԶԵԱՆ

Պըրլինկթըն, Օնթարիօ



Մեծայարգ Տիար Գրիգոր Հոթոյեան  
Թորոնթօ

Սիրելի հայրենակից,

Վերջերս ձեզի հետ ծանօթանալէ ետք՝ հաճոյքով ստացայ ձեր բարոյալից պատմուածքներու գիրքը, որ «Ի Խնդիր Բարոյական Ճըշմարտութեան» նշանակալից խորագիրը կը կրէ:

Մեր ժողովուրդը ընդհանրապէս ու մասնաւորապէս նոր սերունդը պէտք ունի բարձր պահելու հայ ազգին բարձր բարոյականը, ու զայն ուսուցանելու ամէնէն հաճելի ձեւը պատմութիւնն է, որ սիրով կը կարդացուի ամէն տարիքի անձերու կողմէ: Դուք իրազեկ էք այդ իրողութեան ու զայն գործադրած էք ինքնաբերաբար: Սրտանց կը շնորհաւորեմ ձեզ ու կը մաղթեմ, որ «Շողակաթ» մատենաշարը ճախացնէք նորանոր հատորներով:

Արեւշատութեան, քաջաւոզջութեան ու բեղուն գործունէութեան անկեղծ մաղթանքով, մնամ՝

Ձերդ անկեղծօրէն՝

ԱՐԻ ԹՕՓՈՒԶԽԱՆԵԱՆ

Խմբագիր «ԲԱՆԲԵՐ» ամսագրին

3 Նոյեմբեր 2005



Շատ սիրելի ընկ. Հոթոյեան,  
Հաւանաբար, եւ ամենայն իրաւամբ, Ձեր ընկեր-բարեկամներու անուանացանկէն վերջնականապէս հանած էք Գուրգէն Ասատուրեան անունը:

Թէ ինչո՞ւ նման հաւանականութեան եզրակացումով կը սկսիմ նամակս, անկեղծ բացատրութեան կը կարօտի. բացատրութեան մը, որը, վստահ եմ, պիտի գայ հաւաստիացնելու Ձեզի, թէ իրապէս անգիմագրաւելի զարգացումներու պատճառաւ է, որ ցայսօր թերացած եմ շատ տարրական պարտականութեան մը մէջ, այն է՝ ժամանակին քանի մը տողով եւ կամ հեռախօսականչով շնորհակալութիւն յայտնել Ձեզի, Ձեր բանաստեղծութիւններու մէկ հատորէն օրինակ մը ինծի առաքած ըլլալնուդ համար: Վստահ եմ, որ բացատրութիւնս պիտի նպաստէ անուանս վերականգնումին՝ Ձեր վերոյիշեալ ցանկին վրայ:

Աւելի քան ութ ամիս առաջ, Կիրակի օր մը, քոյրս մինակը եկեղեցի գնաց. ես անհանգիստ էի եւ չկրցայ ուղեկցել իրեն: Արարողութեան աւարտէն վերջ մեր կիրակնօրեայ Համաստեղ վարժարանի նախկին տնօրէն Պրն. Յովսէփ Մելքոնեան կը տեղեկացնէ քոյրիկիս, թէ «Գուրգէնին բարեկամներէն մին, Թորոնթոյէն, իր բանաստեղծութիւններու մէկ հատորը ինծի տուած է ձեզի փոխանցելու համար: Եթէ գիտնայի, որ հոս պիտի ըլլայիք, բերած կ'ըլլայի»: Պրն. Մելքոնեան քոյրիկիս յայտնած էր Ձեր անունը, որը, սակայն, քոյրս մինչեւ տուն վերադառնալը՝ մոռցած էր: Բայց երբ այդ մասին պատմեց ինծի, կասկած չունէի, որ առաքողը դուք էիք, եւ երբ Ձեր անունը արտաբերեցի, քոյրս հաստատեց. «Այո, Հոթոյեան էր հատորն ուղարկողին անունը»:

Յետ այդու քաղաքէն քաղաքացանք եւ Պրն. Մելքոնեանին հանդիպելու հնարաւորութիւն չունեցանք: Մեր վերադարձին յաջորդած առաջին իսկ օրը մայրաքաղաք Ուաշինկթընն ու մերձակայ աւանները ահաւոր ձիւնամրրիկի թատերաբեմ դարձան: Փետրուար 17, 2003 թուականի ուշ գիշերը, մինչեւ առտուան ժամը մէկուկէսը նստած, մեր քաղաքային ստացուած նամակները, թերթերն ու պարբերաթերթերը աչքէ կ'անցընէի, երբ այլեւս յոգնած՝ որոշեցի ոտքի ելլել եւ քնանալու երթալ: Դէպի ննջարան յառաջանալու ժամանակ ոտքս սահեցաւ եւ հորիզոնական դիրքով աստիճանէն վար՝ հիւրասենեակին յատակին ինկայ, ողնաշարիս ճայթիւնի ահաւոր թրըխկոցը լսելով: Քոյրս իյնալուս ձայնէն արթնցած՝ իր ննջարանէն վրայ հասաւ ահաբեկ, ու երբ տեսաւ հիւրասենեակին տախտակամած յատակին անշարժ փռուած ըլլալս... կրնաք երեւակայել, թէ ինչ վիճակի մատնուեցաւ: Այսօր նոյնիսկ, այդ ցաւալի պատահարէն շուրջ եօթուկէս ամիս վերջ երբ պատկերը միտքս կու գայ, կը սոսկամ: 10–15

վայրկեան անշարժ մնալէ վերջ փորձեցի ձեռքերուս ու ոտքերուս մատները շարժել, ու երբ կարողացայ շարժել, այլեւս վստահ՝ որ անդամալոյժ չեմ, քրոջս օգնութեամբ փորձեցի ոտքի ելլել, ու անասելի դժուարութեամբ ու ցաւերու մէջ՝ յաջողեցայ: Քոյրս անմիջապէս հեռաձայնեց շտապ օգնութեան գրասենեակ՝ խնդրելով փութալ օգնութեան:

Պատասխանը եղաւ յուսալքիչ. «Ժամեր պիտի տեւէ. ճամբաներն անանցանելի են. ձեր բնակած շրջանն անհասանելի՝ ձիւնամբրիկի պատճառով: Ձեր շրջանն ու փողոցը մօտ 70 սանթիմետր խորութեամբ ձիւնով ծածկուած են: Պիտի փորձենք մեր լաւագոյնն ընել»:

Մօտ եօթը ժամ վերջ, չորս տարբեր մեծութեան հիւանդատարներ դանդաղօրէն մօտեցան մեր բակին՝ ճամբայ հարթելով մէկը միւսին համար: Երբ մէկը վերջապէս հասաւ մինչեւ մեր բակին կէսը, չորս կտրիճներ դուրս թռան եւ այս անգամ բահերով արահետ մը բացին դէպի մեր տան մուտքի դուռը եւ ներս մտան: Մինչ այդ ես եօթը ժամ շարունակ կանգնած վիճակի մէջ էի մնացած, անկարող պառկելու եւ կամ, նոյնիսկ, աւելի քան քանի մը վայրկեան միանուագ նստելու: Հնարաւոր չեղաւ զիս պատգարակի վրայ պառկեցնել: Ուստի պարտաւորութեան աթոռի մը վրայ նստեցնել զիս ու դանդաղօրէն եւ ամենայն զգուշութեամբ փոխադրել բակին մէջ սպասող ինքնաշարժը: Այնուհետեւ ճամբան հերթականօրէն մէկէն միւս հիւանդատարը փոխադրելով՝ ի վերջոյ ապահով հասցուցին մեզմէ մօտ 14 քիլօմետր հեռու գտնուող ու մեր շրջանին հասանելի միակ հիւանդանոցը, ուր ինձմէ առաջ հասած էին տարբեր ջարդուածքներով տառապող մի քանի տասնեակ արկածեալներ:

Բժշկական քննութիւններ, ութնութիւնեան ճառագայթաւորումով լուսանկարումներ եւ այլն շարունակուեցան երկար ժամանակ, յաւելելով ահռելի ցաւեր պատճառելով: Եւ... ՍԽԱԼ ԱԽՏԱՃԱՆԱՋՈՒՄ: Իբր թէ կոտորուածք կամ ճեղքուածք չէր տեսնուեր ողնաշարիս վրայ: Ուրեմն ցաւերը մեղմելու միջոցներ ձեռք առին, այսինքն՝ ջանացին զօրաւոր թմրեցուցիչներով ցաւագերծել մարմինս, սակայն ապարդիւն:

Այդպէս շարունակուեցաւ վիճակս. ի վերջոյ պարտաւորուեցայ ուրիշ բժիշկներու դիմել: Նորէն-նոր քննութիւններ եւ լուսանկարումներ, նորէն մուտք MRI/Էմ-Ար-Այ (Մագնիսային Հնչականութեամբ Պատկերագծող) սարքի «դագաղ»ին մէջ, ինչ որ մէջքի վրայ պառկիլ կը պահանջէր եւ ուրեմն՝ մահ ինձի համար:

Վերջապէս ասկէ հինգուկէս ամիս առաջ ստիպուած Պալթիմօր գացինք, մէկ իբր թէ ողնասիւնի վիրաբոյժ-մասնագէտ ոսկրաբանի մը քով, որը նայելով մեր տարած լուսաժապաւէններուն, անմիջապէս մատը դրաւ 11-րդ ողնոսկրիս «իբր թէ» երեւացող ճեղքուածքին վրայ՝ զարմանք յայտնելով, թէ ինչպէ՛ս միւս բժիշկները չեն նկատած

զայն: Նոր լուսանկարումներ կատարելէ եւ ողնաշարիս ոսկրազան-  
գուածը շերտազննելէ ետք, յատկապէս պատրաստուած ահաւոր  
ծանր ու կարծր սեղմնիրան մը հազնիլ հրահանգեց: Ահա եօթուկէս  
ամիս է, որ անկողինի մէջ չեմ պառկած: Հիւանդանոցային անկողին  
մը պատուիրեցինք, օգուտ չունեցաւ, չկրցայ օգտագործել, անկողի-  
նէն չէի կրնար վար իջնել, ժամեր շարունակ անկողինին վրայ անքուն  
նստած անցընելով: Պարտաւորուեցանք ելեկտրականութեամբ ետ-  
ու-առաջ թեքուող բազկաթոռ մը գնել, որմէ դիւրաւ կրնամ դուրս  
գալ ու ոտքի ելլել, իսկ եթէ պատահի, որ կայծին հոսանքը խզուի, վայ  
ինծի: Մեր տունն անտառային շրջանի մը մէջ է, յորդ անձրեւներու  
եւ փոթորիկներու ենթակայ: Օրինակ, երեք օր առաջ, բարեբախտա-  
բար ոչ մինչեւ շատ ուշ գիշեր, հինգ ժամ հոսանք չունէինք: Ուրեմն  
գիշերները մինչեւ լուսաբաց այդ բազկաթոռին վրայ կիսանստած եմ  
անշարժ, կռթնած վիճակի մէջ: Թէ մինչեւ ե՞րբ պիտի շարունակուի  
այս վիճակը, յայտնի չէ:

Է՛հ, սիրելի ընկ. Հոթոյեան, նկարագրութիւնս շատ երկարեցաւ:  
Հիմա թերեւս շատախօսութենէս յոգնած՝ որոշեցիք անունս չվերա-  
կանգնել Ձեր բարեկամներու անուանացանկին վրայ, չնայած, որ  
նկարագրածս վիճակը մեղմացուցած էր Ձեր հիասթափութիւնն ինձմէ  
եւ կը պատրաստուէիք անունս նորէն գրանցել այդ ցանկին մէջ:

Հիմա վերադառնանք Պրն. Մելքոնեանին միջոցաւ ինծի ուղար-  
կած Ձեր հատորին: Փետրուար 17-ի չարաբաստիկ առաւօտեան պա-  
տահած արկածէն վերջ, երբ հիւանդատար կառքի կը սպասէինք,  
քրոջմէս խնդրեցի ստացուած ծրարները (արեւմտահայերը կը նա-  
խընտրեն պահարան բառն օգտագործել) ստուգել, որպէսզի իմանամ,  
թէ ինչ հետս առնեմ ու հիւանդանոց տանիմ՝ հոն կարդալու համար,  
եթէ անհրաժեշտ դառնայ մէկ օրէն աւելի հոն մնալ: «Հայրենիք» շա-  
բաթաթերթին հետ միասին ան դրաւ երկու ծրար, որոնցմէ մին առա-  
քած էր Պրն. Մելքոնեանը: Ծրարին մէջն էր Ձեր հատորը, իսկ հատո-  
րին մէջ գետեղուած էր անոր նամակը մեզի, որով կը բացատրէր, թէ  
գործողուումով Հիւսիսային Ափրիկէ կը մեկնի ու հաւանաբար բա-  
ցակայութիւնը երկար տեւէ. ու քանի որ անգամներ շարունակ փոր-  
ձած է կապ հաստատել մեզի հետ եւ չէ յաջողած, մեր քաղաքէն բա-  
ցակայելու պատճառով, գիրքը նամակատարական սպասարկութեան  
խողովակով մեզի կը փոխանցէ: Հատորը, ցաւագին այդ վիճակիս  
պայմաններու տակ, մեծ սփոփանք էր ինծի համար, ու հետս տարի  
հիւանդանոց: Երանի՜ թէ տարած չըլլայի, որովհետեւ հոն անընդհատ  
քննութիւններու եւ լուսանկարումներու մէկ սրահէն միւսը զիս տա-  
րած ժամանակ կարդալու ակնոցներուս հետ միասին չքացաւ եւ ան-  
կարող եղանք գտնել: Անշուշտ, հաւաքարարուհիներու անփութու-  
թեան հետեւանք էր այդ եւ ոչ թէ միտումնաւոր գողութիւն: Բայց  
ինծի համար մեծ կորուստ: Այն կարճ տեւողութեան ընթացքին, որ

Հատորը ձեռքս բռնած կը թղթատէի, մինչեւ որ յաջորդ բժիշկը կամ բուժակը ներս գային զիս քննելու եւ կամ ուրիշ սրահ մը քննութեան տանելու, կարողացայ նախաբանը, շատ գեղեցիկ գրախօսականը եւ միայն քանի մը բանաստեղծութիւններ կարդալ: Բայց ի հետեւանս առողջական վիճակիս վերիվայրումներուն, ո՛չ Ձեր Հատորին խորագիրը կը յիշեմ, եւ ո՛չ ալ Հայրենի գրախօսողին անունը, թէեւ ընթերցածս ժամանակ ծանօթ էի իր անունն: Խորապէս զգացուած եմ նաեւ Հատորին խնդրոյ առարկայ օրինակը ինծի ընծայելու նպատակով անձիս նկատմամբ Ձեր արձանագրած շատ շոյիչ գեղումներէն:

Ներեցէ՛ք: Երբ նամակս սկսայ, բնաւ նպատակ չունէի այսչափ երկնցնելու: Նախքան եզրափակելս, թոյլ տուէք ներփակել չնչին գումարի գրամաչէք մը՝ Հատորին հրատարակման ծախսերու դիմաց: Երբ բուժումս վերջնականանայ, անպայման այցելութեան պիտի գամ Ձեր կողմերը: Մինչ այն՝ կրկին ու կրկին շնորհակալութիւններ եւ լաւագոյն մաղթանքներ:

Ընկերական ջերմ բարեկներով ու յարգանք,

Ձերդ՝

ԳՈՒՐԳԷՆ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ



Մայիս 8, 1988

Սիրելի՛ Գրիգոր,

Շնորհակալ եմ Մեր Եղբօր (Զարեհ Ա. Մեծի Տանն Կիլիկոյ Կաթողիկոս — Գ. Հ.) ոգեկոչական հանդիսութեանց յայտագրին եւ յօդուածին համար, զոր գրած ես այդ առթիւ: Կը գնահատեմ, որ զիս նկատի կ'ունենաս որպէս հարազատ: Տէր Հօր եւ Վահանին զրկեցի փափաքիդ համաձայն: Շատ ցաւեցայ, որ Ապրիլ 17-ի հոգեհանգրստեան եւ հանդիսութեան անձամբ չկրցայ գալ եւ մասնակցիլ, որովհետեւ յայտարարութիւնները զոր «Հայրենիք» օրաթերթին մէջ կարդացի՝ արդէն ուշ էր, երանի կանուխէն լուր ունենայի:

Սիրելիս, «Հորիգոն» շաբաթաթերթին մէջ կարդացի «Մշակոյթի ընդունակ ազգեր չեն մեռնիր» յօդուածը, շատ հաւնեցայ, վարձքդ կատար, գրիչդ դալար: Միշտ գրէ, Գրիգոր, կարծես ինչ որ սրտէս կ'անցնի նոյնութեամբ գրած ես:

Հանդերձ ընտանեօք մեր յարգանքները փոխանցէ համեստափայլ տիկնոջդ եւ բարեկներ գաւակներուդ:

Կրկնակ շնորհակալութեամբ՝ եղբայրդ

ՅԱԿՈՒ ՓԱՅԱՍԼԵԱՆ

Յ.Գ.— Գրիգոր, եթէ գիրս կարդալու դժուարութիւն ունիս՝ գամ ես կարդամ... կամ մեզի բեր կարդամ...

Նոյն





Գալով «քերթուածիդ», արդէն գրել եմ թէ բնագիրը մօտս չէ. գրել եմ նաեւ, թէ ես ոչ գրագէտ կամ գրականագէտ եմ եւ ոչ էլ բանաստեղծ. հետեւաբար իմ գնահատանքիս մեծ նշանակութիւն չպէտք է տալ: Այսուհանդերձ, ղրկելէ առաջ քանի մը նշումներ էի արել իմ տպաւորութեանց մասին: Ուստի, հիմնուելով նրանց վրայ, պիտի յայտնեմ համեստ կարծիքս կամ տպաւորութիւններս, ապաւինելով գրագէտների ներողամտութեանը:

Քնարիդ լեզուն, ոճը պարզ ու վճիտ են: Զգացմունքներդ ազգասիրական, հայրենասիրական խո՛ր շունչով օծուն, արուեստագէտի ներշնչանքով, պատկերաւոր, յուզաթաթաւ ու իմաստալից են: Գրական ճաշակդ զգայուն, վշտոտ, սակայն բովանդակալից է: Տողերիդ մէջէն առկայծում է սկանակ քերթողի մը փայլուն տաղանդը, ուր բաբխում է ցեղին սիրտը...:

Լաւ է, սիրելիս, շարունակիր, միշտ հաւատարիմ մնալով աստուածախօս, մեծասքանչ, փարթամ ու պերճ լեզուին հայկական: Խորացիր մինչեւ 5-րդ դարը, սակայն կանգ առ 7-րդ դարում, ուր պիտի հանդիպես մեծատաղանդ գիտնական Անանիա Շիրակացուն, մաթեմատիկոս, աստղագէտ, օդերեւութաբան, պատմաբան, աշխարհագէտ, երկրի գնդաճեւութեան եւ այլն: Այսպէս, Հայկական Բարձրաւանդակէն ճառագայթեց գիտութեան լոյսը, երբ եւրոպական ժողովուրդներին համարեա թէ շատ քիչերը հետաքրքրուած էին այս գիտութիւններով: Խորացիր մինչեւ 5-րդ դարը, ուր պիտի հանդիպես դասական Հայ գրականութեան փայլուն հանճարների սքանչելի համաստեղութեանց, մեծատաղանդ պատմահայր, մատենագիր Մովսէս Խորենացիին, Դաւիթ Անյաղթ փիլիսոփային, Կորիւն Աքանչելիին, Եզնիկ Կողբացուն, Ղազար Փարպեցուն, Յովսէփ Պաղնացուն, Յովնան Մանդակունիին եւ այլն, եւ այլն, եւ ի վերայ ամենայնի, Տարօնի բլբուլը՝ անմահն Եղիշէն, որոնք երկնեցին ու կերտեցին դասական Հայ գրականութեան Ոսկեդարը, որը դարերէ ի վեր որպէս ներշնչումի մշտահոս աղբիւր, որպէս մշտավառ անշէջ փարոս, լուսաւորեցին մեր բազմադարեան սքանչելի անդաստանը եւ պիտի լուսաւորեն նաեւ յետայսու: Ուրեմն խորացիր եւ ըմպիր Հայ գրականութեան արբեցընող նեկտարը՝ իր զուլալ ակունքներից...:

Բոլոր Հայ գրականագէտներին, բանասէրներին ու բանաստեղծներին սրբազան պարտականութիւնն է, ի գին ամէն բանի, հաւատարիմ մնալ Հայոց մեծասքանչ լեզուին, գրին, դասին ու բառին եւ վերջապէս՝ մաքուր Հայ գրականութեան...:

Ներկայումս պարծենում ենք մեր արդի գրականութեամբ: Այո, քանակով շատ, իսկ որակով՝ ողբալի է պատկերը: Համբուրելի բացառութիւնները յարգելով հանդերձ, մենք տեսնում ենք անհոգի գրողներ, որոնք աղմկում են հրապարակը իրենց խորթ, օտարոտի, անճոռնի օտար բառերով, աղճատում, աղաւաղում, այլանդակում ու սրբապղծում են մեր սրբազան գրականութիւնը: Չեն պակասում նաեւ հացկատակ պնակալէզներ, որոնք լորձնաշուրթն փառաբանում են այդ այլանդակամները: Առանձնապէս սփռուած է գրագէտները, բանաստեղծները պէտք է սերտ կապ պահպանեն մայր հայրենիքի գրականութեան հետ, ներշնչուին ու հաւատարիմ մնան հայ գրականութեան...:

Սրտագին Համբոյրներով՝  
ԹՈՐՈՍ ԼՈՒՍԻՆԵԱՆ



Ազիզ ընկեր Գրիգոր,

Մեծ հաճոյքով ստացայ ընկ. Կարոյի ձեռամբ ղրկած գիրքդ՝ «Ճանապարհ» խորագրով, եւ արդէն ճանապարհ ելեր եմ քո կեանքի տեւողութեան պատմական, ազգային, կրօնական, գաղափարական, տօնական ապրումներու եւ զգացողութեան, յատկանշական դէպքերու, դէմքերու, վերիվայրումներու մասնակից դառնալու:

Այնքան հաճելի է վերապրումը այդ բոլորին, այնքան հաճելի է քննութիւնը տեսութիւններու եւ վարդապետութիւններու, որ կատարած ես այնքան պարզ եւ հասկնալի ռճով, սակայն այնքան զօրաւոր եւ ազգային նկատումներով:

Քո գրքի մէջ հայ ազգի, հայ ոգիի, հայ բարոյականութեան, քրիստոնեայ հայ կրօնի, դաշնակցական գաղափարականութեան, արժանի դէմքերու եւ դէպքերու դրսեւորումները՝ կարգացողը կը զօրացնէ իր պատկանելիութեամբ, եւ արդարօրէն կրնամ ըսել, որ շատ օգտակար եւ կարեւոր գործ մըն է այս գիրքը թէ՛ հին, թէ՛ նոր եւ թէ՛ գալիք բոլոր հայ սերունդներուն:

Վարձքդ կատար, ազիզ ընկեր Գրիգոր, եւ մերին խորին յարգանքները ձեր տիկնոջը, որ, ձեր իսկ բառերով, առանց իր գոհողութիւններուն՝ դժուար թէ այս գործը յաջողութեամբ պսակուէր:

Ապագայ յաջողութեանց լաւագոյն մաղթանքներով՝

ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ՀԵՐՄԻՆԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Մտաւորական եւ մշակութային գործիչ

Յուլիս 6, 2007  
Տիբրոյթ



Սիրելի Պրն. Հոթոյեան,

Գրիչով անատակ ենք արտայայտելու այն ջերմութիւնը, զոր զգացինք ստանալով ձեր գրիչէն՝ այլ սիրտէն ու մտքէն հոգի եւ կեանք ստացած «Սիրտը Ափին Մէջ» բանաստեղծութեան հատորը: Ծաշակեցինք զայն շուտով, անմիջապէս... Ինչքա՛ն համով էր ան... Հապա բո՞յրը՝ համակ սէր ու հայրենասիրութիւն, իսկական պատկերը հեղինակին: Մեր կողմէն քուլայ մը գնահատանքի խօսք, բոյլ մը շնորհակալութիւն, փունջ մը սէր քիչ են, քիչ՝ այդքա՛ն զոհողութիւններով գլուխ հանուած այս ինքնատիպ հատորին...:

«Հայաստանին», «Երեւանին», «Հայոց լեզուին», «Հայ դպրոցին» կամ «Մեսրոպ Մաշտոցին» ուղղուած ձեր բանաստեղծութիւնները՝ Սրամանթոյի խոյեանքն ունին: Ձեր սիրային բանաստեղծութիւնները նոյնքան միսթիք են, վիպապաշտ, մեղմ ու քաղցր՝ որքան Զարիֆեաններն ու Դուրեանները... Որքա՛ն թախիժ, վիշտ, ցաւ ու տանջանք կայ ձեր «Ապրիլ 24», «Զրոյց Եփրատին հետ», «Եղեռնի յուշարձան» եւ «Ցասում» խորագրուած բանաստեղծութիւններուն եւ սակայն — այս ալ իմ կողմէ — անոնց մէջ միշտ ալ ներկայ է յարուստեան գաղափարը, վերածնունդն ու գոյատեւումը մեր ժողովուրդին:

Վարձքդ ի կատար, ընկեր Հոթոյեան, «տարօսը» յաջորդին:

ԿԱՐՊԻՍ ԹԵԼԵԱՆ

Քեպէֆ, Գանատա

\*\*

Սիրելի Պրն. Հոթոյեան,

«Սիրտը Ափին Մէջ» հատորը ձեր երբ ստացանք, ճաշակելէ ետք զայն, շնորհաւորական եւ շնորհակալական պատասխանը մեր փակած էինք «տարօսը» յաջորդ հատորի մը լոյս տեսնելու ցանկութեան մաղթանքներով... Արդ, ի՛նչ անակնկալ, ի՛նչ մեծ հաճոյք... Թէեւ երկունքը ձեր քիչ մը երկար տեւեց, սակայն կեանքի կոչուեցաւ «Նուիրում»ը ձեր՝ որպէս կտակ մեր գաւակներուն ու թոռներուն, որպէս ձօն մեր ազգին ամբողջ...

Ծանօթ ենք ձեր ոճին, հարուստ բառամթերքին, մեր լեզուին հանդէպ ձեր ունեցած գուրգուրանքին, ինչքա՛ն ակնածանքով եւ որքա՛ն վարպետօրէն գործածած էք զայն՝ արտայայտելու համար ձեր հայատրոփ եւ ազգայնաշունչ բանաստեղծութիւնները: Ձէ՞ որ սասունցի էք եւ դաշնակցական... Հապա սիրերգութիւններ՞ըր ձեր. ջերմ, բարի, վեհ, ազնիւ ու ներող, մարդկայնական եւ աստուածահաճոյ... Ձէ՞ որ հաւատացեալ էք եւ կրօնասէր...

Ձե՛րմ շնորհաւորութիւններ եւ խնդակցութիւններ՝

ԿԱՐՊԻՍ ԹԵԼԵԱՆ

Քեպէֆ, 14 Հոկտեմբեր 2002



Յուևիս 22, Նիւ Եորք

*Սիրելի տարօնցի ընկեր Գրիգոր Հոթոյեան,*

*Ստացայ գնահատական անկեղծ խօսքերովդ յորդուն, սրտէդ ու Հոգիէդ բխած նամակդ, իմ համեստ անձիս, իմ համեստ գրականութեան նուիրած խօսքերդ, որի համար խորապէս շնորհակալ եմ:*

*Ամբողջ կեանքիս ընթացքին իմ համեստ ընդունակութեամբ ծառայած եմ իմ սիրելի հայ ժողովուրդին, ըլլայ գրական եւ թէ թատերական ասպարէզին մէջ, ու այդ ձեւով երջանիկ կը զգամ հոգեպէս, որ բան մը կարող եմ տալ սրտէս եւ Հոգիէս իմ ժողովուրդին: Ինչ որ ունիմ՝ առած եմ ժողովուրդէս, հայրենիքէս ու կը վերադարձնեմ նոյն աղբիւրին, որի ակունքից եմ լցրած իմ սրտի սափորը:*

*Նիւթական վարձատրութեան երբեք չեմ սպասած, գնահատական խօսք մը, քաջալերական արտայայտութիւն մը ինձի համար շատ աւելին արժէ քան թէ նիւթականը, որին երբեք երբեք չեմ սպասած:*

*Ոչ թէ մենակ ես ինքս, այլ իմ ամբողջ ընտանիքով ծառայած ենք հայ մշակոյթին, հայ ժողովուրդին՝ բեմական, թատերական մեր ընդունակութեամբ, ու դեռ կը շարունակեմ այնքան ատեն, որ ուժն ու կորովը չեն պակասած իմ հոգիիս: Ուր որ կանչուած եմ, գնացեր եմ առանց խտր դնելու այս կամ այն միութեան միջեւ: Արուեստը ժողովուրդին կը պատկանի, ու ես՝ մէկ համեստ մշակը իմ ժողովուրդին:*

*Կրկին շնորհակալութիւն քո անկեղծ գնահատական խօսքերովդ:*

*Տարօնական սիրով՝*

*ԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐԵԱՆ*

Յ.Գ.— Առաջին գիրքս՝ «Կարօտ Հայրենի», «Հայրենիք»ի գրատունը կ'ունենայ: Եթէ կը փափաքիս ունենալ, դիմէ «Հայրենիք»ին, Բոսթըն: Ես քառասուն հատոր նուէր տուի «Հայրենիք»ին, գուցէ կ'ունենան:



*Սիրելի ընկեր Գրիգոր Հոթոյեան,*

*Դասական դարձուածքով՝ շնորհակալութեամբ ստացայ «Նուիրում» վերնագրեալ գիրքդ:*

*Առաջին գիրքիդ ծանօթացայ «Նուիրում»ի վկայութիւններ, կարծիքներ բաժինէն:*

Սասուն, Հալէպ, Թորոնթօ... Օտարութիւն, օտարացում... Երբեք:

Աշուղ մը՝ Սասնոյ սարերէն փրթած կարծր ժայռաբեկոր մը, տափաստաններու վրայ փշրուած ու կտրուած... Հեռաւոր հորիզոններու, ցեղի, բարձունքի, մարդու, մարդկային կարօտով...

Եւ... ահա աշուղի մը ծնունդը:

Վստահ եմ որ տաղերը, բառերդ, զգացումներդ աւելի եւ աւելի գեղեցկացած են երաժիշտներու ալ թրթռացումներով եւ երանգներով: Կը շնորհաւորեմ. շնորհաւոր ծնունդ:

Բայց վերի ըսածներուս հունցը՝ շաղկելով խմորը միապաղաղ հաւասար զանգուած դարձնել: (Մալխասեան) Երկնուած է առաւելաբար Հալէպի «Սեւան» (Միմոն Սիմոնեան — ուրիշ ժայռաբեկոր մը, «Նալիբի», «Արեւելք» տպարաններուն մէջ, Հալէպի «Ոսկեղար» օրերուն, ուր խտացած էր Հալէպի հազարամեայ հայութեան «Սերուցքը», թագադրուած «Սէպիլի վրաններուն տակ» չարաբախտ օրերով ալ:

Դուն ապրեցար այդ օրերը:

Պարտաւորութիւններ, անշուշտ որ ունիս, ունիմ, ունիք:

«Երագային Հալէպը» ուռուցիկ գործէն ետք կ'ողգեմ, որ դուն ալ տաս քու արձակովդ, արձակ-համարձակ Հալէպի տպաւորութիւններդ՝ «Հալէպը»: Ուր պիտի ազատուիս քերթողական օրէնքներու կաշկանդումէն (ականջը խօսի Պրն. Պ. Թ. Կերոնեանին — ճիշդ մատնանշում մը):

Վերը միայն տպարանները յիշեցինք, հապա ահումբները, հայրենակցական միութիւնները, Տարօնական Շարժումները, ներգաղթը, հայրենասէրն ու հայրենադաւը, թատրոնները, դաշտահանդէսները, Հալէպի երեւելիները, սասունցի փոռապանները, քէմփերը, դպրոցները: Բոլ գրիչիդ բան մը չե՞ն ըսեր... Այո՛, արձակ-համաձակ, արձանագրէ, որ կորուստը իջնէ նուազագոյնի, ինչե՛ր անհետ կը կորսուին:

Գոնէ փրթուծ մը եւս փրկենք:

Ընթերցող բարեկամի մը այսքան պահանջկոտութի՞ւն... ի սէր Հալէպի՝ մայր գաղութի:

Մառուկեանը իրականութիւնն ու ճշմարտութիւնը գիտցողն էր, բայց... խօսիլը՝ յաճախ սակարկութեան առիթ իրեն համար...:

Առողջութեան մաղթանքներս, շէն մնաս, պայծառ մնաս, աղքատաց գանձանակն է: Նորութիւններուդ սպասող, ընթերցող՝

Սիրով՝

ՌՈՒԲԷՆ Գ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

Գրագէտ, թատերագիր, պատմագիր

10 Սեպտեմբեր 2004, Հալէպ

Սիրելի ընկեր Գրիգոր Հոթոյեան,  
Մանուէլի ձեռամբ ստացայ կեանքիդ ճանապարհին կոթողուած  
«Ճանապարհ» գիրքդ:

Շնորհակալութիւն՝ մեկենաս աղջկանդ Անիին ծնողասիրու-  
թեան, գեղեցիկ օրինակ մը, տիպար մը, երանի իրեն...

«Ճանապարհ»ը ճամբու կոթող է, խաչքար մը, յուշարձան մը,  
բազմաբնոյթ իր կառոյցով:

Այժմ սեղանիս վրայ բազմած է ան իր վեհափառ տեսքով:

Ապրուած կեանքի մը, սուր աչքի պաստառն է ան, ուր մեր պատ-  
մութիւնը կը տողանցէ, տպաւորութիւններ, կարեւոր դէպքեր, մտա-  
ծումներու դատողութիւններ եւ «ինչ որ է ի մարդ»:

Անմահութեան նշանաբանով բանուած եւ հեղինակուած:

Շրջանի մը տարեգրութիւնն է այս գործը, որ ամենահիմնական  
արժանիքն է այս կառոյցին, գեղարուեստական մօտեցումի կողքին:

Խորենացիի Հայոց Պատմութեան աղբիւրներուն նմանողու-  
թեամբ թողութիւն յանձնուած գործ մըն է: «ժամանակակից Հայոց  
Պատմութիւն» ալ կարելի է ըսել այդ գործին:

Աղբիւր՝ այլազան պրպտումներու, ուսումնասիրողներու:

Դիւրընթեռնելի, յօդուածէ-յօդուած մտորելու առիթ տուող  
կանգառ մը:

«Ունայնութիւն ունայնութեանց»ին ընդգիմախօսն է ան, կեան-  
քի, ապրելու մղող խթան, «Փառք ի բարձունս» է ան: Արարիչին ճա-  
նաչումն է, «Քրիստոնէականն» է ան իր խորհուրդներով, յարութեան  
երգիչ:

Ձեռ չափազանցներ, գիրքը՝ գիրք մը ինքնին յաւիտենականի  
խորհուրդն է, մնայուն, յարութեան գաղափարով արարուած:

Սիրելի ընկեր Հոթոյեան, տպարանը աստիճան մը եղած է քեզի  
համար, միջավայրէն դէպի վեր, դէպի բարձունքներու «Ճանապարհ»  
տանելուն:

Խորին շնորհակալութիւններ, դասական խօսք մը, իրական գործի  
մը առիթով ընդունեցէք:

Առողջութիւնն ու ժպիտը անպակաս ըլլան քեզմէ:

Կոթողական բարեւներով՝

ՌՈՒԲԷՆ Գ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

10 Հոկտ. 2008

Հալէպ



Մեր շատ սիրելի, գրագետ, բարեկամ  
ու ազիզ ընկեր ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ



Սիրելի ընկեր,

Մեծ հաճոյքով կարգացի ինծի ձեր  
կողմէ նուիրուած մեծածաւալ «Ճանա-  
պարհ» հատորը:

Հատորին մասին իբր գրականութիւն՝  
ես չեմ կրնար որեւէ ձեւով գրել կամ խո-  
սիլ: Սակայն իբր պատմական եւ արխիւա-  
յին հրատարակութիւն՝ մեծ է անոր դերը  
ու արժէքը հայ գաղութներուն կեանքին  
մէջ: Հոն հայ ընթերցողը կամ պատմաբանը կը գտնէ ու կը սուզուի  
պատմութեան գիրկը՝ գտնելով աղբիւրը թորոնթոհայ գաղութի  
պատմական, ազգային, կրօնական, գաղափարական եւ մշակութային  
կեանքին, մասնակից դառնալով գաղութին դէպքերուն ու գաղութը  
այցելող դէմքերուն:

Հաճելի է կարգալ ու վերապրիլ «Ճանապարհ»ին հետ, մենք  
անձնապէս ապրեցանք անոնցմէ մաս մը, բայց հետաքրքրական է՝  
այնքան հարուստ տեղեկութիւններուն մասին կարգալ պարզ ու  
հասկնալի ոճով գրած ձեր «Ճանապարհ»ը:

«Ճանապարհ»ը եզակի է, ինչպէս դուք: «Ճանապարհ»ին մէջ կը  
գտնենք Հոթոյեանն ու իր բացառիկ ընտանիքը: Հոս կ'ուզեմ իմ խո-  
րին շնորհակալութիւններս յայտնել ձեր ազնիւ տիկնոջ՝ Տիկին Շա-  
քէին, իր բոլոր զոհողութիւններուն համար, որ դարձած է եզակի անձ  
ձեր կեանքին մէջ: Իսկ ձեր դուստրը՝ Անին, թող Աստուած կեանքի ա-  
րեւշատութիւն եւ գործերու յաջողութիւն տայ, որպէսզի ձեր ապա-  
գայի ծրագրերը աշխարհ գալով լոյս տեսնեն: Իսկ մեր սիրելի Անդ-  
րանիկին՝ ուժ ու կորով եւ կեանքի նորանոր յաջողութիւններ, որով-  
հետեւ, ինչպէս դուք կ'ըսէք միշտ, Անդրանիկը եզակի է եւ ձեր նա-  
խասիրած վարորդը:

Շնորհակալութիւն ձեր շնորհազարդ «Ճանապարհ» հատորին,  
յաջողութեան ջերմ մաղթանքներով՝

ՍԱԳՕ ՂԱԶԱՐԵԱՆ  
Գրասէր, մտաւորական

Յունիս 2007  
Թորոնթօ



*Մեծայարգ Տիար Գրիգոր Հոթոյեան,  
Դուք ոչ միայն գլխագիր հայ մըն էք  
(ըստ Սաբօ Ղազարեանի), այլ եզակի գրող,  
հեղինակ, բանաստեղծ, եզակի հաւատաց-  
եալ Հայ Առաքելական Եկեղեցւոյ, դաշնակ-  
ցական գաղափարով կուսակցական, Ազատ  
Անկախ Միացեալ Հայաստանի պատմա-  
բան...*



ԿԱՐՕ ՇԱՀԻՆԵԱՆ

*Կը մաղթեմ առողջութիւն եւ հանգիստ  
կեանք:*

*Գրիչդ միշտ դալար, Պրն. Գրիգոր Հո-  
թոյեան:*

24 Օգոստ. 2017,  
Պէյրուք, Լիբանան



*Մեծայարգ Տիար Գրիգոր Հոթոյեան,  
Շնորհակալ եմ զրկած գիրքերուդ, մանաւանդ իմ մասիս գրած  
երկտողերուդ համար: Դուք եղած էք այն գրողը, պատմաբանը եւ  
բանաստեղծը, որուն գրութիւնները կը լուսաւորեն կարդացողը թէ՛  
կրօնքով եւ թէ՛ գաղափարով:*

*Դարեր առաջ ունեցանք Սասունցի Դաւիթ իր թուր կայծակիով,  
որ ծնաւ Մհերներ: Այսօր ունինք Սասունցի Հոթոյեան՝ ոսկետառ  
գրիչը լուսաւոր:*

ԿԱՐՕ ՇԱՀԻՆԵԱՆ

17 Սեպտեմբեր 2017  
Պէյրուք



*Պարոն Հոթոյեան,  
Կը մաղթեմ, որ այս բուրումնաւէտ վարդերուս անուշ հոտով օ-  
րերդ անցընես կնոջդ՝ Շաքէին, գիրքերուդ մեկենասութիւնը միշտ  
ստանձնող աղջկադ՝ Անիին եւ ամուսինին եւ տանդ սիւներ թոռնե-  
րուդ՝ Քրիստափորին եւ Ստեփան-Արմէնին հետ, որոնք միշտ նեցուկ  
ըլլան ձեզի՝ քաջ սասունցի իրենց մեծ հօր պէս:*



Այս երկտողը կը գրեմ, որովհետեւ դեռ չգտայ ոչ մէկ ակելի լաւ բառ, քան այն՝ որ ձեր մասին գրած են բանաստեղծներ, գիտնականներ, մտաւորականներ եւ գրագէտներ:

ԿԱՐՕ ՇԱՀԻՆԵԱՆ

17-9-2017,

Պէյրուք

\* \* \*

Մեծայարգ սիրուած գրող Պրն. Հոթոյեան,

Սիրով ստացայ «Ոգեչունչ Քերթուածներ Եւ Ձօներգութիւններ» գիրքը: Շնորհակալութիւն: Շատ սիրեցի իմ մասին ձեր գրած նամակը: Ձեր աղօթքը բաւ է ինծի համար:

Դուք տարբեր գրող էք: Ձեր մէջ ծնած են Հայկի ազատութիւնը, Սասունցի Դաւիթի անգիջողութիւնը, Վարդան Մամիկոնեանի հաւատքը, Քրիստափորի պայքարը, Ռոստոմի կամքը, Ջաւարեանի սրբութիւնը, Փետալիներու քաջութիւնը, Արամ Մանուկեանի, Ռուբէնի եւ Դրոյի անկախութիւնը, Սարգարապատի, Ղարաքիլիսայի եւ Բաշ Ապարանի յաղթանակով կերտուած Հայաստանի անկախութիւնը 1918 Մայիս 28-ի:

ԿԱՐՕ ՇԱՀԻՆԵԱՆ

26-10-2017,

Պէյրուք

\* \* \*

Մեծայարգ Պրն. Գրիգոր Հոթոյեան,

Շնորհակալ եմ ինծի զրկած «Նուիրում» գիրքիդ համար:

Ձեր հեղինակած գիրքերը կարգալով կը հպարտանամ, որովհետեւ մարդոց սրտին կը խօսին:

Դուք ոչ միայն եզակի բանաստեղծ, գրագէտ, պատմաբան էք, այլ առաջիններուն առաջինն էք:

Ձեզ գնահատելու, գովելու համար քիչ է երկտող գրել, քիչ է էջեր գրել:

Գրիչդ շողայ արեւու պէս,

Գրիչդ ըլլայ երկնքի մաքուր ու անբիծ կապոյտին պէս,

Գրիչդ գրէ ոսկէ տառեր:

Առողջութիւն Ձեզի, Պրն. Հոթոյեան:

Յարգանքներով՝

ԿԱՐՕ ՇԱՀԻՆԵԱՆ

7 Մայիս 2018,

Պէյրուք



Շատ սիրելի ընկեր Գրիգոր Հովոյեան,

Սրտի խոր ուրախութեամբ ստացայ ձեր վերջին հրատարակած գիրքը, շնորհակալորում եմ եւ ցանկանում նորանոր ճամբաներ:

Յարգելի ընկերս, կը ներես ուշացման համար, քանզի նաեւ որոշեցի մի քիչ թղթատեմ, անցնեմ էջերից եւ յետոյ յայտնեմ շնորհակալութիւնս: Հաճելի գիրք է, նորոգում է յուշեր եւ անցեալի գեղեցիկ օրերը, վերայիշեցնում է, թէ ինչքան գեղեցիկ եւ լաւն է կեանքը թէկուզ իր մէջ ունենալով դժուարին եւ ծանր օրեր: Եւս շնորհակալութիւն հայ գրիդ, հայ ստեղծագործութեանդ, հայ մտածելուդ եւ ինչպէս միշտ՝ ազնիւ մարդ լինելուդ համար, միշտ մնայ իմ անկեղծ, բարի, ընտանիքասէր, հայրենասէր աւագ ընկերս:

Յանկանալով քաջառողջութիւն եւ ուրախ օրեր՝

ՌՈՒԻԲԷՆ ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ  
Մտաւորական, բանաստեղծ

25 Յունիս 2007

Թորոնթօ

\*\*

Իմ սիրելի եւ յարգելի ընկեր,  
մեծ եղբայր եւ ազնիւ բարեկամս՝  
Գրիգոր Հովոյեան,

Անչափ ուրախութեամբ ստացայ վերջին հատորդ. սրտանց կը շնորհակալորեմ քեզ եւ Տիրոջից կը ցանկամ հոգու, մարմնի եւ մտքի քաջառողջութիւն, երկար երջանիկ տարիներ քեզ, Տիկ. Շաքէին եւ բոլոր գերդաստանիդ: Գիրդ միշտ անպակաս, թող հայոց այբուբենը աղբիւրիցդ բխի առյաւերժ, այս ցամքող ափերում մի քանի կաթիլ հոսող մեր հրաշալի լեզուի ակերից մէկն ես, թող դա չցամքի:

Սիրելի ընկերս, պատիւ եմ ունեցել քեզ հետ լինելու երկար եւ տարբեր առիթներով, ճամբորդութիւններով, ժողովներում, եւ միշտ հիացել քո մարդկային եւ ընկերային ազնիւ եւ բարձր արժէքներիդ, որը այս դարում սոսկալի պակասում է մարդկութիւնից: Տարիները ինչպէս կ'ուզեն թող նուագեն, բայց դու ինձ կը մնաս միշտ որպէս լաւագոյն «մարդ» եւ ազնիւ «ընկեր» ու պատուաւոր «հայրդի»:

Սիրելի ընկերս, մի քանի շատ մեծ սխալներ կան ժիրայր Փոլ Փիթրի գրքում, 6 տարուայ շրջանային վարչութեան անունները սխալ է գրուած, ես ունիմ բոլոր ատենագրութիւնները, նա իր անունն է դրել այդ վեց տարիներին, որը լրիւ սխալ է եւ պիտի սրբագրուի:

Նաեւ կը խնդրեմ միւս գրքիդ անունը աւելի յուսալի վերնագիրը ընտրես, դու դեռ երիտասարդ ես եւ «վերջին», «մայրամուտ» եւ այլն քեզ չի վայելել, մենք պայքարող գիւնուոր ենք Հայ գրչի եւ գրի, չենք ծերանում եւ չենք վհատում, դու դեռ պիտի գրես, սիրելի ընկերս, չնեղուիս, բայց մենք յաւերժական ապրող մարդիկ ենք մեր ազգի եւ լեզուի պէս, յուսամ գալիք գիրքդ կ'անուանես «Անմահ Գրիչս»:

Մնամ միշտ քեզ անկեղծ, յարգող եւ սիրող՝

ՌՈՒԲԷՆ ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ

2016 Դեկտ. 10

Թորոնթօ

Ձի մահանում գրիչը մեր,  
Ձի մահանում գրողը ձեր,  
Ինչպէ՞ս թողնել ազգը անտէր,  
Յաւերժ ապրի իմ լաւ ընկեր:

Ռուբէն

\* \* \*

Շատ սիրելի գրչւնկերս՝ Գրիգոր Հոթոյեան,  
Մեծ ուրախութեամբ ստացայ վերջին հրատարակութիւնը. մի քիչ երկար տեւեց մինչեւ թղթատեցի, ընթերցեցի: Մեծ երջանկութիւն եւ ուրախութիւն պատճառեց ինձ:

Յարգելի ընկեր, միայն նրանք կարող են հասկանալ եւ արժեւորել Հայ գրողին, երբ գոնէ մէկ օր ապրեն այն մենութեան մէջ, ուր աքսորուում է Հայ գրողը, մի անգամ անցնեն այն փշոտ ու քարքարոտ ուղին, ուրկէ ամէն օր քայլում է Հայ գրչի մարդը, եւ միայն մէկ անգամ գետն ի վեր լողան, որ զգան բոլոր կեանքը, հակառակ գետին լողալը ի՞նչ պայքարի եւ հաւատքի կարիք ունի:

Դու, իմ անդրանիկ ընկերս, քո բոլոր կեանքով եւ ապրուստով արիւր այդ մէկը, եւ մինչեւ օրս շարունակում ես այդ սուրբ պայքարը յօգուտ Հայ լեզուին եւ մեր ժողովրդին:

Քանիեւորդ անգամ սղմում եմ քո արժանի ձեռքը: Թող միշտ գրիչդ գործօն, միտքդ փայլուն եւ առողջութիւնդ մեր լեռների պէս վսեմ եւ կանգուն մնան:

Մնամ միշտ քեզ յարգող եւ սիրող՝

քո կրտսեր եղբայր՝

ՌՈՒԲԷՆ ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ

14 Յուլիս 2017

Թորոնթօ



Նիւ Եորթ  
19 Նոյեմբեր 1996

Յարգարժան Գրիգոր Հոթոյեան  
Թորոնթօ

Յարգելի Գրիգոր Հոթոյեան,

Սպասեցիք, քիչ մը երկար, սակայն «ուշ լինի, անուշ լինի», Գ. Հոթոյեանի նամակին չպատասխանել՝ չի՛ լինի:

Ուրախութեամբ եւ անակնկալ ստացայ հոգեհատորդ եւ այն տպաւորութիւնը ստացայ, թէ միակն էր ան, զոր կ'ուղարկէիր, ներփակ գեղեցիկ նամակին ու երգին հետ: Անշուշտ ուրիշ թուղթ մըն ալ ման կու գար գրքիդ էջերէն գրկուած, զոր ետ կ'ուղարեմ:

Կարգացի, հաղորդ եղայ, զգացի, ըմբռնեցի եւ ըմբռնեցի Զեզ: Համակուած խինդով՝ ականջալուր եղայ պատգամներուդ, յոյգերուդ, երգերուդ, սէրերուդ:

Յստակ է, որ հրայրքը սիրոյդ առկայժ մնալու է յաւիտեան: Նոր երգերուդ, նոր սէրերուդ, նոր ներբողիդ սպասումով մնամ՝

ՍԱՐԳԻՍ ԱԲԷԼԵԱՆ

Յ. Գ.— Յանախ ունկնդիր կ'ըլլամ հայրենի լուրերու սփռումիդ:

\* \* \*

Յարգելի Գրիգոր Հոթոյեան,

Մեծ ուրախութեամբ կը կարդամ ստուար հատորդ, զոր գեղեցիկ մտքերով մակագրած էիր ինծի համար եւ յանձնած էիր Յակոբ Պուտազեանին՝ քեռիս:

Առողջութիւն եւ ջերմ շնորհակալութիւն ազնուութեանդ: Գրիչդ դալար:

ՍԱՐԳԻՍ ԱԲԷԼԵԱՆ

9/2/09 Նիւ Եորթ



Յարգելի Պրն. Գրիգոր Հոթոյեան,

Ուրախութեամբ ստացայ ձեր վերջին հրատարակած «Մայրամուտի Յուրեր» խորագրով գիրքը: Ուրախութիւնս կրկնապատկուեցաւ երբ տեսայ, թէ ազնուաբար մակագրած էիք զայն:

Մեծապէս շնորհակալ եմ ձեզի եւ կը մաղթեմ, որ ձեր գրիչը չդադրի ու չցամքի գրելէ, որպէսզի կարենաք հարստացնել մեր մշակոյթը նորանոր ստեղծագործութիւններով:

ԶԱՐՈՒՀԻ ՀԱՍԸՐՃԵԱՆ



Սիրելի Գրիգոր,

Շնորհակալութեամբ ստացայ շատ գեղեցիկ եւ վառ գոյներով նկարները:

Այս նկարներով չէ՛ որ միշտ քեզ պիտի յիշեմ, իմ յիշողութեանս մէջն եղած ես միշտ, քեզի հետ մեր ունեցած անմոռանալի սակայն կարճ պահերը, մանաւանդ այս վերջին հանդիպումը, Օգոստոս 17-ի գերմէսի ժոռորին մէջ, սեղանին շուրջ նստած հազիւ իրար կը հասկընայինք: Ինծի համար մեծ ուրախութիւն եւ հպարտութիւն է ունենալ քեզի պէս անկեղծ բարեկամ մը՝ լեցուն մշակութային առատ մթերքով, որ որչափ որ խօսինք որեւէ նիւթի շուրջ, տակաւին ըսելիքներ կան իրարու, ուրիշ խօսքով՝ «ղաֆատէնկի» ընկեր մը (կը ներես թըրքերէն բառ գործածելուս):

Ինծի նուիրած «Նուիրում» բանաստեղծութիւններու հատորիկը եղած է բարձակից բարեկամս, ուր կը կարդամ կրկին ու կրկին անգամ այդքան սիրած բանաստեղծութիւնները, որոնք իմ սրտին կը խօսին, օրինակ էջ 36՝ «Սիրուն աղջիկ», էջ 43՝ «Քեզ տեսնելով», էջ 45՝ «Ինչո՞ւ համար, սիրելիս», էջ 69՝ «Կը սիրեմ քեզ», եւ այսպէս շարանը երկար է, մէկը միւսէն դիւթեղ:

Նրանի քիչ մը նօթա գրտնայի ու երգէի, վստահ եմ աւելի սրտառուչ պիտի հնչեն:

Պերճին հետ խօսեցայ, շնորհակալութիւն յայտնեց եւ ըսաւ, թէ հոն պիտի ըլլայ մօտերս եւ քեզ անպայման պիտի տեսնէ:

Յարգանքներս ազնիւ տիկնոջը եւ սրտազին բարեւներս քեզի:

Սիրով՝

ՎԱՀՐԱՄ ՊՈՅԱՃԵԱՆ  
Գրասէր, մտաւորական

11 Սեպտեմբեր 2002



Շատ սիրելի ընկերս Գրիգոր Հոթոյեան,

Հաճոյքով ստացանք ձեր գրած «Սիրտը Ափին Մէջ» գիրքը: Այս ինչ գեղեցիկ բովանդակութիւն. իւրաքանչիւր սող մեր սրտին կը խօսի: Մարդս իր գործերով է որ կը ճանչցուի: Անցեալին, ձեր մեկնումէն վերջ, երկար ժամանակ ձեր հսկայ նկարը Հալէպի նամակատունին լայն պողոտային վրայ կը պարծենայինք դիտելով, որպէս տիպար, պատասխանատու, գնահատանքի արժանի սուրիացի հայ մարդ: Այսօր եւս ձեր նկարը կը դիտենք «Սիրտը Ափին Մէջ» քերթուածներու գիրքին մէջ որպէս հեղինակ, մանաւանդ որ նուիրած էք ձեր մօր՝

Մարիամ Հոթոյեանի անթառամ յիշատակին: (Կեցցեն բոլոր Գրիգորները եւ Մարիամները:)

Գիրքը կրկին կարգալէ վերջ, վաճառատուներէն ներս կը պահեմ, բոլոր մեր տղոց գիրքդ ցոյց կու տամ: Վարձքդ կատար: Կը մաղթեմ առողջութիւն եւ յարատեւ նորանոր յաջողութիւններ:

Սիրելի ընկերս Հոթոյեան, ես սովորական գործս շարունակելով՝ վերջին 3 տարուան մէջ Կիլիկիա անունով պանդոկ մը հիմնեցինք, շատ յաջող է մաքրութեամբ եւ ապահովութեամբ, ընտանեկան մթնոլորտով, առանց ճաշի, որ այդ մէկը մեր գործը չէ: Ընկեր Տիգրանիկը եկաւ այցելեց: Այս գրութիւնը ղրկելով ձեզ կը սպասենք Հալէպ՝ մեր պանդոկը, քանի մը օր եւս միասին անցընելու: Ձեր տիկնոջ եւ զաւակներուն յատուկէն կը բարեւենք: Հոն եղբայրս եթէ տեսնէք՝ համբուրեցէք:

Ձեր նամակը սպասող ձեր եղբայրը՝

ԳՐԻԳՈՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

19 Մարտ 1988



Յարգարժան Տիար Գրիգոր Հոթոյեան,  
Խորին շնորհակալութեամբ ստացայ մեծածաւալ «Ճանապարհ»-ը  
Տիար Թաթուլ Մանասէրեանի միջոցաւ: Իսկապէս մեծ ճանապարհներով անցած էք:

Սկսայ ընթերցման, հասայ 60-րդ էջին, կ'ուզէի աւարտել եւ ապա գրել նամակս, բայց կրնայի ուշանալ: Պէտք էր անմիջական տեղեկացնել ձեզի, որ ստացեր եմ գիրքը: Ես արդէն կողմնորոշուած եմ, երբ Հալէպ ետ դարձով սկսայ կարգալ, առաջին էջերէն եղայ մասնակից ձեր անբասիր խորհրդածութիւններուն:

Յիշատակելի օր էր, որ Պրն. Մանասէրեանի միջոցաւ հանդիպեցանք մեր տանը: Ափսոս շատ կարճ եւ խիտ օր էր, բայց յիշատակը մնաց անմար: Բաժնուեցանք ակամայ, գեղեցիկ օր մը կրկին հանդիպելու փափաքով:

Շնորհաւորելով նոր տարին, կը մաղթեմ որ 2008 տարին անհատնում բարիք եւ ամբողջական առողջութիւն բերէ բոլորիս, խաղաղութիւն տիրէ աշխարհին, անդադրում բարգաւաճի մեր միևնուճար Հայաստանը: Ատելութիւնն ու կասկածը ընդմիշտ վերանան, ժպիտն անպակաս ըլլայ հայուն դէմքին:

Խորին յարգանք եւ սիրով՝

ՎԱՀԷ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ  
Գրող, դերասան

25 Դեկտեմբեր 2007  
Երեւան



Օգոստոս 14, 1982  
Տիբրոյթ

Սիրելի Հոթոյեան ընտանիք,

Կը յուսամ երկտողս կը գտնի ձեզ առողջ եւ ուրախ:

Այս առիթով կ'ուզեմ նորից յայտնել մեր խորին շնորհակալու-  
թիւնը ձեր ջերմ հիւրասիրութեան եւ զգացումների համար, որը մեր  
այդտեղ լինելը շատ աւելի հաճելի դարձուց: Մենք բոլորս, փառք  
Աստուծոյ, լաւ ենք եւ մեր առօրեայ գործերով զբաղուած:

Ձեզ ի սրտանց կը հրաւիրեմ այստեղ եւ կը յուսամ, որ նորից ի-  
րար շուտով հանդիպենք եւ մեր նորաստեղծ կապերը միշտ պահենք:  
Նաեւ կը զրկեմ մէկ նկար ձեր տնում նկարուած:

Սիրով եւ յարգանքներով՝

ՊՈՊ եւ ԳԱՅԻԱՆԷ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆՆԵՐ



4/4/90

Սիրելի ընկ. Գրիգոր Հոթոյեան,

Այս նամակը շատոնց պէտք էր գրած ըլլայի, սակայն այսօր-վա-  
ղը ըսելով՝ շատ ուշացուցի: Կ'ուզէի մասնաւոր շնորհակալութիւն-  
ներս յայտնել ձեզի այն յօդուածին եւ նկարին համար, որ դուք գրած  
էիք Հ.Օ.Մ.ի պատգամաւորական ժողովին առիթով, մասնաւոր մեր  
աղջկայ պատկերը միասին գրած էիք «Հայրենիք» օրաթերթին մէջ:  
Պէտք է ըսեմ, որ Տարրթիի հանրածանօթ ըլլալը ձեզի կը պարտինք.  
առանց ձեզի այդ մեծ յաջողութիւնները չէր կարող ունենալ:

Կը կարգամ նաեւ ձեր միւս յօդուածները երբ կը գրէք «Հայրենի-  
ք»ի մէջ: Պէտք է ըսեմ, որ գրելու լաւ ձիւք ունիք: Շարունակեցէք  
ձեր գրութիւնները, որովհետեւ ձեզի նման գրողներու պէտքն ու-  
նինք:

Չկայ այլեւս հին գրողներու սերունդը. պէտք է, որ դուք անոնց  
տեղը լեցնէք: Նաեւ կը կարգամ ձեր յեղափոխական քերթուածները  
եւ կը հիանամ ու կը գնահատեմ ձեր գործերը:

Օր մը, երբ պատահի, որ մեր շրջանը գալու ըլլաք, անպայման  
զիս փնտռեցէք, որովհետեւ կ'ուզեմ ձեզի ծանօթանալ անձնապէս,  
նաեւ կ'ըլլաք իմ հիւրը մեր տան մէջ: Կ'արժէ, որ այս կողմերը հան-  
դիպիք:

Ներեցէք, որ գրութիւնս շատ ուղիղ չէ. մի քիչ աչքի նեղութիւն  
ունիմ:

Յարգանքներով՝

ՍԻՐԱԿԱՆ ՊԷՆԿՈՅԵԱՆ



Յարգելի եւ շատ սիրելի Պրն. Հոթոյեան,  
 Մեծ հաճոյքով եւ երախտագիտութեամբ ստացանք «Հայաշունչ Պատմուածքներ» ձեր վերջին գրական հատորը:

Մեծապէս շնորհակալ ենք, որ ձեր մօտիկ «ընկերներու» շարքին մեզ դասելով՝ բաժնեկից կը դարձնէք, ձեր սրտաբուս մակագրութեամբ, ունենալու «Հայաշունչ Պատմուածքներ» այս գեղեցիկ գիրքը:

Հայեցի եւ քրիստոնէական դաստիարակութեան ի նպաստ ձեր «Հայաշունչ Պատմուածքներ»-ու ընդմէջէն ես «տողանցեցի» մանկապարտէզի աշակերտուհի եղած օրերէս մինչեւ ներկան՝ որպէս հայ մայր, վերյիշելով հայ ուսուցիչ-ուսուցչուհիներու ճիգը առօրեայ եւ կիրակնօրեայ վարժարաններուն մէջ՝ դաստիարակելու հայ մանուկն ու պատանին որպէս տիպար հայ քրիստոնեայ անհատ:

Հայրենասիրութեամբ եւ քրիստոնէական արժէքներու դաստիարակութեամբ լեցուն «Հայաշունչ Պատմուածքներ»-ը կու գայ լեցնելու «բաց» մը եւ որպէս «գանձ»՝ ժառանգ կը մնայ ապագայի սերունդները դաստիարակելու...

Առողջութեան, յաջողութեան եւ ձեր բոլոր փափաքներու իրականացման եւ երջանկութեան լաւագոյն մաղթանքներ ձեզի, ձեր ազնիւ տիկնոջ՝ յարգելի Տիկին Շաքէին, ձեր զաւակներուն եւ թոռներուն (Անդրանիկին, Անիին, Մայքըլին, Քրիստափորին եւ Ստեփանին):

Երախտագիտութեամբ եւ ազնիւ սիրով՝  
 Լեւոն, Անի, Արագ, Դալար եւ Կարէն  
 ՀԱՍԸՐՃԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ

Օգոստոս 2017, Թորոնթօ



11 Ապրիլ 1988

Ընկ. Գրիգոր Հոթոյեան  
 Թորոնթօ, Օնթ.

Սիրելի ընկ. Հոթոյեան,  
 Ներփակ կ'ուղարկեմ \$100 (հարիւր տոլարնոց) չէք մը: Այս փոքր գաղութին մէջ վաճառեցինք (8) ութ հատոր, մնացեալները պիտի ուղարկեմ Վէնքուվըր Հայր Նարեկի հետ, որ էտմընթըն կու գայ յառաջիկայ շաբաթ:



Քերթուածներդ անկեղծութիւն եւ անմիջականութիւն կը հաղորդէին, զգայուն մարդու աշխարհաստեղծութիւնը ու ապրումները կ'արտայայտէին. աւելին, գիտակից ու ազնիւ հայ մարդու գեղումները կը փոխանցէին:

Շնորհաւորութիւն ու շնորհակալութիւն:

ՔՐԻՍ ՉԱԳՄԱԳԵԱՆ



Սիրելի

Դաշնակցական հայ արի,  
Հայ մշակոյթի ծառայ,  
Հայ ցաւերու սփոփիչ,  
Նրազներու թռիչք տուող,  
Ձեր գրելով սրտերը յուզող,  
Նրիտասարդ Գրիգոր Հոթոյեան:

Շնորհակալութիւն կը յայտնեմ «Սիրտը Ափին Մէջ» (քերթուածներ) գիրքը ինձի նուիրելուդ: Կը խոստանամ լսելի ընել հայ սրտերու:

Շատ սիրեցի ձեր անկեղծ զգացումները եւ խօսքերը:

Միշտ անկեղծօրէն՝

ՊԵՐՃՈՒՀԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Յուլիս 15, 1992

Ըրվայն





ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԹ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- ՍՐՏԻ ԽՕՍՔ ՀԵՂԻՆԱԿԷՆ .....	9
● <b>ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ԵՒ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐ</b> .....	11
● <b>ՀԱՍՏԱՏԱԳՐԵՐ ԵՒ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐ</b> .....	25
● <b>ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՄՆԵՐ ԵՒ ՅՈՐԲԼԵԱՆՆԵՐ</b>	
- «ՆՈՒԻՐՈՒՄ» ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ .....	41
- ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 75-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ .....	47
- ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ 60-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ .....	49
- «Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ» ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ .....	52
- ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 80-ԱՄԵԱԿԻՆ ԵՒ «ՃԱՆԱՊԱՐՀ» ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ .....	69
- ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ 60-ԱՄԵԱԿԻՆ ԵՒ «ՃԱՆԱՊԱՐՀ» ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ .....	77
- «ՃԱՃԱՆՉՆԵՐ» ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ .....	102
- «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ» ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ .....	113
- ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 90-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ .....	134

● **ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ**

– «ՍԻՐՏԸ ԱՓԻՆ ՄԷՁ» ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ ..... 141

– «ՆՈՒԻՐՈՒՄ» ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ ..... 163

– «Ի ԽՆԳԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»  
ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ ..... 180

– «ՃԱՆԱՊԱՐՀ» ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ ..... 188

– «ՃԱՃԱՆՉՆԵՐ» ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ ..... 206

– «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ’ԱՊՐԻՆՔ»  
ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ ..... 216

– «ԵՕԹՆԵՐՈՐԳ ՀԱՆԳՐՈՒՄՆ» ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ ..... 226

– «ՍԱՅՐԱՄՈՒՏԻ ՑՈԼՔԵՐ» ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ ..... 231

– «ՀԱՅԱՇՈՒՆՉ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ»  
ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ ..... 235

– «ՈԳԵՇՈՒՆՉ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ ԵՒ  
ՉՕՆԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ» ԳԻՐՔԻՆ ԱՌԻԹՈՎ ..... 240

● **ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐ ..... 247**

## Հեղինակին գործերը՝

1. «ՍԻՐՏԸ ԱՓԻՆ ՄԷՁ» 1987
2. «ՍԻՐՏԸ ԱՓԻՆ ՄԷՁ» (Բ. տպագրություն) 1990
3. «ՆՈՒԻՐՈՒՄ» (Երեսան) 2002
4. «ՆՈՒԻՐՈՒՄ» (Բ. տպագրություն, Թորոնթո) 2003
5. «Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ» 2005
6. «ՃԱՆԱՊԱՐՀ» 2007
7. «ՃԱՆԱՊԱՐՀ» (Երեսան) 2007
8. «ՃԱՃԱՆՉՆԵՐ» 2010
9. «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ» 2011
10. «ԵՕԹՆԵՐՈՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ» 2014
11. «ՍԱՅՐԱՍՈՒՏԻ ՅՈՒՔԵՐ» 2016
12. «ՀԱՅԱՇՈՒՆՉ ՊԱՏՍՈՒԱԾՔՆԵՐ» 2017
13. «ՈԳԵՇՈՒՆՉ ՔԵՐԹՈՒԱԾՔՆԵՐ  
ԵՒ ՉՕՆԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ» 2017
14. «ԼՈՒՍԱԻՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ» 2018

*Ստանալու համար դիմել՝*

Krikor Hotoyan  
34 Leith Hill Rd., Apt. 511  
North York, Ontario, Canada,  
M2J 1Z4

*Հեղինակի գիրքերուն կայքէջը՝*

[www.krikorhotoyan.ca](http://www.krikorhotoyan.ca)

*Հեռաձայն՝ (416) 494-1921*

*Բջիջային՝ (416) 420-2524*

## ՀԵՂԻՆԱԿԻՆ ՍԱՍԻՆ



Գրիգոր Հոթոյեան ծնած է Հալէպ, 5 Օգոստոս 1927-ին, արմատներով՝ սասունցի: Աւարտած է Հալէպի ազգային Սահակեան վարժարանը, ապա հետեւած է հայագիտական դասընթացքներու: Եղած է գրաշար, խմբագիր, ուսուցիչ եւ տնօրէն ազգային ամէնօրեայ, ամառնային եւ կիրակնօրեայ վարժարաններու մէջ՝ Սուրիա եւ Գանատա:

Երիտասարդական տարիներէն սկսեալ, բանաստեղծութիւններով (ընդհանրապէս Գրիգոր Վարդգէս գրական անունով), յօդուածներով (զանազան անուններով), պատմուածքներով եւ թղթակցութիւններով աշխատակցած է Սփիւռքի եւ Հայաստանի բազմաթիւ օրաթերթերու, շաբաթաթերթերու, ամսագրերու եւ պարբերաթերթերու:

Իր ազգային, գրական եւ եկեղեցական գործունէութիւններուն համար արժանացած է բազմաթիւ զնահատագրերու պետական եւ ազգային զանազան հաստատութիւններէ, որոնց շարքին Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետի «Գիր Օրհնութեան եւ Գնահատաց»-ին՝ 1984-ին:

Իսկ Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Հայրապետի Թրոննթօ այցելութեան ընթացքին, 1 Հոկտեմբեր 2005-ին, արժանացած է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանին:

4 Յուլիս 2004-ին, իր գրական գործունէութեան 60-ամեակին առթիւ, Հայաստանի Գրողներու Միութեան, Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-հիմնարկի եւ Միջազգային Ռազմածովագիրներու Միութեան Հայաստանի կազմին կողմէ կազմակերպուած ցերեկոյթին, արժանացած է «Ուխտատուն» թանգարան-հիմնարկի շնորհագիրին եւ Միջազգային Ռազմածովագիրներու Ընկերակցութեան անդամակցութեան:

Գրիգոր Հոթոյեանի ծննդեան 80-ամեակին եւ «Ճանապարհ» գրքի հրատարակութեան առթիւ, կազմակերպութեամբ Հայաստանի Գրողներու Միութեան, Միջազգային Ռազմածովագիրներու Ընկերակցութեան հայկական վարչութեան, Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-հիմնարկի, «Զօրավար Անդրանիկ» Հայոց Համազգային Միութեան եւ «Աւետիք Իսահակեան» քաղաքային գրադարանին, Հինգշաբթի, 23 Օգոստոս 2007-ին, Հայաստանի Հանրապետութեան Գրականութեան Ակադեմիայի «Մանուկ Աբեղեան»-ի անունան դահլիճին մէջ կատարուած ձեռնարկին, Հոթոյեան զնահատուած է Հայաստանի Գրողներու Միութեան նախագահութեան ոսկեայ մետալով եւ թիւ 44 փաստատետրով, ինչպէս նաեւ «Զօրավար Անդրանիկ» Հայոց Համազգային Միութեան ոսկեայ մետալով, միութեան ընտրեալ անդամի վաւերատետրով եւ Զօրավար Անդրանիկի եւ միութեան յուշանկարներով: